

ՀԱԼԵՂԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՐԱՖԻԻ ԶՈՐԹՈՇՅԱՆ



ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՌԻՍՏՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ (RAA) ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Պրոֆ. դր. Ա. Սուքաֆյան (Փարիզ), պրոֆ. դր. Յ. Յոֆրիխթեր (Քայզերսլաուֆերն), պրոֆ. դր. Մ. Բուլեման-Յախ-
նազարյան (Աախեն), պրոֆ. դր. Յ. Սուրուզյան (Կահիրե), պրոֆ. դր. Լ. Ձեքիյան (Վենետիկ), պրոֆ. դր. Պ. Չո-
բանյան (Երևան), պրոֆ. դր. Ա. Ղազարյան (Մոսկվա), պրոֆ. դր. Ն. Սարգսյան (Երևան), պրոֆ. դր. Ռ. Գալչյան
(Լոնդոն), պրոֆ. դր. Մ. Բալայան (Ստեփանակերտ), Մ. Լալայան (Երևան), Ժ. Մանուչարյան (Լոս Անջելես)

Աշխատությունը հրատարակվում է ՀՃՈՒ հիմնադրամի գիտական խորհրդի երաշխավորությամբ

RAA ԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՏՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիրք ԺԶ

ՀԱԼԵՊԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Րաֆֆի Կորթոշյան

THE INSCRIPTIONS OF ALEPPO

Raffi Kortoshian

НАДПИСИ АЛЕППО

Раффи Кортошян

ՀՃՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2013

ՀՏԴ 72(479.25):941(479.25)
ԳՄԴ 85.11.(23)+63.3(23)
Ք 870

Ք 870 Քորթոշյան Ռաֆֆի
Հալեպի արձանագրությունները / Ռաֆֆի Քորթոշյան.- Եր.: ՀԳՈՒ հրատ., 2013
Գիրք ժՁ: .-656 էջ + 16 էջ գունավոր մամուլ:

Նախահրատարակչական աշխատանքների հովանավոր
ՀՀ մշակույթի նախարարություն

Տպագրության հովանավոր
«Գալուստ Գյուլբենկյան» հաստատություն



FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

Աշխատությունը հիմնականում ներկայացնում է Հալեպի հայկական եկեղեցիների և գերեզմանոցների արձանագրությունները: Առաջին անգամ ուշադրության են արժանացել Օսմանյան կայսրության զանազան գավառներում (այդ թվում նաև Արևմտյան Հայաստանում) ծնված, 1915 թ. ցեղասպանությունը վերապրած և Հալեպում հաստատված հայերի տապանաքարերի արձանագրությունները:

Հասցեագրվում է հայ ժողովրդի պատմությանը հետաքրքրվող մասնագետներին և ընթերցող լայն շրջաններին:

The present work mainly treats the inscriptions of the Armenian churches and cemeteries of Aleppo. For the first time in Armenian Studies, it dwells upon the epitaphs of the Armenian natives of different districts of the Ottoman Empire (as well as Western Armenia) who survived the Genocide of 1915 and took up living in Aleppo.

Intended for the general reader and specialists interested in Armenian history.

ՀՏԴ 72(479.25):941(479.25)
ԳՄԴ 85.11.(23)+63.3(23)

ISBN 978-9939-843-09-4

© Քորթոշյան Ռաֆֆի, 2013

© Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, 2013

*Նվիրվում է բոլոր նրանց, ովքեր ներկա դժնդակ պայմաններում անձնուրացաբար
պահպանում են Հալեպի հայկական հոգևոր և մշակութային արժեքները*

*Dedicated to all those who continue selflessly preserving the Armenian spiritual and cultural
heritage of Aleppo despite the present-day harsh conditions of Syria*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | | | |
|------------------------------------------|-----------|--------------------------------------------|-----|
| ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ..... | 5 | ՇԵԽ-ՄԱԳՍՈՒԴԻ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ | |
| ՆԱԽԱԲԱՆ..... | 7 | ԳԵՐԵՉՄԱՆԱՏՈՒՆ..... | 209 |
| Աշխարհագրական դիրքը: Քաղաքի բնական | | Տեղադրություն: Պատմություն: Վիմագրեր | 209 |
| միջավայրը: Կլիմա: Կառուցապատում..... | 7 | ՇԵԽ-ՄԱԳՍՈՒԴԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ | |
| Հայերը Հայեպում | 10 | ԳԵՐԵՉՄԱՆԱՏՈՒՆ..... | 526 |
| Պատմություն | 10 | Տեղադրություն: Պատմություն: Վիմագրեր | 526 |
| Հայեպը կաթողիկոսանիստ: Առաջնորդներ..... | 18 | ՇԵԽ-ՄԱԳՍՈՒԴԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ | |
| Հայրենակցական միություններ | 23 | ԳԵՐԵՉՄԱՆԱՏՈՒՆ..... | 548 |
| Բնակչություն..... | 25 | Տեղադրություն: Պատմություն: Վիմագրեր | 548 |
| Սինչև Առաջին աշխարհամարտը Հայեպում | | ԷՄԱՆՈՒԵԼ ԵԿԵՂԵՑԻ..... | 557 |
| հաստատված հայերի ծննդավայրերի | | Տեղադրություն: Պատմություն: Ճարտարա- | |
| քարտեզ | 28 | պետություն: Վիմագրեր | 557 |
| Առաջին աշխարհամարտի ընթացքում և | | ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ..... | 560 |
| դրանից հետո Հայեպում ապաստան գտած | | Տեղադրություն: Պատմություն: Ճարտարա- | |
| հայերի ծննդավայրերի քարտեզ..... | 37 | պետություն | 560 |
| Հայերի զբաղմունքները | 47 | Վիմագրեր և եկեղեցական իրերի | |
| Հայերը Հայեպի բանտում..... | 49 | արձանագրություններ | 561 |
| Դպրոցներ..... | 51 | ԲԵԹԵԼ ԵԿԵՂԵՑԻ | 565 |
| Հայոց եկեղեցիներ..... | 59 | Տեղադրություն: Պատմություն: Ճարտարա- | |
| ՍԼԵՅԲԵԻ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ | 61 | պետություն: Վիմագիր | 565 |
| Տեղադրություն: Պատմություն | 61 | ՍԲ. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ..... | 567 |
| Ճարտարապետություն: Վիմագրեր և | | Տեղադրություն: Պատմություն: Ճարտարա- | |
| եկեղեցական իրերի արձանագրություններ..... | 62 | պետություն: Վիմագրեր և եկեղեցական | |
| ՍԲ. ՔԱՌԱՄՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻ..... | 95 | իրերի արձանագրություններ..... | 567 |
| Տեղադրություն: Պատմություն | 95 | ՍԲ. ՀԱԿՈՐ ԵԿԵՂԵՑԻ | 574 |
| Ճարտարապետություն | 96 | Տեղադրություն: Պատմություն: Ճարտարա- | |
| Վիմագրեր և եկեղեցական իրերի | | պետություն: Վիմագրեր և եկեղեցական | |
| արձանագրություններ | 98 | իրերի արձանագրություններ..... | 574 |
| ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵՎ ՍԲ. ՔԱՌԱՄՆԻՑ | | ՍԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ | 577 |
| ՄԱՆԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՆՆԵՐԻ ՇՐՋԱԲԱԿԸ | | Տեղադրություն: Պատմություն: Ճարտարա- | |
| ԵՎ ԿԻՑ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ..... | 151 | պետություն: Վիմագրեր և եկեղեցական | |
| Տեղադրություն: Պատմություն | 151 | իրերի արձանագրություններ..... | 577 |
| Ճարտարապետություն | 152 | ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻ..... | 580 |
| Վիմագրեր | 153 | Տեղադրություն: Պատմություն: Ճարտարա- | |
| ՀՈԳԵՏՈՒՆ | 172 | պետություն: Վիմագրեր և եկեղեցական | |
| Տեղադրություն: Պատմություն | 172 | իրերի արձանագրություններ..... | 580 |
| Ճարտարապետություն | 173 | ԾԵՐԱՆՈՑ..... | 585 |
| Վիմագրեր | 174 | Տեղադրություն: Պատմություն: Վիմագրեր և | |
| ԱԶԻԶԻԵԻ ԱԶԳ. ԳԵՐԵՉՄԱՆԱՏՈՒՆ..... | 179 | եկեղեցական իրերի արձանագրություններ..... | 585 |
| Տեղադրություն | 179 | ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐ..... | 591 |
| Պատմություն | 180 | Տեղադրություն: Պատմություն: Վիմագրեր | 591 |
| Վիմագրեր | 181 | ԳՈՒՆԱՎՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՅԱՆԿ | 593 |
| ՍԲ. ԿՈՒՄԻՆ ՍՈՐ ՕԳՆՈՒԹՅԱՆ | | ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ: ՉՓԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 594 |
| ԵԿԵՂԵՑԻ..... | 204 | ԱՆՉՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՅԱՆԿ | 595 |
| Տեղադրություն: Պատմություն | 204 | ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՅԱՆԿ..... | 641 |
| Ճարտարապետություն: Վիմագրեր և եկեղե- | | ՕԳՏԱԳՐՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԱՆԿ | 650 |
| ցական իրերի արձանագրություններ | 205 | | |

ՉԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ասիայից դեպի Եվրոպա և Նեդոսի հովտից Հայկական բարձրավանդակի վրայով դեպի հյուսիս ձգվող առևտրական հնագույն տարանցիկ ճանապարհների խաչմերուկում անհիշելի ժամանակներից ի վեր ծնունդ է առել հնագույն քաղաքակրթության օրրաններից մեկը՝ Մերձավոր Արևելքի առավել համբավավոր և վաճառաշահ Հալեպ քաղաքը:

Պատմական Հայաստանի և Կիլիկիայի սահմաններին հարավից հարևանակցող Հալեպում հայերը, ամենայն հավանականությամբ, ներկա են եղել դեռևս նախաքրիստոնեական ժամանակներից ի վեր, սակայն գրավոր աղբյուրներում նրանց մասին վկայություններ ենք գտնում՝ սկսած զարգացած միջնադարից:

Վաճառականության և արհեստների կենտրոն Հալեպը ժամանակի ընթացքում, ի թիվս տարբեր ազգերի ներկայացուցիչների, գրավել է նաև հայերին, սակայն վերջիններս հոծ խմբերով քաղաքում հաստատվել և ստվարացել են ոչ միայն զուտ նշյալ ոլորտներում գործունեություն ծավալելու շահագրգռվածության արդյունքում, այլև հայրենիքում տեղի ունեցած ցավալի անցքերի պատճառով, ինչպես՝ 1375 թ. Կիլիկյան թագավորության անկումը, 1604 թ. ողջ Արևելյան Հայաստանի և մասնավորապես Ջուղայի ավերումը, ԺԹ դարի երկրորդ կեսին Սասունում օսմանյան պետության հրահրմամբ և հովանավորությամբ քրդերի գործած հարստահարությունները, 1895-1896 թթ. հայկական նահանգներում ծավալված Համիդյան կոտորածները և, ի վերջո, 1915 թ. Մեծ եղեռնը:

Գաղթականության իրարահաջորդ հոսանքներն անցնող ժամանակի հետ ավելի բուռն ընթացք են հաղորդել հալեպահայության համայնքային կյանքի ինչպես տնտեսական, այնպես էլ մշակութային ոլորտներին: Ի մասնավորի՝ քաղաքում հայերը կառուցել են հասարակական առանձին շինություններ, եկեղեցիներ, դպրոցներ, իսկ հետագայում էլ քաղաքի արվարձաններում զոյացել են մի քանի գերեզմանատներ:

Ինչպես վերոնշյալ անշարժ, այնպես էլ իրենց ստեղծման վայրով Հալեպի հետ առնչություն չունեցող, սակայն Մեծ եղեռնից հետո այստեղ փոխադրված բազմաթիվ և տարաբնույթ շարժական (գլխավորապես եկեղեցական իրեր) հուշարձաններն աչքի են ընկնում պատմական մեծ արժեք ներկայացնող հարուստ վիմագրությամբ: Վերջիններիս մի նշանակալի մասը վավերական և կարևոր սկզբնաղբյուր է Հայաստանի պատմական զանազան անցքերի լուսաբանման առումով: Այստեղ բացառիկ նշանակություն ունեն 1915 թ.-ից հետո Հալեպում վախճանված հանգուցյալների հիշատակին կերտված տապանաքարերի արձանագրությունները, քանի որ դրանց մեջ, բացի հանգուցյալների անուն-ազգանուններից, շեշտված են նաև ծննդավայրերը, իսկ վերջիններիս հանրագումարը կարծես ուրվագծում է Պատմական Հայաստանի տեղանունների բառարան և յուրօրինակ կերպով փաստում Մեծ եղեռնի իրողությունը:

Հալեպի վիմագրական ժառանգությունը ցարդ ուսումնասիրել է Արտավազդ արք. Սյուրմեյանը (ունի որոշ բացթողումներ): Նյութի առավել լայն ընդգրկմամբ սույն աշխատությունը գալիս է լրացնելու այս ոլորտում կատարված աշխատանքը, որն ամփոփում է Հալեպում (պատմական Բերիա) 2006-2008 թթ. հավաքագրած հայկական վիմագրերի

և եկեղեցական իրերի արձանագրությունները: Դրանք ներկայացվում են ըստ գտնվելու վայրի՝ բացառությամբ Սբ. Քառասնից մանկանց և Աստվածածին (Սլեյքեի) եկեղեցիների արձանագրությունների, որոնք, անկախ գտնվելու վայրից, ներկայացվել են տվյալ եկեղեցու բաժնում:

Այսպիսով, հատորն ամփոփում է Հալեպի Սլեյքե թաղամասի Սբ. Աստվածածին, Սբ. Քառասնից մանկանց, դրանց շրջաբակի և կից կառույցների, Սբ. Կուսին մոր օգնությանց, Էմանուել, Սբ. Գրիգոր Լուսավորիչ, Սբ. Գևորգ, Սբ. Հակոբ, Սբ. Երրորդություն, Սբ. Աստվածածին մոր, Բեթել եկեղեցիների, Ազիզիեի ազգային, Շեխ-Մագսուդի հայ առաքելական, հայ ավետարանական, հայ կաթողիկե գերեզմանատների, Հոգետան, ծերանոցի և բնակելի մի քանի տների արձանագրությունները:

Յուրաքանչյուր վայրից հավաքված նյութը դասավորված է ժամանակագրորեն:

Արձանագրությունների հավաքման հարցում առաջնորդվել ենք հետևյալ սկզբունքով՝ անխտիր հավաքել և ներկայացնել մեզ հասանելի բոլոր արձանագրությունները՝ անկախ ծավալից, բովանդակությունից կամ պահպանվածության աստիճանից: Բացառություն են կազմում միայն Շեխ-Մագսուդի երեք համայնքներին պատկանող գերեզմանատների արձանագրությունները: Նկատի ունենալով վերջիններիս խիստ մեծ քանակը՝ հավաքածուում ներգրավել ենք այնպիսի տասպանագրեր, որտեղ, բացի հանգուցյալի անուն-ազգանունից, արձանագրված է եղել նաև տեղանուն:

Այս հատորի նախապատրաստական աշխատանքներին աջակցելու համար շնորհակալություն են հայտնում ուսուցիչներին՝ Մամվել Կարապետյանին և Էմմա Աբրահամյանին, ինչպես նաև հորս՝ Հարություն Քորթոշյանին, Բերիո թեմի առաջնորդ տեր Շահան եպիսկոպոս Սարգիսյանին, հայ կաթողիկեների առաջնորդ տեր Պետրոս արքեպիսկոպոս Սիրիաթյանին, հայ կաթողիկե վարդապետներ տեր Հովհաննես Թաշճյանին և տեր Կոմիտաս Դադադյանին, վերապատվելի Վաչե Էքմեքճյանին, Բերիո թեմի ղեկավար մարմնին, եկեղեցիների, գերեզմանատների, ծերանոցի աշխատակազմերի ներկայացուցիչներին և մեր հիմնադրամի աշխատակիցներին:

Պայմանական նշաններ

... Կետերով նշված են բնագրի մեջ չընթերցվող (ջնջված, հողմահարված, եղծված) գրերը:

[] փակագծով նշված են ջարդված կամ եղծված գրերի վերականգնումները վերծանության մեջ:

() փակագծով նշված են բնագրի մեջ գրչի բաց թողած, սղած կամ առանց պատվի նշանի (սղման, կրճատման նշան) սղումները վերծանության մեջ:

{ } փակագծով նշված են բնագրում եղած ավելորդ գրերը վերծանության մեջ:

| գծիկով նշված են բնագրի տողանջատումները վերծանության մեջ:

Մանր. վիմագրերում առկա են ուղղագրական, քերականական, ոճական բազմաթիվ սխալներ: Հարկ ենք համարել նշել միայն այն սխալները, որոնք շփոթության տեղիք են տալիս:

ՆԱԽԱԲԱՆ

Աշխարհագրական դիրքը. Հալեպ քաղաքը գտնվում է Սիրիայի Արաբական Հանրապետության հյուսիս-արևմուտքում՝ ուղիղ գծով Եփրատ գետից 79 կմ արևմուտք, իսկ Միջերկրական ծովից՝ 120 կմ արևելք, ծովի մակերևույթից 385-425 մ բարձրության վրա: Արևելք-արևմուտք ուղղությամբ ունի շուրջ 9.5 կմ երկարություն, իսկ հյուսիսից հարավ՝ 8.5 կմ լայնություն:

Քաղաքի բնական միջավայրը. Ի դարի սկզբին Հալեպ ժամանած ճանապարհորդ Հեկտոր Դիննինգը, նկարագրելով քաղաքը, գրել է. «Եթե Հալեպին նայեք որևէ բարձունքից, ինչն ամենևին էլ հեշտ գործ չէ, քանի որ նրա ողջ տարածքը չափազանց հարթ է, ապա բնական գեղեցկություն շատ չէք տեսնի...: Ոչինչ չի երևում, բացի տների տանիքների հարթ միօրինակությունից և նրանց մեջ մի տեսակ անհարմար ձևով վեր խոյացող միջնաբերդից, որն ասես մերկ կոզակ լինի այս միօրինակության մեջ: Շուրջն ամենուրեք միայն անապատ է: Սա է ամբողջը՝ չհաշված անապատի պռնկին տարածվող մրգատու աղբատիկ այգիները»¹:

Ունի մի գետակ. «...Քուվեյկ նեհրի անուամբ անհամ ջուրով որ կուգայ Անթապի ճատրղ գիտլեն՝ և միանալով ուրիշ ջուրերու հետ Հալեպի երեք ժամ մնացած Հայյան գիտլին քովեն մեկ երրորդ մաս մը կը բաժնուի կուգայ Հալեպ»²: Սրանից բացի՝ «...ջուր չունի, ի բաց առեալ մի քանի փոքրիկ աղբիւրներ որք քաղքեն բաւական հեռու են: Յիշեալ գետակը շատ պղտոր ըլլալով հանդերձ խմելու ալ շատ անյարմար է, որովհետև այս ջրեն խմողները Հալեպ շիպանը կոչուած գէշ վերքը կը հանեն...»³:

1925 թ. թուրքերը փոխում են դեպի Հալեպ հոսող գետի հունը⁴, և գետակը չորանում է⁵: Ներկայումս գետակը ձևավորվում է միայն անձրևաջրերից, իսկ ամռան ամիսներին Եփրատից ջրանցքով բերված

ջուրն արհեստականորեն գործածվում է միայն գետակի քաղաքամիջի հատվածում:

ԺԹ դարում հալեպցիների «...ամենէն շատ յաճախած զբօսավայրը Հավրա կոչուած տեղն է, զոր սակայն չարժեր զբօսավայր կոչել: Հավրան լայն փողոց... կամ խճուղի մըն է, որու մէկ կողմէն կը վազէ պղտոր առուակ մը զոր... միւս կողմերը ընդարձակ արտեր՝ որոնց մէջ ձիեր կ'արածուին և ահա այս արտերու եզերքը բացօդեայ տեղեր աթոռներ շարուած են, ուր ամէն իրիկուն կը դիմեն խոռոնեքան բազմութիւն մը արանց և կանանց, ծերոց և տղայոց, և ի՞նչ ընելու կուգան հոս, անշուշտ զիրար դիտելու կամ քաղաքիս յատուկ եղող անապատ փողոցն մէջ թաթխուելու... ամէն իրիկուն՝ մանաւանդ կիրակի՝ ամեն ազգէ և սեռէ խոռոն բազմութիւն մը հոս կը ժողովուին, իրարու քով խիտ առ խիտ նստելով...»⁶: Ա. Տեր-Հովհաննեսյանցի վկայությամբ՝ քաղաքից «...ժամ մի հեռի բարեհամ աղբիւր մի կայ, ուստի կը տանէն երեսիլի մարդիկ ջուր խմելու համար, և ներկարարները իրենց ներկածները աստ մի այն կը լուանան..., իւրաքանչիւր տան մէջ կը գտնուի բարեհամ ջրհորներ, գովելի մաքրութիւն եւ փափկասիրութիւն բնակչաց քաղաքիս հոշակուած է յամենայն տեղիս, մանաւանդ քրիստոնէից...»⁷:

Կլիմա. անձրևների սակավության պատճառով Հալեպի կլիման չորային է⁸: Չմռանը գրեթե ձյուն չի տեղում, իսկ ամռանը չափազանց շոգ է, սակայն «...չնմանիր երբեք այն քաղաքաց, որոնց մէջ բնակիլը ամառը անհանդուժելի ըլլալէ զատ վնասաբեր է...»⁹ (ի դեպ, հեղձուցիչ շոգի պատճառով էլ բնակիչների մի մասը գիշերում էր տանիքներում)¹⁰:

Կառուցապատում. 1616 թ. Հալեպ այցելած Սիմեոն Լեհացին նշել է. «Քաղաքը պարսպապատ է՝ աշտարակներով ու ամրոցներով, ունի տասը դուռ..., ունի հույժ ամրապինդ ամրոց անտաշ քարից... և շուրջը՝ խանդակ..., իսկ մեծ և խոր խանդա-

1 **Hector Dinning**, Nile to Aleppo, London, 1920, p. 167.

2 **Ղազանճեան Կ.**, Խառն մամակներ ուղեւորութեան, Կ. Պոլիս, 1886, էջ 150: **Տեր-Յովհաննէսեանց Ա.**, Կարճ ճանապարհորդութիւն յԱսորիս, «Միօն», 1868, էջ 212:

3 **Թիւրապեան Յ.**, Հալեպի վրայ ընդհանուր տեղեկութիւնք, «Արևելեան մամուլ», 1897, № 13, էջ 463:

4 «Արեւ», 16 սեպտեմբեր, 1925, էջ 2:

5 «Արեւ», 6 մարտ, 1929, էջ 2:

6 **Թիւրապեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 466:

7 **Տեր-Յովհաննէսեանց Ա.**, նշվ. հոդվ., էջ 212:

8 **Գապայէնճեան Գ.**, Սուրիա, «Տարբե», 1926, էջ 299:

9 **Թիւրապեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 463:

10 **Jhon Pinkerton**, A General Collection of the Best and Most Interesting Voyages and Travels in all Parts of the World, vol. 10, London, 1811, p. 526.



Տեսարան Հալեպի մերձակա բլուրներից



Հալեպի միջով հոսող գետակը վարարման ժամանակ

կի մեջ ջուր կար: Եվ ինչ տեսակ գազան ուզես՝ այն-տեղ կտեսնես»¹¹:

Նկարագրական այլ մանրամասներ է հաղորդում ճանապարհորդ Ռիչարդ Պոքոքեն, որը, ԺԸ դարի կեսերին այցելելով Հալեպ, գրում է, որ պարսպապատ քաղաքը հիմնվել է 2-3 բլուրների և մասամբ տափարակ վայրի վրա, իսկ հյուսիսում գտնվող և արհեստականորեն բարձրացված բլուրներից մեկի վրա էլ տարածվում է Հալեպի բերդը: Այնուհետև հավելում է, որ հրեաները և քրիստոնյաներն ապրում են քաղաքի մի, ֆրանկները՝ մեկ ուրիշ հատվածում, իսկ տները կառուցվել են իրար գլխի այնպես, որ կարելի է տանիքներով անցնել տնից տուն¹²:

1868 թ. ականատեսը Հալեպի կառուցապատման առնչությամբ նշում է, որ մրգատու ծառերով և պարտեզներով շրջապատված քաղաքը կառուցվել է հովտում գտնվող փոքր բլրակների ստորոտում. «...թեպետ բուն քաղաքին շրջապատը պարսպապատ է, ինչպես ցարդ կը տեսնուի, այլ գրեթե քաղաքին մեկ մասը դուրս ելած է, ինչպես որ բնակիչք տեղոյն ներսի և դուրսի քաղաք կ'անուանեն: Քաղաքը բնականապես եօթը դուռ ունի, որոնց այլ և այլ անուններ կ'ուտան տեղոյն ժողովուրդը: Յետին ժամանակը քանի մը դռներ ես բացուեր է: Պարսպին անկյունները կանգնած աշտարակները քաղաքին շքեղութիւն մը կուտան, բայց այժմ շատ տեղերը շինութեան և նորոգութեան կարօտութիւն ունի: Թէ՛ պարսպին և թէ՛ դռներուն վրայ արաբացի արձանագրութիւններ եւ ուրիշ քանդակուած գարդեր կը տեսնուին: Այժմ պարսպը անելի արժէք մի չունենալուն համար գրեթե քաղաքին մէջ ընկղմած է, տուներուն յաճախութենէ, ասոր նման է Գահիրէ քաղաքը: Քաղաքին դռները օրինաց համեմատ գիշերները կը փակուին, այլ պահապանք կը հսկեն միշտ, դուրսի քաղաք կոչուած տեղը դարձեալ կից է նոյն քաղաքին, մեծ մասամբ բնակարան քրիստոնէից և տեղի եկեղեցեաց և առաջնորդարանաց, ասոր մօտ է քրիստոնէից գերեզմանատունը: Ընդ-

հանրապէս Բերիա մեծամեծ եւ երեւելի շինուածներ ունի թէ՛ նոր և թէ՛ հին առհասարակ քարուկիր..., մեծ և ընդարձակ են շուկաները և վաճառատեղիքը հոյակապ քարուկիր շինուածներով և յարդարուն ճամբաներով, կարաւանատունք և իջեւանատեղիք բազմաթիւ են, ուր կը նստին երեւելի վաճառականներ: Առաջին կարգի է ջուխաճիներուն շուկան Սուգ Ալճէտիտ անուանեալ: Հասարակաց դիրութեան համար իւրաքանչիւր վաճառքներուն յատկացեալ վաճառատեղի որոշուած է, փողոցները յարդարուն և սալաշատակ, միշտ մաքուր: Քաղաքը թաղերու բաժնուած ըլլալով, իւրաքանչիւրը դուռ և գիշերապահ ունի, Գահիրէի թաղերը ասոր յար և նման է, բայց այս սովորութիւնը խափանուած է այժմ»¹³:

Քաղաքի կառույցների մեջ «...երևելի է բերդը իւր հնութեամբը քաղաքին յարեւելեան կողմը, բարձրաւանդակ քարաբլրի մի վերայ, կրկնապարսպով ամրացեալ, և շրջապատ յատակը խոր և լայն խրամներ (խանտէք) փորուած է, միայն դուռ մի ունի, որուն վերայ հին Արաբացի արձանագրութիւններ կը տեսնուի, բերդին բոլորտիքը վերի ծայրէն մինչեւ խրամները զառիթափ ուշուրում, և միանգամայն սալաշատակօք յարդարուած ըլլալով անհնար է մեկու մը ելլալ կամ իջնալ...: Ունի ստորերկրեայ տեղի իբր դարան, բայց վար իջնելը կարի երկիւղալի է, ներքին օդը ապականուած ըլլալուն: Այս բերդին մէջ է հնութեանց թանգարանը, ուր կը պահուին հին և նոր զենքերն, որ դարերէ ի վեր անկորուստ մնացեր են, գոր օրինակ՝ վահան, նետ և աղեղն, նիզակ և տէգ պէսպէս, սաղաւարտ, գրահ...»¹⁴:

Մեկ այլ ականատես էլ հավելել է. «Միջնաբերդը վեր է խոյանում արհեստական մի գորշ բլրի վրա, որտեղ բուսականության ոչ մի նշույլ չկա: Միայն բարձրանալուց հետո է, որ պարսպապատերի ներսում խոտ է երևում: Քաղաքի խիստ հարթ տեղանքն ավելի ցայտուն է դարձնում միջնաբերդի մերկությունը: Բացի սրանից՝ այն նաև հսկայական բարձրություն ունի: Պարսպապատից ներքև նրա կողմնային թեք հատվածները մինչև խանդակը երեսապատված են քարով: Նրա կամուրջը կառուցված է

11 Միմոն Լեհաջի, Ուղեգրություն (այսուհետև՝ Միմոն Լեհաջի, համապատասխան էջերով), Երևան, 1997, էջ 183:

12 Jhon Pinkerton, idem, pp. 526-527.

13 Տեր-Յովհաննեսյան Ա., նշվ. հոդվ., էջ 211:

14 Նշվ. հոդվ., էջ 211-212:



Տեսարան Չալեպի բերդից

մեծ, անմշակ քարերով, իսկ փլուզվող պարիսպը՝ կոպտատաշ ժայռի վիթխարի բեկորներով: Այս միջնաբերդը չափազանց ամրակուռ է և հզոր, ինչպես և սիրիական այն բոլոր միջնաբերդերը, որոնք կանգնեցվել են արհեստական բարձունքների վրա...: Հոմսի և Հալեպի նման վայրերում, ուր բնական բարձունքների պակասն այնքան խիստ է զգացվում, ստիպված արհեստական բլուրներ էին ստեղծում, և քանի որ դրանք այսպես թե այնպես պետք է ստեղծվեին, ապա դրանք ստեղծվում և վեր էին խոյանում ամենևին էլ ոչ աննշան բարձրությամբ... գրավիչ էր այն համայնապատկերը, որ բացվում էր պարսպի վերևից, որտեղից երևում էր հարթ, սպիտակ քաղաքն իր՝ այստեղ ու այնտեղ ցիբրուցան մինարեներով և եզրամասերին տարածվող սակավաթիվ մրգատու այգիներով»¹⁵:

Թաղամասեր. ԺԹ դարում քաղաքի քրիստոնյա բնակչության «...մեծ մասը Հարթ-էլ-Սալիպ՝ Խաչի թաղ կոչումով տեղը կը բնակին, իսկ ոմանք ներսի քաղաքը, որոնք առհասարակ ասոնք են՝ Հայք, Պա-

պական Հայք, Յոյնք, Պապական Յոյնք, Պապական Ասորիք և Մարոնիտք, որոնց ամեն մեկուն առանձին եկեղեցի, դպրոց, առաջնորդարան և եպիսկոպոս առաջնորդ կայ, իսկ ֆրանչիսկեան կրօնաւորք, Քարուչին և Լազարեան Քորք-Շիպլենի կոչումով խանը կը նստին, իրենց ձեռքը արդի ունեցած եկեղեցիներէն զատ յիշեալ տեղոյն մօտ կը կառուցանեն եկեղեցի մի հոյակապ չափազանց բարձր գոթացի ճարտարապետութեամբ, բայց տակաւին կայ, մնայ անկատար»¹⁶:

Ի դարի սկզբին քաղաքն ընդարձակվում է: Կառուցվում են նոր թաղամասեր: Հարավային մասում տարածված հին քաղաքում բնակվում են իսլամ արաբներ, իսկ հյուսիսային և արևմտյան կողմերում տարածվող նոր քաղաքամասը, որը բաղկացած էր «Համիտի, Սիլվեյմանի, Ազիզի, Ճեմիլի, Պոսթան-Գլեպ, և Ճտեյտե ու Սալիպե թաղերէն», քրիստոնեաբնակ էր: Այստեղ են կառուցված քրիստոնյաների բոլոր եկեղեցիները և դպրոցները¹⁷:

¹⁵ Hector Dinning, idem, pp. 175-177.

¹⁶ Տեր-Յովհաննեսյան Ա., նշվ. հոդվ., էջ 212:

¹⁷ Գապայենցեան Գ., նշվ. հոդվ., էջ 298-299:

2011 թ. դրությամբ հայերը հիմնականում բնակվում են Միդանի (Նորգյուղ), Սլեյմանիեի, Ազիզիեի և Շեխ-Թահայի շրջաններում:

Տներ. 1616 թ. նշվել է, որ քաղաքի հայ վաճառականների «...տները... բանկազին են, տաշած և կոփած, բարձր ու մեծ, Ամիթի տների մեծ...»¹⁸:

Ի դարի սկզբին Հալեպ այցելած Հեկտոր Դիննինգին հիացրել են քարե հատակ և փեղկավոր պատուհաններ ունեցող հին տները. «Այստեղ յուրաքանչյուր տուն ունի հիանալի ճաղաշարով և ապակյա փեղկավոր պատուհաններով պատշգամբ: Դուք չեք կարող պատկերացնել, թե ապակյա փեղկավոր պատուհաններով փողոցը հարմարավետության ինչ տպավորություն է բողմում: ... Սակայն եռանկյունաձև, ուղղանկյունաձև և ութանիստ պատուհանափեղկերով հարուստ փողոցի ամբողջական տպավորությունն է, որ գերում է մարդուն...: Փեղկավոր պատուհաններ ունեցող տներով այս փողոցները ցերեկը գեղեցիկ են, բայց շատ ավելի հաճելի տեսք ունեն գիշերը...»¹⁹:

ՀԱՅԵՐԸ ՀԱԼԵՊՈՒՄ

Պատմություն. հայերն առաջին անգամ Սիրիան նվաճում են Տիգրան Մեծի ժամանակ, որը մ.թ.ա. 83-69 թթ. հաստատում է իր գերիշխանությունը²⁰: Խոսելով Տիգրան Բ-ի ռազմական հաջողությունների մասին՝ Պլուտարքոսը գրում է. «Սկսելով փոքրածավալ, անեական արշավանքներից՝ նա ի վերջո կարողացել էր հպատակեցնել բազմաթիվ ժողովուրդների և պարթևներին գրկել էր իրենց նախկին հզորությունից, մի բան, որ իր նախորդներից ոչ ոք չէր արել: Կիլիկիայից և Կապադովկիայից նա տեղահանել էր բազմաթիվ հույների և բնակեցրել նրանց Միջագետքում: Նա իրենց կացարաններից դուրս էր քշել նաև վրանաբնակ արաբներին և ստիպել նրանց հաստատվել իր տարածքներում, որպեսզի նրանց օգնությամբ օգուտ քաղի առևտրից»²¹:

428 թ., երբ Հայաստանը բաժանվում է Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև, նվաճողների պատճառած արհավիրքների հետևանքով մեծ թվով հայեր հեռանում են հայրենիքից դեպի Կիլիկիա, Միջագետք, Սիրիա և Պաղեստին: Արտագաղթն ու բռնագաղթը կրկնապատկվում են արաբական արշավանքների ժամանակ: 640 թ. արաբական արշավանքից հետո արաբները, գերեվարելով 35000 հոգու, վերադառնում են Սիրիա, իսկ 650 թ. արշավանքի ժամանակ գերեվարվածների մի մասին Թեոդորոս Ռշտունին կարողանում է ազատել, մյուս մասը կրկին տարվում է Սիրիա²²:

18 Միմեոն Լեհաugh, էջ 182:

19 Hector Dinning, idem, pp. 170-171, 181.

20 Plutarch's Lives, vol. II, London, 1884, p. 436.

21 Idem, p. 447.

22 Գևորգ Գևորգյան, Երևան, 1982, էջ 22-24, 140:

Ը դարի կեսերին Սիրիայում և Հյուսիսային Միջագետքում հայերն արդեն մեծ թիվ էին կազմում: Այդ առնչությամբ ասորի ժամանակագիր Մար Դիոնեսիոս Ժագոբ Բար Սալիային 1173 թ. նշում է. «Մա ես կ'ուզեմք գիտցնել գիտութեան սիրահարներուն, որ Հայերը Սուրիա մտած են եւ գրաւած մեր եկեղեցիները, վանքերն ու գիւղերը, մեր Մար Աթենաս Գ պատրիարքի ժամանակ, որ միաբանեցաւ հայոց եւ անոնց Յովհաննէս (Օձնեցի) կաթողիկոսի հետ՝ Մանազկերտի մէջ, յունաց 1037 եւ փրկիչին 726 տարին»²³:

Եզիպտոսի Ֆաթիմյան խալիֆա Ալ-Հաբեմ Բիսմը Ալլահի կողմից 1016 թ. Հալեպի բերդի կառավարիչ է նշանակվում հայագրի Ազիզ ալ Տաուլեն, որին շնորհում են նաև իշխանաց իշխան տիտղոսը: Նա Հալեպում կատարում է շինարարական մեծ աշխատանքներ, նորոգում քաղաքի պաշտպանական կառույցները: Ապա դաշնակցելով Անտիոքի հույն իշխանի հետ՝ անկախանում է խալիֆայից և իր անունով դրամներ հատում: 1021 թ. հետո հաշտվում է նոր խալիֆա Ալ-Չահեյի հետ և նշանակվում Հալեպի կուսակալ: Նույն ժամանակ խալիֆան Բադր անունով մեկին նշանակում է Հալեպի բերդի կառավարիչ: Վերջինս հավանաբար 1023 թ. սպանում է հայ իշխանին²⁴:

Արու ալ Ֆիդան իր ժամանակագրության մեջ հիշատակում է Հալեպի բանակի հրամանատար հայագրի Շամս ալ Դին Լուլուին, որը հիջրի 646 թ. (1248-1249 թթ.) Հալեպի սուլթանի հրամանով պաշարում է Հոմսի բերդը և երկու ամիս հետո նվաճում այն: 1236 թ. նա ստանձնում է անչափահաս յոթամյա իշխան Ալ-Մալիք ալ Նասրի խնամակալությունը, որը սուլթան էր կարգվել՝ հաջորդելով նոր վախճանված հորը՝ Հալեպի սուլթան Ալ-Մալիք ալ Ազիզին: Շամս ալ Դին Լուլուին միևնույն ժամանակ Դամասկոսի բանակի հրամանատարն էր²⁵: Շեխ Զամել ալ Լոզզին իր Հալեպ քաղաքի պատմության մեջ նշում է, որ Շամս ալ Դին Լուլու ալ Արմենին ծագումով հայ է²⁶:

1260 թ. հունվարի 18-ին Հուլադու խանը պաշարում է Հալեպը: Հունվարի 24-ին գրավում է այն, իսկ փետրվարի 25-ին՝ միջնաբերդը: Նրան օգնում է Կիլիկիո չեթուն թագավորը 12.000 ձիավորից և 60.000

23 Միքսեան Ա., Պատմութիւն Հալեպի հայոց (այսուհետև՝ ՊՀՀ, համապատասխան էջերով), հ. 3, Փարիզ, 1950, էջ 3-4:

24 Ալլոյոյան Ա., Արաբական Միացյալ Հանրապետութեան Եզիպտոսի անահագր եւ հայերը, Գահիրե, 1960, էջ 17-18:

25 Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, հ. 3, կազմ: Նալբանդյան Հ., Երևան, 1965, էջ 235, 270: Շամս ալ Դին Լուլու ալ Արմենին չալեպ է շփոթել Բադր ալ Դին Լուլու ալ Արմենինի հետ, որը Մոսուլի սուլթանն էր 1217-1259 թթ. (Հայաստանի ազգային դիվան (այսուհետև՝ ՀԱԴ), ֆ. 1421, ց. 4, գ. 20, ք. 1-10):

26 Նիզար Խալիլի, Հայերը Հալեպի մեջ, «Օշական», 1982, № 5-6, էջ 25:

հետևակից բաղկացած զորքով²⁷: Հեռագայում Հուլիսի խանը Հալեայի շրջանն իր կենտրոնով հանձնում է Կիլիկիո թագավորին²⁸:

Հալեպահանակ հայերի մասին մեզ հայտնի առաջին վկայությունը ձեռագիր Ավետարանն է՝ գրված և ծաղկված 1329 թ. Հալեպում²⁹:

1335 թ. մայիսի 12-ին Հալեպի էմիրը՝ Ալթուն Բուղան, պաշարելով Սիսը, ավերում է շրջակա գյուղերը և մոտ 300 գերի վերցնելով՝ վերադառնում է Հալեպ³⁰:

Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ 1347 թ. «...հայերը հարձակումներ կատարեցին Այասի վրա...: Նրանց դեմ ելավ Այասի էմիրը..., և հայերից սպանվեցին շատ մարդիկ, և նրանցից բռնված գերիներն ու պետերը բերվեցին Հալեպ...»³¹:

1375 թ. Եգիպտոսի սուլթան Աշրաֆ Շաապանը և Հալեպի իշխանը գրավում են Սիսը և բազմաթիվ հայ իշխանների հետ գերեվարում նաև Լևոն Չ թագավորին: Հալեպով տանում են Եգիպտոս, սակայն 240 հայ երևելիներ իրենց ընտանիքներով և ծանոթներով մնում են քաղաքում, սկսում զբաղվել զանազան արհեստներով և ըստ դրանց՝ ստիպողաբար կրում արաբական ազգանուններ³²:

ԺՉ դարում բնակություն են հաստատում ջուղայեցի վաճառականները³³, որոնք այնքան են բարգավաճում, որ ԺՉ-ԺԷ դարերի ընթացքում քաղաքի առևտրի ասպարեզում մեծ ազդեցություն են ունենում³⁴:

ԺՉ դարում Հալեպի հայերի շրջանում տարածվում է կաթողիկոսությունը, որի պատճառով հաճախ բախումներ էին լինում առաքելական և կաթողիկոս հայերի միջև: Կարելի է հիշատակել 1585 թ. տեղի ունեցած մի դեպք, երբ Ազարիա կաթողիկոսը Հալեպում գրում և կնքում է մի կոնդակ՝ «...հաւատաց սահմանադրութեանց քաղկեդոնական...», հետևաբար ընդունում է կաթողիկոս դավանանքը: Սակայն, ըստ Դարանաղոս, Հալեպի առաջնորդ Ղազար եպիսկոպոսն էր, որ, Ազարիայից գաղտնի, նրա անունից գրում է այդ կոնդակը և Ազարիայի կնիքը գողանալով՝ կնքում է այն³⁵: Կոնդակի տակ Ղազար

եպիսկոպոսը գրում է իր վկայությունը կոնդակի ճշտության մասին, կնքում ու ստորագրում. «Ես Ղազար եպիսկոպոս Հալապ քաղաքի առնեմ վկայությունն որպէս տէր Ազարիա կաթողիկոսն մեր յառաջն քան զգալն ի Հալապայ յետին ժամանակս վասն Սիս գնարուն, ընդունեցաւ և յայտնեաց գասացեալ դաւանութիւն յուժմամբ և հատիր կայք ի յայս յայտնութիւն բազում քահանայիւք և այլ եպիսկոպոսիւք, և նմանապէս մեր և այլքն ընկալան և ընդունեցաք, կատարելապէս և գատով, և վկայութիւն առնեմք, որ կնիքն և ձեռագիրն ըստուզ ձեռամբ կաթողիկոսին է, ի վկայութիւն յայն գրեցի իմ ձեռքս և կնքեցի կնքաւ մայիս Ա շաբաթ»³⁶:

Հարկ է նշել, որ հայ առաքելականների և հայ կաթողիկոսների ծիսակատարությունները երբեմն տեղի էին ունենում նույն եկեղեցում: Օրինակ, հայտնի է, որ 1616 թ. «...Սուրբ Աստվածածին վանքում ֆռանկները երեք խորան ունեն, ուր ամեն շաբաթ ու կիրակի գալիս պատարագ են անում: Եվ եթե մերոնք պատարագելիս են լինում, նրանք գնում են Սուրբ Քառասունք»³⁷:

Տարբեր աղբյուրներում պահպանված բազմաթիվ փաստեր վկայում են 1633, 1639, 1655, 1657, 1660 թթ. մոլեռանդ մահմեդականների՝ Հալեպում հայերի հանդեպ կատարած ոտնձգությունների մասին: Նրանք ներխուժում էին քրիստոնյաների թաղերը, թալանում եկեղեցիները, խանութները, տները՝ ստիպելով կրոնափոխ լինել կամ փրկագին վճարել³⁸. «Թվն. ՌՉԲ (1633) մարտ ԻԲ (22) օրն ուրբթ. գնաց Հալապայ դազին ի Վոյվատայ խանն. ի յարևելից կողմն ի վերն Ֆռանկի եկեղեցի էր շինած Չ (6) տարով յոջ ելաւ նամագ արաւ ի մէջ եկեղեցուն, և ի մարտի ԻԵ (25)-ն ի Շիպէնի խանն Հալապ հին եկեղեցի կայր Ֆրանկին, մտաւ ազան կանչեց... և հայոց ազգն կու վախէր, թէ մեր եկեղեցիքն չի գայ...: Թվին ՌՉԲ (1633) մարտ ամսոյն ԻԷ (27) Հալապայ դազին ուղարկեց մօտեց գեկեղեցիքն հայուն, հոռնին, ասորոյն և մառունոյն...»³⁹:

1655 թ. Սեդի-Ահմադ փաշան գրավում և ավերում է Հալեպը, որի պատճառով վնասվում են նաև քրիստոնյաների թաղերը, թալանվում՝ եկեղեցիները, որոնց թվում՝ Սր. Քառասնից մանկանցը⁴⁰: 1670 թ. եկեղեցիները հրկիզվում են. «ի մեր հայոց թուականին ՌՃ և ԺԹ գեկեղեցիքն ճարրեցին...»⁴¹:

ԺԷ դարի երկրորդ կեսից առաքելական և կաթողիկոս հայերի միջև թեժանում են բախումները: 1660 թ.

27 Ապոստոլեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Բ, Գահիրէ, 1955, էջ 113: Հմմտ. Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., հ. 1, կազմ.՝ Հակոբյան Վ., Երևան, 1951, էջ 82, 105, 119:

28 ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (այսուհետև՝ ԺԳ, համապատասխան էջերով), կազմ.՝ Մաքլոսյան Ա., Երևան, 1984, էջ 297, 301: Տե՛ս նաև Հայկական սովետական հանրագիտարան (այսուհետև՝ ՀՍՀ), հ. 5, Երևան, 1979, էջ 411:

29 Տե՛ս սույն աշխ., էջ 61:

30 Արաբական աղբյուրներ..., հ. 3, էջ 287:

31 Նշվ. աշխ., էջ 250:

32 Նիզար Նալիլի. նշվ. հոդվ., էջ 26:

33 ՊՂՀ, էջ 64: Տե՛ս նաև Կարապետյան Մ., Հոռնի հայ գաղթօջախի պատմությունից, «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ «ՊԲՀ»), 1998, № 1-2, էջ 174:

34 Նշվ. աշխ., էջ 47-48:

35 Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետ Կամախեցոյ կամ Դարանաղոսոյ (այսուհետև՝ Գրիգոր Կամախեցի, համապատասխան էջերով), Երուսաղէմ, 1915, էջ 379-381:

36 Պալճեան Ա., Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս, Վիեննա, 1878, էջ 307:

37 Միմոն Լեհացի, էջ 182:

38 Թոփուզյան Հ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), Երևան, 1986, էջ 37:

39 Յուզակ հայերեն ձեռագրաց Հալեպի Ս. Քառասուն մանկուք եկեղեցոյ և մասնատրաց (այսուհետև՝ ՅՁՀՔՄ, համապատասխան էջերով), կազմ.՝ Միլոնեան Ա., Երուսաղէմ, 1935, էջ 387-388:

40 ՅՁՀՔՄ, էջ 191:

41 Նշվ. աշխ., էջ 229:

առաքելական 22 քահանաներից 13-ը կաթողիկոսություն են ընդունում: Նրանք կաթողիկոսականության խնդրանքով Հռոմում ուսանած Հովհաննես քահանային բարձրացնում են առաջնորդական աստիճանի: Սակայն Հովհաննեսը, իմանալով ժողովրդի դժգոհությունն ու Երուսաղեմի հայոց պատրիարք Աստվածատուր Տարոնեցու դիմադրությունը, գիշերը գաղտնի փախչում է և ապաստանում Եվրոպայում⁴²:

1737 թ. Հալեպի կաթողիկոս հայերը տիրում են Սբ. Աստվածածին եկեղեցուն. «ԹՎԻՆ ՌՃԶԶ (1737) գորացան Երկաբնագն, որ էր շար հերցվացքըն ի մեջ քաղաքիս Բերիայ, որ է Հալապ և ելին բազում կաշառս ետուն Օսման փաշին և այն ժամանակի մոլային և առին Սբ. Ածածնայ եկեղեցին, որ բազում խռովութի. եղև ի մեջ հաեոց ազգիս, զի բազում ըստակս ետուն դատավորաց, որ մինչև Գ (4) ամ մնաց ի ձեռս իրեանց, որ է Գ (4) տարի և ետոյ այց արար ած. ի վերայ լուսաորչի ազգիս և ոչ կամեցաւ կորուսանել ըզհաւատացեալս, այլ գնաց Միքայէլ կաթողիկոսն ի Կոստանդնուս քաղաքն և հանեաց ֆարման ի թագաւորէն և առաքեաց ի հետ եղբորն իւրում, որ է Գաբրիէլ վարդապետ նա, եկաւ ասոյ բազում աշխատութք. առեալ զեկեղեցին ի նոցանէ և դարձոյց ի լոյս ածգիտութե.»⁴²: Ըստ Ա. Արծիվյանի նամակի, որն ուղղված էր Միսիթար Սեբաստացուն, կաթողիկոս հայերը եկեղեցուն տիրում են 1738 թ. դեկտեմբերի 30-ին⁴⁴: Կիլիկիո կաթողիկոս Եփրեմ Ա Աջապահյանի վկայության համաձայն՝ կաթողիկոսները 5 տարի տիրում են Սբ. Քառասնից մանկանց և Սբ. Աստվածածին եկեղեցիներին. «...աղանդաւորք Լևոն չարին, և հետևողք պիղծ տօմարին: Միաբանեալք մի հաւաքին, ի Բերիա մեծ քաղաքին: Չեկեղեցիսն, որ անդ կրրկին, ուղղափառաց մերոց ազգին: Մինն կանգնեալ յանուն Կուսին, ժամանակաւ գոլով նա հին: Յանուն մանկանց Քառեակ տասին, Յարմարեցեալ է երկրորդին: Յափշտակեալք գայս երկուսին, հետեալքն ի մենջ յաղանդ չարին»⁴⁵:

1740 թ. կաթողիկոս հայերը վերջնականապես բաժանվում են առաքելական եկեղեցուց այն ժամանակ, երբ այնթապցի Աբրահամ վարդապետ Արծիվյանը Հալեպում ձեռնադրում է եպիսկոպոսների, որոնք էլ նրան կաթողիկոս են օծում: 1742 թ. Հռոմի Բենեդիկտոս ԺԳ պապը վավերացնում է այդ ձեռնադրությունը, որով և սկսվում է հայ կաթողիկոսականության ընդհանուր կաթողիկոսությունը⁴⁶:

42 ՊՀՀ, էջ 463-464:

43 ՅԶՀԶՄ, էջ 128:

44 **Թորոսեան Յ.**, Վարք Միսիթարայ արքայի Սեբաստացույ, Վենետիկ, 1901, էջ 463: Հմմտ. **Սևեան Ա.**, Հալեպի հայ գաղութին անցեալն ու ներկան, «Արեւելեան մամուլ», 1906, № 24, էջ 601:

45 **Բարզեն Ա արքայից կաթողիկոս**, Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիոյ, Անթիլիաս-Լիբանան, 1939, սյունակ 521-522:

46 **Բարզեն եպիսկոպոս**, Ազարիա Չողայեցի, «Տարե», 1928, էջ 98:

1778 թ. Հալեպի թեմն իր պատմության մեջ առաջին անգամ բաժանվում է Կիլիկիո կաթողիկոսությունից⁴⁷ և ենթարկվում Էջմիածնին. «Հալեպու ժողովուրդքն զգուեալ և վիրատրեալ հոգով չափ ի կաթողիկոսէն Սաայ՝ որ Եփրեմ անուանիւր, որ այլ չնստելով ի Սիս ի Հալեպ նստէր...»⁴⁸:

1852 թ. Հալեպում հաստատվում է ավետարանական եկեղեցին⁴⁹, որի անդամների մեծամասնությունն ազգությամբ հայ էր⁵⁰:

Հալեպի ազգ. առաջնորդարանում ծննդյան և մկրտության քիչ թե շատ կանոնավոր արձանագրությունները սկսվում են 1843 թ.-ից: Մինչև 1873 թ. այն եղել է արաբերեն, իսկ նրանից հետո՝ հայերեն⁵¹:

1876 թ. փետրվարի 10-ին Կ. Պոլսի պատրիարքարանի հանձնարարությամբ Բերիո թեմի առաջնորդական տեղապահ Հակոբ Ծ. վրդ. Արսլանյանը Հալեպում առաջին անգամ ձեռնարկում է սահմանադրական ժողովների ընտրություն, որի հետևանքով կազմվում է Գավառական ժողովը: Հետագայում այն Մովսես Ծ. վրդ. Կեոնրյուկճյանի օրոք՝ 1876 թ. հունիսի 18-ին, վավերացվում է Կ. Պոլսի ազգ. կենտրոնական վարչության կողմից: Ժողովի հանդիսավոր բացումը տեղի է ունենում 1877 թ. օգոստոսի 28-ին⁵²:

ԺԹ դարի վերջերին՝ Համիդյան կոտորածներից հետո, բազմաթիվ հայեր գաղթում են Հալեպ: 1895 թ., օրինակ, քաղաքում են հաստատվում Տիգրանակերտից, Եղեւսիայից, Արաբկիրից և մանավանդ Սասունից գաղթած հայերը⁵³:

1896 թ. նշվել է, որ «Անտիոքի հայ գիւղերը գործով շրջապատեալ են. յեղափոխականներ կը պահանջին: Արդէն գիւղացիք անձնատուր եղած և Հալէք տարած են»⁵⁴:

1896 թ. քաղաքում կար 5000 կարոտյալ գաղթական: Ամեն մեկին տրվում էր շաբաթական 60 «փարա»: Նրանց օգնում էին ամերիկացիները, իսկ պատրիարքն ուղարկում է 100 ոսկի⁵⁵:

1897 թ. Հալեպի Հոգեւանդ պատասպարվում են բազմաթիվ գաղթականներ. «...խեղճերը գրեթէ մուրացիկ կը պատին.- ո՛չ ոք գայնս հոգացող»⁵⁶:

47 Դիւան հայոց պատմութեան, հ. Գ (այսուհետև՝ ԳՀՊ), համապատասխան հատորներով և էջերով, կազմ.՝ **Աղանեան Գ.**, Թիֆլիս, 1899, սյունակ 329-331, 475:

48 ԳՀՊ, հ. ԺԱ, Թիֆլիս, 1910, սյունակ 188:

49 The Church at Home and Abroad, U.S.A., 1894, p. 25.

50 The Church of England Magazine, vol. 35, London, 1853, p. 394.

51 **Միքայէլեան Ա.**, Պատմութիւն Հալեպի ազգային գերեզմանատանց եւ արձանագիր հայերէն տապանաքարերու (այսուհետև՝ ՊՀԱԳԱՀՏ, համապատասխան էջերով), Հալեպ, 1935, էջ 10:

52 ՊՀՀ, էջ 836, 842:

53 **Գապայէնճեան Գ.**, նշվ. հոդվ., էջ 292:

54 «Դրոշակ», 1896, № 19, էջ 141:

55 Նույն տեղում:

56 **Մոնճեան Ս.**, Ուղեգրական Իսկէնտերունէ-Հալեպ, «Արեւելեան մամուլ», 1897, № 24, էջ 808, 810:

1897 թ. հուլիսի 8-ին Եղեսիայից Հալեպ են բերվում 10 որբեր⁵⁷:

1909 թ.՝ Ադանայի կոտորածների ժամանակ, տուժում են նաև հալեպահայերը: Ըստ Հալեպի առաջնորդ Շահե վարդապետ Գասպարյանի՝ 1909 թ. կոտորածների ընթացքում քաղաքում սպանվում է 368 հայ, իսկ վնասը կազմում է 11982 օսմանյան ոսկի⁵⁸:

Հալեպի հայ բնակչության թիվն ավելի է ստվարանում առանձնապես 1915-1918 թթ., երբ քաղաքն ակամա վերածվում է տարբեր բնակավայրերից տեղահանված և թուրքական կոտորածներից փրկված հայերի ապաստանավայրի: Դրա վկայությունն են ոչ միայն ականատեսների՝ հետագայում հրատարակված բազմաթիվ հուշագրությունները, այլև Հալեպի գերեզմանատների տապանագրերը:

1915 թ. մայիսին Հալեպ է հասնում գեթոնցիների առաջին քարավանը, այնուհետև ավելի քան երկու ամիս շարունակվում է Լեռնային Կիլիկիայի հայության հոսքը: Օգոստոսին հասնում են արևելյան նահանգների հայության բեկորները: Հալեպ են քշվում նաև Ադանայի, Սվազի, Մալաթիայի, Մարդինի, Բեյլանի, Քիլիսի, Կաթմայի, Քեսաբի հայերը: 1915-1916 թվականներին ավելի քան 350000 հայ հանգրվանում է Հալեպում և միառժամանակ մնալուց հետո քշվում անապատ⁵⁹: Միայն 1915 թ. հունիս և հուլիս ամիսներին քաղաք է հասնում և անցնում 5000, իսկ հուլիսի վերջերին՝ ավելի քան 50000 հայ⁶⁰:

Ըստ Քերովրե Ս. Փափազյանի հուշերի՝ 1915 թ. մայիսի վերջին արևելյան գավառներից Հալեպ են հասնում «...կիներ և ութ-տաս տարեկան մանչեր և աղջիկներ, որովհետև անկէ վեր տարիք ունեցողներ՝ արուները ջարդուեր էին...: Եկեղեցիներու, վարժարաններու բակերը, տանիքները, սաւաններով ու կարպետներով յարմարցուած վրաններու ներքև լցուած, ու մանաւանդ Երուսաղէմի վանքի սեպհական Հոգեւորնոյ ողբալի վիճակի մէջ տեղաւորուածներ, ողբով ու կոծով, ահ ու վախով կը սպասէին իրենց ճակատագրին...: Օրական՝ թիֆուսէն, թիֆոյիտէն ու զանազան վարակիչ հիւանդութիւններէն 50-60-70 մեռելներ թաղապետական աղբակառքերու մէջ 5-10 մեռեալ միասին կը փոխադրուէին հայ գերեզմանատունը, ուր քանի մը մեռեալ մէկ փոսի մէջ կը թաղուէին...»⁶¹:

Ադանացի Պողոս Մարգարյանի վկայությամբ՝ 1915 թ. հունիսի սկզբին «...ամէն կողմէն տեղահանեալ հայեր Հալեպ հասնել սկսան: Անոնք որ հրաշքով կամ դիպուածով մը ճամբան չեն մեռած՝ և ա-

զատուած... Կարինէն առաջին կարաւանը տեղահանեալ հազարաւոր մարդոց, կանանց և պզտիկներուն 90 առ հարիւրը ճամբան թալանուելէ վերջ, անօթութենէն, ծարաւէն և անգութօրէն զազանաբար սպաննութիւններէ ոչնչացած են, 10 առ հարիւրն ալ կիսամեռ, թշուառ վիճակի մէջ Հալեպ հասած են. մէջերնին այր մարդ երբեք չկայ: Այն շաբաթ պզտիկ խումբ մը հայեր ալ Կեսարիայէն Հալեպ հասան, հազարաւոր տեղահանեալ հայերէն հազար 20 առ հարիւրը ողջ»⁶²:

Գերմանացի մի ականատես էլ իր հուշերում գրել է, որ 2800 տեղահանված կյուրիցիներից Հալեպ են հասնում միայն 400-ը (բոլորն ավետարանական)⁶³, իսկ «Խարբերդէն ու Սիվազէ աքսորուած 18,000 հոգիներէ 350 կիներ ու տղաներ միայն հասան Հալեպ... եւ Կարինէ քշուած 19,000 հոգիներէ միայն 11ը ժամանեցին ողջ առողջ, հիւանդ տղայ մը, չորս մանկամարդ աղջիկներ եւ վեց կիներ...: Ի սկզբան Հալեպի մէջ մեռելները եկեղեցույ գերեզմանատանը կը փոխադրուին հայ եկեղեցույ կողմէ այս նպատակին յատկացուած դագաղներու մէջ: Բեռնակիրներ կը փոխադրէին եւ իւրաքանչիւր մեռելի համար 2 դահեկան կը ստանային: Երբ... այլևս չլրցան փոխադրել բոլոր մեռելները, կիները սկսան տանիլ իրենց մեռելները գերեզմանատուն...: Տեսայ մեռելներ, որոնք իշու մը կռնակը շեղակի բեռցուած, կ'երթային խաղաղութեան այրն...: Ուրիշ մէկը տեսած է եզներէ քաշուած սայլ մը, մեռելներով լեցուն՝ գերեզմանատան ճամբուն վրայ...: Կիրակի օր մը 30 մեռելներ տեսայ, 20 մեթր լայն եւ 40 մեթր երկայն բակի մը մէջ: Ասոնք մինչեւ իրիկուն հոն անթաղ մնացին: Կինս զանոնք մութին մէջ թաղել տուաւ, իւրաքանչիւր բեռնակիրի մէճիտիյէ մը տալով...: Մեռելներու մէջտեղ կը պառկէին մահամերձներ եւ ծանր հիւանդութիւններէ տառապողներ... մօտաւորապէս 1000 հոգի: Մոսկալի էր տեսարանը, զոր երբեք տեսած չէի առաջ, նոյնիսկ Մարաշի մէջ, ուր ականատես եղած էի 24 Հայերու գլխատման: Այս խեղճերը գրեթէ ամէնքն ալ փոքահարութեամբ վարակուած էին: Բակին մէջ առուակներ փորած էին, որոնց երկայնքն ի վեր մեռելները կը պառկէին...: Թուրքերը մեռնողը կը վերցնէին եւ անոնց տեղը ուրիշ մը կը պառկեցնէին...»⁶⁴:

1915 թ. հուլիսի սկզբին քաղաքում սկսվում են ձերբակալություններ: 30 հայ երիտասարդներ «լրդտեսության» պատրվակով կախաղան են բարձրացվում⁶⁵:

1915 թ. հուլիս 30-ից մինչև օգոստոսի 19-ը Հալեպ են աքսորվում Այնթապի հայերը⁶⁶:

57 Նշվ. հոդվ., էջ 811:

58 **Քելեշեան Մ.**, Միս-մատեսան, Պէյրոս, 1949, էջ 551:

59 **Թովուզյան Հ.**, նշվ. աշխ., էջ 111:

60 «Կոչնակ», 1915, № 46, էջ 1017:

61 **Եղիայեան Բ.**, Ատանայի հայոց պատմութիւն, Անթիլիաս, 1970, էջ 342, 344-345:

62 Նշվ. աշխ., էջ 396:

63 «Կոչնակ», 1917, № 4, էջ 123:

64 «Կոչնակ», 1917, № 7, էջ 218-219:

65 «Կոչնակ», 1915, № 29, էջ 601:

66 **Թովուզյան Հ.**, նշվ. աշխ., էջ 111: Հմմտ. «Կոչնակ», 1916, № 7, էջ 176:



Որբանոց, Հալեպ, 1922 թ.



Տեսարան գաղթականների հյուղավանից, Հալեպ, 1920 թ.

1915 թ. օգոստոսի դրությամբ քաղաքում «լեցուած են հազարներով հայեր, եւ անոնք ամենաքշուառ վիճակ մը կը պատկերացնեն»: Տեղի հայ ազգաբնակչությունը մեծ ջանքեր էր գործադրում կարոտյալներին աջակցելու համար⁶⁷:

1915 թ. նոյեմբերի 5-ին այստեղ են արքայազմը Լաքաքիայի հայերը⁶⁸:

Հալեպ արքայազմը Սահակ Բ Կիլիկիո կաթողիկոսը 1915 թ. հոկտեմբերի 21-ին միաբանների հետ արքայազմը է Իդլեք, իսկ հոկտեմբերի 23-ին նրան թույլ է տրվում վերադառնալ, որտեղից էլ հրահանգվում է 27-ին մեկնել Երուսաղեմ: Մեկնելուց առաջ հոկտեմբերի 26-ին, Սբ. Քառասնից մանկանց եկեղեցում գտնվող 1639 թ. ձեռագիր ճաշոցի մեջ գրում է. «1915 տարույ հայոց կեանքի արիւնոտ պատմութիւնը գրել շատ երկար ու շատ եղերեղական կը լինէր, ըսելը բաւական չէ բացատրելու խնդրութիւնը, և շատ դժուարին պիտի լինէր զայն պատկերացնել. քանի որ ազգային ոչ մէկ պատմագիր հանդիպած է, կամ ականատես եղած, ինչ որ ներկայ տարույս մէջ կատարուեցաւ: Տիեզերական պատմութիւնն ալ չունի նման էջ մը, որ ընդօրինակէինք այս տեղ: Ամբողջ հայաբնակ քաղաքները Անատոլիոյ և Կիլիկիայի, դատարկուեցան հայերէ: Անատոլիոյ հայերու այր մարդիկ, մինչև տասնևհինգ տարեկան, անողորմաբար կոտորուեցան, այրիները կապուտ ու կողոպուտ տարագրուեցան. երիտասարդ հարսներ ու կոյսեր և գեղանի արու մանուկներ առևանգուեցան: Կիլիկեցիք ըստ առաջնոյն իրենց տուներէն, կալուածներէն և դարաւոր հարստութենէն զրկուեցան, բայց կոտորածէ զերծ մնացին: Առաջինք ու վերջինք տարագրուեցան Հալեպի, Դամասկոսի կուսակալութեանց մէջ, մի կողմէն մինչև Մուսուլ, միւս կողմէն մինչև Քերեկ և այլ անձանօթ վայրեր: Թէ՛ կոտորածները և թէ՛ կենսական պէտքերու պակասութենէն մեռածներու իսկական թիւը միայն Աստուծոյ յայտնի է. մարդկային հաւանական հաշուով կէս միլիոնէն շատ ա-

ւելի պէտք է ըլլայ: Հայոց ընդհանուր եկեղեցեաց և վանօրէից հետ Սոյ հայրապետական արժոն ալ գրաւեցաւ...: Շատ տառապեցանք: Աստուած միայն կարող է քաղցրացնել դժբախտ Ազգի խնամ դառնագոյն բաժակը»⁶⁹:

1915 թ. Սիս քաղաքից տարբեր ուղղություններով տեղահանվում է ավելի քան 1000 հայ ընտանիք: Մոտ 150-ը հաստատվում են Հալեպում⁷⁰:

Մալաթիայի գավառի Հյուսիս-Մանսուր գավառակից տեղահանված հայերի երկու խմբից (ճանապարհ են ընկել 908 հոգով) քաղաք է հասնում միայն 449 մարդ⁷¹, իսկ Չարսանջակ գավառի Բերրիից տեղահանված 120 հոգուց՝ միայն 32-ը⁷²:

1915 թ. հուլիսի 31-ին հիմնվում է Հալեպի հայկական որբանոցը (վերապատվելի Շիրաճյան կամ Ալբունյան որբանոց)⁷³: Մինչև տարեկերջ որբերի թիվը 340-ից հասնում է 402-ի, 1916 թ.՝ 548-ի, 1917 թ.՝ 1003-ի, 1918 թ. հոկտեմբերին՝ 1500-ի, իսկ 1919 թ. ապրիլին՝ 1700-ի⁷⁴: 1921 թ. որբանոցում կային 564 տղա և 336 աղջիկ⁷⁵, իսկ 1922 թ. վերջին՝ 5-17 տարեկան 1241 որբեր, որոնցից 114-ը՝ կույր: Քրդերից, թուրքերից, արաբներից փրկված նորեկ որբերի թիվը հասնում էր 316-ի (մեծ մասը Խարբերդից էր)⁷⁶:

Ըստ Հալեպի առաջնորդարանում պահպանված Գաղթականաց հանձնախմբի 1915 թ. օգոստոսի 10-ի տեղեկագրի՝ «գաղթականաց շարժումը պարբերական հոսանքներով մեզ բերաւ գլխատրաբար Կարինի, Խարբերդի, Սըվազի, Ատիեամանի, Պեհեսնիի և այլ կողմերու դժբախտ հայութիւնը: Այրիացած կիներու և որբերու բազմութեան ստուար

69 ՅՉՀԶՄ, էջ 230:

70 Զէլչեան Մ., նշվ. աշխ., էջ 562-564:

71 «Կոչնակ», 1916, № 8, էջ 200:

72 Նույն տեղում:

73 Զեքեջյան Ռ., Հալեպի մեծամուն բժշկապետ Ա. Ա. Ալբունյան և իր գործը, Հալեպ, 1969, էջ 114:

74 «Արեւ», 23 մարտ, 1923, էջ 1:

75 Լևոնեան Ա., Հալեպի հայկ. որբանոց, «Մուրիահայ տարեցոյց», Հալեպ, 1924, էջ 56, 57:

76 «Կոչնակ», 1919, № 22, էջ 700:

67 «Կոչնակ», 1915, № 36, էջ 768:

68 «Մուրիահայ տարեցոյց», Հալեպ, 1925, էջ 218:

զանգումները հեղեղի նման թափուեցան Հալեայի վրայ...: Ներկայիս, յուլիսի 20-էն ի վեր եկած նոր որբ և այրիներուն թիւը կը հասնի 5000-ի, որոնք մինչև թուականս որևէ կառավարական նպաստ չեն ստացած, և կ'ապրեցուին մեր կողմէ տրուած օրական 180 կրամ հացով միայն... ասոնցմէ զատ, կան 500-600 զանազան գաղթականներ, տեղափոխուած հոս-հոն...: Այս 5000-6000 որբ և այրիներու մէջ գրեթէ բոլորովին մերկ և առանց որևէ անկողնի կամ ծածկոյթի, սնծամասնութիւնը պարտեզի մէջ բացօթեայ կը պատասպարուին, ու հիւանդութեամբ վարակուած են շատեր, և օրական 30-40 մահեր կը պատահին»⁷⁷:

1916 թ. մայիսին Բիթիաս գյուղից արքայազն 30 ընտանիք գտնուում էր քաղաքում⁷⁸:

1916 թ. օգոստոսի դրութեամբ նշվել է. «Հալեայի մէջ միշտ կայ ու կը մնայ 20000ի չափ հայութիւն մը, տարագրուած Հայաստանի ամեն կողմերէն: Հալեայի հայերը ունեցած կալուածներնին գրաւի դրին, իրենց թշուառ ազգակիցներուն հաց հասցնելու համար»⁷⁹:

1916 թ. հյուծված և սովալլուկ հայ գաղթականների շրջանում աճում է մահացութիւնը: Այդ է վկայում գերմանական դպրոցի ուսուցիչներից Մարտին Նիպագեն. «Կիսավեր իջևանատներում ես գտա քայքայված դիակների կույտեր, իսկ նրանց մեջ՝ դեռ կենդանի մարդիկ, որոնք վերջին շնչում էին...: Մեր դպրոցի շուրջը կային նման չորս իջևանատներ, որոնցում 7-800 սովահար տարագիրներ կային: ...Մեր դպրոցի աշակերտներն ամեն առավոտ անցնում էին նեղ փողոցներով՝ եզներին լծված երկանիվ սայլակների կողքով, որոնք բեռնված էին լիւնում ութ կամ տասը դիակներով՝ առանց դագաղի և պատանքի, ոտքերը և ձեռքերը՝ դրսում կախված»⁸⁰:

1916 թ. հոկտեմբերի դրութեամբ Հալեայում կար մոտավորապես 5000 հայ տարագիր Ադանայից, Չոք-Մարգպանից, Ալեքսանդրեաից: Նույն ժամանակահատվածում Խարբերդից բերվում են նաև 500 կին և աղջիկ⁸¹:

Կարինցի հայերից քաղաք է հասնում միայն 140 հոգի, «...որոնք այն աստիճան նիհար եւ խղճալի վիճակի մէջ էին, որ հազիւ կարելի էր զանոնք մարդկային էակ կարծել»⁸²:

77 **Տեմբրեան Վ.**, Գաւազանագիրք Լիբանանի և Սուրիոյ հայոց թեմերու առաջնորդութեանց, հ. Ա, Անթիլիաս, 1980, էջ 299-300: Հմմտ. **Քեճեան Մ.**, Մեր ազատագրումին պատմութիւնը. Խարբերդէն մինչև Ադեքսանդրիա (1915), «Կոչնակ», 1916, № 2, էջ 33:

78 «Կոչնակ», 1916, № 22, էջ 579:

79 «Կոչնակ», 1916, № 36, էջ 940: Հալեայի հայերի գաղթականներին ցուցաբերած օգնությունների մասին տես նաև **Քեճեան Մ.**, նշվ. հոդվ., էջ 33:

80 Quelques documents sur le sort des Arméniens en 1915-16 (publié par le Comité de l'Oeuvre de secours 1915 aux Arméniens), Genève, septembre 1916, fasc. III, pp. 148-149.

81 «Կոչնակ», 1916, № 41, էջ 1071:

82 **Յ. Խ.**, Հայկական ողբերգութիւնը, «Կոչնակ», 1918, № 26, էջ 2251:

Հալեայ հասած հայերը որոշ ժամանակ մնալուց հետո արքայազն են այլ վայրեր և սպանդանոցներ: 1916 թ. դեկտեմբերին Մոսուլի գերմանացի հյուպատոս Հեր Հոլշթայնը «Հալեայի մօտ արաբական գիւղի մը առջեւ տեսած է փոս մը՝ հայ դիակներով լեցուն: Գիւղին արաբները կ'ըսեն, թէ կառավարութեան հրամանով սպանած են այս հայերը»⁸³:

Չեյթունցի տարագիր Խաչեր Նորաշխարհյանն իր հուշերում գրում է. «Հալեայի մէջ տեղավորվեցինք Ս. Աստվածածին եկեղեցիին մէջ: Քաղաքի Պապ-Էլ-Ֆարաճի հրապարակէն մինչև Մալիպէ՛ եկեղեցո փողոցները կիտտէին հարյուրավոր հայ դիակներու գարշահոտութենէն: Հոս ու հոն, փողոցներու երկայնքին դիակներով, կիսամեռ հայորդիներով լեցված էր...: Հալեայ հասնողներուն մէկ մասը Դեյր Էզ-Չոր, ուրիշ մաս մըն ալ Դամասկոս և Հավրան արքայազններէն: Մեզ ևս հանգիստ չձգելով առաջնորդեցին Կյունրյուքիան, ուր հավաքված էին մեզմէ առաջ Այնթապէն և Մարաշէն ծանոթ ընտանիքներ: Արևածագին ֆրանսիական հիվանդանոցէն ճամփու դրվեցանք ոստիկաններու հսկողութեան տակ: Այս հիվանդանոցն ալ մեռելատունի մը վերածված էր: Հոն էին Չեյթունցի Պարութճյան և Եզեկիլեյան ընտանիքները, որոնցմէ մաս մը Հալեայի արվարձաններէն Միալի արքայազններէն»⁸⁴:

1917 թ. քաղաքի հինգ հաստատություններում աշխատում և բնակվում էին 5000 կին և մանուկ: Դրանցից մեկը թերևս 1918 թ. գործող օսմանյան բանակի համար հագուստ արտադրող գործարանն էր, որտեղ աշխատում էր 1500 հայ վարձատրվելով օրական կես կիլոգրամ հացով⁸⁵: Բացի աշխատողներից՝ «10000 տարագիրներ կան, որոնք սնունդ կը ստանան սնունդի կայարաններէն և 2000 որբեր կան ամերիկեան որբանոցներում»⁸⁶:

Մեկ այլ տվյալով՝ 1918 թ. վերջին գաղթական կանանց մի մասը՝ մոտ 2000 հոգի, աշխատում էր թուրքական բանակի գործարաններում⁸⁷:

1918 թ. սկզբին ամերիկյան հյուպատոս Ջեքսոնի տեղեկությամբ՝ Հալեայում կար 150000 փախստական⁸⁸:

1918 թ. Թալեաթի և Էնվերի նոր հրահանգով քաղաքի 5-70 տարեկան բոլոր հայերը պետք է ձերբակալվեին և կոտորվեին. «Այդ ժամէն սկսեալ ահաւոր ու ծանր չորս օրեր ապրեցաւ Հալեայի գաղթական հայութիւնը: Չորս օր ետք հայաջինչ մոլուցքը իջաւ, հանդարտեցաւ իր հետ տանելով խրտչած հօտին վերջին խլեակն ալ»⁸⁹:

83 «Կոչնակ», 1916, № 51, էջ 1326:

84 **Նորաշխարհյան Լ.**, Չեյթունը 1914-1921 թթ., Երևան, 1984, էջ 71-72:

85 **Պալապանեան Ս.**, Կեանքիս տար ու պաղ օրերը, Հալեայ, 1983, էջ 125-126:

86 «Կոչնակ», 1917, № 5, էջ 173:

87 «Կոչնակ», 1919, № 5, էջ 152:

88 «Կոչնակ», 1918, № 7, էջ 1743:

89 **Պալապանեան Ս.**, նշվ. աշխ., էջ 129:

1918 թ. հոկտեմբեր 26-ին անգլիական բանակը մտնում է Հալեպ, իսկ թուրքականը՝ նահանջում⁹⁰: Հայերի համար սկսվում է նոր ժամանակաշրջան:

1918 թ. դեկտեմբեր 4-ին, ընդդեմ թուրքական պետության, կազմակերպվում է ցեղասպանությունից մազապուրծ 50000 հայերի ցույց, որտեղ ցուցարարները ներկայացնում են իրենց պահանջները⁹¹:

1918-1919 թթ. նոր թափ է ստանում որբահավաքը: 1919 թ. հուլիսի վերջերից գրեթե ամեն օր Հալեպ են հասնում շրջակա քաղաքներից, գյուղերից և վրաններից ազատվածների մեծ և փոքր խմբեր⁹²:

1918 թ. վերջերին Հալեպում հայ գաղթականների թիվը հասնում էր 25000-30000-ի՝ մեծ մասամբ կանաչք և երեխաներ Պոլսից և մոտակա գավառներից, Կիլիկիայից, մի փոքր մասն էլ՝ Հայաստանից, որոնք գտնվում էին ծայրահեղ աղքատության մեջ⁹³:

1918 թ. դեկտեմբերի 29-ին Բեյրութից «Յուսաբեր»-ին ուղղված մի նամակի համաձայն՝ «Հալեպի գաղթականաց թիւը Դաշնակից բանակներու հոն հասնելէն առաջ 30 հազար կը հաշուուէր. ամիս մը վերջը այդ թիւը բարձրացաւ 45 հազարի, իսկ այսօր ամենաստույգ աղբիւրներ կը հաստատեն, թէ անոնց թիւը հասած է 75 հազարի եւ թէ ամիսէ մը կը կարծուի բարձրանայ 100 հազարի: Ամէն օր 500էն 1000 գաղթականներ կը թափուին Հալեպ՝ շրջակայ քաղաքներէն, գիւղերէն եւ Տէր-Չօրի շրջանէն»⁹⁴:

1918 թ. Հալեպ աքաղաղված հայերը սկսում են կամավոր զինվորագրվել անգլիական բանակին՝ որպէս Սիրիայի Ֆէյսալ թագավորի զինվորներ: Պատրաստվում են հետախուզական խմբեր և ուղարկվում Այնթապ, Եդեսիա, Բիրեջիկ, Չորք-Մարգալան, Ալեքսանդրետ և Ադանա⁹⁵:

1919 թ. փետրվարի 28-ին մոլեռանդ իսլամների ձեռքով և արաբ զինվորների, ոստիկանների, ժանդարմաների ղեկավարությամբ տեղի է ունենում Հալեպի ջարդը: Ըստ Հայ ազգային միության տեղեկագրի՝ ղեպերը սկսվում են առավոտյան ժամը 6-ին և շարունակվում մինչև ժամը 9-ը, որի ժամանակ սպանվում է 48, վիրավորվում՝ 110 և անհետ կորչում՝ 85 հայ. «...մէկ կողմէ կոտորածը կը շարունակուէր, միւս կողմէ քոյիսներ և ժանտարմաներ տունէ տուն մտնելով կը ձերբակալուէին հայ այր մարդիկը, ո-

րոնք կողոպտուէլ վերջ գարաքօլները կը դրկուէին, անկից ալ իրարու կապուէլով կը բշուէին արաբ թաղերու անձանօթ խորքերը...»⁹⁶: Կոտորածների ականատես սերաստացի Կարապետ Գաբիկյանի վկայությամբ՝ ջարդերը հրահրել են Ջումա-Բազարի հրապարակում հավաքված ցուցարարները՝ բողոքելով անգլիական կամ ֆրանսիական հովանավորության դեմ: Հրապարակում գտնվող հայերից ոչ մէկը չի փրկվում: Ապա սկսվում են հարձակումները հայաբնակ թաղերի և տների վրա: Ջարդերը տևում են 3-4 ժամ, որի հետևանքով սպանվում է 65-75, վիրավորվում՝ 90 հայ⁹⁷:

Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ «...45 Հայեր մեռցուցած եւ 150 անձինք ալ վիրաւորուած են»⁹⁸:

1919 թ. մարտի 8-ին Կարապետ Գաբիկյանի՝ հարագատին ուղղված մի նամակում նշվել է. «Հալեպի գաղթականաց թիւը մօտ 35-40,000 կը հաշուուի»⁹⁹:

1919 թ. Հալեպում հիշվում են բազմաթիվ փրկված գաղթականներ Ամասիայից¹⁰⁰, Յոզղաթից¹⁰¹, Արաբկիրից¹⁰², Թալասից, Չառայից¹⁰³, Կյուրիմից, Կեսարիայից, Չամլաթից¹⁰⁴, Կարիմից, Մարզվանից, Մեքաստիայից, Մարաշից¹⁰⁵, Հաճնից, Բաֆրայից, Այնթապից, Ակնից, Եդեսիայից¹⁰⁶, Տիգրանակերտից, Մաղենից, Արդնից, Լճնից, Ֆարգինից, Հազրոյից, Հայնեից, Պշերիկից, Չնքուշից, Ազից, Տպնեից¹⁰⁷: Գաղթականների մեծ մասը մնում էր «Ռամատանիյեի թրքական գորանոցը, որ վերածված էր Հայկական գաղթականայանի և որը կզոնվեր քաղաքին հյուսիս-արևելքը՝ բարձունքի մը վրա: Ջորանոցը խճճված էր այլևայլ շրջաններէ հավաքված որբ և որբուհիներով: Արգահատելի էր դրությունը. մանկտի օրիորդներու և դեռատի հարսներու իսլամ հարեմներու մեջ կրած ձևափոխությունը ակներև էր: Ծնոտ, քիթ, բերան, քն և ոտք՝ նախշուն իրերով, պճրլիկ-մճրլիկ գույներով ներկված էին և իրենց հայկական հմայքը կորսնցուցած. պզտիկներ՝ հագիվ հինգ-վեց տարեկան, ծնողական գուրգուրանքէ գուրկ թուրք ընտանիքներու մեջ՝ մոռցած էին հայերենը, և՝ «Ապի, ամի, ախի» բառերով կարտահայտվէին: Որդեկորույս մայրեր և տատիկներ, վերհիշելով իրենց սրտահատորները, կջա-

96 ՀԱԳ, ֆ. 430, ց. 1, գ. 786, թ. 5-6:

97 Գաբիկյան Կ., Եդեսիայատում Փոքուն Հայոց և նորին մեծի մայրաքաղաքին Մեքաստիոյ, Պոսքըն, 1924, էջ 554-555: Հմմտ. Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 565:

1788 թ.

● Գեղամիտ 1721 թ.

● Արարատ 1625 թ.

Վ Ա Ն Ա
Լ Ի Ճ

● Կաթնիկ 1624 թ.
1656 թ.
1739 թ.
1801 թ.

Ստեփանոս 1768 թ.

Ը

ՍԵՎԱՆ

ԼԻՃ

Քրդասան 1691 թ.
Տարսղ 1715 թ.

Չորեքանց 1678 թ.
Կարս 1678 թ.
1691 թ.
1715 թ.
Ռոմեո 1758 թ.

Շահինո 1656 թ.

Լեփեյան 1728 թ.

Շոռ 1680 թ.

Աստղաղ 1633 թ.
1641 թ.
1669 թ.

Խոջաբն 1632 թ.
1702 թ.
1732 թ.
1779 թ.
1782 թ.

Տրեա 1660 թ.
1762 թ.

Կարսի 1725 թ.

Չորեք 1566 թ., 1579 թ.
1586 թ., 1587 թ.
1589 թ., 1590 թ.
1595 թ., 1598 թ.
1599 թ., 1600 թ.
1601 թ., 1602 թ.
1620 թ., 1621 թ.
1623 թ., 1624 թ.
1625 թ., 1628 թ.
1631 թ., 1653 թ.
1654 թ., 1655 թ.
1658 թ., 1672 թ.
1676 թ., 1679 թ.
1686 թ., 1689 թ.
1741 թ., 1822-1823 թթ.


Չալա 1697 թ.

Շահաբն 1786 թ.

Արսալեց 1741 թ.
1821-1822 թթ.

Քարսի 1669 թ.
1706 թ.

Առաջին աշխարհամարտի ընթացքում եւ դրանից հետո Հալեթում առկայիւմ գտած հայերի ծննդավայրերն ըստ Հալեթի արձանագրութիւններում նշուած տեղանունների եւ որոշ բնակավայրերից գաղթի ժամանակ Հալեթ բերված եկեղեցական իրերի









● Luzhynskiy 1

D

● Luzhynskiy 1

● Luzhynskiy 1

● Luzhynskiy 2

● Luzhynskiy 1

● Flussmündung 1

Q

● Punkt 1 ●

● Punkt 2 ●

● Punkt 11 ●

● Punkt 4 ●







Ս Ի Ջ Ե Ր Կ Ր Ա Կ Ա Ն

Թ Ո Կ

Յեմե-Էյբեկ 11



Այրիսան 13

Հան 7

Կախա 1

Չեթու 41

Կապու 1

Չեթու 1

Կապու 1

Անաղ 123

Կիս 12

Կաթիկ 1

Բարե 1

Աման 6

Հասանդի 8

Չարիկ 1

Այրաղ 508

Արսես 9

Չոր-Անդալան 14

Այրասնդու 9

Երաղ 1

Բաշակ 1 Թեփուրե-Օրտե 1

Բիս 227

Հախա


Անդուղ 9

Չեթու 2
Արսես 7

Ս Ի Ջ Ե Ր Կ Ր Ա Կ Ա Ն

Թ Ո Կ

Է





D

Բազմոց 1

Թալաշ 2

Օճախ 1

Կապան 23

Քոչ 6

Յուզեմա 1

Շարսնիկ 1

Յուզեմա 1

Թեղի 1

Թիսուս 2

Բաշխատար 1

Գրինա 1

Ճրակ 1

Արց 12

Արսաբ

Ծղուկ 1

Պելեգանք 1

Ապարանք

Շախնա 1

Կան 4

ԼԱՆ 3

Շախն 9

Սարյանի 1

Շարսնա 1

Շախն 3

Շարսնա 1

Շարսնա 1

Շարսնա 1

Շարսնա 1

Շարսնա 1

Շարսնա 1

Շարսնա 1

Շարսնա 1

Շարսնա 1

Բարձր 4

Թարսանի 1

Երևան 1

Շախն 5

Լորեն 1

Կապան 1

Կապան 3

Կապան

Կապան 89

Յուզեմա 2

Արց 8

Կապան 1

Հայերի զբաղմունքները. առնվազն վաղ միջնադարից վաճառաշահ հալեպյն իրեն է ձգել նաև հայ վաճառականներին, որոնց վերաբերյալ մեզ համընդհանուր առաջին տեղեկությունը 1563 թ.-ից է. «...ես՝ Կեսար Ֆրեդերիկս, լինելով Վենետիկում և մեծ ցանկություն ունենալով տեսնել աշխարհի արևելյան կողմերը, ճանապարհորդություն կատարեցի դեպի Հալեպ, որտեղ ծանոթացա հայաստանցի վաճառականների հետ...»⁴⁴⁰: 1600⁴⁴¹, 1602⁴⁴², 1611 թթ.⁴⁴³ հիշվում են ջուղայեցի, իսկ 1616 թ.՝ նրանց հետ նաև ամիդցի վաճառականները⁴⁴⁴: Հալեպի հայ վաճառականները շրջում էին աշխարհով մեկ, հասնում Հնդկաստան, Բաղդադ, Սպահան⁴⁴⁵, Հաբեշիստան⁴⁴⁶, Եվրոպա⁴⁴⁷, մինչև իսկ Հյուսիսային Արցախի Կրգեն գյուղ, որը նշանավոր էր մետաքսաբերով⁴⁴⁸:

Հալեպահայերը մեծ դեր են խաղում նաև Հալեպի արհեստագործության զարգացման ոլորտում:

ԺԷ դարում հայերի հիմնական զբաղմունքներից էին մուշտակագործությունը⁴⁴⁹, դերձակությունը⁴⁵⁰ և ոսկերչությունը⁴⁵¹:

Հալեպաբնակ հացագործ սասունցիների մասին մեզ հայտնի առաջին տեղեկությունը վերաբերում է 1755 թ.⁴⁵²:

ԺԸ դարի առաջին կեսին անգլիացի բժիշկ Ալեքսանդր Ռասսելը հայերի մասին հետաքրքիր տեղեկություն է հաղորդում. «Կախաղանը մարդասպանների նկատմամբ կիրառվող սովորական պատժաձևն է...: ...Դահձի դերում սովորաբար հանդես են գալիս հայ քրիստոնյաները, սակայն հաճախ, երբ զինվորները քայլում են դեպի մահապատժի վայր, պատահականորեն իրենց հանդիպած հրեաներին կամ քրիստոնյաներին ստիպում

են կատարել այդ գործը՝ նրանցից դրան շորթելու նպատակով: Թեև գլխատուր մահապատժի շատ տարածված միջոց է թուրքերի մոտ, Հալեպում այն իրագործվում է շատ անշնորհք ձևով, քանի որ դահիճները հիմնականում անփորձ են լինում»⁴⁵³:

ԺԸ դարում հայերը զբաղվում էին ոսկերչությամբ⁴⁵⁴, սպասարկությամբ⁴⁵⁵, դերձակությամբ⁴⁵⁶, մուշտագործությամբ⁴⁵⁷, քարտաշությամբ⁴⁵⁸, մուշտակագործությամբ⁴⁵⁹, գոտիագործությամբ⁴⁶⁰, կաշեգործությամբ⁴⁶¹, կտավագործությամբ⁴⁶², սաղափագործությամբ⁴⁶³, ժամագործությամբ⁴⁶⁴:

1844 թ. Հալեպում գտնվող արաբկիրցիներից 104-ը բեռնակիր էին, 31-ը՝ դերձակ⁴⁶⁵, 27-ը՝ սպասավոր, 21-ը՝ իջևանատան գործավոր, 9-ը՝ գարու վաճառական, իսկ քաղաքի 59 ոսկերիչներից⁴⁶⁶ 34-ը՝ տեղաբնակ հայ, մեծ մասամբ՝ արաբկիրցի⁴⁶⁷: Նույն թվականին պանդուխտ 154 սասունցիներից 39-ը բեռնակիր էին, իսկ 111-ը՝ հացագործ⁴⁶⁸: 1897 թ. Հալեպ «քաղաքի... հայերը գրեթե մեծաւ մասամբ վաճառականութեամբ⁴⁶⁹ կ'զբաղին...: Հայոց միւս մասն ալ կ'զբաղին գանազան արհեստներով...: Եւ-

440 Hakluytus Posthumus or Purchas his Pilgrimes, by **Samuel Purchas**, vol. X, Glasgow, MCMV (1905), p. 88.

441 A collection of voyages and travels, vol. 1, p. 803. Ըստ հեղինակի՝ ջուղայեցիները «վաճառքի նպատակով մետաքս են բերում Հալեպ և ազնիվ են առևտրի մեջ»:

442 **Կարապետյան Մ.**, նշվ. հոդվ., էջ 174:

443 **Գրիգոր Կամախեցի**, էջ 326, 328:

444 **Սիմեոն Լեհացի**, էջ 182-183:

445 Նույն տեղում:

446 ՊՀՀ, էջ 508-509:

447 «Ի թվին հայոց ՌճԼԲ, փետրվար ամսոյ Բ ատորն, ես բաղեշեցի մահտեսի Շահմուրատս գնացի ի թագաւորանիստ քաղաքն Վերսալիայ, տեսայ... Հալապցի Դազարոսի որդի Ջուզէփն...» (**Կարապետյան Մ.**, նշվ. հոդվ., էջ 176):

448 **Քարխտարեանց Մ.**, Արցախ, Բագու, 1895, էջ 59: Ի դեպ, մինչև 1988 թ. հայաբնակ Կրգեն գյուղի գերեզմանոցում գտնվում էր հալեպցի խոջա Ավդուլբարիմին պատկանող 1672 թ. տապանաքարը (**Կարապետյան Մ.**, Հյուսիսային Արցախ, Երևան, 2004, էջ 297):

449 Մի քանիսի մասին տե՛ս Հոգետան № 5, Ազիզիեի գերեզմանատան № 73, 86 արձ.:

450 Մի քանիսի մասին տե՛ս Ազիզիեի գերեզմանատան արձ. № 61, 95:

451 Նրանցից մեկի մասին տե՛ս Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 40:

452 **Սեմերճեան Է.**, նշվ. հոդվ., էջ 280:

453 **Alex. Russell**, The Natural History of Aleppo, vol. 1, London, 1794, p. 333.

454 Նրանցից մեկի մասին տե՛ս Ազիզիեի գերեզմանատան արձ. № 171:

455 Մի քանիսի մասին տե՛ս նույն գերեզմանատան արձ. № 100, 137:

456 Մի քանիսի մասին տե՛ս նույն գերեզմանատան արձ. № 114, 145, 163, 183, 186, 191: Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 64, 65:

457 Նրանցից մեկի մասին տե՛ս Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 44:

458 Նրանցից մեկի մասին տե՛ս Ազիզիեի գերեզմանատան արձ. № 123:

459 Մի քանիսի մասին տե՛ս նույն գերեզմանատան արձ. № 109, 128:

460 Նրանցից մեկի մասին տե՛ս նույն գերեզմանատան արձ. № 148:

461 Նրանցից մեկի մասին տե՛ս նույն գերեզմանատան արձ. № 185:

462 Մի քանիսի մասին տե՛ս նույն գերեզմանատան արձ. № 192, քննակելի տների արձ. № 2:

463 **Միքսեան Ա.**, ՊՀՀ, էջ 699:

464 Նրանցից մեկի մասին տե՛ս Ազիզիեի գերեզմանատան արձ. № 241:

465 Մեզ հայտնի դերձակներից է Հակոբը, որի որդին մահացել է 1827 թ. (տե՛ս նույն գերեզմանատան արձ. № 291):

466 Մեզ հայտնի ոսկերիչներից է 1878-1887 թթ. Բերիո թեմի ազգային գավառական ընդհանուր ժողովի երեսփոխան Աբրահամ Սայեղը (տե՛ս Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 104):

467 **Քեշիշեան Վ.**, նշվ. աշխ., էջ 198:

468 **Քեշիշեան Վ.**, նշվ. հոդվ., էջ 114: Սասունցի հացագործները հիշվում են նաև 1866 (**Տեր-Յովհաննեսեանց Ա.**, նշվ. հոդվ., էջ 213), 1888 (**Քաջումի Մ.**, նշվ. հոդվ., էջ 15), 1897 (**Թիւրապեան Յ.**, Հալեպի հայեր, էջ 216) թթ.: Մեզ հայտնի է նաև հալեպաբնակ արաբկիրցի հացագործ մահտեսի Գրիգորը (տե՛ս Ազիզիեի գերեզմանատան արձ. № 287):

469 ԺԹ դարի վերջին հալեպաբնակ տիգրանակերտցի և արաբկիրցի հայերը զբաղվում էին առևտրով (**Գապայեճեան Գ.**, նշվ. հոդվ., էջ 291): Մեզ հայտնի տիգրանակերտցի վաճառականներից է 1909 թ. վախճանված Տիգրան Գապաֆյանը (տե՛ս Շեխ-Մսազուդի առաքելական գերեզմանատան արձ. № 19):



Հալեպի Կիլիկյան որբանոց-արհեստանոցի կոշկակարության դասարանը (լուս.՝ 1923 թ.)

րոպական դերձակ⁴⁷⁰ և կոշկակարներու երևելիները հայոցմէ են...»⁴⁷¹:

Կարևոր ճյուղերից էր գորգագործությունը: 1898 թ. Կարապետ Քեհեայանը Հալեպում հիմնում է գորգագործական արհեստանոց, որը 1912 թ. վերածվում է խոշոր ձեռնարկության⁴⁷²: 1900-ականներին քաղաքի բազմաթիվ խաներում աշխատում էին հայ հանձնակատարներ և առևտրականներ: Հայերին էին վստահվում նաև խաների պահպանությունը, ինչպես նաև դրամատների և հյուպատոսարանների ծառայությունը⁴⁷³:

ԺԹ դարից մինչև Ի դարի սկիզբը հալեպահայերը զբաղվում էին նաև գրչագործությամբ (փորագրությամբ)⁴⁷⁴, կտավագործությամբ⁴⁷⁵, մուշտակագործությամբ⁴⁷⁶, սվինագործությամբ⁴⁷⁷, մոմագործությամբ⁴⁷⁸, ժամագործությամբ⁴⁷⁹, դեղագործությամբ⁴⁸⁰, հացագործությամբ⁴⁸¹ և բժշկությամբ⁴⁸²:

470 Եղեռնի նախօրեին Հալեպում դերձակությունը հիմնականում արաբկիլիցիների մեծաշնորհն էր (**Փղատեան Ա.**, նշվ. աշխ., էջ 923), սակայն մեզ հայտնի է խարբերոցի դերձակ Սարգիս Ավետիսյանը, որը մահացել է 1907 թ. (տե՛ս Եելի-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 16):

471 **Թխրասյեան Յ.**, Հալեպի հայեր, էջ 216:

472 **Միքայելյան Վ.**, Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 2, Երևան, 2003, էջ 323:

473 1905 թ. տարբեր շրջաններից Հալեպ եկած պանդուխտ 320 հայերը զբաղվում էին ծառայությամբ (ՊՀՀ, հ. 3, էջ 894), իսկ 1906 թ. պանդուխտ չնշկածագիները՝ նաև խոհարարությամբ (**Սևեան Ա.**, նշվ. հոդվ., № 25, էջ 614):

474 Մի քանիսի մասին տե՛ս Ազիզիեի գերեզմանատան արձ. № 253, 293:

475 Մի քանիսի մասին տե՛ս նույն գերեզմանատան արձ. № 256: Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 75:

476 Նրանցից մեկի մասին տե՛ս Ազիզիեի գերեզմանատան արձ. № 263:

477 Նրանցից մեկի մասին տե՛ս Սբ. Աստվածածին եկեղեցու արձ. № 61:

478 Նրանցից մեկի մասին տե՛ս Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 94:

479 Նրանցից մեկի մասին տե՛ս Սբ. Աստվածածին եկեղեցու արձ. № 71:

480 Նրանցից մեկի մասին տե՛ս Եելի-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 15:

481 **Փիրանեան Տ.**, Մուրիհայ վաճառականը երեկ և այսօր, «Մուրիհայ տարեցոյց», Հալեպ, 1924, էջ 215: Տե՛ս նաև ՊՀՀ, էջ 894: 1906 թ. նշվել է, որ փառապանությամբ, հացագործությամբ և ջրաղացպանությամբ զբաղվող սասունցիները չնչին



Կիլիկյան որբանոց-արհեստանոցի երկաթագործության դասարանը (լուս.՝ 1923 թ.)

Առաջին աշխարհամարտի ավարտին Հալեպում հանգրվանած հայերը հայտնվել էին նյութական դժվարությունների մեջ, որից ազատվելու միակ ելքն աշխատանքն էր: Այդ իսկ պատճառով էլ 1920-ական թթ. գաղթական հայ կանայք սկսում են զբաղվել ասեղնագործությամբ՝ ստեղծելով Սերաստիայի, Մարաշի, Այնթապի, Քիլիսի, Ուրֆայի, Վանի ասեղնագործական դպրոցներին բնորոշ աշխատանքներ, որոնք էլ եվրոպացի միսիոներներն արտահանում էին Եվրոպա⁴⁸³:

1921 թ. վերջերին բացվում է Կիլիկյան որբանոց-արհեստանոցը, որը 1922 թ. տալիս է 50, իսկ 1923 թ.՝ 91 շրջանավարտ (31 կոշկակար, 17 դերձակ, 4 երկաթագործ, 4 վարորդ, 19 ատաղձագործ, 4 կահագործ, 8 մեքենագործ, 2 փորագրիչ, 1 քանդակագործ, 1 խաղախորդ)⁴⁸⁴:

1925 թ. տվյալների համաձայն՝ հայ գաղթականներն ըստ զբաղմունքի բաժանվում էին հետևյալ խմբերի. «...32 բժիշկ⁴⁸⁵, 15 դեղագործ⁴⁸⁶, 85 ատամնարոյժ, 10 փաստաբան⁴⁸⁷, 60 երկրաչափ և մեքենագետ⁴⁸⁸, 21 քահանայ ու կրօնական, 250 կրթա-

խմայողությամբ և հյուծված էին վերադառնում իրենց ընտանիքների մոտ, քանի որ նախ փոքրի վատառողջ մթնոլորտում ձեռք բերած առողջական խնդիրների պատճառով համաճարակների ժամանակ բազմաթիվ զոհեր էին տալիս, ապա նյութական իրար դեմ մրցելով վնասում էին միմյանց և լցնում վաշխառուների քսակները, իսկ իրենց մնացած լուծանքները վատնում խաղատներում ու գինետներում: Ի վերջո պարտավորվում էին չնչին խնայողությամբ հալոյում վերադառնալ ծննդավայր (**Սևեան Ա.**, նշվ. հոդվ., № 25, էջ 614):

482 Մի քանիսի մասին տե՛ս Եելի-Մագսուդի առաքելական գերեզմանատան № 20, ավետարանական գերեզմանատան № 1 և Էմմանուել եկեղեցու № 3 արձ.:

483 **Սամուէլեան Վ.**, Հայ անցեալը լուսանկարներով, Երևան, 2007, էջ 45-47, 178:

484 «Հայաստանի կոչնակ», 1924, № 19, էջ 599:

485 Մի քանիսի մասին տե՛ս Եելի-Մագսուդի առաքելական գերեզմանատան № 17, 113, 844, 925, 928, 1149, 1204, ավետարանական գերեզմանատան № 4, 31, 56, 59, 101 և կաթողիկե գերեզմանատան № 19 արձանագրությունները:

486 Մի քանիսի մասին տե՛ս Եելի-Մագսուդի առաքելական գերեզմանատան № 408 և ավետարանական գերեզմանատան № 37, 66 արձանագրությունները:

487 Նրանցից մեկի մասին տե՛ս Եելի-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 406:

488 Մի քանիսի մասին տե՛ս նույն գերեզմանատան արձ. № 406, 1184:



Կիլիկյան որբանոց-արհեստանոցի ասեղնագործության դասարանը (լուս.՝ 1923 թ.)

կան պաշտօնեայ⁴⁸⁹, 50 կառավարատան, դրամատան, վաճառատան և այլ պաշտօնեաներ, 250 դրամափոխ, 600 խանութպան, 160 մսավաճառ, 50 ոսկերիչ⁴⁹⁰, 300 դերձակ⁴⁹¹, 650 կօշկակար, 450 հիւսն, 300 երկաթագործ, 150 թիթեղագործ ու ձուլիչ, 1500 որմնաղիլ, 850 ոստայնանկ, 350 կառապան և շօֆօր, 8000 ասեղնագործ և գորգագործ, 6000 բանուր, բեռնակիր, սպասատու ևն...: Ասոնցմէ գատ կան մահ 2500-3000 կիներ, որոնք կ'զբաղին Ամերիկայէն ու Եւրոպայէն եկած հին հագուստներ մաքրելու և նորոգելու գործով»⁴⁹²:

Առաջին աշխարհամարտից հետո Հալեպում հաստատված հայերը զբաղվում էին մահ նկարչությամբ⁴⁹³, զինվորականությամբ⁴⁹⁴, մանկաբարձությամբ⁴⁹⁵, վարսավիրությամբ⁴⁹⁶:

1930 թ. քաղաքում կային մարաշցի «...200 ջուլհակ, 40 կօշկակար, 20 դերձակ, 10 հիւսն, 40 որմնաղիլ, 10 մեքենագործ, 15 ինքնաշարժի վարիչ, 40 նպարավաճառ, 15 պղնձագործ, 10 թիթեղագործ, 20 հացագործ, 15 լումայափոխ, իսկ մնացեալներ՝ գործաւորներ են: Շուրջ 500 կիներ և աղջիկներ կը զբաղին ասեղնագործութեամբ և գորգագործութեամբ»⁴⁹⁷:

1945 թ. հայերի 75%-ը զբաղվում էր դերձակությամբ, կոշկակարությամբ, շինարարությամբ, մեխանիկությամբ, փականագործությամբ և բժշկու-



Կիլիկյան որբանոց-արհեստանոցի ատաղձագործության դասարանը (լուս.՝ 1923 թ.)

թյամբ, իսկ 25%-ը՝ առևտրով, շատ քիչ տոկոս էին կազմում հողագործները և մտավորականները⁴⁹⁸:

1964 թ. դրությամբ հայերը մեխանիկներ, էլեկտրիկներ, գողողներ, դերձակներ, ծուլագործներ, կոշկակարներ, ոսկերիչներ, վարորդներ և պետական ծառայողներ էին⁴⁹⁹:

Հայերը Հալեպի բանտում. լինելով կուսակալության կենտրոն՝ այստեղ էին բերում Այնթապի, Անտիոքի, Եդեսիայի, Ջեյթունի, Մարաշի հայ բանտարկյալներին, որոնց ճնշող մեծամասնությունն ամբաստանվում էր քաղաքական մեղադրանքով: Այսպես, օրինակ, 1890 թ. սեպտեմբերին նման մեղադրանքով կալանավորվում են բազմաթիվ զեյթունցիներ, որոնց թիվը 1891 թ. վերջերին հասնում էր 45-ի. «Ջեյթունցի 45 բանտարկեալք, ընդ որս Կարապետ եպիսկոպոս Ուլնիոյ, տակալին Հալեպի մահանգին կեդրոնական բանտին մէջ կը հեծեն»⁵⁰⁰:

1892 թ. մարտի 14-ի դրությամբ նշվել է. «Ջեյթունցի 45 ձերբակալեալք տակալին կը հեծեն Հալեպի կեդրոնական բանտին մէջ, ուր վերջերս բանտարկուեցան մահ զեյթունցի տէր Ղեւոնդ քահանան և Եղիսաբեթ անուն «աղջիկն» և հետզհետէ ալ Մարաշէն ի Հալեպ եկեղեցական և աշխարհական հայ երևելի անձնաւորութիւններ կը տարուին ի հարցաքննութիւն, որոց մէջ են տէր Ղեւոնդ քահանա Տէր-Նահապետեան և Կարապետ էֆենտի Տէօվլեթեանը»⁵⁰¹:

1892 թ. հունիսի 6-18-ի ընթացքում արդեն 50-ի հասած զեյթունցի բանտարկյալները գրում են մի կտակ, որտեղ ներկայացնելով իրենց ծանր և անհուսալի վիճակը՝ խնդրում են հիշել իրենց անուն առ անուն. «Մենք, Ջեյթունի լերանց մէջ ապաստանած հայ ոգոյն հարազատ սերունդները, Մարաշու կառավարիչ Մուհամմէտ Սալեհ փաշայի բռնակալութեան օրով, վանքերէ, եկեղեցիներէ եւ այլևայլ վայ-

489 Մի քանիսի մասին տես նույն գերեզմանատան արձ. № 828, 1004:

490 Մի քանիսի մասին տես նույն գերեզմանատան արձ. № 72, 462, 1048:

491 Մի քանիսի մասին տես նույն գերեզմանատան արձ. № 364:

492 **Պատկերան Գ.**, Մուրիա և հայութիւն, «Արեւ», 26 օգոստոս, 1925, էջ 2:

493 Նրանցից մեկի մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 290:

494 Մի քանիսի մասին տես նույն գերեզմանատան արձ. № 406, 1585:

495 Մի քանիսի մասին տես նույն գերեզմանատան արձ. № 930: Շեխ-Մագսուդի ավետարանական գերեզմանատան արձ. № 85:

496 Նրանցից մեկի մասին տես Շեխ-Մագսուդի ավետարանական գերեզմանատան արձ. № 98:

497 **Գալուստեան Գ.**, նշվ. աշխ., էջ 842:

498 **Բաղայան Ա.**, Սփյուռքահայ համայնքների ընդհանուր պատկերը 1945 թ., էջ 149:

499 **Բաղայան Ա.**, Հալեպի հայ համայնքը 1964-1985 թթ., էջ 112: 500 «Հնչակ», 1891, № 16, էջ 6:

501 «Հնչակ», 1892, № 4, էջ 31:

րերը դառադրութիւններով գերեվարեալ 1890 սեպտեմբերէն ի վեր բանտարկեալ, ոմանք ի մահ, ոմանք ի մշտնջեան բերդարգելութեան եւ այլք ի հինգ, յութ, եւ ի տասն տարի շրթայակիր բանտարկութեան դատապարտեալ, իսկ կէսք եւս անպարտ հռչակեալ լինելով հանդերձ, ի միասին վշտակրեալ, առհասարակ կը տառապինք Հալէպի կեդրոնական բանտին մէջ: Ամէն օր, ամէն ժամ, ամէն բոլոր, մահուան երկունք եւ օրհասի քրտունք զմեզ պատած են. ընդ երեկոյս ի մահի՞՞մ մտած ժամանակ, չգիտենք թէ՛ յառաւուրտ ուր պիտի գարթնունք, ճանապարհա՞նք թէ ի ծովու պիտի անհետանանք, գայո՞ղ ոչ որ գիտէ: Արդ տեսնելով մեր կացութեան աղիտալի կերպարանը, զգալով մեր կենաց հանապազօրեայ վտանգը, եւ քաջ գիտելով թէ՛ յանկարծակի պիտի կորչինք յաիտեան, կը մատուցանենք այժմէն մեր միակ խընդրուածն առաջն ազգիս, յանուն որոյ միայն կրեցինք եւ կը կրենք այսքան տառապանք, կը խնդրենք մէկ շնորհք, գոր յուսանք թէ՛ պիտի չզլանաք, այս շնորհէն կախում ունի մեր միսթարութիւնը:

Այո, մահն անհրաժեշտ հարկ մըն է, գոր պարտինք հատուցանել, բայց այս մահը չէ՛ հասարակ կամ բնական, կենդանոյն ի գերեզման իջած, բազկատարած կ'աղերսենք, որ յիշէք զմեզ սուրբ եկեղեցոյ սեղանին վրայ, ցորչափ լսէք թէ՛ տակաւին կը շնչենք. իսկ եթէ անհետանանք, ինչպէս որ արեւի պէս կ'երեւի, շնորհք ըրէք մեր անուանքն անցնել ի շարս հայրենի նահատակաց, հանդիսատր տօնախմբութեամբ կատարէ 50 Ուլնեցի մարտիրոսաց յիշատակը: Ահա ստորեւ կու տեսնէք մեր անուանց ցանկը.-

Ձէյթունի գիւղաքաղաքացիք.-

1. Կարապետ եպս. Քէչեան, առաջնորդ-վանահայր Ս. Աստուածածնայ եւ Ս. Փրկիչ վանքերուն, 2. Տ. Նշան քհնյ. Տ. Յովհաննէսեան (Ղաղեան), Պօզպայիր թաղի Ս. Յովհ. եկեղեցոյ երէց, 3. Տ. Ղեւոնդ քհնյ. Ճէնանեան Մարաշցի, Պօզպայիր թաղի Ս. Յովհ. եկեղեցոյ երէց, 4. Ուսուցիչ՝ Մմբատ Բիւրատ Տէր-Ղազարեան, Պօզպայիր թաղին, 5. Յարութիւն Կիլվանսեան, 6. Գէորգ Մարկանեան, 7. Ստեփան Մոզեան, 8. Աստուածատուր Թօզեան, 9. Մնացական Թօզեան, 10. Մարտիրոս Անդրէասեան, 11. Յարութիւն Պօզեան, 12. Ստեփան (Փանոս) Ազարեան, 13. Մարգիս Պօզեան, 14. Ասատուր Տիրացունեան, 15. Գէորգ Ղրճայեան, 16. Յովհաննէս Ղրճայեան, 17. Կարապետ Պիլպիլեան, 18. Սկրտիչ Պիլպիլեան, 19. Մարգիս Հարսնուկեան, 20. Գրիգոր Բարլաքեան, 21. Գալուստ Հայտուտեան, 22. Մարգիս Հաննէսեան, 23. Ասատուր Քիւփէլեան, 24. Մանուկ Քիւփէլեան, 25. Գրիգոր Քիւփէլեան, 26. Յարութիւն Քիւփէլեան (հաճի Արթին), 27. Յովհաննէս Քիւփէլեան, 28. Մարգիս Մարտատուկեան, 29. Կարապետ Ավարտանեան, 30. Պօղոս Դաւթեան, 31. Նազարէք Վարդանեան, 32. Նազարէք Գրանֆիլեան, 33. Վարդան Մաթիսեան, 34.

Սիբէլ Օղլեան, 35. Թադէոս Մանչեան, 36. Գաբրիէլ Պօստանեան, 37. Ստեփան Քայիշեան, 38. Յարութիւն Կանծեան, 39. Գէորգ Չազրեան, 40. Սեդրակ Քիւփէլեան.

Յռնուզէն.- (Հին Ուլնի)

41. Նիկողայոս եպս. Դաւիթեան (Խորխոռունի), առաջնորդ-վանահայր Ս. Կարապետ եւ Ս. Ստեփանոս Ուլնեցոյ վանօրէից, 42. Գրիգոր վրդ. Ոսկերիչեան, միաբան Ս. Ստեփանոսի վանքին, 43. Բարթողիմէոս վրդ. Թախաճեան, միաբան Ս. Կարապետի վանքին, 44. Յակոբ Պուղուրեան, 45. Պետրոս Պուղուրեան, 46. Ստեփան Պուղուրեան, 47. Կարապետ Փարթամեան (մարաշցի վաճառական), 48. Յարութիւն Պետրոսեան (վանեցի), 49. Յարութիւն Վանեսեան (Լափաճը գիւղէն), 50. Եղիսաբէթ Վանեսեան քոյրը (Լափաճը գիւղէն):

Բանտին մէջ նահատակեալք.-

1. Վրթանէս վրժպտ. Գրիգորեան Վէթանուրի (Կ. Պոլսեցի), 2. Կարապետ Թօզեան, 3. Մինաս Պոստովեան, 4. Օհան Տատուրեան, 5. Իսրայէլ Սինասեան, 6. Խաչուկ Տատուրեան, 7. Յովսէփ Եկանեան, 8. Աւետիս Յովսէփեան:

Բանտին մէջ հաւատարաց եղած է Յակոբ Մանուկեան եւ կոչուած է Մուհամմէտ Ալի:

Այս է կտակ եւ յիշատակ 50 բանտարկելոցս, որք ի պահու տանջանաց եւ մահուանց, պիտի բեւեռենք ականողիքս յերկնային պսակաղիւրն ի Տ. մեր Քրիստոս եւ գոհ եւ զուարթ պիտի աւանդենք մեր հոգին, վստահ գոլով թէ՛ ազգը պիտի գործադրէ կէտ առ կէտ մեր կտակի պարունակութիւնը: Եթէ կը ցաւինք, այսպէս տարածամ մահուամբ հեռանալով աշխարհէն, կ'ուրախանանք սակայն, խորհելով թէ՛ ազգն զմեզ պիտի յիշէ իբրեւ նահատակք արհաւրաց շրջանի եւ տօնախմբէ մեր յիշատակը...»⁵⁰²:

1892 թ. նոյեմբերի 23-ի դրութեամբ նշվել է. «Երկու-երեք տարիէ ի վեր Քիլիսի մէջ կը բնակուէր քաղաքային բժշկի պաշտօնով Պօլսեցի տօքթօր Տիրան էֆ. Էնֆիլեճեան անուն երիտասարդը: Վերջերս իր սովորութեան համեմատ՝ իր անձնական գործերուն համար Այնթափ կերթայ, այնտեղէն ալ Հալէպ: Բայց իր բացակայութեան ժամանակ տունը կը կողոպտեն ու կը խուզարկեն՝ երկու-երեք հարուստ հայերու մատնութեամբ: Չը նայած, որ ոչինչ կը գտնեն վնասակար, սակայն կը հեռագրեն Հալէպ, որ բժիշկը կը ձերբակալուի այն ժամանակ, երբ նա հիւրանոց նոր իջած՝ ճանապարհի զգեստները կը փոխէր դուրս գնալու համար: Սա մինչեւ այսօր խեղճ երիտասարդը Հալէպու կեդրոնական բանտին մէջ կը պահուի...: Գրեթէ ամբողջ վանքերի եւ վիճակաց վանահայրեր ու առաջնորդներ բանտարկուած են...: Այժմ վանօրէք բողոքովին տխուր ու թափուր վիճակ մը ունին եւ ժողովուրդն անհովիտ

502 Միստեան Մ., Պատմութիւն Ձէյթունի (1409-1921), Լիբանան, 1996, էջ 195-197:

մնացած: Մեծ մասամբ Հալեայու կեդրոնական բանտի մեջ կը գտնուին այն վիճակաց եպիսկոպոստներ եւ վարդապետք»: Նույն տեղում նշվել է. «Հալեայի մեջ եղբարք Գրիգորեանների (դերձակներ) տունը խուզարկելէ եւ ոչինչ գտնելէ յետոյ՝ կը ձերբակալեն եւ երկուսն ալ կեդրոնական բանտը կը տանին: Ատոնցմէ յետոյ կսկսուի մի ամբողջ շարք խուզարկութիւններ, ձերբակալումներ, արհեստատր դասին պատկանող անձանց մէջ: Այս խեղճերը, որ չունին դրամ, գուցէ եւ մնան բանտին մէջ, թէւ իրեն անմեղութիւնն հաստատուած է: Ո՞վ պիտի կարեկցի եւ օգնէ խեղճերու ընտանեաց եւ զաւակներուն»⁵⁰³:

1896 թ. հուլիսի 1-ին ձերբակալվում եւ Հալեայի բանտ է տարվում Ներսես եպիսկոպոս Դանիելյանը՝ որպէս Ձեյթունի ապստամբության կազմակերպիչ: Յոթ ամիս մնալով կենտրոնական բանտում՝ ընդհանուր ներման շնորհիվ ազատվում է⁵⁰⁴:

1896 թ. Հալեայի բանտում «գտնող բանտարկելոց մէկ մասը ազատեցաւ, մնացածներու համար այնտեղի ռուսաց հիւպատոսը շատ աշխատած էր, յետոյ դեսպանէն յանդիմանագիր եկեր է անոր, որ չխառնի»⁵⁰⁵:

1899 թ. բանտը լեցուն էր «...մերկ ու անօթի հայ բանտարկեալներով...»: Նույն թվականին Ալեքսանդրետ քաղաքի հայ ավետարանականների դպրոցն օսմանյան պետության կողմից փակվում է՝ «...բանտարկելով երկու ուսուցիչները, որոնց միակ յանցանքն է եղած, որ ուզած են դպրոցի շէնքը փոխել կամ բարեկարգ վիճակի մեջ պահել հաստատութիւնը: Այդ երկու խեղճ երիտասարդները մինչև այսօր կը սպասեն Հալեայի բանտը»⁵⁰⁶:

1906 թ. մայիսի 10-ի դրությամբ նշվել է. «Հալեայի մեջ բաւական բանտարկեալներ կան՝ ատանացի, ուլմիացի, հաճնցի, գերմանիկցի»⁵⁰⁷:

1906 թ. հուլիսին «15 հոգի քաղաքական բանտարկեալներ կան. ատոնցմէ 5-ը զէթունցի են, 2-ը հաճնցի եւ մարաշցի: Բանտարկուած զէթունցիների մէջն են Նազարէթ Չաուշը եւ Մերկերեան երկու եղբայրները: 3 հոգի ալ ատանացի բանտարկուած են... բոլոր բանտարկեալները անմեղ են եւ զոհեր չարանենց զրպարտութիւններու»⁵⁰⁸:

1907 թ. հոկտեմբերի 12-ի դրությամբ նշվել է. «Այս երեք տարի է, որ Հալեայի մէջ 30-էն աւելի հայեր քաղաքական խնդրոյ մը համար բանտերու խորերը կչարչարին՝ անտէր ու անօգնական»⁵⁰⁹:

1916 թ. քաղաքական մեղադրանքով 60-ից ավելի հայեր բանտարկված էին եւ դատապարտված մահապատժի: Նրանց մեջ էին առաջ. փոխա-

նորդ Հարություն քահանա Եսայանը, պր. Դավիթ Ճիտեճյանը, Հակոբ Պարսամյանը եւ Բերիո Թեմի քաղաքական ժողովի անդամները⁵¹⁰:

Դպրոցներ. Մինչև ԺԹ դարի սկիզբը Հալեայի հայոց դպրոցների գործունեության վերաբերյալ գրավոր աղբյուրները տեղեկություններ չեն հաղորդում⁵¹¹:

Հավանաբար 1823 թ.-ից հետո հայ կաթողիկեների առաջնորդ Աբրահամ Քյուբեյլյանի ջանքերով Հալեայում բացվում է վարժարան, որն էլ փակվում է նրա վախճանվելուց հետո՝ 1832 թ.⁵¹²:

1840 թ. գործում էր հայկական 4 դպրոց՝ 1 առաքելական եւ 3 կաթողիկե, որտեղ ուսանում էր 162 աշակերտ⁵¹³:

1853 թ. Սր. Քառասնից մանկանց եկեղեցուն կից բացվում է հայկական առաջին մանկապարտեզը⁵¹⁴: Այն հիշվում է նաև 1866⁵¹⁵, 1904-1907 թվականներին⁵¹⁶:

1858-1859 թթ. հիմնվում է ավետարանականների դպրոց՝ 12 աշակերտներով⁵¹⁷:

1862 թ. Հովհաննես Բյուրքճյանֆը հիմնում է իգական մասնավոր վարժարան՝ 30 աշակերտուհիներով⁵¹⁸:

510 Նկարագրութիւնք Երուսաղէմի-Հալեայի-Դամասկոսի գաղթականական եւ վանական զանազան դիպաց եւ անցքերու 1914-1918, Աղեքսանդրիա, 1922, էջ 36-37:

511 Ա. Քեչիշյանը սխալմամբ նշում է, որ 1615 թ., երբ Հալեայ է այցելում սուլթան Մուրադը եւ հյուրընկալվում խոջա Պետիկի տանը, տանտիրոջ փափագին ընդառաջ՝ ստորագրում է հրովարտակ, որի համաձայն՝ արտոնում է 1200 աշակերտի համար կառուցել 7 դպրոց եւ հայերին մայրենին ուսուցանելու ազատություն տալ (**Քեչիշյան Ա.**, Ընդարձակ ուղեցոյց Մուրիական հնագիտական վայրերու, Հալեայ, 2001, էջ 136): Սուլթան Մուրադը, սակայն, գահակալել է 1623-1640 թթ., իսկ դպրոցների վերաբերյալ նշյալ տեղեկությունը պատկանում է Ի դարի սկզբին (كمال الغزي, نهر الذهب في تاريخ حلب, جز ٢, حلب, ١٩٥٢, ص ٣٨٦-٣٨٧):

512 L'ami de la religion, v. 90, p. 500.

513 **Թովմոզյան Հ.**, նշվ. աշխ., էջ 141, 142:

514 Նշվ. աշխ., էջ 142:

515 **Տեր-Յովհաննեսեանց Ա.**, նշվ. հոդվ., էջ 213:

516 ՀԱԴ, ֆ. 1421, ց. 5, գ. 10, թ. 1:

517 Նույն թվականին, բացի ավետարանական հայ եւ այլազգի երեխաներից, դպրոցում սովորում էր նաև հայ առաքելական մի քանի աշակերտ (The Missionary Herald, vol. 55, 1859, p. 246):

518 «Համբարաբեր Ռուսիոյ», 1862, № 31, էջ 3: Ազգասեր, առաջադիմական հայացքների տեր, ազատախոս, ընթերցասեր եւ ինքնակրթությամբ զարգացած մտավորական, վաճառական Հովհաննես Դուկասի Բյուրքճյանֆը (1824, Ալն - 1883, Այնթապ, կինը հռչակավոր Միսաքյանների դուստրն էր) Հալեայի պետական մաքսային գրասենյակում զբաղեցնում էր բարձր պաշտոն: 1850-ական թվականներին՝ ազգային զարթոնքի ժամանակ, կատարել է առաջնորդող դեր: Նրա նախաձեռնությամբ Հալեայի մահանգի պաշտոնաբերք «Ֆրաթ»-ի բուրքերեն տպագրության երկու էջը հայատառ էր հրատարակվում: 1861 թ. Հալեայում հիմնում է գրատուն-գրադարան, որը ստանում էր քսան անուն լրագիր: Գրադարանը գործում էր ամեն կիրակի, որտեղից անվճար օգտվում էին 30-60 հալեպահայեր. «Յաճախ ինք անձամբ կը կարդար թերթերը, որ շատեր միաժամանակ ունկնդիր ըլլան եւ օգտուին» (նույն տեղում: Տե՛ս նաև **Քիւրքճեան Վ.**, Հայ մամուլը Կիլիկիոյ մէջ, «Կոչնակ», 1919, № 37, էջ 1180-1181): Գրավաճառության

503 «Հնչակ», 1892, № 12, էջ 99-100:

504 **Դանիելյան Ն.**, նշվ. աշխ., էջ 13:

505 «Դրօշակ», 1896, № 19, էջ 141:

506 «Հնչակ», 1899, № 1, էջ 4:

507 «Հնչակ», 1906, № 5, էջ 42:

508 «Հնչակ», 1906, № 7, էջ 70:

509 «Հնչակ», 1907, № 11, էջ 144:

1892 թ. քժ. Ասատուր Ալթունյանի կնոջ՝ Հարիե-տի նյութական աջակցությանը Ազիզիե թաղամա-

«...սենեակը յաջողութեամբ յառաջ կերթայ: Մօտերս, Սուրբ Երուսաղէմի արժանապատի միաբանութիւնը՝ Սուրբ Յակոբայ վանոց տպարանին մէջ ՚ի լոյս ընծայուած գիրքերէն արդէ մի յոլարկեր է ՚ի յիշեալ գրավաճառութեան սենեակը, որպէս զի հոգ տանին վաճառելու ՚ի հաշիւ նոյն միաբանութեան» («Համբարաբեր Ռուսիոյ», 1862, № 39, էջ 3): Նույն թվականին «...շուկայական տաճկաբարբառ լեզուով գրի առած, տպել տուած ու ձրիօրէն գաւառի ամէն անկիւն դրկած է «Միլլէթինի Սէվ» (Ազգո սիրէ) խորագրով տետրակ մը...» (**Մարաֆեան Գ.**, Պատմութիւն Անթէպի հայոց, հ. Ա, Լոս Անճելըս, 1953, էջ 661): 1860-ական թվականներին գլխավորում էր Հալեպում հակաաղայական-դեմոկրատական պայքարը, աղայական դասի շահատակությունները մերկացնող հող-վաճման լոյս ընծայում Կ. Պոլսի և Չմյուռնիայի հայկական մամուլում (**Թովմուզյան Հ.**, նշվ. աշխ., էջ 82-83): 1859 թ. Մարգիս Քեոսայանի հետ Հալեպում հիմնադրում է «Արամյան» խնայողական ընկերությունը, իսկ 1866 թ. ծրագրում և առաջարկում է հիմնել «Արամյան» առևտրական ընկերությունը (նշվ. աշխ., էջ 60): 1862 թ. Հալեպում փորձում է թերթ հրատարակել և թատրոն հիմնել («Համբարաբեր Ռուսիոյ», 1862, № 31, էջ 3): 1862 թ. նոյեմբերի 2-ին նրա առաջնորդությամբ 80 հալեպահայեր տեղ Մարգարի և Հալեպի առաջնորդ Հակոբ Եպիսկոպոսի դեմ կաշառակերության մեղադրանք են ներկայացնում Կ. Պոլսի պատրիարքին (ՊՀՀ, էջ 802, 813): 1865 թ. Երուսաղէմի մատենադարանին նվիրում է 5-6 ձեռագիր, որոնցից է 1799 թ. «Անտառ Այլաբանութեան»-ը: Այդ մատյանի 1202-րդ էջում գտնվում է նրա ձեռագիր նվիրատվական արձանագրությունը. «Պատկառելի Միաբանութիւն Ս. Յակոբայ՝ ի նշան ակնածութեան և խնամարի որդիական սիրոյ ընդունիլ աղաջէ՛ Յ. Ս. Քիրքճեան. Բերիայ 11 յունիս 1865» (ՅՉԵՅԱ, էջ 110): Հիշյալ մատյանները նվիրելու համար 1867 թ. շնորհակալագիր է տպվում «Միօն»-ում. «Ասկէ գրեթէ երկու տարի յառաջ ի Հալեպ բնակող մեծայարգ Յովհաննէս աղայն Քիրքճեանօֆ 5-6 կտոր ձեռագիր գրեանք խրկած էր թանգարանիս համար, որոնց մէջ երկու կտորն է Անտառ Այլաբանութեան ըստած գիրքը. ասոնց համար ևս թեպէտ և անագան, բայց երախտագէտ սրտիւ կը յայտնէ իւր շնորհակալութիւնը» («Միօն», 1867, № 8, էջ 156): 1866 թ. Երուսաղէմի պատրիարքարանի թանգարանին Աստվածատուր վարդապետի միջոցով նվիրում է Կիլիկիո Հեթում և Լևոն թագավորների 40 մեծ ու փոքր արձաթյա դրամներ (**Տեր-Յովհաննէսեանց Ա.**, նշվ. հոդվ., էջ 214): Նույն թվականին Նիկոնդայոս կաթողիկոսն օծվելուց հետո կոնդակաձև նամակ է ուղղում Հալեպ. «...Աստուծով ի մօտոյ զիրար կը տեսնենք և բոլոր եղբուքիւնն կ'իմացնենք ձեր սիրելիութեան. և արգոյ Յովհաննէս Էֆենտի Քիրքճեանօֆի յատուկ օրհնութեամբ ասա թե... զինքը իմ առաջին բարեկամ գիտեմ. բարեկամութիւնն աղայութիւնն այսպիսի ժամանակի յայտնի կու լինի...» (**Քարգէն Ա աթոռակից կաթողիկոս**, նշվ. աշխ., սյունակ 686): Քյուրքճեանօֆը թեև բարեկամ էր Նիկոնդայոս Եպիսկոպոսին, սակայն համաձայն էր նրա՝ կաթողիկոս ընտրվելուն (նշվ. աշխ., սյունակ 687): 1866 թ. տեղափոխվում է Այնթապ և բեղուն գործունեություն ծավալում: Նրա ջանքերով հայերեն և հայատառ թուրքերեն թերթերը լայնորեն տարածվում են Այնթապում (**Մարաֆեան Գ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 662-663), ինչպես նաև նրա թելադրությամբ «Այնթապի ազգային վարժարանին կողմէ կը բաշխուէր թրքաբարբառ ձեռագիր թերթ մը, «Այնլէպէն»...»: Նա էր, որ «...ծնունդ տուաւ Կիլիկիոյ վարժարանին «Բիրբակն» ամսագրին, եւ ատելի վերջը՝ Վարդանեանի «Գրախոս»-ին: Այդ թերթերը կը խմբագրուէին հայերէն եւ թիւրքերէն, եւ կը ընդօրինակուէին աշակերտներու ձեռքով» (**Քիրքճեան Վ.**, նշվ. հոդվ., էջ 1180): Նպաստում է թատերական կյանքի զարգացմանը, «Գինովութեան վնասները» թրքաբարբառ թատերագրության հեղինակն է: Ազգային շունչ է

տում ավետարականների համար հիմնվում է մանկապարտեզ, որն էլ Ջենիլիե թաղամասում գտնվող նրա սեփական տունն է փոխադրվում 2 տարի անց: Հետագայում մանկապարտեզը գործում է Կազանցի բազարի եկեղեցու բակում⁵¹⁹:

1870-ական թվականներից մինչև 1932 թ. ավելանում է տարբեր դավանանքների պատկանող հայոց դպրոցների և աշակերտության թվաքանակը, որն էլ ներկայացնում ենք ստորև տրվող աղյուսակում.

| տարեթիվ | առաքելական | կաթողիկե | ավետարան. |
|------------------------|-----------------|-------------|-------------|
| 1878/80 ⁵²⁰ | 3 (142 աշ.) | 2 (90 աշ.) | |
| 1896/98 ⁵²¹ | 3 (350 աշ.) | 3 (110 աշ.) | |
| 1902 ⁵²² | 4 (300 աշ.) | 2 | 1 (150 աշ.) |
| 1902/05 ⁵²³ | 3 (380 աշ.) | 2 (180 աշ.) | 2 (90 աշ.) |
| 1908/11 ⁵²⁴ | 3 (580 աշ.) | 2 (205 աշ.) | 2 (120 աշ.) |
| 1924/25 ⁵²⁵ | 9 | 4 | 5 |
| 1932 ⁵²⁶ | 9 (մոտ3500 աշ.) | 2 (500 աշ.) | 7 (800 աշ.) |

Առաջին աշխարհամարտի ավարտին, երբ մեծաթիվ հայեր ապաստան են գտնում Հալեպում, իրար հետևից բացվում են բազմաթիվ դպրոցներ:

1944-1945 թթ. Հալեպում կար մոտ 9000 հայ աշակերտ: 5000-ը սովորում էին առաքելականների, 2000-ը՝ կաթողիկեների, 1500-ը՝ ավետարանականների, իսկ 500-ը՝ օտար դպրոցներում⁵²⁷:

Առաքելական ծխական վարժարան. գործում էր Սր. Քառասնից մանկանց եկեղեցուն կից⁵²⁸: 1858 թ.

փոխանցում Ներսեսյան ազգային և «Թանգարան» ընկերության գիշերօթիկ վարժարանների աշակերտներին: Նիկողոս Նազարեթյանի հետ Այնթապի Վարդանանց ընկերության գլխավոր կազմակերպիչներից էր (**Մարաֆեան Գ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 662-663): Տե՛ս նաև Կիլիկիա. Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, Պետերսբուրգ, 1894, էջ 361-362): Նորոգել է Այնթապի ազգային մանկատունը: Հեղինակել է բազմաթիվ հողվածներ «Ծիլ Աւարայրի» համադեսում (ՊՀՀ, էջ 813): Գրանցից մեկը Հալեպի հայության ուսումնական խնդիրների մասին է. «...այսօր Հալեպը... հինգ հարիւրի չափ գերդաստանով հայ հասարակութիւն մը ունի, թէ՛ կղերական դասէն ու թէ՛ աշխարհականէն չկայ երկու մարդ, որ իր մայրենի լեզուն գիտնայ, որ և իցէ բան մը կարողալու և գրելու և անոր իմաստը իմանալու կարող ըլլայ. չկայ մարդ մը, որ իւր ամենափափուկ իրատւնքը անգամ ոտքի տակ առնուած ատենը զայն պաշտպանելուն կերպը գիտնայ, ինչու որ արդի հայը տգէտ է ու կոյր, և ապագայ հայուն համար ալ ո՛չ դպրոց կայ ու ո՛չ ալ ունենալու հոգ» (նշվ. աշխ., էջ 822): Նրա հողվածներից տե՛ս նաև «Համբարաբեր Ռուսիոյ», 1862, № 32, էջ 2: Վախճանավել է 1883 թ. օգոստոսին Այնթապում և թաղվել ազգային գերեզմանոցում՝ կից Իփեկյան Գևորգի գերեզմանին (**Մարաֆեան Գ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 663):

519 **Ջերեջյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 108:
520 **Թովմուզյան Հ.**, նշվ. աշխ., էջ 143:
521 Նույն տեղում:
522 **Միմասեան Մ.**, նշվ. հոդվ., էջ 20, 22:
523 **Թովմուզյան Հ.**, նշվ. աշխ., էջ 143:
524 Նույն տեղում:
525 **Պապիկեան Ճ.**, Սուրիա և հայություն, «Արեւ», 27 օգոստոս, 1925, էջ 2: 1925 թ. հայ կաթողիկեների վարժարանների երկսեռ աշակերտության ընդհանուր թիվը 1300 էր («Սուրիահայ տարեցոյց», Հալեպ, 1925, էջ 317):
526 **Գալուստեան Գ.**, նշվ. աշխ., էջ 841:
527 «Հայրենիք. տարեգիրք», Պոստըն, 1946, էջ 227-228:
528 Նույն տեղում:



Ներսեսյան վարժարանի՝ 1897 թ. կառուցված շենքի երկրորդ հարկը (լուս.՝ 2006 թ.)

ունեն 4 բաժանմունք՝ 300 աշակերտով (մանկապարտեզներում կար 85-ական արական և իգական, իսկ նախակրթարաններում՝ 70 ար. և 60 իգ. աշակերտ)⁵²⁹: Վարժարանը գործում էր նաև 1866 թ.⁵³⁰: 1870-1874 թթ. հիշվում է որպես երկսեռ կրթօջախ⁵³¹: Ամենայն հավանականությամբ, փակվել է 1875 թ.⁵³²:

Ազգ. Ներսեսյան և Վարդուհյան վարժարաններ. 1876 թ. փետրվարի 21-ին վերաբացված առաքելական ծխական երկսեռ վարժարանի արական դպրոցը ստանում է Ներսեսյան⁵³³, իսկ իգականը՝ Վարդուհյան⁵³⁴ անունները, որով էլ սկիզբ է դրվում այս վարժարանների գործունեությանը:

1882 թ. երկսեռ բաժիններով գործում էր առաջնորդարանի (ունեն 100 ար., 80 իգ. աշակերտ)⁵³⁵, իսկ 1886 թ.՝ մեծ դռան ձախ կողմում գտնվող շենքում⁵³⁶: 1897 թ. Ներսեսյան ազգային վարժարանի համար կառուցվում է երկհարկանի առանձին

շենք⁵³⁷: Նույն թվականին Վարդուհյան վարժարանում սովորում էր 150 աշակերտուհի⁵³⁸: Ներսեսյան վարժարանը 1901/02 ուստարում ուներ 307⁵³⁹, իսկ 1906 թ.՝ 450 աշակերտ⁵⁴⁰: Չույգ դպրոցները փակվում են Առաջին աշխարհամարտի պատճառով⁵⁴¹: 1919 թ. սեպտեմբերի 5-ին Ներսեսյան վարժարանը վերաբացվում է, իսկ 1920 թ.՝ միավորվում Հայկազյան վարժարանին⁵⁴²:

Ազգ. Հայկազյան վարժարան. հիմնվել է 1919 թ. մարտ-ապրիլ ամիսներին Ջդեյդե թաղամասում: 1920 թ. միավորվում է վերաբացված Ներսեսյան վարժարանին՝ պահելով իր անունը⁵⁴³: Երկար ժամանակ ուներ երկու բաժին՝ «տղոց» և «աղջկանց»: Իգական բաժինը 1920-1925 թթ. գործում էր արաբական բակի մեջ, իսկ 1926-1959 թթ.՝ Սբ. Քառասնից մանկանց եկեղեցուն կից 1897 թ. կառուցված շենքում⁵⁴⁴: 1959 թ. սեպտեմբերի 20-ին բացվում է նույն եկեղեցուն կից կառուցված Ազգ. Հայկազյան վարժարանի նոր շենքը⁵⁴⁵, որտեղ էլ գործում էր մինչև սիրիական ներքին պատերազմը՝ 2011 թ.: Արական բաժինը 1920-1990-ական թվականների վերջերին գործում էր Սլեյքե թաղամասում՝ Ղազալիների տանը⁵⁴⁶, իսկ 1990-ական թթ.-ից՝ նախկին Կենաց դպրոցի շենքում: Փակվել է մի քանի տարի առաջ:

Գլխավոր գործունեությանը վերաբերող մի շարք վավերագրերից քաղված տվյալների համադրումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| տարեթիվ | «Տղոց» | «Աղջկանց» | միասին |
|------------------------|--------|-----------|--------|
| 1923 ⁵⁴⁷ | | | 1000 |
| 1924/25 ⁵⁴⁸ | | | 889 |
| 1927/28 ⁵⁴⁹ | 390 | 350 | 740 |
| 1944/45 ⁵⁵⁰ | 412 | 430 | 842 |
| 1948 ⁵⁵¹ | | | 661 |
| 1964 ⁵⁵² | | | 700 |
| 1976/77 ⁵⁵³ | | | 1270 |

Կիլիկյան (Կիլիկյան գաղթականաց) վարժարան. հիմնվել է 1920 թ.⁵⁵⁴ և գործել Սբ. Աստվածա-

529 Սինասեան Մ., նշվ. հոդվ., էջ 20:

530 Տեր-Յովհաննեսեանց Ա., նշվ. հոդվ., էջ 213: Ի դեպ, հեղինակը նշել է, որ «...ուր դասառուբիւն մինչ ի քերականութի. լինի կայ արապերէն և տաճկերէն»:

531 Քէշիշեան Վ., նշվ. աշխ., էջ 58-61:

532 ՊՀՀ, էջ 836-837:

533 Նույն տեղում:

534 Թովմոզյան Հ., նշվ. աշխ., էջ 142: 1882 թ. նոյեմբեր 1-ին Հալեպում հիմնադրվում է Տիկմանց Մարիամյան ընկերությունը, որի նպատակն էր օժանդակել Վարդուհյան վարժարանին (ՊՀՀ, էջ 881): Նույն նպատակին ծառայելու համար են ստեղծվում նաև Գպրոցասեր տիկմանց ընկերությունը 1898 թ. և «Հայուհեաց մատենադարանի խնամակալությունը» 1907 թ. (Թովմոզյան Հ., նշվ. աշխ., էջ 149: Տես նաև Քէշիշեան Վ., Հալեպի հայկական գաղթօճախի..., էջ 35):

535 «Արձագանք», 1882, № 14, 23 մայիսի, էջ 215:

536 Ղազանճեան Կ., նշվ. աշխ., էջ 162:

537 ՊՀՀ, էջ 886: Տես նաև Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 36:

538 Մոսճեան Մ., նշվ. հոդվ., էջ 808:

539 Սինասեան Մ., նշվ. հոդվ., էջ 26:

540 Թովմոզյան Հ., նշվ. աշխ., էջ 144:

541 Թովմոզյան Հ., նշվ. աշխ., էջ 273:

542 «Մուրիահայ տարեցոյց», Հալեպ, 1925, էջ 315:

543 Նույն տեղում:

544 Պատմող ու շնչող հայաբոյր Հալեպը, Հալեպ, 1992, էջ 14:

545 Տեմիրճեան Վ., Գառազանագիրք Բերիոյ հայոց թեմի առաջնորդներու, «Հասկ», 1978, № 1-3, էջ 37:

546 Պատմող ու շնչող հայաբոյր Հալեպը, էջ 15:

547 «Մուրիահայ տարեցոյց», Հալեպ, 1924, էջ 235:

548 Պապիկեան Վ., Մուրիա և հայութիւն, «Արեւ», 27 օգոստոս, 1925, էջ 2: Հմմտ. Ազատեան Լ., նշվ. աշխ., էջ 98:

549 «Տարեւ», 1929, էջ 388:

550 «Հասկ», 1945, № 1-2, էջ 32:

551 «Արեւելք. տարեգիրք», Հալեպ, 1948, էջ 157:

552 Բարսայան Ա., Հալեպի հայ համայնքը 1964-1985 թթ., էջ 122:

553 Տեմիրճեան Վ., նշվ. աշխ., էջ 452:

554 ՀԱԳ, ֆ. 1394, ց. 1, գ. 146, ք. 1-3: Հմմտ. «Մուրիահայ տարեցոյց», Հալեպ, 1925, էջ 316-317:

ծին եկեղեցուն: 1922 թ. տեղափոխվում է Սիսի թաղամասում գտնվող օդասուն մեկ այլ շենք⁵⁵⁵: 1926/27 թթ. ուստարում փակվում է, ապա 1927/28-ին՝ վերստին բացվում⁵⁵⁶: 1964 թ. ղեկավարվում էր ՍԳ Հնչակյան կուսակցության կողմից⁵⁵⁷: Գործել է մինչև 2011 թ.: Սիրիական ներքին պատերազմի պատճառով այժմ չի գործում:

Միդան (Նորգյուղ) թաղամասում ուներ նաև մասնաճյուղ, որը հիշվում է մինչև 1968 թ.⁵⁵⁸:

| տարեթիվ | մայր դպրոց | Միդանի մաս. | միասին |
|------------------------|------------|-------------|--------|
| 1921 ⁵⁵⁹ | 250 | | |
| 1922 ⁵⁶⁰ | 1150 | | |
| 1923 ⁵⁶¹ | 1000 | | |
| 1924/25 ⁵⁶² | 1000 | | |
| 1927/28 ⁵⁶³ | 552 | | |
| 1944/45 ⁵⁶⁴ | 735 | 410 | 1145 |
| 1948 ⁵⁶⁵ | 660 | | |
| 1964 ⁵⁶⁶ | 800 | 400 | 1200 |

Ուսումնասիրաց վարժարան⁵⁶⁷. 1922 թ. Հալեպում վերակազմվում է Այնթապի «Ուսումնասիրաց ընկերակցություն»-ը: Նույն թվականին այն Բենփում ուներ 2 գիշերային և 1 ցերեկային դպրոց⁵⁶⁸: 1927 թ. Վեքիլիե փողոցում հիմնվում է քաղաքի ուսումնասիրաց վարժարանը⁵⁶⁹, որը 1933 թ. տեղափոխվում է Շարբուրա թաղամասում գտնվող նոր շենք⁵⁷⁰: 1929 թ. ընկերությունը ևս մի մասնաճյուղ է հիմնում Միդան թաղամասում⁵⁷¹:

Քաղաքի ուսումնասիրաց վարժարանը 1943 թ. վերանվանվում է Ուսումնասիրաց-Լևոնյան՝ ի հիշատակ սպանված տնօրեն Լևոն Լևոնյանի⁵⁷²: Դպրոցը հիշվում է մինչև 1963 թ.⁵⁷³:

| տարեթիվ | Բենփի | քաղաքի | Միդանի | միասին |
|------------------------|-------|--------|--------|--------|
| 1924/25 ⁵⁷⁴ | 146 | | | |

| | | | |
|------------------------|--------------------|--------------------|---------|
| 1927 | 250 ⁵⁷⁵ | 400 ⁵⁷⁶ | 650 |
| 1928 | 170 ⁵⁷⁷ | 300 ⁵⁷⁸ | 470 |
| 1929/30 ⁵⁷⁹ | | | 700-800 |
| 1930/31 ⁵⁸⁰ | | | 1000 |
| 1944/45 ⁵⁸¹ | | 500 | |
| 1948 ⁵⁸² | | 400 | |
| 1946/47 ⁵⁸³ | | 450 | |

Չարսանջակցիների ուսումնասիրաց երկսեռ (Չարսանջակի գաղթային) վարժարան. հիմնվել է 1922 թ. սեպտեմբերի 22-ին Չարսանջակի հայրենակցական միության կողմից⁵⁸⁴: Փակվել է 1928 թ.⁵⁸⁵:

| տարեթիվ | աշակերտներ |
|------------------------|------------|
| 1922/23 ⁵⁸⁶ | 95 |
| 1923/24 ⁵⁸⁷ | 150 |
| 1924/25 ⁵⁸⁸ | 110 |
| 1927/28 ⁵⁸⁹ | 190 |

Հայ ավետարանական Բեթել վարժարան. հիմնվել է 1923 թ. մարտ 1-ին Համիդիե թաղամասում⁵⁹⁰: 1935 թ. տեղափոխվել է Ջարբիե թաղամաս⁵⁹¹, որտեղ էլ գործում է առ այսօր: 1934-1964 թթ. իր մասնաճյուղն ուներ Շեխ-Մագսուդ թաղամասում⁵⁹²:

| տարեթիվ | աշակերտներ |
|------------------------|------------|
| 1923 ⁵⁹³ | 200 |
| 1935 ⁵⁹⁴ | 232 |
| 1944/45 ⁵⁹⁵ | 474 |
| 1968 ⁵⁹⁶ | 700-750 |
| 2010/11 ⁵⁹⁷ | 333 |

Սբ. Խաչ⁵⁹⁸-Մեսրոպյան երկսեռ վարժարան. 1923-1936 թթ. գործել է Սլեյմանիե թաղամասում (նախապես կոչվում էր Ռամի հյուղաքաղաք)՝ Սբ. Խաչ եկեղեցուն կից: 1937 թ. տեղափոխվում է Միդան թաղամաս⁵⁹⁹ և գործում մարաշցիների Սբ.

555 «Մուրիահայ տարեցոյց», Հալեպ, 1925, էջ 316-317: Հմմտ. Պապայեան Ե., Պատմութիւն Ամբէպի հայոց, հ. Գ, Լոս Անճելըս, 1994, էջ 47:
 556 «Արեւ», 19 մարտ, 1927, էջ 1:
 557 Բաղդայան Ա., Հալեպի հայ համայնքը 1964-1985 թթ., էջ 118:
 558 Բաղդայան Ա., Միրիայի հայ համայնքը 1960-ական թթ.-1970-ականների սկզբներին, էջ 224:
 559 Պապայեան Ե., նշվ. աշխ., էջ 47:
 560 «Մուրիահայ տարեցոյց», Հալեպ, 1925, էջ 316-317:
 561 «Մուրիահայ տարեցոյց», Հալեպ, 1924, էջ 235:
 562 Պապիկեան Ճ., Մուրիա և հայութիւն, «Արեւ», 27 օգոստոս, 1925, էջ 2: Հմմտ. Ազատեան Լ., նշվ. աշխ., էջ 98:
 563 «Տաթև», 1929, էջ 388:
 564 «Հասկ», 1945, № 1-2, էջ 32:
 565 «Արեւելք. տարեգիրք», Հալեպ, 1948, էջ 157:
 566 Բաղդայան Ա., Հալեպի հայ համայնքը 1964-1985 թթ., էջ 118:
 567 Համարվել է հայ ավետարանականների դպրոց (Պապիկեան Ճ., Մուրիա և հայութիւն, «Արեւ», 28 օգոստոս, 1925, էջ 2):
 568 Պապայեան Ե., նշվ. աշխ., էջ 174: Տե՛ս նաև Պապայեան Ե., նշվ. աշխ., էջ 711:
 569 Պապայեան Ե., նշվ. աշխ., էջ 185:
 570 Պապայեան Ե., նշվ. աշխ., էջ 712:
 571 Պապայեան Ե., նշվ. աշխ., էջ 186:
 572 Նշվ. աշխ., էջ 208:
 573 ՀԱԴ, ֆ. 1421, ց. 5, գ. 28, թ. 14:
 574 Պապիկեան Ճ., Մուրիա և հայութիւն, «Արեւ» 28 օգոստոս, 1925, էջ 2:

575 Պապայեան Ե., նշվ. աշխ., էջ 185:
 576 Նշվ. աշխ., էջ 186:
 577 «Արեւ», 10 հոկտեմբեր, 1928, էջ 2:
 578 Նույն տեղում:
 579 Պապայեան Ե., նշվ. աշխ., էջ 193:
 580 Նշվ. աշխ., էջ 186:
 581 Նշվ. աշխ., էջ 210:
 582 «Արեւելք. տարեգիրք», Հալեպ, 1948, էջ 157:
 583 Պապայեան Ե., նշվ. աշխ., էջ 211:
 584 «Մուրիահայ տարեցոյց», Հալեպ, 1925, էջ 231:
 585 Երեանեան Գ., նշվ. աշխ., էջ 627:
 586 «Մուրիահայ տարեցոյց», Հալեպ, 1925, էջ 231: Մեկ այլ վկայության համաձայն՝ նշյալ ուստարում ուներ 100 աշակերտ (նշվ. աշխ., էջ 316):
 587 Երեանեան Գ., նշվ. աշխ., էջ 627:
 588 Պապիկեան Ճ., Մուրիա և հայութիւն, «Արեւ», 27 օգոստոս, 1925, էջ 2: Հմմտ. Ազատեան Լ., նշվ. աշխ., էջ 98:
 589 «Տաթև», 1929, էջ 388:
 590 Ընդհանրապես Ս., Ուրուագիծ հայ առեւ. Բեթել եկեղեցիի և վարժարանի պատմութեան 1923-1973, Հալեպ, 1973, էջ 5:
 591 Նշվ. աշխ., էջ 10:
 592 Նշվ. աշխ., էջ 12-13:
 593 Նշվ. աշխ., էջ 5:
 594 Նշվ. աշխ., էջ 10:
 595 Նշվ. աշխ., էջ 14:
 596 Նշվ. աշխ., էջ 21:
 597 Ըստ տնօրենուհի Բեթի Գրաճյան-Եփրեմյանի վկայության:
 598 Գապայեան Ե., նշվ. հոդվ., էջ 306:
 599 Սամուէլեան Վ., նշվ. աշխ., էջ 45-47, 74:

Գևորգ եկեղեցուն կից: 1964 թ. դեկտեմբերին էր «Գերմանիկ-Վասպուրական» հայրենակցական միության կողմից⁶⁰⁰: Փակվել է 2010 թ.:

| տարեթիվ | աշակերտներ |
|------------------------|------------|
| 1924/25 ⁶⁰¹ | 150 |
| 1925/26 ⁶⁰² | 320 |
| 1927/28 ⁶⁰³ | 437 |
| 1930/31 ⁶⁰⁴ | 635 |
| 1932/33 ⁶⁰⁵ | 631 |
| 1934/35 ⁶⁰⁶ | 377 |
| 1937/38 ⁶⁰⁷ | 141 |
| 1938/39 ⁶⁰⁸ | 280 |
| 1939/40 ⁶⁰⁹ | 330 |
| 1940/41 ⁶¹⁰ | 338 |
| 1941/42 ⁶¹¹ | 348 |
| 1942/43 ⁶¹² | 353 |
| 1943/44 ⁶¹³ | 389 |
| 1944/45 ⁶¹⁴ | 463 |
| 1945/46 ⁶¹⁵ | 540 |
| 1946/47 ⁶¹⁶ | 400 |
| 1948 ⁶¹⁷ | 366 |
| 1958/59 ⁶¹⁸ | 395 |
| 1959/60 ⁶¹⁹ | 470 |
| 1964 ⁶²⁰ | 450 |
| 1973 ⁶²¹ | 140 |
| 1976/77 ⁶²² | 356 |
| 1992 ⁶²³ | 190 |
| 1999 ⁶²⁴ | 210 |

Խարբերող վարժարան. հիմնվել է 1923 թ. հոկտեմբերին Համախարբերողիական միության կողմից: Նյութական դժվարությունների պատճառով 1926 թ. հանձնվում է Արմենյան դպրոցի հիմնա-

դիր Հակոբ Պրունսուզյանին⁶²⁵ և միանում նրա դպրոցին⁶²⁶:

| տարեթիվ | աշակերտներ |
|------------------------|------------|
| 1923/24 ⁶²⁷ | 365 |
| 1924/25 ⁶²⁸ | 300 |

Արմենյան երկսեռ վարժարան. հիմնել է Հակոբ Պրունսուզյանը 1923 թ.⁶²⁹ Շելի-Մագուղ թաղամասում⁶³⁰: 1937 թ. վերանվանվել է Սեդրակ Մեսրոպյան⁶³¹ պահպանելով նաև իր նախնական անվանումը: 1953 թ. մտել է ՀԲԸՄ-ի իրավասության ներքո⁶³²:

1937-1958 թթ. ուներ մի մասնաճյուղ Աջուրլուք (Արկուր) թաղամասում⁶³³:

| տարեթիվ | աշակերտներ |
|------------------------|------------|
| 1924/25 ⁶³⁴ | 80 |
| 1927/28 ⁶³⁵ | 120 |
| 1944/45 ⁶³⁶ | 93 |
| 1948 ⁶³⁷ | 70 |
| 1964 ⁶³⁸ | 170 |
| 1968 ⁶³⁹ | 200 |
| 1973 ⁶⁴⁰ | 200 |

Դատենի հայրենակցական միության վարժարան. այս կրթօջախի մասին տեղեկությունները խիստ կցկտուր են: Հայտնի է միայն, որ հիմնվել է 1923 թ.⁶⁴¹: 1924 թ. ուներ 60 աշակերտ⁶⁴²:

Կրթասիրաց վարժարան. հիմնվել է 1924 թ. այն-թապցի գաղթականների ջանքերով⁶⁴³: Երկար տարիներ գործելով Սլեյբե, Արդե, Չոքաք-Արբային, Վեքիլիե փողոցների տարբեր շենքերում⁶⁴⁴:

600 **Բաղայան Ա.**, Հայեպի հայ համայնքը 1964-1985 թթ., էջ 119:
 601 **Ազատեան Լ.**, նշվ. աշխ., էջ 98: Տե՛ս նաև **Քեչիշեան Վ.**, Գոյապատում, Հայկ. 2002, էջ 55: Հմնտ. **Պապիկեան Ճ.**, Սուրիա և հայրենիք, «Արեւ», 27 օգոստոս, 1925, էջ 2:
 602 **Քեչիշեան Վ.**, Գոյապատում, էջ 55:
 603 «Տաքեւ», 1929, էջ 388:
 604 **Քեչիշեան Վ.**, Գոյապատում, էջ 79:
 605 Նշվ. աշխ., էջ 85:
 606 Նշվ. աշխ., էջ 90:
 607 Նշվ. աշխ., էջ 130:
 608 Նույն տեղում:
 609 Նույն տեղում:
 610 Նույն տեղում:
 611 Նույն տեղում:
 612 Նույն տեղում:
 613 Նույն տեղում:
 614 «Հասկ», 1945, № 1-2, էջ 32: Հմնտ. **Քեչիշեան Վ.**, Գոյապատում, էջ 123:
 615 **Քեչիշեան Վ.**, Գոյապատում, էջ 128:
 616 Նույն տեղում:
 617 «Արեւելք. տարեգիրք», Հայկ. 1948, էջ 157:
 618 **Քեչիշեան Վ.**, Գոյապատում, էջ 163-164:
 619 Նշվ. աշխ., էջ 165:
 620 **Բաղայան Ա.**, Հայեպի հայ համայնքը 1964-1985 թթ., էջ 119:
 621 Նշվ. հոդվ., էջ 126:
 622 **Տեմիրճեան Վ.**, նշվ. աշխ., էջ 452:
 623 Պատմող ու շնչող հայաբոյր Հայկալը, էջ 16:
 624 **Հարությունյան Ն.**, Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցները, Երևան, 2002, էջ 240:

625 **Վահե Հայկ**, նշվ. աշխ., էջ 1044-1045, 1047:
 626 **Մարաֆեան Գ.**, Պատմութիւն Անթէլի հայոց, հ. Բ, Լոս Անճելըս, 1953, էջ 713:
 627 «Սուրիահայ տարեցոյց», Հայկ. 1925, էջ 316:
 628 **Պապիկեան Ճ.**, Սուրիա և հայրենիք, «Արեւ», 27 օգոստոս 1925, էջ 2: Տե՛ս նաև **Ազատեան Լ.**, նշվ. աշխ., էջ 98:
 629 **Մարաֆեան Գ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 713:
 630 ՀԱԳ, ֆ. 1421, ց. 3, գ. 48, ք. 5: Տե՛ս նաև գ. 19, ք. 40; գ. 5, գ. 28, ք. 14: «Հասկ», 1945, № 1-2, էջ 32:
 631 **Պերդրոտեան Լ.**, Ուրուագիծ Սուրիոյ Հ.Բ.Միութեան պատմութեան, «Գեղարդ. Սուրիահայ տարեգիրք», Հայկ. 1975, էջ 482:
 632 Նույն տեղում:
 633 **Պերդրոտեան Լ.**, նշվ. հոդվ., էջ 482: Հմնտ. ՀԱԳ, ֆ. 1421, ց. 3, գ. 71, ք. 1-2, 4, 6-7; գ. 19, ք. 8-10, 34:
 634 **Պապիկեան Ճ.**, Սուրիա և հայրենիք, «Արեւ», 27 օգոստոս, 1925, էջ 2:
 635 «Տաքեւ», 1929, էջ 388:
 636 «Հասկ», 1945, № 1-2, էջ 32: Տե՛ս նաև ՀԱԳ, ֆ. 1421, ց. 5, գ. 28, ք. 14:
 637 «Արեւելք. տարեգիրք», Հայկ. 1948, էջ 157:
 638 **Բաղայան Ա.**, Հայեպի հայ համայնքը 1964-1985 թթ., էջ 116:
 639 **Բաղայան Ա.**, Սիրիայի հայ համայնքը 1960-ական թթ.-1970-ականների սկզբներին, էջ 226:
 640 **Բաղայան Ա.**, Հայեպի հայ համայնքը 1964-1985 թթ., էջ 126:
 641 **Շահպազեան Յ. Ղ.**, Թանգարան գիտը մեր եւ սիրոյ արիւնտ ածուներ, Ֆրանսա, 1967, էջ 152:
 642 **Ազատեան Լ.**, նշվ. աշխ., էջ 98:
 643 «Արեւ», 27 յունուարի, 1926, էջ 2: Տե՛ս նաև **Պարսումեան Գ.**, Պատմութիւն Այնթապի Հ.Յ.Դ-աշակցութեան 1898-1922, էջ 332:
 644 **Թրքանեան Թ.**, Կրթասիրաց մշակութային միութեան և Կրթասիրաց վարժարանի յուշամատեն 1924-1989, Հայկ. 1994, էջ 42, 45:

վերջապես 1974 թ. ունենում է սեփական նորակա-
ռույց շենքը⁶⁴⁵ Սբ. Աստվածածին նոր եկեղեցուն
կից, որտեղ էլ գործում է առ այսօր:

Ստորև ներկայացնում ենք վարժարանի աշա-
կերտության թվաքանակը հիմնադրման տարեթվից
առ 2010/2011 ուստարին.

| տարեթիվ | աշակերտներ |
|------------------------|------------|
| 1924/25 ⁶⁴⁶ | 467 |
| 1925/26 ⁶⁴⁷ | 556 |
| 1926/27 ⁶⁴⁸ | 618 |
| 1927/28 ⁶⁴⁹ | 554 |
| 1928/29 ⁶⁵⁰ | 590 |
| 1929/30 ⁶⁵¹ | 560 |
| 1930/31 ⁶⁵² | 640 |
| 1931/32 ⁶⁵³ | 637 |
| 1932/33 ⁶⁵⁴ | 571 |
| 1933/34 ⁶⁵⁵ | 565 |
| 1934/35 ⁶⁵⁶ | 528 |
| 1935/36 ⁶⁵⁷ | 557 |
| 1936/37 ⁶⁵⁸ | 570 |
| 1937/38 ⁶⁵⁹ | 516 |
| 1938/39 ⁶⁶⁰ | 547 |
| 1939/40 ⁶⁶¹ | 580 |
| 1940/41 ⁶⁶² | 582 |
| 1941/42 ⁶⁶³ | 608 |
| 1942/43 ⁶⁶⁴ | 655 |
| 1943/44 ⁶⁶⁵ | 648 |
| 1944/45 ⁶⁶⁶ | 642 |
| 1945/46 ⁶⁶⁷ | 620 |
| 1946/47 ⁶⁶⁸ | 491 |
| 1947/48 ⁶⁶⁹ | 504 |
| 1948/49 ⁶⁷⁰ | 480 |
| 1949/50 ⁶⁷¹ | 475 |
| 1950/51 ⁶⁷² | 488 |
| 1951/52 ⁶⁷³ | 480 |
| 1952/53 ⁶⁷⁴ | 483 |
| 1954/55 ⁶⁷⁵ | 451 |
| 1955/56 ⁶⁷⁶ | 433 |
| 1968 ⁶⁷⁷ | 600 |
| 1973 ⁶⁷⁸ | 600 |

645 Պապայեան Ե., նշվ. աշխ., էջ 49, 51:
646 ՀԱԴ, ֆ. 1421, ց. 2, գ. 8, ք. 7: Հմմտ. Թորանեան Թ., նշվ.
աշխ., էջ 59:
647 ՀԱԴ, ֆ. 1421, ց. 2, գ. 8, ք. 7: Հմմտ. «Արեւ», 27 յունուարի,
1926, էջ 2: Պապիկեան Ռ., Սուրիա և հայութիւն, «Արեւ»,
1925, օգոստոս 27, էջ 2:
648 ՀԱԴ, ֆ. 1421, ց. 2, գ. 8, ք. 7:
649 «Տարեւ», 1929, էջ 388: Հմմտ. ՀԱԴ, ֆ. 1421, ց. 2, գ. 8, ք. 7:
Թորանեան Թ., նշվ. աշխ., էջ 59:
650 ՀԱԴ, ֆ. 1421, ց. 2, գ. 8, ք. 7:
651 Նշվ. վավ., ք. 7: Հմմտ. նշվ. վավ., ք. 3:
652-655 Նշվ. վավ., ք. 4, 7: Հմմտ. Թորանեան Թ., նշվ. աշխ., էջ 59:
656-665 Թորանեան Թ., նշվ. աշխ., էջ 59:
666 «Հասկ», 1945, № 1-2, էջ 32:
667-671 Թորանեան Թ., նշվ. աշխ., էջ 59:
672 ՀԱԴ, ֆ. 1421, ց. 2, գ. 8, ք. 23: Հմմտ. Թորանեան Թ., նշվ.
աշխ., էջ 59:
673-676 Թորանեան Թ., նշվ. աշխ., էջ 59:
677 Բաղայան Ա., Սիրիայի հայ համայնքը 1960-ական թթ.-
1970-ականների սկզբներին, էջ 226:
678 Բաղայան Ա., Հալեպի հայ համայնքը 1964-1985 թթ., էջ 126:

| | |
|------------------------|-----|
| 1974/75 ⁶⁷⁹ | 332 |
| 1975/76 ⁶⁸⁰ | 336 |
| 1976/77 ⁶⁸¹ | 388 |
| 1977/78 ⁶⁸² | 346 |
| 1978/79 ⁶⁸³ | 327 |
| 1979/80 ⁶⁸⁴ | 318 |
| 1980/81 ⁶⁸⁵ | 337 |
| 1981/82 ⁶⁸⁶ | 316 |
| 1982/83 ⁶⁸⁷ | 292 |
| 1983/84 ⁶⁸⁸ | 297 |
| 1984/85 ⁶⁸⁹ | 296 |
| 1985/86 ⁶⁹⁰ | 406 |
| 1986/87 ⁶⁹¹ | 380 |
| 1987/88 ⁶⁹² | 343 |
| 1988/89 ⁶⁹³ | 337 |
| 1989/90 ⁶⁹⁴ | 342 |
| 1990/91 ⁶⁹⁵ | 330 |
| 1993/94 ⁶⁹⁶ | 292 |
| 1999 ⁶⁹⁷ | 218 |
| 2002/03 ⁶⁹⁸ | 248 |
| 2003/04 ⁶⁹⁹ | 289 |
| 2004/05 ⁷⁰⁰ | 302 |
| 2005/06 ⁷⁰¹ | 307 |
| 2006/07 ⁷⁰² | 356 |
| 2007/08 ⁷⁰³ | 427 |
| 2008/09 ⁷⁰⁴ | 551 |
| 2009/10 ⁷⁰⁵ | 603 |
| 2010/11 ⁷⁰⁶ | 639 |

Մալաթիացիների երկսեռ վարժարան. հիմնվել է
1924 թ. ԱՄՆ-ի «Մալաթիոյ կրթասիրաց ընկերու-
թեան» նյութական օժանդակությամբ⁷⁰⁷: 1924-1925
թթ. ուներ 100 աշակերտ⁷⁰⁸: Գործել է մինչև 1927
թ.⁷⁰⁹:

Ուրֆացի գաղթականաց երկսեռ վարժարան.
առաջին անգամ հիշվում է 1924-1925 թթ. Քեմփի
շրջանում⁷¹⁰: Մասնաճյուղ ուներ Համիլիե թաղամա-
սում⁷¹¹:

| տարեթիվ | Քեմփ | Համիլիե | միասին |
|------------------------|------------------------|----------------------|---------|
| 1924/25 ⁷¹² | 100 | | |
| 1933 | 100-120 ⁷¹³ | 50-60 ⁷¹⁴ | 150-180 |

Տիզրանակերտի հայրենակցական միության
վարժարան. միակ հիշատակությունը վերաբերում է
1924 թ., երբ ուներ 60 աշակերտ⁷¹⁵:

679-683 Թորանեան Թ., նշվ. աշխ., էջ 104:
684-695 Նույն տեղում:
696 Պապայեան Ե., նշվ. աշխ., էջ 49, 51:
697-706 Ըստ տնօրեն Անդրանիկ Պողոսյանի վկայության:
707 Ալպոյանեան Ա., Պատմութիւն Մալաթիոյ հայոց, էջ 1518:
708 Պապիկեան Ռ., Սուրիա և հայութիւն, «Արեւ», 27 օգոստոս,
1925, էջ 2: Հմմտ. Ազատեան Լ., նշվ. աշխ., էջ 98:
709 Ալպոյանեան Ա., Պատմութիւն Մալաթիոյ հայոց, էջ 1518:
710 Պապիկեան Ռ., Սուրիա և հայութիւն, «Արեւ», 27, օգոստոս,
1925, էջ 2:
711 Մահակեան Ա., նշվ. աշխ., էջ 1259:
712 Պապիկեան Ռ., Սուրիա և հայութիւն, «Արեւ», 27 օգոստոս,
1925, էջ 2:
713 Մահակեան Ա., նշվ. աշխ., էջ 1259:
714 Նույն տեղում:
715 Ազատեան Լ., նշվ. աշխ., էջ 98:

Հայ կաթողիկե արական բարձրագույն («Գօլէժ Արմէնօ Գաթօլիք տը Սաքրէ Քէօր») վարժարան. 1924/25 ուստարում ուներ 500 աշակերտ⁷¹⁶:

Հայ կաթողիկե արական Սբ. Գրիգոր Լուսավորիչ (Իման) ճեմարան. հիմնվել է 1860 թ.⁷¹⁷: 1924-1925 թթ. ուներ 300 (սովորում էին անվճար)⁷¹⁸, 2010-2011 թթ.՝ 1200 աշակերտ (մեծամասնությունը՝ այլազգի)⁷¹⁹: Այժմ չի գործում սիրիական ներքին պատերազմի պատճառով:

Հայ կաթողիկե իգական բարձրագույն (Հայ քույրերի) վարժարան. գտնվում է Ջերեզ-Նահր քաղամասում: Հիմնվել է 1899 թ.: Կոչվում էր նաև «Քերց անարատ յորթեան»⁷²⁰: 1924-1925 թթ. ուներ 200⁷²¹, 2010-2011 թթ.՝ 900 աշակերտուհի (300-ը՝ հայ)⁷²²:

Հայ կաթողիկե իգ. Սրբուհի Աննայի վարժարան. այս վարժարանի գործունեությունից հայտնի է միայն, որ 1924-1925 թթ. ուներ անվճար սովորող 200 աշակերտ⁷²³:

Հայ ավետարանական արական բարձրագույն վարժարան («Էմերիքըն պոյզ հայ սքուլ»). 1924-1925 թթ. ուներ 135 աշակերտ⁷²⁴:

Հայ ավետարանական իգական բարձրագույն վարժարան («Էմերիքըն կըրոզ հայ սքուլ»). 1924-1925 թթ. ուներ 123 աշակերտ⁷²⁵:

Հայ ավետարանական երկսեռ վարժարան. 1924-1925 թթ. ուներ 315 աշակերտ⁷²⁶:

Հայ ավետարանական Քեմփի երկսեռ վարժարան. 1924-1925 թթ. ուներ 231⁷²⁷, իսկ 1928 թ.՝ 263 աշակերտ⁷²⁸:

Ազգ. Ներսեսյան ծաղկոց-Չավարյան վարժարան. հիմնվել է 1925 թ. այնթապցիների Քեմփում: 1936 թ. վերանվանվում է Ազգային Չավարյան վարժարան և տեղափոխվում Միդան քաղամաս⁷²⁹: 1966 թ. կառուցվում է դպրոցի նոր շենքը⁷³⁰, որտեղ էլ գործում էր մինչև սիրիական ներքին պատերազմը՝ 2011 թ.:

| տարեթիվ | աշակերտներ |
|------------------------|------------|
| 1927/28 ⁷³¹ | 250 |
| 1944/45 ⁷³² | 536 |
| 1948/49 ⁷³³ | 481 |
| 1949/50 ⁷³⁴ | 498 |
| 1950/51 ⁷³⁵ | 513 |
| 1951/52 ⁷³⁶ | 519 |
| 1952/53 ⁷³⁷ | 500 |
| 1953/54 ⁷³⁸ | 457 |
| 1954/55 ⁷³⁹ | 496 |
| 1955/56 ⁷⁴⁰ | 493 |
| 1957 ⁷⁴¹ | 500 |
| 1976/77 ⁷⁴² | 683 |
| 1992 ⁷⁴³ | 515 |
| 1999 ⁷⁴⁴ | 490 |

Փոլատյան գիշերային վարժարան. հայտնի է միայն հիմնադրման տարեթիվը՝ 1926 թ.⁷⁴⁵:

Ազգ. Սահակյան վարժարան. հիմնվել է 1927 թ.⁷⁴⁶: 1960 թ. հոկտեմբերի 9-ին բացվում է Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու մոտ կառուցված դպրոցի նորակառույց շենքը⁷⁴⁷, որտեղ էլ գործում էր մինչև սիրիական ներքին պատերազմը՝ 2011 թ.:

| տարեթիվ | աշակերտներ |
|------------------------|------------|
| 1927/28 ⁷⁴⁸ | 110 |
| 1944/45 ⁷⁴⁹ | 407 |
| 1948 ⁷⁵⁰ | 333 |
| 1964 ⁷⁵¹ | 600 |
| 1976/77 ⁷⁵² | 866 |

Ազգ. կենտրոնական միջնակարգ վարժարան. հիմնվել է 1928 թ. հոկտեմբերի 1-ին, հիշվում է 15 աշակերտ⁷⁵³: Ունեցել է խիստ կարճատև կյանք⁷⁵⁴:

Ազգ. Պողոս⁷⁵⁵ Կյուլպենկյան վարժարան. հիմնվել է 1930 թ. սեպտեմբերի 22-ին: 1944-1945 թթ. գտնվում էր Բլուրի քաղամասում⁷⁵⁶: 1950 թ. փոխադրվում է Սլեյմանիեի մեկ այլ շենք⁷⁵⁷: 1997 թ. նույն քաղամասում ուներ իր նորակառույց շենք:

Համիթն Ամիդ քաղաքն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանում: Պաշտոնապես վերանվանվել է Դիյարբաքր (Diyarbakir):



49. Ավետարանի կազմ.

Յիշատակ է ատարարանիս արձաթն մահտեսի Մուրատին, կողակցուն՝ մահտեսի Սէյտէին, հորն՝ մահտեսի Աբրահամին, մօրն՝ մահտեսի Թուրվանտին ի դուռն Ս. Աստուածածին եկեղեցուն, թվին Ռ-ՄՀԱ (1822):

Հրատ. ՊՀՀ, էջ 907:

Ծանոթ. Ավետարանի կազմը չենք տեսել:

1926 թ. Սր. Քառասնից մանկանց կամ Սր. Աստվածածին եկեղեցու իրերից էր (նշվ. աշխ., էջ 900):

Վերոնշյալ արձանագրությունը Սյուրմեյանի մոտ կրկնվում է այսպես. «Յիշատակ է արձաթեայ ատարարան՝ մահտեսի Մուրատի կողակցին՝ մահտեսի Սէյտէի, հորն Աբրահամին, մօրն մահտեսի Թուրվանտին, ի դուռն Ս. Աստուածածնայ եկեղեցոյն, թվին Ռ-ՄՀԱ (1822)» (նշվ. աշխ., էջ 907):

50. Ավետարանի կազմ. արձանագրությունը՝ արձաթապառ կազմին²⁴.

Շահվեքիլին որդին՝ տիրացու Աստուածատուրին, Կասբարին աղջնին՝ Մարգարտին, Մարիամին, սասունցի մահտեսի Կարապետին ի դռան Ս. Աստուածածին եկեղեցուն, թվին Ռ-ՄՀԱ (1822):

Հրատ. նույն տեղում:

Ծանոթ. Ավետարանի կազմը չենք տեսել:

1926 թ. Սր. Քառասնից մանկանց կամ Սր. Աստվածածին եկեղեցու իրերից էր (նշվ. աշխ., էջ 900):

Գասպարը և դուստրը՝ Մարիամը, հիշվում են մեկ այլ արձանագրության մեջ (տե՛ս Սր. Աստվածածին եկեղեցու արձ. № 40):

24 Նշվ. աշխ., էջ 907:


51. Կոնքեռ. 25 x 25 սմ մեծությամբ: Թավշյա կանաչ կտորի վրա «...Յիսուս, ձեռքերը վեր բարձրացուցած վիճակով, գլուխը թագ, հագած է պարեգօտ շապիկ, վրան եմիփորան: Չորս անկիւնը չորս հրեշտակներ, բոլորը գեղահիւս եզերագարդի մէջ»²⁵, արձանագրությունը՝ հակառակ կողմում կարմիր թավշյա կտորի վրա, ասեղնագործ, 10 տող.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է | [կո]նքեռս | [Ս(ուր)բ] Ա(ստուա)ծածնի և | Ս(ուր)բ Խ (40) մ(ա)նկ(ա)նց եկեղեցեաց ձեռամբ Աջալպահեան տ(եառ)ն Եփրեմ առաջ[նորդին և ատանացի մ(ա)հ(տես)ի Դաւթեան մ(ա)հ(տես)ի Գրիգորին և արդե[լամբք ժողովրդոց, ի թուին | հայոց Ռ-ՄՀԱ (1822) յունվ(ար):

Հրատ. ՊՀՀ, էջ 906-907:

Ծանոթ. Եփրեմ Բ Աջապահյանը տեր Մանվելի որդին էր: Կիլիկիո կաթողիկոս է ընտրվել Բերիո թեմի առաջնորդության ժամանակ՝ 1822 թ.: Վախճանվել է 1833 թ. հունիսի 17-ին (Քաղզեմ Ա աթոռակից կաթողիկոս, նշվ. աշխ., սյունակ 593-594): Հիշվում է նաև 1822 թ. (տե՛ս Սր. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 83): Պահպանվել է 1827 թ. արձակած կոնդակը (տե՛ս Սր. Աստվածածին եկեղեցու արձ. № 56):

Ադանա (Adana) քաղաքը գտնվում է Կիլիկիայում: Չի անվանափոխվել:



52. Մեղանի խաչ. արձանագրությունը՝ ելնդագիր, 6 տող, ուրից ցած՝ 2 տող փորագիր.

Ելնդագիր.

Ի յ(ա)յր(ա)պ(ետութ)ե(ան) մեծն Կիլիկոյ վեհափառ | Կիրակոս կ(ա)թ(ո)ղ(ի)կ(ո)սին աթ(ո)ռոյն տ(ե)յառն սր(բա)զան տ(ե)ր | և ի յ(ա)ռ(ա)ջն(ո)րդ(ո)ս(թ)ե(ան) յայսմ ք(ա)ղ(ա)քիս, որ է Անթափու | կուտինացի տ(եա)ռն Յակոբայ հանճարեղ ծ(ա)յր(ա)զ(ո)յն վ(ա)րդ(ա)պ(ետ)ի | և ի նորին տնորինմամբ և ջանացողութ(եամբ) արդեամբ համայն որինե(ա)լ | ժ(ո)ղ(ո)վրդ(ո)յ եղին յ(ի)շ(ա)տ(ակ) այս ս(ուր)բ խաչս ի դրունս ս(ուր)բ յեկ(ե)ղ(ե)ց {յ} (ի)ս, որ է Ս(ուր)բ Ա(ստուա)ծածնի սակս պ(ա)հ(ա)պ(ա)ն(ո)ս(թ)ե(ան):

Փորագիր.

Այսմ ԽԵ (45) ս(ուր)բ նշանք ս(ուր)բ մասաց մասանցն, որք են այտքին մախ կենաց փայտի մասն պորգեցիւ առ ս(ուր)բ եկ(ե)ղ(ե)ցին ի վեր(ա)յ յիշե(ա)լ դիտեն Բ (2) կան ս(ո)ր(ո)յ Կ(ա)ր(ա)պ(ետ)ի, ս(ո)ր(ո)յն Մզգնին(°) ի վկ(ա)յի մատն | Պանդելտոնի բժ(ի)շկին, ս(ո)ր(ո)յն Գ(ե)ռոզ(ա)յ զօրաե(ո)ին և Նոյեան տապանի փայտ փրկու(թ)ե(ան) ամե-

25 Նշվ. աշխ., էջ 906:

նայնին և ական այլ ս(ր)ք(ո)յ մասունս այն, յայտա-
նուամբ զի ոչ զիտեմ, ուստի էանց ի յեռսմե հ(ա)ն-
գ(ու)ցեալ:

Հրատ. *սուաջին անգամ:*



Ծանոթ. *Կիլիկիո կաթողիկոս Կիրակոս Ա Աջապահյանը պաշտոնավարել է 1797-1822 թթ., իսկ Այնթապի առաջնորդ Հակոբ Ծ. վ. Կուտինացու պաշտոնավարման թվականը մեզ հայտնի չէ: Անհայտ է նաև, թե ովքեր են եղել Այնթապի առաջնորդները 1796-1808 թթ.: Սակայն հայտնի է, որ 1808-1829 թթ. Այնթապի առաջնորդ է եղել Հովհաննես արք. Չարսանջակցին (Սարաֆեան Գ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 412), հետևաբար սեղանի խաչը թվագրում ենք 1797-1807 թվականների միջակայքում:*

Կուտինա քաղաքը գտնվում է Անատոլիայում: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Էյուսահյա (Kütahya):



53. Խնկաման. վերնամասի շուրջըտորը ձգվող արձանագրությունը՝ ելնդագիր, 1 տող հայերեն, որից վեր՝ փորագիր, 1 տող արաբերեն.
Ելնդագիր.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ի(ա)չկոցը Ստ(ե)փ(ա)նի որդին՝ Կա(ս)պարին, կող(ա)կց(ու)ն՝ Անաին, դստ(ե)րն՝ Թամօ(ի)ն, ի դ(ու)ռ(ն) Ս(ուր)ք Մազա(ր):

Փորագիր, արաբերեն.
١٢٣٨ (թարգմ.՝ 1238) (1822-1823):

Հրատ. *սուաջին անգամ:*



54. Սրբապատկեր «Մոզերի երկրպագություն». գտնվում է Սր. Քառասնից մանկանց Հին եկեղեցու ներսում՝ զանգակատան

հյուսիսային որմին: Մուգ հաստ մոմլաթի վրա պատկերված յուրաներկ և հնատիպ նկարը (չափերն են՝ 145 x 106 սմ) ունի փայտե ոսկեգույն շրջանակ (լայնությունն է 9 սմ). «...նկարս ատելի մեծադիր եղած է, բայց ժամանակի ընթացքին կտրուած ու փակցուած է...: Տիրապետող դեմքը... Աստուածամայրն է, ծնրադիր... մանուկ Յիսուսին առջև, որուն ծնրադրելու եկած են նաև մոզերը: Տիրամօր ետին կանգնած է Աստուածահայրը Յովսէփ. ան հագած է սրճագոյն ներքնոց և վրան ունի դեղնագոյն ճոխ թիկնոց...: Մարիամ... հագած է կարմրագոյն ճոխ ներքնոց. այ ատելի ճոխ է կանաչ ու կապոյտ թիկնոցը... ու գլուխը ծածկած է նոյն գոյնով լաշակով մը...: Յիսուսի մօտը երկու եզներու խոշոր... գլուխներ կը տեսնուին, 20 սնդմ. լայն ճակատով...: Մոզերը երեք են... առաջին երկուքը ծնրադիր, քովէ քով. երրորդը կանգնած: Առաջինը տարեց է, կիսասպիտակ մօրուքով, թագ, ծիրանի և ամեն ճոխութեամբ. երկրորդը ասոր մնան, բայց կը թուի երիտասարդ ըլլալ: Երրորդը... սևամորթ, սպիտակ ապարօշով և թագով...: Այս շքեղ բեմադրութիւնը կը կատարուի լուսազարդ բաց երկնքի մը տակ, ուր կ'երևան զիսուսու մեծ աստղին վերև երեք հրեշտակներ...»²⁶: Արձանագրությունը ներկագիր է, 22 տող.

Եւ հովիւքն էին | ի տեղոճն | այնմիկ | բացօթեայք, | որք պալիէին | փառք | ի բարձունս | ա(ստուծո)յ և երկիր | խաղաղութ(ի)ւ(ն) | ի մարդիկ | հաճութ(ի)ւ(ն) | և օրհնութիւն:

Յիշատակ է, Ս... եւ կրկին նորոգեցաւ, սուրբ ծննդեան | պատկերը, արդեամն | ... Աբրահամեան(?) անած... | ի դուռն ...յտ Աստուածածնայ եկեղեցոյ, | ի ՌՄՀԵ (1826) հայոց թիւն, Հալէպ:

Կրկին նորոգեցաւ Անդրանիկ Անտոնյան, ՌՆԽԳ (1994)-ին:

Հրատ. ՊՀՀ, էջ 922-923:

Ծանոթ. 1930 թ. սրբապատկերը բարվոք վիճակում էր, սակայն «...մեծապես վնասուած է և բազմաթիւ նորոգութիւններ տեսած: Նկարը ճիշտ մէջտեղէն հորիզոնաբար պատռուած, որմէ դուրս կը կրէ նաև 7-8 մեծ ու փոքր պատռուածքներ: Շրջանակը՝ սկզբնականը չէ անտարակոյս, որմէ տեղ-տեղ բաժնուած է կտաւը... միակ յիշատագրութիւնը... վնասուած է ջերմութենէ և դժուարաւ կը կարդացուի» (նշվ. աշխ., էջ 921-922): 1994 թ. սրբապատկերը նորոգվել է: Արձանագրության՝ շեղագիր տրված տառերն այժմ անընթեռնելի են, ուստի տալիս ենք Սյուրմէյանի ընթերցումը:




26 Նշվ. աշխ., էջ 921-922:

55. Սրբապատկեր «Թաշի կռումը». յուրաներկ նկարը (չափերն են՝ 79 x 57 սմ), որը պատկերված է հաստ մոմվաքի վրա, 1930 թ. աջ անկյունից ծակված էր, տեղ-տեղ բաժանված կարմրագույն փայտե անգարոջ շրջանակից (լայնությունն է 3,5 սմ): Պատկերը ներկայացնում է «...Յիսուս խաչին տակ: Դեպի կառավանատ վերելքին՝ Յիսուս, ծիրանագոյն զգեստի տակ, որ մինչև մերկ ոտքերը իջած է, ուսին վրայ ունի խաչափայտը, աջ ձեռքով անոր մէկ թերը գրկած վիճակով, աչքերը փակ, գլուխին փուշէ պսակ: Ետևը Հռովմէական միաձև գլխանոցով եօթը զինուորներ, զանազան գոյնի և տարազի զգեստով, վեր կը վերցունեն խաչափայտը: Յիսուսի առջև կանգնած են երկու այլ զինուորներ, որոնցմէ առաջինը վառուած ջահ մը կը կրէ, իսկ երկրորդը ճիշտ քովը Յիսուսին՝ կ'օգնէ անոր. աջ ձեռքին մէջ բռնած ունի քացախով լեցուն հողէ աման մը, զոր Յիսուսին կ'երկարէ: Դեպի վեր, կ'երևայ Յիսուսի մայրը, նուազած. երկու կիներ երկու կողերը մտած են ու կ'օգնեն անոր քայլելուն: Երկնակամարին վրայ կ'երևան լուսին, արև և աստղեր, խաւարած ու մռայլ»²⁷: Արձանագրությունը ներկագիր է, 11 տող.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է | կես(ա)ր(իա)ցի պալտկերահան | Բարսե[ղ]ի(ն) և որ[դ]իքն՝ Սարգիսին եւ Գէորդին, ի ՌՄՀԵ (1826) | հայոց թիւ:

Նորոգեց | Անդ(րանիկ) Անտոնյան, | ՌՆԽ (1991)-ին:

Հրատ. ՊՀՀ, էջ 921:



56. Կոնդակ, արձանագրությունը՝ ձեռագիր, 58 տող, կոնդակի ներքևում՝ փակագիր կնիք.

Յի. Քի. ծոյ. տր. Եփրեմ կթղկս. | Ամ. Հայոց, որ և շնորհիւ տոն. ծայրագոյն պտրիգ. Տանն Կիլիկիոյ և սպասաւոր սբ. Լուսաւորչի աջոյն | և վեհափառ հրաշալի աթոռոյն: Յորմէ ժամանեալ հասցէ զիր օրհնութ., աղօթք պահպանութեան, | շնորհք. առաքելական և ածային. բազմապատիկ ողորմոյին. և անսպառ գթոյին. եկեցէ և հանգիցէ, հեզլցի՛ և ծառա լեսցի՛ և սփռեալ տարածեսցի առ ի վր. տիրապահ քաղաքիդ օրհնեալ Գերմանիկու, և ի միջի դորին կառուցեալ քրիստոսահիմն | ի վեցեքին սբց. եկեղեցեաց և ի եկեղեցական մանկանց, նախ՝ սրբանուէր քահանայից, ուսումնասէր սարկաւազաց, քաղցրաբարբառ դպրաց, | հաւատարիմ էրեցփոխանաց, հարազատ զանձապետաց, բարեպաշտօն իշխան աղայից, հոգեսէր մահտեսեաց և մահտեսացու անձանց, ողորմած տեօլվաթաւորաց, առատաձեռն խօճաներաց, երլիից և միսաֆիրաց, եկաց և մտից, արդարավաստակ հողագործաց, բարեսէր վաճառականաց, գրասիրտ աղքատաց, ա-

րանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից, մեծաց և փոքունց և առ հասարակ ի Քս. Յս. հաւատացելոցդ, խնդալ | տոն. շնորհիւ խոր խաղաղութեամբ և յարազուարճ բերկրութեամբ և ցնծալից կենօք միշտ ամեն: | Շնորհք. ընդ ձեզ և երկնաւոր խաղաղուին. յայ. հօրէ ամենակալէ և տոնն. մերմէ Յսէ. Քսէ. և ի սրբոյ | հոգւոյն կենարարէ, և յառատաձաւ պարգևատուօղէ, և յամենունակ շնորհատուօղէ, իջցէ՛ և հանգիցէ՛, հեղցի՛ և ծաւալեսցի՛, և | սփռեալ տարածեսցի ի վր. հոգւոց և մարմնոց ձերոց, տանց և բնակուեց., այգեաց և բուրաստանաց ձերոց, առից և տրոց, վարուց և վաստակոց | ձերոց, զարմից և զաւակաց, ուստերաց և դաստերաց ձերոց, բոլոր ընտանեաց և ձերայնոց ձերոց և ամենայն շարժուն և անշարժ իրաց, ի կամս | տեռն. ապաստանօղաց խնդալ ի յոյսն բնալից ի Քս. Յս. ի տր. մեր յարատև ուրախութեամբ երկար ամօք և զուարթ կենօք միշտ ամեն: | Եւ ընդ ածապարգևի. ողջունի և շնորհաձաւ օրհնուե. առաջնորդական կոնդակիս, լուարուք ով. Քրիստոսի | անբիծ և անսպական արեամբ գնեալ մեղաքաւիչ քահանայք, ածասէր. իշխանք և առ հասարակ ուղղադաւան լուսաւորչածին ժողովուրդք | այ. և ճշմարիտ սիրելիք մեր ի տր.: Չի ածահայր. մարգարէն Դաւիթ ի հոգելից մատենի իւրում գրէ ասելով թէ գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն | այ.: Արդ՝ զի՞նչ բերս իմաստուե. քաղցրապտուղ ի հոգևոր տնկոց աստի մարգարէուես. ժողովել պարտիմք: Քանզի գրէ առաքեալն, թէ ամենայն մարկարէուե. իւրոց լուծումն ունի, այն վասն գրէ վրդպտն. վանական՝ թէ հոգւոյն խօսել զհոգւոյն հոգևորացն է, ապաքէն ի հոգելից արանց՝ աստանօր | զմիտ և զխորհուրդ բանի մարգարէուես. բացայայտեսցուք ի լսելիս ունկնդրացդ՝ մարմնաւոր օրհնակաւ իւրք առ ի դիւրաւ իմանալ և լինիլ | վերահաս այսր բանի: Չի եթէ քաղաք որ շինեալ է ի գնացս ջուրց՝ ունի պատուականուե. քան զայն, որ յանջրդուջէ, որոյ զփորձ բազում կերպիւ | կարեմք իմանալ նախ լուանալով զաղտս, երկրորդ ոռոգանելով զանդաստանս առ ի պտղաբերել, և զովացուցանելով զժարալիս առ որ դիմեն: | Ապա թողեալ զայլ հարկաւորուես. մարմնաւոր ջրոյն, որ ընդ ինքնին յայտէ, դարձցուք ի միտս հոգևորս և դիցուք ձեր առաջի հակիրճ և համառօտ բանի | ահա ի հոգեպատում մարգարեիցն տառից առեալ գրեցից աստանօր: Արդ ամենայն բանք ածայինք. զորս ընկալեալ ի հոգւոյն սբց. խօսեցան նախնի սուրբ | հարքն մեր գրէ թէ ամենայն առակաւ և օրինակաւ են ասացեալ, ըստ երանելոցն Պօղոսի, թէ բազում մասամբք և բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ | ընդ հարս մեր մարգարեիք. և այս յայտ իսկ է քննողաց: Քանզի՝ որպէս երիվար ի ձեռն սանձակալի,

²⁷ Նշվ. աշխ., էջ 920-921:



կամ իբրև գղէկ ի կամս դեկատրի, նոյնպէս և մարգարէքն | ի կամս սբ. հոգւոյն որ և յոր կողմն կամէր՝ տայր նոցա խօսիլ: Չոր օրինակ ջուր ոռոգանելով գերկիր պտղաբերս առնէ, զնոյն և զպատգամն անձային., ըստ այնմ | թէ այսպէս ասէ տր. գոր օրինակ եթէ իջանիցէ անձրև կամ ձիւն յերկնից և անդրէն ոչ դառնայ մինչև արբուսցէ գերկիր, ծնցի և բոխեսցէ տացէ զտերմն սերմանոյի և զհաց ի կերակուր: Այնպէս եղիցի բանն իմ, որ ելանէ ի բերանոյ իմմէ մի դարձցի դատարկ մինչև կատարեսցի, գոր ինչ կամիցիմ, իսկ և բազում անկամ ջուրն զմարգարէս և զառաքեալս և բանին կենաց ուսուցանող վրդպտս. նշանակէ, ոպ. ասէ կենարարն մեր Յս. որ հաւատայ յիս, որպս. ասեն գիրք, վերք | յորովայն նորա բոխեսցեն ջրոց կենդանութ., և սբն. Ներսէս

շնորհալին ի յերգս շարականի հոգւոյն սբյ. ջուր զպարզև հոգւոյն իմանայ, գետ զառաքեալսն | և տիեզեր (որ են քաղաք) զբնուի. մարդկան ըսդ այնմ թէ այսօր բոխեսց ջուր կենդանի յերուսաղէմ լցան գետք անձային. և այլն: Արդ որպս. ջուր | լուսնալով զաղտս տանէ նոյնպս. և անարեալ. վրդպտք. ի ձեռն խրատու ջրոյ զաղտս մեղաց հոգւոց մարդկան ի բաց վտարեալ մաքուրս առնեն, ըստ այնմ թէ | ցանցից ի վր. ջուր սբ. և սրբեսջիք յամենայն անօրէնութեց. ձերոց: Որո՞վ. ցանէ և սրբէ, եթէ ո՛չ ի ձեռն քարոզչաց, որպս. ջուր պտղաբերս առնէ գերկիր | սոյնպս. և ուսուցիչքն բանին կենաց առ բերեն զհոգևոր պտուղս առաքինութ. ի բանատր երկրէ հոգւոց մարդկան: Արդ վսգի. մեք ևս կամենցողութեամբն | այ. և ընտրանօք օրհնեալ ազգիս և թեմի մերոյ կարգեցաք յաթոռ հայրապետական հարկ եղև մեզ հոգալ և խնամել զբանատր հօտ Քսի. այ. մերոյ և այս ոչ է | հնար անձամբ կատարել, այլ ի ձեռն միջնորդաց, որպս. արար և ուսոյց մեզ Քս. փրկիչն մեր՝ զի նախ ինքն առաքեաց զսրբզն. առաքեալսն և նոքա զփոխանորդսն | իւրեանց զորս ինքեանք կրթեցին, այսու հոգևոր շաղօք և մեք կառավարել ջանալով զեկեղեցին այ., այսինքն է զհաւատացեալ ժողովուրդսն, որով կարգեալ կացուցի ի վր. ձեր հովիւ և առաջնորդ զհոգևոր որդին մեր զտր. Դուկաս հեզաքայլ ծայրագոյն վրդպտն՝ որ ջրով կենսատու վրդպտունն. լուսալցէ զաղտս հոգւոց ձերոց և գործովք բարեաց առաքինութ. զհոգիս ձեր զարդարեալ պտղալիցս արասցէ, և ինքն հսկմամբ աղօթից և պահոց՝ լիցի՛ ձեզ | պարիսպ շրջապատ ամրութ. ընդէմ. ամենայն նեսարից չարին: Ապաքէն և դուք, քահանայքդ՝ իշխանքդ՝ և առ հասարակ ի Քս. Յս. հաւատացեալ | ժողովուրդքդ պարտիք ըստ ամենայնի հլու և հնազանդ կալ վերատեսչին ձերոյ և հարազատ սիրելոյ իմոյ տուն. Դուկասու խոհեմամիտ վարդապիւն., | և ընդ արժանոյն պատուել և մեծարել, զի զամենայն եղեալսն դմա՛, թէ պատիւ, և թէ անարգանք ինձ և սբյ. հրաշալի աթոռոյս վերաբերի: Քանզի ընդ | ամենայնի փոխանորդ իմէ, կապեալն ի սմանէ կապեալ եղիցի ի մէնջ, և արձակեալն արձակեալ, և օրհնեալն օրհնեալ եղիցի ի հօրէ և ի յորդոյ և | յամենա սբ. հոգւոյն: Ուստի՛ կրկին պատուիրելով ասէմ, ընդ ամենայնի պարտեք բարտք զնացս ցուցանել, և ի վր. այսր ամենայնի, զամենայն հասս առաջնորդական զսահմանեալսն ի նախնեաց՝ զտրունիսն՝ զօծուեցան՝ զնշանին՝ զպսակին՝ զթաղմանն՝ զհոգեբաժինն՝ խոստմունսն, և զպղսն. ամենայնի և զտարեկան | պտղին առանց այլ և այլ պատճառանաց մեծու հնազանդութ. թեսլիմ արասջիք, զի զամենայն գոր ինչ տայցէք ի ձեռն առաջնորդին ձերոյ և իմն հզևր. | որդոյ, այնք ամենայն ինձ և սբյ. գերամբիժ աթոռոյս լիովին հասա-

նի: Վս. որոյ պարտիք տալ զբոլոր իրատան սրյ. գահիս այլ և այլ խօսակցութ.: Ուստի | տեսանենմ զձեր սերն և զղայրէթն՝ և զածահաճոյ հնազանդութին., զոր լուեալ են ուրախ եղէց ի սիրոյ և ի հոգի բերկրելով: Որ և ուրախացուցիչն | համայնից ամ. ուրախ արարեալ զձեզ հոգով և մարմնով, տամբք և ամենայն գոյիք անուսանս պահեսցէ յամենայն արկածից չարին փրկելով՝ խոր՝ | խաղաղութ. ի խնամս իւր կեցուսցէ, բանալով ընդդէմ ձեր գրուոն անճառելի ողորմութեան բիւր բարութ. | լցուսցէ, հոգեկան և մարմնական կենօք զարդարելով անոնց փառացն հասուսցէ, | որ և այսու ամենայնի լերութ ողջ զօրացեալ ի տր. Յս. | խաղաղ կենօք և յամերամ ամենակօք | յար և միշտ ամեն: | Գրեցաւ օրինութեան և առաջնորդական կոնդակս, ի ՌՄՀԶ (1827), և ի հոկտմբրի. երեք, ի շնորհատու սր. աթոռօյս ընդ հովանեու սրց. զորից ամամերձ. | աջերացն, և երեսուն եօթն հազար մարտիրոսաց մասանց, որք աստ կան ի պահպանուե. հայկազեան տոհմիս:

Կնիք, փակագիր.

Եփրեմ կաթողիկոս:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. *Եփրեմ Բ Աջապահյանի մասին տես՝ Սր. Աստվածածին եկեղեցու արձ. № 51:*

Ղուկաս եպիսկոպոսը Մարաշի առաջնորդ է հիշվում 1841 թ. և պաշտոնավարում մինչև 1849 թ. (Գալուստեան Գ., նշվ. աշխ., էջ 583): Այս կոնդակից բացահայտվում է, որ տեր Ղուկասը Մարաշի առաջնորդ է նշանակվել 1827 թ.:

Երլի – բրբ.՝ տեղացի, իսկ միսաֆիր՝ հյուր:

57. Սրբապատկեր «Սուրբ Եղիա». այրվածքի հետևանքով ներքևի մասից ծակված յուղաներկ նկարը (չափերն են՝ 45 x 33 սմ), որը պատկերված է միջին բանձրությամբ դեղին մոմլաթի վրա, ունի հնադրոշմ, ծաղկանկար և գունաթափ շրջանակ (լայնությունն է 4.5 սմ), «...կը ներկայացնէ Ս. Եղիա, կապոյտ յատակի վրայ, կիսանդրեայ լուսապսակով: Սուրբը գորշագոյն ներքնոցի վրայէն հագած է ծիրանեգոյն քիկնոց...: Գլխու երկճեղ սպիտակ մագերը դէպի վար իջած է, կը խառնուի սպիտակ և երկար մօրուքին, դէմքը պայծառ է և յաջող»²⁸: Արձանագրությունը ներկագիր է, 13 տող.



Ս(ուր)բ Եղեա:
 Յ(ի)շ(ա)տ(ա)կ է | պատկերս | մ(ա)հո(ե)-սի | Իլային | և եղբօրն՝ | Միխաելին, | ի դուրն Ս(ուր)բ | Ա(ստուա)-ծածնայ | եկեղեցուն, | ի քվին | ՌՄՂԶ (1827)-ին:
 Հրատ. առաջին անգամ:

28 Նշվ. աշխ., էջ 920:

58. Լվացման կոնք. արձանագրությունը՝ փորագիր, 1 տող.
 Յ(ի)շ(ա)տ(ա)կ է անչրդեցի Մաշկեր(տ)ու գուդեն մ(ա)հ(տես)ի Գաբրիելեան պախտ սառաֆի հ(ա)ճի Մարտիրոս աղային ի դուռն Հէլպու Ս(ուր)բ Ա(ստուա)ծ(ա)ծնայ եկ(ե)ղ(ե)ց(ու)ն, ՌՄՀԶ (1829):

Հրատ. առաջին անգամ:
 Ծանոթ. ըստ Սր. Գևորգ եկեղեցու քաղականության անդամ Բաֆֆի Տեր-Հակոբյանի՝ կոնքը մինչև 2010 թ. պահպանվում էր Սր. Գևորգ եկեղեցում, սակայն հանձնվում է առաջնորդարանի զանձատուն:

Անչրդի գյուղը Անջրդին է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Խարբերդի մահանգի Ակն գավառում, սակայն ենթակա էր Արաբկիրի առաջնորդարանին («Արարատ», 1896, յույիս, էջ 331): Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Թովքափը (Topkapı):

Պախտ սառաֆի – բրբ.՝ պղնձեվաճառ, դրամափոխ:




59. Սեղանի խաչ. արձանագրությունը՝ եղնագիր, 1 տող.
 Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ու)րբ խաչս Անթապու Ս(ուր)բ Ա(ստուա)ծ(ա)ծին եկ(ե)ղ(եցո)յն արդեամբք ժ(ո)-ղ(ո)վ(ր)ղ(ո)ց, ջանի(թ)եամբ Ճխնեն Յ(ո)վի(ա)ն(նե)սի, քվ(ի)ն 1832 տ(եառ)ն:

Հրատ. առաջին անգամ:
 Ծանոթ. ճխնեն – բրբ.՝ դժոխք:



60. Սեղանի խաչ. արձանագրությունը՝ եղնագիր, 2 տող.
 Ամենայն ժողովուրդոց Անթապու Սուրբ Ա(ստուա)-ծածինա եկեղեցուն | հասարակաց յիշատակ է, կրիչ քին ՌՊԼԳ (1833):
 Հրատ. առաջին անգամ:
 Ծանոթ. կրիչ՝ հավանաբար փրկիչ:




61. Ավետարանի կազմ. արձանագրությունը՝ փորագիր, 3 տող.



Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ աւետարանս Մելմէին վանելումն տ(է)ր Կասպարին: | Յետ վաղճանելու տ(է)ր Կասպարին Ս(ուր)բ Ա(ստուա)ծածնա եկեղեցուն է: | Յ(ի)շ(ա)տ(ա)կ է խլճչի մահտ(ե)սի Օհանէսին և մահտ(ե)սի Կարապետին: Յ(ի)շ(ա)տ(ա)կ ԿՊԺ (թարգմ.՝ 1250) (1834-1835):

Հրատ. առաջին անգամ: Ծանոթ. խլճչի – թրք.՝ սվինագործ:



62. Սեղանի խաչ, արձանագրությունը՝ փորագիր, 1 տող. Յ(ի)շ(ա)տ(ա)կ է խ(ա)չս մամսացի Յեղիաի կող(ա)կց(ու)ն՝ Թամսին: Մամսին ժամին է յ(ի)շ(ա)տ(ա)կ, ԿՊԺ (թարգմ.՝ 1253) (1837-1838):

Հրատ. առաջին անգամ: Ծանոթ. Մամսա գյուղը գտնվում է Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի Չմշկածագ գավառում՝ Չմշկածագից 7.5 կմ հյուսիս-արևմուտք: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Ալաքուշ (Alakuş): Գյուղն ունեցել է երկու եկեղեցի: Սբ. Թորոսը կառուցվել է 1830 թ., պատկանում էր հայ հումադավաններին, իսկ Սբ. Գևորգը՝ հայ առաքելականներին (կառուցվել է 1834 թ.): Վերջինում պահված եկեղեցական բազմաթիվ արժեքավոր իրերի թվում եղել են նաև «տասնեակ մը արծաթեայ մեծ ու փոքր խաչեր», որոնցից է, ամենայն հավանականությամբ, գաղթի ժամանակ Հալեպ բերված և Բերիո առաջնորդարանին նվիրված սեղանի այս խաչը (Գասպարեան Հ., Չմշկածագ և իր գիտերը, Պոսթրն, 1969, էջ 209-210):



63. Խնկաման. շուրջբոլորը ձգվող արձանագրությունը՝ փորագիր, 1 տող.

(Յ)իշատակ է Ս(ուր)բ Գեվորգա եկ(ե)ղ(ե)ց(ու)ն ի տ(է)ր Գեվորքե, ԿՊԺ (թարգմ.՝ 1255) (1839): Հրատ. առաջին անգամ:



64. Գոգնոց. արձանագրությունը՝ ելնդագիր, 4 տող. Յիշատակ է գոգնոցս համորլեն ժողովրդոց ձեռանը Թուրվանտ|եան մ(ա)հ(տես)ի Սկրտ(ի)չին [ի] դուռն Ս(ուր)բ Շրմավոնին, | որ ի Յազրոյ, թվ[ի]ն ՌՄՂ (1841)-ին:

Հրատ. առաջին անգամ: Ծանոթ. Հազրո (Hazro) գյուղը գտնվում է Արևմտյան Հայաստանի Դիարբեքիի նահանգի Հազրո գավառում՝ Տիգրանակերտ քաղաքից 64 կմ հյուսիս-արևելք: Չի անվանափոխվել:



65. Ավետարանի կազմ. արձանագրությունը՝ փորագիր, 3 տող հայերեն և 1 տող արաբերեն.

Սուրբ Ա(ստուա)ծ(ծ)ածին վանքըն, | ԿՐԿ (թարգմ.՝ 1261) (1845): | Յիշատակս ի վայելումն տ(է)ր Յօհաննէսի: | Վարդապետ:

Հրատ. առաջին անգամ:



66. Սկիհ. արձանագրությունը՝ ելնդագիր, 2 տող.

Յ(ի)շ(ատակ) է այս սրկի(հ)ս Ջէ(յ)թունա Չախըրեան մահ(տես)ի Վարթանի և կողակիծ մահ(տես)ի Ամատ(ի) կենթանեած և ի նրնչեցելոց հորուն, | ի թուրըն Սուրբ Ռհանէս եկեղեցի, թ[վին] ՌՄՂԶ (1847):

Հրատ. առաջին անգամ:




67. Արձանագրություն. մկրտարանին՝ փորագիր, 3 տող.

Կառուցաւ նորոգ նրկարիք վիմին աւագանըս այս ծընօղ վերըստին | արդեամբք և ջանիք Միսաքեան տոհմին բընիկ ակընցի Սարգիս աղային, | 1850 յունվ(ար) 1:

Հրատ. ՊՀՀ, էջ 783:

Ծանոթ. Սարգիս Միսաքյանը, ի թիվս քաղաքի պատվավոր այլ անձանց, ստորագրում է 1847 թ. օգոստոսի 11-ին Հալեպ այցելած և առաջնորդարանի 1842-1847 թթ. հաշիվները ստուգած և կնքած Կիլիկիո Միքայել Բ կաթողիկոսի ստորագրության ներքո (նշվ. աշխ., էջ 780): 1858 թ. Միսաքյանը՝ որպես հաշտարար, հիշվում է մի քանի հետևորդներով կաթողիկեությանը հարած Հալեպի առաջնորդ Նիկողոս եպիսկոպոսի և առաքելականների միջև ծագած հակասությունները վերացնելու գործում. «...Միսաքեան Սարգիս աղա հաշտեցուց խռովեալները իրարու հետ,



այնպես որ ամենքն ալ, բացի Նիկողոսէն, մարտ 16, ծաղկազարդի երեկոյին վերադարձան իրենց մայրենի եկեղեցին...» (Բարգէն Ա աթոռակից կաթողիկոս, նշվ. աշխ., սյունակ 682-683):

Ըստ առաջնորդարանի դիվանատանը պահված մի արձանագրության՝ Սր. Աստվածածին եկեղեցու հին ավագանը զարդարող հախճապակիները 32 ոսկով վաճառվել են անգլիացի մի հնագետի Հալեպի անգլիական հյուպատոսարանի թարգմանիչ Նիկողոս Տեր-Մարգարյանի միջոցով (ՊՀՀ, էջ 878):

68. Արձանագրություն. հարավային խորանի սեղանին՝ փորագիր, 1 տող.

1850, յանուն Ս(ր)բ(ո)յն Բարդղղիմէոսի:

Հրատ. առաջին անգամ:



69. Սրբապատկեր «Վերջին ընթրիք». մոմագոծ կտավի վրա պատկերված յուղաներկ նկարը (չափերն են՝ 75 x 42 սմ) 1930 թ. ուներ «...պարզ փայտէ, նեղ, վրան սպիտակ ներկով նուրբ մետաղ անցուած» շրջանակ²⁹, որը, ամենայն հավանականությամբ, 1994 թ. փոխարինվել է նորով: Արձանագրությունը ներկագիր է, 10 տող հայերեն, որից վեր՝ նվիրատվական նույն բովանդակությամբ 2 տող արաբերեն, պատկերի աջ կողմում՝ փակագիր.

Եւ մինչդեռ ուտէին նոքա, էտտ | Յ(իսու)ս զիաց, օրինեաց եւ երեկ եւ էտ աշակերտացն: Մատթ. ԻՉ 26:

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է Հալէպու Ս(ուր)ք Ա(ստուա)- ծածնայ | Եկ(ե)ղ(ե)ց(ո)յն արդեամբ աշօտցի Իրա- տլեան մ(ա)հ(տես)ի Թորոսին, և որդեյն՝ | ըն- փայէլին, | 1853:

Նորոգեց Անդրանիկ) Անտոնյան, | ի ՌՆԽԳ (1994)ին:

Արաբերեն.

قد اوقف هذه الايقونة المقدس توروس وولده الخوجه
روفائيل الاشودلي الى كنيسة السيدة بحلب سنة ١٨٥٣

Փակագիր.

Լահտո:

Հրատ. ՊՀՀ, էջ 928: Արաբերեն արձանագրությունը հրա- տարակվում է առաջին անգամ:

Ծանոթ. Աշոտ գյուղը գտնվում է Արևմտյան Հայաստանի Մե- րաստիայի նահանգում: Ներկայումս պաշտոնապես վերան- վանվել է Գյունիքընար (Günönar):

Տարբերակներում. Մյուրմեյանի մոտ «Ժրատլեան»-ի փոխարեն՝ «Բատեան», «ընփայէլին»-ի փոխարեն՝ «Հնափայէլին», «Լահտո»-ի փոխարեն՝ «Մուրատ»:



70. Սկիհ. արձանագրությունը՝ 2 տող.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է սիկէիս ի Բերիա Ս(ուր)ք Ա(ս- տուա)ծածնա էկեղեցուն, Արաբգերու գողէն մաշ- կեր(տ)ացի Պատիրեան Պողոսըս շընէցի, հանգու- ցեալ | հորըս՝ Յակոբին, մորըս՝ Դուրվանտա(յ)ին, ամէնա(յ)ն նընջեցէլոց և կենդանիացս ի (յի)շ(ա)- տ(ա)կ է յեղիցի, ի թվ(ի)ն 1854-ին:

Հրատ. առաջին անգամ:

29 Նշվ. աշխ., էջ 928:

Ծանոթ. «Արաբգեր»-ն Արաբկիր քաղաքն է: Գտնվում է Արև- մտյան Հայաստանի Խարբերդի նահանգում: Թուրքերենով ար- տասանվում է Արափգիր (Arapgir):

71. Չարդախաչ. արձաթյա³⁰, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Արդեամբ | հաւասար | ժողովրդոց | ձեռամբ | սա- հաթի | Ակորին, ԿՂԿ. (թարգմ.՝ 1270) (1854):

Հրատ. ՊՀՀ, էջ 906:



Ծանոթ. տարեթիվը, որը նշված է հիշրի թվականով 1270=1853-1854 թթ., Մյուրմեյանը սխալմամբ վերծանել է հայոց թվականով (1270+551=1821): Նշյալի ճշգրտումը փաստող թվականների համար տես Սր. Քառասնից մանկանց եկեղեցու № 65, Ազիզիեի գերեզմանա- տան № 198, Շեխ-Մազաուդի ա- նաքերական գերեզմանատան № 6 և Սր. Հակոբ եկեղեցու № 2 արձանագրությունները:

Տարբերակում. Մյուրմեյանի մոտ «սահաթի Ակորին»-ի փո- խարեն՝ «սաարճի Յակորին»:

72. Սեղանի խաչ. արձանագրությունը՝ փորագիր, 19 տող հայերեն, որից ցած՝ փորագիր, 1 տող արաբերեն.

Յ(իսուս) Ն(ազովրեցի) ք(ազատր) Հ(րէից): Յի- շ(ա)տ(ա)կ է | այս խաչս պալշարաթցի Էմրոնեց | Յօհաննեսին՝ որդի Մելքոն(ի) ի դիւռն Չարխափիան Ս(ուր)ք Ա(ստուա)ծլածնայ | Եկեղեցոյն, փրկ(չա)յին | թվին | ԿՁԿ (թարգմ.՝ 1858):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Պաշարաթ գյուղը գտնվում է Արևմտյան Հայաստա- նի Դիարբեքրի նահանգի Բալու գավառում՝ Բալու քաղաքից արևմուտք: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Անլար (Anlar):



30 Նշվ. աշխ., էջ 906:

73. Ավետարանի կազմ. արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Չիմիշկեզեկցի Մայրբե վարդապետին ձեռամբը յիշատակ է այս | Չիմիշկեզեկու քաղաքին վե | գու-
ղերէից հավասար ժողովրդոցըն, Չէթունոյ ի դունն |
Փրկիչա, 1859:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. «Չիմիշկեզեկ»-ը Չմշկածագն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգում: Թուրքերենով արտասանվում է Չեմիշգեզեկ (Çemişgezek):

Փրկիչ մատուռը գտնվում էր Չեյթունից հարավ-արևելք՝ Շեհիրճեկ վայրի մոտ. «1829-ին Տ. Յովհաննես եպիսկոպոս Այնթապի առաջնորդ Չարսանջակցի և Տ. Յակոբոս եպիսկոպոս Չեյթունցի՝ ժողովուրդի աջակցութեամբ մատուռը, եղրկիացի ճարտարապետներու ձեռքով, գմբեթատր գեղեցիկ եկեղեցիի մը կը վերածեն, որ 1895 ղեկտ. 2-ի պատերազմին օրը կը քանդուի թուրքերուն կողմէ» (Գալուստեան Գ., նշվ. աշխ., էջ 108-109):

Վե – բրբ.՝ և:



74. Ճաճանջ. արձանագրությունը՝ փորագիր, 1 տող.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է պատկերքս Այրասկաց Մայգօին, հօրըն՝ Գիվորքին, մօրըն՝ Մառա(յ)ին, եղբորըն՝ Կարապետին, Մարտիրօսին վե համա(յ)ն ննջեցելոցն, 1279 (թարգմ.՝ 1279) (1863):

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. Այրասկաց Գևորգի և կնոջ՝ Մառայի մասին տես՝ Ազիզիեի գերեզմանատան արձ. № 284, 285:

75. Ափսե. արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Յիշատակ է Եղիաշի որդի մ(ա)հ(տեսի) | Էպու-
յիմին, | թվ(ին) 1871, 1871 թ(արգմ.՝ 1871 թիվ):

Հրատ. առաջին անգամ:




76. Սկիհ. արձանագրությունը՝ փորագիր, 1 տող.

Յիշատակ է այս Մշոյ Խասքիւղ(ա)ցի տիրաց(ո)ւ Սկրտիչի ձեռամբ իր աշխատաօրններու ընկերակցու(թեամ)բ: Սպղաց Ս(ուր)բ Կիրակոս եկեղեցիի ընծա, յամի 1872:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Խասգյուղը գտնվում է Արևմտյան Հայաստանի Բաղեշի նահանգի Մուշ գավառում: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Հասքոյ (Hasköy), իսկ Սպղա գյուղը, որը Սպղանքն է, գտնվում է Սասուն գավառի Տավորիի գավառակում՝ Քոնակ (Konak) գյուղի մոտ: Ունեցել է մեկ եկեղեցի և երկու մատուռ (Վ. Տ., Սասնոյ ներկայ վիճակը, «Հնչակ», 1895, № 12-13, էջ 104): Եկեղեցին հիշվում է Սր. Մարաբե անունով («Էթօշակ», 1901, № 1, էջ 28):



77. Ավետարանի կազմ. արձանագրությունը՝ ելնագիր, 3 տող.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ ետ գայս աւետարանս յե(կե)ղեցիին | Անդապու Նազարեան տիրացու Նալգար(ը) յարդեանց ժողովրդոց, ՌՊՀԲ (1872):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Անդապն Այնթապն է:



78. Քշոց. արձանագրությունը՝ փորագիր, 1 տող.



Յ(ի)շ(ա)տ(ա)կ է Սիւբե(ա)սի որդի հաճի Պաղ-տասար(ին), 1873:

Հրատ. առաջին անգամ:

79. Ճաճանչ.

Յիշատակ է սբ. խաչս Սբ. Աստուածածին եկեղեցուն Խաչօին, Գոհարին, Մարիամին, ԿԿԿ (թարգմ.՝ 1291) (1874-1875):

Հրատ. ՊՀՀ, էջ 907:

Ծանոթ. ճաճանչը չենք տեսել:

1926 թ. Սբ. Քառասնից մանկանց կամ Սբ. Աստվածածին եկեղեցու իրերից էր (նշվ. աշխ., էջ 900):


Տարեթիվը նշվել է ոչ թե հայոց, այլ հիջրի թվականով: Սյուրմեյանը 1874-1875 թվականների փոխարեն սխալմամբ վերծանել է 1842:

80. Չագար. արձանագրությունը՝ փորագիր, 1 տող.

Յ(ի)շ(ատակ) տ(է)ր Խաչատուր(ին) ի դուրն Ս(ուր)բ Ա(ստուա)ծ(ած)նա, ԿԿԿ (թարգմ.՝ 1293) (1877):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. տեր Խաչատուրի մասին տես Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 9:




81. Սաղավարտ. արձանագրությունը՝ փորագիր, 2 տող.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է սաղավարտս Մալօխեան մ(ա)հ(տես)ի Ա(ստուա)ծատուրին, | մ(ա)հ(տես)ի Կատարին և մ(ա)հ(տես)ի Մարիամին ի դուռն Ս(ուր)բ Սարգիս եկ(ե)ղ(ե)ց(ո)յ Մար(ա)շու, 1880:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Սբ. Սարգիս եկեղեցին, որի կառուցման համար 1741 թ. սուրբան Մահմուդը հրովարտակ է արձակում, գտնվում էր Մարաշի արևելյան Քյումբեթ թաղամասում: Ունեցել է երկու շենք՝ ամառային և ձմեռային: Վերջինս ավելի հին, ցածր, հիմնականում գետնափոր և ցածր պատուհաններով կառույց էր (Գալուստեան Գ., նշվ. աշխ., էջ 572):



82. Ավետարանի կազմ. արձանագրությունը՝ ելնդագիր, 3 տող. 1883: | Յ(ի)շ(ա)տ(ա)կ է տ(է)ր Եղիշէ ք(ա)հ(ա)-նայի Անդապու Ա(ստուա)ծ(ած)նա եկ(ե)ղ(ե)ցուն:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. այնքապցի Եղիշէ Քիլիսյանը (1844-1911) տեղի Սբ. Աստվածածին եկեղեցու քահանաներից էր: 1892 թ. նույն եկեղեցու վերակառուցման համար նվիրել է 110 օսմանյան դուրուշ (Մարաֆեան Գ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 437, 440):



83. Արձանագրություն. տեղահան, մարմարե սալիկին՝ ելնդագիր, 5 տող.

Փառք ի բարձունս ա(ստուծո)յ եւ յերկիր խաղաղութ(իւն): | Հայր, | որդի, | հոգի: | 1884:

Հրատ. առաջին անգամ:



84. Արձանագրություն. տեղահան, մարմարե սալիկին՝ ելնդագիր, 6 տող.

Յանուն Տիրամօր յարկս սրբութեան | կառուցաւ արդեամբ հայ ժողովրդեան: | Ընկալցի իւր ի փառս տ(է)րն զօրութեանց | անշուշտ հաւաստիք սերտ ծառայութե(ա)նց: | 1884-4376, մարտ(ի) 1, յԱնտիոք: | Փորագրեաց Յովհաննէս Տօնաթոսեան:

Հրատ. առաջին անգամ:



85. Գավազան. արձանագրությունը՝ 2 տող. Չեռամբ ժողովրդեան | 1886 հոկտե(մբերի) 1, ի Բաղէշ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Բաղէշ թաղաքն Արևմտյան Հայաստանի համանուն մահանգի կենտրոնն է:

86. Ծնծղա. արձանագրությունը՝ ելնդագիր, 1 տող.

Յիշատակ է Գէորգ Միհրանեան(ի), 1889 ս(ե)պտ(ե)մբ(ե)ր 2:

Հրատ. առաջին անգամ:



87. Սկիհ. արձանագրությունը՝ 6 տող.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է սկիհս | այս Ա(ստու)ծած(ն) եկեղեցոյն Ուլնիոյ բարեպաշտ ժողովրդոց, 1891:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Սր. Աստվածածին եկեղեցին գտնվում էր Ուլնիայի (Չեյրուն) Օրթա («Արձագանք», 1885, № 18, էջ 245) կամ Մուրենյան բաղամասում: Եկեղեցու ամենավաղ հիշատակությունը 1409 թ.-ից է (ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, կազմ. Խաչիկյան Լ., Երևան, 1955, էջ 98): Հայտնի է, որ 1884 թ. հրդեհից հետո վերանորոգվել է (Գալուստեան Գ., նշվ. աշխ., էջ 111: Տես նաև Մխչեան Մ., նշվ. աշխ., էջ 50):

88. Կանթեղ. արձանագրությունը՝ 1 տող հայերեն, որից ցած՝ 1 տող արաբերեն.

Աշխատութեամբ թաղական խորհուրդո արծաթը Ս(ուրբ) Խ (40) մանուկ եկեղեցոյ, թիս 1895 Բերիոյ:

Արաբերեն, ելնդագիր.

عمل ميساك كيورك نقاش في نيسان سنة ١٨٩٥.

Թարգմ. Աշխատանքը Միսակ Գևորգ Նազգաշինն է, ապրիլ 1895 թ.:

Հրատ. առաջին անգամ:

89. Ավետարանի կազմ. արձանագրությունը՝ 1 տող.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է արծաթապատ արևտարան[ս] Ուլնիոյ Ս(ուրբ) Ա(ստու)ծածին եկեղեցոյ մարաշցի ոսկերիչ Գալիթեան Խաչերի որդի Աւետիսին, 1895:

Հրատ. առաջին անգամ:

90. Սուրբ մյուռնի անոթ. արծաթյա աղավնի³¹, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.

Յիշատակ է անօթս | ս(ուրբ) մեռնի մ(ա)հ(տե-ս)ի Աբրոյի(ի)ն)՝ դուստր Յովհաննէս | աղայի Քիրքչե(ա)ն(ի) եւ | տիկին մ(ա)հ(տես)ի Անթանիոս | Ագարիան(ի), յամի 1897-ին:

Հրատ. ՊՀՀ, էջ 908:

31 Նշվ. աշխ., էջ 908:

Ծանոթ. Սր. մյուռնի անոթը 1926 թ. Սր. Քառասնից մանկանց կամ Սր. Աստվածածին եկեղեցու իրերից էր (նշվ. աշխ., էջ 900): 1861 թ. Էպրտիի Քյուրքչյանը նվիրել է նաև արծաթյա կանթեղ (նշվ. աշխ., էջ 910):

Հալեպում եղել են երկու Հովհաննես Քյուրքչյաններ. «...Յովհաննես աղա Քիրքչեանօֆ... հալեպարնակ միս Յովհաննես Քիրքչեանէն (ժամագործ, Վահան Քիրքչեանի իորեղ-բայրը) զանազանուելու համար մականունը օֆով ամանցած» է (Մարաֆեան Գ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 661): Սակայն հաճախ շարունակվել է հիշվել Քյուրքչյան ձևով: Արձանագրության մեջ հիշվող Հովհաննես Քյուրքչյանը ժամագործն է, և պետք չէ շփոթել ազգային գործիչ, հրապարակախոս և մտավորական Հովհաննես Քյուրքչյանօֆի հետ:


Տարբերեցում. Մյուրմեյանի մոտ «Աբրոյի(ի)ն»-ի փոխարեն՝ «Աբրտի», «Քիրքչե(ա)ն(ի)»-ի փոխարեն՝ «Քիրքչեան», «մ(ա)հ(տես)ի Անթանիոս»-ի փոխարեն՝ «ճաճի Անթոնիոս»:



91. Լանջախաչ. արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Յ(ի)շ(ատակ) Մ(ա)մս(ա) ... Չէրք(ե)գե(ա)ն, | 1897 | յուլ(իս) | 8:

Հրատ. առաջին անգամ:



92. Ավետարանի կազմ. արձանագրությունը՝ փորագիր, 2 տող.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ մեծ Գրիգոր աղա Յ. Պարտիզեանի, բնիկ Ադր(իսան)ալօլսեցոյ, | Ս(ուրբ) Ա(ստու)ծածնայ եկեղ(եցոյ) ի Վախշէն գիւղ, 3 նոյ(եմբեր) 1900:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ադրիանապոլիս քաղաքը գտնվում է Թրակիայում: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Էդիրնե (Edirne):



94. Ավետարանի կազմ. արձանագրությունը՝ 4 տող, վերջին 3 տողերը՝ ելնդագիր, իսկ առաջին տողը՝ փորագիր.

1903, | մաշթ(°) պ(ա)տ(ե)ցին | զ(ա)յս ս(ուրբ) ա-
ւ(ե)տ(ա)ր(ա)ն(ս) ի վ(ա)յ(ե)լ(ու)մն ս(ուրբ) եկ(ե)-
ղ(ե)ց(ո)յն | Այնթ(ա)պու: Յ(ա)ր(ու)թ(իւ)ն եւ
Դշխ(ո)յնն(ա)զ Պ(ա)լե(ա)ն:

Հրատ. առաջին անգամ:



95. Սկիհ. արձանագրությունը՝ ելնդագիր, 1 տող.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է սկիհս Սըվղընի Ս(ուրբ) Սար-
գիս ե {է}կեղեցոյ Աշիէնեան հանգուցեալ Յակոբ
աղա(յ)ի տիկինը՝ Հրեքսիմէի և որդոյ՝ Մըկրտիչ
աղա(յ)ի կողմէն, 1907 ապր(ի)լ 21:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Սըվղըն գյուղը գտնվում է Արևմտյան Հայաստանի
Սեբաստիայի նահանգի Թոնուս գավառակում: Թուրքերենով ար-
տասանվում է Սըվզըն (Sivgin):



«Վախշեն»-ը Վաղշեն գյուղն է: Գտնվում է Արևմտյան Հա-
յաստանի Խարբերդի նահանգի Արաբկիր գավառում՝ Ադին քա-
ղաքից հյուսիս-արևելք: Ներկայումս Ադն քաղաքի շրջագծում է
և վերանվանվել է Շենփրնար (Şenfirnar) քաղաքնա:

1834 թ. սրբատաշ քարերով կառուցված Սբ. Աստվածածին
եկեղեցին գտնվում էր գյուղի ստորոտում (Թիմուրճեան Ա.,
Վաղշեն, «Մասիս», էջ 221):

93. Սեղանի խաչ. արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Յիշատակ է | այս Յակոբ | Պողարեան(ի), |
[190]1:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. այնթապցի Հակոբ Պողարյանը 1909 թ. հիշվում է որ-
պես մանուսայի վաճառական (Մարաֆեան Գ., նշվ. աշխ., հ. Բ,
էջ 312):

Մանուսա – բանբակից զոլավոր կտոր:


96. Չարդախաչ. արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.

Ի յիշատակ Անջրդի գիւղի Ս(ուրբ) Նշան եկեղեցւոյ: | Նուիրեն սոյն արծաթի ս(ուրբ) խաչս բնիկ անջրդիեցի և այժմ ի Շ(ապին) Գարահիսար հաստատեալ | բարեպաշտ Մինաս աղա Արզումանեան, տիկինն՝ | Պատասխան, և որդին՝ Արմենակ, վասն | հոգւոյն հանգուցելոց Արզումանեան | տոմի, 1907 մայիս 1:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Շապին-Գարահիսար քաղաքը գտնվում է Արևմտյան Հայաստանի Մերաստիայի նահանգում: Թուրքերենով արտասանվում է Շաբին-Զարահիսար (Şabin Karahisar):

1832-1833 թթ. կառուցված Սր.Նշան եկեղեցին (**Մաֆրատսյան Ա.**, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների մինիստրոսթյան ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակները ու քարտերը, «Էջմիածին», 1965, Ժ, էջ 44) գտնվում էր գյուղամիջում (**Էփրիկեան Հ.**, Բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1903-1905, էջ 220): 1896 թ. քուրբերն ավերում են եկեղեցու զանգակատունը, խորանը, խաչկալն ու վեմ-քարը, հանում և տանում են հատակի սալաքարերը («Էրօշակ», 1896, № 8, էջ 63):



97. Խույր. արձանագրությունը՝ փորագիր, 1 տող.

Կը նուիրեն զ(այ)ս քագս Ս(ուրբ) Ա(ստուա)ծածնայ եկեղեցւոյն հայոց Այնթապու, 1908, Մարիամ Յակոբ Բիրքճիեան:

Հրատ. առաջին անգամ:




98. Սկիհ. արձանագրությունը՝ փորագիր, 1 տող.

Յիշատակ տէր և տիկին) Եւա Թ. Աբգարեանի Արապկիր Վախշէն գիւղի Ս(ուրբ) Ա(ստուա)ծածնի եկեղեցւոյ, 1910:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. սկիհի վրա ավելի ուշ արձանագրվել է. «Քիւ 5 ծանր(ուրիւն) 620 կ(րամ)»:



99. Սեղանի խաչ. արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Ս(ուրբ) խաչս | կը յիշ(ա)տ(ա)կէ | Այնթապու Ս(ուրբ) Ա(ստուա)ծ(ա)ծին | եկեղեցւոյն տիկին | Լուսիան Էթմէքճիեան, | 1910 յուլիս 10:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. *Լուսիան Էքմեքճյանի մասին տե՛ս Շելխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 37:*

100. Սեղանի խաչ. արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.
Յ(ի)շ(ատա)կ է ս(ուր)բ խաչս Խօճոյեան Յով-
հ(ան)նեսի | որդի հանգուցեալ Առաքելի և տիկնոջ՝ |
Մարիամի ի դուռ(ն) Ս(ուր)բ Աստ(ուա)ծածնայ | է-
կեղեցոյ, 1912 նոյ(եմբեր) 22, Խօշմաբ:
Հրատ. *առաջին անգամ:*



Ծանոթ. *Խոշմաբ գյուղը գտնվում է Արևմտյան Հայաստանի Դիարբեքիրի նահանգի Բալու գավառում՝ Բալու քաղաքից 7 կմ հյուսիս-արևելք: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Չարքրքաշ (Çakırkaş):*

Սբ. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1116 թ.: Այն փառավոր, հոյակապ, միակամար, խաչածև, քարուկիր շինություն էր (**Նաթանեան Պ.**, Արտօսը Հայաստանի կամ տեղեկագիր Բալուայ, Քարբերդու, Չարսանճագի, Ճալաղ Ջուրի եւ Երզնկայու, Կ. Պոլիս, 1883, էջ 74: **Էփրիկեան Հ.**, նշվ. աշխ., էջ 375: **Մարգրիսեան Յ.** (Ալետր), Բալու իր սովորությունը, կրթական ու իմացական վիճակը եւ բարբառը, Գահիրե, 1932, էջ 231: Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, կազմ.՝ **Հակոբյան Թ., Մելիք-Բախչյան Ս., Բարսեղյան Հ.**, Երևան, 1988, էջ 775):




101. Սեղանի խաչ. արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.
Ս(ուրբ) խաչս | կը յիշ(ա)տ(ա)կէ | Այնք(ա)պու
Ս(ուրբ) Ա(ստուա)ծ(ա)ծին | եկ(եղէ)ցոյն օր(իորդ)
Հո(ի)փսիմէ Ատանալեան, | 1914 մայիս 1:
Հրատ. *առաջին անգամ:*



102. Տապանակ (սուրբ հաղորդությունը դնելու պահարան), արձանագրությունը՝ ելնդագիր, 4 տող.

Յիշ(ա)տ(ա)կ է պահարանս ի խորանս Ա(ստուա)ծածնայ | եկեղեցոյս ծախիսք հայոց Այնքապու, | յամի 1915 մարտի 22-ին: | Չեռագործ Մելքոն Գալէմքեարեանի և որդոց:

Հրատ. *առաջին անգամ:*
Ծանոթ. *Մելքոն Գալէմքեարյանի մասին տե՛ս Շելխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 645:*



103. Կանթեղ. արձանագրությունը՝ փորագիր, 2 տող.
Մ. Յ(ակոբ) Պեշիրեան, | (1)928/5/3, սղերոցի:
Հրատ. *առաջին անգամ:*
Ծանոթ. *Հակոբ Պեշիրյանի մասին տե՛ս Շելխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 516:*




104. Բուրվառ. արձանագրությունը՝ 1 տող.

Մարտիրոս Ա. Աւետիսեան, 1928 կնրերեն սուրբ եկեղեցու:

Հրատ. առաջին անգամ:


Ծանոթ. Մարտիրոս Ավետիսյանի մասին տես Շելխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 303:

105. Չոնազ խաչ. արձանագրությունը՝ փորագիր, 2 տող.



Ս. Ն. Թօփճեան, | Հալեպ, 1940:

Հրատ. առաջին անգամ:



106. Արձանագրություն. քանդարանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցու դռանը կից ամրացված մարմարե սալիկին՝ փորագիր, 11 տող.

Վերափոխեցաւ յարկ եկեղեցոյս ի | գանձատուն | անուամբ | Ջարեհ Ա կաթողիկոսի | Մեծի Տանն Կիլիկիոյ | յառաջնորդութեան | տ(եր) Սուրեն արք(եպիսկոպոս) Գաթարոյեանի, | արդեամբ | Գէորգ Պագրըճեանի՝ | ի յիշատակ կողակցին իւրոյ՝ Ռօզի, | 7 մայիս 1991:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. եկեղեցական իրերը նախապես պահվում էին Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու հյուսիսային կողմում գտնվող գանձատանը (ՊՀՀ, էջ 267): Ներկայումս քանդարանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում պահվում են եկեղեցական ավելի քան 650 իրեր՝ սպասք, հանդերձներ, Ավետարաններ, սրբապատկերներ, խնցղեղեն, ասեղնագործ իրեր, գորգեր (www.periotem.com):

Գանձատան վերափոխման նախագիծը և իրագործումը կատարել է ճարտարապետ Գևորգ Երանյանը: Վիճագրում հիշված բարերար Գևորգ Պագրըճյանը ֆրանսահայ է (Ազգեան Հ., նշվ. հոդվ., էջ 402):



Սուրեն արք. Գաթարոյանը (աշխարհիկ անունը՝ Աբրահամ) Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու քահանա տեր Արսենի որդին է: Ծնվել է 1939 թ. Հալեպում: Ավարտել է տեղի Հայկազյան նախակրթարանը: 1954 թ. ընդունվում է Անթիլիասի դպրեվանդան: Ավագ սարկավագ է ձեռնադրվում 1959 թ. հունիսի 21-ին, կուսակրոն քահանա՝ 1962 թ. հունիսի 24-ին: 1963 թ. նոյեմբերի 3-ին ստանում է վարդապետական գավազան: 1967 թ., իբրև հոգևոր հովիվ, մեկնում է Մոնրեալ: 1973 թ. վերադառնում է Մայրավանք և հաջորդաբար ստանձնում դպրեվանքի փոխտեսչի, լուսարարապետի և դիվանապետի պաշտոնները: 1976 թ. դեկտեմբերի 5-ին ձեռնադրվում է ծայրագույն վարդապետ: 1977 թ. հուլիսի 27-ին ընտրվում է Բերիտ թեմի առաջնորդ (Տեմիրճեան Վ., նշվ. աշխ., էջ 448-449) և պաշտոնավարում մինչև 2003 թ.:

107. Կանթեղ.

Յիշատակ է կանթեղս Ստեփանի որդի Ալեքսիանոսին Սբ. Աստուածածնայ եկեղեցուն:

Հրատ. ՊՀՀ, էջ 910:

Ծանոթ. կանթեղը չենք տեսել:

1926 թ. Սբ. Քառասնից մանկանց կամ Սբ. Աստվածածին եկեղեցու իրերից էր (նշվ. աշխ., էջ 900):

108. Աջ. արձանագրությունը՝ փորագիր, 1 տող.

Սըրըխի Ս(ուր)բ Թէորոսու մաս:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. Սըրըխի Սբ. Թորոս վանքը հայտնի է նաև Գորբորու, Սեդնմուտի, Սըրբգի, Սրխջի տարբերակներով (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, էջ 956: Տես նաև հ. 4, էջ 692): Գտնվում է Արևմտյան Հայաստանի Կարնո նահանգի Երզնկա գավառում՝ Երզնկա քաղաքից 7 ժամ, իսկ Խնձորիկ գյուղից՝ 1 ժամ արևելք (Թուրքիեան Գ., Եփրատեան Հայաստան. Քղի եւ շրջ. գաւառները, հ. Ա, Փարիզ, 1947, էջ 109)՝ Երզնկայի դաշտը Դերջանից բաժանող լեռների լանջերին: Վանքը վարչականորեն գտնվում էր Երզնկայի սանջակի մեջ, բայց սահմանակից լինելով Դերջանին՝ ավելի շատ ծառայել է դերջանցիներին: 1870-ական թվականներից հիշվում է որպես Դերջան գավառի գյուղերից մեկը (Սրբգլը Սբ. Թորոս), որտեղ էլ գտնվում էր վանքը: Ուներ 4 լուսադրյուր և խաչքակ («ԲՀԱ», 1976, № 2, էջ 71-72: Տես նաև Սրվանձույանց Գ., Երկեր, հ. 2, Երևան, 1982, էջ 487-488): Ըստ ավանդության՝ հիմնադրվել է Դ դարում՝ ի հիշատակ Հայաստանի Մարառույսց գավառի իշխան Սուրենի որդու՝ Թորոսի, որը քրիստոնեությունն ընդունելու համար սպանվել է հոր կողմից: Վանքի մեջ եղել են սրբաքանդ Թորոսի և նրան քրիստոնեյա դարձնող Դասիտո քահանայի գերեզմանները: Միակ արձանագրությունը վերաբերում է ՏԷ դարին և հիմք տալիս ենթադրելու, որ վանքը ջալալիների ժամանակ հիմնահատակ կործանվել է, հետագայում՝ վերանորոգվել: 1880-ական թվականներին վանք այցելած Չավեն

Տեր-Եղիայանը (Կ.Պոլսի պատրիարք՝ 1913-1915, 1919-1922) նշում է. «Երբ ես այդ վանքը այցելեցի, տաճարը շեն էր, որուն շուրջը կգտնվեին քանի մը տուններ, ուր կբնակեին 9 տուն հայեր, ընդամենը 76 անձ: Ասոնք ամենը մեկ գերդաստանի կվերաբերեին, որոնց նախահայրը հոն հաստատված էր ԺԸ դարու կեսին ատենները: Այդ ժամանակ երկրաշարժն և ասպատակություններն վանքը ավերակ դարձած է եղեր և շրջակա հայությունը ամբողջովին ցրված, իր գյուղերն ու կավածները քյուրտերուն թողելով Երզնկայի դաշտեն Մեղվցիք գյուղեն հայ մը (տեր Վահանը), Ալվան օղլու գերդաստանեն, իր ընտանիքով հոն կերթա կհաստատվի, իր վարպետ եղբոր հետ: Ասոնք Ս. Թորոսի մատնքը քյուրտ պեկի մը քովեն կազատեն որամական վարձատրության մը փոխարեն և վանքը մասամբ կշենցեն»: Մինչև Առաջին աշխարհամարտը վանքն ամբողջությամբ պարսպպատ էր և ուներ երկաթե դուռ: 1915 թ. թալանվում և ավերվում է, իսկ մոտակա գյուղերից մեկի շեյխը քանդում է շինությունը, փայտերը տեղափոխում իր գյուղ, գրավում է վանքապատկան հողերը, անտառները. «...հողակույտի մը վերածված է հարյուրավոր տարիներու ժրաջան աշխատանքով պահված այդ սրբավայրը» (Մանվանյան Գ., Երզնկայի վանքերը, «Էջմիածին», 1993, Է-Ը, էջ 48-50):

109. Մեղանի խաչ. արձանագրությունը՝ խաչի երկու երեսներին, փորագիր, 11 տող.



Առաջին երեսին.

Յ(ի)շա(տա)կ | Յարութիին:

Հակառակ երեսին.

Յիշ(ատակ) է | ս(ուր)ք | ի(ս)չս | տ(է)ր Մերօպին, կողակց {ո}ուն՝ | Մարթա(յ)ին, | Բարու(նակ)ին, | Յոհանին:

Հրատ. առաջին անգամ:



110. Մեղանի խաչ. արձանագրությունը՝ փորագիր, 10 տող.



Յիշ(ա)տ(ա)կ է ս(ուր)ք | խաչս տ(է)ր | Խատու վար[ղ]ապետին: Սա է | Ս(ուր)ք Գեորգա | մասն, է | հշտտ[ա] (°) և ող(ո)րմե(ա)յ:

Հրատ. առաջին անգամ:

111. Ավետարան. արձանագրությունը՝ կազմին գետեղված արծաթյա խաչին, փորագիր, 3 տող.

Յիշ(ա)տ(ա)կ է խաչ(ս) | Իմիրգ(այ)ին և կողակցուն՝ | Լուսնին:

Հրատ. առաջին անգամ:

Ճանոթ. խաչի վրա ավելի ուշ արձանագրվել է. «Քիւ 9»:



112. Ավետարանի կազմ. արձանագրությունը՝ ելնդագիր, 3 տող.

Յ(ի)շ(ատ)(ա)կ է աւետարանս մահ(տես)ի Վաւվառին | և մահ(տես)ի Գըրիգորին և որդւյն՝ Եղիկալին, ի դումն Ս(ո)ք(ո)յ Աթումն Կիլիկի(ո)յ:

Հրատ. առաջին անգամ:



113. Ավետարանի կազմ. արձանագրությունը՝ փորագիր, 3 տող.



Մ(ա)հա(ես)ի Յ(ա)կոբի | դատերիոջն՝ | Աննա(յ)ին:

Հրատ. առաջին անգամ:

114. Արձանագրություն. տեղահան, մարմարե սալիկին՝ ելնդագիր, 4 տող.

Որ ոչ ծնցի ի ջրոյ | եւ ի հոգւոյ, ո՛չ կալի մտանել | յարլքայութիւն ա(ստուծոյ):

Հրատ. առաջին անգամ:



115. Ճարմանդ. արձանագրությունը՝ փորագիր, 1 տող. Յ(ի)շ(ա)տ(ա)կ է մ(ա)տուր Ս(ուր)բ Ա(ստուա)-ծ(ա)ծնա:

Հրատ. առաջին անգամ:



116. Սեղանի զարդ (երկու հրեշտակներ). աշխատանքը կատարվել է դրվագման եղանակով, արձանագրությունը՝ ելնդագիր, երկուսական տող.



Առաջին հրեշտակին.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է տ(ե)ր Կ(ա)ր(ա)պետի որդ(ի) տ(ի)ր(ա)ցու Առ(ա)քելին | և կող(ա)կց(ու)ն և որդոցն Կ(ա)ր(ա)պետին և եղբարցըն

Երկրորդ հրեշտակին.

և իւրեանց կենդանիե(ա)ցն և հ(ա)նգ(ուցե)լ(ո)ցն | ի դրանն Ս(ուր)բ Ա(ստուա)ծածնա և Ս(ուր)բ Ս(ա)ր-գ(ի)սա եկ(ե)ղ(ե)ց(ու)ն Մ(ա)շկեր(տ)ու:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. Սբ. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1804-1805 թթ. (Մաջրաստյան Ա., նշվ. հոդվ., էջ 44):

Սբ. Սարգիս եկեղեցին գտնվում էր Մաշկերտից կես ժամ հեռու դեպի արևելք՝ Եփրատ գետի ափին («Արձագանք», 1891, № 4, էջ 56): Եկեղեցին «...սրբատաշ մեծաղիր քարերով շինուած է. դուռը խիստ ցած և նեղ, ...դռնէն ներս խոնարհելով մտնելու ատեն, միապաղաղ քարէ աստիճաններուն ստորորդ երկուքի կը բաժնուի, աջ կողմէն նեղ անցքէ մը յառաջ երթալով՝ յետոյ դեպի յարեւելիս դառնալով աւագ խորանն յանդիման կուգայ...: Երկրորդ մասը զատ եկեղեցի մ'է, ուրկէ ներս մտնելով, միածոյլ քարէ... խորան մը կը տեսնուի դէմը...» (Քախտիկեան Ս., Արաբկիր եւ շրջակայի գիւղերը, Պէյրութ, 1934, էջ 144-145):

117. Սկիհ. արձանագրությունը՝ ելնդագիր, 42 տող.



Յ(ի)շ(ա)տ(ա)կ է | ս(ուր)բ սկեհ|ս մ(ա)հ(տես)ի | Մանկ(ու)մին, | կ(ո)ղ(ա)կց(ու)ն՝ մ(ա)հ(տես)ի | Մարդ(ա)յին, և | որդ(ո)ցն՝ մ(ա)հ(տես)ի | Ոհանն|ի-ս(ի)ն, Մե|լքոնին, | Գ(ա)սպ(ա)րին, | Կար(ա)պե-տին, | Պաղտ(ա)ս(ա)րին, | Պետրոսին, Գե|որքին, | Ստեփ(ա)ն|ն(ո)սին և | հանգ(ո)ց|եալ Գ(ա)սպ(ա)-

րին, | Պ(ա)ղա(ա)ս(ա)րին, Հ(այ)ր(ա)յաետին և որ-
դիոց կ(ո)ղ(ա)կցացն | Հո(իփ)ս(ի)մ(ե)յիին, Ս(ա)նա-
մին, | Յդիս(ա)յին, | Ողիտ(ա)յին, կե(ն)դ(ա)նեաց և
ննջ(ե)ցելոցն հ(ա)ւ(ա)յ(ա)ր, որոց | ետուն ի-
րեանց հոգոլն (յ)իշատակ | ի դուն Ս(ու)ր Ա(ս-
տուա)ծ(ա)ծն(ա)յ և | Ս(ու)ր Սերգիս եկեղեցուն,
գոր տ(ե)ր ա(ստուա)ծ ընդունելի ար(ա)սցե, | ամեն:

Հրատ. առաջին անգամ:



118. Ավետարանի կազմ. արձանագրությունը՝ փորագիր, 2 տող.

Մ(ա)հ(տես)ի Մաթոսի որդի(ի) ս(ա)հ(տես)ի Ճիրճս(ին), | Անտէյր Ս(ուր)բ Ա(ստուա)ծածինս:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. «Անտէյր»-ն Այնթապն է:



119. Ճաճանջ. արձանագրությունը՝ հավանաբար 1 տող.

Մուշանպաճի Խաչատուրի որդւոյն:

Հրատ. ՊՀՀ, էջ 907:

Ծանոթ. ճաճանջը չենք տեսել:

1926 թ. Սր. Քառասնից մանկանց կամ Սր. Աստվածածին ե-
կեղեցու իրերից էր (նշվ. աշխ., էջ 900):

Մուշանպաճի – թրք.՝ մոնլաթ պատրաստող:

120. Լանջախաչ. արձանագրությունը՝ խաչի երկու երեսնե-
րին, փորագիր, 11 տող.

Առաջին երեսին.


Տ(է)ր | ա(ստուա)ծ | Յ(իսու)ս Ք(րիստո)ս:

Հակառակ երեսին.

Այս է | մասլունք | Ս(ուր)բ | Մարտիրոսյայ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. խաչի կողմին ավելի ուշ արձանագրվել է. «ծանր(ու-
թին) 50 կ(րամ)»:



121. Խույր. արձանագրությունը՝ ասեղնագործ, 5 սոդ.

*Յիշատակ է թագս մշեցի Մարտիրոսին եւ կո-
ղակցին | եւ որդոյն՝ Շահին Չալապուն, եւ Մարիամ-
խ(ա)թունի(ն) | ի դ(ու)ռն | Ս(ուր)բ Ա(ստուա)ծ|ածին:*

Հրատ. ՊՀՀ, էջ 902:

Ծանոթ. արձանագրության՝ շեղագիր տրված տառերը չենք կարողացել ստուգել:

Տարրերեբցում. **Մյուրմէյանի** մոտ «Չալապուն»-ի փոխարեն՝ «Չէլէպուն», «Մարիամխ(ա)թունի»-ի փոխարեն՝ «Մարիամին եւ Խաթունին»:



122. Սկուտեղ. արձանագրությունը՝ փորագիր, 1 սոդ.

*Յ(ի)շ(ա)տ(ա)կ է սենիս մ(ա)հդ(ե)սի Պարունին ի
դ(ու)ռն Ս(ուր)բ Ա(ստուա)ծածին:*

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. սկուտեղի վրա ավելի ուշ արձանագրվել է. «թիւ 18»:



123. Ավետարանի կազմ. արձաթյա³², արձանագրությունը՝ փորագիր, 3 սոդ.

*Յ(ի)շ(ա)տ(ակ) է ս(ուր)բ ավետարանս մահտ(ե-
ս)ի | շինիկճի Ակօբին ի դ(ու)ռն Ս(ուր)բ | Ա(ստուա)-
ծածնայ եկեղ(եցու)ն:*

Հրատ. ՊՀՀ, էջ 906:

Ծանոթ. կազմի վրա ավելի ուշ արձանագրվել է. «թիւ 2»:

Շինիկճի՝ հավանաբար սնիսի:



³² Նշվ. աշխ., էջ 906:

ՍԲ. ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻ



Եկեղեցու Ա (1491 թ.) բաժնի ներքին տեսքը (լուս.՝ 2007թ.)



Եկեղեցու Գ (1616 թ.) բաժնի ներքին տեսքը (լուս.՝ 2008թ.)

Տեղադրություն. գտնվում է Հալեպի բերդից հյուսիս-արևմուտք՝ Ազիզիեի շրջանում (հասցեն՝ Սլեյբե փողոց, թիվ 11)՝ Սլեյբեի Սբ. Աստվածածին եկեղեցուց արևմուտք՝ N 36° 12' 22.50", E 37° 09' 19.46" տեղադրությամբ:

Պատմություն. կառուցել է Ռեյիս Իսան 1491 թ.¹: 1500 թ. հիշվում է որպես նորակառույց շինություն. «Յինն հարիւր հայոց թուական, Խ. և ինն (1500) ըսկըսեալ ամ, Մովսէս վարպետն. և ես ծառայն, եկայք յաշխարս արևմտեան... Հալապ քաղաք ի շահստան... զի նոր շինեալ էր Սբ. Խորան, յանուն Սրբոց Խ (40) մանկան»²:

1532 թ. տեղափոխվում է եկեղեցու դուռը³:

1616 թ.⁴ իշխան Սանոս Չելեպին⁵ «...իւր ձեռնտութեամբն և իւր անդրանիկ հարազատ եղբօրն՝ պարոն, պանծալի խոճայ Պետրոսին օգնականու-

թեամբն շինեալ և նորոգեալ եղև Ս. Քառասունքն, ի թվին հայոց Ռ.ԿԵ...»⁶: Խոջա Պետիկի տապանաքարին արձանագրվել է. «...ըզՔառասուն մանուկ շինողս...»⁷:

Եկեղեցու շուրջը տարածվում էր Հալեպի հայոց առաջին գերեզմանատունը⁸: 1580 թ. հետո, երբ գաղթօջախի հայերի թիվը զգալիորեն աճել էր, թույլատրվում է եկեղեցու ներսում և բակում ամփոփել միայն հոգևորականներին⁹: Ի դեպ, «Հալեպի Ս. Քառասնից եկեղեցույ վերաշինութենն (1616) քիչ առաջ, հնօրեայ մատրան շրջապատին հիւսիսային կողմը գտնուող մեծ ու փոքր տապանաքարերն ու խաչքարերը ուշադրութեամբ վերցուած և բոլորը մէկ գետեղուած են հին և նոր տաճարները իրարու միացնող որմերէն մէկուն վրայ»¹⁰:

1 Տե՛ս Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 1:

2 ՅՁՀԲՄ, էջ 151:

3 Տե՛ս Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 3: Ամենայն հավանականությամբ, դուռը տեղափոխվել է Հին եկեղեցու արևմտյան կողմում Ուղղանկյուն սրահը կցելիս:

4 Ըստ արաբ պատմաբան Շեխ-Քամել ալ-Ղզզիի՝ խոջա Պետրոսը եկեղեցու ընդարձակման արտոնությունը 1639 թ. ստացել է սուլթան Մուրադից (ص كتاب المنكور، ۳۸۷-۳۸۶ ص (كامل الغزي), որը չի համապատասխանում իրականությանը:

5 Սանոս Չելեպու մասին տե՛ս սույն աշխ., էջ 201:

6 ԺԷԲ, էջ 161: Տե՛ս նաև ԺԷԱ, էջ 585: Ըստ Սյուրմեյանի՝ Պետրոս Չելեպին է վերակառուցել եկեղեցին Սանոս Չելեպու վերակացությամբ (ՊՀՀ, էջ 30), իսկ ըստ Երուսաղեմի պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոսի՝ կառուցվել է նրանց համատեղ նախաձեռնությամբ (Թորգոմ պատրիարք, Նօթեր եւ նիշեր, «Միոն», 1933, էջ 25):

7 Տե՛ս Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 1:

8 ՊՀԱԳԱՀՏ, էջ 8:

9 ՊՀՀ, էջ 86:

10 Նշվ. աշխ., էջ 85:



Եկեղեցու ներսում գետեղված խաչքարեր (տու.՝ 2007թ.)

1655 թ. Մեղի-Ահմադ փաշան գրավում և ավերում է քաղաքը, ինչպես նաև եկեղեցին. «Նոյեմբերի ԻԲ (22) թվին ՌՃԳ (1655), ի քաղաքի Հալպայ հարին, յորժամ Մեղի-Ահմատ փաշան հսար արար և աւար եհար գրոսի քաղաքն ի նոյն աւարէ ստացա զայս աղօթամատոյս...»¹¹:

1737 թ. կաթողիկե հայերը Սբ. Աստվածածին եկեղեցու հետ 5 տարի շարունակ տիրում են նաև Սբ. Քառասնից մանկանց եկեղեցուն¹²:

1784 թ., երբ ընթանում են եկեղեցու նորոգման հերթական աշխատանքները, ձեռագիր մատյանները պահվում են մի գաղտնարան-պահարանում, որն էլ քողարկվում է ծեփով¹³: Ի դեպ, Կարապետ վարդապետը 1905 թ. եկեղեցու գանձատնից հայտնաբերում է 144 ձեռագիր մատյան, մեծ մասը՝ թղթյալ¹⁴:

1850 թ. եկեղեցին նորոգվում է մասնակի: Այդ նպատակով 250 դուրուշով գնվում են քարե 2 հին սյուներ¹⁵:

1869 թ. փակվում է արևելյան դուռը, և հարավից նորն է բացվում¹⁶:

1874 թ. կառուցվում է եկեղեցու վերնատունը Նիկողոս Շահվերթի կնոջ՝ Սոֆյայի նվիրատվությամբ¹⁷:

1888 թ. հունվարի 1-ին ավարտվում է նոր մկրտարանի կառուցումը¹⁸:

11 ԺԷԳ, էջ 592:

12 **Բարգևն Ա արքայից կաթողիկոս**, նշվ. աշխ., սյունակ 522:

13 ՊՀՀ, էջ 746:

14 **Սևեան Ա.**, նշվ. հոդվ., № 24, էջ 600: Տե՛ս նաև **Քեչիշեան Վ.**, Հալպայր հայ գրչութեան կեդրոն, «Հասկ», 2001, էջ 256:

15 ՊՀՀ, էջ 783:

16 Տե՛ս Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 3:

17 Տե՛ս Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 99:

18 Տե՛ս Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 104: 1887 թ. նոյեմբերի 26-ին կայացած Քաղաքական ժողովի նիստում որոշվում է մկրտության ավագանի կառուցման քննարկումները հանձնել առաջնորդական տեղապահին և կրոնական ժողովին (ՊՀՀ, էջ 869):

1906 թ. Բերիո թեմի զավառական ժողովի որոշմամբ՝ եկեղեցու հնամաշ գույքը վաճառվում է Գույում-ճյան վաճառատանը 90 օսմանյան ոսկիով¹⁹:

1912 թ. սկսվում է եկեղեցու զանգակատան կառուցումը բրազիլաբնակ հալեպահայ Ռ-զգալլահ ճորճ Թահանյանի բարերարությամբ²⁰, սակայն շինարարությունն ամբողջանում է միայն 1926 թ.²¹:

1964 թ. հուլիսին, հաշվի առնելով եկեղեցու անմխիթար վիճակը, թաղականությունը նորոգություն է ձեռնարկում²²:

1965 թ. ավագ խորանի համար կառուցվում է շքեղ սեղան²³:

1976 թ. «Սբ. Մինաս»²⁴ և 1983 թ. «Սբ. Քառասուն մանկունք»²⁵ սրբապատկերների համար եկեղեցու հարավային պատին կից կառուցվում է մեկական որմնափակ խորան, իսկ 1984 թ. հյուսիսային խորանի համար՝ շքեղ սեղան²⁶:

1992 թ. Հին եկեղեցու արևմտյան ճակատի հարավային մասում Աստվածամոր սրբապատկերի համար կառուցվում է որմնափակ խորան²⁷:

1995 թ. բարեգարդվում է Հին եկեղեցին, իսկ խորանի համար շքեղ սեղան է կառուցվում²⁸:

2005 թ. նորոգվում է զանգակատունը²⁹:

Ճարտարապետություն. Եկեղեցին «տարբեր թուականներու մէջ ընդարձակուած ըլլալով շատ անկանոն, տձև ու թանձր սիւներով շէնք մը եղած է»³⁰: Ըստ կառուցման փուլերի բաղկացած է 3 բաժնից.

Ա. Հին եկեղեցի (տապանատուն-մատուռ). կառուցվել է 1491 թ., հետագայում վերածվել է տապանատուն-մատուռի: Պահպանվել են արևելյան կիսաշրջան խորանը՝ հյուսիսից կից ուղղանկյուն գաղտնարանով, հյուսիսային և հարավային պատերի մեծ մասը, մկրտության ավագանը սրահի հյուսիսարևելյան անկյունում: Գաղտնարանի փոքրիկ մուտքը բացվում է խորանից: Հին եկեղեցու սրահը ներքուստ ծածկված է խաչվող թաղերով, իսկ արտաքուստ՝ հարթ տանիքով: 1912-1926 թթ. հարավից կից զանգակատուն կառուցելու ժամանակ

19 ՀԱԳ, ֆ. 1421, ց. 5, գ. 4, ք. 6:

20 Տե՛ս Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 111:

21 ՊՀՀ, էջ 260: Տե՛ս նաև Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 111-112, 116:

22 «Հասկ», 1964, № 6-7, էջ 211:

23 Տե՛ս Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 121:

24 Տե՛ս Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 122:

25 Տե՛ս Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 123:


26 Տե՛ս Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 125:

27 Տե՛ս Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 127:

28 Տե՛ս Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 131:

29 Տե՛ս Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 54:

30 **Սևեան Ա.**, նշվ. հոդվ., № 24, էջ 600: Ի դեպ, ըստ հեղինակի՝ «...եկեղեցիի հնութեան շրջանները կարելի է հետևեալ կերպով բաժնել: Ա. Բուն Քառասուն մանուկ մատուռ...: Բ. Այդ մատուռն ճիշդ դիմացը գտնուող և անկէ քիչ մը աւելի բարձր կամարով մատուռ...: Գ. Բուն երեք խորաններուն ընդարձակագոյն մասը...» (նույն տեղում):



Եկեղեցու հատակագիծը 3 բաժիններով (չափ.՝ 21.10.2008)

նակ անհրաժեշտ է եղել քանդել Հին եկեղեցու հարավային պատի արևմտյան կեսը³¹: Չանգակատունը լայնանիստ, քարաշեն, բարձր աշտարակ է՝ ծածկված գեղեցիկ կաթողիկեով³²:


Բ. Ուղղանկյուն սրահ. Հին եկեղեցու արևմուտքից կցվել է, ամենայն հավանականությամբ, 1532 թ., որի պատճառով էլ նույն թվականին տեղափոխվել է Հին եկեղեցու դուռը՝ զետեղվելով այս սրահի արևելյան պատի հարավային կեսում: Սրահի կենտրոնում գտնվող քառակուսի կտրվածքով սյունն այն բաժանում է չորս մասի: Դրանցից երեքը ներկայումս ծածկված են խաչվող թաղերով, իսկ հարավարևելյանը՝ հյուսիս-հարավ առանցքով կիսաշրջանաձև թաղով (վերջինս, ամենայն հավանականությամբ, 1869 թ. ձևափոխության արդյունք է)³³:

Գ. Մեծ եկեղեցի. 1616 թ. Բ բաժինն հյուսիսից կցվել է եռանավ եկեղեցին, իսկ արևմուտքից՝ ուղղանկյուն նոր սրահը: Այն ավելի բարձր է Բ բաժնից, իսկ եռանավ եկեղեցին՝ նոր սրահից: Եկեղեցին և նոր սրահը միմյանց հետ հաղորդակցվում են երկու սյուներն իրար կապող բաց կամարներով: Նոր սրահը կենտրոնում գտնվող երկու սյուներով բաժանվում է վեց հատվածների, որոնք ծածկված են խաչվող թաղերով: Մուտքը բացված է հարավային որմի արևմտյան մասից: Եռանավ շինությունը երեք գույգ սյուներով բաժանված է 12 խաչվող թաղերով ամփոփված հատվածների, արևելքում ավարտվում է կիսաշրջան ավազ խորանով և նրան հյուսիսից ու հարավից կից ուղղանկյուն խորաններով: Երեք խորաններն ունեն ընդհանուր բեմ և մեկական պատարագամատույց սեղան: Մկրտության ավազանը գտնվում է դասի հյուսիսային պատի կենտրոնում: 1874 թ. արևմուտքից կցվում է երկհարկ կառույց, որի առաջին հարկը փակ պատերով

սենյակ է, իսկ երկրորդ հարկը՝ երեք կամարներով սրահին բացվող վերնատուն: Մեծ եկեղեցին հյուսիսային պատի կենտրոնից բացված մուտքով հաղորդակցվում է ուղղանկյուն փոքր սենյակի հետ (զանձատուն)³⁴: Սկզբում եղել է գմբեթաշեն. «...Սուրբ Քառասունք, որն այս տարի նոր էր նորոգած ու մեծացրած, լայն էր և ընդարձակ, գմբեթաշեն և սրբատաշ...»³⁵: Ամենայն հավանականությամբ, ավերվել է 1655 թ. Մեղի-Ահմադ փաշայի կողմից քաղաքի գրավման ժամանակ, քանի որ Հալեպում Ֆրանսիայի հյուպատոս ասպետ Լորան դ'Արվիեոն, 1680 թ. այցելելով եկեղեցի, այն նկարագրել է առանց գմբեթի. «Այն քառակուսի է, թաղը ...հենված է չորս շարք քարե սյուների վրա, որոնք եկեղեցին բաժանում են հինգ հատվածների: Կանանց բաժինն միջնորմով առաձևացված է մյուսներից: Խորանը կենտրոնական մեծ նավի ծայրին է»³⁶:

1930-ական թվականներին նախատեսվում է եկեղեցու կենտրոնական չորս սյուների վրա գմբեթ կառուցել, սակայն ճարտարապետների համոզմամբ՝ «...դարեր է ի վեր շենքին տանիքը յաջորդական նորոգութիւններ տեսած ըլլալով, կարծր և միակտոր զանգուածի մը վերածուած էր և անհնար էր կենտրոնի մասը վերցնել և հոն գմբեթ հաստատել, առանց վերցնելու ամբողջ տանիքը»³⁷:

Եկեղեցին ունի անկանոն հատակագծով վիմափոր ներքնահարկ, «...ուր կարելի է իջնել միայն



Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու ներքնահարկի հատակագիծը և կտրվածքը (չափ.՝ Շ. Տեր-Պետրոսյան, 1977թ.)

31 ՊՀԱԳԱՀՏ, էջ 27:

32 ՊՀՀ, էջ 260:

33 Տե՛ս Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 3:

34 Եկեղեցու նախկին զանձատունը «...կը գտնուի տաճարին հիսիսային կողմը... և կը բաղկանայ մեղ անցքէ մը և միակ երկարապատ լուսամուտէ մը լուսատրուած քառանկյուն խուցէ մը» (ՊՀՀ, էջ 266-267):

35 Միմեոն Լեհացի, էջ 182:

36 Mémoires du chevalier d'Arvieux, tome sixième, Paris, MDCC XXXV (1735), p. 42.

37 Նշվ. աշխ., էջ 256:



ձախակողմի վերջին սիւնի (դէպի արևմուտք) կից կառահիս աստիճաններէ: Այս ներքնայարկը ամբողջովին վիճակոտ է... ուր կ'երևան 1616-ին հիմնուած այս տաճարին վեց սիւներու հաստակոտ խարխիսները, ամբողջովին քարաշէն: Վէմի մէջ փորուած և հանդիպակաց երկու լիվաններ կ'երևան, գետնէն մէկ մետր բարձր: Չորս լուսամուտներ կը հովեն ու կը լուսատրեն ներքնայարկը, եթէ վրայի տաճարին յատակը սալարկող չորս գաղտնի քարերը վերցուին...»³⁸: Ըստ ճարտարապետ Շահէ Տեր-Գևորգյանի՝ գետնափոր կառույցը Սիրիայում քրիստոնէական վանական վաղազույց համալիրներից է և պատկանում է Գ-Դ դարերին³⁹:

Հնում եկեղեցու ավագ խորանի կամարն ամբողջությամբ պատված էր չինական հախճապակիներով, որոնցից մի մասի վրա պատկերված էին ավետարանիչներ և հրեշտակներ: Սակայն դրանք ԺԹ դարավերջին՝ հավանաբար նորոգության ժամանակ, եկեղեցականները տեղահանում են և անհուգաբար լցնում եկեղեցու մի անկյունում: Այդ տեսնելով՝ հնագետներն առաջարկում են իրենց վաճառել դրանք⁴⁰: 1925-1940 թթ. Սր. Քառասնից մանկանց

եկեղեցու ավագ խորանը զարդարող հախճապակիներից որևէ բեկոր գոյություն չունեն⁴¹:

Վիճագործ և եկեղեցական իրերի արձանագրություններ. ներկայացնում ենք 136 միավոր արձանագրություն, որոնցից 75-ն առաջին անգամ ընդօրինակել և հրատարակել է Ա. Մյուրմեյանը, 4-ը՝ Ա. Տեր-Հովհաննեսյանը, 2-ը՝ Գ. Ասլանյանը, իսկ մեկական արձանագրություն էլ՝ Կ. Ղազանճյանը, Ղ. Ալիշանը, Բաբկեն եպիսկոպոսը, Ս. Աղավնուհին և Լ. Ճեպեճյան-Խապայանը: 50 արձանագրություն հրատարակվում է առաջին անգամ:

1. Արձանագրություն. տեղահան և երկատված սալիկին (չափերն են՝ 97 x 33 սմ)⁴², փորագիր, 6 տող: Ներկայումս պահվում է քանգարանի վերածված Սր. Աստվածածին եկեղեցում:

Յանուն ա(ստուծոյ) ի թվին ՋԽ (1491) ի պարուն[n]թ(եա)ն Իւզմնուռին և ի յառա[ջ]նորդութեան տ(է)ր Յո(վ)հա(ն)նէս կա[թ]ուղիկոսին ես՝ Ընէիս յԻսէս, | շ(ին)ել տվի գեկեղեցիս յանուն Ս(ուր)բ Քառասնիցն յ(ի)շ(ա)տ(ա)կ այս հոգիւ տնէքովս ինձ եւ կենակցուն իմ՝ Շահալին, եւ որոցն իմ՝ Ճուրճուսին եւ Սարգիսակին եւ Ուսէփին, եւ գնացելոյն ի Ք(րիստո)ս նոր փ(ե)սա | Այթումայակ(ին):

Հրատ. ՊՀՀ, էջ 31: **Տունկեան Գ.**, նշվ. աշխ., էջ 10: **Ազգեան Հ.**, նշվ. հոդվ., էջ 400: **Քորթչյան Բ.**, նշվ. հոդվ., էջ 57:

38 Նշվ. աշխ., էջ 266:

39 **Տեր-Գևորգյան Ը.**, Ակնարկ Հալեպի Ս. Քառասնից մանկանց եկեղեցու գետնափոր կառույցի մասին, «Գեղարդ. Սուրիահայ տարեգիրք», Հալեպ, 1976-1978, էջ 283-286:

40 **Ղազանճյան Կ.**, նշվ. աշխ., էջ 162-163:

41 ՊՀՀ, էջ 878: Ներկայումս քանգարանի վերածված Սր. Աստվածածին եկեղեցում պահվում են մի քանի բեկորներ:

42 Նշվ. աշխ., էջ 30:

Ծանոթ. հաշվի առնելով այն, որ Յուզունուրը Հայեպի տիրակալն էր 1484-1491 թթ. (عبد الله حجار، معالم حلب الأثرية، حلب، 1997، ص 149) մամլուքների ժամանակաշրջանում, նշված Հովհաննես կաթողիկոսը Կիլիկիո կաթողիկոս Հովհաննես Բ Թյկուրանցին է (1489-1525 թթ.), իսկ արձանագրության դժվարընթեռնելի թվականն է ՋԻ (1491):

Համաձայն 1500 թ. մի հիշատակարանի՝ Ռեյիս Իսան Սր. Քառասնից մանկանց եկեղեցու հետ մեկտեղ կառուցել է նաև նույն բակի մեջ «...գլխորան մարմնեան, նոյնպէս զազգին ըզհոռոմեան...: Այլեւ խրքեր հանգստարան, ի գալ հիւրոցն աստարական...: Շինեաց դարպաս թագաւորական, որ ժամատեղ էր ամառան, քահանայից տեղ էր հանգստեան...» (ՅՁՀՋՄ, էջ 151): Ռեյիս Իսան կնոջ հետ հիշվում է 1536 թ. Ջեյրուհի բերդում գրված Հայսամվորքի հիշատակարանում՝ տանուտեր Վարդանի ազգատոհմում (նշվ. աշխ., էջ 340):


Տարբերեցում. «ՋԻ»-ի, «Շահալին»-ի, «Այթումայակ(ին)»-ի փոխարեն **Մյորմեյանի** մոտ՝ «ՋԱ», «Ահալին», «Քումային», **Տունկյանի** մոտ՝ «ՋԾ», «Ահալին», «Թումա սկ.», իսկ **Ազեգյանի** մոտ՝ «ՋԱ-ՋԾ», «Ահալին», «Քումային»:

2. Խաչքար. ազուցված է Հին եկեղեցու արևմտյան ճակատի հյուսիսային մասում, արձանագրությունը՝ փորագիր, 3 տող.



գՄ(ուր)ք նշանքս
բ(ա)ր(ե)խա(ս) է Մալն-
սուրին, Յամամին, Տա-
տուլին, Յովանէս(ին),
Ալէքսանոս(ին), ՋԻԱ
(1492):

Հրատ. առաջին անգամ:



3. Արձանագրություն. եկեղեցու մայր մուտքից վեր ազուցված մարմարե սալիկին՝ ելնդագիր, 6 տող հայերեն, որից ցած՝ ելնդագիր, 1 տող, մեկընդմեջ հայերեն-արաբերեն.

Է: | Ի ք(ի)ն հ(ա)յ(ո)ց (Ջ)ՋԱ (1532) ի ժամ(ա)-
ն(ա)կի պար(ո)նութ(եա)ն Կիլիկիոյ և յ(ա)ռ(ա)ջ-
ն(ո)րդու(թ)ե(ան) տեառն | Յ(ո)վհ(ա)ննու սրբ(ա)-
զ(ա)ն կ(ա)թ(ո)ղ(ի)կոսին ե(ո)կ(ոռ)դ շինու(թեամ)բ
նորոգեալ էր յ(ա)րեւելից կողմանէ դուռն սոյն Խ
(40) մ(ա)նկ(ա)նց եկ(ե)ղ(ե)ցոյ լո(ւ)սաւորչ(ա)կան
հ(ա)յոցս, իսկ այժմ ի հ(ա)րա կողմն փոխ(ա)դրե-
լով սոյն դուռն երբ(ո)րդ անգամ շինեց(ա)ւ ի կ(ա)-
թող(ի)կ(ո)ս(ու)թ(եա)ն տ(եր) (անուրը չի գրվել) | և
յ(ա)ռ(ա)չն(ո)րդ(ու)թ(եա)ն տ(եր) Մկրտ(ի)չ եպ(ի)ս-
կոպոսին, չ(ա)նիք ք(ա)հ(ա)ն(ա)յ(ի)ց և ժ(ո)-
ղով(որդ)յն և ազգ(ա)յ(ի)նք:

Հայերեն-արաբերեն.

Թիւ փ(ոկչեան) 1869, թիւ հ(ա)յ(ո)ց 1318 (1869):

تجدد ثالثا باب كنيسة اربعين شهيد للارمن اللوساوريين
بنقله لهذا المكان سنة مسيحية 1879.

Թարգմ. Սր. Քառասնից մանկանց հայոց լուսա-
վորչական եկեղեցու դուռը երրորդ անգամ նորոգ-
վեց՝ փոխադրվելով ներկայիս տեղը փրկչի 1869 թ.:

Հրատ. **Ղազանճեան Կ.**, նշվ. աշխ., էջ 164: **Մեան Ա.**, նշվ. հոդվ., № 24, էջ 600: **ՊՀՀ**, էջ 31: **Մինասեան Մ.**, նշվ. հոդվ., էջ 19-20, 25: Արաբերեն արձանագրությունը հրատարակվում է առաջին անգամ:

Ծանոթ. Ղազանճեանն արձանագրության բովանդակությունը հրատարակել է բնագրին ոչ հարազատ ձևով:

Վիճաբան առաջին տարեթվի չգրված հարյուրավորը պետք է լինի «Ջ», քանի որ այդ դեպքում համապատասխանում է արձանագրության մեջ հիշված Կիլիկիո Հովհաննես Գ կաթողիկոսի գահակալության ժամանակաշրջանին, այն է՝ 1525-1539 թթ.:

Տարբերեցում. **Սկյանի. Մյորմեյանի և Մինասյանի** մոտ «Ջ)ՋԱ»-ի փոխարեն՝ «ՋԱ»:



4. Խաչքար. դեղին մարմարից, ագուցված է Հին եկեղեցու արևմտյան ճակատի հարավային մասում, արձանագրությունը՝ ելնդագիր, 4 տող.

Յա(յ)ս է տապան հանգացելոյն, | որ հա(ն)գաւ ի Ք(րիստոս)ս Սարգիս արքեպ(ի)սկ(ոպո)սն, թվ(ի)ն ՌԻԷ (1578), ա(ստուա)ծ ողորմի աւ(ա)ց(է)ք, ամէն:

Հրատ. Ասլանեան Գ., Հայէպի եկեղեցիւն հնութիւնները, «Արևելեան մասնու», 1908, № 25, էջ 593: Բարզէն եպիսկոպոս, Հայէպի առաջնորդական գաւազան, «Տարբե», 1926, էջ 35: ՊՀԱԳԱՀՏ, էջ 12: ՊՀՀ, էջ 68: Տեմիրճեան Վ., նշվ. աշխ., էջ 265:

Ծանոթ. Սարգիս արքեպիսկոպոսը «...կը բաղուի Ս. Քառասնից խաչածեւ հին մատրան հարաւային թեւին մէջ: Երբ 1911-ին մատրան այս թեւը բացուեցաւ, արդի մեծադիր զանգակատունը հիմնարկելու համար, Սարգիս արք.ի տապանագիրը վերցուելով դրուեցաւ մատրան ձախակողմի սեղանին եւ զանգակատան ներքին որմին միջեւ, շարժական ձեւով» (ՊՀՀ, էջ 68):



5. Խաչքար. դեղին մարմարից, ագուցված է Հին եկեղեցու արևմտյան ճակատի հարավային մասում, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Ս(ուր)ք խ(ա)չս | յիշատ(ա)կն | { } է առ Ք(րիստոս) | ջողեցի | Յովանիս(ի)ն, թվ(ին) ՌԻԸ (1579):

Հրատ. առաջին անբամ:

Ծանոթ. Ձուղա քաղաքը գտնվում է Նախիջևանում: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Դորոտասը (Dorosat):



6. Խաչքար. դեղին մարմարից, ագուցված է Հին եկեղեցու արևմտյան ճակատի հյուսիսային մասում, արձանագրությունը՝ փորագիր, 1 տող.

Ճրէս(ի)ն խ(ա)չ է:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. քստ Հայեպում կերտված թվակիր այլ խաչքարերի հետ համանման ոճական և գրչական առանձնահատկությունների՝ թվագրում ենք ԺԶ-ԺԷ դդ.:



7. Խաչքար. դեղին մարմարից, ագուցված է Հին եկեղեցու արևմտյան ճակատի հյուսիսային մասում, արձանագրությունը՝ փորագիր, 15 տող.

Ս(ուր)ք խ(ա)չս | յ(ի)շ(ա)տ(ակ) է ջո(ւ)ղ(ա)ցի Նուրվալէ(ի) որդի Սիմոնի, | թվ(ի)ն ՌԻԸ (1579):

Ս(ուր)ք խ(ա)չս | յ(ի)շ(ա)տ(ակ) է ջո(ւ)ղ(ա)ցի | Յով(հա)ն(ն)իսի | որդի Սուրբանուի, թվին ՌԻԾԱ (1602):

Հրատ. ՊՀՀ, էջ 66: ՊՀԱԳԱՀՏ, էջ 12:

Տարբերություն. Սյուրմեյանի մոտ «Նուրվալէ»-ի փոխարեն 1950 թ. հրատարակության մեջ՝ «Նորգլէ», իսկ 1935-ի՝ «Նուղալէ», «ՌԻԸ»-ի փոխարեն՝ «ՌԻԷ»:



8. Խաչքար. դեղին մարմարից, գտնվում է Հին եկեղեցում, արձանագրությունը՝ ելնդագիր, 5 տող.

Ս(ուր)բ խ(ա)չս բարեխասս առ | Ք(րիստո)ս խաչայ Մարութե | հոգուն եւ ծն(ն)դ(ա)ցն՝ Մերդին(ի)ն, | տ(ե)ր Աթանիսին, | թվ(ա)կ(ա)ն ՌԻԹ (1580):

Հրատ. **Տեր-Յովհաննէսեանց Ա.**, նշվ. հոդվ., էջ 214: **Միրմէնեան Ա.**, Պատմութիւն Հայկաի քահանայից, «Բազմավէպ», 1933, էջ 539: ՊՀԱԳԱՀՏ, էջ 12: ՊՀՀ, էջ 69:

Տարբերեցում. **Տեր-Հովհաննէսյանցի** մոտ «ՌԻԹ»-ի փոխարենն՝ «ՌԻԸ»:



10. Խաչքար. եկեղեցու «...ատեանի... աջ կողմի սիւնին վրայ... հնադրոշմ... 19x18 սնդմ. մեծութեամբ սպիտակ մարմարիոնէ. ունի երկու մաս, երկու խորաքանդակ խաչերով իրարմէ բաժնված, որոնց տակ կը կարդացուի»⁴³.

Խչս. յշտ. ջղցի. Աղագարին, ՌԼԶ (1587):

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 12:

Ծանոթ. խաչքարը չենք տեսել: Հավանաբար մնացել է այն սալիկների տակ, որոնցով նորոգության ժամանակ սալիկապատվել են սյուները:

11. Խաչքար. դեղին մարմարից, ազուցված է Հին եկեղեցու արևմտյան ճակատի հյուսիսային մասում, արձանագրությունը՝ ելնդագիր, 6 տող.

Թ(վին) ՌԻԽԴ (1595): Ս(ուր)բ խ(ա)չս յ(ի)շ(ա)տ(ա)կ է | ջո(ւ)դ(ա)եցի Յա(կ)ոբ | Էրիցին, որ դարիլ մնաց, թվ(ին) ՌԻԽԴ (1595):

Հրատ. **Միրմէնեան Ա.**, Պատմութիւն Հայկաի քահանայից, «Բազմավէպ», 1934, էջ 216: ՊՀԱԳԱՀՏ, էջ 12: ՊՀՀ, էջ 87:

Տարբերեցում. **Մյուրմէսյանի** մոտ «ղարիլ պ մնաց»-ի փոխարենն՝ «եղաւ տապանս այս», «ՌԻԽԴ»-ի փոխարենն՝ 1934 և 1950 թթ. հրատարակությունների մեջ՝ «ՌԻԵ», իսկ 1935 թ. հրատարակության մեջ՝ «ՌԻ»:



9. Խաչքար. սպիտակ մարմարից, գտնվում է Ուղղանկյուն սրահում, ազուցված է հարավային որմին՝ գլխավոր դռան ձախ կողմում, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է | Մանուկին:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 12:

43 ՊՀԱԳԱՀՏ, էջ 12:

12. Խաչքար. դեղին մարմարից, ագուցված է Հին եկեղեցու արևմտյան ճակատի հյուսիսային մասում, արձանագրությունը՝ փորագիր, 2 սող.

Յ(ի)շ(ա)տակ և ս(ուր)ք նշանս ...ին, | որ եղ[ել] թվ(ի)ն ...սծ...ին ..., Ռ-ԽԷ (1598):
Հրատ. առաջին անգամ:



13. Խաչքար. դեղին մարմարից, ագուցված է Հին եկեղեցու արևմտյան ճակատի հյուսիսային մասում, արձանագրությունը՝ փորագիր, 7 սող.

ԹՎ Ռ-ԽԷ (1599), | Սաւրթ(ա)յ(°) փ(ա)շ(ա)յ: | Խ(ա)շ(ս) յ(ի)շ(ատակ) է ճ(ու)ղ(ա)ցի Յ(ո)վ(ա)ն[ի]սի որդի Մ[խր]կ(ր)տ(ի)ճ(ին), Ան[ի]սի որդի Նազ(ա)րի, թվ(ին) Ռ-ԽԷ (1599):



Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 12: Առաջին երկու տողերը հրատարակվում են առաջին անգամ:



14. Խաչքար. դեղին մարմարից, ագուցված է Հին եկեղեցու արևմտյան ճակատի հարավային մասում, արձանագրությունը՝ փորագիր, 6 սող.

ԹՎ Ռ-ԽԷ (1599): | Յ(ի)շ(ա)տ(ա)կ է խ(ա)չս | ճ(ու)ղ(ա)ցի Պապ | Յ(ո)վ(ա)ն(է)սի թ(ո)ռ(ա)ն | Մուշեխին:
Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 13:



15. Տապանաքար. դեղին մարմարից, ուղղանկյունաձև (չափերն են՝ 80 x 43 սմ)⁴⁴, գետեղված է Հին եկեղեցու բարձրացված դասի ճակատամասին՝ աստիճանների միջև, արձանագրությունը՝ արևմտահայաց նիստին, եղնափոր, 6 սող.

Յոր վ(ա)սն անչափ սիրոյ քոյին բանդ ի կոխէն առեր մարմին աղաչանօք Ա(ստուա)ծած[ն]ին, թող ըզյանցանս տէր Ազարիայ | կաթ(ո)ղիկոսին, որ եւ հանգեաւ ի մեծ թվին | Ռ-Ծ (1601) աւելորդին. յորժամ գայցես (աշխատ)ի կրկին, | յարո՛յ ըզսա փառոք քոյին, զիս զյ(ի)շէս որդի ս(ո)ր(ի)ն, զտ(է)ր իմ պ(ա)հեա շն(ո)րիս քոյին, ամէն:

Հրատ. Տեր-Յովհաննէսեանց Ա., նշվ. հոդվ., էջ 214: Աղաւնեան Գ., նշվ. հոդվ., էջ 593: Քարգէն խաչակոպտս, Ազարիա Ջուղայեցի, էջ 95-96: Աղաւնուհի Մ., նշվ. աշխ., էջ 11: ՊՀԱԳԱՀՏ, էջ 13: Քարգէն Ա արքունակից կաթողիկոս, նշվ. աշխ., սյունակ 185: ՊՀՀ, էջ 77:



44 ՊՀԱԳԱՀՏ, էջ 13:

Ծանոթ. Ազարիա կաթողիկոսը (1534, Ջուղա-1601, Հայկե) Պողոսի և Ողյանփաշու որդին էր, Աղուպչինի, Փաշայի և Ալիջանի երբայրը: Նազարը, Փաշան, Միրիբեկը և Պատիշատունը եղբորորդիներն էին (**Քարգէն Ա աթոռակից կաթողիկոս**, նշվ. աշխ., սյունակ 149, 160, 184): Կաթողիկոս է օծվել 1584 թ. փետրվարի 25-ին (ՅՁՀԱԲ, էջ 31) և Հայեպը դարձրել աթոռանիստ (**Գրիգոր Կամայնեցի**, էջ 320): Որպես Կիլիկիո կաթողիկոս՝ պաշտոնավարել է 17 տարի (որոշ ընդմիջումով, երբ 1591-1592 թթ. եղել է Կ. Պոլսի պատրիարք) (**Քարգէն եպիսկոպոս**, Ազարիա Ջուղայեցի, էջ 90): Նրա պաշտոնավարության ժամանակ հակաթոռ կաթողիկոսներ են օծվում 1586 թ. Տիրատուր վարդապետը, իսկ 1588 թ.՝ ոմն Հովհաննես (**Չամչեանց Մ.**, Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տն. 1784, հ. Գ., Վեներտիկ, 1786, էջ 528): Գրիգոր Գարանաղցու տեղեկություններն այս մասին հակասական են և գուրկ ժամանակագրական ճշտությունից (տե՛ս **Գրիգոր Կամայնեցի**, էջ 318-319):

Ազարիա կաթողիկոսը «...որ յառաջ քան զկաթողիկոս լինիլն երկաթ ազանէր և յետոյ թոյլանորթեցաւ, փոխեցաւ զգործքն և զզգեստն, բայց ի քարոզութենէ և ի դասասացութեանց ի վարժելոյ զբազմութիւն աշակերտացն ոչ դադարեաց, որ և աշակերտք սորին հոչակատորք և պերճականք եղեն, որպէս մեծ Յովհաննէս վարդապետն Անթապիցի՝ երաժիշտ և բարձրաբարբառ քարոզ տիեզերաց, որ յետ վաղճանի Ազարիին. սա յաջորդեաց զաթոռն և տէր Յակոբ վարդապետ Չեթնցի, որ սա բազում քարոջիւնս արար և խնամատար էր որբոց այրեաց և յոյժ որդումս՝ էր աղքատաւոր, որ երկու ամ յԱրգրում եկաց և բազում ծախիւք հոգեւորն շինեաց և աղքատանոց և կերակուր պատրաստեաց հասնապագորդ, որ կալ մինչև ցախօր և անտից եկաւ ի Բաբերդ...: Եւ այլ աշակերտք բազումք, որպէս Մեսրոպ անուն մի Տաթևացի, որ ոչ յերկարեց և վաղամաս եղև, և խարբերոցի Սկրտիչ անուն մի, որ մականունն Խղճուկ սախ, վասն առաւել հլոր և հնազանդ լինելոյն...» (նշվ. աշխ., էջ 319-320):

Կաթողիկոսի կյանքի և գործունեության ամենավիճելի դրվագն այն է (որս վերաբերյալ այստեղ առանց մեկնաբանության ներկայացնում ենք զանազան տվյալներ), որ 1585 թ. մայիսի սկզբին Հայեպում գրում և կնքում է մի կոնդակ, որով ընդունում է կաթողիկեություն, սակայն, ըստ Գարանաղցու, Հայեպի առաջնորդ Ղազար եպիսկոպոսն էր, որ Ազարիայից գաղտնի, բայց նրա անվամբ գրում է այդ կոնդակը և գողանալով Ազարիայի կնիքը՝ կնքում այն (նշվ. աշխ., էջ 379-381: Տե՛ս նաև **Աղլճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 307): Ազարիա կաթողիկոսը 1585 թ. ապրիլի 10-ին Սիսում անմակ է հղում Հռոմի պապին՝ նշելով. «...տարի մը յառաջ... որոշած էին ուխտի երթալ Հռոմ և այդ առթիւ հնազանդութիւն յայտնել մեր կաթողիկոսութեան կողմէն առաքելական աթոռիդ, բայց... կրդին. մահը և չարաչար աշխատանքներ վրայ հասան, կաթողիկոսութիւնը ակամայ ստանձնեցի, և չկրցայ կատարել ուխտս և ստիպուեցայ իմ տեղս ձեռք ղրկել Յովհաննէս եպսր. (Անթապիցի)..., որ այս իմ ձեռագիր թղթով ձեռքի մատուցանէ մեր խոնարհ հնազանդութիւնը Հռոմի եկեղեցոյն և ձեր առաքելական օրհնութիւնն ու հաստատութիւնն յնորդ մեր կաթողիկոսութեան վրայ: Չեր սրբութիւնը թող չզարմանայ թէ ինչո՞ւ համար մեր նախնիք այս պարտքը չեն կատարած, որով հետև կրիւր և հետադորդութիւնը արգելք եղած են... եւ երբ վերջին անգամ Հայկէ էինք, Սիդոնի եպսր. հաւատքի դաւանութիւն մը բերաւ, որ հայերէնի թարգմանում էր մեր Գրիգոր սարկաւազի ձեռքով, ընդունեցինք զայն և կարդացինք մեր եպիսկոպոսներու, քահանաներու և ժողովուրդին առջև թէ՛ Սիս և թէ՛ Հայկէ, ստորագրեցինք, կնքեցինք կաթողիկոսական կնիքով, և ձեզի կը ղրկենք զայն այս գրութեան հետ...: Սիրոնի եպիսկոպոսը կոր տոմարի մասին ալ խօսեցաւ մեզի. բայց մենք չենք կրնար խախտել մերինը այլազգիներէն յառաջ. եթէ փոխենք, այդ անօրէնները կը բռնեն մեզ՝ ըսելով, թէ Ֆրանկներուն հետ միացեր էք...» (**Քարգէն Ա աթոռակից կաթողիկոս**, նշվ. աշխ., սյունակ 175-178): Հռոմից ուղարկված Սիդոնի եպիսկոպոսը 1587 թ. ապրիլի 19-ին Հռոմ ուղարկված իր նամակում նշում է. «Ազարիա վարդապետ... երկու անգամ Հայկէ եկաւ իմ քովս: Վերջին անգամ ես ալ գացի զիրեն տեսնելու Վահկայի բերդը, Գարամանի մէջ, որ եր-

կար բարակ խօսեցայ իրեն հետ իր ազգին Հռոմեական եկեղեցւոյ միութեան մէջ վերահաստատութեան մասին...: Նոյն կաթողիկոսին տրվեցուցի նաև նորոգումս տոմարը և զայն յառաջ բերող պատճառը...: Պատասխանեց թէ ամէնէն յառաջ պարտաւոր է խորհրդակցիլ Մեծ Հայաստանի կաթողիկոսին հետ, յետոյ ազգին վարդապետներուն և քարոզիչներուն հետ և յետոյ պատասխանել Առաքելական աթոռին... և Առաքելական աթոռին իր հպատակութեան ապացոյցը տալու համար՝ ընդունեցաւ հաւատքի այն դաւանանքը, զոր ես առաջարկեցի իրեն յանուն Հռոմեական սուրբ եկեղեցոյ: Իմ առջև և շատ մը լատին և հայ վկաներու ներկայութեամբ իր դաւանութիւնը տալէ ետքը, զայն ստորագրեց և կնքեց և իր եպիսկոպոսներէն մէկուն հետ նամակներով ղրկեց Առաքելական աթոռ և պաշտպան կարտինալին: Ան նոյն իսկ այիտի շարունակէր քարոզել և ուսուցանել իր ժողովուրդը, իր խոստման համաձայն, եթէ իրեն հակառակորդ հայ եպիսկոպոսի մը կողմէ հանգիստ թողուր իր կաթողիկոսութեան մէջ: Այս պատճառով ան ստիպուեցաւ Կ. Պոլիս երթալ և պաշտպանել ինքզինք իրեն մասին եղած ամբաստանութիւններու դէմ» (նշվ. աշխ., սյունակ 192-194):

Կաթողիկոսի գլխավոր գործերից է Երուսաղեմի Սբ. Հակոբյանց վանքը պարտքերից ազատելը: Անձամբ գնում է Ամիդ, խորհրդակցում տեղի առաջնորդ Սրապիոն Ուրֆացու և ավագ վարդապետ Պետրոս Կարկանեցու հետ: Երեքով սկսում են համագնակություն կատարել: Կաթողիկոսը հանձն է առնում աշակերտների հետ հանգանակել «...զՍեբաստիոյ՝ սանճաքն և զայն գաւառքն որ յերի կալով Սեբաստիոյ՝ զԵրուկիայ, զԳաղատիայ, զՀայկէ և զամենայն տունն Կիլիկեցոց...» (**Գրիգոր Կամայնեցի**, էջ 321): Այդ նպատակով 1600 թ. հասնում է մինչև Բաղէշ. «Արդ գրեցաւ սա ի դառն և ի չար ժամանակիս. զոր անօրէնքն յամեն ղիմաց նեղեն զքրիստոնէայս ի հարկապահանջութիւն, որ ի բազում հարկապահանջութենէն Սկիւթացոցն զոր պահանջէին, բազում պարտս անկեալ էր ի վերայ Երուսաղեմայ, և Երուսաղեմ կալ ի գերութիւն նոցա: Չոր տեսնել և լուսել սուրբ վարդապետն Ազարիայ, որ էր յայնմ ժամանակի հայրապետ Սրապ և փոցկար ի սրտի իւրում. և ոչ զիտըր թէ զի՞նչ արասցէ. և ի տըլչութենէ Հոգւոյն Սրբոյ եարկ ըզմտաւ ելանել յերկիրն Հայոց առնուլ որոշմութիւն ըստ Պօղոսի. տանել և ազատել զԵրուսաղեմ ի յալլ ազգաց և եկեալ եհաս քարոզութեամբ ի քաղաքս Բաղէշ...» (նշվ. աշխ., սյունակ 159-160): Նոյն թվականին վերադառնում է Ամիդ, իսկ նոյեմբերի 4-ին՝ ուղևորվում Հայկէ (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անունն Մատենադարանի, հ. Ե, կազմ. **Եգանեան Օ.**, Երևան, 2009, սյունակ 203): Հանգանակությունը տևում է 3 տարի. «...վասն Սուրբ Երուսաղեմայ պարտուցն երեք ամ հեռացեալ յարոտոյն ընդ արևելս...: Երից ամաց եղև զարուստ նորս ի Հայկէ» (**Քարգէն Ա աթոռակից կաթողիկոս**, նշվ. աշխ., սյունակ 159):

Կաթողիկոսը վախճանվում է 1601 թ. հունիսի 2-ին. «Այլ մինչև էր սկոռեալ ելուզակաց ՚ի Հայաստան, մին ՚ի նոյն, որոյ անուն էր Սաթրոճի Լեվէնտ՝ յաւարի էառ զՍիս քաղաք Կիլիկիոյ, և կողպտեաց զկաթողիկոսարանն ընդ որ տխրեալ յոյժ Ազարիայ Ջուղայեցոյ կաթողիկոսին. Ստոյ անկաւ ՚ի հիւանդութիւն և մեռաւ յամի. 1601. ՌԾ. ՚ի յունիսի. 2» (**Չամչեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 536): Հովհաննէս Այնթապցիին այսպէս է նկարագրում նրա մահը. «...աստիկ մահտարածամ մը կար. յանկարծ հիւանդացաւ Ազարիա, հինգ օր պառկեցաւ և աւանդեց իր հոգին: Խուսար պատեց հայոց տունը, որովհետև զրկուեցանք այսպիսի պայծառ արևէ մը... Լուսաւոր հոգին մեռաւ ՌԾ (1601)-ին» (**Քարգէն Ա աթոռակից կաթողիկոս**, նշվ. աշխ., սյունակ 184):

Երբ Բաբելեմ Ա աթոռակից կաթողիկոսի հուղարկավորության համար 1936 թ. հունիսին բացվում է Սբ. Քառասնից մականց եկեղեցու հին բաժնի ատյանը, երևում է Ազարիա Ջուղայեցու՝ «...հայած ու մեծ մասով մոխրացած...» աճյունը, որն էլ յսնամքով գետեղվում է Բաբելեմ կաթողիկոսի դագաղի մոտ (ՊՀՀ, էջ 76, 77):

Տարբերեցում. **Տեր-Հովհաննէսյանցի** մոտ «Ազարիայ»-ի փոխարեն՝ «Ջաբարիայ», «զ(յ)իշէս որդի ս(ո)ր(ի)ն, զա(ե)ր իմ պ(ա)իեա»-ի փոխարեն՝ «զմեղօք որդի սորին, որ և պսիեա»:

16. Խաչքար. սպիտակ մարմարից, ագուցված է Հին եկեղեցու արևմտյան ճակատի հյուսիսային մասում, արձանագրությունը՝ փորագիր, 3 տող.

Ս(ուր)ք նշանքս բար(ե)խ(ո)ս է Կիրակոսին եւ ի(ւր) | կենակցուն՝ Աբէթի(ն), որդո(ց)ն՝ Ոսէփի(ն), | Հռիփսիմէ(ին), Մարիամէ(ին): Խ(ա)չ(ս) կան(գնեցաւ) (Ռ)ԾԲ (1603):

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 12:

Տարրերը. **Սյուրմէյանի մոտ «Աբէթի»-ի փոխարեն՝ «Աբէթի», «Խ(ա)չ(ս) կան(գնեցաւ)»-ի փոխարեն՝ «ի թվին»:**



Տարրերը. **Սյուրմէյանի մոտ «Մարանու, Ոսեփ»-ի փոխարեն՝ «Մարան(°)», «Ճրճս»-ի փոխարեն՝ «ՁԱ(°)»:**



17. Խաչքար. սպիտակ մարմարից, ագուցված է Հին եկեղեցու արևմտյան ճակատի հյուսիսային մասում, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Ս(ուր)ք նշանքս բ(ա)ր(ե)խ(ո)ս տ(ե)ր Սարգիս(ին), Աբրահամ(ին), Գրիգոր(ին), | Մարգիս(ին), Մարեամ(ին), Մարանու(ին), Ոսեփ(ին), | Ճրճս(ին):

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 12:

Ծանոթ. ըստ Հայկարյան գտնվող թվակիր այլ խաչքարերի հետ համամասն ոճական և գրչական առանձնահատկությունների խաչքարը թվագրում ենք ԺԷ դ.:



18. Խաչքար. դեղին մարմարից, ագուցված է Հին եկեղեցու արևմտյան ճակատի հյուսիսային մասում, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Յիշատակ է ս(ուր)ք խաչս | Յակոբին, Մանսուրին, | ըՍպահանին, | թվին | ՌԾԳ (1604):

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 13:

19. Տապանաքար. միակտոր դեղին մարմարից, (չափերն են՝ 214 x 65 x 13 սմ)⁴⁵, ուղղանկյունաձև: Գտնվում է Հին եկեղեցու ներսում՝ արևմտյան որմի տակ, արձանագրությունը՝ փորագիր, 14 տող.

45 Բարզեցի Ա արքայից կաթողիկոս, նշվ. աշխ., սյունակ 295-296:



Յ(իսու)ս Ք(րիստո)ս տ(ե)րդ երկնային երկրպագեմ անուան քոյին, որ կամաւ հօրդ հաճեալ *հոգին, իջեր յերկնից յաշխարհ* ըստորին: | Վ(ա)ս(ն) աղետից ... մեծ այգին զի էր կորեալ քո սիրելին, նուաստացար յարգանդ *կուսին եւ մարդ եղեր* բոլորովին: | Չարչարանօք անհնարին զմահ յանձն առեր ի վ(երայ) խաշին, եղար ներքոյ *կնքեալ վիմին, ի կուածոյ գերեզմանին*: | Յարեար փառօքդ ա(ստուա)ծաշին եւ համբարձար առ հ(ա)յր յերկին եւ յորժամ գաս դ(ա)րձել *կրկին կատարածի* աւուր վերջին: | Յայն ժ(ա)մ յիշեայ ողորմութեամբ զհայրապետս հաւատարիմ, զտէր Պետրոս *կթղկսն, որ կայ եղեալ* յայս տապանին: | Լուսաւորեա զհոգի սորին ընդ լուսերամ ս(ր)բոց քոին դասաւորեայ ընդ անուանակցին *Սբ. Պետրոսին* մեծի վիմին: | Եւ զպատուական ոսկերք սորին, զոր մեծարե(ա)լ ի մէնջ պատուին, բժըշկութի(ւն) ցաւոց *լիցին. որք հաւատովն* եկեալ մերձին: | Սայ ի հօրէ ծընե(ա)լ լինի, Կարկառ անուն փոքր քաղաքի եւ ս(ր)բութեամբ ինքն սնանի, *որպէս տատրակ* յանապատի: | Ի յափըն մեծ Եփրատ գետի ի վանքն Ս(ուր)բ Տիմոթէի զամս Խ (40) այլ *աւելի վարս ուղղէր* ազգի ազգի: | Այլ եւ ունէր շնորհաց հոգին եւ հրոշակեալ իմաստ սորին ա(ստուա)ծայրան մեծ *վրդայտ բացայայտող* ի գրոց բ(ա)նին: | Բազում որդիս ի փառս ածել, հանել ի բարձր աստիճանի, տասից տուեալ է *զաւագան, որոց անարգն* Թումաս յետին: | Չոր եւ ետոյ ի ս(ուր)բ հոգոյն ընտրեալ լինի կ(ա)թ(ո)ղ(ի)կ(ո)ս վերակարգի զամս Է (7) ոչ *աւելի, բազում նզանց* սա հանդիպի: | Որ եւ հանգեալ ի մեծ թվի ՌԾԷ (1608) երրորդի յաւազ պահոց երեքշաբթի, *ի յերրորդումն շաբաթին*: | Ո՛վ սուրբ մանկունք նոր Սիօնի, որք եւ յետոյ գայք զկնի, երեսակոխ *ձերում ոտի միայն խնդիրս* ձեռն զատարի: | Չսակաւ բանս նորժամ կարդեաք, որ կայ գրեալ յայսմ արձանի, ս(ուր)բ աղօթիք *ձեր հայցեցէք, ասասջիք ած. ողորմի*:

Հրատ. **Տէր-Յովհաննէսեանց Ա.**, նշվ. հոդվ., էջ 214: **Ապանեան Գ.**, նշվ. հոդվ., էջ 594: ՊՀԱԳԱՀՏ, էջ 13: **Քարգէն Ա աքոսակից կաթողիկոս**, նշվ. աշխ., սյունակ 295-298: ՊՀՀ, էջ 128: Արձանագրության՝ շեղագիր տրված տառերը չենք կարողացել ստուգել՝ պատի տակ մնացած լինելու պատճառով: Այս հասկանալի ներկայացնում ենք՝ համադրելով տապանագրի հրատարակված այլ ընթերցումներին: Տեր-Հովհաննէսեանցը և Քարկեն կաթողիկոսը արձանագրությունը հրատարակել են քերի և սխալաշատ: Մյուրմեյանի մոտ էլ կան սխալներ և պակաս տողեր, իսկ Գևորգ վարդապետ Ասլանյանի ընթերցումն առավել ամբողջական է և աննշան սխալներով:



Ծանոթ. Պետրոս Կարկառեցին ծնվել է 1552 թ.: Սովորել է հավանաբար նախ Սբ. Տիմոթեոսի դպրեվանքում, ապա՝ Ամիրում՝ Հովհաննէս Երբակ վարդապետի մոտ (**Քարգէն Ա աքոսակից կաթողիկոս**, նշվ. աշխ., սյունակ 250): Պետրոսը «...կարի յոյժ առաքինի էր և կարի հմուտ գործի հին և նոր կտակարանաց նրբից և արտաբնոց և ժիր էր ի աշակերտաց վարժումն և ի դաս ասելն և շատ ժամանակ նստեալ կայր ի վանս Կարկառու և ոչ ելանէր... թէ լինէր երբեմն յամբացիք բռնութեամբ տանէին ի քաղաքն դաս ասել ժամանակ մի և դարձեալ դառնայր ի վանս իւր: Եւ ել համբաւ նորա ընդ ամենայն Հայաստանեայս և փայլէր որպէս զարեգակն լուսատր ի մէջ աստեղաց, և զնացին ընդ հռչակ նորա բազմութիւն աշակերտաց...»: Նրա աշակերտներից էին Կարապետ Թլկուրանցին (երկու տարի եղել է Երզնկայի առաջնորդ), վարդապետներ Ղազար Երզնկացին, Կարապետ Քոթր, Ղազար Տարանդացին, Կարկառեցի Թումասը (նրա տեղապահը), Գասպար Չնրուշցին, Ջաքարե Վանեցին, կուսակրոն ճգնավոր Մաղաքիա Թոխաբեցին (**Գրիգոր Կամայեցի**, էջ 351-353, 357, 363-364), Մելքիսէթ Նորահասակը, Առաջակա Խաչատուր քաջ երաժիշտը (**Քարգէն Ա աքոսակից կաթողիկոս**, նշվ. աշխ., սյունակ 271):

Ազարիա կաթողիկոսի՝ Երուսաղեմի Սբ. Հակոբյանց վանքը պարտքերից ազատելու գործը ձեռնարկելու ժամանակ Պետրոս Կարկառեցին հանձն է առնում աշակերտներով մեկնել «զԹէոդոսյոյիսի փաշայրիս» և այդտեղ կատարել հանգանակություն (**Գրիգոր Կամայեցի**, էջ 321):

Կաթողիկոս է ձեռնադրվել 1601 թ. Հայեպում: Երբ Ազարիա Ջուղայեցի «...կաթողիկոսն Սոյ առկա ի հիւանդութիւն և մեռալ յամի. 1601. ՌԾ. ի յունիսի. 2: Էր սորա աշակերտ Յովհաննէս վարդապետ Անթափցի որ և զառաջինն լեալ էր աշակերտ խաչկայ և ունէր իբր ընկեր գՊետրոս վարդապետ ոմն Կարկառեցի: Ի մեռանիլ ապա Ազարիա՝ գնացին երկրքին ի Բերիա. և կացին անդ ամիսս ինչ մինչև ի դեկտեմբեր: Մեկնեալ անտի Յովհաննէս վարդապետի Անթափցոյ՝ գնաց յԱտանա. և Պետրոս մնաց ի Բերիա. և զի դեռևս չէր եղեալ կաթողիկոս ի Սիս՝ ժողովուրդքն Բերիոյ ստիպեցին գՊետրոս վարդապետ, և ետուն ձեռնադրել զնա կաթողիկոս Սոյ առանց հաւանութեան Սսեցոց: Չայս իբրև լուան միաբանք Սոյ և այլ ժողովուրդք այլր աթոռոյ, խռովեցին յոյժ. և կուտեալ առ Յովհաննէս վարդապետ՝ բռնադատեցին և ածին զնա ի Սիս. և ձեռնադրեցին կաթողիկոս. և եղև յայնժամ կաթողիկոսունք Սոյ և երկու. որոնց՝ մին նստեր ի Սիս, և միւսն ի Բերիա» (**Չամչեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 536): Դրա հե-

տևանքով «...եղեն երկու բանակ և պառակտեցաւ ժողովորդն, ու մանք ի Պետրոսն դարձան՝ Հալպայ եղած հայք, և այլ ամենայն աշխարհն կիլիկեցոց և անթապցոց և զԷթնցոց և քիլիսացոց և տարանդացոց և տիպրիկցիք և Էնկելցիք ի Յովհաննես դարձան ձեռագրովք և հնազանդ եղեն մնա ասելով թէ՝ մեք մեր հայրենի աթոռ զՄիս գիտենք և ոչ զՀալպայ: Եւ պարտ էր Պետրոսին լռել և ոչ լռեաց, այլ երկու ամ մեծ գժտութիւն և խռովութիւն եղև ի միջին նոցա, և յետ երկու ամացն հազիւ կարացին հաշտութիւն առնել երեսօք և ոչ սրտիսք» (**Գրիգոր Կամայեցի**, էջ 329-331), «...պայման եղեալ այսպիսի. զի իւրաքանչիւր վարեսցէ զիւր առանձին վիճակ մինչև ի մահ. և ի մեռանիլ միոյն՝ միսն լիցի ինքնիշխան կաթողիկոս. և այնպէս կացին անխռով ամս...» (**Չամչեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 536):

Նկատի առնելով, որ Հովհաննես Այնթապցին Հալեպից Ադանա է մեկնել Ազարիա կաթողիկոսի մահից 5 ամիս հետո (**Քարզեն Ա աթոռակից կաթողիկոս**, նշվ. աշխ., սյունակ 205-206) և կաթողիկոս օծվել 1601 թ. դեկտեմբերի 20-ին (**ՅՀՀԱԲ**, էջ 31), կարող ենք ենթադրել, որ Պետրոս Կարկառեցին կաթողիկոս է օծվել 1601 թ. նոյեմբերի վերջից մինչև դեկտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում:

Պետրոս կաթողիկոսը վախճանվել է 1608 թ. Հալեպում: Կարապետ վարդապետ Քոթր կաթողիկոսի աշակերտներից միսակն էր, որ գտնվում էր Հալեպում՝ մահամերձ կաթողիկոսի մոտ: Այդ պատճառով կաթողիկոսը նրան է նվիրում փիղոնը, գավազանը և լավագույն ձեռագրերը (**Գրիգոր Կամայեցի**, էջ 357): Նա այսպես է նկարագրում կաթողիկոսի մահը. «Այլ և Քաղոց ամսոյ հինգ ատուր անցանի: Երեքշաբթի ատուր, յոյս չորեքշաբթի, հասեալ ի յուր ժամուն մասին գիշերի, Պետրն գրլոյխ Պետրոս հաւատոյ վիմի. յօժար սրտիս ուրախ մահու հնազանդի, իւր լուսապայծառ հոգին ի մարմնոյն բաժանի...: Ատուրն չորեքշաբթի տապաւնըն բացեալ փորի ի Սրբոց Քառասնից յանունն սուրբ եկեղեցի...: Թվին ՌԾԷ (1608) պահոց սուրբ քառասնորդի Քաղոց ամսի Ե (5) ի վեց համարոյ, գիշերի Պետրոսն փոխի» (**Քարզեն Ա աթոռակից կաթողիկոս**, նշվ. աշխ., սյունակ 270-271, 274):

Պետրոս կաթողիկոսը 1606 թվականին գրել է Ողբ «...վասն աներման գիտաքաղաքին Ճուղայոյ եւ ամենայն հայոց»: Այն պահվում է Երուսաղեմի Սբ. Հակոբյանց վանքի մատենադարանի թիվ 794 ձեռագրի 197-րդ էջում (նշվ. աշխ., սյունակ 266):

Կարկառ ամրոցը և գյուղը գտնվում են Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի Մալաթիա գավառում: Գյուղը ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Քոչահիսար (Kocahisar), իսկ ամրոցը՝ Քահիա (Kahta):

20. Խաչքար. սպիտակ մարմարից, ագուցված է Հին եկեղեցու արևմտյան ճակատի հարավային մասում, արձանագրությունը՝ փորագիր, 14 տող.

Ս(ուր)բ խա(չ)ր յիշ(ա)տա(կ) է | Չաք(ա)ր(ե) (ի) | որ-
դ(ի) | Մա(լ)ի(ն), որ | դար(ի)պ մնաց | Հալա(պ), | թվ(ին)
ՌԾ|Թ (1610):

Հրատ. առաջին անգամ:



21. Խաչքար. դեղին մարմարից, ագուցված է Հին եկեղեցու արևմտյան ճակատի հարավային մասում, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.



...[թվի]ն ՌԾԹ (1610):

| Ս(ուր)բ խա(չ)ս բ(ա)րե-
խ(ա)ս է ... Ք(րիստո)ս
Սկրտ(ի)չին ...ուն:

Հրատ. առաջին անգամ:



0 5 10 15 20 cm

22. Խաչ, քառաթև, արծաթյա⁴⁶.

Յիշատակ է Սբ. Խաչս խառանայ Սպահանին էս իւր եղբորն՝ խառանայ Տէօվլէթին, ի դումն Սբ. Ք. մանկկաց եկեղեցոյ, թիւ հայոց ՌԿԷ (1618):

Հրատ. ՊՀՀ, էջ 900:

Ծանոթ. *Խաչը չենք տեսել: 1926 թ. Սբ. Քառասնից մանկկանց կամ Սբ. Աստվածածին եկեղեցու իրերից էր (նույն տեղում):*

23. Տապանաքար. դեղին մարմարից. (չափերն են՝ 139 x 75 սմ)⁴⁷, ազուցված է յուղատանը⁴⁸, չին եկեղեցուց դեպի Մեծ եկեղեցու խորան բարձրացող աստիճանների աջակողմյան որմին, արձանագրութունը՝ փորագիր, 30 տող.

Ած. *անմահ է* է անվ(ա)ղճ(ա)ն, որ ստ(ե)ղծ(ե)ց մ(ա)րդ բան(ա)կ(ա)ն, էտուր մմ(ա)յ ցուպ հով(վա)կ(ա)ն, հովել զ|*հօտս տիր(ա)կ(ա)ն* բարձօղ խ(ա)չին տ(ե)րուն(ա)կ(ա)ն. ո(ր)պ(ե)ս մեծին Մով(սե)սին այն զ|*ծովն Կ(ա)րմ(ի)ր* պատռ(ե)լով ազ(ա)տյ(ա)ց զամ(ե)ն(ե)ս(ե)ա)ն. գեր(ա)զ(ո)յն դու | *զովելի* նման



արթուն Գր(ի)զ(ո)րի չ(ա)րչ(ա)ր(ա)նօք նա խ(ա)չակց(եա)լ անմ(ա)հ բանին. | *տն. Յսի.* դատօրն երկնօր դէտ կացուց(ա)լ զքեզ ք(°) ք(ա)ղ(ա)քի էս | *տուեալ* քեզ բան ք(ա)ղց(րա)յի տէր Խ(ա)չ(ա)տուր հայր(ա)յ(եա)յի: | *Ընդունարան* հոգուն շնորհ(ա)յ այն որ ի վերնա|*տունն* հնչ(եա)յց, ըզառ(ա)ք(եա)լսն զարդ(ա)ր(եա)ց զբոլ(ո)ր աշխարհս, նոքօք | *կոչեաց* համբերութե(ան) դու հետեման, որ առօել | *քան*

46 ՊՀՀ, էջ 900:

47 ՊՀԱԳԱՀՏ, էջ 14:

48 Տեր-Յովհաննէսեանց Ա., նշվ. հոդվ., էջ 229:

գորայն, ըս(տ) հր(ա)մ(ա)նին տ(ե)ր(ու)ն(ա)կ(ա)ն, որք հ(ա)մբ(ե)րեն, ի սպ|*ան կենան* ճշմ(ա)ր(ի)տ ճ(ա)ն(ա)յ(ա)րհին. դու մ(ա)րզ(ա)րիտ գտեր | *անգին*, էս լօ ուսեր զխ(ո)ն(ա)րիի, որ երե(եա)լ ի ք(ո)մ(ե) անձ|*ին* լոյսն ի հօրէ. զք(ե)զ զարդ(ա)ր(եա)լ զք(ե)զ ք(ա)զմ(ա)ց աղ ան|*անել* ք(ա)ղցր հ(ա)մ(ո)վ ի համ ած(եա)լ, առ ի յ(ե)րկինս հրօի-րե(ա)լ խոստ(ո)վ(ա)ն|*ող էս* դու արի. տ(եառ)ն ա(ստուծո)յ Յ(իսու)ս Ք(րիստոս)ի յ(ո)րժ(ա)մ կանգ(նեա)լ եկ(ե)ղ(ե)ցի հրնչեալ | *ձայնիդ* ք(ա)ղճ(ա)լի ծածկ(եա)լ խ(ո)րհղ(ոյ)ն ա(ստու)ծ(ա)յիս, յայտ(նեա)յց մ(ա)ք(ո)ր | *Կրպտին.* դու մմ(ա)ն(եա)լ այն Ներս(ե)սին, որ զգեցօ զս(ուր)ք հ(ո)գին: Մաք|*ուր հոգ(տ)յն* ընդ(ո)ւն(ա)րան, ք(ա)ն զՈհ(ան)ն(ե)տ ա-ռ(ա)ք(եա)լսն այն. նա զօր(ա)յց(եա)լ | *հոգւով սուրբով* անմեղ մն(ա)ց ան(ա)յ(ա)կ(ա)ն: Յ(իսու)ս որդ(ո)յն



տուն էս տեղի, | *որ հնայզ.* ի քեզ հանգչի, նորին շն(ո)րհիւ աշխարհ ապրի փ(ա)ռ տ(ե)ր|*ուրքի.* վր. առքի: Շն(ո)րհատուն ող(ո)րմ(ո)ւ(թ)ե(ան) Յ(իսու)ս Ք(րիստոս)ս անմ(ա)հ արք(ա)յ(ի)ն, | *մեք* ակն ունիմք առ նա յուս(ո)վ զի դասցէ յաջակողմ(ե)ան: | *Ոսկեքրն.* Ոհ(ա)ն(նի)սին դու հ(ա)մեմ(ա)տ գոլ(ո)վ նմին շատ չ(ա)րչ(ա)ր(եա)լ. նա | *սքորի հնգւ.* *խորան* անմատ(ոյ)ցին: Տ(եառ)ն ա(ստուծո)յ դու ժիր մշ(ա)կ ուղ|*ող վրք.* դու *սարագ* զեկեղ(ե)ցիս նոր(ո)զ(ե)ց(ա)ր էս ար(ա)րեր ո(ր)պ(ե)ս դր(ա)խտ. | *Ըս. անմհ. սբ. թգր., որ է սհլ. ը.* հօր հոգ(ո)վ էս չար մո-

լարս առ նա յուս(ո)վ, | որ ասցի գովս այս գունով: Այս է տ(ա)յ(ա)ն երաժշտին տէր Խ(ա)չ(ա)տ(ու)ր | հրպտին., որ եւ հնգւ. ի մեծ թվին հայոց ՌԿԹ (1620): Ք(րիստո)ս ա(ստուա)ծ տ(է)րդ վերլին հյց. Սր. Կուսին քո ծնօղի պ(ա)ղ(ա)տ(ա)նօք Ս(ուր)բ Ք(ա)ռ(ա)սնից լուսօրեալ զհզիս. սորին, ամէն:

Հրատ. **Տեր-Յովհաննեսեանց Ա.**, նշվ. հոդվ., էջ 229-230: ՊՀԱԳԱՀՏ, էջ 14: ՊՀՀ, էջ 249-250: Արձանագրության շեղագիր տրված տառերը չենք կարողացել ստուգել պատի և աստիճանի տակ մնացած լինելու պատճառով: Այս հատվածները ներկայացնում ենք՝ համադրելով տապանագրի հրատարակված այլ ընթերցումներին:

Ծանոթ. քաղցրածայն և «քաղցրանուագ» երաժիշտ տեր Խաչատուրը ծնվել է Կարկառում և ուսանել Պետրոս Կարկառեցու մոտ (ԺԲԱ, էջ 121: Տե՛ս նաև **Սիմոն Լեհացի**, էջ 182): Հայտնի է, որ 1620 թ. նորոգում և Սր. Քառասնից մանկանց եկեղեցուն է նվիրում 1439 թ. գրված մի ձեռագիր Մաշտոց (ՅՁՀՔԱ, էջ 163-164):

Տարբերություն. **Տեր-Հովհաննեսյանցի** մոտ «զծովն Կ(ա)րմ(ի)ր պատռ(ե)լով»-ի փոխարեն՝ «զծովն պատռելով», «երկնօտր դէտ կացուց(ա)լ»-ի փոխարեն՝ «երկնատր տէր կացուցեալ»: **Սյուրմեյանի** մոտ «զծովն Կ(ա)րմ(ի)ր պատռ(ե)լով»-ի փոխարեն՝ «զծովն պատռով», «զհոզիս սորին»-ի փոխարեն՝ «զհոզիս նխին»:

24. Սկիհ. ոսկուց⁴⁹, պահվում է քանգարանի վերածված Սր. Աստվածածին եկեղեցում: Արձանագրությունը՝ բաժակին և պատվանդանի 8 նիստերին, փորագիր, 43 տող.

Բաժակին.

Սիկիհս յիշ(ատա)կ է Խ(ա)չ(ա)տ(ու)ր եպ(ի)ս(կոպո)ին, թվ(ին) Ռ-Հ (1621) ի դուռն Սուրբ Քառասնից, ա(ստուա)ծ ողորմի ասացէք իւր հոգուն, ամէն:

Պատվանդանին.

Յովան|էս Սկ|ըրա|իշ: Առ|աքե|ալ|ն Պե|տրո|ս: Ա-ն|աքե|ալ|ն Թ|ու|մա|ս: Առ|աքե|ալ|ն Յա|կոբ|ոս: Ա-ն|աքե|ալ|ն Թա|ղե|ոս: Առ|աքե|ալ|ն Բա|րդր(ւ)|ղի-մ(եոս): Առ|աքե|ալ|ն Յո|ղի|աս: Առ|աքե|ալ|ն Պո|ղո|ս:

Հրատ. ՊՀՀ, էջ 248, 249: Պատվանդանի արձանագրությունը հրատարակվում է առաջին անգամ:

Ծանոթ. ոսկյա սկիհի բաժակի մասն ավելի հին է, քան պատվանդանը (նշվ. աշխ., էջ 248): Կերտվել է Հայեպի առաջնորդ Խաչատուր արքեպիսկոպոս Կարկառեցու հիշատակին, որը մահացել է 1620 թ. (տե՛ս Սր. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 23):




49 ՊՀՀ, էջ 900:

25. Արձանագրություն. պահվում է քանգարանի վերածված Սր. Աստվածածին եկեղեցում: Տեղահան սալիկին՝ փորագիր, 5 տող.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է գլս.(°) | խ(օ)ճ(ա)յ Մ(ա)ղս(ու)-տին | և խ(օ)ճ(ա)յ Ախիճան|ին ի դ(ու)ռն Ս(ուր)բ | Ք(ա)ռ(ա)սու|ն, [թվ] Ռ-ՉԲ (1633):

Հրատ. առաջին անգամ:




26. Ծնծղա. պահվում է քանգարանի վերածված Սր. Աստվածածին եկեղեցում, արձանագրությունը՝ ելնրագիր, 1 տող.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ծնծղակս ասղապ(ա)տցի տի-ր(ա)ցու ըՄտեփան {ն}ին ի դուռն Ս(ուր)բ Քառ(ա)սուն մանուկ եկ(ե)ղ(ե)ցին Հալապ, թվ(ին) Ռ-ՃՂ (1641):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Աստապատ գյուղը գտնվում է Նախիջևանում: Ներկայումս մնացել է Նախիջևանի ջրամբարի տակ:



27. Սրբապատկեր «Տիրամոր քաղաղութունը Գրիգոր Լուսավորչի և Սբ. Ստեփանոս Նախավկայի հետ» ամրացված է Մեծ եկեղեցու հյուսիսային որմնի արևմտյան մասում: Մոմագոծ միակտոր հաստ կտավի վրա (չափերն են՝ 285 x 173 սմ) պատկերված յուղաներկ նկարն ունի փայտյա ոսկեգոծ շրջանակ (լայն.՝ 12 սմ): Կենտրոնում Մարիամ Աստվածածինն է՝ նստած «... ոսկեգոծ զարդարուն քիկնաթռի մը մէջ: Հագած է մանուշակի կարմիր միակտոր պարեգոտ. քննոցներու և վիզի բերանները ոսկենկար ծաղկեայ երիզ: Վրան առած է... միակտոր լազուարտ ծածկոց...: Պատմունանին վրայ ոսկեգոծ ծաղկեփունջերու մէջ տիրող տեսակներն են Հալեայի գեղեցիկ մեխակը, վարդն ու մարնջածաղիկը...: Պատմունանին ամբողջ եզերքը ոսկեգոծ գեղեցիկ բանուածք ունի...: Աստուածամայրը... աջ ձեռքին մէջ բռնած է ճերմակ շուշանի ծաղկեայ ոստ մը...: Յիսուս, նկարին վրայ, բաւական մեծ է, 87 սմ-ով. երկարութեան մը վրայ և կը համեմատի մօրը հետ, որ 160 սմ-ով. երկարութիւն մը կը գրաւէ... ձախ ձեռքին մէջ կը կրէ ոսկեգոծ խաչանիշ գունդը, որուն մէջքէն... և վերի կիսագունդէն ոսկեգոծ գօտիներ անցած են, մութ կապոյտ յատակով: Հագած է գոց կարմիր պարեգոտ, վիզն ու քերտուն բերանները ոսկենկար երիզներով: Վրայի պատմունանը... համակ ծիրանագոյն, համաչափ ոսկեգոծ ծաղիկներով, ճոխ ոսկեթել նուրբ երիզներով...: Պատմունանին բոլոր ծաղկեփունջերը յասմիկի նուրբ վարդեակներ ունին: Սև առատ մազեր, սիրուն լուսապակով, գլխէն վար կը թափին մինչև ուները... Աստուածամօր առջև ծնրադրած է) Յովհաննէս Մկրտիչ, որուն սև գօտիով մը սեղմուած մանուշակի կարմիր պարեգօտին կարճ քերտը կը վերջանան ժանեկագարդ սև երիզներով, իսկ պատմունանը, կարմրագոյն...: Ամպեղէն կոնակներով շրջապատուած Տիրամօր աջ կողմը կանգնած է Ս. Գրիգոր Լուսաւորիչը... 141 սմ-ով. բարձրութեամբ... ձախ անուրթն տակ կը կրէ հովուական գաւազան, սև օտսախէ, ոսկի գլուխով և գօտիներով: Հագած է սպիտակ ծաղկափիսկ շապիկ...: Շուրջառը, կարմրագոյն, պարզ, ոսկեփիս երիզով: Գօտիին աջ կողմէն կախուած է քահանայապետական կոնքեռը, ոսկեփիս երեք ծուպերով, վրան նշմարող մանրանկարն է Յիսուսի Յարութիւնը, անաղարտ մնացած և շատ յաջող...: Աջ կողմքին մանրանկարն է Յիսուսի Մկրտութիւնը..., ուր կ'երևան, պիտակ յաջող աղանձի մը տակ, Յիսուս, ձախ կողմը Յովհաննէս և աջ կողմը առաքեալ մը...: Ձախ կողմքի մանրանկարը կը ներկայացնէ Գաբրիէլի Աւետումը...: Ըոխ եմիփորանի ուրարի մնացեալ մասը, կ'իջնէ մինչև ոտքերը, ոսկեփիսակ չորս ծուպերով, ուր վերէն վար կ'երևան վեց շարք ընտիր մանրանկարներ, 12 առաքեալներու..., որոնց գլուխը, աջ կողմով, կը կենայ Պետրոս առաքեալ, գոյգ մը բանալիներով... հայրապետական խոյր(ի)... յառաջամասի մանրանկարը... կը ներկայացնէ Աստուածամայրը, ոտքի վրայ, բարձրահասակ, նուրբ, ոսկիի և լազուարտի համդերձանքով, որուն երկու կողմը, չորս գեղեցկատեսիլ հրեշտակներ կ'երկրպագեն...: Աստուածամօր ձախ կողմի նկարն է Ս. Ստեփանոս, նոյնքան բարձրութեամբ: Առաջին վկան... երկար սև մագերով...: Գլխուն վրայ կը կրէ ոսկեփիս, ծաղկենկար սաղաւարտ, որուն վրայ կը տեսնուին... մանրանկարներ...: Նախասարկաւազը հագած է ծաղկեփիսակ ճոխ շապիկ, կարմրագոյն... ճերմակ ժանեկափիս վերջաւորութեամբ: Կուրծքն ու կունակը ոսկեփիս դիպակ...: Աջ ձեռքով բռնած է ոսկեփիս բուրվառը, ոսկեայ եօթը բոժոժիկներով...: Մետաքսեայ սև թաշկինակով ձախին բռնած է նոյնպէս ոսկեայ խնկամանը, տաճարաձև...: Մինչև հոս այս բոլորը գոց կապոյտ յատակի վրայ...: Տիրամօր... գլխուն վերևը, երկու ոսկեթև կարմրագետտ հրեշտակներ կը կրեն ոսկեթագը..., որմէ վեր... երկնային խմբանկարն է..., ուր Հայր Աստուած... լազուարտ պարեգօտով և ոսկեփիս դիպակեայ պատմունանով... կը հովանատրէ երկինքն ու երկիրը...: Երկնային այս... խմբանկարին մէջ... ամպի ծուէններու վրայ նստած դիրքով, կ'երևան չորս խմբագիր արևտարանիչները... բոլորն ալ կարմիր ու լազուարտ զգեստաւորմով...: Նկարին վերին մասը... երկու անկիւններու մէջ... կը ներկայացնէ Գաբրիէլի արևտումը..., հրեշտակապետը, բոսոր պատմունանով... աջ ձեռքին մէջ կը կրէ կուսական ամբոսութեան խորհրդանիշ ծաղկեայ սպիտակ շուշանի ոստը, մինչ միւս անկեան մէջ երևցող կոյսը, ծնրագիր իր աղօթքի

կարմրածածկ գրակալին առջև, որուն վրայ բաց վիճակով հայերէն Ս. գիրքը կ'երևայ...: Մարիամ հագած է դեղնագոյն պարեգօտ և պատմունան...»⁵⁰: Արձանագրութեանից պահպանվել է ներկագիր 4 տող.

Կամարին.

Յիշ(ա)տ(ա)կ է պատկերս հալապցի մահտ(ե)սի Թումանանի որդի տիրացու Յօհաննիս եւ մօրն՝ մահտ(ե)սի Չում(րու)թին, եւ եղբօրն՝ Աբ(րա)համին, եւ քվեր(ա)ցն՝ Շահգ(ա)տին եւ Մարիամին, եւ կողակցուն՝ Լուսիա(յ)ին:

Պատկերի ներքնամասում.

... եւ իւր ... ծն[ողաց] ... | ... Ներսէս[ի]ն ... | ի դուռն Ս(ուր)բ Խ (40) ման[կ]աց ե[կեղեցո]յն, թ[վ]ի Ռ-Ճ-Գ (1655):

Հրատ. ՊՀՀ, էջ 942: Արձանագրութեան երկրորդ և երրորդ տողերը հրատարակվում են առաջին անգամ:

Ճանոթ. 1930 թ. սրբապատկերը լավ վիճակում էր, սակայն «խոնավութենէ մասամբ վնասուած, մասնաւորաբար աջ և ձախ եզերքներու ոսկի յատակի վրայ գծուած 24... մանրանկարները, որոնք առհասարակ եղծուած են ու ոսկին թափած: Ս. Լուսաւորչի և Կոյսի և Յովհաննէս Մկրտչի դիրքերը մասամբ վնասուած են: Տիրամօր և Յիսուսի ոսկեգոծ թագերուն վրայ ժամանակին դրուած կան եղեր, ինչպէս սովորութիւն է, ոսկի կամ արծաթ թանկարժէք թագեր, մեծադիր, բայց ապա հանուած են ու կը մնան միայն բետի հետքերը» (նշվ. աշխ., էջ 942): 2007 թ. սրբապատկերի ստորին մասը քայքայված էր, կտավը՝ տեղ-տեղ շրջանակից բաժանված, իսկ ներքևում գտնվող արձանագրութեանը՝ դժվարընթեռնելի և մեծ մասով անհետացած:

Տարբերբացում. Մյուրմէյանի մոտ «Ռ-Ճ-Գ (1655)-ի փոխարեն՝ «Ռ-Ճ-Գ (1741)»:



50 Նշվ. աշխ., էջ 938-942:

28. Սրբապատկեր «Սանտու Տիրամայր»․ ամրացվել է Մեծ եկեղեցու սրահի հյուսիսային կենտրոնական սյան արևելյան կողմում (1930 թ. գտնվում էր Սբ. Աստվածածին եկեղեցու ավագ խորանի վրա)․ պատկերված է հաստ կտավի վրա և ունեցել է փայտյա ոսկեգոծ շրջանակ (լայն․ 15 սմ), ներկայացնում է Մարիամ Աստվածածինն «...մարդկային բնական մեծութեամբ...: Հագած է մանուշակագոյն կարմիր... պարեգօտ: Գլխուն ու մարմինը ծածկուած են միակտոր կապուտակ հաստ կտավով, պարզ, որուն տակէն կ'երևայ սպիտակ կտու մըն ալ...»⁵¹: Արձանագրությունը՝ ներկագիր, 6 տող հայերեն, որից մի տողը՝ մեկընդմեջ հայերեն, արաբերեն.

Ս(ուր)բ Մ(ա)ր(իա)յն Ա(ստուա)ծածին: | Նկարեցաւ ձեռամբ տ(ե)ր Սկրաչին յ(ի)շ(ա)տ(ա)կ որդ(ո)յն՝ Եղային, ի դուռն Ս(ուր)բ Ա(ստուա)ծածին եկ(ե)ղ(ե)ցուն | ի Հ(ա)յ(ե)պ, թվին Ռ-ՃԺԲ (1663) ամի: Թվին ՌՄԱ (1752) կրկին նորօգեցաւ արդե(ա)մբ մ(ա)հ(տե)սի սաս(ու)նցի Ճանօյին: | Ա(ստուա)ծածին | ... Մ ...: | Կրկին նորօգեցաւ Անդրանիկ Անտոնյան, ՌՆԽԳ (1994):

Արաբերեն.

عمل جرجس حنائيان

Թարգմ. Գործը Ջրջս Հանանյանի:

Հրատ. ՊՀՀ, էջ 189, 966: Վերջին չորս տողերը հրատարակվում են առաջին անգամ:



Ծանոթ. սրբապատկերն իր շրջանակով մի քանի անգամ նորոգվել է: Դրանցից առաջինի մասին 1930 թ. գրվել է. «անվարժ ձեռքեր ոսկեփոշիի նոր խաւերով ծածկած են շրջանակին նախնական գեղեցիկ ծաղկումները... նորոգութեան ժամանակ (1752) նկարիչ(ը)... նկարին ֆօնը ծածկած է ոսկեղեղով...»: Պատկերի վրա եղել են նաև «Արծաթեայ երկու ձեռքեր և թագ մը... որուն չորս եզերքը ամրացուած է նոյնպէս հինգ սնդմ. լայնքով արծաթ երիզներով», որոնց պատճառով գոյացել է «...գամերու բազմաթիւ հետքեր» (նշվ. աշխ., էջ 965): Մեզ հայտնի վերջին՝ 1994 թ. նորոգութեան ժամանակ նշյալ արծաթե իրերը հանվել են, իսկ ոսկեգոծ շրջանակը փոխարինվել է փայտյա պարզ շրջանակով:

51 Նշվ. աշխ., էջ 188, 965-966:

Սկրտիչ քահանան (աշխարհիկ անունը՝ Մուրադ) Ղազար քահանայի և Մարիամի որդին էր: Եղբայրներն էին Բաղդասար սարկավազը և Սարգիսը (ԺԷԳ, էջ 620): Քահանա է ձեռնադրվել 1654-1655 թթ. (նշվ. աշխ., էջ 668): Գրչութեան ուսումը ստացել է հորից (ԺԷԲ, էջ 783) և 1642-1658 թթ. ստեղծել բազմաթիվ ձեռագրեր (ԺԷԳ, էջ 82, 520, 620, 668, 837): Այս սրբապատկերը նկարել է վաղամեծիկ որդու՝ Եղիայի հիշատակին, որը 1654 թ. հիվանդ էր. «...գորղեակն իմ՝ զԵղիա պատահին, զոր խնդրեմք ի տեսնէ, զի պահեսցէ զաս ի կանս իւր և ի մխիթարութիւն մեզ...» (նշվ. աշխ., էջ 620): Հայր Ժուստենինն զը Նյովին վկայում է, որ Սկրտիչ քահանան Հալեպում վերափոխել է երկու պատկերներ (Théâtre de la Turquie, Traduit d'italien en françois, par son auteur le Sr. Michel Febvre, Paris, 1682, p. 294): Դրանք Սյուրմեյան չի կարողացել հայտնաբերել (ՊՀՀ, էջ 191-192), սակայն մեր պրպտումների արդյունքում պարզվեց, որ երկու պատկերները գտնվում են Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու: Հիսուս մանուկի պատկերներից մեկն ամրացված է եկեղեցու սրահի հարավային կենտրոնական սյան վրա, իսկ մյուսը՝ հյուսիսային որմնաշինանում մասում և չունի այդ ժամանակվան պատկանող արձանագրություն (տես Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 27, 109): Տեր Սկրտիչն ունի ևս մեկ աշխատություն (տես Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 29):

Նորոգութեան ընթացքում հին արձանագրության վրա գրվել է նորը. երևում են հնի հետքերը: Հին արձանագրությունից պահպանվել են միայն «Ածածնին | ... Մ...» բառերը: Սրբապատկերը նորոգող նկարիչ Ջրջս Հանանյանի գործերից Հալեպում պահպանվել են այլ սրբապատկերներ (տես Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 46, 60):

Մասունցի խոջա ճանոն Ազատի որդին էր, Խաթունը՝ կողակիցը, որդիները՝ տիրացու Ազատը, Ղազարը և Միասարը: 1740 և 1756 թթ. եկեղեցուն նվիրում է երկու սրբապատկեր (տես Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 53, 60):

29. Սրբապատկեր «Սբ. Մինաս»․ գեղեղված է Սուրբ Մինասի հիշատակին կառուցված խորանում՝ Մեծ եկեղեցու հարավային որմնին (1930 թ. գտնվում էր Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու հարավային լայն սյուներից մեկի վրա): Նկարը, որը պատկերված է հաստ կտավի վրա (չափերն են՝ 151 x 117 սմ), ներկայացնում է Սբ. Մինասին՝ «...հագած... գրահապատ զգեստ...:



Մեջքին վրայ հաստատած է կապարճը, նետերով լեցուն: Իրանը ամրացրած է ծաղկեկար ոսկեպատ գրահի տակ, ոտքերը նույնպես պաշտպանուած: Ուներուն վրայ կը կրէ հողմածածան ծիրանագոյն քիկնոց, լայն: Դէմքը բոտրագոյն է, մազերը սև և մօրսքը ամփոփ: Շուրջը լայն լուսապսակ...: Ջօրավարին ձին սայիտակ է...: Երասանակը ու ճակատի զարդերը կարմիր: Նոյնպէս սանձը, կարմիր կաշիէ: Կտրծքը զարդարուած է արաբական սիրուն և ոսկեզարդ կրծկալով: Բուն կազմածը ծիրանագոյն և ճոխ...: Նկարին վարի շրթունքին վրայ կ'երևան երկու շատ սիրուն մանրամկարներ, սուրբերու դէմքով... և վրանին գրուած իւրաքանչիւրին անունը. Մրն. Երնոզհնէս, Մրն. Գրաբոս, ասոր քով կայ խաչակիրներու տաճարական ասպետներու տարագով, երոպական փեղոյրով, ծիրանագոյն ճոխ զգեստով և կտրծքին վրայ խաչով մանրանկար մը...: Չախջախուած առազակին տակը, մանրատառ կարմիրով գրուած կայ՝ առազակն որ է... կող»⁵²: Արձանագրութիւնը՝ ներկագիր, 7 տող.

Ս(ուր)բ վկայն Զ(րիստոս)ի | Մինաս: | Նկարեցաւ ի Հալապ ձեռամբ | տէր Սկրտիչ ք(ա)հ(անա)- յին: | Յ(ի)շ[ատակ] է տէր (Յ)ովսէփին եւ իւր կողակցին եւ որդոցն ...: | ...նն...դարն մա... | ...մէին...:

Հրատ. ՊՀՀ, էջ 190, 958: Վեցերորդ, յոթերորդ տողերը հրատարակվում են առաջին անգամ:

Ծանոթ. 1930 թ. վնասված էր սրբապատկերի «...մասնատրուպէս վարի աջ անկիւնը, որ այրած է քանիցս անգամ և շատ անխնամ կերպով նորոգուած, կարօտելով հիմնական նորոգութեան: Կռնակին վրայ կ'երևան անխնամ դրուած բազմաթիւ կարկտաններ. վերի կողմը աջն ձախ պատռուած և կարկտուած. կեղտոնի մասը գերծ չէ՝ մեծ ու փոքր պատռուածքներ» (նշվ. աշխ., էջ 956-957): Ներկայումս գտնվում է նույն անխնամ վիճակում:

Տեր Հովսէփը Նամեի և Սթըբուլի որդին էր, երեցկիւնը՝ Սթըբուլը, որդին՝ տիրացու Պողոսը, եղբայրը՝ լուսարար տիրացու Յաղոպշահը (նշվ. աշխ., էջ 411): Քահանա է ձեռնադրվել 1625 թ. (հաշվի առնենք, որ տէր Հովսէփը 1625 թ. նորոգում է ձեռագիր Տաղարան և ինքն իրեն հիշում է որպէս «գնորդնւծ տէր Յովսէփն» (ՅՁՀԶՄ, էջ 188-189): 1661 թ. Հալեպում գրում է Սաղմոսարան (ՊՀՀ, էջ 213-214), իսկ նույն թվականին նրա պատվերով տէր Սկրտիչ քահանան՝ Ավետարան (նշվ. աշխ., էջ 411): Ըստ Երուսաղեմի պատրիարք Մինաս Ամրեցու անտիպ օրագրութեան՝ տէր Հովսէփը վախճանվել է 1695 թ. հուլիսի 15-28-ի միջակայքում (նույն տեղում):

Հաշվի առնելով տէր Սկրտիչ քահանայից մեզ հասած 1663 թ. ստեղծված մեկ այլ սրբապատկեր (տե՛ս Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 28)՝ քվագրում ենք ԺԷ դարով:

30. Եմիփորոն. «...ծիրանի բազմախաչ և բազմապատկեր»⁵³, ամբողջովին կանաչ մետաքսից է, կարմիր թավիշով խառը: Առաջին խաչանիշի վրա՝ ոսկեթելով մետաքսահյուս պատկերների աջ և ձախ կողմերում, կան մարգարտաշար գրերով փակագրեր⁵⁴.

Նկարեցաւ Էմիփորոնս ի քաղաքն Հալապ, ի վայելումն տէր Յակոբ քաջ ռաբունապետն, զոր տէր աստուած մեր բարով վայելել տացէ, ամէն: Կազմեցաւ ի թվականի մերում Ռ և ԾԳ (1634) ամին: Աստուած ողորմի ասեցէք աշխատողաց սորին, ամէն:

Հրատ. **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 218: ՊՀՀ, էջ 393:

Ծանոթ. Եմիփորոնը չենք տեսել: Ալիշանը հիշատակում է Միս քաղաքի Մալր տաճարի զանձատանը պահված սուրբ սպասքի շարքում (**Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 218): Հավանական է, որ այն մինչև Ի դարի սկիզբը գտնվում էր Միսում: 1950 թ. արդեն Հալե-

պում էր (ՊՀՀ, էջ 392-393): Նույն Եմիփորոնի մասին է հիշատակում նաև Բարկեն եպիսկոպոսը, սակայն սխալմամբ թվագրում է 1234 թ. (**Բարկեն եպիսկոպոս**, Հալեպ, էջ 3):

Հակոբ Կարկառեցին՝ որպէս Բերիո բեմի առաջնորդ, պաշտոնավարել է մոտ 1634-1640 թթ.:

31. Սեղանի խաչ. արծաթյա⁵⁵, պահվում է քանդաքանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում: Արձանագրութիւնը՝ փորագիր, 14 տող.

Յիշ(ա)տ(ա)կ է | ս(ուր)բ խաչս | Մոխրատ | Պալոնին | և որդիոցն՝ Խաչատո(ւ)րիին, Մ(ա)րիալմին, Հո(րի)ս(ի)մ(ե)ին, կող(ա)կցուն՝ Ազիէիին, ի դ(ու)ռն Ս(ուր)բ | Զ(ա)ռ(ա)ս(ու)նք եկեղեցո(ւ)ն, թվին Ռ-ՃԺ {ս}Է (1668), ս(ուր)բ տ(ի)ր(ոջ)դ:

Հրատ. ՊՀՀ, էջ 900:
Ծանոթ. խաչի վրա ավելի ուշ արձանագրվել է. «թիւ 3 ծանր(ու)թիւն 260»:

Տարբերեցում. **Մյորմեյանի** մոտ «Մոխրատ | Պալոնին»-ի փոխարեն՝ «Մուրատ Պալիի», «կող(ա)կցուն Ազիէիին ի դ(ու)ռն»-ի փոխարեն՝ «կողակցուն ի դուռն», «թվին Ռ-ՃԺ {ս}Է ս(ուր)բ տ(ի)ր(ոջ)դ»-ի փոխարեն՝ «թիւ հայոց Ռ-ՃԺԵ»:



32. Տապանաքար. «Բարապանի սենեակի մուտքին»⁵⁶. Տապան հանգստեան տր. Մատթէոս քիլի., որ հանգեաւ ի տր., Ռ-ՃԺԷ (1668):

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 14: **Մյորմեյան Ա.**, Պատմութիւն Հալեպի քահանայից, «Բազմավէպ», 1938, էջ 200:

Ծանոթ. տապանաքարը չենք տեսել:

52 Նշվ. աշխ., էջ 189-190, 956-958:
53 **Ալիշան Ղ.**, Միսում, Վեներտիկ, 1885, էջ 218:
54 ՊՀՀ, էջ 393:


55 Նշվ. աշխ., էջ 900:
56 ՊՀԱԳԱՀՏ, էջ 14:

33. Սեղանի խաչ, պահվում է քանդարանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում. «31.5x16 սմ. մեծությամբ... արծաթեայ... ոսկեջրած, պարզ ծաղկով, գունդի մը վրայ: Ծակատին մէջտեղը ոսկեջրած մարմինը փրկչին. վրան ՅՆԹՀ: Չորս թեւերին վրայ կ'երեսան չորս անտարանիչներու խորհրդանշանները, բարձրաքանդակ սիրուն ոսկերչութեամբ, համակ ոսկեջրած...»⁵⁷: Արձանագրությունը՝ ելնդագիր, 11 տող.

Յիշատակ է սուրբ խաչս Ծառահենց | մահտեսի Գրիգորին | եւ կողակցիւն՝ Խանութին, | եւ որդիոցն՝ Վալդանիսն եւ Աբրահ(ա)մին, ի դուռն Ս(ուր)բ | Ք(ա)ռ(ա)սն(ի)ց, թվին Ռ-ՃԺԸ (1669)-ին:

Հրատ. ՊՀՀ, էջ 902:

Ծանոթ. խաչի վրա ավելի ուշ արձանագրվել է. «թիւ 1 ծանր(ութիւն) 350 կ(րամ)»:



34. Սեղանի խաչ. «16x31 սմ. մեծությամբ արծաթեայ... երկու տեղից կտրած եւ վնասուած է: Կռնակին վրայ կայ... յիշատակարանը»⁵⁸.

Յիշատակ է սուրբ խաչս տիրացու Մարկոսին եւ իր հորն՝ Կիրակոսին, եւ իր մօրն՝ Գիմէթին, եւ Նարմելիքին եւ իւր եղբօրն՝ Սաֆարին, ի դուռն Ս. Քառասնից, թվին Ռ-ՃԺԸ (1669):

Հրատ. ՊՀՀ, էջ 902:

Ծանոթ. սեղանի խաչը չենք տեսել: 1926 թ. Սբ. Քառասնից մանկանց կամ Սբ. Աստվածածին եկեղեցու իրերից էր (նշվ. աշխ., էջ 900):

Վերոնշյալ արձանագրությունը Սյուրմեյանի մոտ կրկնվում է այսպէս. «Յիշատակ է Ս. խաչս տիրացու Մկօին եւ հօրն Կիրակոսին եւ մօրն եւ եղբօրն, ի դուռն Ս. Ք. մանկաց: Հայոց Ռ-ՃԺԸ» (նշվ. աշխ., էջ 901):

57 ՊՀՀ, էջ 901-902:

58 Նշվ. աշխ., էջ 902:


35. Սեղանի խաչ, պահվում է քանդարանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում. «...արծաթեայ... 30x17 սմ. մեծությամբ, ոսկեջրած, ծաղկազարդ սիրուն գունդի մը վրայ: Ծակատին մէջտեղը Յիսուսի փոքրադիր մարմինը, ոսկեջրած, չորս թեւերուն վրայ կ'երեսան վեցթեւեան չորս հրեշտակներու նոյնատիպ գլուխներ...»⁵⁹: Արձանագրությունը՝ փորագիր, 9 տող.

Յիշ(ա)տ(ա)կ է | խաչս արապգերլցի մահտեսի Խաչատուրին եւ | կողակցուն՝ Հուրմաթին, եւ հօրն՝ Կիրակոսին, | եւ մօրն՝ Գուհարին, եւ Հռիփսիմէ(ին), Լուսնիկան(ին), Մարիամին | եւ Մարգարին ի դուռն Ս(ուր)բ Քառասնիցն, թվին | Ռ-ՃԻ (1671):

Հրատ. ՊՀՀ, էջ 901: **Քեշիշեան Վ.**, Հալէպի Հայկական գաղթօճակի..., էջ 196: Արձանագրութեան վեցերորդ տողը հրատարակվում է առաջին անգամ:

Ծանոթ. խաչի վրա ավելի ուշ արձանագրվել է. «ծանր(ութիւն) 250 կ(րամ)»:

Տարբերեցում. **Սյուրմեյանի** եւ **Քեշիշեանի** մոտ «Խաչատուրին»-ի փոխարեն՝ «Չատուրին», «եւ մօրն Գուհարին»-ի փոխարեն՝ «եւ կողակցուն Գուհարին»:



36. Սեղանի խաչ. արծաթյա⁶⁰, պահվում է քանդարանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում, արձանագրությունը՝ փորագիր, 9 տող.

Յիշ(ա)տ(ա)կ է | ս(ուր)բ խ(ա)չս մ(ա)ղտեսի Պ(ա)ղտ(ա)ս(ա)րին եւ իւր | կող(ա)կցույն՝ | մ(ա)ղ-


59 Նշվ. աշխ., էջ 900-901:

60 Նշվ. աշխ., էջ 901:

տ|ես|ի | Ղ(ա)րիպ|խաթունին և որդոյ|ւ}ն՝ Ս(ա)ր-
գ(ի)ս(ի)ն, թվին Ռ-ՃԻԲ (1673), | ի դուռն Ս(ուր)ր
Ք(ա)ռ(ա)սունք եկ(ե)ղ(եց)ո(ւ)ն:

Հրատ. ՊՀՀ, էջ 901:

Տարբերբացում. **Սյուրմեյանի** մոտ «Ղ(ա)րիպ|խաթունին»-ի
փոխարեն՝ «խաթունին»:



37. Շուրջառ.

Յիշատակ է շուրջառու Խանումին, որ հանգեսա
ի Քրիստոս, եւ կենակցոյն Ովսեփին ի դուռն Ս. Քա-
ռասնից, թվին հայոց Ռ-ՃԼԹ (1690):

Հրատ. ՊՀՀ, էջ 901:

Ծանոթ. շուրջառը չենք տեսել: 1926 թ. Սր. Քառասնից ման-
կանց կամ Սր. Աստվածածին եկեղեցու իրերից էր (նշվ. աշխ., էջ
900):

38. Աշտանակ. գտնվում էր եկեղեցու հարավային սեղանի
բեմի առջևում⁶¹.

Յիշատակ է Գրիգորին եւ իւր որդուն, Վարդխա-
թունին, ըՍպահանին էր մահտեսի եւ իւր որդուն՝
Արգար տիրացուն ի դուռն Ս. Քառասնից, թվին
Ռ-ՃԻԳ (1694)-ին: Չեռամբ խարբերոցի Եղիայի:

Հրատ. ՊՀՀ, էջ 901:

Ծանոթ. աշտանակը չենք տեսել: 1926 թ. Սր. Քառասնից
մանկանց եկեղեցու իրերից էր (նշվ. աշխ., էջ 900):

Խարբերոց քաղաքը Արևմտյան Հայաստանի համանուն նա-
հանգի կենտրոնն է: Ներկայումս պաշտոնապես կոչվում է Հար-
փուր (Harput):

61 Նույն տեղում:

39. Ջրանան. պահպանվում է քանդարանի վերածված Սր.
Աստվածածին եկեղեցում, արձանագրությունը՝ փորագիր, 2 տող.

Յիշ(ա)տ(ակ) է Խաչերի ո(ր)դի Ղազարին ի
դուռն Ս(ուր)ր Քառասնից, թվին Ռ-ՃԽԶ (1697): |
Լաճգաւո(ւ) Աքարի(ւ)ո:

Հրատ. առաջին անգամ:



40. Սրբապատկեր «Տիրամայրը մանկան հետ». գտնվում էր
երրորդ շարքի աջ սյան մարմարյա պատվանդանին: Պատկեր-
ված էր հաստ կտավի վրա (չափերն էին՝ 145 x 118 սմ) և ուներ
փայտյա ոսկեգոծ շրջանակ (լայն.՝ 12 սմ), որի չորս անկյուննե-
րում ոսկեգոծ ծաղկանկարներ էին: Տիրամայրը «...կ'երևայ սի-
նագարդ կամարի մը տակ, նստած վիճակով, բայց աթոռ չի
նշմարտիր: Կամարին տակ, լոյսին երկու կողմերը կ'երևան վեց
հրեշտակներ, միայն գլուխ սակայն, ոմանք կարճ թևերով...: Տի-
րամայրը հագած է մանուշակի կարմիր ճոխ պարեգոտ, սեղմ և
շատ վայելուչ թևերով, ծածկուած է, գլուխէն վար, լազուարտ
միակտոր և ոսկենկար երիզով ճոխ թիկնոցով, որ աջ ուսին վրայ
կը կրէ աստղայե ոսկենկար զարդանիշ մը...: Տիրամօր... ձախ
ծունկին վրայ նստած է մանուկ Յիսուսը, 3-4 տարեկան, որուն
ծունկերուն վրայ, խաչաձև, կը հանգչին Տիրամօր ձեռքերը: Հա-
գած է մանուշակի կարմիր լման պարեգոտ, ճոխ, թոյլ, մինչև
նաքերը: Աջ ձեռքի երկու մատներով օրհնութիւն կը բաշխէ. իսկ
ձախ ձեռքին մէջ կը կրէ ոսկեպատ Աւետարանը, որուն կողքին
վրայ, ոսկի խաչի մը տակ, կը կարդացուի ՄՏ գիրերը: Մանուկը
նաքերուն վրայ ունի կաշիէ թաթպան, որ փոկերով ամրացուած
է սրունքին վրայ, որ չերեսար սակայն: Իբր դիմագիծ յաջող է և
աւելի գեղեցկացած խարտեաշ խոպոպիկներու տակ: Ունի, մօ-
րը պէս, գոհարագարդ ճոխ թագ»⁶²:

Յիշատակ է Սր. Աժածնին. պատկերն դույումճի
պաշի Մարտիրոսին և հօրն՝ Սամհանին, և կողակ-
ցոյն՝ Ղսմէթխաթունին և Մարիամխաթունին, և որ-
դոցն՝ Պետրոսին և Թուրվանտին, ի դուռն Սր. Քա-
նցն., թվին Ռ-ՃԽԸ (1699) յունիս ամսոյն Ի (20) աժ.
ողորմի ասացէք, ամեն, հայր:

Հրատ. ՊՀՀ, էջ 964:

Ծանոթ. 1930 թ. շրջանակը լավ վիճակում էր, սակայն «...ան-
ուշադրութեամբ թեթև մը վնասուած, մոմի ջերմութենէ...» (նշվ.
աշխ., էջ 962): Սրբապատկերը չենք տեսել:

Ղույումճի պաշի – թրք.՝ գլխավոր ոսկերիչ:

62 Նշվ. աշխ., էջ 962-963:

41. Գավազան. «...տօսայտ, գլուխը ոսկեջրած արծաթ»⁶³.

Յիշատակ է Կարապետին եւ հօրն՝ Դանիէլին, որդուն՝ տիրացու Պետրոսին, ի դուռն Ս. Ք. մանկանց, թիւ ՌՃԽԸ (1699):

Հրատ. ՊՀՀ, էջ 902:

Ճանոթ. գավազանը չենք տեսել: 1926 թ. Սր. Քառասնից մանկանց կամ Սր. Աստվածածին եկեղեցու իրերից էր (նշվ. աշխ., էջ 900):



63 Նշվ. աշխ., էջ 902:



ռանց հաշուելու արծաթեայ պատումանդանը: Լայնքն է 85 սնդմ. իսկ թևերուն հաստ և պատկերազարդ մասի լայնքն է 18 սնդմ., և նեղ մասը՝ 8,5 սնդմ.: Պատումանդանը 4,5 սնդմ. բարձր է: Բուն խաչը կը հանգչի գումախի մը վրայ, որուն տրամագիծն է 32,5 սնդմ.: Փողածև պատումանդանը... գեղեցիկ է երիզածև զարդը, հետզհետե՛ նեղացող վարդակներով, որ կը վերջանայ գումախն տակ ...գումարը... սիրուն է իր նուրբ արուեստովը, ուր կը տեսնուին վեց անջատ վարդակներ, դեպի գումախն երկու բևեռները, կան նոյն ոճով վեցական կիսավարդակներ: Բուն խաչը, կենդրոնական մասին մէջ, վրան կը կրէ Յիսուսը, ծոյլ արծաթ և ոսկեզօծ, 16 սնդմ. բարձրութեամբ, բազկատարած: Քրիստոսի մարմինին ստորոտը կ'երևայ... հրեշտակի սիրուն և ցգուն գլուխ մը: Գլխուն վերև, երկու հրեշտակներու գլուխներու միջև, դրուած է զիբ վնասու տախտակը, 4x3 սնդմ. մեծութեամբ, ուր կը կարդացուի *Ի. Ն. Դ. Խ.*: Խաչեային երկու ուղեքերուն աջ ու ձախ քովերը կանգնած են 7 սնդմ. բարձր երկու լացող կիներ: Դեպի չորս թևերուն վրայ չորսական մասնը գամերով բռնուած բարձրաքանդակ տախտակներ: Առաջին ծաղկազարդ յատակի վրայ վեց-թևեան հրեշտակ մըն է, յաջող դիմագծութեամբ: Այս հրեշտակները երեք հաստ են, փոխան չորսի: Խաչեային աջ ու ձախ կողմերն ու ստորոտը, իսկ գլխուն վերև հրեշտակի տեղ դրուած կայ, միևնոյն մեծութեամբ, Յիսուսի նկարը, ծաղկազարդ տերևիկներու միջև, որոնք տիրական զարդերն են խաչի բոլոր նկարներուն: Բաց գերեզմանին երկու քովերը, նստած դիրքի մէջ, կ'երևան երկու հրեշտակներ: Յիսուս ունի լուսապսակ, աջ ձեռքը դեպի վեր, օրհնութիւն բաշխող վիճակով. իսկ ձախ ձեռքին մէջ կը կրէ յարութեան աւետարան դրօշը: Այս չորս նկարներուն կը յաջորդեն միևնոյն մեծութեամբ, չորս ա-

ւետարանիչներու յաջող նկարները, միշտ բարձրաքանդակ... ունենալով զիրենք խորհրդանշող մարդը, առիծը, ցուլն ու արծիւն...: Աւետարանիչները իրենց ծունկերու վրայ ունին բացուած մագաղապը, որուն վրայ կը գրեն ձեռքի գրիչով: Դիտելի է, որ չորս խորհրդանշանները դրուած են մագաղապներուն կից: Աւետարանիչներուն լուսապսակները շատ որոշ են և մահիկի ձևով: Սրտածև տերևիկներ կը զարդարեն չորս պնակիտներու եզերքները: Խաչի չորս լայն թևերուն վրայ կ'երևան չորս նոյնատիպ նկարներ, բարձրաքանդակ, 12x10 սնդմ. մեծութեամբ, երեքկողման նուրբ եզերազարդի մէջ: Առաջին նկարը, միշտ յաջող, կը ներկայացնէ Ս. Կոյսը, բազկացը մէջ կրելով կէս հողանի Յիսուս մանուկը՝ որուն մէկ ձեռքը կ'երկարի մօրը վիզին: Կոյսը հազած է ճոխ պարեգօտ և վրան կը կրէ ծաղկենկար փիփօն՝ որ գլուխը վայելչօրէն ծածկելով, կը ծածկէ նաև ամբողջ մարմինը: Գլխուն լուսապսակն ու արքայական ճոխ թագը կը բռնեն երկու հրեշտակներ...: Նոյնատիպ նկարներու երեք կողմերուն վրայ կ'երևան թևաւոր մէյմէկ հրեշտակներ, ընդամենը տասներկու հաստ, որոնց երկու ձախակողմիները ինկած են սակայն: Իսկ այս ամբողջ նկարուն խաչը առնուած է 1,25 սնդմ. լայն շատ սիրուն և համակ ծաղկենկար եզերազարդի մը մէջ, որ դեպի պատումանդանը կը վերջանայ գոյգ մը սիրուն վարդակներով: Խաչին չորս անկյունները զարդարուած են արտաքին չորս նոյնատիպ ճանաչներով, որոնք արուեստի յաջողութիւններ են: Կռնակի մասը պարզ է, միայնակալ արծաթ յատակով, ամբողջովին յատկացուած ընդարձակ յիշատակագրութեամբ: Աջ և ձախ թևերուն վրայ հաստատուած են արծաթեայ մէյմէկ հաստ օղակներ, ի հարկին բարձր տեղէ մը խաչը կախելու և կամ թափօրը շարժած պահուն երկու կողմերէն և ժապաւե՛ններով հետևելու համար: Վերին թևը կը կրէ սիրուն ծաղկեփունջ մը, վրան քառաթև խաչ: Նման խաչերով վերջաւորուած են նմանապէս, միշտ ծաղկենկար, թևերուն վրայ երեցող յիշատակագրութիւնները: Յիշատակարանը... կանոնատր գծատողերու մէջ, մեծագիր, սիրուն բոլորգիրով...»⁶⁴: Արձանագրութիւնը՝ ելնդագիր, 50 տող.

Ի հ(ա)յր(ա)պետ(ութեան)ն Մատ|է|ուս կ(ա)թ(ո)-
 դ(ի)կ(ո)սին Ամ(ենայն) | Հայոց Տանն Կիլիկիոյ | և ի
 առաջնորդ(ո)ւ|թե(ամբ) Ս(ուր)բ Ե(րուսաղ)էմ(այ)
 տէր Մի|նաս ա(ստուած)ծ|մ|աբան վ(ա)րդ(ա)պ(ե-
 տի)ն, | ի թվ(ա)կ(ա)ն(ութեան)ս հ(ա)յ(ո)ց Ռ-Ճ|Ծ
 (1701) ամին դ(ե)կտ(ե)մ|բ(ե)րի ամսոյ | Ը (8) : | Յ(ի)-
 շ(ա)յտ(ա)կ է ս(ուր)բ խ(ա)չս Ս(ուր)բ | Զ(ա)ռ(ա)ս-
 նից եկ(ե)ղ(ե)ց(ու)ն | ա(մենայն)ն ք(ա)հ(անա)յից,
 տօլ|վաթաւորաց | և հաւասար ժ(ո)ղ(ո)վրդե|լան և ե-
 րեսփոխան|ութեանց ձեռ|ամբ մահտ(ե)սի | Պետրո-
 սին, մ(ա)հտ(ե)սի | Առաքելին, մ(ա)հտ(ե)սի |
 Մկրտչին, շա|մաս Սիմա|սօսին. | սոցին միջնորդ|ու-
 թ(եամ)բն կ(ա)տ(ա)րե|ցաւ խ(ա)չս այս, | յ(ի)շ(ա)-
 տ(ա)կ եղին | ի Ս(ուր)բ Զ(ա)ռ(ա)ս(ո)ւն | մ(ա)ն-
 կ(ա)նց եկ(ե)ղ(ե)ցին, | որ է Հալապ | քաղաք և Լիս
 աշխ(ա)տ(ո)ղ և շին|ող ս(ուր)բ խ(ա)չս, որ ա|շխ(ա)-
 տ(ե)ցաւ | ի վ(ե)ր(այ) ս(ո)ր(այ) դոյ|մ|մի Կ(ա)ր(ա)-
 պետն, որ | բ(ա)զ(ու)մ աշխ(ա)տ(ա)նք | ունի. ա(ս-
 տուած)ող(ո)րմ|ի աս(ա)ցէք իւր նն|ջե(ցե)լ(ո)նց և
 բով(ա)ն|դ(ա)կ ք(ա)հ(անա)յից և ժ(ո)ղ(ո)վրդ(ո)նցն
 և երես|փ(ո)խ(ա)ն(ա)ցն, գոր ի վ(ե)ր(այ) | գրեալ կան
 և համ|օրէն հ(ա)ւ(ա)տ(ա)ց(եա)լ ժ(ո)ղ(ո)վրդե(ա)ն,
 որ մասն և | բ(ա)ժին ունին տրբօք | և ող(ո)րմ(ո)ւ-
 թ(եամ)բ ա(ստուած)ող(ո)րմ|ի ասացէք, | ամէն:

Հրատ. ՊՀՀ, էջ 704: 42-րդ և 43-րդ, ինչպես նաև 41-րդ և 44-րդ տողերից որոշ մասեր հրատարակվում են առաջին անգամ:

64 Նշվ. աշխ., էջ 702-704:

Ծանոթ. 1930 թ. Հիսուսի գլխավերևում տեղադրված «գիր վնասու տախտակ»-ի երկու կողմերում գտնվում էր բարձրաքանակ հրեշտակների մեկական գլուխ: Գրանք 2007 թ. գոյություն չունեին: Չկային նաև թևավոր խաչի ստորին մասում գտնվող բարձրաքանակ հրեշտակների երեք գլուխներից երկուսը և խաչի կենտրոնական չորս անկյունները զարդարող արտաքին չորս ճաճանչներից մեկը:

Մատթեոս Կեսարացի կաթողիկոսը պաշտոնավարել է 1694-1705, Երուսաղեմի պատրիարք Մինաս վարդապետ Անդեղին՝ 1697-1704 թթ.:

Շամմաս Միմավոնը 1695 թ. Հալեպի Ավետարանի երկրորդ ստացողն է: Կինն Աճեմխան խաթունն էր, գավակները՝ Շահինը, Հովհաննեսը և Նորխաթունը (ՅՉՀԶՄ, էջ 42):

Շամմաս – արաբ. լուսարար:

43. Սկուտեղ. պահվում է քանդաքանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում, արձանագրությունը՝ ելնդագիր, 1 տող.

Յիշատակ է Ս(ուր)ք Քառա(ս)նից եկեղ(ե)ցուն ե...ոյի... ե...սաքիրայ: Յի վա(յ)ելունն Ալիքիսանոս վարքապետին, թվին Ռ-ՃԾԱ (1702):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. սկուտեղի վրա ավելի ուշ արձանագրվել է. «թխ19»:



44. Կանթեղ.

Յիշատակ է Գրիգորին և կողակցին և որդուցն՝ Սկրտիչին և Վարդանին, Ռ-ՃԾԱ (1702):

Հրատ. ՊՀՀ, էջ 909:

Ծանոթ. կանթեղը չենք տեսել: 1926 թ. Սբ. Քառասնից մանկանց կան Սբ. Աստվածածին եկեղեցու իրերից էր (նշվ. աշխ., էջ 900):

45. Սրբապատկեր «Անեղ դատաստան» (չափերն են՝ 3 x 1,5 ս)⁶⁵. ամրացված է Մեծ եկեղեցու հյուսիսային որմնի կենտրոնական մասում, արձանագրությունը՝ ներկագիր, 58 տող, որից 20 տողը՝ արաբերեն.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է դատաստանապատկերս Ս(ուր)ք Քառասնից, հաճթեճ քահ(ա)նա(յ)ից եւ ժողովրդոց, շինեցաւ աշխատութեամբ ի մօճնութե(ա)ն Կարապետի որդի մահտեսի Գրիգորին ձեռամբ, ա(ստու)ծ լուսաւորէ զհոգին, ամէն, | թվին հայոց Ռ-ՃԾԷ (1708) |աջ որդուն ...են ...տն ...:

65 Նշվ. աշխ., էջ 970-971:

Արաբերեն.

وكان المجتهد يعمل هذا الدينونة المكرمة المقدسي كركور الشماع ابن المقدسي كراييد بالتيام الكهنة المسيحيين الى كنيسة الاربعين شاهد المعظمين في مدينة حلب، المحروس فيساک کلمن نظرھا يترحم على والديه و نطلب له المغفرة من الله تعالي و ذلك بتاريخ سنة مسيحية ١٧٠٨، صورھا بيده الفانيه الحقيق قسيس نعمة الله ابن خوري يوسف المصور و ابنه حانانيا فيساک کلمن نظرھا يدعي لهما بالغفران، ذلك بتاريخ سنة سبعة الف و مائتين وستة عشر لايينا ادم عليه افضل التحية] و السلام.

Թարգմ. Այս պատկերը պատրաստվեց Հալեպի Քառասնից մանկանց եկեղեցու համար բոլոր քահանաների և մահտեսի Կարապետի որդու՝ մոմագործ մահտեսի Գրիգորի նյութական օժանդակությամբ: Ով որ նայի սրան, թող ասի՝ աստված ողորմի նրան և նրա ծնողին, փրկչի 1708 թ.: Մահացու ձեռքով նկարեց նկարիչ Խուրի Յուսեֆի որդի անպիտան տեր Նումե Ալլահը և որդի՝ Հանանիան ..., ով որ նայի սրան, թող ասի՝ աստված ողորմի նրանց: Մեր հոր՝ Ադամի 7216 (1708) թ.:

Պատկերված դրվագներից ցած՝ հայերեն և արաբերեն նույն բովանդակությամբ.

Վայ այնօցիկ, որք ծուլանան և ոչ | գան յեկեղեցին յաւուրն կիրակէի:

هو لاي الذين ينامون ايام الاحد وما يبخطروا القداس.

Կանայք, որք դեղեն | զերեսս իւրեանց:

هو لاي الذين يزينون وجوههم.

Երեսապաշտք | մարդիկ են սորա:

هو لاي المرابين.

Ականջադրողք, | քանսարկուր:

هو لاي الذين يتنصتون على غيرهم و يرمون | الفتن.

Կանայք, որք ոչ սնացուցնեն | զորդիս որբոց և այրեաց:

هو لاي النسا الذين ما بيرضعوا اولاد الفقراء و ايتام.

Որք ուտեն զստացուածս | եկեղեցեաց և վանօրէից:

هو لاي الذين بياكلوا مال الديوره الكنائس.

Արբեցողք և շուայտք | և որովայնապաշտք են:

هو لاي السكيرين و الحنجرائيين.

Նախանձոսք անցողք | ղխակալք և նենգաւորք:

هو لاي مبغضين حقوقين حسودين.

Զօրենքն թեթևցնողք | և արհամարիողք կանոնցն:

هو لاي المتجاوزين قوانين الله ...

Հայիոյիչք և իշոցնատուր:

هو لاي المجدفين على الله.

Հրպարտք, մեծամիտք | և ինքնահաւանք:

هولاي المتكبرين المغرورين.

Ա(ստուծո)յ անուամբ | սուտ երդմնողք:

هولاي الحالفين بالباطل.

Սուտ վկայողք | կաշառիւք:

هولاي الشاهدين بالزور.

Մեր(ե)ալն ըզգաւ տվողք:

هذا المرابي.

Գողք և մարդախպանք են սոքա:

هولاي القتلة و السرّاق.

Հրատ. ՊՀՀ, էջ 971: **Ճեպեճեան-Խապայեան Լ.**, Բժիշկ Ռոպերդ Ճեպեճեան և իր նամակները, «Տարեւ. հայագիտական տարեգիրք», Հալեպ, 2008, էջ 407: Հայերեն արձանագրության վերջին տողը և արարերենն ամբողջությամբ հրատարակվում են առաջին անգամ:

Ջրպարտողք զընկերս իւրեանց:

هولاي المتكلمين في عرض الناس.

Ճանոթ. Աղամի քվականի սկիզբը, ըստ արարչության կայսերական քվականի, մ.թ.ա. 5508-ն է: Հետևաբար 7216-5508 = 1708 թ. (զուգահեռ օրինակները տես **Աբրահամյան Ա.**, Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973, էջ 125):

Շնացողք և | պոռնիկք:

هولاي الفسقة و الزناه.

Հանանիայի երկու այլ աշխատությունների մասին տես Սր. Քառասնից մանկանց եկեղեցու № 48 և Սր. Աստվածածին եկեղեցու № 14 արձանագրությունները:

Անողորմքն և | խիստասիրտք:

هولاي الظلمة.

Կարապետի որդի մոմագործ Գրիգորը Սր. Քառասնից մանկանց եկեղեցուն 1717 թ. նվիրում է մեկ այլ սրբապատկեր (տես Սր. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 48):



46. Սրբապատկերների խումբ. առանձին սրբապատկերներից բաղկացած պատկերախումբը 1930 թ. Մեծ եկեղեցու ավագ խորանում էր, «...ուր տիրող նկարն է... Աստուածամայրը, Յիսուս Մանուկ գիրկը: Այս կենդրոնական նկարը, ինչպես նաև երկու քովնտի և երեք վերադիր փոքրիկ նկարները, ամբողջովին փայտի վրայ գծուած են...: Աստուածամոր նկարս ունի 1.26x0.79 մետր մեծութիւն և առնուած է սիւնագարդ, փայտէ, ոսկեջրած գեղեցիկ շրջանակի մը մէջ, և որոնցմէ դուրս երկարած են ուրիշ երկու նկարներ: Չախ կողմինը կը ներկայացնէ Յովհաննէս Սկրտիչը, իսկ աջ կողմինը՝ Յովսէփ Աստուածահայր...: Աստուածամայրը... ծիրանագոյն ներքնագգեստի մը վրայ հագած է մանուշակի կարմիր ճոխ պարեգօտ մը, որ կուրծքին վրայ ոսկի մուրք կամարով մը վայելչօրէն պարաւանդուած է: Այս բոլորը կը ծածկէ, թեթօրէն, մութ կանաչ ունոց մը...: Արծաթայ սիրուն թագ մը գետեղուած են Տիրամօր և Մանկան գլուխներուն վրայ... աջակողմեան յաւերածական նկարը կը ներկայացնէ Ս. Յովհաննէս Սկրտիչ, ոտքի կանգնած վիճակով... հագած է մութ կապտագոյն բրդեղէն ներքնակ...: Ունի մանուշակի կարմիր թիկնոց...: Տիրամօր ձախ կողմի նկարը կը ներկայացնէ Յովսէփ Աստուածահայր...: Ունի կանաչագոյն պարեգօտ, որ... մէջքին վրայ սեղմուած է սև պարզ գօտիով մը: Աստուածահայր վրան կը կրէ մանուշակի բաց կարմիր փիլոն մը, որ կուրծքին վրայ ճարմանդուած է...: Այս երեք անջատ նկարներն ալ ունին իրենց վերադիր փոքրիկ նկարները, միշտ փայտի վրայ և ոսկեգօծ գեղեցիկ փոքրիկ պնակիտներու մէջ ամփոփուած: Տիրամօր վերևի բոլորշի նկարը կը ներկայացնէ Ս. երրորդութիւն, ուր կ'երևան հայր Աստուած, կարմիր պարեգօտով, դէղին գօտիով և կապտագոյն թիկնոցով, ալեգարդ... և Յիսուս՝ ծիրանեփայլ, առատ մագերով...: Յովհաննէս Սկրտիչ վերադիրն է Յիսուս, սքանչելի մետալիօնի մը ձևովը...: Ասոր հանդիպակաց վերջին նկարիկն Տիրամայրը կ'երևայ դէմքի միևնոյն շնորհալի փայլը: Գլուխը և ուսերը կապոյտ կտաւէ միևնոյն լաչակն է, որ կը ծածկէ»⁶⁶: Արձանագրութիւնը՝ ներկագիր, 12 տող.

«Տիրամայրը մանկան հետ» պատկերին.

Օծաւ ի Գարբիէլ եպ(ի)սկ(ո)պոսէ Սեփաստա-
ցոյ: | Յ(ի)շ(ա)տ(ա)կ է պատկերս յատուկ և հասա-
րակ | լուսաւորչադաւան ժողովրդեանս հայոց | {1}
Ս(ուր)ք Խ (40) (Քառաս)նից եկեղեցիս, որ ի Բե-
րիեայ, թվին ՌՄԺԷ (1768)-ին: | Ա(ստուա)ծ ողորմի
յ(ի)շ(ա)տ(ա)կ եղող(ա)ց ն(ա)խ Յ(ա)կ(ո)քճ(ա)նին
և զարմից ն(ո)ր(ա) Ամիր(ին), Ռ-ՃԿ (1711) թվին | և
վերջինն, որ ի նորոյ շինել տվողացն և աշխ(ա)տ(ո)-
ղիս Յակոբ քահանայ:

«Սբ. Հովհաննէս Սկրտիչ» պատկերին.

Սուրբն | Յոհաննէս | Սկրտիչ:

«Սբ. Հովսէփ Աստվածահայր» պատկերին.

Ս(ուր)ք Յովսէփ, | որ անանցեալ | Ա(ստուա)-
ծահայր:

Հրատ. ՊՀՀ, էջ 721, 913-914:

Ծանօթ. ներկայումս պատկերախումբն իրարից անջատել և տեղադրել են հետևյալ կերպ. Տիրամօր պատկերն իր վերադիր պատկերով՝ Մեծ եկեղեցու ավագ սեղանի վրայ, Սուրբ Հովհաննէս Սկրտիչի պատկերն իր վերադիր պատկերով՝ ավագ խորանի հանդիպակաց հյուսիսային սյան հարավային երեսին, իսկ Սուրբ Հովսէփի պատկերն իր վերադիր պատկերով՝ ավագ խորանի հանդիպակաց հարավային սյան հյուսիսային երեսին:

Ըստ Սյուրմէյանի՝ արձանագրութեան վերջին տողն է. «...ա-
րարեբէն՝ ձեռամբ Ծրճի որդի Հանանիայի» (նշվ. աշխ., էջ 721,
914): Մենք, սակայն, այս արձանագրութիւնը չենք տեսել:

Սրբապատկերի հեղինակ նկարիչ Ջրջս Հանանյանի գործե-
րից Հայկապոմ պահպանվել են 1752 թ. և 1756 թ. սրբապատկեր-
ներ (տես Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 28, 60):



Տարբերակ. Սյուրմէյանի մոտ «Ռ-ՃԿ քվ(ի)ն»-ի փոխա-
րեն՝ «Ռ-ՃԿԹ»:

66 Նշվ. աշխ., էջ 911-914:

47. Կանթեղ.

Յիշատակ է կանթեղս մահտեսի Խիտավերտուն և կողակցին՝ Մարիամին, և որդուն՝ մահտեսի Նուրիճանին, և դստերցն՝ Լուսիային, Խաթունին, ի դուռն Ս. Ք. մանկանց եկեղեցուն, ք. հայոց Ռ-ՃԿ (1711):

Հրատ. ՊՀՀ, էջ 909:

Ծանոթ. կանթեղը չենք տեսել: 1926 թ. Սր. Քառասնից մանկանց կամ Սր. Աստվածածին եկեղեցու իրերից էր (նշվ. աշխ., էջ 900):

48. Սրբապատկեր «Սր. Գևորգ գորավար». յուղաներկ նկարը, որը պատկերված է ընկուզենու փայտի վրա (չափերն են՝ 136 x 99 սմ) և ունի փայտյա սկեզոծ շրջանակ (լայն. 13 սմ), ներկայացնում է Սր. Գևորգին՝ «...աշտանակած... մոխրագոյն... նժոյգի մը վրայ...: Երիտասարդ գորականը... նրբաղէմ, անմօրուս, գանգուր առատ մագերով, որոնք կը վերջանան շքեղ լուսապանակով մը, համակ ոսկի և նուրբ փորագրութեամբ: Մէջքը սեղմ, կուրծքը ցցուն, պորտէն վար ոսկեհիւս գօտի՝ որուն երկու կողերէն կ'իջնեն կանաչ ու ոսկի թաթպաններու մէջ...: Բագովկները սեղմուած ոսկեպատ գրահով...: Բոցագոյն թիկնոցը, գոհարազարդ ճարմանդով մը կուրծքին վրայ կոճկուած, կը մնայ ալեծածան, օղին մէջ: Աջ ձեռքով օղին մէջ բռնած է սուրբ...: Չախ ձեռքով բռնած է ճիւղին ականջը, ուժգին, մինչ կարմիր լեզուն դուրս կախուած է երախէն, որուն սպիտակ ատամները կ'երևան: Փոթորկոտ սև ամպերու ալիքներուն մէջ կ'երևայ իսկատիպ, նստած դիրքով պասկաղիթ Յիսուս, կանաչ ու կարմիր հանդերձանքով...: Նկարին աջ կողմը կ'երևայ Գիոկղետիանոս կայսեր գաթազարդ պալատը, երկյարկանի, շքեղ, որուն վերագոյն պատշգամբէն կը դիտեն կայսրը, կայսրուհին, որոնց հետ կ'երևան երկու պալատականներ...: Գիոկղետիանոս... հագած է կարմիր պարեգօտ և ճոխ կանաչ պատմունճան, կոճկուած...: Թագուհին, թագակիր, վայելուչ է հանդերձով և արդուզարդով. իսկ աւելի յատկանշական են քովերնին կեցող... երկու պալատականները, իրենց կարմիր ու կանաչ տարօրինակ գլխանոցով, դէպի տես կախ, փորագիր ու նկարուն, որոնք կը յիշեցնեն եէնի-չէրիններու ժամանակի գլխանոցները, նոյն ձևի հանդերձանքով... Լիբիոյ թագաւորին աղջիկը... հասած է պալատին ամբոցի գոց դրան առջև և երկու ձեռքերը դէպի յառաջ, ցոյց կու տայ գոց դուռը, որուն բանալիներն են որ վերէն կը նետուին: Իշխանուհին կանաչ ու կարմիր ճոխ հանդերձանքով, գլուխը թագ...: Նկարիս համակ ոսկեղեղ յատակին վրայ, կարմիրով և յունարէն գլխազրով արձանագրուած կայ հետևեալը.- Սուրբ Գևորգ մեծ նահատակ և առաջնորդ»⁶⁷: Արձանագրութիւնը՝ ներկագիր, 4 տող, որից 1 տողը՝ արաբերէն.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է Ս(ուր)բ Գ(և)որգա պա(տ)կերքս մ(ա)հա(ե)սի Գ(ր)իգորին և հօրն՝ մ(ա)հա(ե)սի Կարա- ջր}պե(տ)ին, ի դուռն | Ս(ուր)բ Քառասուն մանկան եկեղեցոյն, թվին Ռ-ՃԿԶ (1717): Նկարեցաւ ձեռամբ տէր | Նումէի {ն} որդուն՝ Հանանիա(յ)ին, ազգէն Ռն- ս(եան)ց, թվա(կա)ն Աղամա ԻՄԻԲ (1714) ամին:

وقف هذه الايقونة المقديس كركور بن المقديس كراييد
لكنيسة الاربعين شاهد بمحروسة حلب، صورها بيده الفانيه
العبد الضعيف حنانيا ابن القس نعمة الله ابن الخوري يوسف
المصور سنة للحد ١٧١٧.

Թարգմ. Պատկերը նվիրեց Սուրբ Քառասնից մանկանց եկեղեցուն մահտեսի Կարապետի որդին՝ մահտեսի Գրիգորը: Մահացու ձեռքով նկարեց տկար ծառա Հանանիան, որը նկարիչ Խուրի Յու-

67 Նշվ. աշխ., էջ 950-953:

սեֆի որդու՝ տեր Նումե Ալլահի զավակն է, 1717 թվականին:

Հրատ. ՊՀՀ, էջ 953: Արաբերէն արձանագրութիւնը հրատարակվում է առաջին անգամ:

Ծանոթ. 1930 թ. շրջանակի ներքին եզրը գունաթափված էր, ջնարակը՝ տեղ-տեղ թափված, իսկ «քուն նկարը անվնաս, նորոգութեանց ատեն անվարժ վրձիններ, չարաչար վարուած... խաթարելով իսկական արժէքը...» (նշվ. աշխ., էջ 950-951): Ներկայումս սրբապատկերը գտնվում է նույն անխնամ վիճակում:

Հանանիայի երկու այլ աշխատությունների մասին տես Սր. Քառասնից մանկանց եկեղեցու № 45 և Սր. Աստվածածին եկեղեցու № 14 արձանագրությունները:

Կարապետի որդու՝ Գրիգորի մասին տես Սր. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 45:

Տարբերություն. Սյուրմէյանի մոտ «Նումէի {ն}»-ի փոխարեն՝ «Ռումէին», «ազգէն Ռոն(եան)ց»-ի փոխարեն՝ «ազգէ (Յ)ունաց», «Աղամա ԻՄԻԲ»-ի փոխարեն՝ «Աղամայ ի ՍԵԻԲ»:




49. Մեղանի խաչ. պահվում է թանգարանի վերածված Սր. Աստվածածին եկեղեցուն, «36x22 սմով. մեծութեամբ... արծաթեայ... ոսկեջրած շատ նուրբ ծաղկունով գունդի մը վրայ...: Ճակտին մէջտեղը ոսկեջրած մարմինը փրկչին, 7x7 սմով. մեծ: Չորս



67 Նշվ. աշխ., էջ 950-953:

սրտածն թեւերուն վրայ չորս անտարանիչները խորհրդանշող չորս պնակիտներ...»⁶⁸: Արձանագրությունը՝ փորագիր, 9 տող.



Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ խալչա Մաշատորի | որ-
դուն՝ Շրճօսին, և դադիրն | Աճամխանին, | ի դուռն
Ս(ու)րբ Քախատուն մանկան | իկեղեցուն, | թվին
Ռ-ՃԿԸ (1719):

Հրատ. ՊՀՀ, էջ 901:

Ծանոթ. խաչի վրա ավելի ուշ արձանագրվել է. «թիւ 6 ծան-
ր(ութիւն) 350 կ(րամ)»:

Տարբերակում. **Մյուրմէյանի** մտտ «Մաշատորի»-ի փոխարեն՝
«Խաշատորի»:

50. Աշտանակ.

Յիշատակ է շամատանս մահտեսի Գրիգորին եւ
կողակցուն՝ Ալմաստին, ի դուռն Ս. Քառասնից եկե-
ղեցուն, թվին Ռ-ՃԿԹ (1720):

Հրատ. ՊՀՀ, էջ 901:

Ծանոթ. աշտանակը չենք տեսել: 1926 թ. Սք. Քառասնից
մանկանց կամ Սք. Աստվածածին եկեղեցու իրերից էր (նշվ.
աշխ., էջ 900):

Շամատան – արար.՝ աշտանակ:

51. Սրբապատկեր «Տիրամայրը մանկան հետ». ամրացված է Սք. Աստվածածին նոր եկեղեցու մուտքից վեր: Կտավի վրա պատկերված նկարի (չափերն են՝ 74 x 53 սմ) փայտյա ձվածն շրջանակը «...նուրբ է և կը ներկայացնէ որթատունկի ծիւղերու և ողկոյզներու սիրուն հիւսկէն մը, երկու կողմերը ոսկեգօծ երկու փոքրիկ հրեշտակներով...»: Նկարի մեջ Մարիամ Աստվածածինը «...հայ գիւղացիի կատարեալ տիպարն է...: Վարդագոյն լայն-
եզր և մեջքը գօտիով մը պարաւանդուած պարեգօտ մը, հագվի

68 Նշվ. աշխ., էջ 902:

կ'երևայ միակտոր, լայն, հարուստ ու կապուտակ փիլոնի մը տակ, որ ամբողջովին ծածկած է մարմինը, գլուխէն մինչև ոտքե-
րը, որոնցմէ մէկը միայն կ'երևայ, գեղջկական բուրդէ հաստ կարմիր գուլպայով: Գլխուն լաշակը տակէն կ'երևայ ճերմակ մարմնաշը, զոր կը կրեն տղասկան կիներ: Սպիտակ լայն վզնոց մը, փողկապածն, կը ծածկէ Տիրամօր վիզը: Դէմքը անմեղունակ, վարդագոյն, անժպիտ, անչկոտ. աջ ձեռքին մէջ կը կրէ սպիտակ շուշանի ծաղկած ճուղ մը: Մանուկ Յիսուս... հագած է անուշ կարմիր պարեգօտ մը, մէջքը սեղմուած...: Յովհաննէս Սկրտիչ կանգնած է Տիրամօր աջ դին, բազկացը մէջ կրելով սիրուն գառ-
ունկ մը և դրօշագարդ խաչափայտը: Ուղտի մորթենի մը կիսովին կը ծածկէ իր մարմինը, կարմրագոյն կիսավարշամակով մը...: Տիրամօր ձախ կողքին կանգնած է... հրեշտակը, գոյգ մը քներով, ձեռքերը իրարու մէջ, ժպտուն. հագած է բաց կարմիր պարե-
գօտ»⁶⁹: Արձանագրությունը՝ ներկագիր, 6 տող.

Յիշատակ է պատկերս այս ի դուրն Քառ(ա)ս-
նից մանկանց եկե(ղե)ց(ուն) | յԱլմայ գեղջէն կա-
մ(ա)րակապցի Ադայեկեան մ(ա)հ(տես)ի Սկրտչի |
որդի պարօն Ալիքսան բարեջան աղային, որոյ յի-
շ(ատա)կն | օրհնու(թեամ)բ եղիցի: | Կրկին նորոգե-
ցաւ Անդրանիկ Անտոնյան, | Ռ-ՆԽԳ (1994)-ին:

Հրատ. ՊՀՀ, էջ 968:

Ծանոթ. 1930 թ. գտնվում էր Սք. Աստվածածին հին եկեղեցուն (նշվ. աշխ., էջ 967), իսկ ավելի ուշ փոխադրվում է Սք. Աստ-
վածածին նոր եկեղեցի, որտեղ էլ պահպանվում է մինչ օրս:

Արձանագրության մեջ «որոյ յիշ(ատա)կն»-ի փոխարեն գրվել է «արոյ ցիշկն», որը մեր կարծիքով արվել է կամ նորոգ-
ման ժամանակ, կամ ի սկզբանե այդպես է եղել:

Կանարակապ գյուղը գտնվում է Արևմտյան Հայաստանի Խարբերդի մահանգի Ակն գավառում՝ Ակնից 2 կմ հարավ-
արևելք: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Թոյբելեն (Toybelen):



69 Նշվ. աշխ., էջ 966-967:

52. Աթոռ. «...փայտե... 3.80 մետր բարձրությամբ: Գմբեթին վրայ, շուրջանակի կ'երևան տասներկու առաքելներու իւղաներկ բաական յաջող նկարները, իւրաքանչիւրին անունը վրան գրուած»⁷⁰: Արձանագրութիւնը՝ արքոյի թեկն և մեջքին, ելնդագիր, 4 տող.

[Բերիա] | մեծ քաղաքին, ջանացո(թեամ)ք սրբազանին՝ տ(եառ)ն Ալէքսան վարդապետին: Ի տուն դայիր | ...լք հայոց ժողովրդին, քահանայիւք հանդերձ դպրին, վաճառականք միաբանին, երէցն, | ամէն սրբաքիրին, ննջեցելոց տ(է)րն ողորմին և կենդանիսն անվորձ պահին գոր կա|տարումն եղեւ սորին հայոց ՌԵՀՆԱԶ (1733) թուականին, գլխսը մարտի ամսամտին:

Հրատ. ՊՀՀ, էջ 257-258: **Տունկեան Գ.**, նշվ. աշխ., էջ 12:



70 Նշվ. աշխ., էջ 257:

53. Սրբապատկեր «Հովհաննես Մկրտչի գլխատումը». ընկուզենու միակտոր փայտի վրա պատկերված նկարն ունի (չափերն են՝ 93 x 114 սմ) փայտյա պարզ շրջանակ (լայն.՝ 6 սմ): Պատկերում «...տիրապետող անճանարութիւնն է Ս. Յովհաննես Մկրտիչ...: Հազած է կարճ թերով կանաչ թիկնոց: Վրան ունի ոսկեծիր կարմիր պարեգօտ, ճոխ...: Չախ ձեռքով սուրբը բռնած ունի կիսաբաց մագաղաթ մը, ուր կը կարդացուի «Ամենայն ծառ, որ ոչ առնէ պտուղ բարի, հատանի և ի հուր արկանի»: Նկարին մէջ, իբր գլխատր գործողութիւն, ի յայտ կու գայ Յովհաննու գլխատումը, Հերովդէսի պալատին առջև, պարտեզին մէջ, ուր իբր գլխատր դերակատար կ'երևայ դահիճը, սուտերամերկ, որ իր առջև ռչխարի մը պէս գլխատուող ու մորթուող Յովհաննու լուսապսակ գլուխը (և Հերովդիաղա պարուհին), որ երկու ձեռքերուն մէջ պատրաստ ունի արդէն սկուտելը: Դահիճին ետևը, խումբով կանգնած են Հռովմէական չորս զինուորներ, միաձև գլխանոցով: Պալատի երրորդ յարկի պատշգամբն, վարը կատարում ռճրային արարքը կը դիտէ Հերովդէա. իսկ քովը կանգնած է արքունի պաշտօնատար մը...: Դահիճը անթերի տիպար մըն է արևելքցիի, կատարեալ ռճրագործ, կիսամերկ, ուտերուն վրայ ձախէն աջ նետում կարմիր վարջամակ մը, կապտորակ շալվար մը կ'իջնէ մինչև ծունկերը, առանց զանոնք ծածկելու: Հազած է բուրդէ վարդագոյն սոնապաններ, գլուխը սպիտակ կտաւ փաթթոց, մերկ սուրը աջ ձեռքին մէջ: Դահիճին առջև ծնրաղի Յովհաննէս, գլխատում, ձեռքերը իրարու միացուցած և աղօթողի վիճակի մէջ, մերկ մարմնոյն վրայ ունի հողագոյն վարջամակ. կարմիր արիւնը, առուի պէս կը հոսի խոչափողէն: Հերովդիաղա, արևելեան պարուհիի կատարեալ տիպարն է, մերկ ոտքերը անցուցած փայտէ բարձր սանտալներու մէջ: Հազած է բաց վարդագոյն մետաքսէ ներքնոց, վրան վարդագոյն թիկնոց, ճոխ ծաղկեմկար, միւս ծայրերը գօտիին մէջ հանգրիւնած: Պարուհին կարմրագոյն ապարօշ ունի և մարգարտեայ ճոխ ողնոց մը վայելչօրէն կ'անցնի դեմքին: Նկարին վերը պանակիտի ձև շրջանակի մը մէջ «Գառն Աստուծոյ» է գծուած, իբր խորհրդանշան Յովհաննէսի անմեղութեան...»⁷¹: Արձանագրութիւնը՝ ներկագիր, 6 տող.



Յ(ի)շ(ա)տ(ա)կ է պ(ա)տկ(երս) իս(օճա) Ճանօին | եւ հօրն՝ Ազատին, | եւ որդոցն՝ տ(ի)ր(ա)ցու | Ազատին [է]ւ Դազարին, ի դուռն Ս(ուր)ք Խ (40) մանուկ եկեղեցուն Հալապ, | թվին հ(ա)յ(ո)յ | ՌՃԶԹ (1740):
Հրատ. ՊՀՀ, էջ 917:

71 Նշվ. աշխ., էջ 915-917:



Ծանոթ. բազմիցս նորոգված սրբապատկերի վրա 1930 թ. դրությամբ առկա էր ուղղահայաց երեք ճեղք (նշվ. աշխ., էջ 915): Ներկայումս այն նույն վիճակում է:

Խոջա Ճանոյի մասին տե՛ս Սր. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 28:

Տարբերություն. **Սյուրմեյանի** մոտ «խ(օճա) Ճանօին»-ի փոխարեն՝ «Ճանչին»:

54. Շուրջառ.

Յիսուս Քրիստոս: Տէր աստուած: Յիշատակ է շուրջառս մահտեսի Կիրեղին, դուստր Մարանէին եւ սօրն՝ Խաչխաթունին, ի դուռն Ս. Քառասուն մանկանց, թիվն հայոց ՌՃՂԳ (1744):

Հրատ. ՊՀՀ, էջ 903:

Ծանոթ. շուրջառը չենք տեսել: 1926 թ. Սր. Քառասնից մանկանց կամ Սր. Աստվածածին եկեղեցու իրերից էր (նշվ. աշխ., էջ 900):

55. Արձանագրություն. դեղին մարմարյա սալիկին, գտնվում է Սր. Քառասնից մանկանց եկեղեցու վերնատանը: Հատակին ագուցված հինգ սալիկներից մեկն է⁷²:

Այս է տապան հանգստեան ժամասաց տէր Աստուածատուր քահանային, որ հանգեաւ ի Քրիստոս, թվ. ՌՃՂԹ (1750) մայիսի 24-ին: Աստուած ողորմի ասացէք:

Հրատ. ՊՀՀ, էջ 712-713:

Ծանոթ. արձանագրությունը չենք տեսել:

Նույն ժամանակաշրջանում հիշվում է մեկ այլ Աստվածատուր քահանա, որը մահացել է 1758 թ. (տե՛ս Ազիզիի գերեզմանատան արձ. № 205): 1738 թ. այս երկու տեր Աստվածատուրներից մեկը ձեռնադրվում է քահանա. «Ի թին հյց. ՌՃՁԷ (1738) փետրվարի ԻՁ (26) օրն կիրակի պահոց անառակին ձեռնադրեցաւ Գ (3) քինյն. միատեղ տր. Աժատուր., տէր Միքայել և տէր Եղիազարն ձեռնադրութիւն եղև, ի Համնցի Պետրոս վրդպէ.» (ՅՁՀԶՄ, էջ 212), իսկ մի փաստաթղթի համաձայն՝ նրանցից մեկը 1740 թ. հոկտեմբերի 29-ին պաշտոնավարում էր Սր. Քառասնից մանկանց եկեղեցում (ՊՀՀ, էջ 711-712):

72 Նշվ. աշխ., էջ 712:

56. Չեռաց խաչ. արձաթյա⁷³, արձանագրությունը՝ խաչի հակառակ երեսին, փորագիր, 1 տող, խաչի կենտրոնում՝ ներկագիր, 1 տող.

Փորագիր.

Յ(ի)շ(ատա)կ է ս(ուր)բ խաչս Խաչ(ա)տուրի որդոյն՝ տիրացու Անդունին, դստե(ր)ն՝ Սէյտէին, կենդանեաց որդոցն՝ տիր(աց)ու Շրճօսին, Յովսէփին, կողակցուն] ... ի դուռն Ս(ուր)բ Քառասուն մանկանց [ե]կ(ե)ղ[եցու]ն, թվին ՌՄ (1751):


Ներկագիր.

Ս(ուր)բ Յակոբոս, տեառն էղբայր:

Հրատ. ՊՀՀ, էջ 903:

Ծանոթ. արձանագրության՝ շեղագիր տրված տառերն ամբողջացվել են Սյուրմեյանի ընթերցումով: Դրանք վնասվել են խաչի նորոգման ժամանակ:

Տարբերություն. **Սյուրմեյանի** մոտ «տիրացու Անդունին»-ի փոխարեն՝ «տիրացու Արթինին», «Շրճօսին»-ի փոխարեն՝ «Շրճօին»:



73 Նշվ. աշխ., էջ 903:

57. Կաթսա. պահվում է բանգարանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում, արձանագրությունը՝ ելնդագիր, 4 տող.

Այս հին հիլայ էր, նորոգեցաւ, | եղև պատիայ, որ է յիշատակ Հալիլայու Ս(ուր)բ Քառասու(ն) մանկայ, | թվ(ին) ՌՄԴ (1755)-ին:

Հրատ. առաջին անգամ:

Հիլայով պատել - անագապատել:



58. Սրբապատկեր «Սբ. Թովմաս». պատկերված էր հաստ կտավի վրա (չափերն են՝ 94 x 70 սմ) և ուներ փայտյա շրջանակ (լայն.՝ 10.5 սմ), որի յուղաներկ դեղին մակերեսը ծաղկված էր կարմիր և կանաչ գույներով: Երջանակի վերին անկյունները «...բացուած, վարի եզրը կտրած, հինգած: Կտաւը եզերքներուն վրայ մաշած, վարէն դէպի ձախ, ներքնակողմը, 13 սնդմ. վերէն վար պատռած և ետևէն ուշադրութեամբ նորոգուած, քառակուսի պատաստով մը...»: Սբ. Թովմասը՝ «...քրիստոսատիպ շնորհալի դէմքով, նստած աթոռի վրայ, որ սակայն չ'երկիր: Հագած է ճոխ ծիրանի պարեգօտ, վրան մութ կանաչ փիլոն, կտրծքին վրայ կոճկուած, ոսկեայ ճարմանդով: Ոտքերը ծածկուած են բուրդէ սոնապաններով և կաշիէ կօշիկով: Չախ ձեռքին մէջ կը կրէ հովուական գառագան. աջ ձեռքովը սուրբը վեր բռնած է պարեգօտին ծալքերը: Սուրբը դէպի առաջ երկարած է իր ձախ ծունկը, վիրատր ու արիւնոտ, որուն առջև ճնրադիր վիճակով կը խնամարկէ հրեշտակը, իր ձախ ձեռքին մէջ բռնած սրուակին յորովը օծելով մարմնոյն վերքը: Բոցաթև հրեշտակը ունի ներքնագետտ և կարճ թիկնոց: Պատկերիս ընդհանուր նկարագիրը նպատատոր է, յաջող և ճոխ երանգներով, ուր կանաչ ընդհանուր յատակի վրայ ծիրանի գոյնն է իբր տիրապետող գոյն: Սուրբին դէմքը, հայադրոշմ լուսապակով եզերուած է, յաջող է, գլխու սև ու առատ մազերը, երկճիւղ, կ'իջնեն ուտերուն վրայ, մօրուրը սև է և բուրբակ: Ժամանակի ընթացքին կրած ըլլալ կը թուի նորոգութիւններ, զի շատ բանձր են ներկերը»⁷⁴:

Յիշատակ է պատկերս տիրացու Խաչատուրի՛ն որդի տիրացու Թովմասին, թվն ՌՄԴ (1755) յուլիսի Ի (20), Ս. Ք. մանուկ եկեղեցոյ:

Հրատ. ՊՀՀ, էջ 918:

Ծանոթ. սրբապատկերը չենք տեսել:

74 Նշվ. աշխ., էջ 917:

59. Սրբապատկեր «Սբ. Պողոս-Պետրոս». անրացված է Ողդանկյուն սրահի հյուսիսարևմտյան անկյունային սյան արևմտյան նիստին: Նկարը, որը պատկերված է հաստ մոմլաթի վրա (չափերն են՝ 104 x 81 սմ) և ունի փայտյա պարզ կապույտ շրջանակ (լայն.՝ 5 սմ), ներկայացնում է Պողոս և Պետրոս առաքյալներին՝ «...կանգնած սինազարդ և եռազմբէր կաթողիկէի մը աջ ու ձախ կողմերը...: Դակատի բարձրադիր գմբէքը կարմիրով ծածկուած է և մէջտեղէն կախուած է զանգակ...: Տաճարի արտաքին շրջապատը մարմարեայ պատուանդանին վրայ կանգնած են երկու սուրբեր: Չախ կողմն է Ս. Պողոս, լուսապակ, պատկառագորու, սև մազերով և մօրուրով: Հագած է մանուշակի կարմիր պարեգօտ, վրան կիսովին ծածկուած կարմիր վարշամակով, ձախէն դէպի աջ: Աջ ձեռքով վեր է բռնած մերկ սուրբ, ձախ ձեռքին մէջ ունի մեծադիր կտակարանը, փակուած վիճակով: Ս. Պետրոս ալեգարդ է ու շնորհալի գլուխը եզերուած է լուսեղէն պակով: Հագած է լազուարտ պարեգօտ...: Աջ ձեռքին մէջ ունի զոյգ մը բանալի, իսկ ձախով կը կրէ մեծադիր կաշեպատ կտակարանը, գոց»⁷⁵: Արձանագրությունը՝ ներկագիր, 6 տող, որի 2 տողը՝ արաբերեն, պատկերի ձախ կողմում փակագիր.

Գլուխ սուրբ հավատոյ հիմն եկեղեցվոյ վէմն Պետրոս, և անճառ տնօրէնութեան պատմող անօթն ընտրութեան Պողոս: Սուրատ, ՌՄԴ (1755)-ին: | Նորոգեց ՌՆԽԳ (1994)-ին | Անդ(րանիկ) Անտոնյան:

Փակագիր.

...դ, Սուրատ:

Արաբերեն.

قد اوقف هذه القوينة المقدسه الشماس كركور ولد دير سركييس الى كنيسة اربعين شهيد | سنة ١٨٧١.

Թարգմ. Տեր Սարգսի որդին՝ լուսարար մահտեսի Գրիգորը, 1871 թ. նվիրեց սրբապատկերը Քառասնից մանկանց եկեղեցուն:

Հրատ. ՊՀՀ, էջ 918-919: Երրորդ և չորրորդ տողերը, փակագիր և արաբերեն արձանագրությունները հրատարակվում են առաջին անգամ:

Ծանոթ. 1930 թ. սրբապատկերը լավ վիճակում էր, սակայն ստորին մասը մասամբ մաշված էր (նշվ. աշխ., էջ 918): Նկարը նորոգվել է:



75 Նշվ. աշխ., էջ 918:



60. Սրբապատկեր «Զրիստոսի մկրտությունը»․ ամրացված է Ուղղանկյուն սրահի հյուսիսարևելյան անկյունային սյան արևմտյան նիստին: Յուղաներկ նկարը պատկերված է միակտոր մաքուր փայտի վրա (չափերն են՝ 105 x 86 սմ) և ունի փայտյա շրջանակ (լայն.՝ 12 սմ): Կենտրոնում Հիսուսն է՝ «...Յորդանանի մեջ... ընկղմած է... մինչև կես մարմինը, ճերմակ կիսածածկոցով մը...: Յովհաննէս կանգնած է ջուրի ձախ ափը... հագած է ոչխարի մորթէ շինուած ու կանաչ ներկուած համդերձ... պատմութեանը, կարմիր, վար սահած է ուտերէն և կը ծածկէ մարմնոյն մեծագոյն մասը...: Չորս հրեշտակները, ոսկիէ քեթրով, և կարմիր, կանաչ ու կապոյտ հանդերձանքով... միջին երկուքը բռնած են ճերմակ ու կարմիր սրբիչներ»⁷⁶: Արձանագրութիւնը՝ սրբապատկերին մեկընդմեջ հայերեն-արաբերեն, ներկագիր, 1 տող և շրջանակին՝ հայերեն, 1 տող.

Սրբապատկերին.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ու)ր պատկերս սաս(ու)նցի մահտ(ես)ի Ճ(ա)նօին եւ կնոջն՝ Խ(ա)նումին, եւ որդոցն՝ Ագատին, Միասարին, ի դուռն Ս(ուր)ր Խ (40) մանուկ եկեղեցուն, քվին Ռ-ՍԵ (1756)-ին:

بيد جرجس حنانياں ۱۷۵۶

Թարգմ. Ջրջս Հանանյանի ձեռքով 1756 թ.:

Շրջանակին.

Յ. Ա. Ն. 1915:

Հրատ. ՊՀՀ, էջ 943: **Քեշիշեան Վ.**, Սասուն-Հալեպ..., էջ 120-121: Վերջին երկու տողերը հրատարակվում են առաջին անգամ:

Ծանոթ. Նկարիչ Ջրջս Հանանյանի գործերից Հալեպում պահպանվել են 1711 և 1752 թթ. այլ սրբապատկերներ (տե՛ս Սր. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. Ն՞ 28, 46):

Սասունցի Ճանոյի մասին տե՛ս Սր. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. Ն՞ 28:

76 Նշվ. աշխ., էջ 943:


61. Տապանաքար. դեղին մարմարից, ազդեցված է Հին եկեղեցու արևմտյան ճակատի հարավային մասում (չափերն են՝ 119 x 56 սմ)⁷⁷, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.

Այս է տ(ա)պան հ(ա)նգլստե(ա)ն բերիցի տեր | Պողոսի որդի Բերիո | առ(ա)ջն(ո)րդ Գեվորդ | վարդ(ա)պետին, որ հանգլեաւ ի Զ(րիստո)ս, քվին | ՌՍԵ (1786)-ին:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 15: ՊՀՀ, էջ 731-732:

Ծանոթ. տեր Գևորգը 1742 թ. նորոգում է ձեռագիր Շարական.

«Նորոգեցաւ շարականս ի քվին հայոց ՌճՂԱ (1742) ի օգոստոսի Ե (5) ձեռամբ ոգնամեղ և անարհեստ Բերիացի Գեորգ արդին: ...յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զհայրն իմ տր. Պողոսն և զհանգուցեալ մայրն իմ զՍաֆար Մելիքըն...», իսկ նույն գիրքը 1779 թ. վերստին կազմում է «...տր. Գալուստի որդի ծագցի տրցու. Պետրոս, որ եմ աշակերտ Գեորգ վրդպտին. առաջնորդին Բերիոյ յամսեանն մարտի Ժ (10)-ին» (ՅՁՀԶՄ, էջ 134): 1772 թ. Հալեպում գրում է Աստեղացոյց, որը պահվում է Երուսաղեմի վանքի մատենադարանում 457 համարով (ՊՀՀ, էջ 730): 1776 թ. Հալեպի Սր. Քառասնից մանկանց եկեղեցում աղանացի տեր Եղիային ձեռնադրում է քահանա (նշվ. աշխ., էջ 731): Հալեպի առաջնորդ է նշանակվում 1770 թ., իսկ 1780 թ. հրաժարվում է և մնում քաղաքում: 1785 թ. սեպտեմբերի 19-ին նորոգված Ավետարանի հիշատակարանում հիշվում է որպես Հալեպի հրաժարյալ առաջնորդ (ՅՁՀԶՄ, էջ 47):



62. Գոզնոց. արձաքյա⁷⁸, ամրացված է Մեծ եկեղեցու ավագ խորանի սեղանին, արձանագրությունը՝ ելնդագիր, 1 տող.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է գոհնոցս արև(ե)լցի մ(ա)հտ(ե-ս)ի ըՍտ(ե)փ(ա)նի(ն) և ծընողացն՝ Նիկողոսին և Նաշխուն(ին), և կողակցուն՝ Աջամին, որդոցն ամե-նի և հանգուցե(ա)լ որդուն՝ Պ(օ)ղ(ո)սին, ի դուռն

77 ՊՀԱԳԱՀՏ, էջ 15:

78 ՊՀՀ, էջ 903:

Ս(ուր)ք Ք(ա)ռ(ա)սին մանկաց եկ(ե)ղ(ե)ցուն, ք(վի)ն Ռ-ՄԼԵ (1786):
Հրատ. ՊՀՀ, էջ 903:



Ծանոթ. արևելյի մատենի պարոն Ստեփանը Նախիջևանի Հանդամեջ գյուղից էր: Հիշվում են եղբայրը՝ Մինասը, քույրը՝ Մարթան: Ունեցել է 5 զավակ՝ Նիկողայոս, Թումա, Պետրոս, Պողոս և Մարիամ: Որդին՝ Պողոսը, մինչև 1773 թ. կենդանի էր: Պարոն Ստեփանն իր ծախսով Հալեպում վերստին կազմում է 1639 թ. ստեղծված մի ճաշոց. «Վերջին կզմելս. եղև արդենք, արևելյի անտամիջցի պարն Ստեփանին, յիշտկ. վս. կենդանեց և ննջեցելոցն հաւրն Նիկողայոսին. և եղբօրն պրն. Մինսին. և Նղռունին. և քւերն Մրթին. և գւկցն. Նիկողայոսին, Թումսին, Պետրոսին և Պողոսին, և դստերն Մրիմին, և կողակցուն Աճա-

միէին և ամ. զարմիցն նրին» (ՅՁՀԶՄ, էջ 230): Հիշվում է Էջմիածնի Սիմեոն կաթողիկոսի 1777 և 1778 թթ. նամակներում: Կաթողիկոսին խնդրում է, որ Հալեպի թեմն անցնի Էջմիածնի իրավասության ներքո (ԴՀՊ, հ. ԺԱ, սյունակ 189, 197, 201, 330): 1781 թ. Դուկաս կաթողիկոսը ի պատասխան գրում է. «Թողք ի Հալսպ, առ արևելցի Պարոն Ստեփանն, որ է Նանուսեցոց չրաղն. վասն հասարակ մահտարին՝ զոր յղեալ էին այժմ անտի, և խնդրեալ զկոնդակ օրհնութեան, ծանուցանելով զիմին իւրեանց վիճակ սրբոյ Աթոռոյս՝ և հրաժարիլն ի Սսեցոյ յառաջ քան զչորս ամ...» (ԴՀՊ, հ. Դ, սյունակ 343-344): Պարոն Ստեփանը հիշվում է նաև 1782 թ. Դուկաս կաթողիկոսի կողմից Պոլստ Մինաս վարդապետին ուղղված նամակում (նշվ. աշխ., սյունակ 463): 1821-1822 թթ. Սք. Քառասնից մանկանց եկեղեցուն նվիրում է 2 գոգնոց և 1 սկիի հանգուցյալ որդիների՝ Առաքելի և Պողոսի հիշատակին (տես Սք. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 77-79):

Հանդամեջ գյուղը գտնվում էր Նախիջևանում՝ Օրդուբադ քաղաքից 2 կմ հյուսիս: Ներկայումս մտնում է Օրդուբադ քաղաքի շրջագծի մեջ:

63. Սրբապատկեր «Ստնտու Տիրամայր». պահվում է թանգարանի վերածված Սք. Աստվածածին եկեղեցում: Յուզաներկ մկարը պատկերված է միակտոր փայտի վրա (չափերն են՝ 27 x 21 սմ) և ունի փայտյա ոսկեգօծ շրջանակ (լայն.՝ 3 սմ): Մարիամ Աստվածածինը «...նստած դիրքով է, ու ծաղկեմկար կանաչ ներքնոցի մը վրայ կը կրէ մանուշակի կարմիր ճոխ թիկնոց մը, որ գլուխը ծածկելով մինչև ծունկերը կ'իջնէ: Եզերքը ոսկեմկար բանուածներ ունին թէ՛ պարեգօտը և թէ թիկնոցը»⁷⁹: Արձանագրությունը՝ ներկագիր, 1 տող.

Յիշ(ա)տ(ա)կ է պ(ա)տկերքս մղ(ս)ի Սկրուչին և կողակցուն՝ Հոիփսիմէին, ի դուռն Ս(ուր)ք Խ (40) մ(ա)նկաց եկեղեցոյն, ի Ռ-ՄԼԶ (1787)-ին:

Հրատ. ՊՀՀ, էջ 937:
Ծանոթ. եղել է ոսկեպատ (ինչպես ռուսական սրբապատկերներում), սակայն 1930 թ. արդեն անգարդ էր, «...բայց բևեռի կոշտ հետքերը կը մնան, չարաչար վնասելով նկարին» (նշվ. աշխ., էջ 936):

Արձանագրության՝ շեղագիր տրված տառերը չենք կարողացել ստուգել անընթեռնելի լինելու պատճառով, ուստի վերականգնել ենք ըստ Սյուրմեյանի ընթերցման:



79 Նշվ. աշխ., էջ 936-937:

64. Սեղանի զարդ (հրեշտակ). պահվում է թանգարանի վերածված Սր. Աստվածածին եկեղեցում: Աշխատանքը կատարվել է դրվագման եղանակով, արձանագրությունը՝ ելնդագիր, 7 տող.

Յիշատակ է այս հրիշտակըս մաշկ(ե)ր(տ)ացի թերզի | Ակորբին, կողակցուն՝ Ալթո(ւ)նին, որդոցըն՝ | Սերգիսին, Մարտիրուն, ըՍտեփանին, և դստ(ե)րացըն, համա(յ)ն կեն(դան)իացըն և նընջեցելոց ի դուռըն Սո(ւ)րբ Քառասուն մանկաց եկեղեցուն, ՌԲԿ (1791)-ին:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. հաշվի առնելով դերձակ Հակոբի՝ 1791 թ. նվիրած մյուս հրեշտակի արձանագրության նույնությունը (տես՝ Սր. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 65)՝ եզրակացնում ենք, որ տարեթվի մեջ դրվագումի սխալ կա, այսինքն՝ ՌԲԿ-ի փոխարեն պետք է լիներ ՌԳԿ (1791):

Չարդի վրա ավելի ուշ արձանագրվել է. «թիւ 9 ծանր(ութիւն) 3900 կ(րամ)»:

Մաշկերոցի դերձակ Հակոբի մասին տես Սր. Աստվածածին եկեղեցու արձ. № 38:

65. Սեղանի զարդ (հրեշտակ). պահվում է թանգարանի վերածված Սր. Աստվածածին եկեղեցում: Աշխատանքը կատարվել է դրվագման եղանակով, արձանագրությունը՝ ելնդագիր, 5 տող, իսկ վերջին 1 տողը՝ փորագիր.

Յիշատակ է այս հրիշտակըս մաշկեր(տ)ացի թերզի | Ակորբի կողակցո(ւ)ն՝ Ալթո(ւ)նին, որդոցըն՝ | Սերգիսին, Մարտիր(ո)ուն, ըՍտեփանին, | և դստ(ե)րացըն, համա(յ)ն կենդանեացըն | և նընջեցելոց ի դուռըն Քառա(ս)ուն մանկ(ա)ն եկեղեցուն, ՎԳ (թարգմ.՝ 1206) (1791)-ին:

Հրատ. ՊՀՀ, էջ 903: **Քեշիշան Վ.**, Հալեպի Հայկական գաղթօճախի..., էջ 228:

Ծանոթ. համեմատելով դերձակ Հակոբի նվիրած այլ իրերի թվականների հետ (տես՝ Սր. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 64, 70)՝ եզրակացնում ենք, որ տարեթիվը տրվել է ոչ թե հայոց, այլ հիջրի թվականով: Սյուրմեյանը և Քեշիշյանը 1206 թվականը 1791-ի փոխարեն վերձանել են 1757:

Չարդի վրա ավելի ուշ արձանագրվել է. «թիւ 12 ծանր(ութիւն) 3850 կ(րամ)»:

Տարբերություն. **Սյուրմեյանի** և **Քեշիշյանի** մոտ «Ակորբի»-ի փոխարեն՝ «Յակոր», «Սերգիսին»-ի փոխարեն՝ «Սարգսի», «Մարտիր(ո)ուն»-ի փոխարեն՝ «Մարտիրոսի»:



66. Սրբապատկեր «Սբ. Ներսես Ընորհալի», պատկերված է միակտոր հաստ մոմլաթի վրա (չափերն են՝ 149 x 120 սմ) և ունի փայտյա շրջանակ (լայն.՝ 11 սմ): Նկարի մեջ «...տիրական ու մեծադիր դիմքն է Ս. Ներսես Ընորհալի, հայրապետական ծանրագին ամբողջական զգեստի տակ...: Չզեստը գոց կապոյտ, վարդագույն ծաղկենկար...: Սուրբին աջ կողմը, վարօք, կը ներկայացնէ հայկական եկեղեցին, զմբէքաւոր, որուն բեմին վրայ, լուսեղէն խորանի մը տակ Ընորհալի, ձեռքերը տարածած, վեղարով և փիլոնով, կ'աղօթէ...: Իսկ ձախ կողմի մանրանկարը... ճաշի սեղանի մը շուրջ, Սուրբ Ներսես բուրբուրած է հինգ իշխաններով, որոնք կը կրեն արևելեան ճոխ տարագ, և սելճուքեան ու քաթարական հարուստ ապարօշ: Սեղանը... կը նախագահէ Ընորհալին, հագած է սև կոճկուած փիլոն, վեղարով՝ ձախ ձեռքով ոսկիէ բաժակը բռնած է, իսկ աջով՝ կ'օրհնէ սեղանն ու սեղանակիցները...»: Ըստ Սյուրմեյանի՝ սրբապատկերի վերին երկու անկյուններում պատկերված են ծաղկեփնջեր⁸⁰, սակայն միայն վերին աջ կողմում է պատկերված ծաղկեփնջը, իսկ վերին ձախ կողմում մարդկային դեմքով հրեշտակ է: Արձանագրությունը՝ ներկագիր, 20 տող.

Ներսես Ընորհալի: | Ս(ուր)բ հայրապետն մեծն Ներսես Ընորհալին: |

(Յի)շատակ է պատկերս | մահտեսի Ակորճանի | որդ(ի) տիրացու Ներսէսին | ի դուռն Ս(ուր)բ | Ա(ստուա)ծածընայ եկեղեցուն: |

Կրկին նորոգեցաւ պատկերս ջանի(ք) | տ(է)ր Մա(ր)գարին եւ արդե(ա)մբք ժողովրդոց, թուին ՌՄԽԱ (1792)-ին: |

Կրկին նորոգեցաւ | արդեսամբ Տ(է)ր Մա(ր)գարեան | տ(է)ր Գեորգին, | ի թվ(ի)ն | ՌՄՀԵ (1826)-ին: |

Պատվերով Սուրբն արք(եպիսկոպոս) | Գաթարոյեանի կրկին նորոգեցավ ձեռամբ Անդրանիկ | Անտոնեանի, թուին ՌՆԽԳ (1994)-ին:


Հրատ. ՊՀՀ, էջ 920: Սյուրմեյանի ընթերցումը թերի է: Ամբողջությամբ հրատարակվում է առաջին անգամ:

Ծանոթ. արձանագրությունն առաջին անգամ ընդօրինակվել է 1930 թ. Սյուրմեյանի կողմից (նշվ. աշխ., էջ 911), սակայն նա չի տեսել այն արձանագրությունները, որոնք ավելի վաղ են, քան 1826 թ. (նշվ. աշխ., էջ 919): Ամենայն հավանականությամբ, դրանք ծածկվել են 1826 թ., վերստին բացվել 1994 թ. իրականացված նորոգությունների ընթացքում:

1800 թ. մայիսի 16-ին տիրացու Հանա Տատուրյանի՝ առաջնորդարանին հանձնած մոմավաճառության 3 տարվա և Սբ. Աստվածածին եկեղեցու սնդուկների հաշիվների ներքո ստորագրում է նաև տեր Մարգարը. «Ես տր. Մարգարս վկայ եմ այս պայմանին» (ՅՁՀԶՄ, էջ 254): Ենթադրվում է, որ տեր Գևորգ Տեր-Մարգարյանի հայրն էր և տեր Մարգար և տեր Գևորգ Տեր-Գևորգյանների մեծ հայրը, որոնք հիշվում են Հալեպի այլ արձանագրություններում (տե՛ս Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու № 88, 93 և Հին եկեղեցիների շրջաբակի № 8, 11 արձանագրությունները):

Գևորգ Տեր-Մարգարյանը սասունցի էր: 1822 թ. դեկտեմբերի 18-ին, երբ սասունցի Հակոբի որդի մահտեսի Օհանը Սահեթ Ալ-Ճեմիլի փոխ եկամտի մեկ շորթորդը կտակում է աղքատներին, ներկա էր նաև տեր Գևորգը (ՊՀՀ, էջ 765): 1827 թ. մեկնում է Երուսաղեմ, վերադառնալուց հետո նշանակվում Հալեպի երուսաղեմապատկան կալվածքների խնամակալ: 1831 թ. մարտի 13-ին վավերացնում է Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու բանկալապետ Ավետիս Ֆեթթեյանի, իսկ 1832 թ. ստուգում և ճշտում է եկեղեցապան խոջա Ալեքսանի հաշիվները (նշվ. աշխ., էջ 786): 1834-1837 թթ. հիշվում է որպես Հալեպի Հոգեսան պատասխանատու (**Միլոնեան Ա.**, Հալեպի Հոգեսանը, էջ 188): Նրա ջանքերով 1826 թ. նորոգվում է նաև Սբ. Եղիայի սրբապատկերը

(տե՛ս Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 88): Ըստ նրա որդու՝ տեր Մարգարի՝ 1837 թ. մայիսի 8-ին Երուսաղեմ ուղարկած նամակի՝ տեր Գևորգը վախճանվել է 1837 թ. ապրիլի 13-ին (ՊՀՀ, էջ 790):



80 Նշվ. աշխ., էջ 919-920:

67. Տապանակ (տորթ հաղորդությունը դնելու պահարան), պահվում է թանգարանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում. «... 0.58 սնդմ. բարձր, 0.48 սնդմ. լայն և 0.37 սնդմ. խոր տախտակեայ... ճակատը արծաթապատ, իսկ... փեղկ-դրնակը ամբողջովին ոսկեջրած...: Ճակատը կը կրէ 35 սնդմ. բարձր և 15 սնդմ. լայն փայտաշէն և արծաթապատ փեղկ-դրնակը, որուն գլխատը և տիրող զարդն է Յիսուս կիսովին ընկղմած սկիհին մէջ...»⁸¹: Արձանագրությունը՝ Ելնդագիր, 4 տող, որից ցած՝ 1 տող փորագիր.



Ելնդագիր.

Այս տապանակ(ա)կս է յ(ի)շ(ա)տ(ա)կ, որ կերտեց(ա)ւ նոր | օրիանկ, ժողովրդոցն առհա(ս)ար(ա)կ, տրօք նոցին | է վաեչակ եղաւ ի տան տ(եառ)ն բնակ Ս(ուր)բ Բ(ա)ռ(ա)սնիցս յարկ, | որոյ տեսուչ եւ աննիրհակ Սիմէօնի էր ժամանակ:

Փորագիր.

Բ(առասնից) մանկանցս, թի(ւ)ն ՌՄԽԵ (1796):

Հրատ. ՊՀՀ, էջ 750, 904:

Ծանոթ. տապանակը 1926 թ. զարդարում էր Սբ. Բառասնից մանկանց եկեղեցու ավագ սեղանը (նույն տեղում):

1926 թ. տապանակի վրա Սյուրմեյանը տեսել է նաև «...բարձրադիր արծաթեայ ուրիշ զարդ մըն ալ, որ ոչ ոճով և ոչ ալ ոսկերչութեամբ տապանակին կը նմանի: Ասիկա 0.80 սնդմ. բարձր և խարիսխի կողմէ՝ 0.33, իսկ ճաճանջի կողմէ՝ 0.43 սնդմ. լայն բորբոսձև շրջանակ մըն է, կամ աւելի ճիշդ խաչկալ մը, որուն մէջ կը հանգչի 45 սնդմ. երկար ճաճանջածև աչ մը գոր կը կրեն 0.20 սնդմ. բարձր թևաւոր երկու հրեշտակներ: Ստորոտը...

81 Նշվ. աշխ., էջ 904:

կ'երևայ իր յիշատակարանը» (նշվ. աշխ., էջ 904-905): Նշյալ զարդը չի պահպանվել:

Օրիանկ բառը սխալ է փորագրված, պետք է լիներ օրինակ:

Տարբերություն. **Սյուրմեյանի** մոտ «որ կերտեց(ա)ւ նոր | օրիանակ ժողովրդոցն»-ի փոխարեն՝ «նոր օրուան ժողովրդոցն», «աննիրհակ»-ի փոխարեն՝ «նուիրակ»:

68. Բուրվառ. արծաթյա⁸², պահվում է թանգարանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում, արձանագրությունը՝ 1 տող.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ բուրվ(ա)ռս ս(ա)ս(ու)նցի Գ(ա)ս-պ(ա)րի և ծն(ո)ղ(ա)ցն հ(ո)գի(ո)յն ի դ(ու)ռն Ս(ուր)բ Խ (40) մ[ան]կ(ան)ց եկ(ե)ղ(ե)ց(ու)ն, թ(ի)ւ 1251 (1802):

Հրատ. ՊՀՀ, էջ 908: **Քեչիչեան Վ.**, Սասուն-Հալեպ..., էջ 121:

Ծանոթ. բուրվառի վրա ավելի ուշ արձանագրվել է. «թիւ 2 ծանր(ուրիւն) 380 կ(րամ)»:

Տարբերություն. **Սյուրմեյանի** և **Քեչիչեանի** մոտ «Յ(ի)շ(ա)-տ(ա)կ բուրվ(ա)ռս ս(ա)ս(ու)նցի»-ի փոխարեն՝ «Յիշատակ է սասունցի»:



69. Ճաճանջ. պահվում է թանգարանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում, արձանագրությունը՝ 5 տող.

Յիշ(ա)տ(ա)կ է խ(ա)չս Խ (40) մանուկ և Ս(ուր)բ Ա(ստուա)ծածին | եկեղեցացն Բերիոյ արզրումցի Կիւռճիօղլու հանգուցե(ա)լ Պօղոսի որդի կենդանի պարլոն Աղասիին վ(ա)ս(ն) իւր և որդոցն և համայն նինջեցելոցն, ի թիւն հ(ա)յոց ՌՄԾԵ (1806) մարտի ԻԱ (21):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. 1800 թ. մայիսի 16-ին տիրացու Հանա Տատուրյանի՝ առաջնորդարանին հանձնած հաշիվները ստուգում և ստորագրում է նաև պարոն Աղասին. «Ես արգ(ռ)ումցի Պողոսի որդի Աղայսի այս հասալի վկայեմ» (ՅՀՀԲՄ, էջ 254): 1806 թ. նվիրում է սեղանի 2 զարդ (հրեշտակներ), իսկ 1808 թ.՝ զանգակ (տես Սբ. Բառասնից մանկանց եկեղեցու արձ. № 71-72, 74):

82 Նշվ. աշխ., էջ 908:

70. Ճանճանչ. պահվում է քանդարանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում, արձանագրությունը՝ ելնդագիր, 3 տող.

Յիշ(ա)տ(ա)կ է հայոց համայն ժողովրդեայն արթեամբ ի զանծապետութեան թլերզի Յակոբին Ս(ուր)բ Խ (40) մանուկ եկ(եղէ)ց(ւոյն), ՌՄԾԵ (1806):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ճանճանչի վրա ավելի ուշ արձանագրվել է. «Քիւ 7, ծանր(ութիւն) 1999»:

Մաշկերտցի դերձակ Հակոբի մասին տես Սբ. Աստվածածին եկեղեցու արձ. ՆՁ 38:



71. Սեղանի զարդ (հրեշտակ). պահվում է քանդարանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում: Աշխատանքը կատարվել է դրվագման եղանակով, արձանագրությունը՝ ելնդագիր, 6 տող.



Յիշ(ա)տ(ա)կ է հրեշտ(ա)կս Խ (40) մանուկ և Ս(ուր)բ | Ա(ստուա)ծածին եկեղեցացն Բերիոյ արգրումցի Կիւրճիօղլու հա(ն)գուցե(ա)լ | Պօղոսի որդի կենդանի պարոն Աղասիին վ(ա)ս(ն) իւր և որդոցն և համայն ննջեցելոցն, ի թուին ՌՄԾԵ (1806)-ին և մարտի ԻԱ (21)-ին:

Հրատ. ՊՀՀ, էջ 750, 909:



Ծանոթ. զարդի վրա ավելի ուշ արձանագրվել է. «Քիւ 11, ծանր(ութիւն) 3700 կ(րամ)»:

Պարոն Աղասու մասին տես Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. ՆՁ 69:

Տարբերբցում. Մյուրմեյանի մոտ «կենդանի պարոն Աղասիին»-ի փոխարեն՝ «պրն. Աղասիկին», «ՌՄԾԵ-ին և մարտի ԻԱ-ին»-ի փոխարեն՝ «ՌՄԾԵ»:

72. Սեղանի զարդ (հրեշտակ). պահվում է քանդարանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում: Աշխատանքը կատարվել է դրվագման եղանակով, արձանագրությունը՝ ելնդագիր, 6 տող.

Յիշ(ա)տ(ա)կ է հրեշտ(ա)կս Խ (40) մանուկ և Ս(ուր)բ Ա(ստուա)ծածին եկեղեցացն Բերիոյ, արգրումցի Կիւրճիօղլու | հանգուցե(ա)լ Պօ(ղ)ոսի որդի կենդանի պարոն Աղասիին վ(ա)ս(ն) իւր և որդոցն և համայն ննջեցելոցն, ի թուին ՌՄԾԵ (1806) մա(ր)-տի ԻԱ (21):

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. զարդի վրա ավելի ուշ արձանագրվել է. «Քիւ 10, ծանր(ութիւն) 3700 կ(րամ)»:

Պարոն Աղասու մասին տես Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. ՆՁ 69:

73. Չռաջ խաչ. արծաթյա⁸³, պահվում է քանդարանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում, արձանագրությունը՝ փորագիր, 2 տող.

Յիշ(ա)տ(ա)կ է Խուկասին և հորն՝ Արուքին, մօրն՝ Չանազանին, և կողակցուն՝ Վարդոյին, ի Ս(ուր)բ Խ (40) մանուկ եկեղեցու(ն), | ի ՌՄԾՁ (1807)-ին:

Հրատ. ՊՀՀ, էջ 908:

Տարրերեցում. *Մյուսմեյանի մոտ «Խուկասին»-ի փոխարեն՝ «Ղուկաս», «Արուքին»-ի փոխարեն՝ «Յարուքինի», «Վարդոյին, ի Ս(ուր)բ Խ մանուկ եկեղեցու(ն)»-ի փոխարեն՝ «Վարդոյին»:*




74. Չանգակ. արձանագրությունը՝ փորագիր, 2 տող.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է զանկրս արգր(ու)նցի Աղասի- յին Հայկայ Ս(ուր)բ Քառասուն | մանկան եկեղե- ցուն, թվին ՌՄԾԷ (1808)-ին:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. պարոն Աղասու մասին տես՝ Սբ. Քառասնից ման- կանց եկեղեցու արձ. № 69:



75. Սրբապատկեր «Տիրամոր թագադրումը երկու գլխադիր սրբերի հետ». զետեղված է Մեծ եկեղեցում՝ վերնատան աստի- ճանների հանդիպակաց հյուսիսային սյան արևելյան երեսին (1930 թ. գտնվում էր Մեծ եկեղեցու հարավային խորանին)⁸⁴: Պատկերված է միակտոր հաստ կտավի վրա (չափերն են՝ 111 x 120 սմ) և ունի փայտյա ոսկեգօծ պարզ շրջանակ (լայն.՝ 3 սմ): Մարիամ Աստվածածինը «...հագած է ծիրանեգոյն միակտոր ներքնոց, ճոխ, վրան կը կրէ, գլուխէն մինչև ոտքերը, արևելեան կանաչ ծածկոց, հարուստ և աստղազարդ ծաղկումներով: Մա- նուկ Յիսուս... հագած է մանուշակի կարմիր քիկնոց, մինչև ոտ- քերը ծածկող... Թէ Յիսուս և թէ Տիրամայրը ունին ականակուտ,

83 Նույն տեղում:

84 Նշվ. աշխ., էջ 954:

ճոխ ոսկիե թագ, լայն լուսապսակի մէջ փայլուն...: Տիրամօր գա- հին աջ կողմը, մերկ ոտքերով կանգնած է Ս. Յովհաննէս Կարա- պետ, 92 սնդմ. բարձրութեամբ. հագած է կիսովին բուրդէ ներք- նոց: Իսկ ծածկուած է բաց սրճագոյն վարշամակով: Ունի լայն լուսապսակ, թուխ և մռայլ դէմք, երկար մազեր և ամփոփ սև մօ- րուք...: Աթոռին ձախ կողմը կանգնած է նոյնքան բարձրութեամբ և մերկ ոտքերով Ս. Յակոբ Առաքեալ: Հագած է կանաչ ներքնոց, իսկ ուտերը կը ծածկէ ծիրանեգոյն վարշամակ մը: Ունի լու- սապսակ, երկճիղ գալիլիական երկար մազեր, սև և ամփոփ մօ- րուք»⁸⁵: Արձանագրությունը՝ ներկագիր, 5 տող.

Ս(ուր)բն Կարապետ, Ս(ուր)բն Յակոբ: | Յիշ(ա)- տ(ա)կ է պ(ա)տկ(ե)րս հ(ա)նգ(ո)ւցե(ա)լ պ(ա)ս- մաճի մ(ա)հ(տես)ի Պետրոսին և որդւոյն՝ տիր(ա)- ց(ո)ւ Գէորգին, | և կենդանի ծնօղին՝ մ(ա)հ(տես)ի Մարի(ա)մին, և տիր(ա)ց(ո)ւ Յակոբճ(ա)նին, որ ետ ի դուռն | Ս(ուր)բ Քար(ա)սոյն մանկանց եկ(ե)ղ(ե)- ց(ո)ւյն վ(ա)ս(ն) հ(ա)նգ(ու)ց(եա)լ հօրն և եղբոր հո- գոյն և հաւ(ա)սար ննչեցելոցն, ի ՌՄԿԱ (1812)-ին:

Կրկին նորոգեցաւ Անդրանիկ Անտոնյան, ՌՆԽԳ (1994)-ին:

Հրատ. ՊՀՀ, էջ 955:

Ծանոթ. 1930 թ. ուներ «...բազմաթիւ մանր ծակեր, պատ- տուածքներ...: Կռնակին վրայ... ութը կարկտան» (նշվ. աշխ., էջ 954): 1994 թ. նորոգվել է:



85 Նշվ. աշխ., էջ 954-955:

76. Ճանճանչ, արծաթյա, պատվանդանի երկու կողմում՝ հրեշտակներ⁸⁶: Պահվում է թանգարանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում, արձանագրությունը՝ ելնդագիր, 3 տող.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է պատկ(ե)րս արդեամբ և տրօթ | հասար(ա)կ ժողովրդ(ի)ն ի դուռն Ս(ուր)բ | Քառասուն մանկ(ա)ց, թվին ՌՄԿԷ (1818):

Հրատ. ՊՀՀ, էջ 906:

Ծանոթ. ճանճանչի վրա ավելի ուշ արձանագրվել է. «թիւ 5 ծանր(ութիւն) 1650 կ(րամ)»:

Տարբերբերցում. **Սյուրմէյանի** մտտ «հասար(ա)կ ժողովրդ(ի)ն»-ի փոխարեն՝ «խամայն ժողովրդեան»:



77. Գոզնոց, արծաթյա⁸⁷, ամրացվել է Քառասնից մանկանց եկեղեցու հյուսիսային ավանդատան սեղանին, արձանագրությունը՝ ելնդագիր, 1 տող.



86 Նշվ. աշխ., էջ 906:

87 Նշվ. աշխ., էջ 903:



Յ(ի)շ(ա)տ(ա)կ է գոհնոցս արև(ե)լցի մ(ա)հտ(եա)ի ըՍտեփ(ա)նի որդուն՝ հանգ(ու)ց(եա)լ Առ(ա)քելին, և ծընող(ա)ցն ի դ(ու)ռն Ս(ուր)բ Ք(ա)ռ(ա)ս(ո)ւն մ(ա)նուկ եկ(ե)ղ(ե)ցուն, ԿՄԿ (թարգմ.՝ 1237) (1821-1822):

Հրատ. Աշվ. աշխ., էջ 903:

Ծանոթ. տարեթիվը նշվել է ոչ թե հայոց, այլ հիջրի թվականով: Սյուրմէյանը 1821-1822 թթ.-ի փոխարեն սխալմամբ վերձանել է 1788: Նշյալի ճշգրտումը փաստող թվականների համար տես՝ Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու № 65, Ազիզիեի գերեզմանատան № 198 և Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան № 6 արձանագրությունները:

Արևելյի Ստեփանի մասին տես՝ Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 62: Հանգուցյալ որդին՝ Առաքելը, հիշվում է այլ արձանագրության մեջ ևս (տես՝ Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 79):

78. Գոզնոց, արծաթյա⁸⁸, պահվում է թանգարանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում, արձանագրությունը՝ ելնդագիր և փորագիր, 1-ական տող.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է գոհնոցս արև(ե)լցի մ(ա)հտ(եա)ի ըՍտեփանի հանգուցե(ա)լ որդուն՝ Պողոսին, և ծընողացն ի դուռն Ս(ուր)բ Ք(ա)ռ(ա)սուն մանուկ եկեղեցուն, | թվ(ի)ն ԿՄԿ (թարգմ.՝ 1237) (1821-1822):

Հրատ. ՊՀՀ, էջ 903:



Ծանոթ. տարեթիվը նշվել է ոչ թե հայոց, այլ հիջրի թվականով: Սյուրմէյանը 1821-1822 թթ.-ի փոխարեն սխալմամբ վերձանել է 1788:

Արևելյի Ստեփանի մասին տես՝ Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 62: Հանգուցյալ որդին՝ Պողոսը, հիշվում է այլ արձանագրություններում ևս (տես՝ Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 62, 79):



88 Նույն տեղում:

79. Սկիհ. արծաթյա⁸⁹.

Յիշատակ է սկիհի արևելյի մահտեսի Ստեփանի որդուց՝ հանգուցեալ Պողոսին և Առաքելին, և ծնողաց՝ Աճամէին, ի դուռն Ս. Ք. մանկանց եկեղեցույ, թվ. ԿՅԿ (թարգմ.՝ 1237) (1821-1822):

Հրատ. ՊՀՀ, էջ 903:

Ծանոթ. սկիհը չենք տեսել: 1926 թ. Սր. Քառասնից մանկանց կամ Սր. Աստվածածին եկեղեցու իրերից էր (նշվ. աշխ., էջ 900):


Համեմատելով արևելյի Ստեփանի նվիրած 3 այլ իրերի արձանագրությունների հետ՝ եզրակացնում ենք, որ թիվը արվել է արաբերենով և ոչ թե հայոց, այլ հիջրի թվականով: Մյուրմեյանը 1821-1822 թթ.-ի փոխարեն սխալմամբ վերծանել է 1788:

Արևելյի Ստեփանի մասին տես Սր. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 62:

80. Ծածանչ. պահվում է թանգարանի վերածված Սր. Աստվածածին եկեղեցում, արձանագրությունը՝ ելնդագիր, 1 տող.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է մահտ(ե)սի Դազարին ի դուռն Ս(ուր)բ Խ (40) մանկա(նց), թվին ԿՅԿ (թարգմ.՝ 1237) (1821-1822):

Հրատ. առաջին անգամ:



81. Գավազան. պահվում է թանգարանի վերածված Սր. Աստվածածին եկեղեցում, արձանագրությունը՝ 3 տող.

Յիշ(ա)տ(ա)կ է գավազանս Բերիօ Ս(ուր)բ Քառասուն մանկա(նց) արդիամ(բ) հավասար | ժողովրդ(ոյ)ն, | հայոց ՌՄՀԱ (1822):

Հրատ. առաջին անգամ:

82. Սրբապատկեր «Հիսուսի ընծայումը տաճարին». ամրացված է Հին եկեղեցու արևմտյան ճակատի հյուսիսային մասում: Յուղաներկ նկարը պատկերված է մոմագոծ հաստ կտավի վրա (չափերն են՝ 70 x 53 սմ) և ունի փայտյա շրջանակ (լայն.՝ 9 սմ): Մուգ կանաչ «...յատակի վրայ, տաճարի կամարակապ սիւներու միջև կանգնած է Սիմեոն ծերունի, ալեփառ, պատկառելի, բազուկներու մէջ մանուկ Յիսուս. Երկու քովերը երկու հրեշտակ-


ներ...: Յիսուսի առջև ծնրադրած է Տիրամայրը. ետևը Յովսէփ, նույնպես ծնրադիր: Չախ կողմը Աննա մարգարէուհի աթոռակի մը վրայ նստած, ծունկերուն վրայ բացուած Ս. Գիրք, ձեռքերը երկարած դէպի Յիսուս և պատրաստ զայն գրկելու...»⁹⁰: Արձանագրությունը՝ ներկագիր, 4 տող.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է Պետրոսի որդ(ի) Սիմեոնին, թ(վ)ին | ՌՄՀԱ (1822):

Հրատ. ՊՀՀ, էջ 926:

Ծանոթ. 1930 թ. սրբապատկերը գտնվում էր անխնամ վիճակում. «...քանի մը տեղ պատռուած և կռնակէն նորոգուած: Յիշատակարանը ջերմութենէ մասամբ այրած: Շրջանակը կոտրած և գունաբափ» (նույն տեղում): Ներկայումս դրոշմները նույնն է:

Տարբերություն. Մյուրմեյանի մոտ «Սիմեոնին, թ(վ)ին | ՌՄՀԱ»-ի փոխարեն՝ «Մամուէլին(») թվն ... Հալէպ»:



83. Գոգնոց. արծաթյա⁹¹, ամրացված է Քառասնից մանկանց եկեղեցու հարավային ավանդատան սեղանին: Արձանագրությունը՝ փորագիր, 2 տող.

90 Նշվ. աշխ., էջ 926:

91 Նշվ. աշխ., էջ 763:

89 Նույն տեղում:

Մեկտոնի Գաթի արեաց հարցն ճոցին բարեբարեաց ի տեսչու(թ)ե(ան) տ(եա)ռն Եփրեմի Աջապահեան վերածայնի յի թրվին հազար երկհարիւրի եօթնից տասան և մի ամի (1822). | յի Բերիա սնծ քաղաքի Ա(ստուա)ծածնի ս(ուր)ք տաճարի գոգնոցս այս յիշատակ է անձանց երկուց բարեսիր(աց) և պերճ(աշուք) Գրիգոր քաջ իշխանի. ըստ Աւետիս ամիրայի՝ մինն տեղեաւ ուռուշճուխցի, և միւսն է աստանացի սակս հոգոց իւր կենդանեաց հանգուցեալ բարի ծնողաց:

Հրատ. ՊՀՀ, էջ 907:

Ծանոթ. Եփրեմ Բ Աջապահյանի մասին տես Սք. Աստվածածին եկեղեցու արձ. № 51:

Ուռուշճուխը Բուսճուգն է: Գտնվում է Բուղարիայում: Տեղանունը նույն ձևով հիշատակվում է տեղի մի քանի տապանաքարերում («Հանդես ամսօրեայ», 1911, էջ 695: Տես նաև «Հանդես ամսօրեայ», 1912, էջ 177, 299-301):



84. Կանթեղ. պահվում է թանգարանի վերածված Սք. Աստվածածին եկեղեցում, արձանագրությունը՝ 1 տող.

Յիշատակ է խանտիլըս մաշկեր(տ)ացի մ(ա)հ-տ(եա)յի Արթօին, օրդոն՝ Էդիսիին, դռան Քառաստ(ւ)ն մանկանց, թ(վ)ին հայոց 1271 (1822):

Հրատ. ՊՀՀ, էջ 910:

Ծանոթ. արձանագրության՝ շեղագիր տրված տառերը չենք կարողացել ստուգել:

Խանտիլ – արաբ. կանթեղ:

85. Ճանճաց. պահպանվում է թանգարանի վերածված Սք. Աստվածածին եկեղեցում, «0.80x43 սմրմ. մեծութեամբ...»⁹²: Արձանագրությունը՝ պատվանդանին, ելնդագիր, 3 տող հայերեն և փորագիր, 1 տող արաբերեն, իսկ ճանճանչին՝ հայերեն և արաբերեն.

Պատվանդանին.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է խ(ա)չս արեվէլցի Ոսկա(ն)ի որդիուն՝ հա(ն)գուցե(ա)լ Մին(ա)սին, և ծնօղ(ա)յցն՝ Եդիսաբեթին, ի դռ(ա)նն Ս(ուր)ք Ք(ա)ռ(ա)ս(ո)ւն մանկ(ան)ց եկ(ե)ղ(ե)ցուն, | ١٢٣٨ (թարգմ. 1238) (1822-1823):

Ճանճանչին.

Յիշատակ տվողս ջուղայեցի Խ.Պ. եւ իւր (հ)ամայն կենդանեացն եւ ննջեցելոցն ի դուռն Սուրք Քառասուն մանկանց եկեղեցուն, 1238 (1822-1823): Յիշեա, հայր երկնատր, վասն որդոյ քո սուրք չարանացն ըզհոզի ծառայի:

Հրատ. ՊՀՀ, էջ 905: Արաբերեն տարեթիվը հրատարակվում է առաջին անգամ:

Ծանոթ. ճանճանչի արձանագրությունը չենք տեսել: Ըստ Սյուրմեյանի՝ ճանճանչն ազուցվել է ավելի ուշ. «...թ պատուանդանը,

92 Նշվ. աշխ., էջ 905:

թ կամարակապը և թ ճանճանչը կը ներկայացնեն անջատ զարդեր, և յետագային միացուած» (նշվ. աշխ., էջ 905), սակայն, համեմատելով երկու արձանագրությունների թվականները, ի հայտ է գալիս, որ դրանք ստեղծվել են միաժամանակ:

1778 թ., երբ Հալեպի թեմը բաժանվում է Սսի կաթողիկոսությունից և միանում Էջմիածնին, 1781 թ. հալեպցիները գանձապետ են նշանակում արևելցի պարոն Մինաս Ոսկանյանին, որը նույն թվականի մայիսին Հալեպի եկեղեցիներում գանձանակ է հաստատում Էջմիածնի կաթողիկոսության համար (ԳՀՊ, հ. Գ, սյունակ 329-330, 332-333): Հիշվում է նաև 1782 թ. Էջմիածնի Ղուկաս կաթողիկոսի կողմից Պոլսո Մինաս վարդապետին ուղղված նամակում (նշվ. աշխ., սյունակ 463): 1783 թ. կաթողիկոսը նամակ է ուղարկում պարոն Մինասին (նշվ. աշխ., սյունակ 511): Նրա ծնողներն էին Ոսկանը և Եդիսաբեթը: Վերջինս մահացել է 1811 թ. դեկտեմբերի 20-ին (տես Ազիզիեի գերեզմանատան արձ. № 262): Որդին՝ Ստեփանը, ծնվել է 1760 թ., մահացել 1780 թ. մարտի 27-ին (տես Ազիզիեի գերեզմանատան արձ. № 235):

Արձանագրության մեջ տարեթիվը նշվել է ոչ թե հայոց, այլ հիջրի թվականով: Սյուրմեյանը 1822-1823 թ. փոխարեն սխալմամբ վերծանել է 1789:



86. Սրբապատկեր «Սբ. Քառասուն մանկունք». գեղեղված է Սբ. Քառասնից մանկանց հիշատակին կառուցված խորանում՝ համանուն եկեղեցու հարավային որմին: Յուղաներկ նկարը պատկերված է մոմագոծ միակտոր հաստ կտավի վրա (չափերն են՝ 250 x 175 սմ) և ունի փայտյա շրջանակ (լայն.՝ 11 սմ): 12-րդ «...գունդին քառասուն գորականները, զանազան աստիճաններով և տարիքով... կ'երևան արիմաններկ լճի մը մէջ... աչքերնին յառաջ, վեր դէպի երկինք, ուր ամպեղէն կիսաշրջանակի մը մէջ կ'երևայ... Յիսուս, լուսապսակով, ձեռքերը տարածած...: Հագած է կարմիր պարեգօտ և կանանչ թիկնոց...: Քառասուն «մանուկներ»ը իրենց մէջ կը հաշուեն մաս չորս ալեգարդներ, սպիտակ մօրուքով...: Խմբակարգին մէջ 12-ը միայն մօրուք են, սպիտակ կամ խարտեաշ, բայց վայելուչ: Լճին ձախ կողմը կ'երևայ քարաշէն, կամարի գմբէթով, սիւնազարդ բաղնիք մը ուր սպիտակ, կամարի ու դեղին ծածկոցներով երեք կիներ, ապաստան կու տան հոն ապալիհող երիտասարդի մը, Եւնուկիտսի, որ նոյնպէս կիսամերկ է և արիմքաթա: Բաղնիքին վերև կը ճշմարտի արքայական պալատին և զինուորական հրամանատարութեան շէնքին պատշգամբ, ուր ծիրանեզոյն փիլոնով և թագով կ'երևայ Լիկիոնիոս կայսր Արևելքի (307-324), ձախ ձեռքը փայտեայ բազրիքին վրայ...: Կայսեր ետև կանգնած է սուսերամերկ դահիճը, մութ դեղին հանդերձով և ապարօշի մնան կարմիր գլխանոցով: Կայսեր առջև, պատշգամբին վրայ, կ'երևայ նոյնպէս սև երկար ու խիտ մօրուքով պալատական մը, ձեռքերը կուրծքին վրայ ծալած, ճերմակ խոշոր փաթոցով, ատր ետևը կայ զինուոր պահակ մը, կանաչ պարեգօտով և կոճկուած կարմիր թիկնոցով, գլուխը բիզանդական գլխանոց: Նկարիս ամեն խորհրդատր մասը, արքայական պատշգամբին վերը տեսնուած քարաշէն փառատր, բարձրադիր և կարմիր գմբէթարդ հոյակապ կաթողիկէն է, որուն դրան առջև հայրապետական ոսկեհիւս շքեղ աթոռի մը վրայ նստած է, հայկական վեղարով ու փիլոնով, սպիտակ մորուսով ալեգարդ հայրապետ մը, որուն երկիջեան թուղք մը կը յանձնէ երկինքէն դէպի իրեն իջնող կարմրագետտ հրեշտակ մը, մամակաբերի պաշտօնով...: Հայ մետրապոլիտը ուշադրութեամբ կը կարդայ այս թուղքը...: Նկարիս մէջ քառասուն սուրբերու կտակը իրագործուած կը տեսնենք, մինչդեռ անոնց անշնչացած մարմինները 8-10 ով, քառանիւ զինուորական փոխադրակառքերու մէջ լեցուած, կը փոխադրուին հնոց, ուր կը ճենճերին անոնց մարմինները: Վերը, նկարին աջ անկեան վրայ, անոնց սուրբ աճիւնները, չորս քահանաներէ վերցուած դագարով մը փոխադրուած կը տեսնենք եկեղեցի...: որուն եպիսկոպոսը, պատարագորի զգեստով և ձեռքը բուլվառով կ'ընդունի զանոնք: Դիակներու դէպի փուս փոխադրութիւնը, իբր առանձին պատկեր, չափազանց գեղեցիկ է ու խորհրդատր: Մէջտեղը կ'երևայ, քառանիւ, տաշան, բայց գեղեցկաշէն կառք մը, գոր կը քաշեն զոյգ մը հուժկու եզներ, մէկը սև և միւսը՝ խարտեշ...: Չարմանալի տիպար մը կը ներկայացնէ դահիճի մմանող կառապանը, որ նստած է դիակներով լեցուած սայլին առջև կանաչ պարեգօտ և կուրծքին վրայ կոճկուած կարմիր թիկնոց ունի: Նեղ ու երկայն պեխեր: Աջ ձեռքով կը մտրակէ անասունները, իսկ ձախ ձեռքով բռնած է բազմաճիւղ կաշեայ խարազանը: Սայլին ետև կ'երևայ ճերմակ լաչակով և լազուարտ թիկնոցով կին մը, որ դիակներէն մէկը շալակած կը տանի: Սայլը հասած է արդէն փուռին առջև, որուն լափլիզող բոցերուն մէջ կը ճենճերին սուրբերու մարմինները, ահատր կերպարանքներով, որոնց դուրս մնացած մարմնի մասերը կրակով կը ծածկէ զինուորական մը, ձեռքին երկաթեայ երեքժանիով: Այս դահիճը հագած է բոցագոյն կարմիր կօշիկներ և զինուորական երկար պարեգօտին վրայ կրած է կաշիէ գօտի: Գլխուն սաղաարտը կը վերջանայ զարդմանակով մը: Նշխարներու դէպի Ձիլոն քաղաքի մատուռը փոխադրութիւնը առանձին խմբակարգ մը կը ներկայացնէ: Դագաղին վրայ, որ հայկական մեռելաճաղերու ձև ունի, կը տեսնուին ոսկորներ, զանազան ձևի: Չայն կրող չորս սարկաւազներն ալ գլխաբաց են, գլուխնուն վրայ պսակաձև կուլով, զանազան գունով, բայց միևնույն տարազի զգեստաւորումով. տակը պարեգօտ, վրան շապիկ, բոլորշի կախ ուսնոցով և խաչանիշ ուրար: Դագաղին կը հետևին, իրարու ետևէ, երկու կիսասարկաւազներ, մախորդներու տարագով: Թափօրը ընդունող ալեգարդ քահանան

պատարագի լման զգեստով է: Ծաղկանիշ սպիտակ շապիկ, լազուարտ յատակի վրայ խաչազարդ փորուրար, հնդկական ծաղկեմկար շուրջառ, ոսկի յատակի վրայ և լատինական խոյր, ցած, երկճիղ»⁹³: Արձանագրութիւնը՝ ներկագիր, 4 տող.

Կրկին նորոգեցաւ պատկերքս ջանիւք էրեցփոխ(ա)ն պարօն Աւետիսին | և արդեամբք ժողովորոց, թուին հայոց Ռ[Մ]ՀԵ (1826)-ին: | Յիշ[ատ]յակ է Ս(ուր)ք Քառասն[ի]ց ... | ...:

Հրատ. ՊՀՀ, էջ 950: Երրորդ տողը հրատարակվում է առաջին անգամ:

Ճանոթ. 1930 թ. սրբապատկերը գտնվում էր անխնամ վիճակում. «Շրջանակը, աջ սիւնին վրայ, մէջտեղէն կտարած ու վնասուած է: Կտարը, աջ կողմին վրայ, ենթարկուած է մէկ մետր երկարութեամբ և 20 սնդմ. լայնքով խոշոր պատռուածքի մը, որ ուշադիր կարուածքով և կռնակէն կարկտանով, նորոգուած է և կը մնայ իր տեղը...: Չախ կողմէն դէպի շրջանակը, իրարու ետևէ կը կրէ երեք փոքր պատռուածքներ, որոնք կարկտուած չեն...» (նշվ. աշխ., էջ 947): Ներկայումս վիճակը նույնն է, արձանագրութիւնը՝ դժվարընթեռնելի և մեծ մասով անհետացած: Ըստ առաջնորդարանի քարտուղար Ավետիս Չարմանյանի հաշիվների տոմարի արձանագրութեան այն նորոգվել է 1825 թ. (նշվ. աշխ., էջ 765): Հավանաբար նորոգվել է 1825-1826 թթ.:

1983 թ. Հովհաննես Տապաղի կողմից սրբապատկերի համար եկեղեցու հարավային պատին կից կառուցվել է որմնափակ խորան (տես Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 123):



87. Կանթեղ. Յիշատակ է կանթեղս Խաչատուրի դստեր Նարխարունին, եւ առն՝ հանգուցեալ մահտեսի Կիրակոսին, ի դուռն Ս. Քառասնից, թ. հայոց ՌՄՀԵ (1826):

Հրատ. ՊՀՀ, էջ 910: Ճանոթ. կանթեղը չենք տեսել: 1926 թ. Սբ. Քառասնից մանկանց կամ Սբ. Աստվածածին եկեղեցու իրերից էր (նշվ. աշխ., էջ 900):

93 Նշվ. աշխ., էջ 947-950:

88. Սրբապատկեր «Սբ. Եղիա». պատկերված է ընկուզենու միակտոր հաստ փայտի վրա (չափերն են՝ 117 x 93 սմ) և ունի փայտյա շրջանակ (լայն.՝ 6 սմ): Դեղնագույն հատակի վրա «...կ'երևայ սուրբը...: Ծաղկենկար տաղումներով լուսապասկ մը կը բոլորէ սուրբին ալեգարդ մագերով, երկար մօրուքով և ընչացքով գլուխը: Հագած է մանիշակագոյն կարմիր թիկնոց...»⁹⁴: Արձանագրութիւնը՝ ներկագիր, 3 տող.

Ս(ուր)բ Եղիայ: | Կրկին նորոգեցաւ արդեամբք Տ(է)ր Մարգարեան տ(է)ր Գեորգն, Ռ-ՄՀԵ (1826) | թվ(ին) հայոց:

Հրատ. նշվ. աշխ., էջ 915:

Ծանոթ. Գևորգ Տեր-Մարգարյանի մասին տես Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 66:



89. Սրբապատկեր «Ննջումն Սբ. Կույսին». յուղաներկ նկարը պատկերված է մոմագօծ հաստ կտավի վրա (չափերն են՝ 175 x 141 սմ) և ունի փայտյա շրջանակ (լայն.՝ 9 սմ): Բավական «...բարձրկեկ սև կտավով ծածկուած մահաբեմի մը վրայ... պառկած է Տիրամայր, հաստ, կտաւեայ դագաղի մը մէջ... ծածկուած աստղագարդ լազուարտ միակտոր ծանրագին պատմունճանի մը մէջ...: Դագաղի առջև կանգնած է Յիսուս..., որ աջ ձեռքով կ'օրհնէ իր առջևը հանգչող մայրը, իսկ ձախ ձեռքին մէջ բռնած է Տիրամօր արձանիկը: Յիսուս մանուշակի կարմիր պարեգօտով և պատմունճանով է...: Երկնոյի սև խիտ մագերը կ'իջնեն մինչև ուսերը, ոսկեայ սիրուն լուսապասկի մը առջև...: Այս մեռելական հանդիսութեան... ներկայ են հայ և յոյն եկեղեցւոյ հոգևորական թափօրները, պատուոյ տեղը տալով հայ եպիսկոպոսին և իր հետևորդներուն. մինչդեռ, ննջող կոյսին ոտքի կողմը կ'երևայ Յունաց հանդիսապետը, իրեններով... Հայոց եպիսկոպոսը, կատարելապէս հայու տիպար է... ճոխ և անթերի հանդերձանքով և ակնակուռ թագով...: Իր առջևը ոտքի վրայ կանգնած է եպիսկոպոս մը, մանուշակագոյն կարմիր ճոխ փիլոնով, ծաղկենկար, խաչանիշ ճոխ ասեղնակար լազուարտ եմիփորոնով, առանց թագի, բայց վակասով: Խումբիս այս եպիսկոպոսը, ինչպէս նաև Յունաց հանդիսապետը, բոլորշի ածիլած գլուխ ունին, ըստ լատինականի: Եպիսկոպոսի առջևը, դէպի ձախ, կիսովին ծնրադրած է, կատարեալ հայու տիպարով արեղայ մը, լա-

94 Նշվ. աշխ., էջ 915:

զուարտ ու կարմիր հանդերձանքով...: Հայկական մասին այս շատ ինքնորոշ խումբը կը լրացնեն չորս արեղաներ, բոլորն ալ գլխարաց, որոնցմէ Տիրամօր սնարին և Յիսուսի ամենէն մօտը երևցողը, ձախ ձեռքին մէջ կը կրէ կուսին նկարը...: Նկարիս ձախ կողմի յունական թափօրին կը հանդիսապետէ ակնակուռ բարձր վակասով, շքեղ եմիփորանով ու պատմունճանով մետրապոլիտ մը, շրջապատուած զանազան աստիճանի կղերականներով, որոնց երկուքը կրօնատրուիներ: Հանդիսապետին աջ կողմը կենցող կղերիկոսը, սև պարեգօտով և կարմիր կիսափիլոնով, երկու ձեռքերը հանգչեցուցած է դագաղին ոտքերուն: Չախ կողմը կանգնողը, ճերմակ պարեգօտով և կապոյտ շուրջառով, կը խնկարկէ կուսին դագաղը, մինչ ձախ ձեռքին ունի խնկանաճար: Խումբին կրօնատրուիները ձեռքերնուն մէջ կը կրեն խնկանաճար կտաններ...: Հայր Աստուած, իր աթոռը դրած ամպեղէն կոնակներու վրայ, հագած է պարեգօտ և մութ լազուարտ փիլոն..., ձախ ձեռքը մական և գլխուն վերև եռանկիւն ոսկի լուսապասկ...: Յիսուս իր աստուածային մերկութիւնը ծածկած է, կիսովին ծիրանի պատմունճանով, ու մինչդեռ ձախ ձեռքով աշխարհի գունդն է բռնած հօր Աստուծոյ հետ, աջ ձեռքով կը կրէ սև խաչափայտը...»⁹⁵: Արձանագրութիւնը՝ ներկագիր, 3 տող.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է մահտ(ե)սի Մարիամին վ(ա)սնն(ն)ջեց(եա)լ | հոգւոց ծնող(ա)յցն և ս(ա)հ(տես)ի Չատիկին, Մարտիրոսին, Ա(ստուա)ծատուրին, Սէյտէյին և Իսկուհին ի դուռն Ս(ուր)բ Ք(ա)ռ(ա)սնից մանկանց, ի թուին հայոց Ռ-ՄՀԶ (1827):

Հրատ. ՊՀՀ, էջ 946:

Ծանոթ. 1930 թ. սրբապատկերը լավ վիճակում էր, սակայն «...կտարը, կեղորոնի վարի մասին մէջ կաղինի մը մեծութեամբ ծակած մոմի այրուացքէ... վերէն դէպի վար, թէ երեսի և թէ կոնակի կողմէն յայտնի չորս ծալքեր ունի: Ժամանակի ընթացքին կրած է նորոգութիւններ, որոնց կարկտանները կ'երևան կոնակին վրայ: Մանուշակագոյն կարմիրի սկզբնական ներկը... շուտով թափած է և ի վերջոյ այդ գունաթափ մասերը նորոգելու հոգով, աւելի գէշ գոյն և վրձին գործածուած է...» (նշվ. աշխ., էջ 943-944):

Մարտիրոսը հավանաբար Չատիկի որդին էր և Իսկուհու թոռը (տես Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 135):

Տարբերներցում. Սյուրմէյանի մոտ «Ռ-ՄՀԶ»-ի փոխարեն՝ «Ռ-ՄԼԶ»:



95 Նշվ. աշխ., էջ 943-946:

90. Սաղավարտ. պահվում է քանդարանի վերածված Սր. Աստվածածին եկեղեցում, արձանագրությունը՝ ելնդագիր, 2 տող.

[Յիշատակ է ք]ոյր արդեամ(ք) ժողովրդե(ա)ն ի դռան Ս(ուր)բ Խ (40) ս(ա)նկ(ա)ց եկեղե[ցու], | Ռ-Ն ԿԿԿ (թարգմ.՝ 1247) (1831-1832).

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. արձանագրությունն ամբողջացվել է՝ համեմատելով նույնատիպ մեկ այլ սաղավարտի համանման արձանագրության հետ (տես՝ Սր. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 91):




91. Սաղավարտ. պահվում է քանդարանի վերածված Սր. Աստվածածին եկեղեցում, արձանագրությունը՝ ելնդագիր, 1 տող.

Յիշատակ է բոլոր արդեամ(ք) ժողովրդե(ա)ն ի դռան Ս(ուր)բ Խ (40) ս(ա)նկ(ան)ց եկեղեցու:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. նույնատիպ մեկ այլ սաղավարտի համանման արձանագրության թվականը հիմք ընդունելով՝ սա կարելի է թվագրել 1831-1832 թթ. (տես՝ Սր. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 90):




92. Տապանաքար. դեղին մարմարից, ուղղանկյունաձև (չափերն են՝ 72 x 41 սմ)⁹⁶, գետեղված է Հին եկեղեցու բարձրացված դասի ճակատամասի հարավային մասում: Արձանագրությունը՝ արևմտահայաց նիստին, փորագիր, 8 տող.

Փայլեալ սա տապան րաբունոյ մեծ, | գերապանծ, ահեղ, գերազան դի | երանեալ Մարկոս եպիսկոպոսի վեմիս եղեալ, յալիտեան հանգ(չ)ի թիւ տօմարի հայկազեան սեռի | հաճար երկերեր ուրսուն եւ վեց (1837) | ամսեանն յուլիսի աւոր հնգեկ, | տօնի հօր մերոյ Ս(ուր)բ Լուսաւորչ(ի):

Հրատ. Ապանեան Գ., նշվ. հողվ., էջ 593: Բարզեն եպիսկոպոս, Հալեպի առաջնորդական գաւազան, «Տարեւ», 1926, էջ 37: ՊՀԱԳԱՀՏ, էջ 15: ՊՀՀ, էջ 769: Տեմիրճեան Վ., նշվ. աշխ., էջ 279:



96 ՊՀԱԳԱՀՏ, էջ 15:



Ծանոթ. Լուսատրչ(ի) բառի «ա» տառը սխալ է փորագրված, պետք է լիներ «ո»:

Մարկոս եպիսկոպոսը Բերիո թեմի առաջնորդ է հիշվում 1829-1837 թթ. «Ասոր վախճանելէն վերջ գերեզմանին վրա լոյս կը ցոյայ ու շատերը կը տեսնեն, ու ճիշդ լոյսին տեղը կտր ծակ մը կը շինեն և մասնատր կափարիչ մը կ'անցնեն և այն օրէն ցայսօր ուխտատրներ շատ են...» (Ալլաճեան Գ., նշվ. հոդվ., էջ 593): Այժմ այս սովորոյթը մոռացվել է:

93. Չարդաբանդակ. գտնվում է Մեծ եկեղեցում՝ հարավային խորանի դիմաց գտնվող սյան արևմտահայաց ճակատին՝ «130x101 մեծութեամբ դեղին կճեայ բարի վրայ»⁹⁷: Արձանագրութունը՝ փորագիր, 3 տող.

Գեորգ երէց Տ(է)ր Գեորգեան շինեաց զարձանս ընտիր կճեան, | ս(ուր)բ յիշատակ մնալ ինքեան, լիցի արժան առ տ(է)ր յիշման, | թվ(ին) հ(ա)յ(ո)ց 1289 (թարգմ.՝ 1289) (1840)-ին: Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 15:



Ծանոթ. տեր Գեորգ Տեր-Գեորգյանը սասունցի ավագ քահանա Գեորգ Տեր-Մարգարյանի որդին էր, տեր Մարգարի թոռը: Նրա ջանքերով 1840-1842 թթ. նորոգվում է առաջնորդանիստ սենյակը (տես՝ Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 8): Նա ստուգում և ստորագրում է 1844-1845 թթ. Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու մոմատան և առաջնորդարանի հաշիվները (ՊՀՀ, էջ 774), իսկ 1845 թ.՝ մասնակցում Սբ. Աստվածածին և Քառասնից

97 ՊՀԱԳԱՀՏ, էջ 15:

մանկանց եկեղեցիների շրջաբակի արտաքին դարպասի նորոգման աշխատանքներին (տես՝ Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 11): Երբ 1847 թ. օգոստոսի 11-ին Կիլիկիո Միքայել կաթողիկոսն այցելում է Հալեպ և ստուգելով առաջնորդարանի 1842-1847 թթ. հաշիվները՝ ստորագրում և կնքում է, ստորագրում է նաև տեր Գեորգը (ՊՀՀ, էջ 780): 1850 թ. ապրիլի 7-ին Սբ. Քառասնից մանկանց եկեղեցուն նվիրում է 1844 թ. Կ. Պոլսում հրատարակված Խորհրդատետր: Մինչև 1853 թ. հիշվում է Հալեպի առաջնորդարանի արխիվներում (նշվ. աշխ., էջ 789): 1866 թ. արդեն մահացել էր: Նույն թվականին քեսաբցիները նրա մասին այսպես են արտահայտվել. «Տասուերկու տարի է, կ'ըսեն, որ մեր գլխին խոտվորին, գժտութին, տուգանք պակաս եղած չեն. և ոչ մեկին օգնութին, պաշտպանութին, կամ մխիթարութին մի ընդունած ենք մինչև ցայսօր, բացի Նիկողայոս եպիսկոպոսէն և Բերիոյ հանգուցեալ տէր Գեորգ քահանայէն. ամոնք ալ հիմայ մեկերնին վախճանած է, և միար իր բարեխման պաշտպանութենէն զմեզ զրկած է Բերիոյ առաջնորդութենէն ելնելէն ի վեր» («Միօն», 1866, № 7, էջ 153): Մեծ հոր և հոր մասին տես՝ Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 66:

94. Սկիւ. արձաբայա⁹⁸, պահվում է քանգարանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում, արձանագրութունը՝ 1 տող.

Յ(ի)շ(ատակ է) սրկեխ Ս(ուր)բ Քառասուն ման(ու)կ եկեղեց(ուն) արդ(ե)անք մոմխանահին ձեռանք մոմճի Միքայել(ին), 1843: Հրատ. ՊՀՀ, էջ 907-908:

95. Սրբապատկեր «Ավետում». պահվում է քանգարանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում: Մոմագոծ նուրբ կտավի վրա պատկերված նկարը (չափերն են՝ 30 x 26 սմ) ունի փայտյա ոսկեգոծ շրջանակ (լայն. 9 սմ). «Ամբողջ իգօնը ծածկուած է ռուսական... ոսկերչութեամբ, ծանրազին արծաթեայ նկարուն և բարձրաքանդակ տախտակով մը՝ ու հազիւ կ'երևայ կոյսին և Գարբիէին դէմքն ու ձեռքերը...»⁹⁹: Արձանագրութունը՝ ներկագիր, 5 տող.

Յիշատակ է պատկերս եկեղեցոյն | Սրբոց Մանկանցն Քառասնից, որ է | քաղաքն Հալաբ: Ընծայեաց Գապլիիէլ Մելքումեան Հալաբեանցն, | 1846 ամի ի 10 փետրվարի: Հրատ. ՊՀՀ, էջ 936:



98 ՊՀՀ, էջ 907:
99 Նշվ. աշխ., էջ 936:

96. Տապանաքար. դեղին մարմարից, ուղղանկյունաձև, գտնվում է Հին եկեղեցում: Արձանագրությունը՝ արևմտահայաց նիստին, փորագիր, 5 տող.

Ի թվին 1848-ին, | հանգչի յայս տապանի | փրկչի պաշտօնեայն՝ | Յարութիւն եպիսկոպոս՝ | առ(ա)ջ-ն(ո)րդ Եղեսիո:

Հրատ. **Աղաւոնի Մ.**, նշվ. աշխ., էջ 334: ՊՀԱԳԱՀՏ, էջ 15: **Սահակեան Ա.**, նշվ. աշխ., էջ 298:

Ծանոթ. Հարություն եպիսկոպոս Գապենճանյանը (1785, Եղեսիա - 1848, Հալեպ) 1821-1825 թթ. ուսումը ստացել է Երուսաղեմում՝ Մարկոս եպիսկոպոսի մոտ: 1825-1829 թթ. եղել է Իզմիրի, 1829-1836 թթ.՝ Պրուսայի և Կուսիմայի թեմերի, 1836-1838 թթ.՝ Սշո և Կարնո միացյալ թեմերի առաջնորդը: 1838 թ. նշանակվում է Սշո Սբ. Կարապետ վանքի վանահայր և նույն թվականին նորոգում վանքի հարավային պարիսպը: Երկու անգամ՝ 1840-1841 թթ. և 1842-1847 թթ., ստանձնում է Եղեսիո առաջնորդի պաշտոնը, ձեռնարկում և ավարտին է հասցնում տեղի Սբ. Աստվածածին եկեղեցու կառուցումը: 1848 թ. բժշկվելու նպատակով ժամանում է Հալեպ, որտեղ էլ վախճանվում է (**Աղաւոնի Մ.**, նշվ. աշխ., էջ 334) նույն թվականի հունիսի 21-ին (ՊՀՀ, էջ 781): Ունի գրական բազում աշխատություններ, որոնցից են՝ «1-«Նարեկ»-ը, ծայր է ի ծայր տաղաչափության վերածում: Ձեռագիր օրինակը... կը գտնուի՝ Երուսաղեմի Ս. Յակոբ վանքին մատենադարանին մէջ: 2-«Ներքող Որդայն Որոմտան՝ Ս. Յակոբայ և Յովհաննեսի» տպված Կ. Պոլիս 1823: 3-Սաղմոսի և Երգ-երգոցի մեկնությունները պարունակող կիսակատար ձեռագիր մը: 4-«Յովհաննու-Կարապետի և Մկրտիչի ներբող»... ուներ նաև շարք մը գրուածքներ Ուրֆայի պատմութեան շուրջ, որոնք սակայն իսպառ կորսուած են» (**Սահակեան Ա.**, նշվ. աշխ., էջ 297-298):



97. Կանթեղ. Յիշատակ է կանթեղս պր. Թաճիրեան Գրիգորի որդւոյն՝ Յակոբին, Խաթունին և Շահէնին, ի Ս. Ք. մանուկ, որ ի Բերիա, թ. հայոց 1312 (1863):

Հրատ. ՊՀՀ, էջ 910: Ծանոթ. կանթեղը չենք տեսել: 1926 թ. Սբ. Քառասնից մանկանց կամ Սբ. Աստվածածին եկեղեցու իրերից էր (նշվ. աշխ., էջ 900):

98. Սկիի. պահվում է քանդարանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում, արձանագրությունը՝ փորագիր, 1 տող.

Յ(ի)շ(ատակ) է ս(ուր)բ խմուն(ս) ի դուռն Ս(ուր)բ Խ (40) մանկանց եկեղեցո, ք(վ)ին Ռ-ՊԿԶ (1866)-ին:

Հրատ. առաջին անգամ:



99. Արձանագրություն. վերնատան մուտքի աջ կողմում՝ ագուցված «...88x54 սնդմ. մեծութեամբ»¹⁰⁰ դեղին մարմարյա սալիկին, ելնդագիր, 18 տող հայերեն, որից ցած՝ նույն բովանդակությամբ 2 տող արաբերեն.

Է: | Վերնատունս չըքնաղ | նորոգ կառուցայ | անձնուէր ջանիւք | վեհին Կիլիկիայ | տեսառն Մըկըրտչի | քաջ հովուապետին | ազդու խըրատիւք, | որ էրն աստ ներկայ: | Արդեամբք հայ ազգիս | մեծին Բերիայ | արանց և կանանց | եւ ազնիւ օրերդաց, | մասնաւոր տըրօք | տիկնոջ Շահվեքիլ | Սօֆիայ, դըստեր | Անտօնի Շամմայ, | ի թվին փ(րկչի) 1874 յուն(ուար) 1-ին:

Արաբերեն.
قد تشيد اركان هذا المكان بانذار كاتوغيكوس السيد مكردية الاول وبتفقة ابناء طايفة اللوساوجيين وبسع وسيخا المقدسة كريمة صوفيا انتطوان شما امرأة نيكيفوص شاهوكيل سنة ١٨٧٤

Թարգմ. Այս տեղը կառուցվեց 1874 թ. Սկրտիչ Ա կաթողիկոսի վերակազմությամբ, լուսավորչական համայնքի նվիրատվությամբ և Նիկողոս Շահվեքիլի կնոջ, Անտուան Շամմայի դստեր՝ մահտեսի Սոֆյայի ջանքերով:

Հրատ. ՊՀՀ, էջ 839: Արաբերեն արձանագրությունը հրատարակվում է առաջին անգամ:

Ծանոթ. այս վերնատան կառուցման նպատակով Ազիզիեի ազգ. գերեզմանոցից տապանաքարեր են բերվել և գործածվել որպես շինանյութ (նույն տեղում):

Անտուան Շամման եղբոր՝ Ապուտի հիշատակին Ազիզիեի ազգ. գերեզմանոցի շրջապարսպի համար կառուցել է երեք մեծանիստ դարպասներ, դրանց վրա արձանագրել արաբերեն չափածո հիշատակագրություններ (ՊՀԱԳԱՀՏ, էջ 22), որոնք չեն պահպանվել:

Նիկողոս Շահվեքիլյանի կնոջ՝ Սոֆյայի և որդու՝ տեր Սահակի մասին տես Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 38, 42: Նիկողոսի քույրը՝ Խանումը, տեր Հակոբ Սանույանի թոռան՝ տեր Միքայելի կողակիցն էր (տես սույն աշխ., էջ 155):



100 Նշվ. աշխ., էջ 839:

100. Ծածկոց. կանաչ կտորի վրա ոսկեգույն թելով ասեղնագործ: Պահվում է թանգարանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում, արձանագրությունը՝ 2 տող.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է Բերիոյ Ս(ուր)բ Խ (40) մ(ա)նկ(ա)նց եկ(ե)ղ(ե)ց(տ)յ | ի Մալախեան Խաթուն տիկնոջէ, 1877:

Հրատ. առաջին անգամ:




101. Չագար. պահվում է թանգարանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում, արձանագրությունը՝ փորագիր, 1 տող.



Յիշ(ա)տ(ա)կ է տ(ե)ր Խաչատուրին ի դուռն Է• (թարգմ.՝ 40) մանկա(նց), 1293 (թարգմ.՝ 1293) (1877):

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. տեր Խաչատուրի մասին տե՛ս Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 9:



102. Չագար. պահվում է թանգարանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում, արձանագրությունը՝ փորագիր, 1 տող.



Յիշ(ա)տ(ա)կ է տ(ե)ր Խ(ա)չ(ա)տ(ու)րին ի դուռն Է• (թարգմ.՝ 40) մանկա(նց), 1293 (թարգմ.՝ 1293) (1877):

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. տեր Խաչատուրի մասին տե՛ս Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 9:



103. Մասնատուփ. արձանագրությունը՝ փորագիր, 3 տող, որից 1 տողը՝ արաբերեն, իսկ սեփյառից ցած՝ գաղտնագիր, 1 տող.

Նուէր | Թաղէս ք(ա)հ(ա)ն(այ) Մխարբեան, | 1882 (թարգմ.՝ 1882):

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գաղտնագիրը չենք կարողացել վերծանել:



104. Արձանագրություն. մկրտության ավագանից վերագուցված մարմարե սալիկին՝ ելնդագիր, 5 տող, որից 1 տողը՝ նույն բովանդակությամբ արաբերեն.

Յիշատակ է սուրբ աազանս հանձնուցեալ ոսկերիչ Աբրահամին եւ | կնոջ նորա՝ մ(ա)հ(տես)ի Խաթունի(ն): Հանգուսիցէ տէր զհոգին նոցին, 1888 յունուար 1:

Արաբերեն.
قد اقيمة هذا الجرن للمعمودية المقدسة عن نفس المرحوم
المقدسي ابراهيم الصائغ وعن ارملته المقدسية خاتون سنة
1888 للمسيح.

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. Աբրահամ Սալեղը (ոսկերիչ) 1878 թ. հունվարի 15-ին ընտրվում է Բերիո թեմի ազգային գավառական ընդհանուր, իսկ 1878 թ. մարտի 26-ին՝ Քաղաքական ժողովի անդամ (ՊՀՀ, էջ 846-847): Տիկին Խաթունն ամուսնու մահից հետո ուխտել էր նրա հիշատակին կառուցել եկեղեցու մկրտարանը (նշվ. աշխ., էջ 869): Տիկին Խաթունի մասին տե՛ս Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 39:



105. Սեղանի խաչ, պահվում է քանգարանի վերածված Սր. Աստվածածին եկեղեցում, արձանագրությունը՝ փորագիր, 10 տող.

Ի | յիշատակ | հոգոյն նուիրել | ս(ուր)ք խաչս Քա-
ռասուն մանկանց | եկեղեցոյն Բերիոյ Լուսարա-
րեան | Ճօրճիի դուստր տիկին Մարիամ՝ | տասնվեց
ոսկի արժէից վեցը | ս(ուր)ք եկեղեցին | մատակա-
րարել(ն)վ, | 1890:
Հրատ. ՊՀՀ, էջ 908:



106. Տապանաքար. ուղղանկյունաձև (չափերն են՝ 78 x 44 սմ)¹⁰¹, գետեղված է Հին եկեղեցու բարձրացված դասի ճակատամասի հյուսիսային մասում, արձանագրությունը՝ արևմտահայաց նիստին, ելնդագիր, 7 տող, որից ցած՝ փորագիր, 1 տող.

Ծնեալ 1818 ի Մարաշ: | Դիտէ, անցորդ, դու գայս
տապան, | ուր հանգչի պետն Կիլիկիոյ Տան: | Մուրք
Սիօնի էր միաբան, | 1860-(ին) Էջմիածնայ եպիսկո-
պոս, | 1871-(ին) Սկրտիչ Ա կաթողիկոս: | 1894-(ին)
հանգեցա ի տ(է)ր եւ եղաւ հոս | նոյնքեր 15-ին:

Հրատ. **Բարզէն եպիսկոպոս**, Հալեպի առաջնորդական գա-
ւազան, «Տաքե», 1926, էջ 38: **Աղանունի Մ.**, նշվ. աշխ., էջ 299: **Գալուստեան Գ.**, նշվ. աշխ., էջ 609: ՊՀԱԳԱՀՏ, էջ 16: **Բարզէն Ա արքայակից կաթողիկոս**, նշվ. աշխ., սյունակ 768: **Քելչեան Մ.**, նշվ. աշխ., էջ 251: **Գարտաշեան Ա.**, Նիսբեր Եզիպտոսի հայոց պատմության համար, Գահիրե, 1943, էջ 188: **Տեմիրճեան Վ.**, Գաւազանագիրք Բերիոյ Հայոց թեմի առաջնորդներու, «Հասկ», 1975, № 7-8, էջ 294: Նույնի՝ նշվ. աշխ., էջ 283-284, 286: Բարկեն կաթողիկոսը, Աղավնունին, Գալուստյանը, Գարտաշյանը և Տեմիրճեանը տապանագրի վերջին տողը չեն հրատարակել:

Ծանոթ. Սկրտիչ Բեֆսիզյանը (աշխարհիկ անունը՝ Կարապետ) 1839 թ., երբ հացավաճառ էր աշխատում, «Եզիպտացի Իպրահիմ փաշա՝ Նիզիպի պատերազմի տարիներուն (1839) Մարաշ կու գայ...: Օր մը, Իպրահիմ փաշայի զինուորներէն մին կը յափշտակէ Կարապետին հացերը... ուղղակի կը դիմէ Իպրահիմ փաշայի և կը պատմէ անոր իր արկածը: Փաշան այնքան հաճոյք կ'զգայ Կարապետի համարձակութենէն՝ որ գտնել կու տայ յափշտակիչ զինուորը, կը պատժէ զայն...»: Երիտասարդ տարիքում, կորցնելով կնոջը, մեկնում է Սիս՝ հոգևորական դառնալու: 1845 թ. մայիսի 2-ին ձեռնադրվում է սարկավագ: Այս միաբանում է Երուսաղեմի Սր. Հակոբեյանց ուխտին և դառնում հմուտ շարականագետ և հռչակավոր քարոզիչ: 1849 թ. մայիսի 1-ին Երուսաղեմում ձեռնադրվում է կուսակրոն քահանա և կոչվում տեղի Սկրտիչ, իսկ նույն օրը երեկոյան վեղարի օրհնու-
քյամը՝ արեղա: Կիրակոս պատրիարքի օրոք Երուսաղեմում ստանձնում է ավագ քարզմանչի, իսկ Հովհաննես պատրիարքի օրոք՝ նաև պատրիարքի փոխանորդի պաշտոնը: Սակայն պաշ-



տոնի չարաշահման համար Հովհաննես պատրիարքն ազատում է նրան, իսկ 1853 թ. նշանակում Դամասկոսում տեսուչ: Այստեղ նորոգում է տեղի Սր. Սարգիս եկեղեցու մատուռը՝ օժեղով և անվանելով Գլխադիր, «...որպէս զի Դամասկոսն անցնող ուխտա-
տրները կողոպտէ Սր. Հակոբի անունով դարպաս գանձելով: Յովհաննես պատրիարք քանի-քանի անգամ գրեց Դամասկոսի Տեսչին և հրաւիրեց ուղղութեան, բայց նա չլսելու զարկաւ... և... նոյն իսկ գրեցեց Դամասկոսի հայտիւնը, Դամասկոսը Ս. Թրո-
ւէն անջատելու և առանձին թեմ մը կազմելու առաջադրու-
թեամբ...: Բայց Յովհաննես պատրիարք զօրատր մարդ էր. սկսաւ կառավարութեան միջոցաւ կարգի բերել ըմբոստ և վնասակար Բեֆսիզեանը: Սա նեղը մնաց և ճողոպրելու համար... դաւանափոխութեան (կաթոլիկ ըլլալու) սպառնալիքով ապաս-
տանեցաւ Դամասկոսի Ֆրանսական հիպատոսարանը... Ժողո-
վուրդին միջնորդութեամբ, Յովհաննես պատրիարք հաւանեցաւ, որ ըմբոստը մնայ Դամասկոս իբրև խոտտովանահայր: Բայց Սկրտիչ հանգիստ կեցող մարդ չէր...: Կուսակալը, զայրացած Բեֆսիզեանի անհնազանդութենէն, հրահանգ տաւ քանի մը ու-
տիկաններու, որպէսզի փողոցի մէջ, ուր որ հանդիպին, կալանա-
տրեն զայն: Եւ օր մը բռնեցին Բեֆսիզեանը... ձի նստեցուցին զայն, շղթայեցին անոր ոտքերը ձիու փորին տակէն և իջեցուցին Պերուք... և... շուտով փոխադրեցին Երուսաղեմ, ուղղակի կտա-
վարական բանտ: Յովհաննես պատրիարք... բանտարկեալը փոխադրել տուաւ Ս. Յակոբ և հոն ինքը խցարգել ըրաւ զայն, և քանի մը ամիս յետոյ դրկեց Կ. Պոլիս, վտարելով Ս. Յակոբի միաբանութենէն: Բեֆսիզեան Ս. Յակոբի միաբանութենէն վտարուեցաւ 1856-ին այնպիսի պայմաններու և պարագաներու մէջ, որ ունէ հոգևորականի համար անկում և նուաստացում պի-
տի համարուէր: Բայց Բեֆսիզեանի համար նշանակութիւն չու-
նէր այդպիսի բաներ»: 1856 թ. Կ. Պոլսում նշանակվում է Սկյու-
տարի Սր. Կարապետ եկեղեցու քարոզիչ. «...իր առաջին քարո-
զով իսկ ուշադրութիւն գրաւեց, համակրանք ստեղծեց իր շուրջ... և դարձաւ նշանատր քարոզիչ, որ լաւ գիտէր սուրբ գիրքը, կը քա-
րոզէր թիւրքերէն լեզուով: Նոյն իսկ իսլամներ կը հե-
տաքրքրուէին անոր թուրքերէն քարոզներով»: 1858 թ. Կ. Պոլ-
սում հրատարակում է «Առաջնորդ սրբազան տեղեաց» գիրքը: 1858-1864 թթ. Կ. Պոլսի պատրիարքի կողմից նշանակվում է Գաղատիո և Յոզղաթի միացյալ թեմի առաջնորդ: Այստեղ էլ «Բեֆսիզեանի... գործունէութենէն շինարար հետքերէն շատ բան չէ հասած մեզի. բայց իր արծաթափորութեան և զեղծարարութեան հետքերը շատ խորունկ մնացած է հոն»: Նրա օրոք՝ 1859 թ., նո-
րոգվում է Էնկյուրիի Սր. Կարմիր վանքի գմբեթը, վանքում կա-
ռուցվում է դպրոց: 1860 թ. մեկնում է Էջմիածին և հունիսի 2-ին ձեռնադրվելով եպիսկոպոս՝ վերադառնում է. «...Էջմիածնէ վե-
րադառնալէ յետոյ սկսած է իր արծաթափորի շահատակութիւն-
ներուն: Եպիսկոպոսանալէ յառաջ զգուշացած է կասկած հրաւի-
րել իր դրամական գործառնութեանց վրայ: 1862 ղեկտեմբեր 15-
ին վանքին և դպրոցի վերաբերեալ հաշիւները կը քննուին և 413
հնչուն ոսկի կ'առնուի Սկրտիչ եպիս. ձեռքէն... Բեֆսիզեան այ-
լեւս ընկելը չունէր Անկիւրիոյ մէջ, Ժողովուրդը դժգոհ, իշխան ա-
ղաներ իրեն դէմ դարձած՝ իր արծաթափորութեան... համար... Բեֆսիզեան թեմերու մէջ դրամ ժողոված է յանուն արքայի, բայց
իր քաղցրացած է զանոնք և տոկոսով ստոր անոր տուած է: Իր ձեռք
բերած դրամներուն հաշիւը տալով Էնկիւրիոյցիներուն, պարտա-
կան կը մնայ 30.000 դրշ. և մուրհակ մը կուտայ որոշեալ ժամա-

101 ՊՀԱԳԱՀՏ, էջ 16:



Սկրտիչ Քեֆսիգյանը Բերիո քեմի առաջնորդ (լուս.՝ Դալեպ, 1870 թ.)

նակի մէջ հատուցանելու համար... 30.000 որշ. մտրիակը տալէ յետոյ... զգեստները և սպասները կ'առնէ և կ'երթայ Միվրի-Հիսար, անկից կ'անցնի Գարահիսար. և հոն կը ջանայ Գարահիսարի վիճակը անջատել Անկիւրիայէն և առաջնորդ ըլլալ. Պատրիարքարան լուր կը տրուի և ձախողութեան կը մատնուի Քեֆսիգեանի այդ ծրագիրը...: Սկրտիչ Եգիպտոս կ'երթայ, բայց Անկիւրացիք կը հետապնդեն զինք...: Ազգային պատրիարքարանի մէջ դատ կը բանան Սկրտիչի դէմ, որ Կ. Պոլիս կը բերուի... Սկրտիչ կը դատապարտուի և վերոյիջեալ 30.000 որշէն գատ 90.000 որշ. ի չափ գումարի մը պարտական կը մնայ...: Քեֆսիգեան Գահիրէ կը հասնի, 1864 հոկտեմբեր 30-ին, պատրիարքական կոնդակով, իբրև փոխանորդ Եգիպտոսի առաջնորդ՝ Մարաշցի Գաբրիէլ Եպիսկոպոսին... (Եգիպտոսում) Քեֆսիգեան 3000 ոսկի կ'իւրացնէ Վանեցիի մը կտակէն... (դպրոցի) հոգաբարձութիւնը կը բողոքէ ազգ. պատրիարքարան... որ Եգիպտոս քննիչ կը որկէ Վարժապետեան Ներսէս Եպիսկոպոսը...: Ըստ ոմանց Ներսէս Եպիսկոպոս... անյաջող կը վերադառնայ Կ. Պոլիս. ըստ այլոց... կարդարացնէ Քեֆսիգեանը և կը հաստատէ իր պաշտօնին մէջ, Նուպար Փաշայի պաշտպանութեամբ: Ըստ Սաւալանի... Քեֆսիգեան ժողովուրդին հանդէպ ունեցած բուռն ու անսաստ վարմունքին համար կը զանակոծուի կիներէ, որոնց ամուսինները կառավարութեան մատնած ու բանտարկել տուած էր...: Քեֆսիգեան... գրուած էր Նուպար փաշայի համարումը...: Փաշան միշտ բարեկամ մնաց Քեֆսիգեանի, որ դրամ կը քաշէր անկէ իր կաթողիկոսութեան ատեն դպրոցի և աթոռի անունով, բայց կ'իւրացնէր զանոնք: Ժողովրդական դժգոհութիւնը, սակայն սաստկացաւ հետզհետէ, և Քեֆսիգեան նոյն ինքն Նուպար փաշայի խորհրդով հեռացաւ Եգիպտոսէն 1866 ապրիլ 22-ին և գնաց Կ. Պոլիս»: 1870-1871 թթ. Հալեպի առաջնորդն էր, իսկ 1871 թ. ընտրվում է կաթողիկոս: Օծումը կատարվում է նույն թվականի



Սկրտիչ Քեֆսիգյանը Սեօի Ցանն Կիլիկիո կաթողիկոս (լուս.՝ Դալեպ, 1871-1889 թթ.)

նոյեմբերի 28-ին Սսի մայրավանքում (Քարգէն Ա աթոռակից կաթողիկոս, նշվ. աշխ., սյունակ 694-708, 713, 715-716): Կաթողիկոսության տարիներին ձմեռն անցկացնում էր Հալեպում (Սևեան Ա., նշվ. հոդվ., № 24, էջ 600), որտեղ էլ Սր. Քառասնից մանկանց եկեղեցում գտնվող կաթողիկոսության ազդեցությամբ նկարված բազմաթիվ հին պատկերներ անխոհեմաբար հրամայում է պատռել (Քարգէն Եպիսկոպոս, Հալեպ, էջ 3): 1873 թ. հիմնադրում է Սսի գիշերօթիկ ճեմարանը (Քիւրքճեան Վ., նշվ. հոդվ., էջ 1180-1181): Կյանքի «վերջին տարին, ուզեց իր հարստութիւնը փոխանցել Երուսաղէմի աթոռին... պայմանաւ որ իր հարստութիւնը յատկացուի Ժառանգաւորաց դպրոցին, որուն անունն ալ փոխուելով կոչուի Սրբոց Յակոբեանց և Կիլիկիոյ աթոռոյն վարժարան... և հետո ինքն ուր որ ալ մեռնի, իր մարմինը փոխադրուի Երուսաղէմ և թաղուի Ս. Փրկչի գաւիթը, և տարեկան հոգեհանգիստ կատարուի իր յիշատակին հոգեզայտեան տօնին... Գաբրիէլ վարդապետ Անոյճեան դրկուեցաւ Հալեպ, որպէսզի բանակցի Սկրտիչ կաթողիկոսի հետ... Անոյճեան շատ անմալատ տեղեկագիր մը բերաւ տնօրէն ժողովին. մէջտեղ դրամ չի կար. ասոր անոր վրայ առնելիքներ կային...: Հետևաբար մերժուեցաւ Քեֆսիգեանի առաջարկը...» (Քարգէն Ա աթոռակից կաթողիկոս, նշվ. աշխ., սյունակ 722-723): Վախճանվել է Հալեպում «Ամենայն Հայոց հայրապետի և հայ ժողովրդի նզովքի տակ» («Էջմիածին», 1959, № 10, էջ 35-36): Քեֆսիգյանը «...խորապէս ախտաւորուած էր արծաթափորութեամբ...: Տոկոսով ալ կը շահագործէր իր փարաները, կը վստահէր շողքոքոքներու, և կը կորսնցնէր...: Քեֆսիգեան ուզեց մթերել իր անձին համար... մեռաւ առանց լուծայ մը բողոքու այն աթոռին, զոր ի զուր գրաւեց 23 տարի...: Քեֆսիգեանի արծաթափորութիւնը ծիծաղելի ըլլալու չափ նշանատր էր: Նա փոքր արկղ մը ունէր: Իր տրամադրելի դրամները կը պահէր ատոր մէջ: Երբ իր սենեկին

մէջ էր Քէֆսիզեան, արկղիկը պէտք էր իր աչքին առջև և ձեռքին տակ գտնուէր. երբ եկեղեցի իջնէր, արկղիկը կը փակուէր պահաբանի մը մէջ... և այս արկղիկն էր, որ յափշտակուեցաւ ձեռքէ ձեռք Հալեպի առաջնորդարանին մէջ, Քէֆսիզեանի մահուան անկողնին շուրջ, և կողոպտուեցաւ (**Բարզէն Ա արքայից կաթողիկոս**, նշվ. աշխ., սյունակ 721-722): Մարմինը «...աթոռի վրայ մտած վիճակով և հայրապետական զգեստ ու զարդարանքներով... ցուցադրուած մնաց Ս. Աստուածածին եկեղեցոյ բեմի վրայ ու հայրապետական շուրջով քաղուեցաւ Ս. Քառասնից մատրան մէջ...» (ՊՀՀ, էջ 885): Բարզէն կաթողիկոսը, Սյուրմեյանը, Տեմիրճյանը և այլ հեղինակներ Սկրտիչ կաթողիկոսի մահվան օրը միախառնած նշել են նոյններէրի 8-ը (**Բարզէն Ա արքայից կաթողիկոս**, նշվ. աշխ., սյունակ 767: ՊՀՀ, էջ 885: **Տէմիրճյան Վ.**, Գաւազանագիրք Բերիոյ հայոց բեմի առաջնորդներու, «Հասկ», 1975, № 7-8, էջ 294: «Էջմիածին», 1959, № 10, էջ 35-36): Սկրտիչ կաթողիկոսի մահից հետո նրա ժառանգորդները յուրացնում են կաթողիկոսի անունով գրանցված ազգապատկան 4-5 կալվածքները. «...ամէն ոք գիտէ որ Քէֆսիզեանի անուն արձանագրուած յիշեալ կալուածներն ալ հաւասարապէս Սոյ կանքին կ'պատկանին, մնաց որ՝ այդ կալուածներուն արժէքն երկար տարիներու ընթացքին մէջ անոր վատնած ու փճացուցած ազգ. դրամներուն ու հարստութեան հազիւ թէ մէկ տասնորդին կ'հասասարի, բայց ցտալին այն է, որ վանքին իրատունքներն ըստ օրինի պաշտպանելու համար գօրատր փաստեր կ'պակսին քառ օրին. բան մը, որուն մէջ ալ թերացած է նախորդ կաթողիկոսը, չհեռատեսելով անխուսափելին կամ այդ կէտին մէջ ալ գիտակցաբար թէն ընելով ժողովուրդին. ուստի մենք չենք յուսար, որ տյն ժառանգորդաց խնդիրն առանձին հետապնդուելով ի նպաստ վանքին եզրակացութեան մը յանգի...» («Բիւզանդիոն», 1909, № 3799, էջ 1):

Ներկայացնում ենք Սկրտիչ կաթողիկոսի մասին մամուլում տեղ գտած մի քանի հոդվածներից երկուսը, որոնք կարող են մեզ օգնել հասկանալու նրա կերպարը.

1884 թ. նշվել է. «...Սկրտիչ կաթողիկոս որ 13 տարիէ ի վեր չէ դադարած ազգին մաքրութեան և եկեղեցոյ միութեան դէմ դաւել շարունակ... Չենք կարող երբէք ներել մեր ազգային ժողովի, որ Խրիմեանի պատրիարքութեան ժամանակ բաւական քաջութիւն չ'ունեցաւ արգելել Սկրտիչ եպիսկոպոսի կաթողիկոսութեան վաւերացումը մերժելու, մինչև որ Արարատեան մայր Աթոռի և Սոյ միջև յարաբերութիւններն ճշտի և վերջնական կերպով չը գծուին: Եթէ այդ կատարուէր կանխա՝ պիտի երբէք տեղի չ'ունենային այդ տխուր մեքենայութիւնը, որք օտարի դրդմամբ կը գործուին այստեղ նոյն վաւերացման օրէն ՚ի վեր, պիտի ոչնչանային այն ճիգերն, որ կը լինին այժմ հայկական եկեղեցոյ մէջ երկպառակութիւն մը ևս յարուցանելու համար, շնորհիւ նախկին Էջմիածնայ միաբան Սկրտիչ արքեպիսկոպոսի, որ կարող է ամեն չարագործութիւն, որու համար ամեն մատնութիւն ներելի է և ամեն տեսակ քսութիւն ընդունելի մի միջոց: Սկրտիչ կաթողիկոս երկու դիտակէտ ունեցած է միշտ իր առաջ: Նախ Կ. Պօլսոյ պատրիարքութենէն, հետևապէս ազգ. կենդրոնական վարչութենէն անկախ մի դիրք առնուլ, և ընել այնպէս, որ Սոյն արքուն ոչ ևս իբր պարզ առաջնորդական մի թէմ նկատուի, և պատրիարքի իրաւասութեան ներքև գտնուի: Նա կ'ուզէ, որ մի երկրորդ պատրիարքութիւն ևս հաստատուէ՝ ՚ի Կիլիկիայ, ունենալով մի և նոյն արտօնութիւններն, յարաբերութիւններն կառավարութեան հետ, որ ունի հինգ դարէ ի վեր Կ. Պօլսոյ հայոց պատրիարքներն, սա առաւելութեամբ միանգամայն որ սահմանադրութեան մնամ մի բան անգամ չի գայ սահմանադրել, մեղմել Սոյն պատրիարքի իշխանութիւնը...: Սկրտիչ կաթողիկոս երկու տարի յառաջ եկաւ անձամբ ի Կ. Պօլիս և գաղտնիզողն թուրքաց հետ միաբանելով՝ խլեց մի Պէրաթ Բ. դռնէն, որ զինքը Կ. Պօլսէն բոլորովին անկախ կը հրատարակէր...: Այս պէրաթի գօրութեամբ այն օրէն ի վեր ոչ մի առիթ չէ փախուցներ նա յայտնելու համար իր արհամարհանքը դէպի ազգային վարչութեան պաշտօնէից հետ...: Երկրորդ դէտակէտն է Սկրտիչ կաթողիկոսի, հրատարակել և ընդունել տալ բոլոր թուրքաբանական հայոց Սոյն արքուն ընդհանրականութիւնը...: Բայց Սոյն մէջ մի քանի տարիներէ ի վեր ի գործ դրուած մեքենայութեանց պատճառն ատելի

վերջ պէտք է որոնել: Դա պարզապէս մի եպիսկոպոսի նենգաւորութեան և փառամոլութեան արդիւնք չէ միայն, որ կը տեսնենք: Սկրտիչ կաթողիկոս... պարզապէս մի գործիք է թրքական քաղաքականութեան, որու ամեն ջանքերն կը ձգտին դէպի ոչնչացումն պատրիարքական իրաւասութեանց...: Թուրք միշտ սնուցած է այն գաղափարն, որ ամբողջ թուրքաբանական հայոց հոգևոր գլուխն իր հողին վրայ գտնուի, որպէս զի կարողանայ իր կամացն հնազանդեցնել զայն միշտ» («Արձագանք», 1884, № 10, էջ 137-138):

1888 թ. Սկրտիչ կաթողիկոսի կամակորոթումների մասին հրատարակվել է. «Տեղապահը հրաժարեալ է, պատճառն այն է, որ Բերիոյ տեղապահութիւնն և կամ առաջնորդութիւնն ստանձնող կղերականը նախ պարտի Սոյ կաթողիկոսին և կամ Ս. պատարագի գումարներէն և կալուածէն յատկացեալ 20 ոսկի գումարն անխափան վճարել իրենց տոկոսով. սորա հետ մէկտեղ եթէ առաջնորդը ծայրագոյն է, 50 ոսկի վճարելով Ս. Աթոռոյն ուխտեալ եպիսկոպոս ըլլալու է, իսկ եթէ եպիսկոպոս է, քահանայ ձեռնադրելու իրատունք ունենալու չէ: Հետևապէս երկու տարին մի անգամ Սք. Միտոնի ժամանակ առնուազն 100 ոսկի և շատ մը ուխտատուներ բռնի որկելու են: Գալով ծանուցեալ պիտու՞ն գործարարութեան, Ս. եկեղեցոյ և կալուածոց մատակարարութիւնն ստանձնող խորհուրդը մէկ կամ երկու անձ ըլլալու է, որոնք իր փոխանորդը կը կոչուին. սքառ տարին մի անգամ իրենց գործառնութեանց համարատուութեան հաշուեցուցակն գրելու են ի Ս. աթոռ ի վաւերացումն, հետն ալ ճանապարհի ծախքն 50 ոսկի որկելու են, եթէ ոչ, այն հաշիւն անվտեր է, իրեն համար օրինապէս ընտրեալ պաշտօնայք գող և սազակ են. մինչև անգամ անխաղաքար հրաման կը դրկէ, որ կալուածն այս տարի վարձու չի տրուի, մինչև որ ինքը գայ. իսկ եթէ պաշտօնայքն հաշուեցուցակին հետ մէկտեղ 50 ոսկի որկած ըլլան, ազգին ամենահաւատարիմ անձինքն են. հոգ չէ բող գող ըլլան... ընդհ. ժողովոյ երեսփոխանութեան մէջ առաւելագոյն քուէ շահողներն ատելի ոսկի վճարելու են... իսկ այն որ ոսկի չունի, գոնէ խօսելու կարողութիւնն ունենալով՝ ՚ի հարկին ժողովոյ ատեն Աթոռին իրատունքներն պաշտպանելու է. իսկ եթէ տյն երկու յատկութիւններէն ալ գուրկ է, գոնէ քուէ տալու է. եթէ գրել չի գիտեր, քուէն նորին վեհափառութեան գրել տալու է, որով իրմէ հաւատարիմ մէկը չի կրնար ըլլալ: Նոյնպէս... մոմսավաճառութիւնը ստանձնողները պարտին տարեկան 40 ոսկի վճարել, Ս. Աթոռը լուսավառ պահելու համար. եթէ չը վճարեն, արանց մոմսավաճառի 8 տարեկան հաշիւները կը պահանջուին...: Քահանայք ևս իրենց մասնատր տուրքը վճարելու են, տյն կաթողիկոսէն ձեռնարեալ ըլլալուն համար, չի վճարող քահանայն կարգալոյժ է...: Տարուպեայի գիտին Տ. Գրիգոր քահանայէն 25 ոսկի կը պահանջուի, բայց յիշեալը պարտք չունի եղեր, այդչափ դրամ չունի եղեր, որու հոգ. եթէ անկարող է, ինչու քահանայ եղաւ, թէ ոչ Լատին եղող Ս. Մեսրոպ քահանային մօտ թող երթայ: Արամոյ գիւղին Տ. Մատթեոս քահանայէն ուխտագիր և կամ ոսկի կը պահանջուի, եթէ ոչ փիլոն առնելու իրատունքն զրկելու է, իբր թէ զանգատագրեր հասեր են եղեր...: Կիլիկիոյ դպրոցաց մէջ ծառայող բոլոր դասատուները պարտին տարեկան 2 ոսկի վճարել, որպէս զի Սկրտիչեան վարժոցին ծախքն և ընդհ. տեսչին պէտքերն հոգացուին. չը վճարող դասատուն անկրօն և հրաժարեալ է. չի մոռանամք ըսել, որ երեսփոխանական ժողովոյ մէջ կաթողիկոսի կանոնագրոյն մէջ դէմ խօսողներն ալ անկրօն են» («Արձագանք», 1888, № 6, էջ 72-73):

107. Չանգակ. պահվում է թանգարանի վերածված Սք. Աստվածածին եկեղեցում, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.



Նուիրեաց զգանգակս գայս | ի Ս(ր)բոց Քառասուն մանկանց ս(ուր)բ եկեղեցոյ Կարապետ Տէտտուսե(ա)ն, | ի թուին Ք(րիստոս)սի | ԿՂԳ (թարգմ.՝ 1895)-ի-ն:
Հրատ. առաջին անգամ:



108. Ավետարան. տպվել է 1899 թ. Երուսաղեմում: Արձանագրությունը՝ կազմին ամրացված արծաթյա սալիկին, փորագիր, 3 տող և առաջին էջին՝ ձեռագիր, 5 տող.

Առաջին էջին.



Յիշատ. է Աւետարանս ի կողմանէ տ. Սիկ. քահանայի Ագսար[այի] | Ս. Աստուածածնի եկեղեցուն, և որզ հանդիպեն և կարդ[ան], | ...ով հայր մերիւ յիշեն զննջեցեալսն հոգին ի փառս այ. ..., | Հգռ. ինն հարիւր և մէկ, | մայիս քսան ու եօթն:

Կազմին.

Նուէր | Տիգրան Դաշճեանէ, | 1958:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ակսարայ քաղաքը գտնվում է Անատոլիայում:



Սբ. Աստվածածին եկեղեցին հիշվում է ԺԹ դարի երկրորդ կեսին (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, էջ 144):

109. «Ստնտու Տիրամայրը և չորս ավետարանիչները» սրբապատկերի շրջանակ. փայտյա, «...համակ արծաթապատ... 13 սնդմ. լայն...»: Թանկագին նկարն ունի արծաթե նուրբ զարդերով շրջանակ. «Շատ հաւանական է, որ բուն նկարին շրջանակը հինցած է, և եկեղեցւոյ մէջ աւելի մեծ շրջանակ մը պատրաստ գտնուելուն, հին նկարը անցուած է նոր շրջանակի մէջ, իսկ վարի կողմէն պարապը լեցուած է չորս ավետարանիչներու նկարներով, չորս անջատ ապակիներու վրայ գծուած...: Հնադրոշմ և արժեքաւոր այս նկարը դարերէ ի վեր եղած է պաշտամունքի խոր հիացիկ առարկայ, մասնատրաբար Հայէայի հայ մայրերու համար...»¹⁰²: Արձանագրությունը շրջանակին, փորագիր, 4 տող.



Հալեայի Խ (40) մանկանց ս(ուրբ) | եկեղեցւոյ նուիրէ շրջան(ա)կս | այրի տիկին Վարտէ Կարապետ | Պէրուքի, 1907 յուլի(ս) 13:

Հրատ. առաջին անգամ:

¹⁰² ՊՀՀ, էջ 968-969:

Ծանոթ. սրբապատկերը բերվել է Եփրոպայից, որի վրա տեր Սկրտիչ քահանան կատարել է որոշ վերափոխումներ. «...Հալեպի հայերը Եփրոպայից ստացան Հիսուս մանուկի պատկերը... մեկ թեով... կանչեցի տեր Սկրտիչ քահանային... որպեսզի մի այլ թև նկարի» (Théâtre de la Turquie, p. 294):

110. Ավետարանի կազմ. արձաթյա¹⁰³, պահվում է քանգարանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Նուէր Զ(առասնից) մանկանց սուրբ եկեղեցույն | ի յիշատակ իրենց որդույն՝ Համբարցումի | եօթն ամիակին, Հալէպ 5 փետր(ուար) 1910. | ամուլք Յ(ակոբ) Պարսամեան:

Հրատ. ՊՀՀ, էջ 910:



Ծանոթ. Հակոբ Պարսամյանը 1903 թ. Բերիո թեմի քաղաքական ժողովի («1903. ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց», էջ 354), 1910 թ.՝ Հալեպի ազգային Ներսեսյան վարժարանի հոգաբարձության (Քէշիշեան Վ., Հալեպի Հայկական գաղթօճախի..., էջ 127-128), իսկ 1913 թ. Այնթապի Կիլիկյան վարժարանի՝ Հալեպում գտնվող օժանդակ մարմնի անդամ էր (նշվ. աշխ., էջ 192): 1916 թ. քաղաքական մեղադրանքով բանտարկվում է Հալեպում (Նկարագրութիւնք Երուսաղէմի-Հալեպի-Դամասկոսի գաղթականական եւ վանական զանազան դիպաց

103 Նշվ. աշխ., էջ 910:

եւ անցքերու 1914-1918, էջ 37): 1919 թ. հունվարին ընտրվում է ՀԲԸՄ Հալեպի տեղական մասնաժողովի վարչության անդամ (Քէշիշեան Վ., Հալեպի Հայկական գաղթօճախի..., էջ 156):

Տարբերեցրում. Սյուրմենյանի մոտ «Յ(ակոբ) Պարսամեան»-ի փոխարեն՝ «Յ. Պայրամեան»:

111. Արձանագրություն. զանգակատան հարավային պատին ամրացված մարմարե սալիկին՝ փորագիր, 5 տող.

Կառուցաւ զանգակատունս | նուիրատուութեամբ | բարերար տիար | Բրզգալլահ Ծորճ Թահանեան(ի), | 1912:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. պարոն Ռզգալլահի մասին տես Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. ՆՁ 116:

112. Արձանագրություն. զանգակատան հարավային պատին ամրացված մարմարե սալիկին՝ փորագիր, 4 տող արաբերեն.

تبرّع بهذا البناء و الجرس المحسن
الكريم | رزق الله جورج طحان | ١٩١٢.

Թարգմ. Չանգակատունը և զանգակը նվիրեց առատաձեռն բարերար Ռզգալլահ Ծորճ Թահանը 1912 թ.:


Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ռզգալլահի մասին տես Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. ՆՁ 116:



113. Ավետարան. տպվել է 1899 թ. Երուսաղեմում, պահվում է քանգարանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում, արձանագրությունը՝ կազմին, փորագիր, 4 տող, առաջին էջում՝ ձեռագիր, 6 տող.





Փորագիր.

Նուիրեայ | Վարդուհին Ծաղիկեան | ի Խ (40) մանկաց ս(ուր)բ եկեղեցույ, | 1913 Հայլէպ:

Ձեռագիր.

Դուստր Վարդուհի Կ. Ծաղիկեան, | Չմշկածագի գիղէն Միատան, | նուիրե գայս ս(ուր)բ Աւետարան | առ ս(ուր)բ եկեղեցոյն Քառասուն մանկանց, | 6/19 յուլ(իս) 1913 | Հայլէպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Միատուն գյուղը գտնվում է Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի Չմշկածագ գավառում՝ Չմշկածագից 15 կմ հյուսիս-արևմուտք: Պաշտոնապես վերանվանվել է Կեմիջի (Gemici): Ներկայումս մնացել է Քերանի ջրամբարի տակ:

114. Ժամացույց, արձանագրությունը՝ ժամացույցին ամրացված մետաղյա սալիկին, փորագիր, 3 տող.

Ս(ուր)բ Քառասնից մանկանց եկեղեցիին | ի յիշատակ Խաչատուր Յակոբճան Շահինէն, | 21 օգոստոս 1916 Հայլէպ:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. Խաչատուր Շահինը 1919 թ. հունվարին ընտրվում է ՀԲԸՄ Հայկալի մասնաճյուղի վարչության գանձապահ (Պերդուստան Լ., նշվ. հոդվ., էջ 477):



115. Սկիհ. «Երուսկական՝ արծաթ, ոճ, ծաղիկ ու նկար, 26 սնդմ. բարձրութեամբ եւ 13.5 սնդմ. տրամագծով եւ գրեթէ նոյնքան տրամագծով մաղզմայ»¹⁰⁴.

Նուիրե ս. սկիհա մահտեսի Վարդէ Խանճեան Հայլէպու Ս. Զ. մանկանց եկեղեցույ, ի յիշատակ իր հանգուցեալ եղբարց՝ Յակոբճանի եւ Ռ-գկուլլահի, 1918 սեպտ. 7:

Հրատ. ՊՀՀ, էջ 910:

Ծանոթ. սկիհը չենք տեսել: 1926 թ. Սր. Քառասնից մանկանց կամ Սր. Աստվածածին եկեղեցու իրերից էր (նշվ. աշխ., էջ 900):

Վերոնշյալ արձանագրությունը Սյուրմեյանի մոտ կրկնվում է այսպես. «Նուիրե զսկիհա մահտեսի Վարստ Խանճեան՝ Հայլէպու Ս. Քառասունք եկեղեցույ ի յիշատակ իր հանգուցեալ եղ-

բարց Յակոբճանի եւ Ռ-գկուլլահի: 1918 ապրիլ 7» (նշվ. աշխ., էջ 910-911):

Հակոբճանը, Ռ-գկալլահը, Վարդեն, Աննան և Դուրանը Գևորգի զավակներն էին: Եղբայրները Հայկալի հոշակավոր վաճառականներից էին: 1906 թ. մայիսի 19-ին Հակոբճանն արդեն մահացել էր, իսկ Ռ-գկալլահը, ամուսնացած չլինելով, շարժական և անշարժ գույքը կտակում է երեք քույրերին (ՀԱԴ, ֆ. 1421, ց. 5, գ. 1, ք. 6-7):

Ռ-գկալլահ Խանճեանի տասպանագիրն ընթերցել է Սյուրմեյանը, ըստ որի՝ վախճանվել է 1920 թ. (տես՝ Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 46): Սակայն, ըստ սկիհի արձանագրության, 1918 թ. արդեն մահացած էր, հետևաբար արձանագրություններից մեկի բովանդակը Սյուրմեյանի կողմից սխալ է ընթերցվել:

116. Արձանագրություն. զանգակատան հարավային արտաքին որմին տեղադրված կիսանդրուն՝ ելնդագիր, 6 տող հայերեն, նույն բովանդակությամբ՝ 4 տող արաբերեն.

Րըզգալլահ Ծօրճ | Դահանեան, | Պրագիլ բնակող, որն | կանգնեց աշտարակս այս | նուիրելով հանդերձ | զանգակն, 1926:

Արաբերեն.

رزق الله جورج طحان | المقيم في سان باولو البرازيل | و المتبرع بتشيد هذا البرج | و مقدم الجرس ١٩٢٦

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ձեռքի աղորիք և սանդ գործող արհեստավոր էր: Մեկնում է Հարավային Ամերիկա և Սան Պաուլո քաղաքում շարունակելով պապենական արհեստը՝ հիմնում ընդարձակ գործունեություն է հայկացի Տեր-Մարկոսյան Ջեքիեի հետ, ունենում 3 որդի (ՊՀՀ, էջ 895): 1911 թ. այցելելով ծննդավայր՝ Հայկալ, կառուցում է Սր. Քառասնից մանկանց եկեղեցու զանգակատունը (նշվ. աշխ., էջ 260), որի շինարարության առաջին հատվածն ավարտվում է 1912 թ. (տես՝ Սր. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 111-112): 1913 թ. հունվարին Հայկալ է հասնում նրա ծուլարանում պատրաստված զանգակը (Քեչիչեան Վ., Հայկալի Հայկական գաղթօճախի..., էջ 269-270): Չանգակատունը կիսատ է մնում մինչև 1925 թ.: Այն ամբողջացնելու համար վերստին գումար է ուղարկում (ՊՀՀ, էջ 260): Օժանդակում է նաև Հայկալում կառուցված ծերանոցին: Միրիական կառավարության կողմից պարզևատրվում է «Արժանյաց շքանշանով»: Սան Պաուլոյում կառուցում է եկեղեցի: Մահացել է 1949 թ. ամռանը Սան Պաուլոյում (նշվ. աշխ., էջ 895):




104 Նույն տեղում:

117. Խնկանան. արձանագրությունը՝ փորագիր, 1 տող.
Յիշատակ է Մանիա Փանոսեան տիրվիկցի
Ս(ուրբ) Խ (40) մ(անկանց) եկեղեցոյ Հալէայի, 1927
սեպ(տեմբեր) 6:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. Տիրվիկը Տիրիկն է:
Գտնվում է Արևմտյան Հայաստանի
Սերաստիայի նահանգի համանուն
գավառի Տիրիկ գավառակում:
Ներկայումս պաշտոնապես կոչվում
է Դիվրիդի (Divriği):



118. Կանթեղ. պահվում է քանդարանի վերածված Սբ. Աստ-
վածածին եկեղեցում, արձանագրությունը՝ փորագիր, 2 տող.

Ս(ոյն) նու(ի)րեց Ս(ուրբ) Խ (40) մ(անուկ) եկե-
ղեցուն Հալէայի Եղիսաբէթ Գուկասեան իր ամուսին
Յարութիւնին եւ որդւոյն՝ Արամի հոգ[ոյն], | 16 մա-
յիս 1928:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. արձանագրությունը
ձգվում է կանթեղի շուրջըրորը:



119. Չռուց խաչ. արձաբյա¹⁰⁵, պահվում է քանդարանի
վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում, արձանագրությունը՝
փորագիր, 2 տող.

Յիշ(ա)տ(ա)կ է ս(ուրբ) խաչս Եսթեր Հրեզեանէ
Ս(ուրբ) Քառ(ասուն) ման(կանց) | Էկեղ(ե)ցոյ՝ յի-
շ(ա)տ(ա)կ հոգ(ուն) Յովհաննեսի, 1929:

Հրատ. ՊՀՀ, էջ 911:

Տարընթերցում. Սյուրմէյանի մոտ «Հրեզեանէ»-ի փոխարեն՝
«Երեցեան»:




120. Ավետարան. պահվում է քանդարանի վերածված Սբ.
Աստվածածին եկեղեցում: Հիշատակագրությունը՝ առաջին է-
ջում, ձեռագիր, 3 տող.

Վահան՝ որդի Խաչատուր Գարակեօզեանի | սե-
բաստացի, | լուսարար Ս(ուրբ) Ք(առասնից) մ(ան-
կանց) եկեղեցոյ 1950-էն:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. Սերաստիա քաղաքը
գտնվում է Արևմտյան Հայաստա-
նում: Ներկայումս պաշտոնապես
վերանվանվել է Սիվաս (Sivas):



121. Արձանագրություն. Մեծ եկեղեցու ավագ խորանի սե-
ղանին ազուցված մարմարե սալիկին՝ փորագիր, 9 տող.

Շինեցաւ ս(ուրբ) սեղանս այս | արդեամբ | տ(էր)
Ղեւոնդ արք(եպիսկոպոս) Չէպէյեանի՝ | առաջնորդ
Բերիոյ թեմին, | ի յիշատակ ծնողաց իւրոց՝ | Անդ-
րանիկի եւ Սաթենիկի, | եւ համայն ննջեցելոց | Չէ-
պէյեան գերդաստանի, | 1965:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. սեղանի կառուցումը սկսվել է 1965 թ. սեպտեմբերի 4-
ին. «Խորանին տակ, շիշի մը մէջ դրուեցան յիշատակարան մը և
հետևեալները. Ս. Էջմիածնէն՝ Պատարագի նշխար և խաչ մը,
Կիլիկիոյ կաթողիկոսարանէն՝ Ս. Միսոն և Անթիլիասի նահա-
տակաց մատրան յուշանկարը, Երուսաղէմէն՝ Ս. Բուլ Քրիստոսի

¹⁰⁵ Նշվ. աշխ., էջ 911:



գերեզմանէն, Տէր-Զօրէն՝ քար և հող նահատակաց վայրերէն» (Տէմիրճեան Վ., նշվ. աշխ., էջ 408-410): Կառուցման աշխատանքների համար տեր Ղևոնդը ծախսել է «7.500 Միւր.»: Սեղանի նախագիծը կատարել է բեյրութահայ ճարտարապետ Գևորգ Էմմիլյանը: Խորանի օծումը կատարվել է 1966 թ. հունվարի 6-ին («Հասկ», 1966, № 1, էջ 28):

Ըստ Հայեպոմ ԽՍՀՄ-ի գլխավոր հյուպատոսության՝ 1964 թ. հուլիսի 24-ի տեղեկանքի՝ առաջնորդ, նախկին հնչակյան Չեպեյանը, որպես անսկզբունք, բուլակամ անձնավորություն, գտնվում էր դաշնակցականների որոշակի ազդեցության տակ (Քաղաքյան Ա., Հայկաի հայ համայնքը 1964-1985 թթ., էջ 114): 1967 թ. նշանակվում է Նոր Զուղայի բնի առաջնորդ (Քաղաքյան Ա., Միրիայի հայ համայնքը 1960-ական թթ.-1970-ականների սկզբներին, էջ 222):


Ղևոնդ արք. Չեպեյանի մոր՝ Մաթենիկի մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 981:

122. Որմնափակ խորան. ոճավորված, շինարարական արձանագրությունը՝ խորանին կից ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Կառուցաւ Ս(ուրբ) Մինասի խորանս | արդեամբ | տ(էր) եւ տիկ(ին) Զաւէն Սլրեաններու | յիշատակ համայն ուխտատուներու, | 6 յունուար 1976:

Հրատ. առաջին անգամ:


Ծանոթ. որմնափակ խորանը կառուցվել է «Սբ. Մինաս» սրբապատկերի համար եկեղեցու հարավային պատին կից: Սրբապատկերի մասին տես Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 29:



123. Որմնափակ խորան. ոճավորված, շինարարական արձանագրությունը՝ խորանին կից ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Սուրբ Քառասնից մանկանց յիշատակին նուիրում | այս խորանը շինուեցաւ արդեամբ | պ(ա)-ր(ոն) Յովհաննէս Տապալաղի, | 1 յունուար 1983:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. որմնափակ խորանը կառուցվել է «Սբ. Քառասուն մանկունք» սրբապատկերի համար (տես Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 86) եկեղեցու հարավային պատին կից:

124. Սրբապատկեր «Սբ. Ներսէս Շնորհալի». արձանագրությունը՝ ներկագիր, 5 տող.

Ս(ուրբ) Ներսէս Շնորհալի, | 1102-1173: | Նուէր Ս(ուրբ) Ք(առասնից) մ(անկանց) եկեղեցոյ փորիկն | Ներսէս Շ. Գոյուճեանի | մկրտութեան առթիւ, 24 յունիս 1984, Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. նկարի մեջ այլեհեր Սբ. Ներսէսը պատկերված է սրճագույն եմիպորտով:



125. Արձանագրություն. եկեղեցու հյուսիսային խորանի սեղանին ազուցված մարմարե սալիկին՝ ներկագիր, 8 տող.

Շինեցաւ ս(ուրբ) սեղանս այս | արդեամբ տէր եւ տիկին | Մանուէլ Մահսերէճեանի | ի յիշատակ հարազատաց իւրոց՝ | եղբօրն Վահանի | եւ քրոջ՝ Վիռլէթի, | յամի տեառն 30 հոկտեմբերի | 1984:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. սեղանի նախագծող և իրագործող ճարտարապետն է Մարգիս Պալմանուկյանը (Ազէզեան Հ., նշվ. հոդվ., էջ 401):



126. Սրբապատկեր «Տիրամայրը մանկան հետ». պատկերը ներկայացնում է ոսկեգույնով դրվագազարդված սրճագույն բազիլաթոռին նստած, գլուխը սպիտակ գլխաշորով ծածկած Մարիամ Աստվածածնին, որը հագել է բաց մանուշակագույն զգեստ, վրայից՝ նարնջագույն աստառով մուգ փիրուզագույն քիկնոց: Սյունագարդ պատը ներկված է կանաչ երանգներով, իսկ աստիճանների գորգը՝ բազմագույն զարդանախշերով: Արձանագրությունը՝ ներկագիր, 6 տող, որից 2 տողը՝ արաբերեն, իսկ 2 տողը՝ անգլերեն.



Նուեր | տեր եւ տիկին Սելիմ Ֆեթելեաններու:
Արաբերեն. *سلم اسكندر قتال و عائلته*.
Թարգմ. Նվեր Սելիմ Իսքենդեր Ֆեթթելից և ընտանիքից:

Անգլերեն.
Jacob Issa, | Alep 1989.
Թարգմ. Ժակոբ Իսսա, Հալեպ 1989:
Հրատ. *առաջին անգամ:*

Ծանոթ. *ուկերիչ Սելիմ Ֆեթթելը 1981 թ. Սր. Աստվածածին նոր եկեղեցուն նվիրում է բյուրեղապակյա ջահ (Հինառոյան Զ., նշվ. աշխ., էջ 91-92, 108):*

Նրա մեծ հայրը՝ Սելիմ Ֆեթթելյանը, 1906 թ. մայիսին ընտրվում է Բերիոթ բեմի քաղաքական ժողովի անդամ (ՀԱԴ, ֆ. 1421, ց. 5, գ. 1, թ. 1) և շարունակում պաշտոնավարել մինչև 1907 թ. օգոստոսի 30-ը: Ժողովներին չմասնակցելու պատճառով հենացվում է պաշտոնից (նույնի՝ գ. 8, թ. 3): 1924 թ. հունիսի 5-ին հինգ տարով ընտրվում է Ազգային գավառական (Գաղաթեմ-նեան Գ., նշվ. հոդվ., էջ 304: Տես նաև «Տարե», 1929, էջ 378), իսկ 1925 թ. Քաղաքական ժողովի անդամ («Մուրիահայ տարեցոյց», Հալեպ, 1925, էջ 319):

127. Որմնափակ խորան. ոճավորված, Հին եկեղեցու արևմտյան ճակատին: Ծինարարական արձանագրությունը՝ խորանին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Տ(եր) և տ(իկին) | Յովսէփ եւ Անահիտ | Մարգարեաններ, | յերախտագիտութի(ւ)ն ծնողաց | իւրեանց՝ | Գարեգինի եւ Տիրանուիի, | 24.4.1992:
Հրատ. *առաջին անգամ:*

Ծանոթ. *որմնափակ խորանի նախագծողն ու իրագործողը հայեպահայ ճարտարապետ Գևորգ Մարգինն է (Ազեզեան Հ., նշվ. հոդվ., էջ 401):*



128. Սրբապատկեր «Սր. Գրիգոր Լուսավորիչը մկրտում է Տրդատին». ալեհեր Սր. Գրիգոր Լուսավորիչը հագել է սպիտակ պարեգոտ, դեղին աստառով կապույտ քիկնոց, ոսկեգույն եմփորոն, գլխին՝ կանաչ խույր: Տրդատ թագավորը պատկերված է կարմիր, իսկ հայոց թագուհին՝ նարնջագույն ծիրանիով: Անկյունում կանգնած ոսկեգույն թագը ձեռքին փոքրիկը սպիտակ հագուստով է: Արձանագրությունը՝ ներկագիր, 2 տող.

Նուեր Գրիգորեան եղբայրներու կողմէ | Գրիգոր Մյսնի-Գրիգորեանի յիշատակին, ասարիլ 1992:
Հրատ. *առաջին անգամ:*



129. Սրբապատկեր «Սր. Հակոբ Մծբնայ հայրապետ». պատկերը ներկայացնում է ալեհեր Սր. Հակոբին, որը ձեռքին ունի ոսկեգույն գավազան, հագել է սպիտակ պարեգոտ: Եպիսկոպոսական կարմիր հանդերձանքը զարդարված է ոսկեգույն նախշերով: Արձանագրությունը՝ 1-ական տող հայերեն և անգլերեն.

Ս(ուրբ) Յակոբ Մծբնայ հայրապետ, 4-րդ դար:
Անգլերեն.
Bertizian. V., 1993.

Թարգմ. Բերթիզյան Վ., 1993:
Հրատ. *առաջին անգամ:*



130. Մոմակալ, դեղին մարմարից, ոճավորված, եկեղեցու ներսում՝ մուտքից ձախ երկրորդ սյան վրա, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.



Ի յիշատակ | տէր և տի-
կ(ին) | Յովհաննէս և Ռո-
զին | Պայրամեան, | 1994:
Հրատ. առաջին անգամ:




131. Արձանագրություն. Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու մատուռի ներսում և հարավային որմին անրացված մարմա-
րե սալիկին՝ փորագիր, 9 տող.

Քարեգարդեցա | Ս(ուրբ) Քառասնից մանկանց
մատուռս | եւ շինեցաւ ս(ուրբ) սեղանս այս | ար-
դեանք տիար Յակոբ Յակոբեանի | եւ որդւոյ նորա՝
| տէր եւ տիկին Հրաչ Յակոբեանի, | 1995, ի յիշա-
տակ | հոր եւ մեծ հոր իւրեանց՝ | հանգ(ու)ց(եալ) Գե-
որգ Յակոբեանի:

Հրատ. առաջին անգամ:


Ծանոթ. բարեգարդման մախազիծը կատարել է ճարտարա-
պետ Սարգիս Պալմանուկյանը: Այն իրագործել է ճարտարա-
պետ Գևորգ Սարգիսը (Ազգեան Հ., նշվ. հոդվ., էջ 401):



132. Ձեռաց խաչ, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Նուէր Վազգէն, Այտա Աբգարեան(ներ)ի | կողմէ
յիշատակ Յարութին, Վերժին | Ապտալեան(ներ)ի:
Ս(ուրբ) Գարասուն մանկաց | եկեղեցի, Հալէպ 1-8-
1997:

Հրատ. առաջին անգամ:



133. Սրբապատկեր «Սբ. Գրիգոր Լուսավորիչ և բազում սրբեր». միակտոր հաստ կտավի վրա պատկերված յուղաներկ նկարը (չափերն են՝ 127 x 83 սմ) ունի փայտե ծաղկանկար շրջա-
նակ (լայն.՝ 11 սմ), որի «... վարի կողմը հինգսմ ու մասամբ նորո-
գուած... արձանագրութիւնը տասնեակ մը տարի առաջ նորո-
գուած: Իսկ ձախ կողմը, վարօք, դէպի շրջանակ, բացուած ձեռքի
մը շափ այրած սաստիկ ջերմութենէ, բայց առանց թափանցելու
կտալին. վասն զի ետեր ուէ կարկտան չերևար...»¹⁰⁶: Արձանա-
գրությունը ներկագիր է, 10 տող, որից 1 տողը՝ արաբերեն.



Ա (1). Ս(ուրբ) Գրիգոր Լուսավորիչ եւ առաջին
հայրապետ Հայոց, Բ (2). Ս(ուրբ) Արիստ(ա)կէս, Գ
(3). Ս(ուրբ) Վրդանիս, Դ (4). Ս(ուրբ) Գրիգ(ո)րիս Ա-
դ(ուանից) կ(ա)թ(ողիկոս) | Ե (5). Ս(ուրբ) Հուսիկ, Ջ
(6). Ս(ուրբ) Մեծն Ներսէս, Է (7). Ս(ուրբ) Մեսրոպ
Ս(ա)շք(ո)ց, Ը (8). Ս(ուրբ) քաջն Վարդ(ա)ն, Թ (9).
դուստր նորա Շուշան, եղբ(ա)րք ն(ո)ց(այ), Ժ (10).
Հմայեակ, | ԺԱ (11). Ս(ուրբ) Վ(ա)րդ(ան) Մամիկոն,
ԺԲ (12). Ս(ուրբ) Համ(ա)զա(ս)պ իշխան, ԺԳ (13).
Գրիգոր իշխան Մագիստրոս, ԺԴ (14). Գրիգ(ո)ր
ե(ր)կ(րորդ) Վկայ(ա)սէր, ԺԵ (15). Գրիգ(ո)ր եր-
ր(որդ) Պահլաւունի | ԺԶ (16). Ս(ուրբ) Սահակ Պար-
թեվ, ԺԷ (17). Գրիգոր Չորրորդ Տղայ, ԺԸ (18). Գրի-
գոր Հինգերորդ, ԺԹ (19). Գրիգոր Վեցերորդ Քարա-
վեժ: | Յիշ(ա)տ(ա)կ Քառասուն մանկանց յեկեղեցոյ:

Գրիգոր Լուսավորիչի գլխից վեր.

Ծերոց որդիք որդւոց, և պարծանք | որդւոց հարց
իւրեանց առակք:

¹⁰⁶ Նշվ. աշխ., էջ 929:

Գրիգոր Լուսավորչի ոտքերի մոտ.

Ահա ես եւ մանկունք իմ, գոր | ետ ինձ աստւած ժառանգ:

Արաբերեն. القديس غورغيوريوس المنور وعيلته المباركة

Թարգմ. Սուրբ Գուրգիորյուս (Գրիգոր) Լուսավորիչը և օրհնյալ ընտանիքը:

Հրատ. ՊՀՀ, էջ 930: Արաբերեն արձանագրությունը հրատարակվում է առաջին անգամ:

134. Կանթեղ.

Յիշատակ է կանթեղս Յակոբին եւ հօրն՝ Պաղտասարին, եւ մօրն՝ Ալթունին, Գէորգին, Ներսէսին եւ Մարգարին ի դուռն Ս. Բ. մանկանց եկեղեցուն:

Հրատ. ՊՀՀ, էջ 910:

Ծանոթ. կանթեղը չենք տեսել: 1926 թ. Սբ. Քառասնից մանկանց կամ Սբ. Աստվածածին եկեղեցու իրերից էր (նշվ. աշխ., էջ 900):

135. Չեռաց խաչ. արձաթյա¹⁰⁷, պահվում է քանգարանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում, արձանագրությունը՝ փորագիր, 3 տող.

Յ(ի)շ(ա)տ(ակ) է խաչս Չատիկի որդուն՝ | Մարտիրոսին, եւ մորն՝ Ուսկուհ(ի)ին, ի դու(ռ)ն | Ս(ուր)բ Խ (40) մանկաց եկեղեցուն:

Հրատ. ՊՀՀ, էջ 906:



Ծանոթ. ձեռաց խաչի վրա ավելի ուշ արձանագրվել է. «Փիւ ... ծանր(ութիւն) 220 կ(րամ)»:

Չատիկը, որդին՝ Մարտիրոսը, մայրը՝ Իսկուհին, հիշվում են 1827 թ. մեկ այլ արձանագրության մեջ (տե՛ս Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 89), հետևաբար ձեռաց խաչը թվագրում ենք ՎԹ դարով:

Տարրերեցում. Մյուրմեյանի մոտ «Ուսկուհ(ի)ին»-ի փոխարենն՝ «Իսկուհիին»:

107 Նշվ. աշխ., էջ 906:



136. Սրբապատկեր «Սբ. Մեսրոպ Մաշտոց». ներկայացնում է Մեսրոպ Մաշտոցին, որը հագել է փիրն: Պատկերի վերին ձախ անկյունում արևի ոսկեգույն շողերի մեջ պատկերված են հայոց այբուբենի առաջին երեք տառերը: Արձանագրությունը՝ ներկագիր, 2 տող, պատկերի աջ կողմում՝ փակագիր.

Ս(ուրբ) Մեսրոպ: | Յիշատակ | Քառասուն մանկանց | եկեղեցոյ | Սեպուհ Ծ. Լուսարարեանէ:

Հրատ. առաջին անգամ:



ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵՎ ՔԱՌԱՍՆԻՅ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՇՐՋԱԲԱԿԸ ԵՎ ԿԻՑ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ



ՉԻՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՇՐՋԱԲԱԿԸ, ԿԻՑ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ և ՔԱՌԱՍԱՐ (չափ՝ 21.10.2008 թ.)

Տեղադրություն. գտնվում են հայկական հնագույն երկու եկեղեցիների մոտ: Բակը հյուսիսից սահմանափակվում է Սք. Քառասնից մանկանց և նրանից արևելք գտնվող մարտնիների եկեղեցիներով, արևելքից՝ Սք. Աստվածածին և նրան հարավից կից հունաց եկեղեցիներով, հարավից՝ առաջ-

նորդարանի հին շենքով և դարպասին կից սյունասրահով, իսկ արևմուտքից՝ ընդունարանին կից սյունասրահով և ազգային դպրոցով:

Պատմություն. այս բակում էր գտնվում Հալեպի հայոց հնագույն գերեզմանատունը¹, որը 1580 թ.

¹ ՊՀԱԳԱՀՏ, էջ 8:



Ընդունարանին կից սյունասրահը (լուս.՝ 2007 թ.)



Շրջաբակի արևելյան հատվածը (լուս.՝ 2005 թ.)

հետո, երբ հալեպահայերի թիվը զգալիորեն ավելացել էր, տրամադրվում է միայն կղերականների թաղումներին²:

1491 թ. Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու հետ մեկտեղ Ռեյսի Իսան³ եկեղեցու մոտ առևտրականների համար կառուցում է հանգստյան սենյակներ և ապարանք, որը քահանաների համար հանգստյան վայր էր և ամառային ժամատեղ (առաջնորդարան)⁴: Դարեր շարունակ տարածքը կառուցապատվում է, նորոգվում են շինությունները մինչև այժմյան վիճակով մեզ հասնելը: Ստորև ներկայացնում ենք կառուցապատումների և նորոգությունների ժամանակագրությունը.

1535 թ. նորոգվում է եկեղեցու արտաքին դարպասը⁵, 1703 թ.՝ դարպասի և բակի որմերը⁶, 1840-1842 թթ.՝ առաջնորդարանի առաջնորդանիստ սենյակը⁷, իսկ 1845 թ.՝ առաջնորդարանը⁸ և հրդեհից այրված արտաքին դարպասը⁹:

1846 թ. նորոգվում են եկեղեցիների բակում գտնվող քահանաների սենյակները և սպասքատունը¹⁰, 1858 թ.՝ առաջնորդարանը¹¹, իսկ 1862 թ.՝ մատաղատունը¹²:

1885 թ. առաջնորդարանի 3 սենյակները ձևավորվելով վերածվում են խանութի¹³:

1894 թ. առաջնորդարանի բակում կառուցվում է ջրամբար¹⁴, 1895 թ.՝ շատրվան¹⁵, իսկ 1897 թ.՝ դպրոցի շենքը¹⁶:

2 ՊՀՀ, էջ 86:

3 Տե՛ս Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 1:

4 ՑԶՀՔՄ, էջ 151:

5 Տե՛ս Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 11:

6 ՑԶՀՔՄ, էջ 233:

7 Տե՛ս Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 8:

8 Տե՛ս Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 10:

9 Տե՛ս Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 11:

10 ՊՀՀ, էջ 778:

11 Տե՛ս Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 14, 15:

12 Տե՛ս Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 17:

13 Տե՛ս Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 20-22:

14 Տե՛ս Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 32:

15 Տե՛ս Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 33:

16 Տե՛ս Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 36:

1932 թ. նորոգվում և բարեգարգվում է եկեղեցիների բակը¹⁷, իսկ 1937 թ.՝ առաջնորդարանի վերահարկի երեք սենյակները¹⁸:

1989 թ. եկեղեցիների բակում կառուցվում է Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշակոթող¹⁹:

1992 թ. բակը շրջափակող որմերը սալիկապատվում են սրբատաշ քարերով²⁰, իսկ 1996 թ. կառուցվում է Տարոնի նահատակներին նվիրված հուշակոթող²¹:

Ճարտարապետություն. շրջաբակի պարիսպը հարավում ունի երկաթյա գույգ մեծ դռներ՝ «...ճիշդ յանդիման դրան 40 մանկան եկեղեցուն...»²²: Բակ կարելի է մտնել մաս ներքին դռներից՝ հունաց եկեղեցու և ազգային դպրոցի բակերից:

Ընդունարանին կից սյունասրահն ունի միաշար երկու սյուներ, որոնց վրա հենվում է խաչվող թաղերով ծածկը: Համալիրի՝ հարավից բացված գույգ դարպասներից հետո գտնվում է ևս մեկ սյունասրահ, որի կենտրոնական երկու սյուներին հենվում է խաչվող թաղերով ծածկը: Վերջինիս վրա կա ևս մեկ հարկ:

Առաջնորդարանի հին շենքն²³ ունի «...վիմաշեն ներքնատուն, միջնատուն և վերնատուն»²⁴:

Բակն ամբողջությամբ սալահատակված է, «...և Հայ մեռեալք թաղեալ կան ի ներքս սալայատակի, և մահարձանք դրեալ ի վերայ որմոց եկեղեցուն»²⁵:

Մինչև 1932 թ. գտնվում էր անմխիթար վիճակում. «...տապանաքարերը եւ թէ մանաւանդ սալահատակի քարերը ամբողջովին մաշած, կքած և

17 ՊՀԱԳԱՀՏ, էջ 10-11:

18 ՊՀՀ, էջ 772:

19 Տե՛ս Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 50:

20 Տե՛ս Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 51:

21 Տե՛ս Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 52:

22 **Ղազանճեան Կ.**, նշվ. աշխ., էջ 162:

23 Առաջնորդարանը մինչև 1970 թ. գտնվում էր հին շենքում, վերոհիշյալ թվականին առաջնորդարանի համար դարպասից դուրս կառուցվել է նոր շենք, որն ընդարձակվել է 1988-1989 թթ. (Պատմող ու շնչող հայաբոյր Հալեպը, էջ 4):

24 **Միմոն Լեհացի**, էջ 182:

25 **Ղազանճեան Կ.**, նշվ. աշխ., էջ 162:



Զույգ դարպասներին կից սյունասրահը (լուս.՝ 2007 թ.)



Պարսպի հարավային դռները (լուս.՝ 2006 թ.)

մասամբ ելած էին...: 1932-ին Ս. Քառասնից եկեղեցույ թաղականությունը ամբողջովին նորոգել տուաւ ընդարձակ բակը օգտագործելով... անվթար մնացած քարերը..., քահանայից դամբարանը, 12 տապանաքարերով, կը գտնուէր բակի հիւս. պատին առջեւ, Մարօնիթ նախկին եկեղեցույ կից, գետնէն վեր 30 սնդմ. բարձրութեամբ, եւ որովհետեւ տարիներէ ի վեր եկեղեցույ սոյն գերեզմանատուն-բակը կը ծառայէ իբր խաղավայր Ազգ. մանկապարտէզի 300-է աւելի մանուկներու, յարմար դատուեցաւ, որ այդ բարձր մասը նոր սալարկումի ատեն իջնէ, առանց դամբարաններու տեղը խախտելու եւ այնպէս ալ եղաւ»²⁶: Այս անխտեմ քայլի հետևանքով դարեր պահպանված տապանաքարերի արձանագրություններն ընդամենը մի քանի տասնամյակների ընթացքում մաշվել-քայքայվել են և դարձել անընթեռնելի:

Բակի հին սալիկները փոխելու ժամանակ հին առաջնորդարանի մուտքի առջև հայտնաբերվել է «...երկու մարդաչափ խոր եւ մէկ մարդաչափ լայն, մեծ կարասի մը կամ ջրամբարի մը ձևով, թօնուտ շինուած տեղ մը... բոլորովին պարսպ եւ մաքուր...: Դարձեալ... գանգակատան ուղղութեամբ դէպի արտաքին դուռը տանող ներքնուղի մը... բաւական խոր ու լայն...»²⁷:

Վիմագրեր. ներկայացնում ենք 55 միավոր արձանագրություն, որոնցից 39-ն առաջին անգամ ընդօրինակել և հրատարակել է Ա. Սյուրմեյանը, 1-ը՝ Մ. Մինասյանը: 15 միավոր արձանագրություն հրատարակվում է առաջին անգամ:

1. Տապանաքար. 1934 թ. գտնվում էր «Հարթ Չեպպալ թի 5 տան բակի պատերէն մէկուն վրայ»²⁸.

Այս է տապան հանգստեան տէր Թէոդէի ..., թվին հայոց ՌԽԵ (1596):

Հրատ. Միքսեան Ա., Պատմութիւն Հայկաի քահանայից, «Բազմավէպ», 1934, էջ 220: ՊՀՀ, էջ 227:

26 ՊՀԱԳԱՀՏ, էջ 10-11:

27 Նշվ. աշխ., էջ 10:

28 Միքսեան Ա., Պատմութիւն Հայկաի քահանայից, «Բազմավէպ», 1934, էջ 220:

Ծանոթ. ենթադրվում է, որ տապանաքարն այստեղ է փոխադրվել «...կամ Ս. Քառասնից բակէն, ինչ որ անհնար է, և կամ Ազիզիէի ազգային գերեզմանատունէն» (ՊՀՀ, էջ 227):

Ի դեպ, 2008 թ. հունիսին այդ տունը պայտուակավաճառի համար ծառայում էր որպէս պահեստ: Այդ պատճառով էլ մեզ թույլ չտրվեց ներս մտնել և տապանաքարը տեսնել:

2. Արձանագրություն. սյունասրահի հյուսիսային սյան արևելյան միստին ագուցված մարմարե սալիկին՝ փորագիր, 4 տող.

S(է)ր Թոլրոս, | թվ(ին) Ռ-Ճ|ԾԸ (1709):

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 14: Միքսեան Ա., Պատմութիւն Հայկաի քահանայից, «Բազմավէպ», 1941, էջ 39:



3. Արձանագրություն. քանգարանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցում պահվող սալիկին (1935 թ. գտնվում էր եկեղեցիների բակում)²⁹. փորագիր, 6 տող.

Այս է տապան հանգստեան | հանգուցեալ տէր Ներսէսի որդի | հանգուց(ե)ալ տ(է)ր Սահակին, | որ հանգեաւ ի Ք(րիստո)ս, ի թիվն | փրկչին ՌԷՃԾԸ (1758)-ին եւ | հայոց Ռ-ՄԷ (1758) յուլիսի ԻԴ (24)-ին:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ., էջ 14:

29 ՊՀԱԳԱՀՏ, էջ 14:



Ծանոթ. տեր Ներսեսը 1726 թ. Հալեպի Սբ. Քառասնից մանկանց եկեղեցուն նվիրում է Ավետարան՝ ի հիշատակ իրեն «... և կողակցոյն՝ Աննային, և որդոցն՝ տեր Սահակին և տիրացու Գեորգին և Յակոբին...» (ՅՉՀԶՄ, էջ 66-67): 1740 թ. հոկտեմբերի 29-ին պաշտոնավարում էր Սբ. Քառասնից մանկանց եկեղեցուն (ՊՀՀ, էջ 711-712):

Տեր Սահակի որդիներից էր տեր Ավետիսը (տես նաև Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 4):

Տարբերեցում. **Սյուրմեյանի** մոտ «Ռ-ԵԾԸ»-ի փոխարեն՝ «Ռ-եւ ԾԸ», «ԻԳ»-ի փոխարեն՝ «ԻԳ»:

4. Արձանագրություն. քանդարանի վերածված Սբ. Աստվածածին եկեղեցուն պահվող սալիկին (1935 թ. գտնվում էր եկեղեցիների բակում)³⁰ փորագիր, 5 տող.

Այս է տ(ա)պան հ(ա)նգստե(ա)ն | հ(ա)նգուցե(ա)լ տ(ե)ր Սահ(ա)կի որդ(ի) | հ(ա)նգուցե(ա)լ տ(ե)ր Աւետիսին, | որ հ(ա)նգեալ ի Զ(րիստո)ս, ի թ(վի)ն | հայոց ՌՄԻԳ (1774) օգ(ոստո)ս ԺԵ (15):

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 15:

Ծանոթ. տեր Ավետիսն ուներ երկու զավակ: Մարիամը մահացել է 1779 թ. մարտի 27-ին, Ներսեսը՝ 1785 թ. (ՊՀՀ, էջ 732):

Տեր Սահակի մասին տես նաև Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 3:

Տարբերեցում. **Սյուրմեյանի** մոտ «ՌՄԻԳ օգ(ոստո)ս ԺԵ»-ի փոխարեն՝ «ՌՄԻԳ»:

5. Արձանագրություն. սյունասրահում՝ ընդունարանի արտաքին որմի հարավարևելյան անկյունում ագուցված մարմարե սալիկին՝ փորագիր, 6 տող.

[Ա]յս է տ(ա)պ(ա)ն հ(ա)նգստե(ա)ն | հ(ա)նգուցե(ա)լ տ(ե)ր Գե[լ]ո[ր]ոքի որդի տ(ե)ր Աբրա[հ]ամին, որ հ(ա)նգե(ա)լ ի Զ(րիստո)ս, | թ(վի)ն հայոց ՌՄԼ (1781) | յունիսի ԻԳ (24)-ին:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 15: **Սյուրմեյան Ա.**, Պատմություն Հալեպի քահանայից, «Բազմավեպ», 1941, էջ 45: ՊՀՀ, էջ 712:

Ծանոթ. հայտնի է, որ տեր Աբրահամը 1740 թ. հոկտեմբերի 29-ին պաշտոնավարում էր Սբ. Քառասնից մանկանց եկեղեցուն (ՊՀՀ, էջ 709-711-712): 1741 թ. եկեղեցուն նվիրում է 1669 թ. Մաշտոց. «Յիշատակ է մաշտոցս հանգուցեալ տեր Գեորգի որդի տեր

30 Նույն տեղում:



Աբրահամին ի քաղաքն Հլպ. ի դուռն Մր. Քառասուն Մնկ. եկեղեցին...» (ՅՉՀՔՄ, էջ 176): 1743 թ. Հալեպում ընդօրինակում է Մի-մեռն Գառնեցու «Մեկնութիւն Պրոկի» աշխատությունը (Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե, սյունակ 941-942): 1751 թ. հունվարի 20-ին նորոգում է Բելլանում գրված մի Ավետարան (ՊՀՀ, էջ 712):

Վերոնշյալ արձանագրությունը Սյուրմեյանը հրատարակել է երկու տարբեր ձևով. «Այս է տապան հանգստեան հանգուցեալ տէր Գեորգի որդի, տէր Աբրահամին, որ հանգեալ ի Քս., թ. հայոց 1230» և «Այս է տպան. հնգստեն. հնգցել. տր. Գեորգին որդի տր. Սարգսին որ հնգել. ի Քս., թին հայոց ՌՄԼ յունիսի ԻՎ ին» (ՊՀԱԳԱՀՏ, էջ 15):

6. Արձանագրություն. սյունասրահի հարավային որմին ագուցված մարմարե սալիկին՝ փորագիր, 10 տող.

Այս է տապան | հանգստեան երից | քահանայից ի Ք(րիստո)ս | տ(եա)ռն Յակոբայ Ման|ոսեանի, թիւ հայոց 1235 (1786) եւ դար|ձեալ որդոյ՝ տ(եա)ռն | Միքայէլի, ի թիւ | 1260 (1811) և որդոյ՝ տ(եա)ռն | Միքայէլի, 1293 (1844):

Հրատ. նույն տեղում:
Ծանոթ. Հոգեւորական պատասխանատու Հակոբ Մանույանը վախճանվել է 1703 թ. (ՊՀՀ, էջ 97), սակայն, ըստ արձանագրության, 1786 թ.: Կան հեղինակը սխալվում է, կան վերոհիշյալ տեր Հակոբը նրա հիշատակած տեր Հակոբի թոռն է:

Հակոբ երեք երապոյիսցի Մանուսի որդին էր (ՅՉՀՔՄ, էջ 154): 1654 թ. մի ձեռագիր Մաղմուսի վրա 1749 թ. նա թողնում է իր ձեռագիրը. «Ի թիւն հայոց ՌՃՂԸ (1749) ամին, ամսուն յուլիսի գրեցաւ ձեռամբ մեղապարտ Յակոբ իբր իրիցու ի քաղաքն Բերիայ...» (նշվ. աշխ., էջ 127-128): 1758 թ. Մր. Քառասնից մանկանց եկեղեցուն նվիրում է 1642 թ. ձեռագիր Մաշտոց. «Այս Մշտոցն. էր որ գրաւ էին եղել և մեր տուաք զԵ (5) դրն. և կես և դարձեալ եղանք ի Մր. Քոսնք. եկեղեցին գիտութք. և ձեռնք. Յակոբ իրիցուս» (նշվ. աշխ., էջ 154): Հոգեւորական լիվանի 1759 թ. նորոգման արձանագրության գրիչն է (տե՛ս Հոգեւորական արձ. № 24):

1773 թ. Հալեպում կազմում է 1639 թ. ձեռագիր Ճաշոց. «Կրկին կազմեցաւ ձեռամբ երապոյիսցի հանգուցեալ միտսի Մանուսի որդի մեղաւանած Յակոբ իբրու իրիցու...» (ՅՉՀՔՄ, էջ 229-230):

Տեր Հակոբի որդին՝ տեր Միքայել, 1785 թ. նորոգում է Ավետարան. «...և արձաքով զարդարեցաւ ի լուսարար տէր Միքայէլէն...» (նշվ. աշխ., էջ 47): 1800 թ. մայիսի 16-ին, երբ տիրացու Հանա Տատուրյանն առաջնորդարանին է հանձնում 3 տարվա մոնավաճառության և Մր. Աստվածածին եկեղեցու սնդուկի հաշիվները, սույն հաշիվը ստուգելով՝ ստորագրում է նաև տեր Միքայելը. «Մեղապարտ տր. Միքայէլ տր. Յակոբեանս որում եղէ այս հիսապիս» (նշվ. աշխ., էջ 254):

Տեր Միքայելի որդին՝ տեր Միքայելը, հիշվում է 1822 թ. դեկտեմբերի 18-ին: Նույն թվականին նրա ներկայությամբ սասունցի Հակոբի որդի մահտեսի Օհանը Սահեթ Ալ-Ճեմիլի փոխ եկամտի մեկ չորրորդը կտակում է աղքատներին (ՊՀՀ, էջ 765): Ամուսնացել է տեր Սահակ Շահվերդիյանի հորաքրոջ՝ Խանումի հետ, ունեցել 1 որդի և 4 դուստր: Որդին՝ Հակոբը, մահացել է մոտ 40 տարեկանում: Աղջիկներից «առաջինը... կողակիցը եղած է Թաճիր-Օղլու Յակոբեանի...: Երկրորդ աղջիկը... կողակիցը եղած է դերձակ Մելիտոս Միրաբեանի. ասոնք ունեցած են Յովսէփ անունով որդի մը՝ որ ապա գժտութեան մը հետևանքով դարձած է հայ կաթոլիկ» (նշվ. աշխ., էջ 744): Մյուսմեյանը տեր Միքայելի որդի տեր Միքայելին խառնել է տեր Հակոբի որդի տեր Միքայելի հետ և տեր Միքայելի որդի տեր Միքայելի կնոջ և զավակների տեղեկությունները վերագրել տեր Հակոբի որդուն՝ տեր Միքայելին: Այս եզրակացությանն ենք հանգել՝ համեմատելով տվյալ անձերի ապրած ժամանակաշրջանը:



7. Տապանաքար. ուղղանկյունաձև, գտնվում է առաջնորդարանի դռան աջ կողմում, արձանագրությունը՝ պատվանդանին³¹ և տապանաքարի երեսին.

Պատվանդանին.

Յերկրէ կարնեցի եւ որդեգիր Մըզրահի(°), ... կենաց տրին, աստ ի Հալապ մեծ քաղաքին, հայոց ազգին, ՌճԾԷ (1708):

Տապանաքարի երեսին.

Այս է տապան հանգուցեալ | տ(է)ր Մարտիրոս վարժապետ քահանային լիստրացի, | որ հանգեալ ի տէր 1808 յուլիսին:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 15: ՊՀՀ, էջ 744-745:

Ծանոթ. արձանագրության շեղագիր տրված տառերը չենք կարողացել ստուգել, որովհետև պատվանդանը ներկայումս գոյություն չունի, իսկ տապանաքարի երեսի արձանագրությունը մաշված է:

Տեր Մարտիրոս վարժապետ Լյուստրացին Հովսեփի և Աննայի որդին էր: Հռչակված էր «...այս բարի և գիտնական քիչին համբար»: Նա «...իր ժամանակի ամենն գիտական դեմքն էր. սիրած էր գլխաորաբար աստղագիտությունը և հմուտ էր եկեղեցական գիտութեանց» (նշվ. աշխ., էջ 745): 1785 թ. սեպտեմբերի 19-ին հիշվում է որպես «...ախշեհիրցի յանվարժ վարժապետ Մարտիրոս...» (ՅՁՀԸՄ, էջ 47): 1788 թ. նորոգում է ձեռագիր «Եսայի և Թուրք Պողոսի»։ «Ի ՌՍԼԷ թուին, որ յայնմ ամին արեգակն յաւարեցաւ բոլորովին և աստեղը երևեցան, ես Մարտիրոս անվարժ վարժապետս լիստրացի զայս գիրքս վասն սիրոյ տիրացու Գէորգին, որ է աւագ սարկաւագ և զարդ իւ. մանուկ եկեղեցոյ, աշխատասիրութեամբ զջնջել տառսն գրեցի...» (Յուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, հ. Ա, գիրք Բ, կազմ. **Տաշեան Հ.**, Վիեննա, 1895, էջ 637):

Որդու՝ Հովսեփ քահանայի հետ միասին պաշտոնավարել է եկեղեցուն կից գործող դպրոցում: Թողը՝ Հաննա Երսուֆ Քասիսը (Երեցյան), մահացել է Եգիպտոսում (ՊՀՀ, էջ 745):

Լյուստրա քաղաքը ներկայումս քաղաքատեղի է և գտնվում է Անատոլիայում՝ Գոնիա քաղաքից 40 կմ հարավ:



8. Արձանագրություն. գտնվում է նախկին առաջնորդանիստ սենյակում: Փայտյա 8 անջատ ցուցանակների վրա՝ ներկագիր, 16 տող.

Ցուցանակ Ա.

Բերիոյ տեսուչ Յակ(ո)բ ընկալուչ | երկրէ վայելուչ վեհ ոգիաշունչ:

Ցուցանակ Բ.


Յ(ա)նձ(ա)նձիչ հոգոց ք(ա)հ(ա)ն(ա)յք նուիրաց | ասուն եղինաց ս(ուր)բ պատ(ա)րագաց:

Ցուցանակ Գ.

Զօրավիզ կենաց իշխանք համ(ա)կաց | ազգի անարեաց պերճանուն փառ(ա)ց:

Ցուցանակ Դ.

Պաշտպան պարծ(ա)նաց ժողովուրդ քաջանց | րախճական բ(ա)րեաց Յաբեթականաց:



Ցուցանակ Ե.

Առիքք քանդակման պատշգամփա {յ}րան | կրկին նորոգման վայրի վայելման:

Ցուցանակ Զ.

Որոց ամենից յանգեալ ի գոյից | յոգեսէր ջանից յարդեանց լիովից:

Ցուցանակ Է.

Մընալ մըշտական որդոց Արմեան | յիշատակ լըրման յետ, որոց որք գան:

Ցուցանակ Ը.

Մեծ աշխատ տրին երեց Գէորգին | թոռ տ(է)ր Մարգարին լիցի վարձ վերին:

Հրատ. ՊՀՀ, էջ 772:

Ծանոթ. նկատի ունենալով տեր Հակոբի պաշտոնավարության մոտավոր շրջանը՝ արձանագրությունը թվագրում ենք մոտ 1841-1842 թթ.:

Մյուրմեյանի օրոք այս սենյակը եղել է դիվանատուն: 1937 թ. վերանորոգվել է (նշվ. աշխ., էջ 771-772): Ներկայումս վերածվել է Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու տիկնանց միության սենյակի:

Տեր Գևորգ Տեր-Գևորգյանի մասին տես՝ Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 93:

31 Նշվ. աշխ., էջ 15:



9. Արձանագրություն. սյունասրահի հարավային պատին ազուցված մարմարե սալիկին՝ փորագիր, 10 տող.

Այս է տապան | հանգստեան ի Զ(րիստո)ս | Յ(իսու)ս ներկարար տ(ե)ա(ն)ն | Սարգիսի Տէր-Սար-|զիսեան, ի թի | 1843 | եւ եւ նորին որդի տ(է)ր Խա-|չատուրս, | 1879:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 15: ՊՀՀ, էջ 824:

Ծանոթ. այս արձանագրությունը Սյուրմեյանի մոտ կրկնվում է այսպես. «Դամբարան տէր Խաչատուր քի. Տէր Սարգիսեան հնգ. 4 յունվ. 1879», «Դամբարան տէր Սարգիս քի Տէր Սար-գիսեան հնգ. 6 հոկտ. 1883», որտեղ նշում է, որ տապանաքարե-րը գտնվում են եկեղեցիների բակում՝ քահանաների բաղում (ՊՀԱԳԱՀՏ, էջ 16): Հաշվի առնելով այն, որ նույն հանգուցյալ-ները չէին կարող ունենալ մեկից ավելի տապանաքար, ենթա-դրում ենք, որ Սյուրմեյանը սխալմամբ կրկնել է արձանագրու-թյունը:

Տէր Սարգիսը ձեռնադրվել է 1800 թ. «Ի թիվին հայոց ՌՄԽԹ (1800) յուլիսի ԺԷ (17) օրն կիրակի վարդավառն ձեռ-նադրեցաք քահանայ անուն Սկրտիչ և Սարգիս...» (ՅՉՀԶՄ, էջ 212): 1812 թ. տեր և տիկին տիրացու Կարապետի և Քիմայի հետ միասին Սր. Աստվածածին եկեղեցուն նվիրում է Ավետարանի կազմ (տե՛ս Սր. Աստվածածին եկեղեցու արձ. № 42): 1832 թ. իր վաստակով ազգությամբ մարոնի հոգևորական «Շուսէֆ Էլ-պե-նի»-ից գնում է կրոնական մատյան (ՊՀՀ, էջ 768): Դուստրը՝

Սեյսեյտեն, մահացել է 1846 թ. (տե՛ս Ազիզիի գերեզմանատան արձ. № 308):

Տէր Խաչատուրը (աշխարհիկ անունը՝ Գրիգոր) Սարգիս, Աննայի և Օվսաննայի հայրն էր: Զբաղվել է մակ ջուլիակագոր-ծությամբ և երեսարիչ կարելով: Որպես ուսույլ և գրասեր անձ՝ Հայեպում ուներ գրատուն: 1866-1868 թթ. թղթակցում էր «Միօն» ամսագրին (Նշվ. աշխ., էջ 824-825): 1877 թ. Հալեպի Սր. Աստ-վածածին եկեղեցուն նվիրում է 1, իսկ Սր. Քառասնից մանկան-ցին՝ 2 ձագար (տե՛ս Սր. Աստվածածին եկեղեցու № 80, Սր. Քա-ռասնից մանկանց եկեղեցու № 101-102 արձանագրությունե-րը): Որդու՝ Սարգիս մասին տե՛ս Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 25:



10. Արձանագրություն. դարպասից եկեղեցիների բակ տա-նող սյունասրահի հյուսիսային որմին՝ հյուսիսային սյունից վեր ազուցված շրջանաձև մարմարե սալիկին՝ փորագիր, 5 տող.

Է: | Ն(ո)ր(ո)ք(ե)ց(ա) | զ(ա)ռ(ա)ջն(որդ(արա)նս մեր հ(ա)յոց, | թ(ի)ն փրկջին | 1845:

Հրատ. առաջին անգամ:



11. Արձանագրություն. շրջապարսպին՝ գրատան վերածված ժամկոչի սենյակի դռան վերևում ագուցված մարմարե սալիկին՝ փորագիր, 12 տող.

Նորոքեցան արտաքին դրունքս Ս(ուր)ք յԱ(ստուա)ծ(ած)նի | եւ Քառասուն մանկանց անուամբ կառուցելալ մեր {ս} ս(ր)ք(ո)ց եկեղեցեացս, ի թվ(ին)ն հ(ա)յոց | ՋՁԴ (1535) եւ թագա(ւ)որու(թ)ե(ա)ն սուլթան Սուլեմանի | եւ հայրապետու(թ)ե(ան) տ(եառ)ն Յովհանու կ(ա)թ(ո)ղ(իկո)սի, | ուստի ի սակս հրակիզմանն վերստին նորոքեցան, ի թ(ին)ն հ(ա)յ(ո)ց ՌՄՂԴ (1845), ի թագա(ւ)որու(թ)ե(ա)ն սուլթան Ապտլ Մեճիտ արքա(յ)ին եւ հայրապետու(թ)ե(ան) մերո տ(եառ)ն Միքայէլ կ(ա)թ(ո)ղ(իկո)սի(ն) եւ աշխատալս(ի)րու(թեամ)ք աւ(ա)ք երիժանց տ(է)ր Գեորգեան տ(է)ր Մարգար | եւ տ(է)ր Գեորգ քահ(ա)ն(ա)յից եւ արթիամբ | ժողովրթեան:

Հրատ. ՊՀՀ, էջ 779-780:

Ծանոթ. Մարգար Տեր-Գեորգյանը սասունցի ավագ քահանա Գևորգ Տեր-Մարգարյանի որդին էր (նշվ. աշխ., էջ 790) և տեր Մարգարի բոռը (մեծ հոր և հոր մասին տես՝ Սք. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 66): Քահանա է ձեռնադրվել 1833 թ. օգոստոսի 12-ին Հալեպի առաջնորդ Մարկոս եպիսկոպոսի կողմից (ՊՀՀ, էջ 768): 1837 թ. Հոգեւան պատասխանատուի պաշտոնում փոխարինում է հորը՝ տեր Գևորգին (նշվ. աշխ., էջ 790): Նա ստուգում, նաև ստորագրում է Սք. Քառասնից մանկանց եկեղեցու մոմատան և առաջնորդարանի 1844-1845 թթ. հաշիվները (նշվ. աշխ., էջ 774): Երուսաղեմի Սք. Հակոբյանց վանքում պահվում է նրա կնիքը կրող ձեռագիր մատյան՝ «Բորոչի տեր Մարգար Տեր-Գեորգեան 1273 (Օսմանյան Ռումի տոմարով) (1857 մ.թ.)» (ՅՁԵՅԱ, էջ 284): 1862 թ. նոյեմբերի 13-ին 80 հալեպահայեր Կ. Պոլսի պատրիարքին տեր Մարգարի և Հալեպի առաջնորդ Հակոբ եպիսկոպոսի դեմ, որպես կաշառակերների, իրենց բողոք-մամակն են ուղարկում (ՊՀՀ, էջ 802): Վախճանվել է 1865 թ. և թաղվել Սք. Քառասնից մանկանց եկեղեցու բակում (նույն տեղում): Եղբայրը՝ տեր Գևորգը, հիշվում է երկու այլ արձանագրություններում (տես՝ Սք. Քառասնից մանկանց եկեղեցու № 93, Հին եկեղեցիների շրջաքակի № 8 արձանագրությունները):



12. Արձանագրություն. սյունասրահի հարավային սյան հյուսիսային նիստին ագուցված մարմարե սալիկին՝ ելնդագիր, 5 տող.

1857 յուլ(իս) 17: | Ինձ՝ Վառվառիս, որ Ասլանեան, | հարաւ սլաք մահու դաժան, | մինչ էր հասակս երեք ամեան. | իջի ննջել յայսմ դամբան:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 15:

Տարբերբրցում. Սյորմեյանի մոտ «Ասլանեան»-ի փոխարեն՝ «Արլանեան»:



13. Արձանագրություն. սյունասրահի հյուսիսային սյան հարավային նիստին ագուցված մարմարե սալիկին՝ ելնդագիր, 5 տող.

1857 յօգոս(տոս) 23: | Սէթս, անարժան տոնձն Ասլանեան, | մինչ էի տիօք ես վաքսնամեան, | բաղդ տեղափոխեաց յԵղրկիէն աստ, | ուր զիս գրաւեաց վճիռն անդարձ:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 16: Ալպոյանեան Ա., Պատմութիւն Երդկիոյ հայոց, Գահիրէ, 1952, էջ 1637:

Ծանոթ. «Եղրկիէ»-ն Եվրոկիա քաղաքն է: Գտնվում է Պոնտոսում: Ներկայումս պաշտոնապես կոչվում է Թոքաթ (Tokat): Տարբերբրցում. Սյորմեյանի և Ալպոյանեանի մոտ «Ասլանեան»-ի փոխարեն՝ «Արլանեան»:



14. Արձանագրություն. եկեղեցիների բակից հին առաջնորդարան տանող շքամուտքից վեր ամրացված մարմարե սալիկին՝ ելնդագիր, 6 տող.

Է: | 1858, | առ(ա)ջնորդու(թեամ)ք տէր | Նիկողայոս արքեպ(իսկոպո)սի և տրօք | պալազատ աղալից և ժողովրդոց | նորոգ(ե)ցաւ առ(ա)ջն(ո)րդալ(ա)նն հայոց:

Հրատ. Մինասեան Մ., նշվ. հոդվ., էջ 20:





15. Արձանագրություն. նախկին առաջնորդարանի երկրորդ հարկում՝ ելնդագիր, 3 տող արաբերեն.

تجددت قلاية | الارمن في زمن الاسقف نقلاوس | سنة ١٨٥٨

Թարգմ. Նորոզվեց հայոց առաջնորդարանը 1858 թ.՝ առաջնորդ Նիկողայոսի օրոք: Հրատ. առաջին անգամ:



16. Արձանագրություն. սյունասրահում՝ ընդունարանի մուտքին կից որմին ամրացված սալիկին՝ փորագիր, 13 տող.

Տ(եր) Գասպար | Տ(եր)-Գասպարեան, | ծնունդն 1784, մահն 1859: | Տ(եր) Մարկոս Տ(եր)-Գասպարեան, | արժանի տէրհայր կօչման, | հովուեց իր հօտն ընդ երկար, | հանդիսացաւ օգտակար, | թողուց բարի յիշատակ | զերթ իր անուան փառք ու թագ, | ծնունդն | 1833, | վաղճանն | 1905:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 16, 17:

Ծանոթ. Գասպար Տեր-Գասպարյանն ուսումը ստացել է Հալեպում և Երուսաղեմում: Միտմ ձեռնադրվում է քահանա և պաշտոնավարում Հալեպի Սբ. Քառասնից մանկանց եկեղեցում: (ՊՀՀ, էջ 764): Քահանա է հիշվում 1837-1856 թթ.: 1845 թ. ստանձնում է Սբ. Աստվածածին եկեղեցու լուսարարապետի պաշտոնը (նշվ. աշխ., էջ 789): Լավ տիրապետելով արաբերենին՝ ուներ արաբախոս հայ բազմաթիվ ծխեր: Բազմանդամ և աղքատ ընտանիքի ապրուստը հոգալու համար տանը գրադվում էր մանու-



սագործությամբ: Բնակվում էր իսլամական թաղամասում, որտեղ ցածր էր տան վարձը: Թաղի իսլամները հարգում էին նրան պարկեշտ, աղոթասեր և աշխատասեր բնավորության համար (նշվ. աշխ., էջ 764-765):

Մարկոս Տեր-Գասպարյանը (աշխարհիկ անունը՝ Գևորգ) տեր Գասպարի որդին էր: Ուսումը ստացել է Երուսաղեմի Սբ. Հակոբյանց վանքում: Քահանա է ձեռնադրվում 1871 թ. փետրվարի 14-ին Սբ. Քառասնից մանկանց եկեղեցում Սկրտիչ արք. Քեֆաիզյանի կողմից: 1871 թ. Բերիո թեմի կրոնական ժողովի անդամ էր: Նույն թվականին Խնե գյուղում նրան հաջողվում է դեմ կանգնել Մեսրոպ քահանայի արարքներին և համոզել գյուղացիների մի մասին չընդունել լատինադավանություն: 1876 և 1880 թթ. վերստին ընտրվում է Բերիո թեմի կրոնական ժողովի անդամ: Նա ևս լավ տիրապետում էր արաբերենին, ընտանիքի ապրուստը հոգալու համար գրադվում էր նաև ոսկերչությանը և բնակվում էր իսլամական թաղամասում (նշվ. աշխ., էջ 844, 859): 1903 թ. հիշվում է որպես Բերիո թեմի կրոնական ժողովի անդամ («1903. ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց», էջ 353): Երկար տարիներ ուսուցանել է Հալեպի Ներսեսյան վարժարանում (**Մինասեան Մ.**, նշվ. հոդվ., էջ 21, 27): Ամուսնացել է Հովհաննես Նահապի քրոջ՝ Մեհնուշի հետ և ունեցել չորս որդի՝ Միքայել, Իսկենտեր, Ռզզալլահ և Եղոկաքի: Նրանք 1900-ական թվականներին հաստատվել են Սան Պաուլո քաղաքում (ՊՀՀ, էջ 833):

Տարբերեցրում. **Սյուրմեյանի** մոտ «Տ(եր) Գասպար | Տ(եր)-Գասպարեան, | ծնունդն 1784, մահն 1859»-ի փոխարեն՝ «Այս է տապան տեր Գասպար քիյի. Տեր-Գասպարեան ծն. 1784. մեռած 1858», «իր անուան»-ի փոխարեն՝ «իր մահուան»:

17. Արձանագրություն. նոր առաջնորդարանի մուտքի առջևի խանութի մուտքից վեր ամրացված շրջանաձև սալիկին՝ փորագիր, 4 տող.





Կրկին նորոգեցաւ մաղ(ա)ղ(ա)տ(ուն)ս | հ(ա)-յոց թիւն | Ռ-ՅԺԱ (1862):

Հրատ. առաջին անգամ: Ծանոթ. մատաղատունը, ինչպես 1930-ականներին (ՊՀՀ, էջ 812), այնպես էլ այժմ խանութ է:

18. Արձանագրություն. տեղահան մարմարե սալիկին (1930 թ. գտնվում էր սյունասրահում³², ներկայումս պահվում է թանգարանի վերածված Սր. Աստվածածին եկեղեցում), փորագիր, 7 տող.

Միակ գաւակ տասն ամ[աց] | Սաղաթելեան Կարապետ[ի], | հաճի Նշան մանուկ բարի, | որ է բնիկ արապկերցի, | դիպեալ մահուն սուր մանգաղի | ...սով առ տէր, աստ ամփոփի, | [1]863 մայիս 15-ին:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 16: Փոլատեան Ա., նշվ. աշխ., էջ 854: Բախտիկեան Ս., Մեր բարերարները, «Ոսկեգետակ. տարեգիրք», Պէյրոս, 1946, էջ 42:

Ծանոթ. սալիկի վերին աջ և ներքին ձախ եզրերը կտրտված են: Տեղահանվել է 1935 թ. հետո:

Մեծամուն բարերար, վաճառական Կարապետ Սաղաթելյանը (1810-1888, Արաբկիր) Ղուկասի և Մաթևոսի եղբայրն էր, Տուտուի ամուսինը: Ուներ չորս աղջիկ (հայտնի են 3 դուստրերի անունները՝ Ներիսբե Գազանճյան, Մարան Բրուտյան, Վարդուհի Աճեմյան) և մեկ որդի: Վերջինիս տարիքը Բախտիկյանը սխալմամբ նշել է 18 (Բախտիկեան Ս., նշվ. հոդվ., էջ 42, 44), մինչդեռ տապանագրում հստակ նշված է 10:

Ռուսահպատակ Կարապետ Սաղաթելյանը խոշոր դեր է ունեցել հատկապես ծննդավայրի կրթական գործում: Արաբկիրի ազգային վարժարաններին օգնելու նպատակով 1866 թ. օգոստոսի 25-ին հալեպաբնակ արաբկիրցիների կողմից հիմնված «Բերիոյ բարեսիրաց» ընկերության ղեկավարներից էր (Փոլատեան Ա., նշվ. աշխ., էջ 835, 837: Տե՛ս նաև Քէշիշեան Վ., Հալեպի Հայկական գաղթօճախի..., էջ 202): 1869 թ.՝ Հալեպում բնակվելու ժամանակ, հիմնում է Արաբկիրի Մայր վարժարանը (Փոլատեան Ա., նշվ. աշխ., էջ 584) և հոգում տարեկան ողջ ծախսը. «Ամէն զատիկի ու ծնունդի տօնական օրերուն, առանց բացառութեան, բոլորին (աշակերտներին) ալ հազուստ նուէր կուտար, իր սաները, այն ատեն հրաւիրէր սեղանի: Որպէս մնայուն հատրթի աղբիւր այս վարժարանին համար որ կարենայ տեւական հաստատութիւն դառնալ, բարերարը իր կենդանութեան, Այնթապի կողմը իր կալածները կը կտակէր վարժարանին» (Բախտիկեան Ս., նշվ. հոդվ., էջ 42-43): Վարժարանում 200 աշակերտ սովորում էր նրա կտակած 50.000 դրուրուշի տոկոսով: Գրամագուլխն իր մոտ էր պահում՝ տարեկան 5000 դրուրուշ վճարելով: Այս 50.000 դրուրուշը մահից հետո պետք էր փոխանցվեր ազգային տնտեսությանը՝ իր և կնոջ «... գերեզմանը վարժարանին մէջ ամփոփել պարտաւորելով» (Մրուանձտեանց Գ., Թորոս



աղբար. Հայաստանի ճամբորդ, մասն 1, Կ. Պոլիս, 1879, էջ 278): Գերեզմանները գտնվում էին Արաբկիրի Մայր վարժարանի բակում՝ երկու հսկա թթենիների տակ, սակայն մահից հետո «դժբաղդաբար... այդ կալածներուն հասոյթը հարկ եղած կերպով չի մատակարարուրի: Օրուր գիտի կալածները, ծածկուած էին ձիթենիներով, որոնց հասոյթը պիտի յատկացուէր դպրոցին: Իր ժառանգորդներէն թողը՝ Նազարէ Գազանճեանը, որպէս կտակապահն ու գործադրողը կը զլանայ վճարելու...: Մուշեղ վարդապետ, իր երանեայ պաշտօնավարութենէն ետք, երբ Արաբկիրէն Պոլիս կ'երթայ, վերադարձին... կ'անցնի Հալեպ, Այնթապ կարգադրելու համար Մայր վարժարանի հասոյթին խնդիրը: Նազարէ կը խոստանայ, սակայն յետագային կրկին կը դրժէ իր խոստումը. ասոր վրայ, վարդապետը կը սպառնայ Նազարէին մօրաբրոջը՝ հաճի Մարան Բրուտեանին՝ Եգիպտոս, որ եթէ ընդդիմանաք գործադրութեան դնելու կտակարանի բաղձանքները, ամոնց գերեզմանները կը փոխադրուին հասարակաց գերեզմանատունը: Կտակին գործադրիչները չեն վճարէր... վարդապետը սակայն բարերարներու աճիւններուն չի դպիր» (Բախտիկեան Ս., նշվ. հոդվ., էջ 40-41, 43):

1869 թ. կտակը հրատարակվել է «Մասիս»-ում (Փոլատեան Ա., նշվ. աշխ., էջ 584-585):

Տարբերեցրցում. Մյուրմէյանի և Փոլատյանի մոտ «մահուն սուր մանգաղի»-ի փոխարեն՝ «մահուն առ հանգալի», «1863»-ի փոխարեն՝ «1868»: Բախտիկյանի մոտ «1863 մայիս 15-ին»-ի փոխարեն՝ «1818 մայիս 15»:



Կարապետ և Տուտու Սաղաթելյաններ

32 Նշվ. աշխ., էջ 16:

19. Արձանագրություն. մոմատան ներսում և հարավային որմին ագուցված մարմարե սալիկին՝ ելնդագիր, 8 տող, որից 1 տողը՝ արաբերեն.

1864 յունիս 6-ին: | Մարդոց հանուրց այս է վերջին տխուր վաղճան | գալ ընդ հողով, ըստ վճռոյ արարչական. | որպէս արդէն Գրիգորըն Ղարաճաշեան | արբ տարածամ մահուն բաժակ, էջ յայս տապան, | զի քառասնից չուց ամաց էր մինչ հատան | նորուն բաժին, ի յաշխարհէս ունայնութեան:


Արաբերեն.

هذا قبر المرحوم كركور ولد المقدس اوديس قراجه في حزيران 6 سنة 1864 مسيحية.

Թարգմ. Սա մահտեսի Ավետիս Գրրաջայի որդու՝ հանգուցյալ Գրիգորի գերեզմանն է: 6 հունիս 1864, Քրիստոսի թվական:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 16: Արաբերեն արձանագրությունը հրատարակվում է առաջին անգամ:

Գրիգորը ծնվել է Միստուն գյուղում, փոխադրվել է նախ Խարբերդ, հետո Հալեպ (Ղազարեան Հ., Պատմագիրք Չմշկածագի, Պէյրուք, 1971, էջ 546): Որդու՝ Մանուկի և բոռան՝ Իսկենտերի մասին տե՛ս Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 43:



20. Արձանագրություն. եկեղեցիների շրջապարսպին՝ խանութի վերածված ժամկոչի սենյակի դռան վերևում ագուցված մարմարե սալիկին՝ փորագիր, 4 տող հայերեն, որից ցած նույն բովանդակությամբ՝ 1 տող արաբերեն.


Ժամկոչի սենեակս խանութի վերածուեցաւ ծախիւք մ(ահտեսի) Մարգիս Տ(եր)-|Խաչատուրեանի ի յիշատակ Ս(ուրբ) 40 | մանկանց եկեղեցոյ, 1885:

Արաբերեն, ելնդագիր.

تجددت بنفقه المقدسي سرکيس دير خجادور لخير كنيسة الاربعين شهيد.

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Մարգիս Տեր-Խաչատուրյանի մասին տե՛ս Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 25:



21. Արձանագրություն. եկեղեցիների շրջապարսպին՝ խանութի վերածված առաջնորդարանի սենյակի դռան վերևում ագուցված մարմարե սալիկին՝ փորագիր, 5 տող հայերեն, որից ցած՝ ելնդագիր, 1 տող արաբերեն.

Առաջնորդարանի սենեակս | խանութի վերածուեցաւ ծախիւք Յովհաննէս Պօղոս Մ(ինաս) | Ա-


լճաճեանի ի յիշատակ Ս(ուրբ) | 40 մանկանց եկեղեցոյ, 1885:

Արաբերեն.

تجددت بنفقه واتيس بولص مينااس الاجاتي لخير كنيسة الاربعين شهيد.

Թարգմ. Նորոգվեց Հովհաննէս Պողոս Մինաս Ալաջաթի կողմից՝ որպես նվիրատվություն Քառասնից մանկանց եկեղեցուն:

Հրատ. առաջին անգամ:



22. Արձանագրություն. շրջապարսպին՝ խանութի վերածված առաջնորդարանի սենյակի դռան վերևում ագուցված մարմարե սալիկին՝ փորագիր, 5 տող հայերեն, որից ցած նույն բովանդակությամբ՝ ելնդագիր, 1 տող արաբերեն.

Առաջնորդարանի սենեակս երկու | փոքր խանութի վերածուեցաւ | ծախիւք մաշկերացի Գեորգ | Գ(րիգոր) Օհանեանի ի յիշատակ Ս(ուրբ) | 40 մանկանց եկեղեցոյ, 1885:

Արաբերեն.

تجددت هذه المحللين بنفقه كيورك كريكور او هانيان ماشكرلي لخير كنيسة الاربعين شهيد.

Թարգմ. Այս երկու խանութները նորոգվեցին մաշկերացի Գեորգ Գրիգոր Օհանյանի կողմից՝ որպես նվիրատվություն Քառասնից մանկանց եկեղեցուն:

Հրատ. առաջին անգամ:



23. Տապանաքար. գտնվում է եկեղեցիների բակի³³ հյուսիսարևմտյան մասում գտնվող քահանաների գերեզմանների բաժնում³⁴.

Դամբարան տեր Թադէոս քիյ. Չատիկեանի, հնգ. 21 մարտ 1886:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 16:

Ծանոթ. արձանագրությունը մեր ուսումնասիրության ժամանակ ամբողջությամբ մաշված էր:

Թադէոս Չատիկյանը ծնվել է Հալեպում: 1870 թ. առաջնորդ Սկրտիչ արք. Քեֆսիզյանի կողմից քահանա է ձեռնադրվում և պաշտոնավարում Քրիստի Սբ. Հովհաննէս եկեղեցում: 1877 թ. Բերիո թեմի կրոնական ժողովի անդամ էր, այսպե՛ս նույն ժողովի ատենապետ: 1878 թ. հունվարի 15-ին ընտրվում է Բերիո թեմի

33 ՊՀՀ, էջ 832:

34 ՊՀԱԳԱՀՏ, էջ 10, 16:

ազգային գավառական ընդհանուր ժողովի անդամ: Վերստին ընտրվում է 1880 թ.: Նույն թվին ուսուցանում էր Հալեպի ազգային վարժարանում (ՊՀՀ, էջ 832, 846, 859):

24. Տապանաքար. գտնվում է զանգակատան մոտ³⁵:

Դամբարան Պողոս Սինասեանի, 1886:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 16:

Ծանոթ. արձանագրությունը մեր ուսումնասիրության ժամանակ ամբողջությամբ մաշված էր:

25. Տապանաքար. գտնվում է պլուսարահում՝ դեպի իգական վարժարան տանող մուտքի մոտ³⁶: տեղի Սարգիս Տեր-Սարգիսյանի և նրա որդու՝ տեղի Խաչատուրի տապանաքարերի հարևանությամբ³⁷:

Տեր Խաչատուրի որդի մահտեսի Սարգիսի, թ. փրկչ. 1887-ին:

Հրատ. նույն տեղում:

Ծանոթ. արձանագրությունը մեր ուսումնասիրության ժամանակ ամբողջությամբ մաշված էր:

Բամբակի թելի վաճառական մահտեսի Սարգիսը տեղի Խաչատուր Տեր-Սարգիսյանի որդին էր, տեղի Սարգիս թողը, Աննայի և Օվսաննայի եղբայրը (ՊՀՀ, էջ 824-825): 1878 թ. հունվարի 15-ին ընտրվում է Բերիտ թեմի ազգային գավառական ընդհանուր ժողովի անդամ (նշվ. աշխ., էջ 846): Տիրապետում էր գրչության արվեստին: 1880 թ. Հակոբյան Ֆեթեյանի հետ արաբերենով գրում է ձեռագիր Նարեկ (ՅՉՀԲՄ, էջ 398): 1885 թ. նորոգում է Սր. Քառասնից մանկանց եկեղեցու ժամկույտի սենյակը՝ վերածելով խանութի (տե՛ս Հին եկեղեցիների շրջաբանի արձ. № 20): 1887 թ. տունը կտակում է Սր. Հակոբյանց վանքին (**Աղանունի Մ.**, նշվ. աշխ., էջ 454):

Սարգիս մեծ հոր և հոր մասին տե՛ս Հին եկեղեցիների շրջաբանի արձ. № 9:

26. Տապանաքար. գտնվում է զանգակատան ուղղությամբ³⁸:

Մահարձան Սեդրոս Եկաւեանի, վաճառական, ծն. 1819 յնս. 10, մհ. 1888 յնս. 16:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 16:

Ծանոթ. արձանագրությունը մեր ուսումնասիրության ժամանակ ամբողջությամբ մաշված էր:

Բնիկ արաբկիրցի Սեդրոս Եկավյանը Հալեպում ուներ մեծաքանակ ապրանքի վաճառատուն՝ Փոքր Ասիայի քաղաքների հայ վաճառականներին մատակարարելով եվրոպական զանազան ապրանքներ: Օժանդակում էր Արաբկիրի և Հալեպի եկեղեցիներին ու դպրոցներին: 1862 թ. Արաբկիրում եղբոր հետ կառուցում է Եկավյան վարժարանը: Որդին, հաստատվելով Կ. Պոլսում, նահատակվում է Եղեռնի տարիներին: Կողակիցը՝ տիկ. Ֆլորենսը, մյուս գավակների հետ տեղափոխվում է ԱՄՆ և հաստատվում Փրովիդենսում: Սեդրոսի թոռների՝ Գրիգորի, Չարեհի և Էդուարդի բարերարությամբ Փրովիդենսի Ս. Սահակ և Ս. Մեսրոպ եկեղեցիներին կից կառուցվում է Եկավյան սրահ (**Փղաւեան Ա.**, նշվ. աշխ., էջ 833): 1866 թ. օգոստոսի 25-ին հայկաբնակ արաբկիրցիներն Արաբկիրի ազգային վարժարաններին աջակցություն ցույց տալու նպատակով հիմնում են «Բերիտյ Բարեպաշտ» ընկերությունը, որի ղեկավարներից էր Սեդրոսը (նշվ. աշխ., էջ 837: Տե՛ս նաև **Քեչիզեան Վ.**, Հալեպի Հայկական գաղթածախի..., էջ 202): 1880 թ. Հալեպում հիմնված «Մովսէսը հանձնաժողով»-ի անդամ էր, որի նպատակն էր օգնել Արևմտյան Հայաստանի սովախար հայերին (ՊՀՀ, էջ 865): 1880 թ. մարտի 30-ին կաթողիկոս Սյրսոյի Քեֆսիզյանի կողմից նշանակվում է Հալեպի կաթվածների գծով փոխանորդ (ՊՀՀ, էջ 864):

35 Նշվ. աշխ., էջ 16:

36 Նույն տեղում:

37 ՊՀՀ, էջ 824:

38 ՊՀԱԳԱՀՏ, էջ 16:

27. Տապանաքար. գտնվում է Սր. Քառասնից մանկանց եկեղեցու մուտքի մոտ՝ զանգակատան հարավային որմնի մոտ³⁹:

Դամբարան տեր Աստուածատուր քհ. Մասունցիի, հնգ. 12 նոյ. 1888:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 16:

Ծանոթ. արձանագրությունը մեր ուսումնասիրության ժամանակ ամբողջությամբ մաշված էր:

Տեր Աստուածատուրը ծնվել է Մասունի Փասնք գավառակի Քաջառնիք գյուղում: Քահանա է ձեռնադրվել 1870-ական թթ. Մշո Սր. Կարապետ վանքի վանահայր Մամբրե եպս. Մամիկոնյանի ձեռքով՝ որպես ձեռնադրվածի հոգևոր հովիվ: Կնոջ մահից հետո՝ 1888 թ., փոխադրվում է Հալեպ, որտեղ բնակվում էին որդին՝ Յաղոբը, և դուստրը: Վախճանվում է նույն թվականի նոյեմբերի 26-ին (ՊՀՀ, էջ 832-833): Մյուրմեյանը տապանաքարի վրա մահվան օրն ընթերցել է նոյեմբեր 12, իսկ կենսագրության մեջ՝ ներկայացրել նոյեմբեր 26:

28. Տապանաքար. գտնվում է եկեղեցիների բակի հյուսիսարևմտյան մասում գտնվող քահանաների գերեզմանների բաժնում⁴⁰:

Դամբարան տեր Գեորգ քհյ. Պազիրկեանեանի, հնգ. 26 նոյ. 1889:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 16:

Ծանոթ. արձանագրությունը մեր ուսումնասիրության ժամանակ ամբողջությամբ մաշված էր:

Գեորգ (աշխարհիկ անունը՝ Հովսեփ) Պազիրկեանյանը ծնվել է 1824 թ. Հալեպում: Ուսանել է Հալեպի ազգային վարժարանում: Տիրապետել է հոր արհեստին՝ դանակագործությանը: 1849 թ. ամուսնանում է ուրֆացի Գեորգ Պայթարյանի դստեր՝ Սրբուհու հետ և ունենում յոթ զավակ՝ չորս տղա և երեք աղջիկ: Քահանա է ձեռնադրվում 1864 թ.՝ պաշտոնավարելով Սր. Քառասնից մանկանց եկեղեցում (ՊՀՀ, էջ 823-824): 1876 թ. ընտրվում է Բերիտ թեմի կրոնական, 1878 թ. հունվարի 15-ին՝ ազգային գավառական ընդհանուր, իսկ 1880 թ.՝ վերստին կրոնական ժողովների անդամ (նշվ. աշխ., էջ 844, 846, 859): Սր. Քառասնից մանկանց եկեղեցում պահվող Հայսմավորքի առաջին էջում նրա մասին գրված են գովեստի հետևյալ խոսքերը. «Դևահան տեր Գեորգ Պազիրկեանեան բարեպաշտ, հաստատրիմ, բարեսիրտ, ազգասեր ողջոյն մեր քահանային: Տեր Յիսուս իրեն կարգին հաստատ պահեսցե, որովհետև այս քահանայն չափազանց սքանչելագործութիւն ունի ըստ վկայութեան անձին իւրոյ» (նշվ. աշխ., էջ 824):

29. Տապանաքար. գտնվում է Հին եկեղեցու հարավային որմնի դիմաց⁴¹:

Դամբարան կիրիցի Գասպար Տեր-Գասպարեանի, 1890:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 16:

Ծանոթ. արձանագրությունը մեր ուսումնասիրության ժամանակ ամբողջությամբ մաշված էր:

Գասպար Տեր-Գասպարյանը 1879 թ. Հալեպում հիմնված «Յանուն դպրոցի» ընկերության անդամներից էր, որոնցով էլ կազմվում է Ազգային վարժարանի հոգաբարձությունը (**Քեչիզեան Վ.**, Հալեպի Հայկական գաղթածախի..., էջ 60):

30. Տապանաքար. գտնվում է զանգակատան առջև⁴²:

Դամբարան Մաքսուտ Քրիստոստուրեանի, կ. պոլսեցի, 1891:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 16:

Ծանոթ. արձանագրությունը մեր ուսումնասիրության ժամանակ ամբողջությամբ մաշված էր:

39 ՊՀՀ, էջ 833:

40 ՊՀԱԳԱՀՏ, էջ 16:

41 Նույն տեղում:

42 Նույն տեղում:

31. Տապանաքար. գտնվում է եկեղեցիների բակում.

Գամբարան Անտիոզի հիւպատոս արարկերցի Սարգիս Քեօւէեանի, վիսճ. 12 ապրիլ 1894-ին:

Հրատ. նշվ. աշխ., էջ 17: Փոլստեան Ա., նշվ. աշխ., էջ 854:

Ծանոթ. արձանագրությունը մեր ուսումնասիրության ժամանակ ամբողջությամբ մաշված էր:

Արարկիցի Սարգիս Քեոսեյանը բնակություն է հաստատել նախ Հալեպում, ապա Անտիոքում. «...բաւական ժամանակ է, որ Հալեպը թողերով Անտիոք կը բնակի իւր ազնիւ ընտանեօքը, ուր ոչ միայն մեր ազգայնոց սիրտը գրաւեց իւր քաղցր բնատրուրեանքը, այլև օտարաց և գլխաւոր պաշտօնակալաց մասնաւոր սէրը և համակրութիւնը ձեռք բերաւ»: 1862 թ. նշանակվել է Անտիոքում և Մուռեղիայում Մեծ Բրիտանիայի հյուպատոս (Փոլստեան Ա., նշվ. աշխ., էջ 822): Կնոջ՝ Սրմայի մասին տեսն Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 34:

Ա. Փոլստյանը և նրանից օգտված Վ. Քեշիշյանը սխալմամբ նշել են, որ Սարգիս Քեոսեյանի մարմինն ամփոփվել է Հալեպի հայոց գերեզմանոցում (նշվ. աշխ., էջ 822: Քեշիշեան Վ., Հալեպի Հայկական գաղթօճախի..., էջ 200):

32. Արձանագրություն. հին առաջնորդարանի բակում՝ քաղականության սենյակի հարավային ճակատին՝ մուտքից արևելք ագուցված սալիկին՝ փորագիր, 9 տող.

1894 օգ(ոս)տ(ոս) 15: | Ի տեղ(ապահ) գեր(ապատիւ) տ(էր) | Պ(ե)տրոս ծ(այրագոյն) վ(արդապետ) Ներկարարե(ա)նի | շինեցաւ ջրամլպարս արդեամբ | և ծախիւք սալ(ու)նցի բարեպ(ա)շտ | ժող(ո)վրդ(ո)ց մերոց:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. բավական ընդարձակ ջրամբարը կառուցվել է քահանաների խցի մուտքի մոտ: Այն իր սառը և վճիտ ջրով կենարար աղբյուր էր ոչ միայն հայոց առաջնորդարանի, այլև հայոց և հունաց եկեղեցիների միաբանության և մերձակա բնակիչների համար (ՊՀՀ, էջ 683, 884):

Պետրոս ծ. վրդ. Ներկարարյանը Բերիո թեմի առաջնորդ է հիշվում 1894-1904 թթ.: 1897 թ. նրա մասին գրվել է. «Քաղաքական, երեսփ., ուսումն. և քաղ. ժողով երբէք գոյութիւն չունին, վասն զի առաջնորդն ինքն է այս ամեն ինչ: Իր քով առած մի քանի անձիք (որք ազգային կը համարին, և չեն իսկապէս), որք գերի են եղած իր ամեն մի կրից և հաճոյից, ինքն է ամեն ինչ, ինքն կը տնօրինէ և ինքն կը վճռէ զամենայն: Տարեկան 300 ոսկոյ կալուածոց եկամտը յայտնի չէ, թէ ինչ բանի կը ծախսուի, և ո՞ր կ'երթայ, վասն զի հաշիւ պահանջող չկայ: Նպատատմատոյց ժողովոյ ուղղեալ գումարներն որո՞ն կը տրուին,- զայդ ո՛չ որ գիտէ, վասն զի խեղճը պաշտպանող չկայ: Աստ գտնուող գաղթական խեղճերը գրեթէ մտրացիկ կը պատին.- ո՛չ որ զայս հոգացող: Պետրոս վարդապետ գիշեր ցերեկ ուտելու, խմելու և իր հաճոյքները լցուցանելու համար ամեն ինչ զոհելու պատրաստ է: Անոր համար ազգ. իրատուք կարևորութիւն չունին, եկամտո, նուէր, աղքատաց դրամ և այլն իր սնտուկին մէջ կը բափին...» (Մոսճեան Ա., նշվ. հոդվ., էջ 810):

33. Արձանագրություն. հին առաջնորդարանի բակում՝ քաղականության սենյակի դիմաց՝ նախկին քարտուղարության սենյակի կամարակապ դռան կամարից վեր ամրացված սալիկին՝ ելնդագիր, 7 տող.

1895 հոկտ(եմբեր) 10: | Տ(է)ր Պետրոս ծ(այրագոյն) վ(ա)ր(դա)պ(ե)տ | Ներկարարեանց շինե(ա)լ իր ծ(ա)խի(ւ)ք | զայս կամարս և ա(ւա)զ(ա)ն(ս) | ի վայելումն հայ | ազգին սիրական:

Հրատ. առաջին անգամ:



34. Տապանաքար. գտնվում է եկեղեցիների բակում. Գամբարան Սարգիս Քեօւէեանի կնոջ՝ այլի Սրմա Քեօւէեանի, վիսճ. 15 նոյեմբեր 1896-ին:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 17: Փոլստեան Ա., նշվ. աշխ., էջ 854:

Ծանոթ. արձանագրությունը մեր ուսումնասիրության ժամանակ ամբողջությամբ մաշված էր:

Ամուսնու մասին տեսն Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 31:

35. Տապանաքար. գտնվում է եկեղեցիների բակի հյուսիս-արևմտյան մասում գտնվող քահանաների գերեզմանների բաժնում⁴³.

Գամբարան տեր Մառթեոս քհ. Տեր-Գեորգեանի, հնգ. 26 սեպտ. 1897:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 16:

Ծանոթ. արձանագրությունը մեր ուսումնասիրության ժամանակ ամբողջությամբ մաշված էր:

Մառթեոս (աշխարհիկ անունը՝ Գևորգ) Տեր-Գևորգյանը ծնվել է 1835 թ. Հալեպում: Մասունցի տեր Գևորգ Տեր-Գևորգյանի որդին էր և տեր Գևորգ Տեր-Մարգարյանի բոռը (նրանց մասին տես Սր. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 66, 93): Ուսանել է Հալեպի ազգային վարժարանում, զբաղվել ոսկերչությամբ: 1871 թ. փետրվարի 14-ին Սկրտիչ արք. Քեֆսիզյանի կողմից ձեռնադրվում է քահանա (Մեղրակեան Յ., Վարք քահանայից, «Գանձասար», 23/11/2006): 1876 թ. նշանակվում է Հալեպի ազգային դպրոցի «տղայոց» բաժնի տեսուչ: Նույն թվականի փետրվարի 10-ին ընտրվում է Բերիո թեմի ազգային գավառական ընդհանուր, իսկ 1880 թ.՝ նաև կրոնական ժողովների անդամ (ՊՀՀ, էջ 837, 843, 859): Եղել է նաև առաջնորդական փոխանորդ: Երկարամյա ծառայության համար պարգևատրվել է յանջախաչով (Մեղրակեան Յ., Վարք քահանայից, «Գանձասար», Հալեպ, 23/11/2006): Ամուսնացել է սասունցի տեր Հովհաննեսի աղջկա հետ և ունեցել 6 զավակ (հայտնի են 3-ի անունները՝ Ծատուր, Լևոն և Արմեն):

36. Արձանագրություն. գտնվում է եկեղեցու հարավարևմտյան մուտքի հանդեպ՝ ներկայումս դարաց դասի սենյակի մուտքից վեր՝ պատշգամբին ագուցված սալիկին, ելնդագիր, 6 տող.

Շինեցա դպրոցս 1897 հո(կտեմբեր) 1-(ին), | յառաջնորդական տեղալպահութեան Պետրոս ծ(այրագոյն) վար|դապետի եւ տրօք ժողովրդ|եան եւ ճարտարապետութ(ե)ամբ | Մարգարեան Եսայի Է-Ֆ(Էն)տիի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. երկհարկանի դպրոցը կառուցվել է եկեղեցուց դեպի արևմուտք՝ փողոցի երկարությամբ:



37. Արձանագրություն. գտնվում է եկեղեցիների բակում. Գամբարան Կարապետ Ատանալեանի, ծն. 1840-ին վխճ. 1901:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 17:

Ծանոթ. արձանագրությունը մեր ուսումնասիրության ժամանակ ամբողջությամբ մաշված էր:

38. Արձանագրություն. գտնվում է եկեղեցիների բակում. Աստ հանգչի տեր Սահակ ա. քին. Շահվէթի-լեան, 1901:

Հրատ. նույն տեղում:

Ծանոթ. արձանագրությունը մեր ուսումնասիրության ժամանակ ամբողջությամբ մաշված էր:

43 Նույն տեղում:

Արմատներով կամ ծնունդով Պարսկաստանից տեր Սահակը Նիկողոսի և Սոֆյայի որդին էր (հոր և մոր մասին տես Սր. Քառասնից մանկանց եկեղեցու № 99, Հին եկեղեցիների շրջաբակի № 42 արձանագրությունները): 1870 թ. Սկրտիչ արք. Քեֆսիզյանի կողմից ձեռնադրվում է քահանա (ՊՀՀ, էջ 831, 841): 1876 թ. փետրվարի 10-ին հիշվում է Բերիո թեմի ազգային գավառական ընդհանուր և կրոնական (նշվ. աշխ., էջ 843-844), 1878 թ. հունվարի 15-ին՝ ազգային գավառական ընդհանուր (նշվ. աշխ., էջ 846), 1880 թ.՝ կրոնական ժողովների անդամ (նշվ. աշխ., էջ 859): 1882 թ. հունվար 1-ին կազմավորված Աղքատաց հոգաբարձության նախագահն էր (նշվ. աշխ., էջ 883): 1894 թ. հետո նշանակվում է Կրոնական ժողովի ատենապետ (նշվ. աշխ., էջ 889): Ամուսնացել է ակնցի Մարիամ Մատաթյանի հետ և ունեցել չորս զավակ՝ Նիկողոս, Սուֆո, Լուիզա, Վարդուհի (ՊՀՀ, էջ 841): Միակ որդուց ուներ յոթ բոռ՝ չորս տղա և երեք աղջիկ: Թոռնուհիներից Տիգրանուհին ամուսնանում է Արմեն Աճեմյանի հետ: Նրանց զավակը տեր Շահե արեղա Աճեմյանն էր (նշվ. աշխ., էջ 888-889):

39. Արձանագրություն. սյունասարսիի հարավային սյան արևելյան նիստին ագուցված մարմարե սալիկին՝ փորագիր, 5 տող հայերեն, որից ցած՝ ելնդագիր, 1 տող արաբերեն.

Այս է տապան մխատեսի Խաթուն(ի) ոսկերիչ Աբրիսհամի կնոջ, որ | հանգեաւ 18 յ(ունուս)ր 1905:

Արաբերեն.

المرحومة خاتون ارمله المرحوم ابراهيم صالح

Թարգմ. Հանգուցյալ Իբրահիմ Սալեդի այրին՝ հանգուցյալ Խաթուն:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 17: Արաբերեն արձանագրությունը հրատարակվում է առաջին անգամ:

Ծանոթ. Խաթունն ամուսնու հիշատակին 1888 թ. հունվարի 1-ին կառուցում է Սր. Քառասնից եկեղեցու մկրտարանը (տես Սր. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 104):

Տարբերություն. Մյուրմեյանի մոտ «18»-ի փոխարեն՝ «13»:



40. Տապանաքար. գտնվում է եկեղեցիների բակի հյուսիս-արևմտյան մասում գտնվող քահանաների գերեզմանների բաժնում⁴⁴.

Գամբարան տեր Մեսրոպ քիյ. Աճեմեանի, հնգ. 23 յունիս 1905:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 17:

Ծանոթ. արձանագրությունը մեր ուսումնասիրության ժամանակ ամբողջությամբ մաշված էր:

Մեսրոպ Աճեմյանը 1870 թ. Սկրտիչ արք. Քեֆսիզյանի կողմից ձեռնադրվում է քահանա (ՊՀՀ, էջ 831): 1876 թ. նշանակվում է Հալեպի ազգային վարժարանի «աղջկանց» բաժնի տեսուչ (նշվ. աշխ., էջ 837): Նույն թվականի փետրվարի 10-ին հիշվում է Բերիո թեմի ազգային գավառական ընդհանուր և կրոնական (նշվ. աշխ., էջ 843-844), 1878 թ. հունվարի 15-ին՝ Ազգային գա-

44 Նշվ. աշխ., էջ 17:



վառական ընդհանուր (նշվ. աշխ., էջ 846), իսկ 1880 թ.՝ Ազգային գավառական ընդհանուր և կրոնական ժողովների անդամ (նշվ. աշխ., էջ 859): Ստացել է ավագ քահանայի տիտղոս և լանջախաչ կրելու իրավունք (նշվ. աշխ., էջ 889): 1901 թ. հետո նշանակվում է Կրոնական ժողովի ատենապետ և Բերիտ քեմի առաջնորդի փոխանորդ (նշվ. աշխ., էջ 889: Տե՛ս նաև «1903. ընդարձակ օրացույց Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց, էջ 353):



սով ողողուի շիրիմն յար, | ծնեալ 1868, հանգ(եալ) (1)915 փետր(ուար) 28:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 17:

Ծանոթ. արմատներով Չմշկաձագի Միատուն գյուղից (Պապարեան Հ., Պատմագիրք Չմշկաձագի, Պէյրուք, 1971, էջ 546) Իսկենտեր Գարաճյանը Սամսոնի ընդհանուր դատախազ, Օսմանյան երեսփոխանական անդրանիկ ժողովի անդամ և Հալեպի քաղաքապետ, հոշակավոր հռետոր Մանուկ Գարաճյանի որդին էր, Գրիգորի բորբ: Ծնվել է 1868 թ. հունվարի 13-ին: Ուսումը կիսատ թողնելով՝ ինքնակրթության շնորհիվ կարողանում է հասնել զարգացման բարձր մակարդակի: 1897 թ., երբ Հալեպի ազգային վարժարանի հոգաբարձության անդամ էր, «Իր առաջին գործը կ'ըլլայ աշակերտներուն դպրոցական թոշակ պարտադրել...: Ասոր իբր անմիջական արդյունք դպրոցի պիտոճեն կ'ընդարձակուի, ուսուցիչներու թիւը կ'աւելացուի և վերջապէս Ազգային վարժարանը կ'անոնաւոր նախակրթարանի մը աստիճանի կը բարձրացուի...: Ան յաճախ դասերուն ներկայ կը գտնուի և դիտողութիւններ ընելով, ուղղութիւն տալով ուսուցիչներուն կաշխատի դասասանդման նորագոյն մեթոտները ներմուծել դպրոցին մէջ..., կարելի է րսել որ Ազգային վարժարանը իր նախապատերազմեան համեմատաբար փայլուն վիճակը գլխատարաբար իրեն կը պարտի...: Ինք էր, որ Հալեպի մէջ կարելի դարձուց երիտասարդական շարժումը, նպաստելով Կիլիկեան շրջանաւարտից և շրջանաւարտուիեաց միութիւններու կազմութեան և հիմը դնելով անոնց գրադարանին իր գիրքերու նուիրատութեամբ» (Վ. Ս., Հալեպի հայ ազգային վարժարանը և Իսկենտեր Գարաճեան, «Սուրիահայ տարեցոյց», Հալեպ, 1925, էջ 180-182): 1904 թ. Ներսէսյան վարժարանի շրջանավարտից միութեան գրադարանին նվիրում է բազմաթիվ գրքեր, որոնց ընդհանուր արժեքը կազմում էր 1970 դր. (Քէշիշեան Վ., Հալեպի Հայկական գաղթօճախի..., էջ 79), իսկ 1908 թ. «Հայուհեաց մատենադարան»-ին՝ գեղարվեստական հատորներ (նշվ. աշխ., էջ 104): 1906 թ. Բերիտ քեմի գավառական ժողովի անդամ էր (ՀԱԳ, ֆ. 1421, ց. 5, գ. 2, ք. 6): 1906 թ. հունիսի 26-ին նշանակվում է ազգային դպրոցի հոգաբարձու (նույնի՝ գ. 3, ք. 3), հուլիսի 13-ին ընտրվում է հոգաբարձության ատենապետ (նշվ. վավ., ք. 7-8): 1907 թ. մայիսի 24-ին վերընտրվում է նույն պաշտոնում (նույնի՝ գ. 7, ք. 5): 1908 թ. նշանակվում է նորակազմ ազգային «Յառաջ» ընթերցատան վարչության ատենապետ (Քէշիշեան Վ., Հալեպի Հայկական գաղթօճախի..., էջ 120, 122): 1908 թ. նոյեմբերի 27-ին (ՀԱԳ, ֆ. 1421, ց. 5, գ. 17, ք. 1-2) և 1910 թ. նշանակվում է «Ազգային յարան»-ի հանձնախմբի անդամ (Քէշիշեան Վ., Հալեպի Հայկական գաղթօճախի..., էջ 92, 95): 1909 թ. մարտի 26-ին հրավիրվում է ազգային դպրոցի հոգաբարձության հետ խորհրդակցության՝ հաջորդ ուսումնական տարեշրջանում դպրոցի ուղին որոշելու համար (ՀԱԳ, ֆ. 1421, ց. 5, գ. 19, ք. 10): 1910 թ. նշանակվում է Շրջանավարտից միության երկամյա հաշվեկշիռի քննիչ հանձնախմբի անդամ (Քէշիշեան Վ., Հալեպի Հայկական գաղթօճախի..., էջ 87): 1910 թ. մարտի 23-ին ընտրվում է ՀԲԸՄ Հալեպի տեղական անդրանիկ մասնաժողովի զանձապահ: Նույն պաշտոնում վերընտրվում է նաև 1912 թ. հունվարի 18-ի, 1914 թ. փետրվարի 8-ի և 1915 թ. փետրվար 10-ի ընտրություններում (նշվ. աշխ., էջ 148-149):

Բազմաթիվ հողվածներ է հրատարակել Այծյամն, Թրփակից և Սևյան Ա. Մ. ծածկանուններով (տե՛ս «Բիւզանդիոն», 1904, № 2421-2423, 2477; 1905, № 2654, 2655; 1906, № 3013, 3025; 1907,

41. Տապանաքար. գտնվում է զանգակատան ուղղությամբ⁴⁵. Դամբարան Կարապետ Քէշկեկեանի, արարելերցի, 1905:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 17: **Փոխտեան Ա.**, նշվ. աշխ., էջ 854: Ծանոթ. արձանագրությունը մեր ուսումնասիրության ժամանակ ամբողջությամբ մաշված էր:

Արարելերցի Կարապետ Քէշկեկեանը մինչև 1860 թ. հաստատվել է Հալեպում: Չբաղվել է առևտրով Հալեպ-Երզնկա-Կարին ուղղությամբ (ՊՀՀ, էջ 849): 1876 թ. փետրվարի 10-ին Հալեպից ընտրվում է Բերիտ քեմի ազգային գավառական ընդհանուր ժողովի անդամ (նշվ. աշխ., էջ 843): 1878 թ. հունվարի 15-ին վերընտրվում է (նշվ. աշխ., էջ 846) և որոշ ժամանակ ստանձնում ատենապետի պաշտոնը (նշվ. աշխ., էջ 852-853, 855-856): 1880 թ. կրկին ընտրվում է նույն ժողովի անդամ և երկրորդ ատենապետ (նշվ. աշխ., էջ 859), իսկ մարտի 30-ին՝ նշանակվում Հալեպի կալվածքների գծով փոխանորդ (նշվ. աշխ., էջ 864): 1887 թ. Բերիտ քեմի ազգային գավառական ժողովի ատենապետի էր (նշվ. աշխ., էջ 869):

Մյուրմեյանը նշում է, որ նա մահացել է 1896 թ. (նշվ. աշխ., էջ 843, 846, 849), սակայն իր իսկ ընթերցած մահվան փակագն է 1905: Մեզ հայտնի չէ, թե այս երկու փակագններից որն է ճիշտը:

42. Տապանաքար. գտնվում է Սբ. Աստվածածին եկեղեցու մուտքին⁴⁶.

Դամբարան տեր Սահակ ա. քիյ. Շահվերիլեանի մօր՝ տիկին Սօփիայի, 1822-1906:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 17: Ծանոթ. արձանագրությունը մեր ուսումնասիրության ժամանակ ամբողջությամբ մաշված էր:

Տիկին Սոֆյան Անտոն Շամնայի դուստրն էր, Նիկողոս Շահվերիլյանի կինը: Նրա ջանքերով 1874 թ. կառուցվում է Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու վերնատունը (տե՛ս Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 99): Որդու՝ տեր Սահակի մասին տե՛ս Հին եկեղեցիների շրջաբանի արձ. № 38:

43. Արձանագրություն. մոմատան ներսում՝ հարավային ուղիվն ագուցված դեղին մարմարե սալիկին՝ ելնդագիր, 7 տող.

Աստ հանգչի Մ. Գարաճեան Իսկենտեր, | այրն ընտիր, անբասիր վարուց տէր: | Գիտուն միտք, վեհ հոգի, սիրտ անգին, | ինչքն ու զինք նուիրեց իր ազգին, | լոյսն ուսման տարածեց անդադար, | թող լոյ-

45 Նույն տեղում:

46 Նույն տեղում:

№ 3164; 1908, № 3433, 3479; 1909, № 3827; 1911, № 4507, 4613, 4797; 1912, № 4675, 4775; 1913, № 5115, 5124; 1914, № 5300 (**Հովակիմյան Բ.**, Հայոց ծածկանունների բառարան, Երևան, 2005, էջ 53, 171-172, 585): «Արևելեան մամուլ», 1906, № 24, էջ 600):

Մեծ հոր՝ Գրիգորի մասին տե՛ս Հին եկեղեցիների շրջաբանի արձ. № 19:

Յար – միշտ:

44. Արձանագրություն. սյունասրահում՝ ընդունարանի և մուստան մուտքերի միջանկյալ հատվածում ազուցված մարմարե սալիկին՝ փորագիր, 3 տող հայերեն, որից ցած՝ նույն բովանդակությամբ 3 տող արաբերեն.

Այս է տապանն | Յովաննես Թօփճեանի, | ծնաւ 1850, հանգեաւ ի տէր 1915:

هنا ضريح | المرحوم اوهانس طوبجيان | توفي الى رحمة | تعالى سنة ١٩١٥.

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 17: Արաբերեն արձանագրությունը հրատարակվում է առաջին անգամ:

Ծանոթ. դերձակ Հովհաննես Թոփճյանը ծնվել է Հալեպում (**Մրճասեան Մ.**, նշվ. հոդվ., էջ 27): 1880 թ. մարտի 8-ին ընտրվում է Բերիտ թեմի քաղաքական ժողովի անդամ (ՊՀՀ, էջ 864): 1902 (**Մրճասեան Մ.**, նշվ. հոդվ., էջ 21), 1903 («1903. ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիանդանոցի հայոց», էջ 354) և 1908 թ. սեպտեմբերի 22-ից մինչև 1909 մայիսի 9-ը հիշվում է նույն ժողովի անդամ (ՀԱԳ, ֆ. 1421, ց. 5, գ. 15, թ. 6; գ. 20, թ. 5): 1909 թ. վերը ընտրվում է Բերիտ թեմի քաղաքական ժողովի անդամ, իսկ հուլիսի 23-ին՝ ատենապետ (նույնի՝ գ. 21, թ. 1-2): Այդ պաշտոնում հիշվում է մինչև 1910 թ. ապրիլի 1-ը (նույնի՝ գ. 27, թ. 3): 1906 թ. հունիսի 16-ին Բերիտ թեմի գավառական ժողովի ատենապետն էր (նույնի՝ գ. 2, թ. 6):



45. Արձանագրություն. սյունասրահի հարավային սյան հարավային միտին ազուցված մարմարե սալիկին՝ ելնդագիր, 2 տող հայերեն, 3 տող արաբերեն և 1 տող ֆրանսերեն, որոնցից ցած՝ փորագիր, 1 տող արաբերեն.

Ալետիս Ալիքսան Տապալադեան, | 1832-1920:

Արաբերեն.

المرحوم | اويديس بن الكسان دباغ | ولد ١٨٣٢ توفي ١٩٢٠.

Թարգմ. Հանգուցյալ Ալետիս՝ Ալեքսան Տապալադի որդին, ծն. 1832, մահ. 1920:

Ֆրանսերեն.

Avedis Alexan Dabbagh.

Թարգմ. Ալետիս Ալեքսան Տապալադ:

Արաբերեն, փորագիր.

جورج مراياتي.

Թարգմ. Ջորջ Մրաիաթի:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 17: Արաբերեն և ֆրանսերեն արձանագրությունները հրատարակվում են առաջին անգամ:

Ծանոթ. Ալետիս Տապալադյանը՝ որպես թեկնածու, 1867 թ. Հալեպի նահանգապետի կողմից ներկայացվում է քաղաքի ազգանու ընտրությունների ժամանակ

(**محمد فؤاد عينتابي. نجوى عثمان**, كتاب المنكور, الجزء الاول, ص ٦٤٦): 1878 թ. հունվարի 15-ին ընտրվում է Բերիտ թեմի ազգային գավառական ընդհանուր ժողովի անդամ (ՊՀՀ, էջ 846): 1894 թ. Ազիզի գերեզմանատան պարսպապատման համար հանգանակություն կատարող հանձնախմբի անդամներից էր (ՊՀԱԳԱՀՏ, էջ 22): 1899 թ. Հալեպի նահանգի կառավարիչ խորհրդի անդամ էր (**محمد فؤاد عينتابي. نجوى عثمان**, كتاب المنكور, الجزء الاول, ص ٢١٩):



46. Տապանաքար. գտնվում է Սբ. Աստվածածին եկեղեցու մուտքի մոտ⁴⁷.

Դամբարան Ռ-գկալյա Խանճեանի, 1832-1920:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 17:

Ծանոթ. արձանագրությունը մեր ուսումնասիրության ժամանակ ամբողջությամբ մաշված էր:

Հալեպի ակնառու և հռչակավոր վաճառականներից Ռ-գգալյան Խանճյանը (**Ճոցիկեան Մ.**, նշվ. աշխ., էջ 359) Թումայի որդի Ջրջոսի (Գևորգ) որդին էր, Հակոբճեանի, Աննայի, Վարդեի և Ղուրանի եղբայրը (ՀԱԳ, ֆ. 1421, ց. 5, գ. 1, թ. 6-7): 1888 թ. նրան է հանձնվում Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու անոթների և

47 Նույն տեղում:

գույքերի վերաբնութայինը (ՊՀՀ, էջ 872): 1906 թ. բնակվում էր Հալեայի Բեյթ-Մահար թաղամասում: Նույն թվականին շարժական և անշարժ գույքը կտակում է երեք քույրերին (ՀԱԳ, ֆ. 1421, ց. 5, գ. 1, ք. 6-7), իսկ 1912 թ. Հալեայի երկու տները՝ Երուսաղեմի Սր. Հակոբյանց վանքին (**Աղաւոննի Մ.**, նշվ. աշխ., էջ 433): 1906 թ. Սր. Քառասնից մանկանց եկեղեցուն նվիրում է արծաթյա ջահ (ՊՀՀ, էջ 908): 1908 թ. հուլիսի 24-ին Ալեքսանդրեայից ընտրվում է Բերիո թեմի գավառական ընդհանուր ժողովի անդամ (ՀԱԳ, ֆ. 1421, ց. 5, գ. 14, ք. 8): Նույն թվականին ընտրվում է նաև Քաղաքական ժողովի անդամ (նույնի՝ գ. 15, ք. 3):

Ռզզալլահ Խանճյանի քույրը՝ Վարդեն, 1918 թ., ի հիշատակ հանգուցյալ երկու եղբայրների, Սր. Քառասնից մանկանց եկեղեցուն նվիրում է սկիհ (տե՛ս Սր. Քառասնից մանկանց եկեղեցու արձ. № 115), սակայն, ըստ Սյուրմեյանի ներկայացրած տապանագրի, Ռզզալլահը մահացել է 1920 թ., հետևաբար արձանագրություններից մեկի թվականը սխալ է ընթերցվել:

47. Տապանաքար. գտնվում է եկեղեցիների բակի հյուսիս-արևմտյան մասում գտնվող քահանաների գերեզմանների բաժնում⁴⁸:

Դամբարան տեր Վահան քիյ. Թովմասեանի, քիլիսցի, հնգ. 6 փետր. 1923:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 17:

Ծանոթ. արձանագրությունը մեր ուսումնասիրության ժամանակ ամբողջությամբ մաշված էր:

Արմատներով սասունցի Վահան Թովմասյանը (աշխարհիկ անունը՝ Կարապետ, մականունը՝ Խալֆե) ծնվել է 1857 թ. Քիլիսում: 1884-1904 թթ. պաշտոնավարել է Քիլիսի ազգային Լեւոնյան վարժարանում որպես ուսուցիչ, դպրոցի տեսուչ և տնօրեն: 1891 թ. ձեռնադրվում է քահանա և պաշտոնավարում Քիլիսի Սր. Հովհաննես եկեղեցում: Նաև թաղական խորհրդի նախագահն էր և միաժամանակ կրոնական-եկեղեցական և դպրոցական-ուսումնական ժողովների վարիչը: Ավելի ուշ նույն եկեղեցու ավագ երեցն էր, ապա Բերիո թեմի առաջնորդական փոխանորդը (**Պայրամեան Ա.**, Կիլիզա. Հայկական Քիլիս, Երևան, 2001, էջ 52, 58, 102-104): Որդին՝ Թովմասը, 1915 թ. հունիսին Պոլսում կախաղան է բարձրացվում հնչակյան 19 գաղափարակիցների հետ («Կոչնակ», 1915, № 31, էջ 647): 1915 թ. բռնազաղթվում է և հասնելով Սմբուջ՝ 1916 թ. փետրվարի 13-ին մի խումբ քահանաների հետ օգնության խնդրագիր-նամակ է ուղարկում Բերիո թեմի առաջնորդարան (**Մամուլեան Վ.**, նշվ. աշխ., էջ 51-52):

Տեր Վահանի կինը մահացել է Հալեայում: Նրա մասին տե՛ս Շելի-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 428:

48. Տապանաքար. գտնվում է եկեղեցիների բակում:

Աստ հանգչի խաչակիր տեր Յարութին աւագ քահանայ Եսայեան, ծնեալ Յեֆթէրէ Կեսարիոյ 1867, հանգեաւ 1927:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 17:

Ծանոթ. արձանագրությունը ներկայումս ամբողջությամբ մաշված է:

Հարություն ավագ քահանա Եսայանը (աշխարհիկ անունը՝ Կարապետ) տեր Ազարիայի որդին էր: 1872 թ. ծնողների հետ մեկնում է Թալաս: 1883 թ. ավարտում է տեղի Ազգային վարժարանը: 1885-1886 թթ. դասավանդում է Թալասի Վարդ-Պատրիկյան վարժարանում, իսկ 1886-1887 թթ.՝ Մերսինում: 1895 թ. պատրիարքարանի հրամանով ուղարկվում է Արմաշ՝ Օրմանյան սրբազանի մոտ հեռակերպ կրոնական ուսմանը: 1896 թ. վերադառնում է Տարսն: 1897 թ. օգոստոսին սարագրվում է Աղրիս-նապոլիս, ինը ամիս բանտարկվում և ներման արժանանալով վերադառնում է Կիլիկիա: 1899 թ. ամուսնանում է: 1900 թ. Տարսնի թաղական խորհրդի հանձնարարականով մեկնում է Միս և քահանա ձեռնադրվում: Մեկնում է Բեյլան՝ որպես քահանա: Ազգային գործունեության համար բանտարկվում է նախ Բեյլա-



նում, ապա Հալեայում: Բանտից ազատվելուց հետո պաշտոնավարում է Հալեայի Սր. Քառասնից մանկանց եկեղեցում՝ միևնույն ժամանակ կրոնագիտություն դասավանդելով Ազգային վարժարանում (ՊՀՀ, էջ 897-898): Բերիո թեմի կրոնական ժողովի անդամ է հիշվում 1906 (ՀԱԳ, ֆ. 1421, ց. 5, գ. 2, ք. 6), 1908 (նույնի՝ գ. 12, ք. 6) և 1909 թվականներին (նույնի՝ գ. 18, ք. 4): 1907 թ. հունիսի 16-ին նշանակվում է նորակազմ «Հայուհեաց մատենադարան»-ի խնամակալության տնօրեն և խորհրդի նախագահ (**Քչիշեան Վ.**, Հալեայի Հայկական գաղթօճախի..., էջ 103): 1908 թ. փետրվարի 19-ին ընտրվում է Հալեայի սասունցիների արհեստավորաց մասնաժողովի առաջին նախագահ (ՀԱԳ, ֆ. 1421, ց. 5, գ. 10, ք. 9): 1908 թ. նոյեմբերի 13-ին Բերիո թեմի քաղաքական ժողովը, որպես պատիժ, արգելում է նրան ազգային դպրոցում կրոն դասավանդել (նույնի՝ գ. 16, ք. 4-5): 1908 թ. նոյեմբերի 27-ին հրաժարվում է սասունցի աղքատների համար Հալեայում բացված հիվանդանոցի հոգաբարձության նախագահությունից, սակայն Բերիո թեմի քաղաքական ժողովը մերժում է նրա հրաժարականը (նույնի՝ գ. 17, ք. 1): 1911 թ. հոկտեմբերի 6-ին նրա միտքերով Հալեայում հիմնվում է «Կիլիկեան քահանայական միություն»-ը, որի առաջին տնօրենայետն է նշանակվում (**Քչիշեան Վ.**, Հալեայի Հայկական գաղթօճախի..., էջ 177): 1912 թ. Բեյլանում կարողանում է 128 հայ կաթողիկեների դարձի բերել առաքելական դավանանքին: Սահակ Բ կաթողիկոսի կողմից 1913 թ. պարգևատրվում է լանջախաչով, իսկ 1916 թ.՝ ծաղկյա փիլոնով (ՊՀՀ, էջ 898): 1912-1913 թթ. Հալեայի առաջնորդի փոխանորդն էր և Քաղաքական ժողովի փոխնախագահը (**Քչիշեան Վ.**, Հալեայի Հայկական գաղթօճախի..., էջ 134, 181), 1914-1915 թթ.՝ Բերիո թեմի առաջնորդական տեղապահը (**Շղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 318, 364): Անդամակցել է ՀՅԴ կուսակցությանը (**Պայրամեան Գ.**, Պատմություն Այնթապի Հ.Յ.Դաշնակցության 1898-1922, էջ 122): 1916 թ. մայիսի 1-ին քաղաքական մեղադրանքներով բանտարկվում է Հալեայում և մահվան դատապարտվում (Նկարագրությունը Երուսաղեմի-Հալեայի-Դամասկոսի գաղթականական եւ վանական զանազան դիպաց եւ անցքերու 1914-1918, էջ 36: ՊՀՀ, էջ 898): 1918 թ. հոկտեմբերի 24-ին անգլիական բանակի՝ Հալեայ մուտք գործելու օրն ազատ է արձակվում (ՊՀՀ, էջ 898): 1918-1922 թթ. շարունակում է Բերիո թեմի առաջնորդական տեղապահի պաշտոնը (**Տեմիրճեան Վ.**, նշվ. աշխ., էջ 302: Տե՛ս նաև «Հայաստանի կոչնակ», 1921, № 25, էջ 832): 1924 թ. հունիսի 5-ին ընտրվում է Ազգային գավառական ժողովի անդամ (**Գապայենճեան Գ.**, նշվ. հոդվ., էջ 304-305): 1927 թ. մարտին վթարի է ենթարկվում. «...Տ. Յարութին ա. քահանայ Եսայեան ինքնաշարժի ծանր արկածի մը ենթարկուեցաւ, կտ-

48 Նույն տեղում:

քին անհիները տեր հոր սրունքներուն վրայէն անցած ըլլալով հանդերձ, հրաշքով մը պարզ սկրթուկներով ազատեցաւ: Այժմ անկողնոյ կը ծառայէ և վիճակը լաւ է, մտահոգութիւն չի պատճառեւ...» («Արև», 19 մարտ, 1927, էջ 2): Վախճանվում է նույն թվականի ապրիլի 6-ին Սր. Քառասնից մանկանց եկեղեցում՝ ժամերգութեան ժամանակ: Մարմինն ամփոփվում է եկեղեցու բակում (ՊՀՀ, էջ 898): Տեր Հարությունն ունի հրատարակված հոդվածներ (տես Անհրաժեշտ, «Տաճար», 13 նոյեմբեր, 1911: Կիլիկիոյ մէջ հոգևոր և բարոյական տագնապայի վիճակ, «Տաճար», 4 սեպտեմբեր, 1911):

«Յէ.Ֆթերէ»-ն Եվքարա գյուղաքաղաքն է: Գտնվում է Անատոլիայում՝ Կեսարիա քաղաքից 15 կմ հյուսիս-արևելք: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Բյունյան (Bünyan):


49. Արձանագրություն. գտնվում է եկեղեցիների բակում.

Գամբարան տեր Ներսես ա. քիյ. Թավուզճեանի, վիճ. 1934 յուլիս 5:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 17:

Ծանոթ. արձանագրությունը մեր ուսումնասիրության ժամանակ ամբողջությամբ մաշված էր:

Ներսես ավագ քահանա Թավուզճեանը (աշխարհիկ անունը՝ Գրիգոր) ծնվել է 1870 թ. Այնթապում: Ներսես Քիլեճյանի (Թավուզճը Ներսես) և Դշխոյն (Տուտու) Իփիճյանի որդին էր (**Պապայեան Ե.**, նշվ. աշխ., էջ 77): 1879 թ. ուսանում է ազգային Ներսեսյան վարժարանում, իսկ 1882-1885 թթ.՝ Ֆրանցիսկյանների դպրոցում: 1885 թ. հետևում է մանուսայագործության արհեստին: Հոր մահից հետո ընտանիքի ապրուստի հոգան իր վրա վերցնելով՝ հաճախում է նաև գիշերային դպրոց՝ զարգացնելով թուրքերենը: 1896 թ. ընդունվում է «Կեդրոնական Թուրքիա» քոլեջ (**Մարաֆեան Գ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 469): Անդամակցել է ՄԴ Հնչակյան կուսակցությանը (**Պարսումեան Գ.**, Պատմություն Այնթապի Չ.Յ.Դաշնակցութեան 1898-1922, էջ 53): 1896-1900 թթ. դասավանդում է Վարդանյան վարժարանում: 1901 թ. երկու տարի հաճախում է Արմաշի դպրեվանք: 1903 թ. հուլիսին վերադառնում է Այնթապ և հոկտեմբերին ամուսնանում Գևորգ աղա Մուլախյանի դստեր՝ ուսուցչուհի Անիցա Մուլախյանի հետ (**Մարաֆեան Գ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 470): Ուներ 3 որդի՝ Գևորգ, Հակոբ և Տիրան արք. Ներստյաններ, և 2 աղջիկ՝ Մարիամ Ծեպեճյան և Տուտու (**Պապայեան Ե.**, նշվ. աշխ., էջ 78): 1904 թ. հունվարին Միսում ձեռնադրվում է քահանա: 1904-1915 թթ. քահանայագործում է Այնթապի Սր. Աստվածածին եկեղեցում: 1915 թ. տարագրվում է Համա, որտեղից էլ Սելեմիե: Մոտ մեկ տարի անց Սիրիա ապաստանած բոլոր քահանաների հետ միասին ուղարկվում է «Թաֆիլե ավանի Պոսեյրա» գյուղ, որտեղից էլ 1917 թ. վերադառնում է Սելեմիե, 1919 թ.: Այնթապ: 1920 թ. մասնակցում է Այնթապի ինքնապաշտպանությանը՝ նախագահելով Ազգային միությունը (**Մարաֆեան Գ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 470-471): Տես նաև **Խուպչեղեան Վ.**, Օրագրություն ուղեւորութեան Յերուսա Մահակ Բ կաթողիկոսին Կիլիկիոյ, Հալեպ, 1928, էջ 206-219): Ինքնապաշտպանության նախօրյակին, զինվորական մարմինը կատարելով նախապատրաստական աշխատանքներ, նամակով դիմում է Ազգային միությանը և ռումբ պատրաստելու համար նյութական օժանդակություն խնդրում: Տեր Ներսեսն արհամարհանքով կարդում է նամակը և օրակարգում քննարկման չի դնում՝ ասելով. «Չարժեք ասոր մասին խօսիլ, ճանրմ, քանի մը ճահիլ ճիվէլէկներու, ի՞նչ դրամ կարելի է վստահիլ: Ասոնք ի՞նչ կրնան ընել երկու-երեք կտոր հին գէնքերով կէս ժամ իսկ չեն կրնար դիմադրել»: Ըստ ինքնապաշտպանության մասնակից Պարսումյանի՝ նա թերահավատորեն էր մտտենում ինքնապաշտպանությանը և կովի դժվար օրերից հետո էր միայն սկսել վստահել երիտասարդներին (**Պարսումեան Գ.**, Պատմություն Այնթապի Չ.Յ.Դաշնակցութեան 1898-1922, էջ 61-62, 217-218): Սակայն ըստ Մարաֆեանի՝ նա Այնթապի հերոսամարտի երեք սյուներից մեկն էր. «Կռուի ժամանակներուն, լինել չլինելու թողէներուն նոյն իսկ իր պաղարիւնութիւնը չէր կորսնցնէր... Քաղաքագետ մըն էր առանց ռազմագետ ըլլալու: Երբ հասարակութիւնը իր յոյսը ֆրանսացիներուն վրայ էր դրած, ինք աւելի իր ժողովուրդին կը վստահէր: Թուրքի



հոգեբանութիւնը լաւ ճանչած ըլլալուն՝ իբր անոնց զգաստացուցիչը կը յանձնարարէր գաւազանը, բիրտ ոյժը, ատամի տեղ ատամի վարդապետութիւնը...: Քաղաքական, տնտեսական, կրօնական, վարչական և ամէն տեսակի խնդիրներու կենդրոնը ինքն էր» (**Մարաֆեան Գ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 40): Այնթապի անկումից հետո հաստատվում է Հալեպում (նշվ. աշխ., հ. Ա, էջ 471) և 1921 թ. հիմնում Այնթապցիների հայրենակցական միությունը (**Պապայեան Ե.**, նշվ. աշխ., էջ 78): 1926 թ. ստանում է ավագ քահանայի կոչում և ընտրվում Բերիո թեմի ազգային գավառական ընդհանուր և կրոնական ժողովների անդամ (**Մարաֆեան Գ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 471): Նույն թվականին պաշտոնավարում էր Հալեպի Սր. Աստվածածին եկեղեցում (**Գապայեան Գ.**, նշվ. հոդվ., էջ 306): 1928 թ. հոկտեմբերի 19-ին վերընտրվում է Կրոնական ժողովի անդամ («Տարե», 1929, էջ 378): 1931 թ. Հալեպի Սր. Աստվածածին եկեղեցու ավագ երեցն էր (**Մամուլեան Վ.**, նշվ. աշխ., էջ 107): 1934 թ. հուլիսի 3-ին վիրավորվում է Կարապետ Գասպարյանի գնդակից և վախճանվում երկու օր անց՝ հուլիսի 5-ին (**Մարաֆեան Գ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 471): **Պապայեան Ե.**, նշվ. աշխ., էջ 11): Մարմինը հողին է հանձնվում հուլիսի 7-ին Սր. Աստվածածին եկեղեցու դռան առջև (**Մարաֆեան Գ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 471-472): Տեր Ներսեսն ունի հրատարակված հոդված (տես «Տաճար», 21 հունվար, 1912), գիրք՝ «Տասապանքի օրագիր» (տպագրվել է 1991 թ. Բեյրութում):

50. Հուշակոթող. ոճավորված, նվիրված Մեծ եղեռնի զոհերի հիշատակին: Կանգնեցված է Սր. Քառասնից մանկանց եկեղեցու հարավարևելյան մասում: Արձանագրությունը՝ ելնդագիր, 23 տող, որից 1 տողը՝ արաբերեն, իսկ երկու տողը՝ անգլերեն.

ذكرى شهداء الارمن | Յիշատակ | Ապրիլեան Եղեռնի: | In memory of | Armenian genocide | 1915:

Փառք վերածնեալ հայութեան: Ես եկել եմ դարերից | ու գնում եմ յաղթական | Դեպի դարերը նորից, | դէպի պայծառ ապագան: | Եղիշէ Չարենց: | Կառուցաւ | յուշարձան որմնաքանդակս | յառաջնորդութեան | գեր(ա)շ(նորհ) տ(եր) Սուրենայ արք(եպիսկոպոս) Գաթարոյեան, | արդեամբ | Կարոյ և Տիրան Գլըրճեան եղբարց | յերախտագիտութիւն ծնողաց իրեանց՝ | Գառնիկ և

Գեղուհիի | յամի տեսան 24 ապրիլի 1989, Հալեպ: | Նախագիծ ճար(տարապե)տ Ս(արգիս) Պալմանուկեան, | իրագործում ճար(տարապե)տ Գ(եղրգ) Երամեան:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. հուշարձանի բացումը կատարվել է 1989 թ. մայիսի 28-ին (**Յովսէփեան Ա.**, Հայկական Հալեպէն ինչ որ կրցանք տեսնել, «Յառաջ», 1997, օգոստոս 8):


Արմատներով այնքապցի ճարտարապետ Սարգիս Պալմանուկյանը ծնվել է 1943 թ. Հալեպում: Հայրը՝ Կարապետը, ծնվել է 1903 թ., իսկ մայրը՝ Անայիս Թավուզճյանը՝ 1916 թ.: Սովորել է Հալեպի Կրթասիրաց վարժարանում, «Ալեփիո» քոլեջում, իսկ 1968-1973 թթ.՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական ֆակուլտետում: Ամուսնացել է Շաքե Տուզճյանի հետ և ունեցել երկու զավակ՝ Անի և Կարո: Բրականացրել է ճարտարապետական բազմաթիվ գործեր, որոնցից կարևորագույններն են Դեյր Էզ-Ջորում Մեծ եղեռնին նվիրված հուշահամալիրը (1991 թ.) և Հալեպի հայ կաթողիկեների Սբ. Խաչ եկեղեցին՝ 1993 թ. (**Պապայեան Ե.**, նշվ. աշխ., էջ 955): 1993 թ. նախագծել է Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված մեկ այլ հուշակոթող ևս (տես Սբ. Աստվածածին մոր եկեղեցու արձ. № 15): Մոր՝ Անայիսի մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 438:

Ճարտարապետ Գեղրգ Երամյանը Սբ. Աստվածածին հին եկեղեցու զանձատան վերափոխման աշխատանքների նախագծողը և իրագործողն է (**Ագեզեան Հ.**, նշվ. հոդվ., էջ 402), ինչպես նաև Մեծ եղեռնի զոհերին նվիրված մեկ այլ հուշակոթողի հեղինակը (տես Կուսին մոր օգնությունը եկեղեցու արձ. № 15):



51. Արձանագրություն. դարպասից եկեղեցիների բակ տանող միջանցքի հյուսիսային որմին՝ հյուսիսային սյան խոչակից վեր՝ կամարների արանքում ամրացված մարմարե սալիկին՝ փորագիր, 8 տող.

Քարապատեցաւ շրջափակ եկեղեցոյս | արդեսամբ | Արաքսի Ֆէթթէլի | ի յիշատակ | ամուսնոյն



իւրոյ՝ | հանգ(ու)ց(եալ) Ըորճ Ֆէթթէլի, | յամի տեսան 1992:

Հրատ. առաջին անգամ:

52. Հուշակոթող. ոճավորված, գտնվում է բակի արևելյան պարսպին կից, արձանագրությունը՝ ելնդագիր, 19 տող.

Տարօն | Տուրուբերանի հայրենակցական միություն:

Քաջութեամբ մեռցուք ի վերաց | աշխարհիս մեր ի վերաց ազգիս մեր, | եւ մի տեսցեն աչք մեր կոխան ոտից | պղծալից ... գարբարանս մեր: | Ուխտ Մամիկոնէից:

Փառք վասն հայրենեաց պայքարի հնոց, հաւատքի ամրոց, հայ գիրի օրրան Տարօն աշխարհին ու նահատակներուն: | Կառուցաւ | յուշարձան որմնաքանդակս | յառաջնորդութեան | գեր(ա)շ(նորհ) տ(էր) Սուրենայ արք(եպիսկոպոս) Գաթարոյեանի, | ի յարգանք եւ | յերախտագիտութիւն հարցն մերոց: | 6 հոկտեմբերի 1996:

Սկրտիչեան | եղբայրներ | եւ | Վիգէն Պերթիգեան:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. քարգործ-վարպետներն են հայաստանցի Սյրտչյան եղբայրները, իսկ նախագծի հեղինակն է հայկապահայ Վիգեն Պերթիգյանը (**Ագեզեան Հ.**, նշվ. հոդվ., էջ 402): Վերջինս 1990 թ. նախագծել է նաև Սբ. Գեղրգ եկեղեցու բակում գտնվող 1920 թ. նահատակված մարաշցիների հիշատակին կառուցված հուշակոթողը (նշվ. հոդվ., էջ 403): Տես նաև Սբ. Գեղրգ եկեղեցու արձ. № 15):

«Տարօն-Տուրուբերան» հայրենակցական միությունը 1937-1938 թթ. հիմնված «Տարօն» հայրենակցական միության շարունակությունն է: Վերակազմվել է 1948 թ. (www.periotem.com): Գործում է առ այսօր:



53. Թևավոր խաչ. ոճավորված, գտնվում է սյունասրահի հարավային որմին կից, արձանագրությունը՝ խաչի պատվանդանին ամրացված մարմարե երեք սալիկներին, փորագիր, 12 տող.

Սալիկ Ա.

Յիշատակ | տեր եւ տիկին | Սկրտիչ եւ Մարի | Չափանեաններու | իրենց | զաւակներուն կողմէ:

Սալիկ Բ.


Յառաջնորդութեան | գերապատիւ | տ(եր) Շահան ծ(այրագոյն) վ(ա)րդ(ապետ) | Մարգիսեանի, | յամի տեառն 2004, Հալէպ:

Սալիկ Գ.

Ճարտ(արապետ) Աբրահամ Ճապուրեան:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Սկրտիչ Չափանյանը հիշվում է 1955 թ. հայեպահանակ ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ ամուսնացած էր և ուներ երկու աղջիկ (**Մահակեան Ա.**, նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 17):



54. Արձանագրություն. զանգակատան հարավային պատին ամրացված մարմարե սալիկին՝ փորագիր, 10 տող, որից 4 տող՝ արաբերեն և 2 տող՝ ֆրանսերեն.

Ի յիշատակ Արտաավագ Տնկիկեանի՝ | նորոգեցաւ զանգակատունս | արդեամբ մօր՝ Բենեդոր Տնկիկեանի, | 2005:

Արաբերեն.

تخليدا لذكرى اردواست دنكيكيان - ابو عزيز | تم ترميم هذا البناء | باحسان من والدته بيتيلوب دنكيكيان | ٢٠٠٥.

Թարգմ. Նորոգվեց այս կառույցը ի հիշատակ Արտավագ Տնկիկյանի (Աբու Ազիզ)՝ մոր՝ Բենեդոր Տնկիկյանի կողմից 2005 թ.:



Ֆրանսերեն.

A la memoire de | Ardavast Dinguikian.

Թարգմ. Ի հիշատակ Արտավագ Տնկիկյանի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ավտորուսի վարորդ Արտավագ Տնկիկյանը, որը հայտնի էր որպես բարի, հոգատար, սիրելի և վստահելի անձնավորություն, Հայեպից հայկական միությունների բազմաթիվ խմբեր էր տանում տարբեր արշավների, ուխտագնացությունների: Սկսած 1988 թ.-ից՝ ինձ ևս բախտ է վիճակվել նրա հետ մասնակցելու այդ արշավներին:

55. Արձանագրություն. բակի հարավային մասում՝ հին առաջնորդարանի հյուսիսային որմին ամրացված մարմարե սալիկին՝ փորագիր, 10 տող.

Աստ հանգչին հոգեւոր հովիւներ | Ս(ուրբ) Քառասնից մանկանց մայր եկեղեցույ | տ(եր) Բարգէն ք(ա)հ(ա)ն(ա)յ Յակոբեան, | Սասուն, 1889-1944, | տ(եր) Սկրտիչ ա(ազ) ք(ա)հ(ա)ն(ա)յ Մուրատեան, | Սասուն, 1881-1970, | տ(եր) Գրիգոր ք(ա)հ(ա)ն(ա)յ Ղազարեան, | Հալէպ, 1930-1984: | Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի, | 2007:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Բարբեն Հակոբյանը՝ որպես Սր. Քառասնից մանկանց եկեղեցու քահանա, հիշվում է 1926 (**Գապպէնճեան Գ.**, նշվ. հոդվ., էջ 305), 1928 («Տաթև», 1929, էջ 380) և 1941 թթ. («Հասկ», 1941, № 3-4, էջ 56): 1924 թ. հունիսի 5-ին հինգ տարով ընտրվում է Բերիո թեմի ազգային գավառական ընդհանուր և կրոնական ժողովների անդամ (**Գապպէնճեան Գ.**, նշվ. հոդվ., էջ 304): Օգնել է Սյուրմեյանին՝ նախապատրաստելու «Պատմութիւն Հայկաի ազգային գերեզմանատանց եւ արձանագիր հայերեն տապանաքարերու» աշխատությունը (ՊՀԱԳԱՀՏ, էջ 52):

Սկրտիչ ավագ քահանա Մուրատյանը (աշխարհիկ անունը՝ Միքայել) ծնվել է 1881 թ. Սասունի Գոմք գյուղում: Մուրատի և Մարիի որդին էր և տեր Ղազարի բոռը: Նախնական ուսումը ստացել է մեծ հորից, ապա ուսանել Մշո Առաքելոց, 1893-1896 թթ.: Մշո Սր. Կարապետ վանքերում: Մակայն ուսումը կիսատ է մնում Համիդյան ջարդերի պատճառով: 1896-1901 թթ. սովորում է Հայեպի Ներսեսյան վարժարանում, ապա նույն դպրոցում 9 տարի ուսուցանում է կրոն և հայերեն: 1908 թ. ամուսնանում է նույն դպրոցի ուսուցչուհի Վարդուհու (Մովսես և Աննա Աճեմյանների դուստրը) հետ և ունենում 6 զավակ՝ Չապել, Վազգեն, Վազգեն Բ, Մաղեն, Գեղամ և Էդուարդ: 1909 թ. օգոստոսի 20-ին Հայեպի Սր. Քառասնից մանկանց եկեղեցու ձեռնադրվում է քահանա Մահակ Բ Խապայանի կողմից և վերանվանվում Սկրտիչ: Հոգևոր հովիվ է նշանակվում նույն եկեղեցում սասունցի ընտանիքների համար (**Մեղրակեան Յ.**, Վարք քահանայից, «Գանձասար», 9/3/1992, էջ 17-18): Կինը՝ Վարդուհին, Լուսիա Գրիգորյանի և Ֆերիդե Մահակյանի հետ 1914-1918 թթ. հանձն է առնում Հայեպից Սասուն ուղարկվելիք զենքերի փոխադրության և զինապահեստների պահպանության, ինչպես նաև իրենց հայրենակից բանտարկյալների հոգատարության գործը (**Զէյթլեան Մ.**, Հայ կնոջ դերը հայ յեղափոխական շարժման մեջ, Լուս Անճըրյու, 1992, էջ 91): Տեր Սկրտիչը 1924 թ. հունիսի 5-ին հինգ տարով ընտրվում է Բերիո թեմի ազգային գավառական ընդհանուր ժողովի անդամ և կրոնական ժողովի ստեղծապետ («Մուրիսիայ տարեցոյց», 1925, էջ 319: **Գապպէնճեան Գ.**, նշվ.



Տեր Սկրտիչ Մուրատյան

հոդվ., էջ 304: «Տարե», 1929, էջ 378-380): 1929 թ. նախագահում էր Բերիո թեմի դատաստանական խորհուրդը («Տարե», 1929, էջ 378-380): 1938 թ. նույն թեմի առաջնորդի փոխանորդն էր, Քաղաքական և Ուսումնական խորհուրդների նախագահը (ՀԱԳ, ֆ. 1421, ց. 3, գ. 58, ք. 1-4): 1941 թ. հիշվում է որպես Սր. Քառասնից մանկանց եկեղեցու ավագ երեց («Հասկ», 1941, № 3-4, էջ 56): Բազմամյա ծառայության համար պարգևատրվել է լանջախաչով, ծաղկյա փիղոնով և ավագության աստիճանով: Վախճանվել է 1970 թ. օգոստոսի 12-ին: Անփոփվել է Սր. Քառասնից մանկանց եկեղեցու շրջաքաղամ (Մեղրակեան Յ., Վարք քահանայից, «Գանձասար», 9/3/1992, էջ 17-18): Անձամբ շրջել է հայրենի գավառում և գրի առել տեղեկություններ, որոնք հետագայում հրատարակվել են «Ազդակ շաբաթօրեակ»-ում և «Ակօս» ամսագրում (Կարո Մասունի, Պատմություն Տարօնի աշխարհի, Պէյրուք, 1956, էջ 381): Հրատարակել է նաև հոդվածներ Կ. Պոլսի «Լոյս» և «Հասկ» պարբերականներում (Տեմիրճեան Վ., Գաւազանագիրք Բերիոյ հայոց թեմի առաջնորդներու, «Հասկ», 1978, № 7-12, էջ 383-384): Տեր Սկրտիչը թղթակցել է նաև «Տաճար» (1910), «Հայաստանի կոչնակ» (1922), «Գիտական շարժում» (1923), «Սուրիահայ տարեցոյց» (1924-1926), «Եփրատ» (1927-1949), «Մեան» (1946), «Արեւելք» (1946-63), «Սասուն. տարեգիրք» (1948), «Տարօն. տարեգիրք» (1949), «Տարօնի արծի» (1952) պարբերականներին: 1973 թ. հրատարակվել է նրա «Հայոց դարձն ի քրիստոնէութիւն» գրքույկը:

Գրիգոր Դագարյանը քահանա է ձեռնադրվում 1962 թ. նոյեմբերի 5-ին Անթիլիասում (Եզնիկ արեղայ, Քահանայական ձեռնադրութիւն Անթիլիասի մէջ, «Հասկ», 1961, № 11-12, էջ 467-468) Հայկաի Սր. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու համար (Տեմիրճեան Վ., Գաւազանագիրք Բերիոյ հայոց թեմի առաջնորդներու, «Հասկ», 1978, № 1-3, էջ 37): 1972 թ. սեպտեմբերի 10-ին մասնակցում է Սր. Աստվածածին նոր եկեղեցու հիմնարկեքին (Հին-տողեան Ջ., նշվ. աշխ., էջ 55): 1983 թ. պաշտոնավարում էր Սր. Քառասնից մանկանց եկեղեցում («Օշական», 1983, № 1-4, էջ 5):



ՀՈԳԵՏՈՒՆ



Արևմտյան դարպասը



Արևմտյան դարպասին հաջորդող միջանցք

Տեղադրություն. գտնվում է Հալեպի բերդից հյուսիս-արևմուտք՝ Ազիզիեի շրջանում (հասցեն՝ Ալթիլե փողոց, թիվ 19)՝ Սբ. Քառասնից մանկանց եկեղեցուց մոտ 130 մ հյուսիս-արևմուտք: Տեղադրությունն է՝ N 36° 12' 25.15", E 37° 09' 14.62":

Պատմություն. պատկանում է Երուսաղեմի Սբ. Հակոբյանց վանքին: Եղել է իջևանատուն այն բոլոր հայ ուխտավորների համար, որոնք Երուսաղեմ գնալիս անցնում էին Հալեպով¹: Երուսաղեմում պահվող մի ձեռագիր հիշատակարանից հայտնի է, որ հալեպցի Խոջա Պետիկ և Սանոս Չելեպի եղբայրները Երուսաղեմի պատրիարք Գրիգոր Պարոնտեր Գանձակեցու օրոք (1613-1645) Սբ. Հակոբյանց վանքին նվիրել են «...մեկ աղէկ խան...»²: 1721 թ. նորոգության արձանագրությունը փաստում է, որ Հոգետունը երուսաղեմապատկան է դարձել,

ապա նորոգվել վերոհիշյալ պատրիարքի օրոք. «...զհոգետունս վիսվ. արեալ եւ շինեալ ի Գրիգոր Պարոնտերէ...»³:

Հոգետունը նորոգվում և նոր կառույցներով է հավելվում 1624⁴, 1625⁵, 1628⁶, 1629⁷, 1633⁸ թթ.:

1652 թ. բակի կենտրոնում կառուցվում է աղբյուր⁹:

1684 թ. նորոգվում են խցերից ևս երկուսը¹⁰, իսկ 1695 թ. մայիս-հունիսին՝ պատուհանները, հատակը և պատերը (սվաղվում են). «...մայիս 10՝ ուրբաթ՝ վարպետքն ամենայն ի բանի. փենճերի գմէկ եր-

3 Տե՛ս Հոգետան արձ. № 23:

4 Տե՛ս Հոգետան արձ. № 2-6:

5 Տե՛ս Հոգետան արձ. № 7-12:

6 Տե՛ս Հոգետան արձ. № 13-14:

7 Տե՛ս Հոգետան արձ. № 15:

8 Տե՛ս Հոգետան արձ. № 16:

9 Տե՛ս Հոգետան արձ. № 17:

10 Տե՛ս Հոգետան արձ. № 20-21:

1 ՊՀՀ, էջ 94:

2 Նշվ. աշխ., էջ 278:

րակուռ, կը նայի Սալիպէ... փողոցին վրայ...: Բակը սալարկուած է, մէջտեղը կայ անոյշ ջուրի հոր մը...»²²:

1970-ական թվականներին ևս հաշվառվել է նույնքան (23) սենյակ: Այդ ժամանակ փուռը գործում էր, իսկ ջրհորն արդեն գոյություն չուներ²³:

2007 թ. Հոգետունն անճանաչելի էր: Խցերը վերածվել էին խանութների, վարձակալողների անօրինական նորոգումների պատճառով արձանագրությունների մեծ մասը վնասվել, ծածկվել կամ ոչնչացվել էր: 2007 թ. մեզ հաջողվեց տեսնել միայն 9 արձանագրություն:

Վիճակագրեր. ներկայացնում ենք 26 միավոր արձանագրություն, որոնցից 21-ն առաջին անգամ ընդօրինակել և հրատարակել է Ա. Մյուրմեյանը, 2-ական՝ Ա. Տեր-Հովհաննեսյանը և Մ. Աղավնուհին, 1-ը՝ Մ. Մինասյանը:

1. Արձանագրություն.

Յիշատակ է խուցս մշեցի տէր Չաւեն մահտեսի Խաչատուրեանի որդոց, թվ. հյց. Ռ- (1551), Ռ-ըմօ, Տընէա և Մուլթան: Որք հասանիք, ամենայն ամ. ո-դորմի ասացէք, և տէր ձեզ ողորմի:

Հրատ. **Միւրմեան Ա.**, Պատմութիւն Հայկաի քահանայից, «Բազմավէպ», 1933, էջ 539: ՊՀՀ, էջ 69: Ներկայացնում ենք երկու հրատարակությունների համադրման շնորհիվ մեր կողմից ճշտված վիճակագիրը:

Ծանոթ. արձանագրությունը չենք տեսել: Արձանագրության թվականը Մյուրմեյանը հավանաբար սխալ է ընթերցել:

2. Արձանագրություն. «...դեղնագոյն կարծր քարի վրայ փորուած, դրուած է Հոգետան հարստ-արևմտեան կողմը, շենքին... ամենէն կանոնատուր և ներկայանալի...» բաժնում²⁴:

Չառաջնորդութթ. Սք. Աթոռյն. Եմի. Գրգր. արքեպկսի. կամսուն այ. շինեցաւ Հգտոնս. Սք. Եմի., յշկ. Սքյն. Յկբյ. եւ յշկ. վանցի խճյ. Ղարիպջանին, որդոցն՝ Թումայջանին, Դիլանջին, եղբօրն՝ Յովասէփին, որդոցն՝ Ամիրխանին, Մարուխանին եւ բոռնէրից Դաւիթին, Մաքնարին, Մարիամին, Նազրին, Ղազրին, թվն. Ռ-Հ Գ (1624):

Հրատ. **Միւրմեան Ա.**, Հայկաի Հոգետունը, էջ 186-187: ՊՀՀ, էջ 95: **Քշիշեան Ա.**, նշվ. աշխ., էջ 137: Ներկայացնում ենք երեք հրատարակությունների համադրման շնորհիվ մեր կողմից ճշտված վիճակագիրը:

Ծանոթ. արձանագրությունը չենք տեսել:

Վանեցի խոջա Ղարիպջանն ընկերների հետ 1611 թ. Սք. Հակոբյանց վանքի պարտերը մարելու նպատակով մեկնում է Երուսաղեմ: Վերադառնալով Հայեպ՝ նրանք պատվիրում են Ավետարան նորոգել (ԺԷԱ, էջ 409: **Մաալանեանց Տ.**, Պատմութիւն Երուսաղէմի, հ. 1, Երուսաղէմ, 1931, էջ 569):

Հովասափի որդու՝ Մարուխանի պատվերով գրիչ Կարապետ Վանեցին 1657 թ. Վանում գրում է Հայսմավորք. «...Խօջայ Մարուխանին, որ ստացաւ զաս... հօրն իւրոյ՝ Խօջայ Յովասափին, մօրն՝ Խումարին, կողակցոյն՝ Խանումխաթունին, որդոյն՝ Գրիգոր չալապուն...» (ԺԷԳ, էջ 778):

22 ՊՀՀ, էջ 100:

23 **Պարիկեան Հ.**, Հայկաի Հոգետունը եւ յիշատակարան-արձանագրութիւնները, «Գեղարդ. Սուրիահայ տարեգիրք», Հայէպ, 1975, էջ 415:

24 **Միւրմեան Ա.**, Հայկաի Հոգետունը, էջ 187:

3. Արձանագրություն. առաջին հարկի (գետնահարկի) հարավային ճակատի դռան վրա²⁵ փորագիր, 4 տող.

Յիշատակ է խուցս ջուղեցի մ(ա)հտ(ե)սի խ(օ)-ճ(ա)յ Փանոսին, իւր կողակցին՝ Շ(ա)հպ(ա)կէ(ին), որդոյն՝ խ(օ)ջ(ա)յ Ա(ստուա)ծ(ա)տ(ու)ր(ի)ն, միւս որդոյն՝ հանգուցել(ո)յն ի Բ(րիստո)ս Մ(ա)րտ(ի)րոս(ի)ն, Սիոն(ի)ն, Յ(ա)կ(ո)բ(ի)ն եւ քվերորդին՝ մ(ա)հտ(ե)սի Հէրլապ(է)տ(ի)ն, որ ետուն գտունս Մ(ուր)ք Յ(երուսաղ)էմ(ա)յ յ(ի)շ(ա)տ(ա)կ, թվ(ին) Ռ-Հ Գ (1624):

Հրատ. ՊՀՀ, էջ 98: **Պարիկեան Հ.**, նշվ. հոդվ., էջ 420: Ներկայացնում ենք երկու հրատարակությունների համադրման շնորհիվ մեր կողմից ճշտված վիճակագիրը:

Ծանոթ. արձանագրությունը չենք տեսել: Ընթերցման համար օգտվել ենք Հայկ Պարիկյանի լուսանկարից:

Մենյակը 1937 թ. գործածվում էր որպես տպարան (ՊՀՀ, էջ 98):

4. Արձանագրություն. գտնվում է երկրորդ հարկի արևելյան հատվածում, փորագիր, 2 տող.

Յիշատակ է խուցս Հաշոտի(ն), Առաքել(ին) | եւ ընտանեացն, թվին Ռ-Հ Գ 1073 (1624):

Հրատ. **Միւրմեան Ա.**, Հայկաի Հոգետունը, էջ 189: **Պարիկեան Հ.**, նշվ. հոդվ., էջ 421:

Ծանոթ. «Հաշոտի(ն)» անունը հնարավոր է ընթերցել նաև որպես տեղանուն՝ «հաշոտ(ց)ի»:

Տարբերություն. **Պարիկյանի** մոտ «Հաշոտի»-ի փոխարեն՝ «Հաշոյի»:



5. Արձանագրություն. գտնվում է երկրորդ հարկի արևմտյան հատվածում, փորագիր, 5 տող.



Այս խուցս յիշ(ա)տ(ա)կ է բաղէշցի | խ(օ)-ճ(ա)յ Սիմէոնին, իւր որդոյն՝ Շախմուրատին, ճոյն Յակոբի լաճ/ուն, Աւետիսին, Մխիթարին, Ղազարին, թվին Ռ-Հ Գ (1624):

Հրատ. **Միւրմեան Ա.**, Հայկաի Հոգետունը, էջ 189: ՊՀՀ, էջ 99: **Պարիկեան Հ.**, նշվ. հոդվ., էջ 418-419:

Ծանոթ. ճոյն (ճոն) – մուշտակագործ:

Լաճ – տղա, մանչ:

Տարբերություն. **Մյուրմեյանի** մոտ «Ռ-Հ Գ»-ի փոխարեն՝ «Ռ-Հ Զ»:



25 ՊՀՀ, էջ 98:

6. Արձանագրություն. գտնվում է երկրորդ հարկի արևելյան հատվածում, փորագիր, 3 տող.

Յիշատակ է խուցս ջուղացի Ղալաթ | Մատթեոսին եւ ընտանե(ա)ցն, | թվին Ռ-ՀԳ 1073 (1624):

Հրատ. Միքսեան Ա., Հայկաի Հոգեստունը, էջ 189: ՊՀՀ, էջ 98: Պարիկեան Հ., նշվ. հոդվ., էջ 421:



7. Արձանագրություն. գտնվում է երկրորդ հարկում²⁶, փորագիր, 3 տող.

Արդ, յիշեցէք ի Ք(րիստո)ս զբաղէջցի խ(օ)ջ(ա)յ | Ջիրաքն և որդիքն՝ Միրաքն, Մաֆարն, Շիրազխան, | որք շինեցին գտունս Սբ. Ե(րուսաղէ)մ(ա)յ յ(ի)- շ(ա)տ(ա)կ, թվ(ին) Ռ-ՀԳ (1625):

Հրատ. Աղաւնունի Մ., նշվ. աշխ., էջ 146: Միքսեան Ա., Հայկաի Հոգեստունը, էջ 188: ՊՀՀ, էջ 98: Պարիկեան Հ., նշվ. հոդվ., էջ 419: Ներկայացնում ենք չորս հրատարակությունների համադրման շնորհիվ մեր կողմից ճշտված վիմագիրը:

Ծանոթ. արձանագրությունը չենք տեսել: Ընթերցման համար օգտվել ենք Հայկ Պարիկեանի լուսանկարից:


Տարբերբերցում. Աղավնունիի մոտ «Ռ-ՀԳ»-ի փոխարեն՝ «Ռ-Ձ»:



8. Արձանագրություն. գտնվում է երկրորդ հարկի արևելյան հատվածում, փորագիր, 3 տող.

Յիշատակ է խուցս ջուղացի Սառուխանին եւ ծնողացը եւ ընտանեացը | եւ որդիոցը, թվին Ռ-ՀԳ (1625):

Հրատ. Միքսեան Ա., Հայկաի Հոգեստունը, էջ 189: ՊՀՀ, էջ 99: Պարիկեան Հ., նշվ. հոդվ., էջ 418:



26 Աղաւնունի Մ., նշվ. աշխ., էջ 146:

Ծանոթ. հավանական է, որ վիմագրում հիշված Սարուխանը նույն ինքնը՝ 1633 թ. Ավետարան ստացող խոջա Սարուխանն է, որտեղից էլ հայտնի են դառնում ծնողների, ընտանիքի և որդիների անունները. «...և գրեցի զՍբ. Աւետարանս: Վասն որոյ խնդիր եղև սմա աստուածասէր և բարեմիտ ջուղայեցի խոճայ Սարուխանն, որ ստացաւ զայ... և եղ յիշատակ ի Հայկաթ քաղաք ի դուռն Ս. Աստուածածին: Յիշատակ է... ջուղայեցի խոճա Սարուխանին, և իւր հարն՝ Վարդանին, և ծնօղացն՝ Հովսիսիմին, և կողակցոյն՝ Մարիամխաթունին..., և որդոցն՝ Միսէնին, Վարդանին, Սարգսին, Մեսրոպին, դստերն՝ Հովսիսիմին..., մեծ հարն՝ Ծանաղին, մեծ մարն՝ Խիսիին, հարեղբարցն՝ Յովանիսին, Մեսրոպին..., թվին Ռ-ՁԲ (1633)» (ՅՀՀԶՄ, էջ 86):

Տարբերբերցում. Մյուրսեանի մոտ «ջուղացի Սառուխանին»-ի փոխարեն՝ «Սառուխանին»:

9. Արձանագրություն. գտնվում է երկրորդ հարկի արևմտյան հատվածում, փորագիր, 10 տող.

Յիշատակ է խուցս տ(է)ր Վ(ա)րդանի | որդի մահդասի բաղէջցի խ(օ)ճայ | Եաղուպին, թվին Ռ-ՀԳ (1625), որք | հանդիպէք սմա, ա(ստուա)ծ ողորմի ասացէք, եւ տ(է)ր(ը) ձեզ ողորմի | եւ մօլրն՝ Խանխուլթանին:

Հրատ. Աղաւնունի Մ., նշվ. աշխ., էջ 504-505: Միքսեան Ա., Հայկաի Հոգեստունը, էջ 189: ՊՀՀ, էջ 98-99: Պարիկեան Հ., նշվ. հոդվ., էջ 419:

Տարբերբերցում. Աղավնունու մոտ «Ռ-ՀԳ»-ի փոխարեն՝ «Ռ-ԾԳ», «Խանխուլթանին»-ի փոխարեն՝ «Մուլթանին»:



10. Արձանագրություն.

Յիշատակ է խուցս բաղէջցի Շահմուրատ Ամիրխանին, որդոյն՝ միդսի. Յովասափին, եւ իւր կողակցին եւ եղբօրն՝ Մաֆարին, եւ որդոյն՝ Գաբրիէլին: Յշցէք ի Քս., թվին Ռ-ՀԳ (1625):

Հրատ. Միքսեան Ա., Հայկաի Հոգեստունը, էջ 189: ՊՀՀ, էջ 99: Ծանոթ. արձանագրությունը չենք տեսել:

11. Արձանագրություն.

Յիշատակ է խուցս բաղէջցի Ամիրխանին և որդոցն՝ Սարուխանին եւ Եղիային, և իւր կողակցին, որք տեսանէք., ած. ողորմի ասացէք, ամէն, թվին Ռ-ՀԳ (1625):

Հրատ. Միքսեան Ա., Հայկաի Հոգեստունը, էջ 189: ՊՀՀ, էջ 99: Ծանոթ. արձանագրությունը չենք տեսել:


12. Արձանագրություն. գտնվում է երկրորդ հարկի արևելյան հատվածում, փորագիր, 3 տող.

Յիշատակ է խուցս Ադաբադու գիւղացի... | եւ ընտանեացն, 1074 | Ռ-ՀԴ (1625):

Հրատ. Միսրմեան Ա., Հալէպի Հոգեստունը, էջ 189: ՊՀՀ, էջ 99: Քեշիշեան Ա., նշվ. աշխ., էջ 137: Պարիկեան Հ., նշվ. հոդվ., էջ 418:

Ծանոթ. Ադաբադ գյուղն Արադադն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Բաղեշի նահանգի Խլաթ գավառում՝ Դատվանից 15 կմ հյուսիս-արևելք: Ներկայումս կոչվում է նույն անունով՝ Ադաբադ (Adabağ):

Տարբերբերգում. Մյուրմեյանի մոտ «Ադաբադու»-ի փոխարեն՝ «ալաբադցի(»): Քեշիշեանի մոտ «Ադաբադու»-ի փոխարեն՝ «Ալաբադցի»:



13. Արձանագրություն.

Յիշատակ է խուցս բաղեշեցի Նուրիջանին եւ հարն՝ Սինասին, թվին Ռ-ՀԷ (1628):

Հրատ. Միսրմեան Ա., Հալէպի Հոգեստունը, էջ 189: ՊՀՀ, էջ 99:

Ծանոթ. արձանագրությունը չենք տեսել:


1930-ական թթ. «Այս մեծադիր քարը իր նախնական տեղին հանուած և դրուած է հակառակ կողմէն՝ արեւմտեան վերնայարկի երդիքին եզերքը» (Միսրմեան Ա., Հալէպի Հոգեստունը, էջ 189: Տե՛ս նաև ՊՀՀ, էջ 99):

14. Արձանագրություն. գտնվում է երկրորդ հարկի արևմտյան հատվածում, փորագիր, 3 տող.

Յիշ(ա)տ(ա)կ է խուցս ջուղայեցի Մալինի որդի | Ծատուր(ին), Մարուկ(ին), Ծատուրի որդի Բա(րա)- | լիան(ին), Բան-Թումաս(ին), թվ(ին) Ռ-ՀԷ (1628):

Հրատ. Միսրմեան Ա., Հալէպի Հոգեստունը, էջ 189: ՊՀՀ, էջ 99: Քեշիշեան Ա., նշվ. աշխ., էջ 137: Պարիկեան Հ., նշվ. հոդվ., էջ 419:

Տարբերբերգում. Քեշիշեանի մոտ «Բարալիան(ին) Բան-Թումաս(ին)»-ի փոխարեն՝ «բազմարան Թումաս»:



15. Արձանագրություն. փորագիր, 4 տող.

Յիշատակ է խուցս բաղեշցի Յովսէփին եւ որդյն՝ Բարսեղին, եւ | կողակցին՝ Սէրփարէ, եւ ղսլտերն՝ Հոռոմսիմին, թվ(ին) Ռ-ՀԸ (1629):

Հրատ. Միսրմեան Ա., Հալէպի Հոգեստունը, էջ 189: ՊՀՀ, էջ 99: Պարիկեան Հ., նշվ. հոդվ., էջ 420:

Ծանոթ. արձանագրությունը չենք տեսել: Ընթերցման համար օգտվել ենք Հայկ Պարիկեանի լուսանկարից:

Տարբերբերգում. Պարիկեանի մոտ «բաղեշցի»-ի փոխարեն՝ «Չուղայեցի», «Սէրփարէ»-ի փոխարեն՝ «Սէրփարէ»:




16. Արձանագրություն. գտնվում է երկրորդ հարկի արևելյան հատվածում, փորագիր, 3 տող.

[Յիշատ]ակ է խուցս ասպաղակացի Մու[րա-տին] եւ ծնողացը եւ կողակցուն եւ | [որդ]ոցը, թվին Ռ-ՉԲ (1633):

Հրատ. Միսրմեան Ա., Հալէպի Հոգեստունը, էջ 189: ՊՀՀ, էջ 99: Քեշիշեան Ա., նշվ. աշխ., էջ 137: Պարիկեան Հ., նշվ. հոդվ., էջ 418:

Ծանոթ. Ասպաղակը, ամենայն հավանականությամբ, Նախիջևանի Աստապատ գյուղն է:



17. Աղբյուրի գուռ. չափերն են՝ 83x59x52 սմ, արձանագրությունը՝ ճակատին, մաքուր և ընթեռնելի²⁷.

Կազմեցաւ ջրի աւազանս յշտկ. թախարթցի Մինաս վրդպտին., թվին Ռ-ԾԱ (1652): Ով լուսացէ զձեռն, ասասցէ ած. ողորմի:

Հրատ. Միսրմեան Ա., Հալէպի Հոգեստունը, էջ 190: ՊՀՀ, էջ 101:

Ծանոթ. 1930-ականներին նկարագրվել է. «Բակը սալարկուած է և մէջտեղը կայ անոյշ ջրորի հոր մը, երբեմն միակտոր երկու վիմափոր աւազաններով՝ որոնք սակայն վերցուած են

27 Միսրմեան Ա., Հալէպի Հոգեստունը, էջ 190:

շատ տարիներ առաջ և իրարու վրայ պառկած դիրքով կը մնան փոքր դրան ներսի կողմը: Ջրհորը բաց է և կը գործածուի: Ջուրի սալքը և կանոնատր գուռն շինուած են 1652-ին: Մէկը խիստ մեծ է և առանց արձանագրութեան» (ՊՀՀ, էջ 100-101): 2007 թ. դրութեամբ ջրհորը, երկու ավազանները և արձանագիր գուռը գոյութիւն չունենին:

Մինաս վարդապետը 1646-1676 թթ. Բնկյուրիի առաջնորդ էր: 1648 թ. այցելում է Երուսաղեմ և վերադարձին հյուրընկալվում Հայեայի Հոգեւորանոց: 1651 թ. Բնկյուրիի Կարմիր վանքում ձեռնադրվում է Եպիսկոպոս (նշվ. աշխ., էջ 418): «Թախար»-ը Եվրոկիան է:

18. Արձանագրութիւն.

ԹՎ. Ռ-ՃԴ (1655) ճարտարապետ(°) Կոռնիմոկսի գՀոգեւորանոց(°) ածի ... ըփսի դու ... չես խսի:



Հրատ. Միքսեան Ա., Հայեայի Հոգեւորանոց, էջ 189: ՊՀՀ, էջ 99: Ծանոթ. արձանագրութիւնը չենք տեսել:

Տարբերակ. ՊՀՀ-ում «Կոռնիմոկսի»-ի փոխարեն՝ «Կոսիմոկսի»:

19. Արձանագրութիւն. գտնվում է երկրորդ հարկի արևմտյան հատվածում, փորագիր, 4 տող.

Աղեքսանդր | վարդ(ա)յ(ե)տ: Տ(ե)ր Ար|էստալէտ ջո(ւ)ղեցի, Ռ-ՃԻԸ (1679):

Հրատ. Միքսեան Ա., Հայեայի Հոգեւորանոց, էջ 189: ՊՀՀ, էջ 99: Պարկեան Հ., նշվ. հոդվ., էջ 421:



20. Արձանագրութիւն.

Յիշատակ է խուցս մահողեսի Ծերունին եւ ամ. արեան մրձուրցն. ի դուռն Սբ. Եմի., թվ. Ռ-ՃԼԳ (1684):

Հրատ. Միքսեան Ա., Հայեայի Հոգեւորանոց, էջ 189: ՊՀՀ, էջ 99-100:

Ծանոթ. արձանագրութիւնը չենք տեսել:

21. Արձանագրութիւն. փորագիր, 3 տող.

Շինեցաւ խուցս, հա(յ)ոց թվին Ռ-ՃԼԳ (1684)-ին | ձեռամբ Հալպցի տէր Գրիգորին ա(ստուա)ծարան վ(ա)րդ(ա)յ(ե)տին | յիշատակ Ս(ուր)բ Ակորին: Տեստորդ ասէք ա(ստուա)ծ ողորմի:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 32: Միքսեան Ա., Հայեայի Հոգեւորանոց, էջ 189: ՊՀՀ, էջ 100: Քէշիշեան Ա., նշվ. աշխ., էջ 137: Պարկեան Հ., նշվ. հոդվ., էջ 421:

Ծանոթ. արձանագրութիւնը չենք տեսել: Ընթերցման համար օգտվել ենք Հայկ Պարկեանի լուսանկարից:

Հայեայի Գրիգոր վարդապետի մասին տես՝ Ազիզի գերեզմանատան արձ. № 94:




22. Արձանագրութիւն. գտնվում է բակի հյուսիսարևմտյան անկյունից երկրորդ հարկ տանող աստիճանների վերին եզրի հյուսիսային պատին, փորագիր, 5 տող.

Ես ... վր(ոդ)ապետ [Գրիգո]ր | Շղ[թ]այ(ակ)ի[ր] | Ս(ուր)բ Ե(րու)սաղ(ե)մ(ա)յ ի Հ[ո]լգե[տու]նըս ե[կ]ի, | թվ(ին) Ռ-ՃՀ (1721):

Հրատ. Միքսեան Ա., Հայեայի Հոգեւորանոց, էջ 189: ՊՀՀ, էջ 100:

Ծանոթ. Գրիգոր Շիրվանցի Շոթայակիր պատրիարքը մահտեսի Ավետիսի և ճոհարի որդին էր: Աշակերտել է Վարդան վրդ. Բաղիշեցու մոտ: 1707 թ. Սաղյանի Սբ. Ստեփանոս, իսկ 1710-1715 թթ. Մշո Սբ. Կարապետ վանքի վանահայրն էր: Որպես Երուսաղեմի պատրիարք՝ պաշտոնավարել է 1715-1749 թթ.: Նրա օրոք նորոգվել են Հայեայի Հոգեւորանոց, Երուսաղեմի Սբ. Հարություն եկեղեցին և Սբ. Գերեզմանի գմբեթը, Դամասկոսի եկեղեցին և այլն: Վախճանվել է 1749 թ. և ամփոփվել Երուսաղեմի Սբ. Փրկիչ վանքում (Աղաւունցի Մ., նշվ. աշխ., էջ 83-84):



23. Արձանագրություն. գտնվում է գավթի որմին²⁸ հյուսիսային փոքր դռան մոտ²⁹.

Ի թն. Ռ-ՃՀ (1721) առաջնորդությամբ. այ. ես՝ Գրիգոր մեղայրտ. վրդպատս., պատրիարք սր. Եմյ. եկի քղքն. Հլպ. տսի. զՀոգետունս վխվ. արեալ եւ շինեալ ի Գրիգոր Պարոնտէրէ, եւ էր հնցել. ածով. նորոգեցի խցերօք եւ օդներօք., վերստին պայծառացեալ զարդարեցի յշտկ. ինձ եւ ծնօղացն իմոց եւ Յովհաննէս վրդպտիցն.՝ պատրիարքն Բիւզանդիոյ, եւ բազմաշխատ զանձապացն. Եմի. եւ ազգիս հայոց եւ ամ. ողորմուիցն. տուղաց, եւ որք ընթեռնուք, ասացէք ամ. ողորմի, ամէն:

Հրատ. **Տէր-Յովհաննէսեանց Ա.**, նշվ. հողվ., էջ 230-231: **Միքմէեան Ա.**, Հալեպի Հոգետունը, էջ 188: ՊՀՀ, էջ 97-98: Ներկայացնում ենք երեք հրատարակությունների համադրման շնորհիվ մեր կողմից ճշտված վիմագիրը:

Ծանոթ. արձանագրությունը չենք տեսել: Տէր-Հովհաննէսյանցը «Ռ-ՃՀ»-ի փոխարեն տալիս է «Ռ-ՃՀԵ»: Հաշվի առնելով, որ Երուսաղեմի պատրիարք Գրիգոր Շիրվանցի Շղթայակիրը և Պոլսո պատրիարք Հովհաննէս Կողտը (1715-1741) երկու թվականներին էլ պաշտոնավարել են, չենք կարող ստույգ ասել, թե որ տարեթիվն է ճիշտ: Հոգետան № 22 արձանագրության թվականը հիմք ընդունելով՝ ճիշտ ենք համարում Ռ-ՃՀ թիվը:

24. Արձանագրություն. գտնվում է հարավային մասում՝ բակ նայող պատշգամբի որմին զառցված դեղին մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Էր նորոգեալ լիվանս կրկին, հազար հարիւր ութսուն հնգին. (1736), | յաւուրս Գրիգոր Պ(ա)տիւրարքին, ձեռամբ նորին զանձապետին | իսկ մասնատր նորոգս վերջին ըռաֆ ըռաֆիս սոյն լիվանին, | հազար երկ Դ և Ը (1000+200+8+551=1759)-ին, յաւուրս Թորոս պատրիարքին | և առ(ա)ջնորդ վարդ(ա)պետին Սեբաստեան Գարրիէլ դիտին, | ջանիւ մաշկեր(տ)ցի զ(ա)նձ(ա)պետին Տէր-Աբրահամեան Պօղոս դպրին | և զծողիս երկաթագրին՝ Յակոբ երիցու, որդի Սանոսին: | Որք հանդիպիք սոյն արձանին, ասէք հայր մեր և ողորմի:

Հրատ. **Տէր-Յովհաննէսեանց Ա.**, նշվ. հողվ., էջ 230:



28 Տէր-Յովհաննէսեանց Ա., նշվ. հողվ., էջ 230:

29 Միքմէեան Ա., Հալեպի Հոգետունը, էջ 188:



Ծանոթ. արձանագիր քարը, որը 1868 թ. ամբողջական էր և նախնական տեղում, հետագայում տեղահանվել և կոտրվել է, ապա տեղադրվել այժմյան վայրում (նույն տեղում): Վիմագրի չպահպանված հատվածները հրատարակում ենք շեղակի տառերով:

Վիմագրում հիշված Երուսաղեմի Թորոս պատրիարքը Թեոդորոս Խորենացին (Տարոնեցի) է (1752-1761):

Սանոսի որդի տեր Հակոբի մասին տես՝ Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 6:

Տարբերություն. **Տէր-Հովհաննէսյանցի** մոտ «հազար երկ Դ և Ը ին (1759)»-ի փոխարեն՝ «հազար երկու հարիւր և երկուցին (1753)»:

25. Արձանագրություն.

Յշտկ. է խոցս. մահտեսի Սարգսին և ծնօղացն՝ մահտեսի Աւետիքին, Նօնօֆարին, և որոցն՝ Յովհաննէսին, Բարաղամին, և կողակցուն և համայն զարմիցն նորին, որ է երկրաւ զմիւռնիացի, ի թվին ՌՄԺԲ (1763):

Հրատ. **Միքմէեան Ա.**, Հալեպի Հոգետունը, էջ 189: ՊՀՀ, էջ 100: Ծանոթ. արձանագրությունը չենք տեսել:

Չմյուռնիա քաղաքը գտնվում է Անատոլիայում: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Իզմիր (Izmir):

26. Արձանագրություն. դարպասին՝ 3 տող.

Աբաբերեն, ելնդագիր.

خان القدس.

Թարգմ. Երուսաղեմի իջևանատուն:

Հայերեն և անգլերեն, ներկագիր.

Հոգետուն: Hokedoun.

Հայերեն, ելնդագիր.

1900:


Հրատ. **Մինասեան Մ.**, Հայն ու հայկականը՝ հալեպցիներու բերնին մէջ, «Տաքեւ. հայագիտական տարեգիրք», Հալեպ, 2008, էջ 384:



28 Տէր-Յովհաննէսեանց Ա., նշվ. հողվ., էջ 230:

29 Միքմէեան Ա., Հալեպի Հոգետունը, էջ 188:

ԱՁԻՁԻԵԻ ԱԶԳ. ԳԵՐԵՉՄԱՆԱՏՈՒՆ



Գերեզմանոցի տեղը տիեզերքից և սահմաններն ըստ Սյուրմեյանի նկարագրության

Տեղադրություն. գտնվում էր բուն քաղաքից հյուսիս-արևմուտք՝ Ազիզիե և Հազազե բաղամասերի վերջնամասում¹ Ալթիլեյը Համիդիեին կապող պողոտայի (rue Millerand)-ի ձախ եզրին²: Բաղկացած էր երեք մասից: Ամենամեծն առաջինն էր, որը գտնվում էր Ալթիլեյի հյուսիսում: Սահմաններն էին արևելքից՝ Ալթիլեյից Սլեյմանիե երկարող պողոտան և գերեզմանատան դուռը, արևմուտքից՝ Արտըլ Մեշնազայի հողամասը, հյուսիսից՝ Ալթիլեյից Ազիզիե տանող նորակառույց ճանապարհը, իսկ հարավից՝ Ալթիլեյ տանող ճանապարհից մի հատված և տներ: Երկրորդ մասը եռանկյունաձև էր և պարսպապատ,

սահմաններն էին՝ հյուսիսից և հարավից՝ Ազիզիե տանող նորակառույց ճանապարհները, արևելքից՝ պողոտան, հյուսիսարևմտյան կողմում կային տներ, հարավում և լատինաց բաժնում՝ դռներ: Երրորդ մասի սահմաններն էին՝ արևելքից՝ Ալթիլեյից Սլեյմանիե երկարող պողոտան (rue Millerand), արևմուտքից՝ տներ և հրեաների հին գերեզմանատունը, հարավից՝ նորակառույց ճանապարհը, հյուսիսից՝ պողոտան, որը տանում էր դեպի հրեաների փակված գերեզմանատուն: Այս բաժինը հարավից ուներ մեկ դուռ, որի վրա արաբերենով արձանագրված էր «Բողոքականների գերեզմանատուն», իսկ արևելքից՝ երկու մեծ դարպաս³:

1 ՊՀՀ, էջ 65:
 2 ՊՀԱԳԱՀՏ, էջ 19:

3 Նշվ. աշխ., էջ 20-21:



Հալեպի հատակագիծը 1912 թ.

Պատմություն. սկզբնավորվել է 1580-ական թվականներից հետո, երբ հալեպահայերի թիվը զգալիորեն աճել էր, և արգելվում էր աշխարհիկ մարդկանց ամփոփել Սբ. Քառասնից մանկանց եկեղեցում և բակում⁴:

Գերեզմանատան երեք անջատ մասերը պարսպապատ էին և ունեին երկաթյա լայնանիստ բարձր դարպասներ: Յուրաքանչյուր բաժնում ամփոփված էին քրիստոնյա տարբեր համայնքների և ազգությունների հանգուցյալներ առանց որոշակի բաժանման⁵: Հնագույն տապանաքարերը գտնվում էին հարավային եզրին⁶:

Ըստ 1912 թ. քարտեզի՝ գերեզմանատունը գրավում էր մոտ 66.200 մ² տարածություն, սակայն 1935 թ. դրությամբ ուներ մոտ 36.600 մ² տարածություն:

Հայերի թաղումները հիմնականում զբաղեցնում էին առաջին բաժնի արևմտյան, երկրորդի գերակշիռ և երրորդի արևելյան և հյուսիսային հատվածները⁷: Տապանաքարերը, որոնք հիմնականում ունեին 80-100 սմ երկարություն, 50-60 սմ լայնություն և 12-15 սմ բարձրություն, կերտված էին տեղական բազմատեսակ քարերից: Որևէ տապանաքար կոթողի կամ մահարձանի ձևով գոյություն չունեին, բոլորը հարթ էին: Մեծ մասն ուներ ցածր պատվան-

դան՝ տապանաքարերի հետ միացած շաղախով: Արձանագրությունները փորագիր էին: Առավել ուշագրավ էին երկրորդ բաժնի հյուսիսային մասում գտնված դեղին մարմարյա տապանաքարերը, որոնք չափերով ավելի մեծ և բարձր էին, ունեին գեղագիր գրչությամբ արձանագրություններ, իսկ եզրերում՝ գեղարվեստական գեղեցիկ ծաղկումներ⁸:

Չուղայեցիներն ունեին իրենց՝ մեծ և դազադաճև տապանաքարերով առանձին բաժինը: Գրեթե բոլոր արձանագրություններն ունեին նույն գրչառճը⁹:

1853 թ. Ազգային վարժարանի նորոգման, 1874 թ.՝ Սբ. Քառասնից մանկանց եկեղեցու վերնատան կառուցման ժամանակ, գերեզմանատան տապանաքարերը տեղահանվում են և գործածվում որպես շինանյութ¹⁰:

1894 թ. Հալեպի զինվորական հրամանատար Սարը Ֆերիզ Սաբիթ փաշան իր զինվորականների համար գերեզմանոցում ճանապարհ է բացում՝ գիշերով տեղահանելով տապանաքարերը: Տեղի ունեցածը մեծ հուզմունք է պատճառում քրիստոնյաներին: Նմանատիպ դեպքեր չլինելու նպատակով կուսակալ Հաճի Օսման Նուրի փաշայի արտոնությամբ 1894 թ. գերեզմանատան երեք բաժինները պարսպապատվում են¹¹:

4 ՊՀՀ, էջ 86:
 5 ՊՀԱԳԱՀՏ, էջ 18-19:
 6 Նշվ. աշխ., էջ 24:
 7 Նշվ. աշխ., էջ 21:

8 Նշվ. աշխ., էջ 23:
 9 ՊՀՀ, էջ 48, 58:
 10 Նշվ. աշխ., էջ 810, 839-840:
 11 ՊՀԱԳԱՀՏ, էջ 22:

1927 թ. փետրվարին առողջապահական խնդիրների պատճառով քաղաքապետարանը փակում է գերեզմանատունը¹² և նոր տեղ է հատկացնում քաղաքի հյուսիսում գտնվող Շեխ-Մագսուդի շրջանում¹³:

Գերեզմանատանն ամփոփված աճյունների մի մասը 1947 թ. տեղափոխվում է Շեխ-Մագսուդի հայ առաքելական գերեզմանատուն և ամփոփվում եղբայրական գերեզմանոցում¹⁴: Ապա Ազիզիե գերեզմանատան տարածքն ամբողջովին վաճառվում է¹⁵ և վերածվում բնակելի թաղամասերի: Տապանաքարերը տեղափոխվում են Շեխ-Մագսուդի հայ առաքելական գերեզմանատուն՝ տարիներ շարունակ մնալով իրար վրա կուտակված, որոնք էլ մոտավորապես 1970-ական թթ. տեղի անբավարարության պատճառով կտրատվում են և գործածվում գերեզմանատան ներսում որպես մայթեզերք: Վերջիններիս նորոգման ժամանակ էլ՝ 2000-ական թթ. սկզբին, արդեն մասնատված տապանաքարերի արձանագրությունները քերելով անհետացվում են¹⁶:

Վիճագրեր. ներկայացնում ենք 315 միավոր արձանագրություն, որոնց միակ ընդօրինակողն է Ա. Սյուրմեյանը:

1. Տապանաքար.

Այս է հանգիստ ջուղայեցու Ախբերանու որդի Ռվանեսին, որ դարիպ մնաց Հալապ քղքն., թվ. ՌԻԸ (1579):

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 25:

2. Տապանաքար.

Աս. է տապան ջուղեցի Մուրատի որդի Աղազարին, թվ. ՌԼԵ (1586):

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 25: ՊՀՀ, էջ 58:

3. Տապանաքար.

Ուլաշա(°) Յարդանանյ(°) որդի Ազկուլի(°): Ած. ողմի, ի թվ. ՌԼԵ (1586):

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 25:

4. Տապանաքար.

Այս է տապան հանգստեան ջուղեցի Յովանեսի որդի Մարութին(°), որ դարիպ մնաց ի Հալապ, ... թվին(°) ՌԼԸ (1589):

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 25: ՊՀՀ, էջ 58:

5. Տապանաքար.

Այս է տապան ջուղեցի Հեխտ(°) որդի Թեղոն(°), որ դարիպ մնաց ի Հալապ, թվ. ՌԼԹ (1590):

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 25:

6. Տապանաքար.

Այս է տապան ջուղեցի Մալթանգուլի որդի մահդեսի Աղադալին(°), որ դարիպ մնաց ի Հալապ քաղաքն, թվ. ՌԻԴ (1595):

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 25: ՊՀՀ, էջ 58-59:

7. Տապանաքար.

Այս է տապան ջուղեցի Մալազի որդի Յակոբին, ... թվ. ՌԻԴ (1595):

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 25:

8. Տապանաքար.

Այս է տապան ջուղեցի Խանդուլին, թ. ՌԻԵ (1598):

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 25:

9. Տապանաքար.

Այս է տապան հանգրստան. ջուղեցի դաւճա Վանիսի թռռան Չատուրի(°) Մուշեղին, որ դարիպ մնաց Հալապ քաղք., թվ. ՌԻԹ (1600):

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 25:

10. Տապանաքար.

... ջուղեցի ..., որ դարիպ մնաց ի Հալապ, թվն. ՌԾ (1601):

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 25:

Ծանոթ. արձանագրությունը եղել է շատ մաշված, և երկու տողերն անընթեռնելի (նույն տեղում) են:

11. Տապանաքար.

Այս է տապանս ջուղեցի Դաւիթին(°), ՌԾ (1601) թվ.:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 25:

Ծանոթ. արձանագրությունը եղել է շատ մաշված և դժվարընթեռնելի (նույն տեղում):

12. Տապանաքար.

Այս է տապան ջուղեցի Միրեքի որդի Չալապուն, որ դարիպ մնաց ի Հալապ, թվին ՌԾ (1601) ...:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 25:

13. Տապանաքար.

Այս է տապան հանգստեան տր. Տերատուր ... քահանայի(°) ջղեցի., որ եկն(°) հանգաւ ի Հալապ քաղաք, ... ՌԾ (1601):

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 25:

14. Տապանաքար.

Այս է հանգիստ Մաթնու արեղայի ջուղայեցո ...գաս քահանայ(°) Ատրի(°), որ ի ՌԾ (1601) թվկնիս հյոց. տարածամ մահուամբ փոխեցաւ առ Քս., գոր եղեալ է յայսմ տպանի.: Ած. ողորմի ասցք:

Հրատ. ՊՀԱԳԱՀՏ, էջ 25:

132. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարին և մարմա-
րն սալիկին, փորագիր, 11 տող.

Տապանաքարին.

**Ազիրեան(ների) | ընտանեկան դամբարան: |
Աստ հանգչին | Ստեփան Ազիրեան, | ծնեալ Միս,
1853, վախճանեալ 1928, | Եղսափէթ Ազիրեան, |
ծնեալ Սիս, 1860, վախճ(անեալ) 1929:**

Սալիկին.

**Աստ հանգչին | Ազիրեաններ՝ | Գրիգոր, 1883-
1970, | Հայկանոյշ, 1890-1978:**

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. կրում է 663 համարը:

Միս, ապա Հալեպ փոխադրված Ազիրյանները, որոնք նա-
խապես կրում էին Ծանճյան ազգանունը, արմատներով Մարա-
շի մերձակա Ծանճի բերդ գյուղից են (**Քելէշեան Մ.**, նշվ. աշխ., էջ
300):

Ստեփան Ազիրյանը «Միսի առևտրական դասին պատկա-
նող պարկեշտ, պատուառո, բարեսեր, բնատրոփեամբ մեղմ,
հաշտարար և արդարակորով անձ մ'էր: Կենքի փորձառու-
թեամբ բրձուած մարդ՝ շատ անգամներ անդամակցած է վարչա-
կան, դատական և թաղապետական ժողովներուն: Ազգային զա-
նազան գործերուն մէջ անձնուէր ծառայութիւններով անմոռա-
նալի անուն մը թողած էր: 1921-ին ընտանեօք կը փոխադրուի
Կիպրոս, քանի մը տարի վերջ տեսութեան կու գայ իր զաւակնե-
րուն և թոռներուն՝ Լիբանան և Սիրիա: Որքան անակնկալ և
սաշէցուցիչ եղաւ հետեւեալ առտուն մահուան գոյժը՝ այն պա-
տուական ազգայինին, որ թաղուցաւ Հալեպ» (**Քելէշեան Մ.**,
նշվ. աշխ., էջ 300-301): Քելէշեանը Ստեփան Ազիրյանի ծննդյան
թվականը սխալմամբ տվել է 1851, իսկ մահվանը՝ 1931 (նշվ.
աշխ., էջ 300):




**Ս. Ազիրյանի որդին՝ Գրի-
գորը, «...նախակրթութենէն յե-
տոյ 1900-ին կը յաճախէ Տար-
սոնի Ամերիկեան գոլէժը ...Իբրև
գիշերօթիկ 5 տարիներու տընա-
ջան աշխատութենէ վերջ աւար-
տեց անոր շրջանը B. A. տիտ-
ղոսով: Բացի անգլիերէնէ ուսաւ
նաև հայերէն, թուրքերէն և
ֆրանսերէն լեզուները: Ատա-
նայի մէջ կ'ընդգրկէ առևտրա-
կան ասպարէզը. 1909-ին կու-
գայ Միս ու 1915-ին կը տարա-
գրուի Սիրիա: Չինադարարին
կը դառնայ Միս, յետո Ատանա
և հուսկ ուրեմն 1921-ին կը հաս-
տատուի Ալէքսանդրէթ և 4 տարի
վերջ ալ Հալեպ... Իր գտնուած
տեղերուն մէջ անդամակցած է
առևտրական գրասենեակի և
1907-ին ալ Ատանայի թաղական
խորհուրդի իբրև ատենադպիր»
(**Քելէշեան Մ.**, նշվ. աշխ., էջ 311): 1927 թ. նոյեմբերի 9-ին
ընտրվում է Բերիո թեմի ազգային քաղաքական ժողովի ատենա-
պետ («Տաթե», 1929, էջ 379): 1929 թ. նշանակվում է նորակազմ
Խճամատար մարմնի հաշվապահ, որի նպատակն էր օգնել
թուրքական պետության ճնշումների հետևանքով Խարբերդից,
Բալուից և Տիգրանակերտից Սիրիա հասած հայ նոր գաղթա-
կաններին (**Ֆիշենկճեան Ա.**, Հայերու հոսքը դէպի Սուրիոյ հիւ-
սիս-արևելեան շրջանները, «Տաթե. հայագիտական տարե-**

գիրք», Հայկա, 2008, էջ 309, 312): 1931 թ. ապրիլի 25-ին մասնակցում է Հայկաում կայացած Կիլիկիո արժուական կաթողիկոսի ընտրությանը՝ որպես պատգամավոր Հայկայից (Քարգեն Ա արքայից կաթողիկոս, նշվ. աշխ., սյունակ 1017): 1938 թ. անցկացված սանցիների մարդահամարում հիշվում է հայկաբնակ սանցիների անվանացանկում, որի համաձայն՝ ընտանիքը բաղկացած էր 4 անդամներից (Քելեշեան Մ., նշվ. աշխ., էջ 717, 729): 1944 թ. սեպտեմբերի 9-ին կնոջ՝ Հայկանուշի հետ Բերիո թեմի քաղաքական ժողովի կողմից նշանակվում է Հանգանակի: հանձնախմբի անդամ: Այդ հանձնախմբի նպատակն էր օտար երկրորդական վարժարաններում 20 հայ ուսանող պահելու համար կատարել հանգանակություններ (ՀԱԳ, ֆ. 1421, ց. 3, գ. 62, թ. 18):

133. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչի(ն) | հայր և որդի | Աւետիս և Թորոս | Ներսեսեաններ՝ | Պօյաճը Ավիլի, | ծն(եալ) 1855, հա(ն)գ(եալ) 1928, | 1883-1963:



Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.: Գտնվում էր 4-րդ մասում՝ 1689 համարը կրող Ֆյորենցա Ներսեսյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես՝ Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 172:

134. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 9 տող.




Այս է | դամբան | տիառ | Գրիգոր Յ. | Քիրապեճեան(ի), | ծն(եալ) 1860, | Կեսարեա, | հ(ան)գ(եալ) 1928 հ(ո)կ(տեմբեր) 31, | ի Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում է կեսարացի Անտիզոնե Քիրապեճյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես՝ Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 1173:

135. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Մ. Թագուհի | Նահապետեան, | սերաստացի, | ծ(նեալ) 1861, հ(անգեալ) 1928:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում էր 4-րդ մասում (համար 1768): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:



136. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.



Այնթապցի | Յարութիւն | Քելեշեան, | ծն(աւ) 1864, մ(ե)ռ(աւ) 1928:
Հրատ. առաջին անգամ:

137. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 9 տող հայերեն, որից ցած՝ 1 տող արաբերեն (հանգուցյալի անունը).



Է: | Աստ | հանգչի | Արքահան | Ապտո Թիւրքմէնի, ծն|աւ 1865, հա|նգեալ 1928 | յունիս 1:
Արաբերեն.

ابراهيم عيد تركماني
Հրատ. առաջին անգամ:

138. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.



Աստ հանգչի(ն) | Յակոբ Սըխճեան, | ծն(եալ) 1933, հ(ան)գ(եալ) 1957, | այնթապցի, | Ճօրճ Գումճեան, | քիլիսցի, | ծն(եալ) 1880, հ(ան)գ(եալ) 1928:

Հրատ. առաջին անգամ:


139. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողին, փորագիր, 5 տող.



Ս. Լ. Գ. Գօլանեան, | որ նահատակ|ուեցաւ իր | գիւղին մէջ, | 1883-1928:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. կրում է 560 համարը:



140. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.



Աստ հանգչի |
Չագար | Ալեմշահիեան, |
ծն(եալ) 1885, հ(ա)ն-
(գեալ) 1928, | մշեցի:
Հրատ. առաջին անգամ:

141. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ հաղթականար, արձանագրությունը՝ վերջինիս ամրացված միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 11 տող.

Սալիկ Ա.

Գամբարան | ընտանեկան: | Աւետիս Չամի-
չեան, | ծն(եալ) 1885, Այնթապ, | հանգ(եալ) 1928:

Սալիկ Բ.


Սահակ | Նարտիկեան: | Հռիփսիմէ Չամիչեան:
| Նէճիպ Չամիչեան: | Սարգիս Չամիչեան, | 1911-
1971:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 591 համարը:



142. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 16 տող.



Սալիկ Ա.

Այս է տապանը | Թորոսեան ընտանիքին, | քի-
լիսցի: | Սարգիս եւ Յովհաննէս, | նահատակուած
1915-ին, | Պահիէ, ծն(եալ) 1885, հ(ա)ն(գեալ) 1928-
ին, | Լետնիցա, ծն(եալ) 1907, հ(ա)ն(գեալ) 1967-ին,

| Նորիցա, ծն(եալ) 1895, հ(ա)ն(գեալ) 1980-ին, |
Աբրահամ, ծն(եալ) 1912, հ(ա)ն(գեալ) 1968-ին:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Պիեաթրիս | Թորոսեան, | ծն(եալ)
1926, հ(ա)ն(գեալ) 2005: | Տէր աստուած, | հոգինին
լոյսաւորէ, | արքայութեան արժանի ընէ:

Հրատ. առաջին անգամ:


143. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ փորագիր, 13 տող.



Այս է | տապան | Աբ-
րահամ | Օսգիեանի: |
Հօրս ամունն | է Օսգո,
այժմ | ննչեմ ես | հալի-
տեան, | ծնաւ 1892, |
հանգեալ | ի տէր, 1928 |
յունվար 24, | սասունցի:
Հրատ. առաջին անգամ:

Հրատ. առաջին անգամ:

144. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.



Աստ հանգչին |
Պզտիկեաններ՝ | Ազնիս,
1885-1966, | Ներսէս, 1893-
1928, | Յովհաննէս, | 1912-
1963: | Այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:

145. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.

Աստ հանգչի | խարբերոցի | Վարսենիկ | Տէր-
Սկրտիչեան, | ծնաւ 1898, | հանգեալ ... 1928(°) | ...:

Հրատ. առաջին անգամ:



146. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | ատիամանցի | Յակոբ Մինասեան, | 1902: Նահատակեալ | հնէզեներու ձեռամբ | 8 ապրիլ 1928:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ատիաման քաղաքն Ադիամանն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի Մալաթիա գավառում: Թուրքերենով արտասանվում է Ադյաման (Adiyaman):



Հարավահայաց նիստին.

Աստղեր նորափթիթ կը մարին, | ասուպ կըլլան, վարդերն ալ վերքեր, | ես ալ էի վաղ գեղ պատանին, | վարդն ու մանիշակն իմ սերունդին, | բայց, ավաղ, այսօր ցուրտ հողն են գրկեր:

Արևմտյան եզրին գետեղված սալիկին.

Աստ հանգչի(ն) | Կիլ Յովհաննեսեաններ՝ | Գէորգ, 1958-1997, | Լեւոն, 1931-1998:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

147. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի ոսկերք | օրուցի | Էլիսա Չափա(յ)եան(ի), ծն(աւ) 1903, | մ(ե)ռ(աւ) 1928:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Օրուլ գյուղը գտնվում է Կիլիկիայում՝ Այնթապ քաղաքից 16 կմ հյուսիս-արևելք: Անենայն հավանականությամբ, ներկայիս Արլլ (Aril) գյուղն է:



149. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարի հյուսիսահայաց նիստին, 3 տող.

Սեդրակ Հուրեան, | ծնաւ 1910, մեռաւ | 1928:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 4-րդ մասում (համար 1501-Բ):



Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

150. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարին և արևելյան եզրին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 16 տող.



Տապանաքարին.

Ազդ | Միրանուշ | Անրսիկեան, | ծն(ա)վ Խարբերդ-Քոսիլիկ, | ծն(ա)ւ 1913 փետ(րուար) 9-ին, | մեռ(աւ) 1928 յ(ու)ն(ի)ս 9-ին:

Սալիկին.

Աստ հանգչի | Կարապետ | Անրսիկեան, | 1918-1992: | Խարբերտ | աշխարհ որպէս մի քնքոյշ երագ, | մահը պոկեց, ըրաւ բաժան, | յույսեր ունէիր, օր լոյս չտեսած, | ծաղիկ, աղօթք եւ խունկ | հոգւոյթ համար թող միշտ մխան:

Հրատ. առաջին անգամ:

148. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ մարմարե սալիկ, որի արևելահայաց նիստին ամրացված են հանգուցյալների պատկերները, արձանագրությունը՝ տապանաքարի երեսին, հարավահայաց նիստին և արևմտյան եզրին գետեղված սալիկի արևելահայաց նիստին, փորագիր, 16 տող.



Տապանաքարի երեսին.

Այս է տապան | գէթունցի | Նշան | Կիլվանէ-սլեան(ի), | ծն(եաւ) 1906, | հ(ան)գ(եաւ) 1928 յ(ու)-ն(ի)ս 5:

Ծանոթ. կրում է 1460 համարը:
 Քոստանթնուպոլիսի Գոթիկ գյուղը Քեսարիկն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի համանուն գավառում: Ներկայումս մտնում է Էլազըր քաղաքի շրջագծի մեջ:

151. Տապանաքար. ձվաձև, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.



Անողորմ մահուան | մանգաղին դաժան, | դու զոհ ապաժան, | հեք Պարոյր խոհուն, | տոհմն Չինչինեան, | յաւետ քեզ ողբան, | 8-3-(1)923/1-12-(1)928:
 Հրատ. առաջին անգամ:

152. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին ազդեցված թևավոր խաչը՝ տեղահանված, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Այնթապցի | Գեորգ Չուլճեան, | ծնաւ 1847, | հանգեաւ 1929:
 Հրատ. առաջին անգամ:



153. Տապանաքար. ուղղանկյունաձև, տեղահան, արձանագրությունը՝ նիստին, 3 տող.

Բալուցի | Սահակ Պժեան, | ծն(եալ) 1853, հ(ան)գ(եալ) 1929 մ(ա)յ(ի)ս 16:

Հրատ. առաջին անգամ:
 Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 1525): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

Սահակ Պժեանը հիշվում է 1909 թ. Այնթապի Միլլեթ խանում գտնվող հայ վաճառականների ցանկում որպես մանուսայի վաճառական (**Մարաֆեան Գ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 311):



154. Տապանաքար. ուղղանկյունաձև, տեղահան, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.



Աստ անչէ | Եղիա Տ...-| յանեան, Ջէ[յ]թունի Ալա-| [[բա]ձ գ[[ի]ղ[[ա]][[ց]]ի, ծն(աւ) 1869, | մ(ե)ռ(աւ) 1929:

Հրատ. առաջին անգամ:
 Ծանոթ. Ալաբաշ (Արեգին) գյուղը գտնվում է Կիլիկիայում՝ Մարաշ քաղաքից հյուսիս: Ներկայումս մնացել է Մենզելեթ ջրամբարի տակ:

155. Տապանաքար. դեպի ներս կորացված միստերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.



Աստ հանգչի | հանի Ծիբրի | Մոմճեան, | ծն(եալ) Մարաշ, 1874 | յ(ու)նվ(ար) 20-ին, | վ(ա)խճ(անեալ) 1929 յ(ու)լ(իս) 16, | ի Հալէպ:
 Հրատ. առաջին անգամ:

156. Տապանաքար միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.

Աստ հանգչին | Ովսաննա | Բանճարճեան, | ծն(եալ) 1876, Այնթապ, | հ(ա)նգ(եալ) 1929 եւ | Մանուկ | Բանճարճեան, | ծն(եալ) 1874, Այնթապ, | հ(ա)նգ(եալ) 1961:


Հրատ. առաջին անգամ:
 Ծանոթ. Մանուկ Բանճարճյանը (դպրոցական անունը՝ Երվանդ) 1891 թ. ավարտել է Այնթապի Վարդանյան դպրոցը: Հայրը՝ Հարությունը, բնիկ գրգռիկիսարցի էր և գյուղի միակ ոսկերիչը: Գյուղի վերջին հայ ընտանիքն էր, որ գաղթում և հաստատվում է Այնթապում: Մանուկը սովորում է ոսկերչություն, ապա հյուսնություն: Անդամակցում է Հնչակյան, հետո Ռամկավար կուսակցությանը: Այնթապի ինքնապաշտպանության նախորեին պատրաստում էր ռումբերի փայտե կաղապարներ, իսկ ինքնապաշտպանության օրերին զինարանի տեսուչն էր (**Պապայեան Ե.**, նշվ. աշխ., էջ 605-606):



157. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Այս է տապան հանգստեան | մարաշցի Խօրէն | Ջէյթունցիեան(ի), | ծն(եալ) 1901 յ(ու)լ(իս) 4, | հ(ան)գ(եալ) 1929 հ(ո)կ(տեմբեր) 8:

Հրատ. առաջին անգամ:



158. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողին, 6 տող.




Աստ հանգչի | Էլիզա Սաաթճեան՝ | ծնեալ Հասրճեան, | 1903, Այնթապու, | մեռեալ 1929 | յուլիս 2:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում էր 4-րդ մասում (համար 3548): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

159. Տապանաքար. դեպի ներս կորացված ճիստերով, օրորոցաձև, արձանագրությունը՝ հարավահայաց ճիստին, փորագիր, 3 տող.

Աստուած հանգչի հոգին | մարաշցի Յարութին Տօլմաճըլեան(ի), ծնաւ 1905, մեռաւ 1929:

Հրատ. առաջին անգամ:



160. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 3 տող.

Էլիզա Աեզէնեան | ծն(եալ) Տէր-Խորենեան, Քիլիս, | 1906-1929:

Հրատ. առաջին անգամ:




161. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 8 տող.

Դապան: | Աստ հանգչի | զհօգիս տիկ(ին) | Էօժէնի Խթա(յ)եան, ծնեալ | 1907, հանգ(եալ) | 1929, | ինճէտուցի:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. Ինճէտու (Ինջետու) քաղաքը գտնվում է Անատոլիայում՝ Կեսարիա քաղաքից 28 կմ հարավ-արևմուտք: Ներկայումս կոչվում է նույն ձևով (İncesu):

162. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.




Աստ հանգչի | Գրիգոր | Գ. Թարխանեան, | ծն(եալ) 1894, Ուրֆա, | հ(ա)ն(գեալ) 1929, Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:

163. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Գէորգ | Հալլաճեան, | ծնաւ 1901 | սեպ(տեմբեր) 15, Դիլիսին, | մեռաւ 1929 | յ(ու)ն(իս) 1, Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. Ծիլիսն գյուղը գտնվում է Կիլիկիայում՝ Հոմսկլայի գավառակում՝ Խալֆեթի քաղաքից 6 կմ հյուսիս-արևելք: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Սալլաքքայա (Saylakkaya):



164. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 12 տող.

Այս է | տապան Տիգրանակերտի | հայնէցի | Նշան | Իսրայէլեանի, | ծն(եալ) 1907, | հ(ան)գ(եալ) 1929 ապ(րիլ) 1: | Կին դու, | զի լաց, զոր | խնդրիս: | Յոր Ի (20). 15:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. «Հայնէ» գյուղը Հայնին է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Դիարբեքիի նահանգի Արդանամադեն գավառում՝ Արդանամադեն քաղաքից 48 կմ արևելք: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Հանի (Hani):

165. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | այնթապցի | Մարտիրոս Մահսերճեան, | ծն(եալ) 1909, հ(ա)նգ(եալ) 1929:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է այնթապցի Հարություն Մահսերճյանի տապանաքարի մոտ: Վերջինիս մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 974:



166. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց նիստին և երեսին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Արևմտահայաց նիստին.

Աստ հանգչի | այնթապցի | Թորոս Եփրեմեան, | ծն(եալ) 1909, հանգ(եալ) 1929:

Տապանաքարի երեսի սալիկին.

Աստ հանգչի | Լուսին | Եփրեմեան, | 1909-1989:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.: Կրում էր 1291-Բ համարը և գտնվում էր Ավետիս, Հովհաննես և Հակոբ Եփրեմյանների տապանաքարերին կից: Նրանց մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 127, 663:

167. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 12 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչին | Սկրտիչեաններ՝ | Կարապետ, 1887-1971, | Խաթուն, 1879-1974, | Իսկենտեր, 1927-1929, | Ջոհրապ, 1925-1985: | Սասունցի:

Սալիկ Բ.

Աստ հանգ(չի) | Յակոբ | Սկրտիչեան, | 1922-1994, | սասունցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Հակոբ Սկրտչյանը 1980 թ. հիշվում է որպես Սք. Գևորգ եկեղեցու դպիր (Սկրտիչեան Յ., Ս. Գևորգ եկեղեցույ դպրաց դասը, «Օջական», 1980, № 8, էջ 86):



168. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, դեպի ներս կորացված նիստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ հյուսիսահայաց նիստին, փորագիր, 2 տող արաբերեն.

Արաբերեն.

المرحوم قره بيت اكوب جليلاتي | ولد سنة ١٨٤٤ و توفي في ٢٦ تشرين اول سنة ١٩٣٠.

Թարգմ. Հանգուցյալ Կարապետ Հակոբ Ջիլլատի, ծն. 1844 թ., հանգ. 1930 թ. հոկտեմբերի 26-ին:

Հրատ. առաջին անգամ:




169. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ | հանգչի | տիկ(ին) Եղսայ Ալօ(յ)եան, | արդնցի, | ծն(աւ) 1865, մ(ե)ռ(աւ) 15 յուն(իս) 1930:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 875 համարը:

Արդն քաղաքը Արկնին է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Դիարբեքիի նահանգի Արդանամադեն գավառում՝ Արդա-



նամադեն քաղաքից 20 կմ հարավ: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Էրզանի (Ergani):

170. Տապանաքար. միաստիճան ընդհանուր պատվանդանի վրա՝ երկու ուղղանկյունաձև տապանաքարեր, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մետաղյա երկու սալիկներին, փորագիր, 8 տող.

Հրատ. առաջին անգամ.

Յարութիւն | Թնկրեան, | ծն(եալ) ի Կ. Պօլիս, | 1865-1930:

Հյուսիսային տապանաքարին.

Երանուհի | Փոլատեան՝ | ծն(եալ) Թնկրեան, | 1869-1930:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.: Գտնվում էր 6-րդ մասում (համար 1023)՝ Ռաֆայել Թնկրյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեն-Մագսուրի առաքելական գերեզմանատան արձ. № 263:



171. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 11 տող.



Աստ | հանգչին | այնթապցի | Մաքրուհի | Սապունճեան, | ծն(եալ) 1865, | հ(ա)ն(գեալ) 1930 նոյ(եմբեր) 19, | Արշալոյս | Սապունճեան, | ծն(եալ) 1925, | հ(ա)ն(գեալ) 1935 սեպ(տեմբեր) ...:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 88 համարը: Գտնվում է Ավետիս Սապունճյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեն-Մագսուրի առաքելական գերեզմանատան արձ. № 407:

172. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Ֆլօրէնցա | Ներսէսեան, | ծն(եալ) 1870, | հ(ա)ն(գեալ) 1930:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.: Գտնվում էր 4-րդ մասում (համար 1689)՝ Ավետիս և Թորոս Ներսեսյանների տապանաքարին կից: Նրանց մասին տես Շեն-Մագսուրի առաքելական գերեզմանատան արձ. № 133:


173. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աղո հ(անգչի) | Լուիզա Պերպերեան, Բիլիս ծ(նեալ), | 1874, հ(անգեալ) 1930 | մա(յի)ս 18:

Հրատ. առաջին անգամ:



174. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.




Այս է | տապան մա-րաշցի | թաղապետ | տիար Գրիգոր | Փարլա-գեան(ի), | ծն(եալ) 1877, | հ(ան)գ(եալ) 1930 յ(ու)-ն(իս) 12:

Հրատ. առաջին անգամ:



175. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 9 տող.



Այս է | դամբան | քի-
լիսցի | տ(ի)կ(ի)ն Զե-
փուր | Նալպանթ|եանի, |
ծն(եալ) 1878 | փ(ե)տ-
(րուար) 25, | հ(ան)-
գ(եալ) 1930 ապ(րիլ) 5:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում է քիլիսցի
Մարիամ Նալպանդյանի տա-
պանաքարին կից: Վերջինիս
մասին տե՛ս Շէյա-Մազադի ա-
ռաքելական գերեզմանատան
արձ. № 292:

176. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ սալիկին, փորագիր, 10 տող.

Այս | է տապան | Խարբերդի | Դատիմ | գեղացի
տ(ի)կ(ի)ն | Թուրիկ | Քէլէշեան(ի), | ծն(եալ) 1878, |
հ(ան)գ(եալ) 1930 մ(ա)յ(ի)ս | 31-ին:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. Դատիմ գյուղը Դատեմն է: Գտնվում է Արևմտյան
Հայաստանի Խարբերդի նահանգի համանուն գավառում՝ Խար-
բերդ քաղաքից 16 կմ հարավ-արևմուտք: Ներկայումս թորքերե-
նով արտասանվում է Թաղըմ (Tadim):



177. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.



Աստ հանգչի | այն-
թապցի | տիկ(ին) Փեթիյէ
| Ս. Տաղեան՝ | ծն(եա)լ
Օվակիմեան, | 1885, |
մ(ե)ռ(ալ) 1930:
Հրատ. առաջին անգամ:

178. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արևմտյան եզրին կանգնեցված մարմարե սալի-
կին Հայաստանի Վիլսոնյան քարտեզի բարձրաքանդակն է, որից
վեր՝ հանգուցյալի պատկերը, արձանագրությունը՝ միմյանց կից
մարմարե երկու սալիկներին և արևմտյան եզրի մարմարե սալիկի
արևելահայաց նիստին, փորագիր, 17 տող.

Սալիկ Ա.
Աստ հանգչին | Օհանեաններ՝ | Վարդան, | 1885-
1930, | Մանուէլ, | 1923-1992:

Սալիկ Բ.
Աստ հանգչին | տեր եւ տիկին | Օհանեաններ՝ |
Սահակ, 1928-1993, | Զարուհի՝ ծն(եալ) Տիշոյ(յ)եան,
| 1938-1997:

Կանգնեցված մարմարե սալիկին.
Մահ իմացեալ անմահիթիւն է: | Մեր հողերը: |
Փառք հերոսներ ունեցող հայ ազգին: | Արամայիս
«Շանթ» Օհանեան: | Ծն(եալ) 1961, հանգ(եալ)
1998:



Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. Արամայիս Օհան-
յանը Հայկական ժողովրդա-
յին շարժման գործունյա ան-
դամներից էր: Նահատակվել է
Սիրիայում («Ուխտ Արարա-
տի», № 2, 2006, էջ 7):



179. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | արդնցի Յով[հան]նէս Գրզլլեան, |
ծնաւ 1890, մե|րաւ 1930 օգ(ո)ս(տոս) 21:

Հրատ. առաջին անգամ:

180. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Հեթենայ | Կարո Պեքեարեան, | ծն(եալ) Սասուն, 1894, | հանգ(եալ) Հալեպ, 1930:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է Կիրե Պեքեարյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տե՛ս Շեն-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 415:

Հեթեն գյուղը Հեթինքն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Բաղեշի նահանգի Սասուն գավառի Ծովասար գավառակում: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Ինարդը (Inard):



183. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Ռահել Պալեան, | քիլիսցի, | ծն(եալ) 1907, հ(ա)ն(գեալ) 1930:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 178 համարը:



181. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 8 տող.

Աքարի | Անթանեան, | Կարին, Օզնի գիղալցի, ծն(ա)լ | 1896, մեռ(ալ) | 1930:

Հրատ. առաջին անգամ:


Ծանոթ. Օզնի գյուղը Օձնին է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Կարնո նահանգի համանուն գավառում: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Բեյփրնարը (Beyrinar):



184. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Յակոբ Դաիթեան, | ծն(եալ) 1907, հ(ա)ն(գեալ) 1930, | քիլիսցի:

Հրատ. առաջին անգամ:



182. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարին և մարմարե սալիկին, փորագիր, 11 տող.

Տապանաքարին.

Աստ հանգչի | Մուսեի Տօնիկեան խարբ(ե)րոցի, | ծն(ալ) 1905 հոկ(տեմբեր) 3, | մ(ե)ռ(ալ) 1930 ապ(րիլ) 7:

Սալիկին.

Աստ հանգչին | Զարիե Առաքելեան, | Մուշեղ Առաքելեան, | Յարութիւն Առաքելեան, | Վերժին Առաքելեան՝ | ծն(եալ) Հովհաննէսեան:

Հրատ. առաջին անգամ:

185. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.


Աստ հանգչի | Եզնիկ | Ղ. | Տէվէճեան, | արաքկերցի, | ծ(նալ) 1909 հոկ(տեմբեր) 8, | մ(եռալ) 10 դեկ(տեմբեր) 1930:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 485 համարը:



186. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.




Աստ հանգչի | Յակոբ
| Չոփուրեան, | այնթապ-
ցի, | ծն(եալ) 1910, հ(ա)ն-
գ(եալ) 1930:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում է այնթապ-
ցի Նազար, Եսթեր, Մարիամ,
Միրանուշ, Ասատուր և Թորոս
Չոփուրյանների տապանաքա-
րերին կից: Նրանց մասին տե՛ս
Շեխ-Մագսուդի առաքելական
գերեզմանատան արձ. № 200,
302, 332:

187. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 13 տող.

Աստ հանգ(չ)ի | արաբկերցի անլ(․) հորեէրբայ-
րը՝ | Գառնիկ Սէմէր|ճեան, ծ(նաւ) 1911, մ(եռաւ)
1930: | Ես չըբացուած | վարդ մը էի, | մայրիկանս |
անուշիկը, աւաղ, | մահը շատ շուտ | հասաւ, ծաղիկ
| հասակս կտրէց, | տարաւ:

Հրատ. առաջին անգամ:



188. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝
փորագիր, 10 տող.


Աստ հանգչի | Մարգիս | Լախօ(յ)եան, | անթապ-
ցի, | ծ(նեալ) 1913-ին, | հ(անգեալ) 1930-ին: | Ես հո-
գիս տուի | տիվիքարտիակ(․) | հիվանտութեան:

Հրատ. առաջին անգամ:



189. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, դե-
պի ներս կորացված նիստերով և կողերով, օրորոցաձև, արձա-
նագրությունը՝ տապանաքարի երեսին և արևելահայաց կողին,
փորագիր, 11 տող.

Երեսին.



Աստ | հանգչի օ-
ր(իորդ) Մե|լիմէ Յա-
ր(ուքիւն) Նաճար|եան,
ծնած է Խարլբերդ քա-
ղաքը, | 1913 ապրիլ 2
թի(ւ)ն, | մեռաւ | 1930
յուլ(իս) 13 թ.:

Արևելահայաց կողին.

Չէ, ոչ եթէ մեռեալ է դուստր | քո, այլ ննչէ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 1484): Այժմ գոյու-
թյուն չունի: Տեղահանվել է 2008 թ.:

190. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա,
ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանա-
գրությունը՝ սալիկին, փորագիր, 9 տող.



Աստ հանգչի(ն) | սա-
սունցի | Միհրան | Ասա-
տուրեան, | ծն(եալ) 1879,
հ(ա)նգ(եալ) 1955, | որդին՝
| Անդրանիկ | Ասատու-
րեան, | ծն(եալ) 1914,
հ(ա)նգ(եալ) 1930:

Հրատ. առաջին անգամ:

191. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝
փորագիր, 3 տող.



Մարի Եղիա(յ)ե(ա)ն,
| Աէօքմէնէ, | ծ(նաւ)
1930, մ(եռաւ) 1931:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 4-րդ
մասում (համար 1719): Այժմ
գոյություն չունի: Տեղահանվել
է 2007 թ.:

192. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝
սալիկին, փորագիր, 6 տող.

Սարայ | Պօղոսեան, | Խարբերդ | գայլուցի, | մե-
ռաւ 1930 | հ(ո)գտ(ե)մբ(եր) 16-ին:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Գայլու գյուղը
Գայլին է: Գտնվում է Արև-
մտյան Հայաստանի Խար-
բերդի նահանգի համանուն
գավառում: Ներկայումս
պաշտոնապես վերանվան-
վել է Քարշըբաղ (Karşıbağ):




193. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.

Այս է | տապան | Բալու օխ(ւ)ջ(յ)ցի տիկին Մարթա Ազնաուրիեան(ի), մեռաւ | 1930-ին:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Օխուն գտնվում է Արևմտյան Հայաստանի Դիարբեքի մահանգի Բալու գավառում՝ Բալու քաղաքից 9 կմ հյուսիս-արևելք: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Յեմ (Yem):



194. Տապանաքար. դեպի ներս կորացված նիստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարի հյուսիսահայաց նիստին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | մ(ա)հտ(եսի) Գէորգ Կ. Տաղեան, | ծնեալ Այնթապ, 27 յունվար 1859, | հանգեաւ Հալէպ, 20 ապրիլ 1931:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 1313): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.:

Գևորգ Տաղյանը 1928 թ. Սբ. Աստվածածին եկեղեցու Աղքատաց խնամակալության հանձնախմբի անդամ էր («Տարեւ», 1929, էջ 381):

195. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարին և մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.



Տապանաքարին.

Քիլիսցի | Անդրբեաս | Չաղլասեան, | ծն(աւ) 1860, | մ(ե)ռ(աւ) 20 դեկ(տեմբեր) 1931:

Սալիկին.

Աստ հանգչի | Ճրճի | Կոճիկեան, | հ(ա)ն(գեալ) 1955:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 366 համարը:

196. Տապանաքար. դեպի ներս կորացված նիստերով, օրորոցաձև, արձանագրությունը՝ հարավահայաց նիստին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | քիլիսցի Կիվրան Սիլահեան, | ծնաւ 1865, մէրաւ 1931 | նոյեմբեր 26:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 912 համարը: Գտնվում է քիլիսցի Հովհաննես, Վահան ու Արմենուի Սյուլախյանների տապանաքարերին կից: Նրանց մասին տես Շէխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 855, 1057:



197. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարի հարավահայաց նիստին, 6 տող.

Տիկին Մենեմ Թօփալեան, | ծն(եալ) 1870, Մարաշ, վախճ(անեալ) 1931, Հալէպ: | Մայրական ջինջ սիրտ մը այստեղ | ամփոփուեցաւ, լոյս աննման, | անոր լոյսէն որդիներուն | ...:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 1479): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:



198. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ տապանաքարին, ելնդագիր և խաչի պատվանդանի արևելահայաց նիստին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 11 տող.

Տապանաքարին.

Աստ հանգչի | արթովացի | Աննա | Քէշիշեան, | ծնաւ 1870, | հանգ(եաւ) 1931:

Սալիկին.

Աստ հանգչի | Մարիցա | Չափատարեան՝ | ծն(եալ) Ֆիլշենքեան, | 1936-1993:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Արթուր քաղաքը գտնվում է Պոնտոսում՝ Եփրոկիս քաղաքից 28 կմ հարավ-արևմուտք: Ներկայումս կոչվում է նույն ձևով (Artova):



201. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Յովհաննէս | Փամփալեան, | ճի-
պինցի, | ծն(եալ) 1879, | հանգ(եալ) 1931:


Հրատ. առաջին անգամ:

199. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 8 տող.

Այս է տապան | հանգստեան | կեսարիացի հան-
գ(ու)ց(եալ) | տ(էր) Գարեգին | ք(ա)հ(անա)յ Զօլա-
գեան(ի), | ծն(եալ) 1872, | վախճ(անեալ) 1931 յու-
ն(ո)ւ(ար) 21:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Գարեգին Զոլագյանը քահանա է ձեռնադրվել 1925 թ.: 1926 թ. նշանակվել է Ջարաբլուսի Սբ. Աստվածածին եկեղեցու քահանա: 1928 թ. նույն եկեղեցու հոգևոր հայրն էր (Գապ-
պէնճեան Գ., նշվ. հոդվ., էջ 312: «Տաքե», 1929, էջ 385):



202. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Սանդուխդ | Պէքեարեան, | այն-
թապցի, | ծն(եալ) 1885, | հանգ(եալ) 1931:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է Սամվել և Սահակ Պէքեարյանների տա-
պանաքարին կից: Նրանց մասին տե՛ս Շելի-Մագսուտի առաքե-
լական գերեզմանատան արձ. № 722:

200. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարին և մարմարե սալիկին, փորագիր, 10 տող.

Տապանաքարին.

Աստ | հանգչի | այնթապցի | Նազար | Չոփու-
րեան, | ծ(նա) 1874, մ(եալ) 1931:

Սալիկին.

Աստ հանգչի | Եսթեր Չոփուրեան, | 1901-1985, |
այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է այնթապցի Հակոբ, Մարիամ, Սիրանուշ, Ասատուր և Թորոս Չոփուրյանների տապանաքարերին կից: Վերջիններիս մասին տե՛ս Շելի-Մագսուտի առաքելական գերեզ-
մանատան արձ. № 186, 302, 332:



203. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Սահակ | Տ(էր)-Գրիգորեան, | ծն(եալ) Ֆեբրե, 1890, | հանգ(եալ) 1931 | յ(ու)ն(ի)ս 27:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. Ֆեբրե գյուղաքաղաքը Վահկան է: Գտնվում է Կիլիկիայում՝ Ադանա նահանգի Սիս գավառում՝ Սիս քաղաքից 44 կմ հյուսիս-արևելք: Ներկայումս չի անվանափոխվել (Feke):




204. Տապանաքար. խաչակիր, քառակողմ, վրանաձև, արձանագրությունը՝ հարավահայաց միստին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի այնթապցի | Մըխսթ Ռվսաննա Գազանճեան, | ծ(նեալ) 1891 օգոստոս 1, | հ(անգեալ) 1931 օգոստոս 12:
Հրատ. առաջին անգամ:




205. Տապանաքար. ուղղանկյունաձև, տեղահան, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Հանգ(չի) | Պետրոս | Հալաճեան, | ծն(աւ) 1895, | մ(ե)ռ(աւ) 1931, | ուրֆացի:
Հրատ. առաջին անգամ:



206. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.



Աստ հանգչի | Մանրիկ Քայնաքեան, | կիլիկիցի, | ծն(աւ) 1897, մեռ(աւ) 1931:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.:

207. Տապանաքար. ուղղանկյունաձև, տապանաքարի երեսին փորված է մուրճ և անկյունակ, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.

Աստ հ(ա)նգ(չի) | Ազատ | Աբրահամեան, | մշեցի, ծնաւ 1901, | հանգ(եաւ) 1931 յուլիս | 10-ին:
Հրատ. առաջին անգամ:



208. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողմ, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի այնթապցի | Յովսէփ | Յ. Մերայտարեան, | ծնեալ 1903, | հանգեալ 1931:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. կրում է 48 համարը: Գտնվում է այնթապցի Աբրահամ և Բյուզանդ Մերայտարյանների տապանաքարերին կից: Նրանց մասին տես Շեն-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 212, 466:




209. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ երեսին և հյուսիսահայաց միստին, 16 տող.

Տապանաքարի երեսին.
Ասդ | հանգչի Խոսրոֆ Թորոսեան, | ծն(աւ) 1905, մ(եռաւ) 1931: | Ով անցորդ, ով | որ ալ լինիս, | դուն անգամը | գլուխտ վեր | վերցուր, կանք | առ, և ինձ նալիր, ես որ ծաղիկ հասակիս | մէջ մտայ սեւ:
Հյուսիսահայաց միստին.

... թողով իմ ... եղբայր ... | ... եւ որք զաւակս ես ... | բնիկ կի(ւ)մ(ու)շ-մատէնցի:


Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. կրում էր 2351 համարը: Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:



«Գ ի Վ զ Ն Ղ - Վ ա տ է ն» - ը Գ յ ո մ շ մ ա դ ն գ յ ո ղ ա ք ա ղ ա ք ն է: Գ տ ն վ ո մ է Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի Ալյն գավառակում:

210. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.

Այս է | տապան | Կոյրուն | Խաչատուր|եան(ի), խնրցի, | ծ(նաւ) 1906, | մ(եռաւ) 1931:
Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. «Խնրս»-ը Խնուս գյուղաքաղաքն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Կարնո նահանգի Խնուս գավառում: Ներկայումս թուրքերենով արտասանվում է Հրնրս (Hinis):

211. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, քառակնոց վերնամասով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարի և քառակնոց վերնամասի հարավահայաց նիստերին, փորագիր, 15 տող.

Քառակնոց վերնամասի հարավահայաց նիստին.

Ես եմ՝ Բարգեն Վահրամեան: Հասակս է | 24 տարեկան, ծնած 1907 հոկտ(եմբեր) 20, մեռած | 1931 ապրիլ ...: Կերայ 5 պնակ պաղպաղակ, | հինգ ընկերս դնե[լ]ով գրբաւ, որ յանկարծ անշունչ ինկայ | գէտին, մէկ ժամ չի տեսց, հոգիս աւանդեց:

Տապանաքարի հարավահայաց նիստին.

Չունէի քովս սրտակից բարեկամ, մայրիկիս լուր չըրին, | կարօտ թողուցին արշալոյսին, խեղճ մայրիկս լալով | ողբալով դռնէդուռ ձգեցին: Մայրիկիս

մէկ հատիկն էի, | զիս տուն չի տարին, դարիպի նըման խուլուղը տարին, | խեղճ մայրիկիս սրտին մահուան վերք դրին, | հոս չի դատ(ե)ս, մայրիկ, երկինք կա տէր, կէանքիս պատճառ | էղողին տէրը բարին տայ:



Քառակնոց վերնամասի արևմտահայաց նիստին.

Մնաս բարեաւ, մայր, | հոգւոյս հանգիստ | քեզ մխիթարանք:
Հրատ. առաջին անգամ:



212. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի այնթապցի | Բիւզանդ | Ա(բրահամ) Սէրայտարեան, | ծնեալ 1909, | հանգեալ 1931:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 49 համարը: Գտնվում է հոր՝ Աբրահամի և Հովսեփի տապանաքարերին կից: Նրանց մասին տե՛ս Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 208, 466:



213. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.



Աստ հանգչի | այնթապցի | Ե(ա)զ(ու)պ Տաբազնե(ա)ն, | ծն(եալ) 1914, հ(ա)ն(գեալ) 1931:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 62 համարը:

214. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 13 տող.

Այս է | դամբան | եթեսեացի | Թագուհի | Սանտալճըլեանի, | ծն(եալ) 1922, | հ(ան)գ(եալ) 1931 մա(յիս): | Չի խնդրէք | զկենդանին | ընդ | մեռեալս: | Ղ(ու)կ(աա) ԻԳ- (24). 5:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. «Եթեսեա»-ն Եդեսիան է:



215. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 9 տող.

Աստ | հանգչի | Վարթան | Վարթանեան, | կոնիեացի, | ծ(նա)ւ. 1924-ին, | ջուրով | գոհ գնաց | 1931-ին:

Հրատ. առաջին անգամ:


216. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 8 տող.



Աստ հանգչին | տէր, տիկին | Չորպաճեան-(ներ)՝ | Յակոբ, | ծն(եալ) 1852-1932, | Սէննուշ, | ծն(եալ) 1866-1956: | Սարաշցի:

Հրատ. առաջին անգամ:

217. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ ելնդագիր, 7 տող.



Այս է տապան | գէթունցի | Թրվանտ | Սաքարեանի(°), | ծնավ 1860, | մերթալ | 1932-ին:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 4-րդ մասում (համար 1775): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

218. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Բալու{ն}ցի | Սուլբան | Գասպարեան, | ծն(ալ) 1864, | մահ(ացալ) 1932:

Հրատ. առաջին անգամ:



219. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևմտահայաց և արևելահայաց նիստերին և տապանաքարի երեսին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 10 տող.

Խաչի պատվանդանի արևմտահայաց նիստին.

Աստ հանգչի | հաճի Մանուկ Մուրատեան, | ծն(եալ) Խարբերդ, 1866-1932:

Խաչի պատվանդանի արևելահայաց նիստին.

Աստ հանգչի | Վաղարշակ Գանտիլեան, | ծնեալ Կարին, 1899-1976:

Սալիկին.

Աստ հանգչի | Աղանի Գանտիլեան՝ | ծնեալ Մուրատեան, | Խարբերդ, 1905-1987:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ըստ Հարություն Քորթոշյանի՝ Մանուկ Մուրատյանը և դուստրը՝ Աղավնին, ծնունդով Խարբերդի Եղեգի գյուղից էին: Մանուկ Մուրատյանը գյուղում ուներ ջրղաց: Ամուսնացել է Խսկոխու հետ: Ունեցել են ևս մեկ դուստր՝ Նվարդ անունով, որն ամուսնացել է համագյուղացի Մեսրոպ Քորթոշյանի հետ: Վերջիններիս մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 1468:

Վաղարշակը և Աղավնին ունեցել են 7 զավակ՝ Լուսյա, Մարգարիտ, Հովհաննես, Ազնիվ, Կարապետ, Մանուկ, Վերժին, և 15 թոռ:





Եղեգիներ մահտեսի Մամուկ Մուրատյանը և կինը՝ Իսկուհին

220. Տապանաքար. ուղղանկյունաձև, տեղահան, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | եղեսեացի | Նազարեթ | Գ. Կիլիսեան, | ծն(ուն)դ 1877, | մահ 1932:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 1649 համարը:



221. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.

Աստ հանգչին | Լուսին Ղապլանեան, | ծն(եալ) 1877, հ(ա)ն(գեալ) 1932, | Մանուկ Առաքելեան, | ծն(եալ) 1914, հ(ա)ն(գեալ) 1976, | հայնեցի, | Ազնիվ | Արագելեան, | ծն(եալ) 1908, հ(ա)ն(գեալ) 1978:

Հրատ. առաջին անգամ:



222. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, դեպի ներս կորացված նիստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարի երեսին և հարավահայաց նիստին, փորագիր, 13 տող.

Երեսին.

Աստ հանգչի | Մերաստիո | Գամարակ, Կոմերեկ | գաւառէն | տիկ(ին) Սուլթան | Նահապետեան, | ծն(եալ) 1882, | հ(ա)նգ(եալ) 1932 հոկ(տեմբեր) 2:

Հարավահայաց նիստին.

Մարմաչ ունենալ ի հայրենիքի, | կարօտը սրտիդ մեռնիլ վաղաժամ, | մրմուր կարոտով թռչնիլ խիստ հեռի, | սուրբ հայրենիքէտ օտար հողի տակ, | ո՛հ, ցաւ է, կսկիծ եւ վիշտ անթառամ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 2703 համարը:

Գամարակը Գեմերեկ գյուղաքաղաքն է: Գտնվում է Անատոլիայում՝ Մերաստիայի նահանգի Գամիքր գավառում: Ներկայումս թուրքերենով արտասանվում է Գեմերեք (Gemerek):

«Կոմերեկ» գավառը Գամիքրն է:



223. Ուղղանկյունաձև երկու տապանաքար. երկաստիճան ընդհանուր պատվանդանի վրա, արևմտյան եզրի կենտրոնում՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ տապանաքարերի երեսին ամրացված մարմարե սալիկներին, փորագիր, 12 տող.

Հյուսիսային տապանաքարին.


Աստ հանգչի | այնթապցի | Սաթենիկ | Տեր-Պալլեան, | ծն(եալ) 1888, | հանգ(եալ) 1948:

Հարավային տապանաքարին.

Աստ հանգչի | այնթապցի | Գէորգ | Տեր-Պալլեան, | ծն(եալ) 1887, | հանգ(եալ) 1932:

Հրատ. առաջին անգամ:





224. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Տիգրան | Թումայեան, | ծն(եալ) Սասուն, | 1888, հ(ա)նգ(եալ) 1932:
Հրատ. առաջին անգամ:



225. Տապանաքար. դեպի ներս կորացված միստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.



Աստ | հանգչի | Ռուբեն | Չոզկարեան, | կիրինցի, | ծն(եալ)-հանգ(եալ), | 1892-1932:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում է կյուրինցի Թորոս Չոզկարյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես ՇԵՆ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 345:

226. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.



Աստ հանգչի | շն.(*) | Անթառ | Պողոսեան, | փաբերդցի, | ծ(նեալ)-հ(անգեալ), | 1896-1932:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. Փաբերդը Բաբերդն է:

227. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Կարապետ Միմոնեան, | Սասնոյ Հարկուք գիպէն, | ծնաւ 1900 եւ | հանգեալ 1932/09/28:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. Հարկուք գյուղը Հարկորքն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Բաղեշի նահանգի Սասուն գավառի Տալփորիկ գավառակում: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Յաքաբաղը (Yakabağ):



228. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից երկու սալիկներին, 13 տող.

Սալիկ Ա. ներկագիր.
Աստ հանգչին | Թումա(յ)եաններ՝ | Յակոբ, | ծն(եալ) 1896, հ(ա)ն(գեալ) 1972, | Ղազար, | ծն(եալ) 1900, հ(ա)ն(գեալ) 1932: | Պուրասալի:

Սալիկ Բ (մարմարե), փորագիր.
Աստ հանգչի(ն) | Հերմինե | Թումայեան, | 1910-1992, | Շուշան Մազճեան, | 1888-1965:

Հրատ. առաջին անգամ:



229. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարին և մարմարե սալիկին, փորագիր, 10 տող.



Տապանաքարին.

Աստ հանգչի | Յարութիւն | Պօզուրլեան, | Կեսարիա | ծն(աւ), 1900, մ(եռաւ) ի տէր | 1932:
Սայիկին.

Աստ հանգչի | Մարի | Հաննոյեան, | 1924-1994:
Հրատ. առաջին անգամ:

230. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.



Ալմասդ Առաքելեան,
ակսլունցի, ծն(աւ) 1902, |
մ(ե)ռ(աւ) 1932-ին |
փետրուար | 27-ին:
Հրատ. առաջին անգամ:

231. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ ելնդագիր, 10 տող.

Այս է տապան | հանգստեան | վաղամեռիկ | տիկ(ին) Եսթեր | Պ. Բարսեղեանի, | ծնեալ | ի Տիգրանակերտ, | յամի 1903 փ(ե)տր(ուար) 18, | հանգեալ յամի | 1932 յուլիս 14:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 844): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.:

Եսթեր Բարսեղյանը հիշվում է 1919 թ. Հայկում գտնվող փրկված տարագիրների ցանկում («Կոչնակ», 1919, № 21, էջ 677):



232. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 9 տող.




Աստ | հանգչի | նիյտեցի | Արոյսիակ | Փիրանեան, | յանկարծա՛մահ, | ծ(նեալ) 1908, | հ(անգեալ) 1932:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. «Նիյտե»-ն Նիկոս քաղաքն է: Գտնվում է Կիլիկիայում՝ Սիս քաղաքից 110 կմ հյուսիս-արևմուտք: Թուրքերենով արտասանվում է Նիդե (Niğde):

233. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, օրորոցաձև, արձանագրությունը՝ հյուսիսահայաց նիստին, փորագիր, 3 տող.

Աստ հանգչի այնթապցի | Ալիս Ալլըզեան, ծնաւ 1909 փետրուար 20, | հանգեաւ 1932 դեկտեմբեր 11:
Հրատ. առաջին անգամ:



234. Տապանաքար. վրանաձև, արձանագրությունը՝ հյուսիսահայաց նիստին, փորագիր, 3 տող.

Լուսիա Աշճեան, | տիգրանակերտցի, | ծն(աւ) 1909, մե(ռաւ) 1932:

Հրատ. առաջին անգամ:



235. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, քառակուսի վերնամասով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ վերնամասի արևելահայաց կողին և հարավահայաց նիստին, փորագիր, 11 տող.

Արևմտահայաց կողին.

Աստ հանգչի | Միրածին Ե. Շիթիլեան, | քիլիսցի:
Հարավահայաց նիստին.

Որ վարդ մըն էր վարդերու մէջ | եւ ապրեցաւ վարդերու նման, | իր կեանքի գարունը | առտու մը միայն | արեւուն դէմ ծաղկեցաւ, | 27 յուլիս 1911-ին, Քիլիս, | վաղաժամ թառամեցաւ, | 23 յունուար 1932-ին, Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 570): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.:





236. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, կոթողաձև, արձանագրությունը՝ կոթողի արևելահայաց նիստին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 12 տող.

Գամբարան | Պետրոս Սալաթեան | ընտանիքի, գէյթունցի: | Պետրոս Սալաթեան, | 1845-1933, | Սիիրան Սալաթեան, | 1889-1947, | Վերգին Սալաթեան, | Արգայ Սալաթեան, | Օվսաննա Սալաթեան, | Անժել Պալեան, | 1919-1997:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Օվսաննա Սալաթեանը 1940 թ. Կրթասիրաց վարժարանում ուսուցչուհի էր (ՀԱԳ, ֆ. 1421, ց. 3, գ. 21, թ. 7):



237. Տապանաքար. ուղղանկյունաձև, տեղահան, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.



Պետրոս | Տէր-Պետրոսեան, | Խարբերդ եղիքցի, | ծն(աւ) 1864, | մեռ(աւ) 1933 | ... 16:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 4-րդ մասում (համար 701): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

Պետրոսը հիշվում է 1919 թ. Հայեպում գտնվող փրկված տարագիրների ցանկում («Կոչնակ», 1919, № 21, էջ 677):

238. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Պաղտասար | Քիրումլեան, | այնթապցի, | ծնաւ 1866-ին, | մեռաւ 1933-ին:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 3220 համարը:



239. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Մեր սիրեցեալ հայր | Ստեփանի | Գարաճեանի(ն), | ծ(նաւ) 1870, մ(եռաւ) 1933:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 4-րդ մասում (համար 2603): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:



Ստեփան Գարաճեանը 1924 թ. հունիսի 5-ին 5 տարով ընտրվում է Բերիո թեմի ազգային զավառական ժողովի անդամ (Գապպլեմճեան Գ., նշվ. հողվ., էջ 304: Տե՛ն նաև «Տարթե», 1929, էջ 378): 1928 թ. Սր. Քառասնից մանկանց եկեղեցու քաղական խորհրդի ատենապետն էր («Տարթե», 1929, էջ 380):

240. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Չէյթունցի | Տիգրան Տէր-Մովսէսեան, | ծն(աւ) 1873, | մ(եռաւ) 1933:

Հրատ. առաջին անգամ:




241. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 11 տող.



Աստ հանգչին | տէր եւ տիկին | Գուլուվեան|ները, | գէյթունցի: | Տիկ(ին) Հնազանդ, | ծն(աւ) 1873, մեռ(աւ) 1933, | Փարթոմեոս, | ծնաւ 1864, | մեռաւ 21 դեկտ(եմբեր) | 1934:

Հրատ. առաջին անգամ:

242. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարի արևմտահայաց կողմին, փորագիր, 5 տող.



Աստ հանգչի | Նազարեթ Մ(անուկ) Մանուշակեան՝ | Աղա Նազար, | ծնեալ Այնթապ, 1874, | հանգեալ Հալէպ, 1933:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է Էպրտիի Մանուշակյանի տապանաքարին կից:


Նազարեթ Մանուշակյանն Այնթապի ազգային գործիչներից էր՝ «Վարդանանց թանգարան» ընկերության (հիմն. 1867 թ.) հիմնադիրներից մեկի՝ Մանուկ Աղա Մանուշակյանի (վխճ. 1875 թ.) որդին: Այնթապցիները նրան անվանում էին Աղա Նազար: Մայրը՝ Մենուշխաթունը, մեծահամբավ Նազարեթյան գերդաստանից ազուլեցի Կյուլ Նազարի որդու՝ Գարա Նազարի դուստրն էր: Նախնական ուսումը ստացել է Վարդանյան կրթարանում 1882-1890 թթ.: Ավարտելուց հետո զբաղվում է վաճառականությամբ: 1895 թ. ընտանիքով հեռանում են Այնթապից և 4 տարի բնակվում Կիպրոսում, որտեղ էլ դասավանդում է Վահան Քոյրբեջյանի որբանոց-դպրոցում: 1899 թ. վերադառնում է Այնթապ և նույն թվին մասնակցում Վարդանյան անվան անդրանիկ մանկապարտեզի հիմնադրմանը: Վերստին զբաղվում է վաճառականությամբ՝ ներկրելով ներկ (Մարաֆեան Գ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 767): 1909 թ. հիշվում է Այնթապի Սահակյան-Ղազարյան խանում գտնվող հայ վաճառականների ցանկում որպես մաքսատան ապրանքների վաճառական (նշվ. աշխ., էջ 312): Տարիներ շարունակ Այնթապի գավառական և քաղաքական ժողովների, ինչպես նաև Ուսումնական խորհրդի, Վարդանյան կրթարանի, Հայկանուշյան վարժարանի հոգաբարձությունների անդամ էր: 1911 թ. ընտրվում է Այնթապի ՀԲԸՄ տեղական մասնաճյուղի վարչության ատենադպիր: 1915 թ.՝ տեղահանությունների նախօրեին, ձերբակալվում է և ուղարկվում Հալեպի բանտ: Նույն թվականին ազատվելով բանտից՝ վերադառնում է Այնթապ, այսպե ևս տարագրվում Հալեպ և ստանձնում Բմալեթխանների փոխտեսչի պաշտոնը: 1918 թ. վերադառնում է Այնթապ և անդամակցում Ազգային վճռաբեկ ատյանին: Այնթապի վերջին գաղթից հետո փոխադրվում է Հալեպ, որտեղ էլ կնքում է մահկանացուն 1933 թ. հունվարի 15-ին: Ուներ երկու որդի՝ Գառնիկ և Սիսակ (նշվ. աշխ., էջ 767-768): Ամենայն հավանականությամբ, նրա կինը Էպրտիի Մանուշակյանն էր: Վերջինիս մասին տես՝ Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 490:

243. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 15 տող.

Ես եմ՝ Մասնոյ Բր...ն | գիւղացի | Մաֆար Յակոբեան, ծ(նաւ) | 1877 ... |այ... ..ի: | Այս աշխարհ տառապէցայ 3 տալիի, դիմեցի | շատ բժիշկի, չգտայ ցալիս տարման, | մ(եռաւ) 1933-ին:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գյուղի անվան երրորդ տառը չի ընթերցվում:



244. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 8 տող.



Աստ | հանգչի | Յովհաննէս | Պիլեմճիեան, | ծնեալ ի Այնթապ, | 1877, | մեռաւ Հալէպ, | 1933: Հրատ. առաջին անգամ:

245. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.

Աստ հանգչին | Աւետիս Ծամլեան, | ծն(եալ) 1875, Եղեւիա, | հ(ա)նգ(եալ) 9/9/1958, | ծերանոց: | Գուտցի Ծամլեան, | ծն(եալ) 1884, Եղեւիա, | հ(ա)նգ(եալ) 29/1/1933, | Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ավետիս Ծամլյանը հիշվում է 1955 թ. հայեպարնակ ուրֆացիների ցանկում: Այրի էր (Մահակեան Ա., նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 10): Հալեպի հայկական ծերանոցի նվիրատուներից էր (տես՝ ծերանոցի եկեղեցու արձ. № 3):



246. Տապանաքար. դեպի ներս կորացված նիստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | խարբերոցի | Առօճնիկ(°) | Միրաէլեան, | ծն(եալ) 1885, հ(ա)ն(գեալ) 1933:

Հրատ. առաջին անգամ:



247. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | այնթապցի | Եիսիֆ Ղատրեան, | ծնալ 1886, | հանգեալ 1933:

Հրատ. առաջին անգամ:



248. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Աստ հանգչի Էխսո | Տեր-Յովհաննէսեան, | ծնեալ 1888, Քիլիս, | վախճանեցալ 1933, Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:


Ծանոթ. գտնվում է Նշան, Գևորգ, Գրիգոր և Ալիս Տեր-Հովհաննէսյանների տապանաքարերին կից: Նրանց մասին տե՛ս Շեն-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 598, 821:




249. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Այս է տապանըն | տ(իկին) Խանիկ Ուսանեանի | Բալուի Գմբէթ գիպէն, | ծն(ալ) 1888, մ(ե)ռ(ալ) 1933 հոկ(տեմբեր) 7:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. Գմբէթ գյուղը Գոմբէթն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Դիարբեքիի նահանգի Բալու գավառում՝ Բալու քաղաքից 18 կմ հյուսիս-արևմուտք: Թուրքերենով արտասանվում է Զյումբէթ (Kümbet):



250. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ փորագիր, 10 տող.

Աստ հանգչի | բնիկ պիթիսցի | տիկ(ին) Շուշանիկ, | Մամբրէ Ապաճեան | Ա. Քիրիակիտիս, | դուստր փաստաբան | Սարգիս պէյ | Միլլէթպաշեանի, | ծնեալ 1888, | հանգեալ 1933:

Հրատ. առաջին անգամ:



251. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարին և մարմնարե սալիկին, փորագիր, 12 տող.

Տապանաքարին.

Աստ հանգչի | այնթապցի | տիկ(ին) Սաթենիկ | Մոլսես... | Ասմիեան, | ծն(աւ)-մեռ(աւ), | 188...-1933: Սալիկին.

Աստ հանգչին | Գեորգ եւ Գլատիս | Պերեճիք-լեան, | 1911-1985, | այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:



252. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմնարե սալիկին, փորագիր, 11 տող.

Աստ հանգչին | բալուցի(ներ) | Տիգրան | Նալպանտեան, | ծն(եալ) 1895, հ(ա)ն(գեալ) 1979, | Փայլածուն | Նալպանտեան, | ծն(եալ) 1910, հ(ա)ն(գեալ) 1980, | Սուլթան | Նալպանտեան, | ծն(եալ) 1893, հ(ա)ն(գեալ) 1933:

Հրատ. առաջին անգամ:



253. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմնարե սալիկին, փորագիր, 8 տող.



Աստ հանգչին | Պետո Գաթրճեան, | քիլիսցի, | 1887-1967, | տիկ(ին) Մարի Գաթրճեան, | 1906-1933, | տիկ(ին) Ալիս Գաթրճեան, | 1894-1967:

Հրատ. առաջին անգամ:


Ծանոթ. գտնվում էր 4-րդ մասում (համար 2937): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

Պետրոս և Մարիամ Գաթրճյանները հիշվում են 1919 թ. Հալեպում գտնվող փրկված տարագիրների ցանկում («Կույնակ», 1919, № 21, էջ 677):

254. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | կիրինցի տիկ(ին) | Նուսեա Տուտազլեան, ծնած 1895, | մեռած 1933:

Հրատ. առաջին անգամ:



255. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Մանուէլ | Փափազեան, | մալաթիացի, | 1904-1933:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Մանուէլ Փափազյանը Մալաթիայի կրթասիրաց ընկերության Հալեպի մասնաճյուղի անդամ էր (Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Մալաթիոյ հայոց, էջ 1526):



256. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Հոս Նազարէթ | Ալահվերտիեան, | մարաշժի, | Ապրիլ 26 | զն(աւ) 1908, | 1933 մ(ե)ր(ա)ւ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. արձանագրության մեջ կան սխալներ: Մարաշժի քառի ծ տառի փոխարեն պետք է լինէր ց, ապրիլ-ի ուն՝ ը, զն(աւ)-ի գ-ն՝ ծ, մ(ե)ր(ա)ւ-ի ուն՝ ո:



257. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.



Աստ հանգչին | ճիպինցի | Գույումճեաններ՝ | Կիրակոս, 1909-1933, | Յակոբ, 1889-1967: | Ռեբեկա Գզկոզեան, | 1895-1975:


Հրատ. առաջին անգամ:

258. Տապանաքար. դեպի ներս կորացված ճիստերով և կողերով, օրորոցաձև, արձանագրությունը՝ հարավահայաց ճիստին, փորագիր, 3 տող.

Աստ հանգչի | այնթապցի Սարգիս Պէտոյեան, | ծնաւ 1910, մեռաւ 1933:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 308): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:



259. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.


Աստ հանգչի | անջրդեցի | Նեգտար | Սուրեան, | ծն(աւ) 1916, | մ(ե)ռ(աւ) 1933 հոկ(տեմբեր) 1:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 2019 համարը և գտնվում է Հակոբ Սուրյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շենսագստոյի առաքելական գերեզմանատան արձ. № 271:



260. Արձանագրություն. շրջապարսպի հյուսիսային մայր դարպասից վեր ազուցված մարմարե սալիկին՝ փորագիր, 8 տող.



Է: Ի յիշատակ հոգւոյն | հանգուցեալ իր հօր՝ Գէորգի | եւ իր մօր՝ Մարիամի շինուցեալ | սոյն դուռն գեղազարդ | ազգ(ային) գերեզմանատան հայոց Հալէպի | արդեամբ եւ ծախիւք քիլիսցի | Միհ. Մովսէս Գ(եորգ) Չաղլասեանի, | յամի տիւտն 1934 թուին:

Հրատ. առաջին անգամ:

261. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարին և մարմարե սալիկին, փորագիր, 13 տող.

Տապանաքարին.

Աստ | հանգչի | տիկ(ին) Սրբուհի Տ(եր)-|Սահակեան, ծնաւ | Արաբկիր, 1844, | հանգաւ 1934 | սեպ(տեմբեր) 29-ին:

Սալիկին.

Աստ հանգչի(ն) | Արագսի Գեճեան, | ծն(եալ) Արաբկիր, 1897, | հ(ա)նգ(եալ) Հալէպ, 1975, | մայրը՝ Ազապի Փալանճեան, | ծն(եալ) 1874, հ(ա)նգ(եալ) 1967:

Հրատ. առաջին անգամ:



262. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևելյան եզրին և արևելահայաց կողին գետեղված մարմարե երկու սալիկներին, փորագիր, 10 տող.

Արևելյան եզրին.

Աստ հանգչին | Խաչիկ Պալեան, | քիլիսցի, | ծն(եալ) 1854, հ(ա)նգ(եալ) 1934, | Գրիգոր Պալեան, | ծն(եալ) 1895, հ(ա)նգ(եալ) 1978:

Արևելահայաց կողին.

Աստ հանգչի | Ջապէլ Սկրեան՝ | ծն(եալ) Պալեան, | 1939-1999:

Հրատ. առաջին անգամ:



263. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ ուղղահայաց կանգնեցված սալիկ, արձանագրությունը՝ այդ սալիկի արևելահայաց ճիստին գետեղված մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի, 1857-1934, | հաճի Ռաֆայել | Թնկրեան, | ծնեալ ի Կ. Պոլիս:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.: Գտնվում էր 6-րդ մասում (1021 համար)՝ Հարություն և Երանուհի Թնկրյանների տապանաքարին կից: Նրանց մասին տես



Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 170:

264. Երկու վրանաձև տապանաքարեր. միաստիճան պատվանդանի վրա, արևմտյան եզրին՝ կենտրոնում թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին, փորագիր, 7 տող.

Կտակարար Հ(այ) Բ(արեգործական) Ը(նդհանուր) Միութեան | Կարապետ Պասմաճեան, | այնթապցի, | 1863-1934: | Տիկ(ին) Նուրիցա Կ. Պասմաճեան, | այնթապցի, | 1875-1935:


Հրատ. առաջին անգամ:



265. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.

Աստ հանգչին | Յարութիւն | թերզի | Մանուկեան, | 1870-1934, | Վահան | Մանուկեան, | 1910-1965: | Մալաթիացի:

Հրատ. առաջին անգամ:



266. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.



Աստ հանգչի | Գէորգ | Կիլիսեբեան, | այնթապցի, | ծն(եալ) 1872, | հանգ(եալ) 1934 օգ(ո)ստ(ոս) 14:

Հրատ. առաջին անգամ:

267. Տապանաքար. ուղղանկյունաձև, տեղահան, արևմտյան եզրին ազուցված թևավոր խաչը չի պահպանվել, արձանագրությունը՝ միմյանց կից երկու սալիկներին, 8 տող.

Սալիկ Ա, ներկագիր.

Աստ հանգչի | Նուրիկ | Մարգարեան, | ծն(եալ) Քիլիս, 1873, | հ(ա)ն(գեալ) Հալէպ, 1934:

Սալիկ Բ (մարմարե), փորագիր.

Աստ հանգչի | Պայծառ Մարգարեան, | ծն(եալ) 1901, հ(ա)ն(գեալ) 1975:


Հրատ. առաջին անգամ:



268. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 8 տող.

Աստ հանգչի | արաբկերցի | տիկին | Մարիցա | Հէճինեան, | ծնեալ 1874, | մէրեալ 1934 | ապ(ր)իլ 9:

Հրատ. առաջին անգամ:



269. Տապանաքար. ուղղանկյունաձև, տեղահան, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Նիկողոս | Ճեպողեան, | ծն(աւ) Ջնգուշ, 1878, | մ(ե)ռ(աւ) 1934, Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 335): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

Ջնգուշը Չնքուշ գյուղաքաղաքն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Դիարբեքիրի նահանգի Տիգրանակերտ գավառի Չնքուշ գավառակում՝ Խարբերդ քաղաքից 58 կմ հարավ: Ներկայումս թուրքերենով արտասանվում է Չյունքյուշ (Çünküş):

270. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.



Աստ հանգչի(ն) | սասունցի(ներ) | Միհրան-Միրո | Միհրանեան, ծն(եալ) 1880, հ(ա)ն(գեալ) 1934, | Խաչիկ-Խաչօ, 1910-1940, | Գ-էորգ-ճօրճ, 1926-1946, | Յոսէփ-Ճուզէֆ, 1931-1941:

Հրատ. առաջին անգամ:

271. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.

Աստ հանգչի | անջրդեցի | Յակոբ | Սուրեան, | ծնաւ 1882-ին, | մեռ(աւ) 1934 | ապր(ի) 19-ին:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է 2019 համարը կրող Նեկտար Սուրյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շէխ-Մագսուտի առաքելական գերեզմանատան արձ. № 259:

Հակոբ Սուրյանը 1912 թ. հունվարի 8-ից մինչև 1913 թ. հունվարի 28-ը «Անջրդիի Վարդանեան կրթասիրաց միութեան» Հալեայի կենտրոնական գործադիր մարմնի անդամ էր: Նույն թվականին միությանը նվիրել է օսմանյան 3 դուրուշ (Կանոնագիր Անջրդիի Վարդանեան կրթասիրաց միութեան, էջ 11, 15-17):



272. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Այս է տապան | Մինաս | Մարտիրոսեան(ի), | կունտողցի, | ծ(նա)ւ 1884-ին, | մ(ե)ռ(աւ) 1934-ին:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Կունտուղը Գունդիկ գյուղն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Բաղեշի նահանգի Մղերդ գավառում՝ Շրմաք քաղաքից 12 կմ հյուսիս-արևմուտք: Ներկայումս, ամենայն հավանականությամբ, Սամանլըք (Samanlık) կամ Օղլաքչը (Oğlakçı) գյուղերից մեկն է:



273. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 11 տող.

Աստ հանգչի | տիկին Մարիամ | Գ. Աթթարեան | ծնեալ Գ. Քարրզճեան, | քիլիսցի, | ծնաւ 1885, ի Քիլիս, | հանգեալ ի տեր, 1934: | Նէ եղաւ իւր ընտանիքին տիպար կիլնը և զառակացը զոլորվագութ մայրը:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է քիլիսցի Երջանիկ և Իսկենտեր Աթթարյանների տապանաքարին կից: Նրանց մասին տես Շէխ-Մագսուտի առաքելական գերեզմանատան արձ. № 1553:



274. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, դեպի ներս կորացված միստերով և կողերով, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգչի(ն) | Պաղտասար | Կ. Գարայեան, | 1889-1934, | Անդրանիկ | Պ. Գարայեան, | 1919-1959: | Մրատունցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Մրատուն քառի ր տառը սխալ է փորագրված, պետք է լիներ ի:



275. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 19 տող.


Աստ հանգչի | Ներսես Քիրքլեան, | ճիպինցի, | 1850-1944: | Աշխարհին կանցնի, | անոր ցանկութիւնն ալ, | բայց այն, որ աստուծօ | կամքը կը կատարէ, | յաւիտեան կը մնայ: | Ա(ւետարան) Յովհ(աննու) 2. 17: | Աստ հանգչի | Կիլենեա Քիրք-

լեան, | ճիպինցի, | 1861-1934: | Ճշմարիտ ճշմարիտ | կըսեն ձեզի, թէ ան, որ | ինձի կը հաւատայ, | յաւիտեան կեանք ունի: | Յովհ(աննու) 6. 4[7]:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 4-րդ մասում (համար 1475): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.:

Ներսեսի և Կյուլենյայի որդու՝ Մինասի մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 769:



Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

278. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգչին | սասունցի | Հայրապետ | Յակոբեան, | ծն(եալ) 1888, հ(ա)ն(զեալ) 1961, | Յարութիւն | Գրաճեան, | ծն(եալ) 1900, հ(ա)ն(զեալ) 1934:
Հրատ. առաջին անգամ:

276. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, դեպի ներս կորացված նիստերով և կողերով, օրորոցաձև, արձանագրությունը՝ հյուսիսահայաց և հարավահայաց նիստերին, փորագիր, 10 տող.

Հյուսիսահայաց նիստին.


Աստ հանգչի | Մեղրակ Փափագեան, | ծն(եալ) 1867, Չմիշկածակ, | հանգ(եալ) 1934 դեկ(տեմբեր) 15:

Հարավահայաց նիստին.

Հայր ... ու թանկագին, | որպէս լոյսն մեր ազքին, | արդէօք ինչ է քո ցարը, | հազիւ հասած քո տունը, | աւանդեցիր քո հոգին, | թողլով մէզի մէջ սուգին:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 1345): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.:



277. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ հյուսիսահայաց նիստին, 5 տող.

Այս է դարբան հանգստեան | վաղամեռ | Երուանդ Կեսո(յ)եանի, | ծն(եալ) ի Կեսարեայ, 1895-ին, | հանգ(եալ) ի տէր, 1934 դեկ(տեմբեր) 1-ի(ն), Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:



279. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչին | Մագսուտեաններ՝ | Աղապապ, 1900-1934, | Բիզանդ, 1907-1977: | Քեսիրիկցի:
Հրատ. առաջին անգամ:




280. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | ասսունցի | Մայրամ | Յակոբեան,
| ծ(նաւ) 1904, ս(եռաւ) 1934:
Հրատ. առաջին անգամ:



281. Տապանաքար. ուղղանկյունաձև, տեղահան, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.



Աստ հանգչի | Մկրտիչ
Խորիկեան, բնիկ սեբաս-
տացի, | ծնեալ-հանգեալ, |
1908-1934: | 10 տարեկա-
նիս | ըրին գաղթական, | 15
դպրոցական, | 21 եղայ դի-
ւական: | Մէկը չեղաւ ցա-
ւիս | դարման, | զիս աս-
տուած | եղաւ պահապան:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում էր 4-րդ մասում (համար 1710): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

282. Տապանաքար. ուղղանկյունաձև, տեղահան, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.

Աստ | հանգչի | մարաշցի | տիկ(ին) | Ֆիլորին-
ցայ | Թէքլէեան, | ծն(եալ) 1909, հ(ա)նգ(եալ) 1934:
Հրատ. առաջին անգամ:



283. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.

Աստ հանգչի(ն) | այնթապցի(ներ) | Մովսէս | Տէ-
յիբնէնճիեան, | ծն(եալ) 1875, հանգ(եալ) 1958 | եւ
որդին՝ Մարի, | ծն(եալ) 1909, հանգ(եալ) 1934:
Հրատ. առաջին անգամ:



284. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | խարբերոցի | Աննակիւ | Պօռու-
ծեան, | ծն(եալ) 1910, | հ(ա)նգ(եալ) 1934(°):
Հրատ. առաջին անգամ:



285. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.

Աստ հանգչի | Անահիտ | Պապիկեան | ...կաշ-
քարաւի... | ... | ծն(եալ) 1924, | հ(ա)նգ(եալ) 1934:
Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.: Գտնվում էր 6-րդ մասում (համար 1095) աշոտցի Պապիկյան տոհմական դամբարանի մոտ (տե՛ս Շեն-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 30), աշոտցի հայր և որդի Հակոբ, Ստեփան Պապիկյանների տապանաքարերին կից (տե՛ս Շեն-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 33, 34):

286. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, դեպի ներս կորացված նիստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 12 տող.

Այս է | տապան | հանգստեան | վաղամեռ | հաճի
Հէրմիների | դուստրն | Լ. Մելքոնե(ա)նի, | սաղմը-
կանցի, | ծն(եալ) ի Հալէպ, 1929 | ապրիլ 8, |
հ(ա)նգ(եալ) ի տէր, 1934 | սեպ(տեմբեր) 19:

Հրատ. *առաջին անգամ*:
Ծանոթ. կրում է 550 համարը:



287. Արձանագրություն. շրջապարսպի արևմտյան դարպասից վեր ագուցված մարմարե սալիկին՝ փորագիր, 5 տող հայերեն, որից ցած՝ փորագիր, նույն բովանդակությամբ 2 տող արաբերեն.

Յիշատակ է դրուս | մեծ Վահիտ Թիւֆէնկճեանէ
| իր հանգուցեալ ծնողաց՝ | Թորոսին եւ Սօֆիային, |
1935 ապրիլ 22:

Արաբերեն.

تبرع ببناء هذا الباب السيد وحيد تفنكجيان | عن روح
والديه طوروس و صوفيا في ٢٢ نيسان سنة ١٩٣٥.

Հրատ. *առաջին անգամ*:



Ծանոթ. Վահիտ Թյուֆենկճյանն իր խոստացած արևելյան դռան փոխարեն (ՊՀԱԳԱՀՏ, էջ 52) կառուցել է արևմտյանը, որն էլ հետագայում փակվել է: Վահիտի մասին տե՛ս Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 321:



288. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երեք սալիկներին, փորագիր, 14 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Սարգիս Բրակ | Տաղլեան, | 1825-
1935, | քիլիսցի:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Սարգիս Սահադճեան, | քիլիսցի,
| ծն(եալ) 1929, հ(ա)նգ(եալ) 1948:

Սալիկ Գ.

Աստ հանգչի | Յովհաննէս | Տաղլեան, | 1911-
1992, | քիլիսցի:

Հրատ. *առաջին անգամ*:



289. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչի(ն) | Դանիէլ Չատիկեան, | ծն(եալ)
1892, Պոլիս, | հանգ(եալ) 1936, | Վարդուիի Հազա-
րեան, | ծն(եալ) 1851, Խարբերդ, | հանգ(եալ) 1935:

Հրատ. *առաջին անգամ*:



290. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.



Աստ հանգչի | նկարիչ | Շաւարշ Յ. Եսայեան, | ծն(եալ) 1854, հանգ(եալ) 13/3/(19)35: | Ի Կեսարեա, Թալլաս:

Հրատ. առաջին անգամ:


Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.: Կրում էր 2477 համարը և գտնվում էր Կեսար Տ. Եսայանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեն-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 512:

Շավարշ Եսայանը եղել է Թալլասի Վարդ-Պատրիկյան վարժարանի տեսուչ և ուսուցիչներից մեկը: 1893 թ. սկզբին, իբրև քաղաքական հանցագործ, ձերբակալվում է. «Շաւարշ Յ. Եսայեան... առաջինն եղաւ Կեսարիոյ եւ շրջակայից բանտարկելոց մէջ. տարեգլխի առաջին գիշերը, ժամը 7-ին երկու հարիւրապետ, ընդի. դատախազի օգնական եւ 30 զինեալ ոստիկաններ սորա տունը կը կոխեն, բոլոր գոյքերն, արկղներն ու սնտուկները թափելէ ու որոնելէ յետոյ, նստարանները եւ մինչեւ իսկ առատադները կը խորտակեն բան մը փնտռելու պատրուակով եւ իր գրական բոլոր թղթերն ու գրքերը մէկտեղ առած, զինքն ալ կը ձգեն բանտը, 48 ժամ շարունակ անօրի ու ծարաւ կը պահեն եւ 6 օր խոնաւ մերկ գետնի վրայ կը պտկեցունեն, չը խնայելով նաև գաւազանի հարուածները»: Կարճ ժամանակ անց Կեսարիայի բանտից փոխադրվում է Գաղատիայի բանտ, որտեղ էլ դատապարտվում է 7 տարվա շղթայակալ բանտարկության («Հնչակ», 1893, № 6, էջ 43-44):

291. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 13 տող.

Աստ | հանգչի | տիկ(ին) Մարիամ Շալայեան, | հայնէցի, | ծն(աւ) 1857, մ(ե)ռ(աւ) 20 ապրիլ 1935: | Տարիքը առած հայ մայրիկ մըն եմ, | բախտն հոս նետեց զիս 4 հովերու դէմ: | Ա՛խ, կուգէի զիրկն իմ երկրի հողին, | դամբանն իմ նախնեաց սրբազան ու հին: | Բարիք ընելու փափաքս էր անբաւ, | որ իր գոհացումն աւաղ չըզըտաւ: | Միրելիքս, եթէ անվերջ յիշեն զիս, | հանգիստ պիտ սքան նշխարս ու հոգիս:

Հրատ. առաջին անգամ:



292. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Մարիամ Նալպանդեան, | քիլիսցի, | ծն(աւ) 1860, | մ(ե)ռ(աւ) 1935 դեկ(տեմբեր) 5:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է քիլիսցի Չեփյուտ Նալպանդյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեն-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 175:



293. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ հարավահայաց նիստին, փորագիր, 3 տող.

Աստ հանգչի | տիկ(ին) Մարիամ Գ. Տաղլըեան, | ծն(եալ) Այնթապ, 1860, հանգ(եալ) Հալէպ, 1935:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում էր 1052 համարը:



294. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ ներկագիր, 4 տող.

Ալիքսան | Ալիքսանի|եան, սաղմու|կացի, 1868-1935:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Սաղմուկան Սաղմկան է:




295. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.

Աստ | հանգչի | կեսարեացի | տիկ(ին) Ովսաննա | ճատիլեան, | ծն(եալ) 1871, | հ(ա)նգ(եալ) 1935
դեկ(տեմբեր) 23:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում էր 1427-Ա համարը:



296. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Գարեգին Յ. Ծիյերճեան, | ծն(եալ) Արաբկիր, 31 յունվ(ար) 1874, | հանգ(եալ) 6
սեպտ(եմբեր) 1935:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. վաճառական Գարեգին Ծիյերճյանը «...բացառիկ դեմք մը Հայկաի ազգային հասարակական շրջանակներու մէջ: Վարել է Բերիո թեմի ազգային գավառական և քաղաքական ժողովների ատենապետութեան պաշտօն, եղած է քաղաքապետա-



րանի «Մեճիս Բտարե»-ի անդամ» (Փղատեան Ա., նշվ. աշխ., էջ 923): 1906 թ. հունիսի 16-ին հիշվում է որպես Բերիո թեմի գավառական ժողովի անդամ (ՀԱԳ, ֆ. 1421, ց. 5, գ. 2, թ. 6): 1908 թ. օգոստոսի 25-ի դրությամբ նորընտիր Քաղաքական ժողովի անդամ էր (նույնի՝ գ. 15, թ. 3), իսկ դեկտեմբերի 11-ին Քաղաքական ժողովի կողմից նշանակվում է ազգային պարտքերը մարելու նպատակով կազմված հանձնաժողովի անդամ (նույնի՝ գ. 17, թ. 5), որից հրաժարվում է 1909 թ. փետրվարի 4-ին ճամփորդելու պատճառով (նույնի՝ գ. 18, թ. 9): 1909 թ. հուլիսի 23-ին մասնակցում է նորընտիր Քաղաքական ժողովի առաջին նիստին և ընտրվում ժողովի ատենադպիր (նույնի՝ գ. 21, թ. 1-2): Հրաժարվում է 1909 թ. հոկտեմբերի 6-ին՝ պատճառաբանելով իր վերջնական մեկնումը Հայկաից (նույնի՝ գ. 22, թ. 1): 1909 թ. ապրիլի 16-ին նշանակվում է «Արկածեղոց նպաստից» հանձնաժողովի անդամ (նույնի՝ գ. 20, թ. 4): 1925 թ. մարտ 21-ի դրությամբ Բերիո թեմի քաղաքական ժողովի ատենապետն էր («Արեւ», 27 մարտ, 1925, էջ 2):

297. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով բևաժոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից չորս սալիկներին, 16 տող.

Սալիկ Ա (մարմարե), փորագիր.

Աստ հանգչի | Աննա Տնկիկեան, | ծն(եալ) 1874, | հանգ(եալ) 6 դեկ(տեմբեր) 1935:

Սալիկ Բ (մարմարե), փորագիր.

Աստ հանգչի | Յարութիւն | Ա. Տնկիկեան, | ծն(եալ) 1861, | հանգ(եալ) 17 դեկ(տեմբեր) 1941:

Սալիկ Գ, ներկագիր.

Աստ հանգչի | Սիրակ | Տնկիկեան, | ծն(եալ) 1896, հ(ա)նգ(եալ) 1968: | Չիմիշքէէք ս. 20:

Սալիկ Դ (մարմարե), փորագիր.

Անժէլ Տնկիկեան, | 1923-2005:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Չիմիշքէէք բառի վերջին չ տառը սխալ է փորագրված, պետք է լիներ գ:

«Չիմիշքէէք»-ը Չմշկածագն է:



298. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած երկու լուսանկարներով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե երկու սալիկներին, փորագիր, 10 տող.

Սալիկ Ա, տապանաքարի երեսին.

Աստ հանգչին | Փիլիպոս Փիլիպոսեան, | ծն(եալ) 1875, հ(ա)ն(գեալ) 1935, | Մանուշակ Փիլիպոսեան, | ծն(եալ) 1905, հ(ա)ն(գեալ) 1977: | Ուրֆացի:

Սալիկ Բ, խաչի պատվանդանի արևելահայաց միատին.

Աստ հանգչի | Բենեամին | Մանուէլեան, | 1910-1997:

Հրատ. *առաջին անգամ:*



299. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևելյան եզրի մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի(ն) | Աշոտեաններ՝ | Խաչատուր, 1875-1935, | Գրիգոր, 1944-1986, | արդնցի: | Վերծին 1926-1994:

Հրատ. *առաջին անգամ:*



Ծանոթ. գտնվում է արդնցի Հոռմիկ, Մանուկ, Սարգիս, Աշոտ, Հայկազ Աշոտյանների տապանաքարերին կից: Վերջիններիս մասին տես՝ Շեն-Սագսուրի առաքելական գերեզմանատան արձ. № 1136, 1289:

300. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, մեկընդմեջ նույն բովանդակությամբ հայերեն և դանիերեն, փորագիր, 8 տող.

Հայերեն.

Քարեն | Եփփե | ի Տանիմարքա, | 1/7/1876, | ի Հալեպ, | 7/7/1935: | Հայոց | բարեկամ:

Դանիերեն.

Karen | Jeppe | i Danmark | 1/7/1876. | I Aleppo | 7/7/1935. | Armeniernes | ven.

Հրատ. *առաջին անգամ:*

Ծանոթ. ծնվել է Կոպենհագենի արվարձաններից մեկում (Մահակեան Ա., նշվ. աշխ., էջ 518): Ուսանում է ծննդավայրի վարժարաններում, ապա դասավանդում այնտեղ (Մեղրակեան



Յ., Ո՞վ է օր. Քարեն Եփփե, «Օշական», 1987, № 1-2, էջ 43): 1903 թ. տեղափոխվում է Ուրֆա՝ ծառայելու բժ. Յոհաննես Լեփսիուսի որբանոցում և ստանձնում 1895 թ. ջարդերից որբացած հայ մանուկների հոգատարությունը (Մահակեան Ա., նշվ. աշխ., էջ 518): Մինչև 1915 թ. շարունակում է առաքելությունն Ուրֆայի Միլլեթ խանի որբանոցում: Ուսմանը զուգընթաց՝ հնարավորություն է տալիս երեխաներին սովորելու նաև արհեստներ: Ուրֆայի որբանոցում զարգացնում է արհեստի երեք ճյուղեր՝ ներկարարություն, աստղձագործություն և կոշիկակարություն (Մեղրակեան Յ., Ո՞վ է օր. Քարեն Եփփե, էջ 43): 1915-1917 թթ. Ուրֆայում գերմարդկային ճիզերի զնով փորձում է օգնել զաղթականների և ազատում իր տանը թաքնված տասնյակ երիտասարդների: 1917 թ. վերջում մեկնում է Դանիա: 1920 թ. տեղափոխվում է Հալեպ և հիմնում ձեռագործի աշխատանոց՝ զաղթական հայ կանանց և աղջիկների համար: Մինչև 1928 թ. արաբական աշիրեթներից ազատում է շուրջ 2000 հայ կանանց և երկսեռ պատանիների (Մահակեան Ա., նշվ. աշխ., էջ 522-524): Ապա անապատից հավաքված հայերի համար հիմնում է 4 գյուղ, որոնցից են՝ Թեյ-Սեմեն և Թեյ-Արմեն (Ջերեջյան Ռ., նշվ. աշխ., էջ 117): 1923 թ. Հալեպում ուներ որբանոց և ասեղնագործարան («Սուրիահայ տարեցոյց», 1924, էջ 235, 236): Որբանոցի համար Միլլան քաղաքատան գնում է ընդարձակ հողատարածք և կառուցելով 70 սենյակ՝ հիմնում է աշխանոց-որբանոց և կտակում Ազգային առաջնորդարանին: Նրա մահից հետո այդտեղ հիմնվում է «Զարեն Եփփե» ազգ. ճեմարանը (Մեղրակեան Յ., Ո՞վ է օր. Քարեն Եփփե, էջ 43-45): 1927 թ. Հալեպում նրա միջոցներով հիմնվում է

Մահական երկսեռ վարժարանը (**Թովուզյան Հ.**, նշվ. աշխ., էջ 274): Հալեպի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցման համար կատարում է նյութական խաշոր նվիրատվություններ (**Մահակեան Ա.**, նշվ. աշխ., էջ 520): Առաքելության առաջին իսկ օրվանից հետո էր մնում կրոնական քարոզչությունից՝ լավագույնս կատարելով մարդկային պարտականությունները: Կարճ ժամանակի ընթացքում սովորում է հայերեն: Իրեն համարում էր հայ առաքելական եկեղեցու անդամ: Նրա կտակի համաձայն՝ մարմինը հայոց եկեղեցական ծեսով ամփոփվում է հայ առաքելական գերեզմանոցում:

1928 թ., երբ Հալեպում տոնվում է նրա գործունեության 25-ամյա հոբելյանը, բողոքում է իրեն տրված «Հայասեր» անվան համար՝ ասելով. «Հայր հայասեր չի կրնար ըլլալ, այլ ազգասեր: Ես ազգասեր հայ մըն եմ և ինչ որ կատարած եմ ու կը կատարեմ,՝ ազգասիրական մղումով է և ուրեմն ոչ արժանի արտայայտուած երախտագիտական զգացումներում» (**Ազատեան Լ.**, նշվ. աշխ., էջ 181):

1935 թ. գարնանը մեկնում է Աբու-Թինա՝ հանգստանալու, սակայն հիվանդանում է, փոխադրվում Հալեպ՝ ֆրանսիական Սեն Լուի հիվանդանոց, որտեղ էլ մի քանի ամիս հետո վախճանվում է: Արտավազդ եպիսկոպոսը ցանկանում է մարմինն ամփոփել Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գավթում, սակայն Սիրիայի ֆրանսիական իշխանությունները չեն թողնում (**Մահակեան Ա.**, նշվ. աշխ., էջ 520, 528):

1996 թ. նրա շիրմից բերված հողով սափորն ամփոփվում է Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի հիշատակի պատի մասնատուփում:

Ունի հրատարակված հոդված (**Քարէն-Եփփէ**, Հանդիպում մը, «Մուրիահայ տարեցոյց», Հալեպ, 1925, էջ 137):

301. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, կոթողաձև, արձանագրությունը՝ արևելահայաց նիստին, փորագիր, 7 տող.

Ընտանեկան դամբարան | Փիլաեան, | Էվերեկ-Ֆէնէսէցի: | Տիկին Սրբուհի | Փիլաեան՝ | ծնեալ Բէօլէեան, 1877, | հանգեալ 1935 յուլիս 7:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ֆենեսե գյուղաքաղաքը գտնվում է Անատոլիայում՝ Կեսարիա քաղաքից 36 կմ հարավ՝ Դևեյի քաղաքից հյուսիս: Էվերեկ գյուղի հետ կազմում էր մի գյուղաքաղաք, որը երկուսի անունով կոչվում էր Էվերեկ-Ֆենեսե: Ներկայումս մտնում է Դևեյի քաղաքի շրջագծի մեջ:



302. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Աստ | հանգչի | այնթապցի | Մարիամ | Չովուրեան, | ծ(նաւ) 1879, մ(եռաւ) 1935:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է այնթապցի Նազար, Եսթեր, Հակոբ, Սիրանուշ, Ասատուր և Թորոս Չովուրյանների տապանաքարերին կից: Նրանց մասին տես Եփեսոս-Մագստոյի առաքելական գերեզմանատան արձ. № 186, 200, 332:



303. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 11 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Մարտիրոս | Աւետիսեան, | բնիկ Խարբերդ մագրացի, | ծն(ած) է Հալեպ, 1881, | մ(ե)ն(ած) է 1935 ապրիլ 25:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Մաթենիկ | Մարտիրոս | Պողոսեան, | 1919-1990:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Մագրան Մեզիրեն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի համանուն գավառում՝ Խարբերդ քաղաքից 5 կմ հարավ-արևմուտք: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Էլազըղ (Elazığ):


Մարտիրոս Ավետիսյանը 1928 թ. նվիրում է բուրվառ (տես Սբ. Աստվածածին եկեղեցու արձ. № 104), իսկ նույն թվականի մայիսի 20-ին նորահիմն Հայաչեն գյուղի եկեղեցուն՝ սրբապատկեր (տես Սբ. Գևորգ եկեղեցու արձ. № 4):



304. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | տ(իկին) Էլմաստ | Սիմո(յ)եան, | քղեցի: | Ծ(նաւ) 1885, | մ(եռաւ) 1935:

Հրատ. առաջին անգամ:



Ճանոթ. Քղի գյուղաքաղաքն Արևմտյան Հայաստանի Կարնո նահանգի համանուն գավառի կենտրոնն է՝ Կարին քաղաքից 96 կմ հարավ-արևմուտք: Ներկայումս կոչվում է Քիղը (Kig'i):

305. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | այնթապցի | Գէորգ | Լախօ- (յ)եան, | ծն(եալ) 1887, | հ(ա)ն(գեալ) 1935:

Հրատ. առաջին անգամ:



306. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչին | տէր և տիկին աշոտցի | Տէլիկեօզեաններ, | Սրապիոն, | ծն(եալ) 1888, հ(ա)ն(գեալ) 1935, | Էլիզ, | ծն(եալ) 1890, հ(ա)ն(գեալ) 1971:

Հրատ. առաջին անգամ:

Ճանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

307. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, դեպի ներս կորացված միստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարի հյուսիսային նիստին, 4 տող.

Աստ հանգչի | մահտեսի Գրիգոր Գասապալաշեան, | ծն(աւ) ի Մերաստիա, հանգեաւ, | 1891-1935:

Հրատ. առաջին անգամ:

Ճանոթ. գտնվում էր 4-րդ մասում (համար 1714): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:



308. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչի | տիկին Ապրշում | Գ(եղամ) Բաստո(յ)եան, | խնուսցի, | ծնեալ ի Մուշ, | 1903, |30-10-(19)35:

Հրատ. առաջին անգամ:

Ճանոթ. Գեղամ Բատոյանը հիշվում է Սիրիայում բնակվող խնուսցիների ցանկում. «Բաստո Օհանեան (ներկայիս՝ Բատոյեան) Գեղամ-հարամիկցի. կ'ապրի Հալեպ և Պէյրուք. առաջնադարձ: Ունի երկու մանչ և երեք աղջիկ, 12 թռռնիկ: Մանչերէն Եղուարդը ուսուցիչ է Պէյրուքի Համազգայինի Նշան Փալանճեան ճեմարանի մէջ»: Ունի հրատարակված մի քանի պարերգեր (Մեղիքեան Ե., Հարք-Խնուս, Անթիլիաս, 1964, էջ 323, 333):

Հարամիկը Հարեմիկ գյուղն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Կարնո նահանգի Խնուս գավառում՝ Խնուսից 14 կմ հարավ-արևելք: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Բելլիթաշ (Bellitas):



309. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Գրիգոր | Կուրդիկեան, | խարբերդցի, | ծն(եալ) 1904, հ(ա)ն(գեալ) 1935:

Հրատ. առաջին անգամ:



310. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 10 տող.

Աստ հանգչի | Գրիգոր | Յովհաննէսեան, | բալուցի, | ծն(եալ) 1905, հանգ(եալ) 1935, | Հալեպ: | Վարդի պէս բացուած գոյնս կը բայլէր, | անուշ հոտերով շատեր կզմայլէր, | երբ որ թորմեցայ մնան չոր խոտին, | կորսուած դեմքս չէր հաւնէր ինծի:

Հրատ. առաջին անգամ:



311. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 8 տող.

Աստ հանգչի | այնթապցի | տիկին | Մերում | Յ. | Աշճըբեան, | ծն(եալ) 1909, | հ(ա)նգ(եալ) 1935:
Հրատ. *առաջին անգամ:*



312. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Անդրանիկ | Տեր-Մանուէլեան, | տիգրանակերտցի, | 1910-1935:
Հրատ. *առաջին անգամ:*




313. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ արևմտահայաց կողին ագուցված մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Յարութին Ռուզնեան, | ծն(եալ) ի Կարին, 1910, | հան(գեալ) ի Հալեպ, 1935:
Հրատ. *առաջին անգամ:*



314. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարի արևմտահայաց կողին, 6 տող.



Աստ հանգչի, | ծ(նալ)-մ(եռալ), | (1)928-(1)935, | այնթապցի | Վարթուհին | Չանազանեան:

Հրատ. *առաջին անգամ:*
Ծանոթ. *այժմ գոյություն չունի:* Տեղահանվել է 2007 թ.: Գտնվում էր 4-րդ մասում՝ 701 համարի տապանաքարին կից:

315. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Միսաք | Չաղացյանեան, | ա-րաբկիրցի, | ծն(եալ) 1856, հ(ա)ն(գեալ) 1936:
Հրատ. *առաջին անգամ:*



316. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | տիկ(ին) Մուլթան | Խաչատուրեան, | Խարբերդ | հիսւէյնիկցի, | 1860-1936:
Հրատ. *առաջին անգամ:*



317. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, խաչակիր, վրանաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողմ, փորագիր, 3 տող.

Այնթապցի | Մուննա Վարդանեան, | ծն(աւ) 1861, մե(ռաւ) 1936:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 1813 համարը: Գտնվում է այնթապցի Մերում և Գևորգ Վարդանյանների տապանաքարին կից և այնթապցի Ներսես Վարդանյանի տապանաքարի մոտ: Վերջիններիս մասին տես Շեն-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 725, 849:



318. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 10 տող.

Այս է | տապան հանգստեան | Մասնոյ | Փրսանց գիղէն | Հայրապետ | Կիրճո(յ)եանի, | ծն(եաւ) 1866, | հանգ(եաւ) ի տէր, ...րդ 1936: | Անցորդք, ասացէք | աստուած ողորմէ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Փրսանց գյուղը Փսանքն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Բաղեշի նահանգի Սասուն գավառի Փսանք գավառակում: Ներկայումս, ամենայն հավանականությամբ, վերանվանվել է Սերիք (Serik):



319. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.



Աստ | հանգչի | Ճօրճի Գոյումճեան, | ծն(աւ) ի Քիլիս, հանգեաւ, | 1871-1936 | օգ(ոստոս) 21:

Հրատ. առաջին անգամ:

320. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | քիլիսցի | Թ(ու)րվանտա | Մխթարեան, | ծնաւ 1872, | հանգեաւ 1936 դեկ(տեմբեր) 1:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 177 համարը:



321. Տապանաքար. կորողաձև, արձանագրությունը՝ արևելահայաց նիստին, փորագիր, 9 տող.

Դամբարան | Թորոս | Թ(ի)ֆէնքճի(ե)ան | գերդաստանի, | բերիացի: Վահիտ | Թուֆէնքճի(ե)ան, | ծնեալ 1873, | վախճ(ա)ն(եաւ) 1936 | ապրել 13:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Վահիտ Թյուֆէնքճիյանը 1908 թ. նոյեմբերի 6-ին Բեռլին քեմի քաղաքական ժողովի կողմից նշանակվում է եկեղեցու երևմտական հաշիվները կարգավորող հանձնախմբի. (ՀԱԴ, ֆ. 1421, ց. 5, գ. 16, թ. 3), իսկ դեկտեմբերի 11-ին՝ տնտեսական խորհրդի անդամ (նույնի՝ գ. 17, թ. 5): 1935 թ. խոստանում է կառուցել Շեն-Մագսուդի գերեզմանատան արևելյան դուռը (ՊՀԱԳԱՀՏ, էջ 52), սակայն կառուցում է արևմտյանը (տես Շեն-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 287):

Ապրել քառի ե տառը սխալ է փորագրված, պետք է լիներ ի:



322. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ քևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Յակոբ Ոսկան, | ծն(եա)լ Կ. Պոլիս, 1874, | վախճ(անեալ) Հալեպ, 11 դեկտ(եմբեր) 1936:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.: Գտնվում էր 6-րդ մասում (համար 523) Ինդրու և Էլիզ Ոսկանների տապանաքարին կից: Ինդրոսը, ամենայն հավանականությամբ, նրա մայրն էր, իսկ Էլիզը՝ քույրը:

Հակոբ Ոսկանը 1908 թ. Հալեպի մերձակայքում տնտեսություն ուներ, որտեղ զիտական մեթոդներով զբաղվում էին այգեգործությամբ, ծաղկաբուծությամբ և անասնապահությամբ: Նույնիսկ Հալեպից դուրս եկող ճանապարհներից մեկը կառուցվել էր հատուկ այս ազարակի համար (**Թոփուզյան Հ.**, նշվ. աշխ., էջ 66-67): 1908 թ. սեպտեմբերի 2-ին Բերիո թեմի քաղաքական ժողովի կողմից նշանակվում է Ազգային դպրոցի հոգաբարձու (ՀԱԳ, ֆ. 1421, ց. 5, գ. 15, թ. 4): 1919 թ. հունվարին ընտրվում է ՀԲԸՄ Հալեպի մասնաճյուղի վարչության անդամ (**Պեղդուստեան Լ.**, նշվ. հոդվ., էջ 477), իսկ 1924 թ. հունիսի 5-ին՝ 5 տարով Ազգային գավառական ժողովի ատենադպիր (**Գապայենեան Պ.**, նշվ. հոդվ., էջ 304: Տես նաև «Մուրիահայ տարեցոյց», Հալեպ, 1925, էջ 319: «Տաբե», 1929, էջ 378):

Ինդրու և Էլիզ Ոսկանների մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 51, 488:



325. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ ելնրագիր, 9 տող.

Աստ | հանգչի | հաճի | Եղիաբեք Մարանկոզեան, | ծն(եալ) | 1880, | հ(ա)նգ(եալ) | 1936, | բալուցի:

Հրատ. առաջին անգամ:



323. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | մարաշցի | տիկ(ին) Տիրուհի | Աղազարեան, | ծնաւ 1875, | մեռաւ 22 նոյ(եմբեր) 1936:

Հրատ. առաջին անգամ:



326. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.



324. Տապանաքար. ուղղանկյունաձև, տեղահան, վերին աջ եզրից կտրված, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Քիլիսցի | Արմենակ | Պետիրեան, | ծ(նաւ) 1876 յուլ(իս) 25, | մ(եռաւ) 25 մայ(իս) 1936:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 183 համարը:

Այս է | դամբան | մարաշցի | տ(ի)կ(ին) Կիրճի | Փամպուգե(ա)նի, | ծն(եալ) 1881, | հ(ան)գ(եալ) 1936 յ(ու)լ(իս) 31:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. կրում է 783 համարը:

328. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ հարավահայաց նիստին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչին | տեր եւ տիկ(ին)՝ | ալնթապցի | Սեյրօն Գապագեան, ծն(եալ) 1867, հանգ(եալ) 1943, | Սեննուշ Գապագեան, ծն(եալ) 1882, հանգ(եալ) 1936:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. Սեյրոն Գապագյանը 1909 թ. հիշվում է Ալնթապի Հաջի Էոմեր խանում գտնվող հայ վաճառականների ցանկում որպես մանուսայի վաճառական (Մարաշեան Գ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 311):



329. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Տառապած հոգի մը | Մաքրուհի | Մարգարեան, | 1885, Անտիոք, | 1936, Հալեպ:


Հրատ. առաջին անգամ:



330. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Արապկիրի Ամպրկա գիւղէն Պօ-ղիօս Ժիժիեան, ծնե(ալ) | 1887, մեռ(ալ) 1936:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. Ամպրկա գյուղը գտնվում է Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի Արաքկիր գավառում՝ Արաքկիր քաղաքից 5 կմ հարավ-արևելք: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Քայաքեսեն (Kayakesen):

331. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարին և մարմնա-րե սալիկին, փորագիր, 11 տող.

Տապանաքարին.

Աստ | հանգչի | մարաշցի | Մայրամ | Գըրմը-ծեան, | ծ(նալ)-մ(եռալ), | 1888-1936:

Սալիկին.

Աստ հանգչի | Յովհաննէս | Գրմգեան, | 1912-1977:

Հրատ. առաջին անգամ:



332. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրու-թյունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 12 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի(ն) | Բչաքճեաններ՝ | Արմենակ, 1888-1936, | Սիրանուշ՝ | ծն(եալ) Չոփուրեան, | 1913-2001:


Սալիկ Բ.

Աստ հանգչին | Ասատուր Չօփուրեան, | ծն(եալ) Ալնթ(ապ), 1903, վ(ա)խճ(անեալ) 1970, | եւ | Թօրոս Չօփուրեան, | ծն(եալ) Ալնթ(ապ), 1906, վ(ա)խճ(ա-նեալ) 1955:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է ալնթապցի Նազար, Եսրեր, Մարիամ, Հա-կոթ Չոփուրյանների տապանաքարերին կից: Վերջիններիս մա-սին տե՛ս Շէխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 186, 200, 302:

Արմենակ Բչաքճյանը ծնվել է Ալնթապում: Չինագործ էր: 1915 թ. Ալնթապում Հարություն Տարագճյանի և Մարգիս Պալա-պանյանի հետ նվիրվում է տարագիրների փրկության գործին.



աքտրականների խմբերից փախցնելով ազատում են աղջիկների, որոնց տեղափրում են հայ ընտանիքներում: Նրանց ջանքերով ազատվում են նաև Արմենակ Թագվորյանը և Բարթամ Դանիելյանը (**Պալապանեան Ս.**, նշվ. աշխ., էջ 64):

333. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | կեսարիացի | Լփրոս Պօգրօ(յ)եան, | ծն(աւ) 1890 մարտ 15, | մե(ռաւ) 1936 նոյ(եմ)բ(եր) 27:
Հրատ. առաջին անգամ:



334. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 8 տող.

Աստ հանգչի | տէրթեօլցի | տիկ(ին) Արաքսի | Ա-
պօխտէֆեան՝ | ծնեալ Շանլեան, ի | Ալէքսանտրէթ,
1894, | մ(ե)ռ(աւ) 1936 նոյ(եմբեր) 1:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. կրում է 1393 համարը:
«Տէրթեօլ»-ը Չորք-Մարզպանն է: Գտնվում է Կիլիկիայում՝ Ադանայի նահանգում՝ Ալէքսանդրետ քաղաքից 28 կմ հյուսիս-արևելք: Թուրքերենով արտասանվում է Դյորթյոլ (Dörtöyl):



335. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.



Աղանի | Թէրէքչեան,
| ծնաւ 1896, | ի Տիգրանա-
կերտ, | մեռաւ 1936:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. այժմ գոյություն չու-
նի: Տեղահանվել է 2007 թ.:
Գտնվում էր 4-րդ մասում՝ 1992
համարի տապանաքարին կից:

336. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 8 տող.

Աստ հանգչի | Խարբերդու | գոմքցի | Նշան | Ար-
գունանեան, | ծն(աւ)-մ(ե)ռ(աւ), | 1900-1936 | յուն-
վ(ար) 14:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. կրում է 3432 համարը:
Գոմք գյուղը գտնվում է Արևմտյան Հայաստանի Խարբերդի
նահանգի համանուն գավառում: Ներկայումս պաշտոնապես
վերանվանվել է Քոչքալե (Kocçkale):



337. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորա-
գիր, 5 տող.

Աստ հանգչի | Թագուհի | Չամպագճեան, | 1900-
1936, | կեսարեացի:
Հրատ. առաջին անգամ:



338. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով քևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչին | ողբացեալ լճեցի | տէր եւ տիկին՝ | Թաղէս Կիրակոսեան՝ | «Ճէլօ(յ)եան», 1887-1962, | Նարդուի Կիրակոսեան, | 1900-1936:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Թաղէս Կիրակոսյանը 1937 թ. օգոստոսի 13-ին ընտրվում է Ազեզ գյուղի Սբ. Թազավոր եկեղեցու թաղական խորհրդի անդամ (**Ղազարեան Ս.**, Հայկական փոքր գաղութներ Ազեզ Աֆրին Արաբ-Փունար, Պէյրոս, 1965, էջ 43):

Լճե գյուղը գտնվում է Արևմտյան Հայաստանի Դիարբեքի մահանգի Լճե գավառակում՝ Տիգրանակերտ քաղաքից 76 կմ հյուսիս-արևելք: Թուրքերենով արտասանվում է Լիջե (Lice):



339. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, կոթողաձև, արձանագրությունը՝ կոթողի արևելահայաց միստին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 14 տող.

Հոս կը հանգչի | Գասպար Մանուչակեան, | ծնաւ Ալպիստան, 1901, | մեռաւ Հալէպ, 1936: | Օտար երկնքի տակ, երբ ազատութեան | արշալոյսը կը ծագեր, ինկար | ցեղիդ թշնամոյն գնդակով, | կեանքիդ բեղմնատրութենէն | ի յիշատակ ինձ ձգելով որբացած | զաւակներդ սիրասուն: | Տ. Մանուչակեան: | Անմոռաց յիշատակիդ | կանգնեցի այս շիրիմտ | Յ. Չազըրեան:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 909 համարը:



340. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.



Աստ | հանգչի | Երուանդ Տալրագճըեան, | ծնաւ 1903, | հանգեաւ 1936:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 4-րդ մասում (համար 1942): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

341. Տապանաքար. դեպի ներս կորացված միստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | այնթապցի | Ներսար | Գարամանուկեան, | ծն(եալ) 1910, | հ(ա)նգ(եալ) 1936:

Հրատ. առաջին անգամ:



342. Տապանաքար. դեպի ներս կորացված միստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.

Աստ հանգչի | սաբաստեցի | Յարութիւն | Ճէվահիրճեան, | ծնաւ 1912, | հանգեաւ 8 օգ(ո)ս(տոս) | 1936:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 1301): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.:

Սաբաստեցի բառի առաջին ա տառը սխալ է փորագրված, պետք է լիներ ե:



343. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսասանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ տապանաքարի արևելահայաց կողմին, խաչի կենտրոնում և պատվանդանի արևելահայաց միստին, փորագիր, 10 տող.

Խաչի կենտրոնում և պատվանդանի արևելահայաց միստին.

Է: | Աստ հանգչի | Վահան | Բ. Մապունճեան, | ծն(եալ) Այնթապ, 1913 յ(ու)(իս) 30, | հ(անգեալ) Հալէպ, 1936 հ(ո)կ(տեմբեր) 31:

Տապանաքարի արևելահայաց կողմին.

Ici repose | Vahan Saboundjian | enleve a l'affection des siens | le 31 octobre 1936 | ...:

Թարգմ. Այստեղ հանգչում է Վահան Մապունճյանը՝ մահացած հարազատների կարոտից 1936 թ. հոկտեմբերի 31-ին ...:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ֆրանսերենի թարգմանությունը՝ Շուշան Մոլոմոնյանի:



344. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսասանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց միստին և տապանաքարի արևելյան եզրին, փորագիր, 5 տող հայերեն, որից ցած՝ մույն բովանդակությամբ 4 տող ֆրանսերեն.

Աստ հանգչի | Անդրանիկ Նաճարեան | Խաթունի որդին, | ծն(եալ) 1915, Քիլիս, | հ(ան)գ(եալ) 1936, Հալէպ:

Ֆրանսերեն.

Ci-git | Antranig Nadjarian, | neen 1915, | deceen 1936.

Հրատ. առաջին անգամ:



345. Տապանաքար. դեպի վեր թեքությամբ նեղացող, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ հյուսիսահայաց միստին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.

Թորոս Չօզկարեան: | Չմբան մէջ ծնած դու գարնան ծաղիկ, | գարուն էր արդէն, երբ թռար երկինք, | Որոնդէսն եղաւ առաջին դամբանդ, | ու այժմը հոս է քու ցուրտ տապանդ, | որուն տակ դըրինք մենք քու ծնողքդ, | մեր բոլոր յոյսը ու քու ալ սէրդ: | Ծն(աւ) Կիրին, 22 դեկտ(եմբեր) 1918-ին, | մ(ե)ն(աւ) յՈրոնդէս, 11 մայիս 1936-ին:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է կյուրինցի Ռուբեն Չոզկարյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 225:



346. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.



Աստ հանգչի | Աննա | Պասմաճեան, | ննջեց ի տէր, 10 | հոկ(տեմբեր) 1936:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.: Գտնվում էր 6-րդ մասում (համար 350-Բ) Ֆերիտե Պասմաճյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 118:

347. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց միստին, փորագիր, 3 տող ֆրանսերեն, որից ցած՝ 1 տող հայերեն.


Հանրի Մ. Պարսամեան:

Ֆրանսերեն.

Henri M. Barsamian, | ne sept 30, 1929, | mort mai 22, 1936.

Թարգմ. Հենրի Մ. Պարսամյան, ծնվեց 1929 թ. սեպտեմբերի 30-ին, մահացավ 1936 թ. մայիսի 22-ին:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 266): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

348. Տապանաքար. քառաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ քևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 11 տող.

Աստ հանգչին | մարաշցի | Պէրթիզեաններ՝ | Տիգրանուհի, 1932-1936, | Արթին, 1937-1940, | Միհրան, 1904-1953, | Մատլէն, 1948-1953, | Մարի՝ ծն(եալ) Մխճեան, 1900-1986, | օր(իորդ) Ալիս, 1938-1987, | Յակոբ, 1929-2005, | Ջաւէն, 1941-2005:

Հրատ. առաջին անգամ:



349. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.



Աստ հանգչի | Խանըմ | Խաչատուրեան, | ծն(եալ) Այնթապ, 1847, | հ(ա)ն-(գեալ) 1937:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. կրում է 74 համարը:

350. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչին | այնթապցի | Աւետիս Անարլեան, | 1857-1937, | Աստղիկ Իսկէնեան, | 1920-1976:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. գտնվում է այնթապցի Ֆերիտե, Նագար, Երանիկ Անարլյանների և Սարգիս, Լուսյա Իսկէնյանների տապանաքարա-

րերին կից: Նրանց մասին տե՛ս Շէխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 354, 932:

Ավետիս Անարլյանը դասավանդում էր Կրթասիրաց վարժարանում (Թորանեան Թ., նշվ. աշխ., էջ 72): Դուստրը՝ Սիրանուշը, 1911 թ. Այնթապում ամուսնանում է Սարգիս Պալապանյանի հետ և ունենում 3 զավակ՝ Սարգիս (ծնվ. 1912 թ.), Նոյեմի (ծնվ. 1914 թ.) և Ավետիս: Վերջինս 1983 թ. ապրում էր Կանադայի Մոնրեալ քաղաքում (Պալապանեան Ս., նշվ. աշխ., էջ 12, 50-51):

351. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևելահայաց կողմին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Մանուէլ Մ. | Թօփալաշեան, | կիւրիւնցի, | ծնաւ 1861, | հանգեաւ 1937:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է կյուրիւնցի Ֆերիտե Թոփալաշյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տե՛ս Շէխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 405:



352. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ ներկագիր, 13 տող.

Սերասատացի Լօլօ Կօտոշեան: | Իւր ունեցածը | նուիրած է | ՀԿԽ խնամալկալութեան՝ ձեռ(ա)մբ Սեր(աստիոյ) վեր(ա)շ(ինաց) | միութեան | Հալէպի | մասնաճումղի | վարչութեան, | 1934: | Ծն(եալ)-հ(ա)ն-(գեալ), | 1870-1937:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 4-րդ մասում (համար 1825): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:



353. Տապանաքար. վեց փոքր սյուներով, արձանագրությունը՝ սյուների ներսում զետեղված և վերնամասում կամարածև սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Ներսես Տրենց | Մարգարեան, ի | ծնեալ Կ. Պօլիս, | 1870, հ(անգեալ) 1937 դ(եկտեմբեր) 10:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 260 համարը:



354. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգչին | մայր եւ որդի | Անսրլեաններ՝ | Ֆերիտէ, 1872-1937, | Նազար, 1900-1983, | այնթապցի, | Երանիկ, | 1912-1995:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է այնթապցի Ավետիս Անսրլյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական զերեզմանատան արձ. № 350:



355. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, դեպի ներս կորացված միստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ հյուսիսային միստին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | քիլիսցի | Պետրոս Պերպերեան, | ծն(ալ) 1875, մե(ռալ) 1937 փետ(րուար) 11:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. կրում է 571 համարը: Գտնվում է քիլիսցի Տիգրան Պերպերյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական զերեզմանատան արձ. № 1507:

356. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | այնթապցի | տիկ(ին) Տուշխուն | Մինասեան, | ծն(ալ) 1876, մ(ե)ռ(ալ) 1937:

Հրատ. առաջին անգամ:



357. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Հայկ | Մեսրոպեան, | ծն(եալ) 1877, հ(անգեալ) 1947, | ուրֆացի:

Հրատ. առաջին անգամ:





Ծանոթ. Հայկ Մեսրոպյանը հրաշքով փրկվել է 1895 թ. Համիդյան ջարդերից: Առաջին աշխարհամարտի ժամանակ ծառայում էր Օսմանյան բանակում: 1918 թ. վերջին վերադառնում



է Ուրֆա, մասնակցում 1920 թ. ինքնապաշտպանական մարտերին՝ միևնույն ժամանակ անդամակցելով պարենավորման մարմնին: Այնուհետև մինչև 1923 թ. գաղթը անդամակցում է Ուրֆայի ազգային միությանը, որից հետո հաստատվում է Սիրիայի Արաբ-Փունյար գյուղում: Երկար տարիներ տեղի ՀԲԸՄ վարչության անդամ էր (**Մահակեան Ա.**, նշվ. աշխ., էջ 1330): Ավելի ուշ գաղթում է Հալեպ, որտեղ էլ վախճանվում է:

358. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, վրանաձև, պատվանդանի երրորդ աստիճանը դեպի ներս, կորացված նիստերով և կողերով, արձանագրությունը՝ վրանաձև տապանաքարի հյուսիսահայաց, հարավահայաց նիստերին և արևելահայաց կողին, փորագիր, 20 տող.



Հյուսիսահայաց նիստին.
Այս է տապան | Պարսամ Մոսիկեանի: | Ծնեալ ի
Խարբերդ 1880 յուլիս 25, | հանգեալ 28 մարտ 1937
ի Հալէպ:

Հարավահայաց նիստին.
Այս շիրմաքար տարաշխարհեայ, | ուր կը հանգ-
չի կեանք մանձկարեայ, | համեստ զինուր էր ան գի-
տակ, | վեհ դրօշակին Ս(ոցեալ) Դ(եմոկրատ)
Հնչակ, | զի հաւատամքն եղաւ ուխտին | հայրենա-
ւանդ իր Նաիրին, | որուն վերելքն, աւաղ, անտես |
փակեց աչքերը մահատես, | երանութեան մէջ խա-
ղաղիկ, | ստղանտական Պարսամ Մոսիկ:

Արևելահայաց կողին.
Կանգնեց | շիրմաքարս | տիկին | Թեվրիզ | Տեր-
| խաչատուրեան:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. խուլագյուղցի Պարսամ Մոսիկյանն Ուրֆայի արար-
ների և բուրբերի հարեմներից 1918-1923 թթ. բազմաթիվ հայ կա-
նանց և երեխաների գաղտնի փախցնում է և ուղարկում Հալեպ
(**Ճիզմեճեան Մ.**, Խարբերդ եւ իր զաւակները, Ֆրեզոնյ Քալիֆոր-
նիա, 1955, էջ 662-663): 1928 թ. Համախարբերդցիական ընդհա-
նուր միության վարչության անդամ էր (**Վահէ Հայկ**, նշվ. աշխ., էջ
1048):

359. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արձանագրությունը՝ ելնդագիր, 9 տող.

Աստ | հանգչի | եղեսեացի | հաճի Յակոբ |
Պոեաճեան, | ծնաւ | 1880, | մնջեց ի տէր, | 8 սեպ-
տ(եմբեր) 1937:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. կրում է 14 համարը:



360. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝
մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.



Երեմիա | Զօպանեան, |
սեբաստացի, | 1881-1937:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում էր 4-րդ մա-
սում (համար 1765): Այժմ գոյու-
թյուն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

361. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ոճավորված, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ հարավահայաց և հյուսիսահայաց նիստերին՝ ելնդագիր, 2-ական տող հայերեն և արաբերեն.

Հարավահայաց նիստին.

Եռուֆ Կարապետ Թապախեան, | Ծն(աւ) 1886, մեռ(աւ) 1937:


Հյուսիսահայաց նիստին.

Արաբերեն.

.المرحوم يوسف كرابيت طباح | ولد سنة ١٨٨٦ توفي سنة ١٩٣٧

Թարգմ. Հանգուցյալ Յուսեֆ Կարապետ Թապախ, Ծն. 1886 թ., մահ. 1937 թ.:

Հրատ. *առաջին անգամ:*




362. Տապանաքար. դեպի ներս կորացված նիստերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ հարավահայաց նիստին, փորագիր, 3 տող.


Աստ հանգչի | չմիշկեգեկցի Յարութիւն | Փլան-ճիեան, Ծ(մեալ) 1887, հ(անգեալ) 1937 մարտ 19:

Հրատ. *առաջին անգամ:*

Ծանոթ. «Չմիշկեգեկ»-ը Չմշկածագն է:



363. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին ազուցված մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.




Աստ հանգչի | Տիգրան Շահինեան, | բնիկ եղևսեացի, | Ծն(եալ) 1890-ին, | հանգ(եալ) ի տէր, 1937 յունվար 18-ին:

Հրատ. *առաջին անգամ:*

364. Տապանաքար. դեպի ներս կորացված նիստերով և կողերով, օրորոցաձև, արձանագրությունը՝ հյուսիսահայաց նիստին, ելնդագիր, 8 տող.

Աշոտցի: | Ծն(ուն)դ 1895, մեռ(աւ) 23 ապրիլ 1937: | Դիտէ, անցորդ, դու զայս տապան, | ուր հանգչի դերցակ Յակոբ Սկրեան, | լոյս ճրագն էր իր տանն ու գերդաստանին, | որ հանգաւ անգութ մահուան ...ա..., | թողուց աշխարհ ու հինգ որբեր, | հայր մը անմխիթար յաւէտ անտէր:

Հրատ. *առաջին անգամ:*



365. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 13 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչին | Փալաքեաններ՝ | Մարիամ, 1860-1956, | Ալթուն, 1880-1963, | Թարվիզ Պեճո-(յ)եան, | 1895-1937: | Չարսանճաք:

Սալիկ Բ.


Աստ հանգչին | Գարակաւորեաններ՝ | Տիգրան, 1905-1983, | Արմենուի, 1923-1993, | Գրիգոր, 1953-1994: | Չարսանճաք:

Հրատ. *առաջին անգամ:*
Ծանոթ. *Չարսանճաքը Չարսանջակ գավառն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգում:*



366. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Աստ | հանգչի | Սմբատ Պոյաճեա[ն] | չմշկածակ-
ցի, | ծն(եալ) 1896, | հ(ա)նգ(եալ) 17 յուլ(իս) 1937:
Հրատ. *առաջին անգամ*:



367. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | պիտլիզցի | Ազնիվ | Գրիգորեան,
| ծն(եալ) 1897, հ(ա)ն(գեալ) 1937:
Հրատ. *առաջին անգամ*:

Ծանոթ. Պիտլիզը Բաղեշն է:



368. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝
փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | սասունցի | Տիգրանուհի | Աբգա-
րեան, | ծն(ալ) 1900, | մեռ(ալ) 1937 մարտ 17:
Հրատ. *առաջին անգամ*:



369. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա,
ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 9 տող.

Աստ հանգչի(ն) | Կիլիզար | եւ թորնիկը՝ | Վար-
դուհի | Շարո(յ)եան, | ծն(ալ) 1900, մ(եռալ) 1937: |
Մարտիրոս | Շարոյեան: | Մշքէղի:

Հրատ. *առաջին անգամ*:

Ծանոթ. «Մշքէղ»-ը Մջգեղն է:



370. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝
փորագիր, 4 տող.

Արմենակ Կիլանճեան, |
Խարբ(երդ), Գոմք, | ծն(ալ)
1902, մեռ(ալ) 1937:
Հրատ. *առաջին անգամ*:



371. Տապանաքար. ուղղանկյունաձև, տեղահան, արձանա-
գրությունը՝ արևելահայաց կողմ, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | այնթապցի | Խաչատուր | Բաթա-
(յ)եան, | 1908-1937:

Հրատ. *առաջին անգամ*:

Ծանոթ. կրում է 996 համարը:

Տապանաքարի երեսին բարձրաքանդակ է՝ ափի մեջ ատրճա-
նակ:



372. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | տիկ(ին) Մանուշակ Գասպարեան, | ծն(եալ) Խարբերդ, 1915, | հանգ(եալ) 1937 | յունիս 25:

Հրատ. առաջին անգամ:



373. Տապանաքար. ուղղանկյունաձև, վերին ձախ եզրից կտարված, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | օր(իորդ) Լուսին Գույումճը|-Հեննէեան, | ծն(ալ) 1916, մե(ռալ) 1937:

Հրատ. առաջին անգամ:



374. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Մնուշ | Տէյիրմէնճեան, | ծն(եալ) 1854, Տիգրանակէրտ, | հանգ(եալ) ի տէր, 17 դէկ(տեմբեր) 1938, | Հալւէպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.: Գտնվում էր 6-րդ մասում (համար 676)՝ Գևորգ Տէյիրմենճյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 678:



375. Գամբարան. քառանկյուն, ոճավորված, արձանագրությունը՝ կենտրոնում գտնվող սալիկին, ներկագիր, 12 տող.




Աստ հանգչին | այն-թապցի | Ռերեկա | Ժամկոչեան, | ծն(եալ) 1896, | հ(անգեալ) 1957 սեպ(տեմբեր) 10, | Յովհաննէս | Չիթճեան, | 1860-1938, | Մէննուշ | Չիթճեան, | 1874-1943:

Հրատ. առաջին անգամ:



376. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, ներկագիր, 10 տող.



Աստ հանգչին | էվէրեկցի | Յովհ(ա)ն | Եուսուֆեան, | 1868-1964, | Ղատըն Գուգեան, | 1865-1938, | Հնազանդ | Եուսուֆեան, | 1881-1946:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.: Գտնվում էր 4-րդ մասում (համար 2001)՝ Էվերեկցի Տիրուհի և Հակոբ Յուսուֆյանների տապանաքարին կից: Վերջիններիս մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 31:

377. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.

Աստ հանգչի(ն) | Ներսէս | Պարոնեան, | ծն(եալ) 1869-1938 հ(ու)ն(ուար) 22, | տիկ(ին) Վիքթորեա | Պարոնեան՝ | ծն(եալ) Գուգուկեան, | ծն(եալ) 1888, Այնթապ, | հ(ա)ն(գեալ) 1963 յ(ու)ն(իս) 5, Հալւէպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է այնթապցի Մարիամ Պարոնյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 116:


Ներսես Պարոնյանն Այնթապի օրոյ ամենամեծ զտարանի և արտադրամասի սեփականատերն էր: Եղել է Ներսեսյան վարժարանի, իսկ 1911 թ.՝ Ատենական երկրորդական վարժարանի իրագրարձության անդամ (Մարաֆեան Գ., նշվ. աշխ., հ. Բ, էջ



379. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | տիկ(ին) | Նարթուի | Ջաղացպա-
նեան, | արաբկերցի, | ծն(աւ) 1880, մե(ռաւ) 1938:

Հրատ. *առաջին անգամ*:



380. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարին և մարմարե սալիկին, փորագիր, 16 տող.

Տապանաքարին.

Աստ հանգչի | պէհեսնեցի | Յարութիւն | Ասա-
տուրեան, | 1881-1938, | Հալէպ:

Սալիկին.

Աստ հանգչին | տեր եւ տիկին | Ասատուրեան-
ներ՝ | Յարութիւն, | ծն(եալ) 1881, հ(ա)ն(գեալ) 1938,
| Ովսաննա, | ծն(եալ) 1892, հ(ա)ն(գեալ) 1977, | Եդ-
սա, | ծն(եալ) 1865, հ(ա)ն(գեալ) 1957: | Պէհեսնցի:

Հրատ. *առաջին անգամ*:



771): Կրթասիրաց միության հիմնադիրներից է (հիմն. 1924 թ. Հալէպ): Նորակազմ միությանը նվիրել է 2 օսմ. ոսկի (**Թորանեան Թ.**, Կրթասիրաց մշակութային միութեան..., էջ 39):

Սարաֆյանը Ներսես Պարոնյանի ծննդյան թվականը սխալմամբ գրել է 1873 (**Մարաֆեան Գ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 771):

378. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.

Աստ | հանգչի | Յովհաննէս | Ամսիեան, | այն-
թապցի, | ծն(աւ)-մահ(ացաւ), | 1875-1938:

Հրատ. *առաջին անգամ*:



381. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 10 տող.



Սալիկ Ա.

Աստ հանգչի | հ(ա)ճ(ի) Մանուէլ | Իսքէնտէրեան, | այնթապցի, | 1882-1938:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | տիկ(ին) Եփրոս Իսկէնտէրեան | ծն(եալ) Կէտիկեան, | Այնթապ, 1892, | մեռ(աւ) Հալէպ, 1975-ին:

Հրատ. առաջին անգամ:

382. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, դեպի ներս կորացված նիստերով և կողերով, օրորոցածև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 3 տող.



Աստ հանգչի | Յովհաննէս Մարգարեան, | ծն(եալ) 1884, հանգ(եալ) 1938:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 552): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.:

383. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | այնթապցի | Մարիամ Պիլեմ-ճեան, | ծնեալ 1885, | մեռեալ 1938 յունիս 16:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է այնթապցի Երվանդ Պիլեմճյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շելս-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 1484:



384. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 12 տող.

Աստ հանգչի | Եսայի Գալլոլեան, | ծն(եալ) Մարաշ, 1890, հանգ(եալ) Հալէպ, 1938: | Նետելով քեզ ինքնաշարժէն | շուրջն անիծեալ Շէտտատէի, | ուր շատ հայեր կորսուած են, | հոգիդ խրելց մահն ահռելի, | սրտիս մընաց կըրակն անմար | ու յիշատակդ գերտ պահապան: | Հող տուր քովդ ինձի համար, | ալ իմ վերքիս չըկայ դարման: | Լուսիա Ե. Գալլոլուեան:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.: Գտնվում էր 4-րդ մասում (համար 2324)՝ մարաշցի Հովհաննէս Գալլոլյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շելս-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 730:

385. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 9 տող.

Աստ | հանգչի | այնթապցի | Նազար | Գարապաշեան, | ծն(ուն)դ 1891, | մեռաւ | 18 հոկ(տեմբեր) 1938:

Հրատ. առաջին անգամ:



386. Տապանաքար. դեպի ներս կորացված նիստերով և կողերով, ուղղանկյունաձև, տեղահան, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Յարութիւն | Արսլանեան, | ծն(եալ) 1895, Մարաշ, | հանգ(եալ) 1938, Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:



387. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 14 տող.



Աստ հանգչի | սասունցի Գևորգ | Մատոյ Կրօ(յ)եան, ծն(եալ) | 1900-ին Շրաունաց | գիւղը, վախ(ճանեալ) 1938 | յուլիս 27-ի(ն), Հալէպ: | Ով դաժան մահ, | անգութ ոխերիմ, | ջնջեցիր իմ յոյսերս | ժպտուն, չխնայելով | չորս որբերուս իմ, | որոնք ուրախ միակ | հորմով, խլեցիր | երջանկութիւննին:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Շրաունացի հավանաքար Շատուրանք գյուղն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Բաղեշի նահանգի Սասուն գավառի Հազգո-Խարջոզ գավառակում:

388. Տապանաքար. քառաստիճան պատվանդանի վրա, դագաղաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Սիրանուշ | Պոյաճեան՝ ծն(եալ) | Փիրանեան, | 1900-1938:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.: Գտնվում էր 6-րդ մասում (համար 554)՝ Հայկ Պոյաճեանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեն-Սագսուրի առաքելական գերեզմանատան արձ. № 887:

389. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգ(չ)ին | Խարգօ, Մարիամ | Հոթոյեան-(ներ): | Խար(գօ), 1892-1960, | Մար(իամ), 1900-1938: | Մասունցի:

Հրատ. առաջին անգամ:



390. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | անտիեօքցի | Սիրանուշ Թաշճի-| Խլեասեան, | ծն(եալ) 1901, | հանգ(եալ) 1938:

Հրատ. առաջին անգամ:



391. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 8 տող.

Աստ հանգչին | Կիլիզար | Զօրիկեան, | ծն(եալ) 1895-1965, | Էլմաստ | Աւետիսեան, | ծն(եալ) 1905-1938: | Մասունցի:

Հրատ. առաջին անգամ:



392. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, կոթողաձև, արձանագրությունը՝ կոթողի հարավահայաց նիստին ազուցված մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.



Աստ | հանգչի | Կարապետ | Անտոնեան, | ծն(եալ) ի Պրուսա, 1907, | վախ(ճանեալ) 1922, | փոխ(ա)դ(րեալ) 1938:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 225 համարը:

393. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 9 տող.



Աստ հանգչի | տար-
սոնցի | Փերուզ | Պէշի-
նեան: | 3 ամիս հարս | եղա:
| Ծն(աւ) 1909 ս(ա)ր(տ) 20, |
մե(ռաւ) 1938 յ(ու)լ(իս) 16:
Հրատ. *առաջին անգամ:*
Ծանոթ. *Տարսոն քաղաքը
գտնվում է Կիլիկիայում: Ներկա-
յումս պաշտոնապես վերանվան-
վել է Թարսուս (Tarsus):*

տացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մար-
մարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Մեմակիլ | Քիրքճիեան, | եօզ-
ղատցի, | ծն(աւ) 1916, | մեռ(աւ) 1938:

Հրատ. *առաջին անգամ:*



394. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | եօզղատցի | Հայրապետ | Ուլի-
կեան, | ծն(եալ)-հանգ(եալ), | 1914-1938:

Հրատ. *առաջին անգամ:*

Ծանոթ. «Եօզղատ»-ը *Յոզղաք քաղաքն է: Գտնվում է Անա-
տոլիայում: Թուրքերենով արտասանվում է Յոզգաթ (Yozgat):*



397. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, հանգուց-
յալի բարձրաքանդակով թևավոր խաչ, արձանագրությունը՝
տապանաքարի երեսին և խաչի պատվանդանի արևելահայաց
ու արևմտահայաց նիստերին ագուցված մարմարե սալիկներին,
փորագիր, 28 տող.



395. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | այնթապցի | Դանիել | Քիլեճիեան,
| ծն(աւ) 1916, ս(ե)ռ(աւ) 1938:

Հրատ. *առաջին անգամ:*



Խաչի արևմտահայաց նիստին.

Աստ հանգչի(ն) | Մուրէն Մէխեան, | ծնեալ Հա-
լէպ, 1923, | զոհ Մուրատ գետի, 1938, | Միհրան
Մէխեան, | ծն(եալ) Էսկիշէհիք, | հանգեաւ Պէյրութ,
| 25 փետրվար 1942:

Տապանաքարի երեսին.

Կերթամ, մայրիկ, ձեռքերդ ինձ տուր, | համբուրե
ի՛նձ, սիրտդ զովացուր: | Եփրատ գետը մեզ կսպասե
այսօր, | ալ չեմ դիմանար, մնաս բարով: | Եփրատի
ջուրը խորունկ եւ աղտոտ, | մայրական սերդ ինձի է
կարօտ, | ձերքեդ փախաւ սրտի մի հատոր, | կսպա-

396. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհե-

սեմ անոր, թէ մինչ այսօր: | Մեռած անմեղներ հազար ու հազար, | մարմիննին եղաւ պատառ ու պատառ, | հոգիներ կողջունեն այսօր զիրար, | ես ալ կերթամ ըլլալ ատոնց հարմար: | Հրաժեշտի նամակս այսօր | դմբած մատերով կը գրեմ կոր, | պիտ կարդաս իմ նամակը լալով, | բայց կոչեմ վերջին մնաք բարով:

Խաչի արևելահայաց նիստին.

Աստ հանգչի | Նազարէթ Գաչանեան, | ծն(եալ) Պանտրմա, 1908, | հ(ա)նգ(եալ) հ(ո)կ(տեմբեր) 25 1996:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 97 համարը:

Էսկիշեհիր քաղաքը գտնվում է Անատոլիայում: Թուրքերենով արտասանվում է Էսքիշեհիր (Eskişehir):

398. Տապանաքար. օրորոցած, արձանագրությունը՝ փորագիր, 8 տող.



Աստ հանգչի | սասունցի | Վարդուհի | Մովսէսեան, | ծն(եալ) 29-8-(19)31, | հ(ա)նգ(եալ) 29-11-(19)38, | Խաչերի աղչիկ(ը), | մեշգեղցի:

Հրատ. առաջին անգամ:


Ծանոթ. Մեշգեղը Մջգեղն է:

399. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունածև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով քևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Է: | Ազշեհիրցի | Գրիգոր Զօհրապ | Գ. Չազըեան, | ծն(ուն)դ 22 ապր(իլ) 1937, Դ(ա)մ(ա)ս(կոս), | մահ(ացաւ) 26 փետ(րուար) 1938, Հ(ա)լ(ե)յ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ազշեհիր քաղաքը գտնվում է Անատոլիայում: Թուրքերենով արտասանվում է Աքշեհիր (Akşehir):



400. Տապանաքար. ուղղանկյունածև, արձանագրությունը՝ փորագիր, 8 տող.



Այս | է | տապան | Մարիամ | Ինճեճիկեան(ի), | սերաստացի, | ծ(նաւ) 1937 յ(ուն)վ(ար) 16, | մ(եռաւ) 1938 փ(ետրուար) 29:

Հրատ. առաջին անգամ:

401. Տապանաքար. ուղղանկյունածև, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | մարաշցի | Կատար Գապիշեան, | ծն(եալ) 1855, հ(անգեալ) 1939:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 898 համարը:



402. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, դեպի ներս կորացող նիստերով և կողերով, ուղղանկյունածև, արձանագրությունը՝ հյուսիսային նիստին, ելնդագիր, 3 տող արաբերեն.

المرحومة وردة صايغ | ارملة خجادور... | ولدت ١٨٥٧، توفيت ١٩٣٩

Թարգմ. Հանգուցյալ Ուարտե Սայեղ: Այրին Խաչատուր ...ի, ծն. 1857 թ., մահ. 1939 թ.:

Հրատ. առաջին անգամ:



403. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | խարբերդի | տ(ի)կ(ի)ն Էլմաս Մաղազեան, | ծն(աւ) 1859, մե(ռաւ) 1939:

Հրատ. *առաջին անգամ*:



404. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Մայր եւ աղջիկ՝ | Մարիամ Քեչիշեան, | ծն(եալ) 1859-1939, | այնթապցի, | հաճի Խաթուն | Քեչիշեան, | ծն(եալ) 1890-1963:

Հրատ. *առաջին անգամ*:



405. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևելահայաց կողմին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչի | տիկին | Ֆերիտ Գեորգ | Թօփ-պաշեան, | կիրիւնցի, | ծնաւ 1863, | հանգեաւ 1939:

Հրատ. *առաջին անգամ*:



Ծանոթ գտնվում է կյուրիցի Մանվել Թոփպաշյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 351:



406. Տապանաքար. ոճավորված, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչին | իրաւաբան Յակոբ Գարամանուկեան, | 1864-1939, | ճարտարագէտ Նուպար Գարամանուկեան, | 1905-1982, | զօրավար Արամ Գարամանուկեան, | 1910-1997:

Հրատ. *առաջին անգամ*:




Գակոբ Գարամանուկեան

Ծանոթ. Հակոբ Գարամանուկյանն Այնթապի Բահան բաղի Ազգ. Հայկազյան վարժարանի հիմնադիրներից էր, հոգաբարձության անդամ և ուսուցիչ: Մինչև տեղահանությունն Ատենական վարժարանի հոգաբարձության մշտական անդամներից էր, ինչպես նաև Ներսեսյան և Հայկանուշյան վարժարանների հոգաբարձության անդամ: 1915 թ. տարագրվում է Սիրիայի Սելեմիե գյուղաքաղաք, 1916 թ.՝ Հալեպ: Նշանակվում է Գաղթականաց խնամակալ մարմնի անդամ և մեծապես օգնում գաղթականներին: Երբ անգլիացիները գրավում են Այնթապը, վերադառնում է և անդամակցում Ազգային միությանը, մասնակցում ինքնապաշտպանությանը՝ որպես «Իմքիզաճ Գոմիսիոն»-ի անդամ: Այնթապի հանձնումից հետո տեղափոխվում է Հալեպ, որտեղ անդամակցում է Այնթապի հայրենակցական միությանը և մասնակցում Հալեպի Կրթասիրաց վարժարանի հիմնադրմանը (1924-25 թթ.) և դառնում խնամակալության անդամ (**Մարաֆեան Գ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 762): 1929 թ. Բերիոթ քեմի Դատաստանական խորհրդի ատենապետն էր («Տարես», 1929, էջ 379): Ամուսնանում է Մարիամ Լեյլեկյանի հետ (**Պապայեան Ե.**, նշվ. աշխ., էջ 628-629): Ունեն 6 զավակ՝ 4 աղջիկ և 2 տղա՝ Արամ և Նուպար (**Մարաֆեան Գ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 762): Նրա օրագրից մի հատված հրատարակվել է (տես՝ **Պապայեան Ե.**, նշվ. աշխ., էջ 114-117):

Նուպար Գարամանուկյանը ծնվել է Այնթապում: Նախնական ուսումը ստացել է նախ Այնթապի Ատենական վարժարանում, ապա 1920-1923 թթ.՝ Աղեքսանդրիա քաղաքի ֆրանսիական դպրոցում: Կնոջ անունն Ալիս էր, ունեն երեք զավակ՝ Հակոբ, Մարիա և Տիրան: ՀԲԸՄ-ի և Այնթապի հայրենակցական միության անդամ էր: Հալեպի առաջնորդարանին նվիրում է հոդամաս՝ ազգային ծերանոցին կից: Սիրիական կառավարության հանձնարարությամբ՝ որպես կապալառու, Սիրիայի գանազան շրջաններում կառուցում է 160-ից ավելի կամուրջներ, ջրամբարներ, դպրոցներ, հիվանդանոցներ և ճանապարհներ (**Պապա-**

յեան Ե., նշվ. աշխ., էջ 639): 1981 թ. Սբ. Աստվածածին նոր եկեղեցուն նվիրում է քրդական երկու գորգ (**Հինտոյեան Զ.**, նշվ. աշխ., էջ 92):

Արամ Գարամանուկյանը ծնվել է Այնթապում: Ուսանել է ծննդավայրի Ազգ. Ատենական վարժարանում, Հալեպի ազգ. վարժարանում և «Ֆրեր Մարիստներ»-ի քոլեջում: 1932 թ. ընդունվում է Դամասկոսի զինվորական վարժարան և ավարտում 1934 թ.՝ ստանալով հրետանու բաժնում փոխտեղակալի աստիճան: 1938 թ. ստանում է տեղակալի աստիճան և ուղարկվում Ֆրանսիա՝ մասնագիտությունը կատարելագործելու «École d'Application d'Artillerie» ուսումնական հաստատությունում: Ավարտում է 1939 թ. և վերադառնում Սիրիա: 1941 թ. Սիրիայում մասնակցում է անգլո-ֆրանսիական կռիվներին և արժանանում Ֆրանսիական պատերազմի խաչի շքանշանին: 1942 թ. ստանում է հարյուրապետի կոչում: 1945 թ. Փարիզում հետևում է սպայակույտի վարժարանի դասընթացներին «École Supérieur de guerre»-ում՝ արժանանալով սպայակույտի սպայի տիտղոսին: 1946 թ. վերադառնում է Սիրիա: Նորանկախ կառավարությունը նրան է հանձնում հրետանու գումարտակներից մեկի հրամանատարությունը: 1947 թ. ստանում է հազարապետի կոչում: 1948 թ. մասնակցում է արաբա-իսրայելական պատերազմին և Սիրիայի նախագահի կողմից պարգևատրվում «Սիրիական արժանեաց» շքանշանով: 1948-1957 թթ. սիրիական հրետանու ընդհ. հրամանատարն էր: 1949 թ. ստանում է փոխգնդապետի կոչում: Սիրիական կառավարության կողմից պարգևատրվել է նաև «Պատերազմական», «Անձնվիրության», «Պաղեստինյան կռիվներ», Լիբանանի կառավարությունից՝ «Արժանյաց», իսկ Ֆրանսիայի կողմից՝ «Պատերազմական խաչ», «Légion d'honneur» շքանշաններով (**Մարաֆեան Գ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 779): Հմմտ. Սուրիական բանակի հայ զորավարները, «Գեղարդ. Սուրիահայ տարեգիրք», Հալեպ, 1975, էջ 405: **Շողվողեան Ա.**, Հայերու նպաստը սուրիական մեր հայրենիքին,



Նուպար Գարամանուկյան



Արամ Գարամանուկյան

«Գեղարդ. Սուրիահայ տարեգիրք», Հալեպ, 1975, էջ 402): 1958 թ. անցնում է թոշակի: 1961 թ. Հալեպ քաղաքի կողմից ընտրվում է Սիրիական խորհրդարանի և Սահմանադիր ժողովի անդամ: 1964 թ. հետևում է Բեյրութի ֆրանսիական իրավագիտական ֆակուլտետի դասընթացներին: Շարունակելով իրավագիտական ուսումը՝ Փարիզի համալսարանում 1972 թ. ստանում է «docteur en droit d'Etat» կոչում: Ավարտաճառը եղել է «Օտարականները եւ զինուորական ծառայությունը» մի բաժին հատկացնելով «Հայկական լեզունին» (Սուրիական բանակի հայ զորավարները, «Գեղարդ. Սուրիահայ տարեգիրք», Հալեպ, 1975, էջ 405-406): 1983 թ. Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսի (1983-1994) կողմից արժանանում է Մեծն Տանն Կիլիկիոյ Սայր Տաճարի մեդալին (**Քեհեան Ա., Տ. Տ. Գարեգին Բ կաթողիկոսի հովուապետական անդրանիկ այցելությունը Բերիոյ թեմին**, «Օշական», 1983, № 1-4, էջ 34): 1984 թ. նորոգում է Հալեպի Սր. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու մկրտության ավազանը (**Ազգեան Հ.,** նշվ. հոդվ., էջ 402): Հալեպում ՀԲԸՄ-ի ՀԵԸ-ի հիմնադիրներից էր: Եղել է նաև տեղի «Կիլիկյենկեան» հաստատության ատենապետ: Աշխատակցել է «Եփրատ» օրաթերթին (**Պապայեան Ե.,** նշվ. աշխ., էջ 628-629): Ունի հրատարակված հոդվածներ՝ «Պարենատրման կեդր. վարչության դերը ինքնապաշտպանության մեջ», «Կր խօսի Ջոր. Արամ Գարամանուկեան» վերնագրերով (Տե՛ս **Պապայեան Ե.,** նշվ. աշխ., էջ 83-85, 120-122): Վախճանվել է Նյու Յորքում, աճյունասփորով քաղված է Հալեպում և Երևանում (Ով ով է. հայեր, հ. 1, Երևան, 2005, էջ 269):

407. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.

Աստ | հանգչի | այնթապցի | Աւէտիս | Սապուն-ճեան, | ծն(եալ)-հ(ա)ն(գեալ), | 1865-1939:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. կրում է 87 համարը: Գտնվում է Մաքրուիի և Արշալույս Սապունճյանների տապանաքարին կից: Նրանց մասին տես՝ Շեխ-Մազուդի առաքելական գերեզմանատան արձ. № 171:



408. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.

Աստ հանգչի | դեղագործ | Գրիգոր | Մեսիսեան, | սերաստացի, | ծն(եալ) 1870 յ(ու)լ(ի)ս 14, | հանգ(եալ) 1939 դեկ(տեմբեր) 4:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում էր 4-րդ մասում (համար 1718): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:



409. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչին | տէր եւ տիկին | Տոլմաճեաններ | Աբրահամ, 1870-1939, | Աննա, 1887-1948: | Տիգրա-նակերտցի:

Հրատ. առաջին անգամ:



410. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց միստին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Գրիգոր | Սաաթճեան, | այնթապցի, | ծնեալ 1884, | հանգեալ 1939:

Հրատ. առաջին անգամ:



411. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 10 տող.

Տիկ(ին) Զապել | Պոյեաճիեան, | եղէսիացի, | ծ(նեալ) 1907 հոկ(տեմբեր) 15, | հ(անգեալ) 1907 մարտ 15: | Լուսիա | Գասապեան, | եղէսեացի, | ծն(աւ) 1887, | մե(ռաւ) 1939 սեպ(տեմբեր) 1:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Զապելի մահվան թվականը սխալ է փորագրված:



412. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | մշեցի | տիկին Մայրամ | Այնթապլիեան, | ծն(աւ) 1887, մ(եռաւ) 1939:

Հրատ. առաջին անգամ:



413. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց միստին, ելնդագիր, 2 տող.

Աստուր Գուլաճեան, | ծն(եալ) Ուրֆա, 1888, հ(ա)ն(գեալ) 1939:

Հրատ. առաջին անգամ:



414. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ փորագիր, 8 տող.

Աստ հանգչին | գէթունցի(ներ) | Լուսին Եաղուպեան, | ծն(աւ) 1889, մեռ(աւ) 1939, | Վարդաւառ Մուղալեան, | ծն(աւ) 1905, մեռ(աւ) 1969, | Գեղամ Մուղալեան, 1944-1992, | Սարգիս Մուղալեան, 1935-2005:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է Պետրոս, Զարուհի և Վահրամ Մուղալեանների տապանաքարին կից: Վերջիններիս մասին տես Շեն-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 1373:



415. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարի արևմտահայաց կողին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | տալլորցի | Կիրէ Պէքեարեան, | ծն(եալ) Սասուն, 1890, | հանգ(եալ) 1939:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է Կարո Պէքեարյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեն-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 180:

Տալլորը Տալլորիկ գյուղն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Բաղեշի նահանգի Սասուն գավառի Տալլորիկ գավառակում: Ներկայումս, ամենայն հավանականությամբ, վերանվանվել է Աքչասոր (Akçastr):



416. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, կոթողաձև, արձանագրությունը՝ կոթողի արևելահայաց միստին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Աւետիս | Թովմասեան, | ծն(աւ) ի Պաղտատ, 1892, | մեռաւ 1939 | յունիս 30:

Հրատ. առաջին անգամ:


Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 435): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:



417. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Սարգիս հաճի | Մինասեան, | պուրսացի, | ծն(եալ) 1894, հան(գեալ) 1939:

Հրատ. *առաջին անգամ*:



418. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարի երեսին, փորագիր, 3 տող հայերեն, իսկ հարավահայաց նիստին՝ փորագիր, 4 տող արաբերեն.

Սելիմ Եփրեմեան, | ծն(եալ) 1895, Հալեպ, | հանգ(եալ) 1939:



Արաբերեն.

هذا قبر المرحوم | سليم يبريم نحاس، | ولد سنة ١٨٩٥، توفي سنة ١٩٣٩. | صلوا لاجله.

Թարգմ. Սա է հանգուցյալ Սելիմ Եփրեմ Նահասի գերեզմանը, ծն. 1895 թ., մահ. 1939 թ.: Արդթեք նրա համար:

Հրատ. *առաջին անգամ*:

Ճանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 1340): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.:



419. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Սամուէլ Կրակեան, | ծն(եալ) ի Սիս, 1901, | հանգ(եալ) 1939 | յուլ(իս) 5:

Հրատ. *առաջին անգամ*:



420. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարի արևելյան եզրին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Մանուկ | Պողոսեան, | նփրկերտցի, | ծն(աւ) 1904, | մե(ռաւ) 1939:

Հրատ. *առաջին անգամ*:

Ճանոթ. Նփրկերտ քաղաքը գտնվում է Արևմտյան Հայաստանի Դիարբեքիի նահանգում՝ Ամիդ քաղաքից 80 կմ հյուսիս-արևելք: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Սիլվան (Silvan):



421. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.

Աստ հանգչի | Միհրան Եղունեան, | Սասունի Կէլէկուլզան գիւղէն, | ծ(նաւ) (1)906, | մ(եռաւ) (1)939:

Հրատ. *առաջին անգամ*:

Ճանոթ. «Կէլէկուլզան»-ը Գելիեզուզանն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Բաղեշի նահանգի Սասուն գավառի Շատախ գավառակում: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Ջևիզլիդերե (Cevizlidere):




422. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 8 տող.



Այս է | դամբան | մարաշցի | Գեորգ | Աբրիկեանի, | ծն(եալ) 1914, | հ(ան)գ(եալ) 1939 յ(ու)ն(ի)ս | 3:
Հրատ. առաջին անգամ:

423. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Եսխուպ Հալեպլեան՝ | որդի Գեորգի, | ծնաւ ի Քիլիս, 1918, | մեռ(աւ) 1939: | Ութը օրուայ | փեսայ:
Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.: Գտնվում էր 6-րդ մասում (համար 1036)՝ հոր՝ Գեորգ Հալեպլեանի տապանաքարին կից (Շեն-Մագուսուրի առաքելական գերեզմանատան արձ. № 501):

424. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.

Այս է տապան | հանգստեան | Յովսէփ Գեորգի-մեան(ի), | վանեցի ..., | 1858-1940: | Ասացէք ա(ստուա)ծ | ողորմի հոգուն:
Հրատ. առաջին անգամ:



425. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.



Աստ հանգչին | Հորմիկ | Թօմասեան, | տիգրանակերտցի, | ծն(եալ) 1865, հ(ա)ն(գեալ) 1940, | Կարապետ | Միրզոյեան, | ակըլցի, | 1883-1966:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. «Ակըլ»-ը Ազգյուղն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Դիարբեքրի նահանգի Արղանամահեն գավառում՝ Արղանամահեն քաղաքից 40 կմ հարավ-արևելք: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Էդիլ (Eğil):

426. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, դեպի ներս կորացված նիստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Այնթապցի | Մեննուշ | Դաբարիկեան, | 1866-1940:
Հրատ. առաջին անգամ:



427. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Սիւրմէ Մերզիեան, | քղեցի, | ծ(նաւ) 1870, | մ(եռաւ) 1940:
Հրատ. առաջին անգամ:




428. Տապանաքար. դեպի ներս կորացված նիստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ հյուսիսային նիստին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | քիլիսցի | երեցուի տ(եր) Վահան Թովմասեան(ի), | ծն(եալ) 1870, հ(ա)ն(գեալ) 1940:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 569): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.:

Տապանաքարը պատկանում է տեր Վահանի կնոջը: Հնչակյան գործիչ, նահատակ Թովմաս Թովմասյանի մայրն էր: Տեր Վահանի մասին տե՛ս Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 47:



429. Տապանաքար. դեպի ներս կորացված նիստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ հյուսիսային նիստին, փորագիր, 3 տող.

Աստ հանգչի | Մարիամ Էքմեքճեան, | ծն(եալ) 1870, հան(գեալ) 1940:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 928): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.:



430. Տապանաքար. դեպի ներս կորացված նիստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Յակոբ | Խաչիկեան, | հաշո(տ)ցի, | 1871-1940:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. կրում է 829 համարը:
Հաշոտը Աշոտ քաղաքն է:



431. Տապանաքար. խաչակիր, քառակողմ, վրանաձև, արձանագրությունը՝ արևելյան եզրին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Նարթուհի | Ադամեան, | արարկիրցի, | 1875-1940:
Հրատ. առաջին անգամ:




432. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվան-

դանի արևելահայաց նիստին և արևմտյան եզրին ամրացված մարմարե երկու սալիկներին, փորագիր, 11 տող.

Խաչի պատվանդանի արևելահայաց նիստին.
Աստ հանգչի | քիլիսցի | Աբրահամ Վարպետեան, | ծն(եալ) 1876, հանգ(եալ) 1940: | Abraham A. Varbedian, | 1876-1940:
Տապանաքարի արևմտյան եզրին.

Աստ հանգչի | Կատարինե Վարպետեան՝ | ծն(եալ) Առաքելեան, | ծն(եալ) 1890, հ(ա)ն(գեալ) 1963, | հալէպցի:
Հրատ. առաջին անգամ:



433. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, դեպի ներս կորացված նիստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | տիկ(ին) Ֆիտան | Արապաթեան, | ծն(եալ) 1876, Քիլիս, | հանգ(եալ) 1940:
Հրատ. առաջին անգամ:



434. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչին | հաճի Խաչատուր | Շահինեան, | բնիկ խարբերդցի, | ծն(եալ) 1877, հ(ա)նգ(եալ) 1940, | Իսկուհի Շահինեան, | ծն(եալ) 1885, հ(ա)նգ(եալ) 1954:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. մեծահարուստ վաճառական Խաչատուր Շահինյանը 1924 թ. հունիսի 5-ին ընտրվում է Բերիո թեմի գավառական ժողովի անդամ: 1926 թ. հունվարի 22-ին Սիրիայի երեսփոխանական ընտրությունների ժամանակ Բերիո առաջնորդարանի կողմից Հալեպի երեսփոխանական արքոի համար թեկնածու է



առաջադրվում **(Գապայենճան Գ.,** նշվ. հողվ., էջ 304: Տե՛ս նաև «Մուրիահայ տարեցոյց», Հալեպ, 1925, էջ 319, «Արեւ», 26 յունուար, 1926, էջ 2): Շիրակի երկրաշարժի աղետյալներին օգնելու համար նվիրում է ընդամենը 3 ոսկի. «Դիտելի ու միանգամայն ցաւայի է, որ նախորդ տարի Մուրիոյ Երեսփոխանական Ժողովոյ Հալեպի հայ թեկնածուն, հակառակ իր ծանոթ հարստութեան, միայն երեք ոսկի տուած է: Ասիկա այն թեկնածուն է, որուն ընտրութիւնը յաջողցնելու համար առաջնորդ և առաջնորդարան քահանաներու խումբը խանութ խանութ, տունէ տուն դրկելով յիշեալին ի նպաստ օրերով բրօքականտ կատարել տուին: Կը յուսանք, թէ առաջնորդարանը այս պարագան չափանիչ նկատելով, յետ այսու ի վիճակի կ'ըլլայ թեկնածուի մը արժանիքները և ազգասիրական ոգին գնահատել և ըստ այնմ բրօքականտ մղել» («Արեւ», 19 մարտ, 1927, էջ 1): Նրա նախածեռնութեամբ 1930-1931 թթ. Հալեպում «Օտէռն» ընկերության կողմից թողարկվում են հայկական երգերի ձայնասկզկներ **(Մամուլեան Վ.,** նշվ. աշխ., էջ 90):

435. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Աղէկանդր | Պիրեճիքեան, | բնիկ եղեսեացի, | ծն(եալ) 1878, հ(ա)նգ(եալ) 1940:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 966): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:



436. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին և արևելահայաց կողին, փորագիր, 10 տող.



Արևելահայաց կողին.

Աստ հանգչի | այնթապցի | Մարիամ Քիլիսեան, | 1878-1940:

Սալիկին.

Աստ հանգչի(ն) | մայր եւ աղջիկ՝ | Մարիամ Քիլիսեան, | 1878-1940, | Վարսե Քիլիսեան, | 1900-1958:

Հրատ. առաջին անգամ:

437. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 7 տող.

Աստ հանգչին | մայր եւ աղջիկ՝ | Բիննա Լեիմճեան, | ծն(եալ) 1878, հ(ա)նգ(եալ) 1940, | Մերում Հինտոյեան, | ծն(եալ) 1894, հ(ա)նգ(եալ) 1975: | Այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:



438. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անետասցած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 9 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Սարգիս | Թավուզճեան, | 1880-1940, | այնթապցի:

Սալիկ Բ.

Տիկին | Անայիս Պալմանուկեան՝ | ծն(եալ) Թավուզճեան, | 1916-1984:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. տիկին Անայիսի ամուսինն էր նույնպես այնթապցի Կարապետ Պալմանուկյանը **(Պապայեան Ե.,** նշվ. աշխ., էջ 955): Որդու՝ Սարգսի մասին տե՛ս Հին եկեղեցիների շրջաբակի արձ. № 50:



Պապայանը սխալմամբ Անայիսի ծննդյան թվականը նշել է 1917:

439. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց միստին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | եթեսեսցի տիկին | Սողոմէ Գաթարո(յ)եան, | ծնեալ 1885-ին, | մեռեալ 1940 հոկ(տեմբեր) 13-ին:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է եղեսիացի Գրիգոր Գաթարոյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շելս-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 1026:



440. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգ(չ)ի | Յարութիւն | Թեփիրճեան, | ծն(եալ) Պերէճիկ, | 1885-1940:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է քիրեջիկի Մարիամ Թեփիրճյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շելս-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 967:

«Պերէճիկ»-ը Բիրեջիկ գյուղաքաղաքն է: Գտնվում է Միջագետքում: Թուրքերենով արտասանվում է Բիրեջիք (Birecik):



441. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչին | տէր եւ տիկին | Պօսունեաններ | Եսայի, 1885-1952, | Ովսանա, 1887-1940: | Այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:

442. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երեք սալիկներին, փորագիր, 17 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչին | այնթապցի(ներ) | Յարութիւն | Քէչեճեան, | ծն(եալ) 1886, հ(ա)նգ(եալ) 1940 ապր(իլ) 8, | Կատարինէ | Քէչեճեան, | ծն(եալ) 1890, հ(ա)նգ(եալ) 1940 սեպտ(եմբեր) 1:


Սալիկ Բ.

Կարինէ Տօնիկեան, | 1942-1943:

Սալիկ Գ.

Գէորգ Քէչեճեան, | 11 դեկտ(եմբեր) 1975, 28 դեկտ(եմբեր) 1976: | Օրօր | քուն եղիր, բալաս, | աչերդ խուփ արա, | նախշուն աչերուդ | քուն թող գայ վրայ:

Հրատ. առաջին անգամ:



443. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.



Աստ հանգչին | բնիկ ուրֆացի | տեր եւ տիկին՝ | Գրիգոր Պօմպայեան, | 1987-1940, | Ֆերիտե Պօմպայեան, | 1913-1959:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. 1987 թվականը սխալ է փորագրված, պետք է լիներ 1897:

444. Տապանաքար. դագաղաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց միստին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | բնիկ հալեացի | Ստեփան Կարապետ Կարիկեան, | ծն(եալ) 8 մարտ 1888, հանգ(եալ) 20 սեպ(տեմբեր) 1940:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 1260): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.:

Ստեփանը մաշկերտցի Կարապետ Կարիկյանի որդին էր (ՊՀՀ, էջ 846: Նաև **Փղատեան Ա.**, նշվ. աշխ., էջ 763): Հայրը 1878 թ. հունվարի 15-ին և 1880 թ. Հալեայից ընտրվում է Բերիոթ թեմի ազգային գավառական ընդհանուր ժողովի պատգամավոր (ՊՀՀ, էջ 846, 859): Ուսուցանում էր Հալեայի ազգ. վարժարանում (**Փղատեան Ա.**, նշվ. աշխ., էջ 763): Մասնագիտությանը հայագետ էր: 50 տարի շարունակ զբաղվել է ուսուցչությամբ: 1919 թ. 75 տարեկան էր (**Գաբրիելյան Ա.**, նշվ. աշխ., էջ 543),

Ստեփան Կարիկյանի քույրը՝ Նվարդը, ծնվել է 1890 թ.: 1907 թ. Հալեայի «Հայուհեաց մատենադարան»-ի խնամակալության կողմից ուղարկվում է Ատաբազարի Հայուհյաց վարժարան այն պայմանով, որ ուսումն ավարտելուց հետո պարտավորվելու է պաշտոնավարել Հալեայի ազգ. վարժարանում: Խնամակալությունն այդ կապակցությամբ պայմանագիր է կնքում Նվարդի և հոր՝ Կարապետ Կարիկյանի հետ: Մույն պայմանագիրը **Քաղաքական ժողովի կողմից վավերացվում է 1908 թ. փետրվարի 28-ին:** Նվարդ Կարիկյանը 1911 թ. վերադառնում է Հալեայ և երկար տարիներ պաշտոնավարում վարժարանում (**Քեչիչեան Վ.**, Հալեայի Հայկական գաղթածախի..., էջ 79, 87, 92, 95, 105-106, 113):

445. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից երկու սալիկներին, 9 տող.

Սալիկ Ա, ներկագիր.

Աստ հանգչի | Տիգրան | Չաղալանեան, | ծն(եալ) 1893, հ(ա)ն(գեալ) 1940, | ուրֆացի:

Սալիկ Բ (մարմարե), փորագիր.

Աստ հանգչի | Աբրահամ | Չաղալանեան, | 1925-1994:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. Աբրահամ Չաղալանյանը հիշվում է 1955 թ. հալեպաբնակ ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ ամուսնացած էր և ուներ մեկ որդի (**Սահակեան Ա.**, նշվ. աշխ., հավելվածը (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 11):

446. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 8 տող (սալիկ Բ-ի երկրորդ տողը՝ արաբերեն).

Սալիկ Ա.

Աստ հանգչին | Պուրճեաններ՝ | Կարապետ, 1895-1940, | Ժանեթ, 1928-1943, | Սարգիս, 1930-1983: | Սասունցի:

Սալիկ Բ.

Սիրանուշ, 1902-1997:

Արաբերեն.

عائلة برجيان.

Թարգմ. Պուրճյան ընտանիք:

Հրատ. առաջին անգամ:



447. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.



Աստ հանգչի | ս(ա)հ(տես)ի Համբոբ | Ն. Համբարձումեան, | ծն(եալ) 1898, հանգ(եալ) 1940 նոյ(եմբեր) 7, | էվերեկցի-Ֆենէտցի: | Յոյսերս մարեց, կեանքի մրրիկը | բերաւ, զիս դրաւ սեւ հողի գիրկը, | եւ դու, ով անցորդ, խորիւ գէթ պահ մը | ծաղիկ հասակս եւ այս աշխարհը:

Հրատ. *առաջին անգամ*:

Ծանոթ. *գտնվում է էվերեկցի Համբարձում Համբարձումյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շէխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 799:*

448. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ տապանաքարին և խաչի պատվանդանի արևելահայաց նիստին, փորագիր, 15 տող.



Խաչի պատվանդանի արևելահայաց նիստին.

Աստ հանգչի | տ(ի)կ(ի)ն | Օղիտայ | Լուկեան, | ծն(եալ) Տիգրանակերտ | 1900, հ(ա)նգ(եալ) ապրիլ 14 | 1940, ի Հալէպ:

Տապանաքարին.

Մահն ամենուն | համար է, | պատրաստ եղիր | յարածամ, | բայց հերկ ըրէ, | ցանք ըրէ, | որ չըմեննիս | տարածամ:

Հրատ. *առաջին անգամ*:

449. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին և տապանաքարին, փորագիր, 7 տող.



Խաչի պատվանդանի արևելահայաց նիստին.

Աստ հանգչին | սասունցի(ներ)՝

Տապանաքարին.

մայր եւ որդի, | Մարի Շատոյեան, | ծն(եալ) 1900-1940, | Յարութիւն, | ծն(եալ) 1926-1967:

Հրատ. *առաջին անգամ*:

450. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին և տապանաքարի երեսին ամրացված մարմարե երկու սալիկներին, փորագիր, 9 տող.

Տապանաքարի երեսին.

Աստ հանգչի | այնթապցի | Պաղտասար | Զիրիմեան, | ծն(եալ) 1900, հ(ա)ն(գեալ) 1940, | Մէրիա, 1905-1996, | Մկրտիչ, 1928-2004:

Խաչի պատվանդանի արևելահայաց նիստին ամրացված սալիկին.

Պերճուհի, | 1945-87:

Հրատ. *առաջին անգամ*:



451. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Աննա | Ֆերմանեան՝ | բալուցի, | ծն(եալ) 1904, | հ(ա)նգ(եալ) 11 ապր(իլ) 1940:

Հրատ. *առաջին անգամ*:



452. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Գրիգոր | Պարտազճեան, | ծն(եալ) 1904, հ(ա)ն(գեալ) 1940, | այնթապցի:


Հրատ. *առաջին անգամ*:

Ծանոթ. *կրում է 3151 համարը: Գտնվում է այնթապցի Երանիկ, Կարապետ և Հովհաննես Պարտազճյանների տապանա-*

քարերին կից: Նրանց մասին տես Շեն-Մագսուտի առաքելական գերեզմանատան արձ. № 973, 1186, 1272:



453. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.



Աստ հանգչի | Արագսի | Կիլիզիգեան, | ծն(եալ) 1905-1940, | սեփաստացի:

Հրատ. առաջին անգամ: Ծանոթ. գտնվում էր 4-րդ մասում (համար 1764): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

454. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 8 տող.

Աստ հանգչին | Տիտիմեաններ՝ | Արմենակ, 1868-1942, | Մարգրիտ, 1880-1958, | Ափրահամ, 1906-1957, | Ասուր, 1909-1940, | Գեորգ, 1920-1953: | Մարաշցիներ:

Հրատ. առաջին անգամ:



455. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ երեսին և հարավահայաց նիստին, փորագիր, 10 տող.

Տապանաքարի երեսին.

Աստ հանգչի | Մարի | Քէշիշեան, | ծն(եալ) 1911, Հալէպ, | հանգ(եալ) 1940 | ...տ. 1-ին:

Սալիկին.

Գեր նոր բոլորած կեանքի գարունը, | նետուեցայ անողոգ մահուան ճի(ր)անը, | քսանինը տարեկան ծաղիկ հասակի, | հոգեհատորներս մատնելով իմ սուքի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 1549 համարը:



456. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգչի | Նոյեմի Պայրամեան, | 1915-1940:

| Գարնանագեղ տենչերու բացուած վարդերն իր սրտին | թըռու անդարձ, անհեռու հրեշտակի պէս, իր ետին | թողուց արցունք ու կսկիծ, սէր ու ծընողը կարեկից, | յիշատակին շուրթ մ(ը) աղօթք | մըմնջէ դուն, ով անցորդ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.: Գտնվում էր 6-րդ մասում (համար 76)՝ քիլիսցի ամուսիններ Մանվել աղա և Ռոզա Պայրամյանների տապանաքարերի հարևանությամբ: Նրանց մասին տես Շեն-Մագսուտի առաքելական գերեզմանատան արձ. № 624, 687:

Հավանական է, որ Նոյեմի Պայրամյանը ևս ծնվել է Քիլիսում:



457. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, կոթողաձև, արձանագրությունը՝ կոթողի արևելահայաց նիստին և պատվանդանի արևելահայաց նիստին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 16 տող.

Կորոյի արևելահայաց միստին.

Ամեն յոյսեր | դեռ չըծրլած կանհետին, | ունայ-
նութիւն | մը կը պրկէ կեանքը սին, | ճակատագիրն
էր | իմ տարաբարդ Գ-րիգորին, | զոհն | քաղաքապե-
տութեան աշխատանոցին:

Սալիկին.

Գ-ամբարանս | մեր սիրելի որդոյն՝ | Գ-րիգոր Մ.
Երկանեանի, | զոհը անգութ եւ ցաւալի | արկածի մը
ծաղիկ հասակին: | Ծն(եալ) 15 յուլիս 1921 ի Նիւնուէ,
| վ(ա)խճ(անեալ) է 16 ապրիլ 1940 Հալէպ: | Երկաթ-
ները տապալեցին զիս:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. «Նիւնուէ»-ն Նիւնվեն է: Ասորեստանի հնագոյն քա-
ղաքներից է, որի ավերակները գտնվում են Իրաքի Մոսուլ քա-
ղաքից ոչ հեռու՝ Տիգրիս գետի ձախ ափին:



458. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա,
ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրու-
թյունը՝ տապանաքարի երեսին և խաչի պատվանդանի ա-
րևելահայաց միստին ամրացված մարմարե երկու սալիկների,
փորագիր, 10 տող.



Տապանաքարի երեսին.

Աստ հանգչի(ն) | Գ-րգ(ք)էտերեաններ՝ | Խորեն,
1900-1962, | Սաթենիկ, 1914-1947, | Լորէթ, 1913-
1981, | Սարգիս, 1938-1940, | Սեւիկ Բավլժեան, |
Մարիամ Տէր-Մովսէսեան: | Գ-րղեցի:

Խաչի պատվանդանին.

Յովհաննէս, 1934-2001:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Գ-րղին Քղին է:

459. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Սարգիս | Գ-րգքէտէլեան, | քղեցի, |
ծ(նեալ) 1938, | հ(անգեալ) 1940:


Հրատ. առաջին անգամ:



460. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրու-
թյունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց միստին ագուցված
մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | տիկ(ին) Իւլաբեր | Գարաճեան, |
բնիկ խարբերոցի, | ծն(աւ) 1855, | մեռ(աւ) 1941
սէպ(տեմբեր) 14-ի(ն):

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. գտնվում է խարբերոցի
Ստեփան Գարաճյանի տապանա-
քարին կից: Վերջինիս մասին տես
Շէխ-Մագսուդի առաքելական գերեզ-
մանատան արձ. № 517:

461. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝
փորագիր, 8 տող.

Աստ հանգչի | Սարեաս | Ա. Դիհանեան՝ | Օտա-
պաշեան, | Արաբկիր | ծնեալ, 1856-|1941 դեկտ(եմ-
բեր) 1, | Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:



462. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ հարավահայաց նիստին, փորագիր, 10 տող.

Աստ հանգչին | այնթապցի | Յարութիւն | Կ(արապետ) Նազարեան՝ | ոսկերիջ, | ծն(եալ) 1866-1941, | Տոտու | Նազարեան՝ | ծն(եալ) Խաթաճեան, | 1882-1972:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է Նազարի և հոր՝ Կարապետի տապանաքարերի մոտ: Վերջիններիս մասին տե՛ս Շեն-Մագսուտի առաքելական գերեզմանատան արձ. № 72, 1406:

Հարություն Կարապետի Նազարյանը ոսկերչապետ էր: Նրա միջնեկ որդին՝ Կարապետը, ուներ 3 զավակ՝ Հարություն, Լուսին, Լևոն, իսկ կրտսեր որդին՝ Էլին՝ մեկ տղա՝ Հարություն (**Պապայան Ե.**, նշվ. աշխ., էջ 875, 878-879):



463. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, խաչակիր քառակողմ, վրանաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Նազարէթ | Յ. Պիլեգիկճեան, | մարաշցի, | 1871-1941:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է մարաշցի Եվգինե Պիլեգիկճյանի տապանաքարի մոտ: Վերջինիս մասին տե՛ս Շեն-Մագսուտի առաքելական գերեզմանատան արձ. № 789:



464. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց եզրին ամրացված մարմարե և տապանաքարի երեսին միմյանց կից մարմարե երեք սալիկներին, փորագիր, 17 տող.

Տապանաքարի երեսին. սալիկ Ա.

Աստ հանգչին | Թորոս Թուխմանեան, | 1872-1941, | Մարիամ Թուխմանեան, | 1880-1955, | Լինա Թուխմանեան, | 1963-1969՝ | արկածով:

Տապանաքարի երեսին. սալիկ Բ.

Իդաբեր Թուխմանեան, | 1895-1980:

Խաչի պատվանդանին.

Աստ հանգչի | ազգային հասարակական գործիչ | քժ(ի)շ(կ) Խաչիկ Թուխմանեան: | Ծն(եալ) Խարբերդ 1910, | հ(ա)ն(գ)եալ) Հալէպ 1982:

Տապանաքարի երեսին. սալիկ Գ.

Արշալոյս Թուխմանեան, | 1924-2004:

Հրատ. առաջին անգամ:



465. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, դեպի ներս կորացված նիստերով և կողերով, վրանաձև, արձանագրությունը՝ տապանաքարի հյուսիսահայաց նիստին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Աւետիս Պօղոս Սեմերճեան, | ծն(եալ) 1873 ապրիլ 20, հանգ(եալ) 1941 մայիս 6, | հալէպցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ավետիս Սեմերճյանը 1928 թ. Պապ գյուղի եկեղեցու քաղական խորհրդի անդամ էր («Տարե», 1929, էջ 385): Ամուսնացել է Լուիզեի հետ (տե՛ս Շեն-Մագսուտի առաքելական գերեզմանատան արձ. № 493):



466. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Աբրահամ | Սերայտարեան, | այնթապցի, | ծն(եալ) 1876, հանգ(եալ) 1941:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է որդու՝ Բյուզանդի և Հովսեփ Սերայտարյանի տապանաքարերին կից: Նրանց մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 208, 212:

Աբրահամ Սերայտարյանը ծնվել է 1876 թ. մարտի 4-ին: 1895 թ. ավարտել է Այնթապի Ատենական վարժարանը, 1899 թ.



Կենտրոնական Թուրքիայի Ամերիկյան քոլեջը: 1899-1901 թթ. ուսուցանում է Այնթապի Ներսեսյան, 1901-1915 թթ.՝ Ատենական վարժարաններում: 1915-1918 թթ. զբաղվում է տարբեր գործերով Համա և Սելեմիե քաղաքներում: Հալեպում վարում է մի քանի պետական պաշտոններ: 1919 թ. վերադառնում է Այնթապ և նշանակվում Ազգ. երկսեռ վարժարանի տնօրեն: 1921-1924 թթ. Հալեպում ստանձնում է Կիլիկյան գաղթականաց վարժարանի տնօրենի պաշտոնը: 1924 թ. մի խումբ այնթապցիների հետ հիմնում է Կրթասիրաց միությունը, ապա դառնում համանուն դպրոցի տնօրեն 1924-1927 թթ.: 1928 թ. փոխադրվում է Անտիոք և մինչև 1934 թ. հայոց լեզու և պատմություն ուսուցանում տեղի Կիլիկյան, Ռատունասիրաց և Հայկազյան վարժարաններում: 1938 թ. վերադառնում է Հալեպ: «Եփրատ» օրաթերթում 1937 թ. հանդես է գալիս հայրենիքում Նոր Այնթապ հիմնելու հրապարակային առաջին կոչով: Թղթակցել է «Եփրատ» (Հալեպ), «Արև» (Կահիրե), «Նոր Կապոշ» (Փարիզ) և հայկական այլ թերթերին «Ա. Պատունի», «Ա. Սերայտարեան», «Դալիթ», «Վեյոթ Դալիթ» ծածկանուններով (Թղթանեան Թ., նշվ. աշխ., էջ 94-95):

467. Տապանաքար. վերնամասում կամարաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | տիկին Իսկուհի | Գրիգոր Պաղտիկեան, | ծն(եալ) 1876, Իզմիտ, | հանգ(եալ) 1941, Հալեպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում էր 861 համարը: Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

Իզմիտը Իզմիթ (İzmit) քաղաքն է: Գտնվում է Անատոլիայում:



468. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Սինաս | Սերայտարեան, | մարաշցի, | ծն(եալ) 1879, | հանգ(եալ) 1941 նոյ(եմբեր) 7:

Հրատ. առաջին անգամ:




469. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 3 տող.

Աստ հանգչի | Վարդուհի Մելիքեան, | 1879-1941:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 73): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:




470. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, խաչակիր, քառակողմ, վրանածև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Բէքա Պասմաճեան, | ատանացի,
| 1881-1941:

Հրատ. *առաջին անգամ:*

Ծանոթ. կրում է 665-Բ համարը:



473. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, խաչակիր, քառակողմ, վրանածև, արձանագրությունը՝ փորագիր, 9 տող.

Աստ | հանգչի | Մելքոն Մովսեսեան, | Մշգեղ, |
ծն(աւ) | 1886, | մեռ(աւ) | 1941:

Հրատ. *առաջին անգամ:*

Ծանոթ. կրում է 453 համարը:



471. Տապանաքար. ուղղանկյունածև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | քիլիսցի | Յարութիւն | Սէմէր-
ճիեան, | ծն(եալ) 1883, | հանգ(եալ) 1941:

Հրատ. *առաջին անգամ:*



474. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունածև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 10 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Տիրան | Ամպարճեան, | ծն(եալ)
1887, Սէլանիկ, | հ(ա)ն(գեալ) 1941:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Նորիճա Ամպարճեան՝ | ծն(եալ)
Ապտոյեան, | 1901-1985, | պերճիքցի:

Հրատ. *առաջին անգամ:*

Ծանոթ. *Սելանիկ քաղաքը գտնվում է Հունաստանում:*

«Պերճիք»-ը Բիրեջիկն է:



472. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունածև, արևմտյան եզրին՝ ստորին մասում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի(ն) | Գասպար | Մուրատեան, | սա-
սունցի, | ծն(եալ) 1884, հանգ(եալ) 1941, | Ֆուատ,
1919-2004:

Հրատ. *առաջին անգամ:*



475. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունածև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 8 տող.



Աստ հանգչին | Տիգրան | Գարրիլեւան, | 1888-1941, | Ժանեթ | Գարրիլեւան, | 1933-1948: | Սասունցի: Հրատ. *առաջին անգամ*:

476. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, դեպի ներս կորացված նիստերով և կողերով, օրորոցաձև, արձանագրությունը՝ հարավահայաց նիստին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | քիլիսցի | Գեորգ Կոսթանեան, | ծն(աւ) 1891, մահ(ացաւ) 1941: Հրատ. *առաջին անգամ*:



477. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևմտահայաց նիստին և տապանաքարի արևմտյան եզրին, փորագիր, 8 տող.

Խաչի պատվանդանի արևմտահայաց նիստին.

Աստ հանգչի | Տիգրան Հեքիմեան, | ծն(եաւ) 12 յուլիս 1897, ի Քիլիս, | հանգ(եաւ) 22 սեպտ(եմբեր) 1941, ի Հալեպ:

Տապանաքարի արևմտյան եզրին.

Դեռ չգիտենք, թե ինչպէս թողուցիր մեզ յանկարծ, | մութ ստուերէն աշխարհին անհետացար մէկ անգամ, | փոխան խորունկ ցաւերուդ յիշատակ մը անթառամ, | որբերուն հոյլ մը մատողաշ տուիր կէանքիս դուն անդարձ:

Հրատ. *առաջին անգամ*:

Ծանոթ. Տիգրան Հեքիմյանը 1908 թ. ավարտել է Քիլիսի Լուսասիրաց բարձրագույն նախակրթարանը (*Պայքամեան Ա., նշվ. աշխ., էջ 61-62*):



478. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգչին | տեր եւ տիկին | Ստամպուլեաններ՝ | Գառնիկ, | ծն(եաւ) 1895, հ(ա)ն(գեաւ) 1976, |



Անժէլ, | ծն(եաւ) 1903, հ(ա)ն(գեաւ) 1941: | Տիգրանակերտցի:

Հրատ. *առաջին անգամ*:

479. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի(ն) | այնթապցի | Եագուպ Վանըսեան, | ծն(աւ) 1881, մեռ(աւ) 1961, | Միլյայ Վանըսեան, | ծն(աւ) 1904, մեռ(աւ) 1941:

Հրատ. *առաջին անգամ*:



480. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ միմյանց կից երկու սալիկներին, 8 տող.

Սալիկ Ա, ներկագիր.

Աստ հանգչի | Լուսէր | Տագէսեան, | ծն(եաւ) 1910, հ(ա)ն(գեաւ) 1941, | ալպ(ի)ս(տ)անցի:

Սալիկ Բ, փորագիր.

Յակոբ | Տագէսեան, | 1933-1981:

Հրատ. *առաջին անգամ*:

Ծանոթ. կրում է 855 համարը:



481. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց միստին, ելնդագիր, 4 տող.

Աստ հանգչի | Պետ Համբարցումեան, | խարբերոցի, | ծն(աւ) 1911, մ(ե)ռ(աւ) 1941 փետ(րուար) 8:
Հրատ. առաջին անգամ:



482. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | իշխանագուն | Նազարեթ Նորաշխարհեան, | ծն(եալ) 1919, ի Ձէյթուն, | հ(ա)նգ(եալ) 1941, Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Նորաշխարհյանները Ձէյթունի իշխանական տոհմից էին. «Ենիտունյան իշխանները պատկանելիս են եղել Աբարտյան իշխանական տոհմին..., այս ցեղից հաճի Ղազարը 1790 թվականին այրել է Կապանում: Այնտեղ նա սպանում է մի թուրք հարստահարիչի, հետապնդումից ազատվելու համար նա փախչում է Արեգին (Ալարաշ) գյուղը և ասում է. «Ենի տունյա կելտիք» (Նոր աշխարհ եկանք), որից էլ առաջացել է նրանց անունը: Այս իշխանական տոհմի շառավիղները 1890-ական թվականներից արդեն իրենց անվանում են Նորաշխարհյաններ» (Պողոսյան Հ., Ձէյթունի պատմությունը, Երևան, 1969, էջ 58):

Նազարեթը Լևոն Նորաշխարհյանի (1919-1920 թթ. Ձէյթունի Ազգային միության անդամ) որդին էր և Ձէյթունի 1895 թ. ազատագրական շարժման առաջնորդներից Նազարեթ Չավուշի թոռը (Նորաշխարհյան Լ., նշվ. աշխ., էջ 192):



483. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ փորագիր, 12 տող.

Աստ հանգչի | այնթապցի | օր(իորդ) Լուսին Ս. Գասարճեան, | ծն(եալ) 1927, հանգ(եալ) 1941: | Հազի տասնը հինգ եղաւ | տարիքս, | սուգի մէջը մնաց | ընտանիքս, | ո՛հ, կեանքն է յիրաւ նման | երազի, | ով ճամբորդը, յիշէ մահը | անակնկալի:

Հրատ. առաջին անգամ:



484. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 8 տող.

Աստ հանգչին | հայր եւ որդի | Սասթճեաններ՝ | Կարապետ, | ծն(եալ) 1850, հ(ա)ն(գեալ) 1942, | Սկրտիչ, | ծն(եալ) 1902, հ(ա)ն(գեալ) 1974: | Ուրֆացի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Սկրտիչ Սասթճյանը հիշվում է 1955 թ. հալեպ-բնակ ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ ամուսնացած էր և ուներ 4 տղա, 2 աղջիկ (Մահակեան Ա., նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 14):



485. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, դեպի ներս կորացված միստերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | տ(ի)կ(ին) Ներկիզ | Ասմարեան, | սղերոցի, | 1852-1942:

Հրատ. առաջին անգամ:



486. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, կոթողաձև, արձանագրությունը՝ կոթողի արևելահայաց նիստին ագուցված մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Սարգիս | Տէմիրճեան, | այնթապցի, | ծն(եալ) 1862, | հանգ(եալ) 1942:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է այնթապցի Ավետիս Տէմիրճեանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 79:

Սարգիս Տէմիրճեանը Կրթասիրաց միության հիմնադիրներից էր (հիմնադրվել է 1924 թ. Հալեպ): Նորակազմ միությանը նվիրում է 2 օսմ. ոսկի (**Շորանեան Թ.**, նշվ. աշխ., էջ 39): 1929 թ. Բերիտ թեմի տնտեսական խորհրդի ատենադպիրն էր («Տաքե», 1929, էջ 378):



ների տապանաքարերին կից: Ինդոսը, ամենայն հավանականությամբ, նրա մայրն էր, իսկ Հակոբը՝ եղբայրը:

Էլիզ Ոսկանը 1907 թ. նոյեմբերի 27-ին Հալեպի երևելի և կրթասեր կանանց հետ հրավիրվում է Բերիտ թեմի քաղաքական ժողովի կողմից հիմնված «Հայուհեաց մատենադարան»-ի խնամակալության գործադիր ժողովին (**Քեչիշեան Վ.**, Հալեպի Հայկական գաղթածայի..., էջ 103):

Ինդոս և Հակոբ Ոսկանների մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 51, 322:

489. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | այրի տիկին Զոզէ | Ասատուրեան, | ծն(աւ) մուշեցի 1870, | մեռ(աւ) 1942:

Հրատ. առաջին անգամ:

487. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգչին | այնթապցի | Յարութիւն | Տէյիրմենճեան, | ծն(եալ) 1865, հ(ա)նգ(եալ) 1942, | Տիրուհի | ...եան | ...:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. տապանաքարի վերջին տողերը հողածածկ են:

Գտնվում է այնթապցի Գրիգոր Տէյիրմենճեանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 946:



490. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարի արևմտահայաց կողին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Էպրուհին Մանուշակեան՝ | ծն(եալ) Նազարեան, | ծնեալ Այնթապ, 1874, | հանգեալ Հալեպ, 1942:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է Նազար Նազարյանի և Նազարեթ Մանուշակյանի տապանաքարերին կից: Նրանց մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 242, 1406:



488. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Էլիզ Ոսկան, | ծն(եալ) Կ. Պոլիս, | 1869-1942:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.: Գտնվում էր 6-րդ մասում (համար 522)՝ Ինդոս և Հակոբ Ոսկան-

491. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, դեպի ներս կորացված նիստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | քիլիսցի | Յակոբ | Յ. Քէշիշեան, |
ծն(եալ) 1878, հ(անգեալ) 1942:
Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. Ավետիսի մասին տես Շեն-Մագուղի առաքելական գերեզմանատան արձ. № 465:



492. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ թևավոր խաչի կենտրոնում և տապանաքարի արևելյան եզրին ամրացված սալիկներին, փորագիր, 14 տող.

Տապանաքարի արևելյան եզրին.

Դամբան եղև առաջին | տիկ(ին) Մուլբան Պայրամեան(ի), | այնթապցի, | ծն(եալ) ի հորե Պ. Պապիկեան, | 1880 յունիս ամսոյ 15-ին, | հանգեալ ի տէր, 1942-ին | յունիս ամսոյ 28-ին:

Խաչի կենտրոնում.

Դամբարան | գերդաստանի | Իսկենտեր | Գ. Պայրամեանի, | քիլիսցի, | կառուցեալ | 1943:

Հրատ. առաջին անգամ:



494. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգչի(ն) | այնթապցի | Արմենակ | Աննրտելիկեան, | ծն(աւ) 1878, մեռ(աւ) 1945, | Զարուհի | Աննրտելիկեան, | ծն(աւ) 1885, մեռ(աւ) 1942:

Հրատ. առաջին անգամ:



495. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Յակոբ | Մխայելեան, | զէյթունցի, | ծն(եալ) 1885, | հանգ(եալ) 1942 փետ(րուար) 26:

Հրատ. առաջին անգամ:



493. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, դեպի ներս կորացված նիստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարի հյուսիսասիայաց նիստին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | տիկ(ին) Լուիզե Աւետիս Սէմերճեան, | ծն(եալ) 1883 օգ(ոստոս) 14, հանգ(եալ) 1942 յուն(ար) 19, | հալէպցի:

Հրատ. առաջին անգամ:

496. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 12 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Յարութիւն | Ղազէլեան, | քիլիսցի, | ծն(եալ) 1885 օգ(ոստոս) 2, | հանգ(եալ) 1942 մարտ 16:

Սալիկ Բ.


Աստ հանգչի | Անդրանիկ | Ղազէլեան, | քիլիսցի, | ծն(եալ) 1921 մա. 4, | հանգ(եալ) 1974 սեպ(տեմբեր) 1:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է քիլիսցի Իսկէնտեր և Ֆերիտե Ղազելյանների տապանաքարերին կից: Վերջիններիս մասին տես Շեխ-Սագաուդի առաքելական գերեզմանատան արձ. № 105, 740:



497. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում, ստորին մասում և պատվանդանի վրա՝ լուսանկարներով թևավոր խաչ, արձանագրությունը՝ տապանաքարի երեսին և արևելահայաց կողմին, մարմարե երեք սալիկներին, փորագիր, 15 տող (սալիկ Ա և Բ՝ մեկընդմեջ մույն բովանդակությամբ հայերեն-արաբերեն, իսկ սալիկ Գ՝ արաբերեն).



Սալիկ Ա.

Աստ հանգչին | Իսկէնտէր Գո(ւ)յումճեան, | ծն(եալ) 1874, հ(ա)ն(գեալ) 1946: | المرحوم اسكندر كويومجيان. | Խաթուն Գո(ւ)յումճեան, | ծն(եալ) 1885, Քիլիս, հ(ա)ն(գեալ) 1942: | المرحومه خاتون كويومجيان.

Սալիկ Բ.

.بايدار كويمجيان | Աստ հանգչի | Պայծառ | Գոյումճեան, | ծն(եալ) 1903, հ(ա)ն(գեալ) 1969, | տիգրանակերտցի:

Սալիկ Գ, արևելահայաց կողմին. .1987-1902 | مينا س صايع

Թարգմ. Մինաս Մայեղ, 1902-1986:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 668 համարը:

498. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչին | Տապալաղեաններ՝ | Ճորճ Ալեքսան, | 1889-1942, | Չագի, 1924-2001: | Ուրֆացի:

Հրատ. առաջին անգամ:



499. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Սիրական Իրատեան, | ծն(ալ) ի Աշտ, 1892, | մ(ե)ռ(ալ) ի Հալէպ, 1942:

Հրատ. առաջին անգամ:



500. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին ագուցված թևավոր խաչը չի պահպանվել, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 6 տող.

Ա(ստ) հ(անգչի) | սեբաստացի | Գալուստ | Պետիկեան, | ծն(եալ) 1894, | հ(ան)գ(եալ) 1942:

Հրատ. առաջին անգամ:




501. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | քիլիսցի | Գեորգ Հալեպլեան, | ծն(եալ) 1897, հանգ(եալ) 1942:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.: Գտնվում էր 6-րդ մասում (համար 987)՝ որդու՝ Յարուքի տապանաքարին կից (տե՛ս Շեն-Մագուրի առաքելական գերեզմանատան արձ. № 423):



502. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | այնթապցի | տիկ(ին) Խանըմ | Իզնատոսեան, | ծն(եալ) 1895, հանգ(եալ) 1942:

Հրատ. առաջին անգամ:



503. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից երկու սալիկներին, 12 տող.


Սալիկ Ա, ներկագիր.

Աստ հանգչին | Սկրտիչ | Թունուսեան, | 1879-1953, | Ֆերիտա | Պոյաճեան, | 1897-1942: | Ուրֆացի:

Սալիկ Բ (մարմարե), փորագիր.

Աստ հանգչի | Յարութիւն | Թունուսեան, | 1914-1990:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. Հարություն Թունուսյանը ծնվել է Ուրֆայում: Հիշվում է 1955 թ. հալեպաբնակ ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ անուսնացած էր և ուներ 2 տղա, 2 աղջիկ (**Մահակեան Ա.**, նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 16):

504. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Յակոբ Նահապետեան, | քիլիսցի, | ծն(եալ) 1898, հ(ա)նգ(եալ) 1942:

Հրատ. առաջին անգամ:



505. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | այնթապցի | Եղիա Ամմիեան, | ծն(եալ) 1899, | հանգ(եալ) 1942:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 28 համարը:



506. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Վահան Աճեմեան, | քնիկ տիզրա-նակերսցի, | ծն(եալ) 1900, հանգ(եալ) 1942:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 1256): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.:



507. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Չարդար | Օհանեան, | ծն(եալ)
1901-1942, | խարբերդի:
Հրատ. առաջին անգամ:



508. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ տապանաքարի երեսին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 7 տող արաբերեն և խաչի պատվանդանի արևելահայաց միտին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 17 տող հայերեն.

Խաչի պատվանդանի արևելահայաց միտին.

Իր քոյրը | Լուսիա: | Աստ հանգչի | Խորեն Խան-
ճեան, | 1908-1942: | Ահա այսպէս, իմ ազնիւ | ընթեր-
ցող, | կրակավառ սրտիս չըլգտայ մի ցող, | կեանքս
մարեցաւ, կեանքս | սիրաշունչ, | կտրեց և լեզուս,
դարձայ | համը մունչ, | ապերախտ է այս աշխարհը
| համայն, | և իր պերճ փառքերն | ունայն են, ունայն:
Տապանաքարի երեսին.

هنا يرقد الماسوف على شباہه | صلوا | لاجله | خورين بن
مكردیچ خانجیان | ولد ۱۹۰۸ توفی ۱۹۴۲. | قبر شاب في عمره
ماتهننا سلبته يد المنية منا | كان فينا مثل الهلال فلما صار
بدرًا في سمة غاب عنا.



Թարգմ. Այստեղ է ննջում Մկրտչի որդին՝ երիտա-
սարդ Խորեն Խանճյանը, ծնվեց 1908 թ., մահացավ
1942 թ.: Սա է երիտասարդի գերեզմանը, որ չկարո-
ղացավ վայելել կյանքը, մահվան ձեռքը նրան խլեց
մեզնից: Կիսալուսին էր մեր մեջ, և երբ երկնքում վե-
րածվեց լուսնի, մեզնից հեռացավ: Աղոթե՛ք նրա
համար:

Հրատ. առաջին անգամ:

509. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, խա-
չակիր, քառակողմ, վրանաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի
վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի
պատվանդանի արևելահայաց և տապանաքարի հյուսիսահա-
յաց միտերին, փորագիր, 10 տող.

Խաչի պատվանդանին.

Աստ հանգչի | պ(արօն) Սարգիս | Մ. Չերքեզեան,
| ծն(եալ) Տէօրտեօյ, 1911, | հանգ(եալ) Հալէպ, 1942:
Տապանաքարի հյուսիսահայաց միտին.

Գարնանագեղ տենչերու բացուած վարդերն | իր
սրտին թռաւ անդարց, անհեռու | հրէշտակին պէս,
| իր ետին թողուց արցունք ու կսկիծ, | ծնողքին ու ազ-
գին կարէկից, հիշատակին շուրթ | մ(ը) աղոթք կան-
չէ դուն, ով անցորդ:
Հրատ. առաջին անգամ



510. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լու-
սանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից
մարմարե երկու սալիկներին, փորագիր, 11 տող.



Սալիկ Ա.

Աստ հանգչի(ն) | Գէորգ | Պղտիկեան, | ծն(եալ)
1911, հ(ա)ն(գեալ) 1942, | այնթապցի, | Մարի, 1912-
1989:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Անի | Պզտիկեան՝ | ծն(եալ) Ե-ստ(յ)եան, | 1945-1997:

Հրատ. առաջին անգամ:

511. Տապանաքար. ուղղանկյունաձև, տեղահան, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.



Աստ հանգչի | մարաշ-ցի | Կիլեկեա Պօեա-լճրեան, ծնաւ 1916, | հանգեաւ 1942:

Հրատ. առաջին անգամ:


Ծանոթ. տեղահանված է: Կրում է 1876 համարը:



512. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Կեսար Տ. Եսայեան, | ծն(եալ) 1919, հանգ(եալ) 1942, | մայ(իս) 1-ապ(րիլ) 27:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.: Կրում էր 2478 համարը և գտնվում էր թալասցի Շավարշ Յ. Եսայանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես՝ Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 290:

513. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.



Աստ հանգչի | այնթապցի | Յակոբ | Շեօհմե-լեան, | ծն(եալ) 1920 դեկ(տեմբեր) 13, | հանգ(եալ) 1940 մ(այ)(ի)ս 19:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է Աննա Շեօհմեյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես՝ Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 763:

514. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ հյուսիսահայաց նիստին, փորագիր, 4 տող.



Դամբարան Լուսարա-րեան(ների)՝ | Երուանդ, Արշալույս, | 1919-1942, 1922-1940: | Այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:



515. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | իսկենտերունցի | Մարիամ | Յակոբ Տուզմանեան, | ծն(աւ) 1853, | մ(ե)ռ(աւ) 1943:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 919): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.:

«Իսկենտերուն»-ն Ալեքսանդրեոս քաղաքն է: Գտնվում է Կիլիկիայում: Ներկայումս թորքերենով արտասանվում է Իսքենդերուն (İskenderun):



516. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, դա-
զաղածև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ | հանգչի | Յակոբ Պէշիրեան, | տղերոցի, |
ծն(աւ) 1854, մեռ(աւ) 1943:

Հրատ. *առաջին անգամ:*

Ծանոթ. *գտնվում էր 6-րդ մասում (համար 469): Այժմ գոյու-
թյուն չունի: Տեղահանվել է 2008 թ.:*

Հակոբ Պէշիրյանը 1928 թ. մայիսի 3-ին Հալեպի եկեղեցուն
նվիրում է կանթեղ, որը պահվում է գանձատան վերածված Սբ.
Աստվածածին եկեղեցում (տե՛ս Սբ. Աստվածածին եկեղեցու
արձ. № 103):




Աստ հանգչի | Զէյթու-
նի անմահ անուն, | Հնչա-
կեան հերոս | Յակոբ Օ-
հանեան՝ | Փայլակ, | ան-
թապցի, | ծն(եալ) 1870,
հ(ա)ն(գեալ) 1943:

Հրատ. *առաջին անգամ:*

519. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունածև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորա-
գիր, 6 տող.

Աստ հանգչի | կիրիւնցի | տիկ(ին) Մարիամ |
Քէիեա(յ)եան, | ծն(եալ) 1872, | հանգ(եալ) 1943:

Հրատ. *առաջին անգամ:*



517. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունածև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրու-
թյունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին ազուցված
մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | տիար Ստեփան | Գարաճեան, |
բնիկ խարբերոցի, | ծն(աւ) 1854, | մեռ(աւ) 1943 յուն-
վ(ար) 29-ի:

Հրատ. *առաջին անգամ:*


Ծանոթ. *գտնվում է խարբերոցի Յուդաբեր Գարաճյանի տա-
պանաքարին կից: Վերջինիս մասին տե՛ս Շեխ-Մագսուդի առա-
քելական գերեզմանատան արձ. № 460:*



520. Տապանաքար. կոթողածև, արձանագրությունը՝ կոթո-
ղի արևելահայաց նիստին ազուցված մարմարե սալիկին, փորա-
գիր, 10 տող.

Մասունցի: | Աստ հանգչի յախտեան | Կարա-
պետ Բակտիքեան, | տիպար աշխատութեան, | սիր-
տը գթութեան, | հոգի հեզութեան, | նահատակ բա-
րիին, | կարօտ կեանքին եւ | իր հայրենիքին, | 1877,
հանգ(եալ) 1943:

Հրատ. *առաջին անգամ:*



518. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունածև, արևմտյան եզրին՝ կենտրոնում հանգուցյալի
պատկերով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալի-
կին, փորագիր, 7 տող.



521. Երկու տապանաքար. միաստիճան ընդհանուր պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ տապանաքարերի կենտրոնում, քևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե երկու սալիկներին, փորագիր, 14 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | մահտեսի | Յովի(աննէս) Դիհանեան, | ծն(եալ) Արաբկիր, 1880, | հանգ(եալ) 13 նոյեմբեր 1943:

Սալիկ Բ.

Աստ հանգչի(ն) | Աննա | Դիհանեան, | ծն(եալ) 1885, հ(ա)ն(գեալ) 1972, | Չոլիկն Թորիկեան, | ծն(եալ) Տրապիզոն, | 1910-1994, | Օննիկ Թորիկեան, | 1904-1997:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Հովհաննես Դիհանյանը հիշվում է 1944 թ. Արաբկիրի և շրջակայքի հայրենակցական միության՝ Հայեպի մասնաճյուղի վարչության տեղեկագրում՝ մահացած հայրենակիցների ցանկում: Նույն տեղում նշվել է, որ Հովհաննեսի մայրը Սարիամն էր (նույն տարին մահացել է), իսկ եղբայրը՝ Վարդանը, որն էլ 1944 թ. Արաբկիրի և շրջակայքի հայրենակցական միության Հայեպի մասնաճյուղի առենապետն էր («Ոսկեգետակ տարեգիրք», Պէյրուք, 1945, № 3, էջ 216):



523. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ քևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց միստին, ելնդագիր, 4 տող.

Աստ հանգչի | Յակոբ Գնտիկեան, | ծնեալ Եթեւտա, 1886, | մե(ռաւ) 1943 նոյեմբեր 26:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. «Եթեսեա»-ն Եդեսիան է:



524. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, դեպի ներս կորացված միստերով և կողերով, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ քևավոր խաչ, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.

Սասունցի | Իսկէնտեր | Կիրպօ(յ)եան, | ծն(աւ) 1887, մե(ռաւ) 1943, | Եղբայրը՝ | Սկրտիչ | Կ(ի)րպօ(յ)եան:

Հրատ. առաջին անգամ:

522. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում ամհետացած լուսանկարով քևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 8 տող.

Աստ հանգչին | տէր եւ տիկին | Հավանճեաններ՝ | Նշան, | ծն(եալ) 1883, հ(ա)ն(գեալ) 1943, | Կատարիկնէ, | ծն(եալ) 1888, հ(ա)ն(գեալ) 1968: | Մարաշցի:

Հրատ. առաջին անգամ:



525. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Ներսես | Յ. Գույումճեան, | ծն(եալ) Քիլիս, 1889, | հանգ(եալ) 16 դեկտ(եմբեր) 1943, | Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:



526. Տապանաքար. դեպի ներս կորացված ճիստերով և կողերով, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկների, փորագիր, 10 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի(ն) | Մարտիրոս | Տուրսունեան, | ծն(եալ) 1891, Անգարա, | հանգ(եալ) 1943, Հալէպ Սալիկ Բ.

և այրին՝ | Լուսիա | Տուրսունեան, | ծն(եալ) 1889, հ(ա)ն(գ)եալ) 19-9|-1972:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Անգարան Էնկյորին է:



527. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 10 տող.



Աստ հանգչի(ն) | տարսոնցի Օնիկ | Կընքապապեան, | ծն(եալ) 1898, հան(գեալ) 1943 | օգոս(տոս) 7-ին, | որդին՝ Յակօբ | Կընքապապեան, | ծն(եալ) 1930, հ(ա)ն(գեալ) 1943 | ապ(րիլ) 17-ին:

Հրատ. առաջին անգամ:

528. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | եղեսիացի | Մարիամ | Միխանէ-ճեան, | ծն(եալ) 1900, հ(ա)ն(գեալ) 1943 | նոյ(եմբեր) 4:

Հրատ. առաջին անգամ:



529. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի(ն) | Յակոբ, Ռոզին | Նազարեան-(նեթ)՝ | Յակ(ոբ), ծն(եալ) 1898-1964, | Ռոզ(ին), ծն(եալ) 1900-1943: | Այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.: Գտնվում էր 6-րդ մասում (համար 708)՝ 771 համարը կրող Գրիգոր Նազարյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 104:

Հակոբ Նազարյանը ծառայել է Ռուսումասիայաց դպրոցին (Պարապանեան Մ., նշվ. աշխ., էջ 180):



530. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց եզրին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Թադիոս | Մինասեան, | ծն(եալ) Տրապիզոն, | 1905, հան(գեալ) 1943:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 3460 համարը:



531. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 20 տող.

Աստ հանգչին | հայր եւ որդի՝ | Եղիա Շիրիք-ճեան, | ծն(եալ) Այնթապ, 1911-1943, | Յարութիւն, ծն(եալ) Հալէպ, | 1942-1961 Գուէյթ: | Տասնութը տարիքս դեռ | նոր բոլորած, գացի Գուէյթ | քաղաք աշխատանքի համար, | երկու տարի պանդուխտ | ապրելէ ետք, երբ հասած էր | վերջին օրերս վերադարձի, | անիծեալ գամիոնի անիւր | խլեց երիտասարդ ու | ծաղիկ կեանքս: Լոկ | կոկոն էի, բացուեցայ, | վարդ չեղած դառամեցայ: | Ով մայր իմ, միթէ | աշխարքիս մահ կար, | չծնէիր զիս:

Հրատ. առաջին անգամ:



532. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.



Աստ հանգչի | տիգրանակերտցի | Խաչատուր | Չոթչիեան, | ծն(եալ) 1913, հ(ան)գ(եալ) 1943: | Հայրը՝ Մելքօն, | մայրը՝ Լուսիա:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 1435): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.:

533. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | ատեամանցի Հայկ | Արմիխտեան, ծն(եալ) 1926 | հոկ(տեմբեր) 18, հ(ան)գ(եալ) 1943:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 126 համարը:

Ատեամանն Աղիամանն է:



534. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Սարգիս | Գատեհի {ն}եան, | 1926-1943, | ուրֆացի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 64): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:



535. Մատուռ-դամբարան. ավարտվում է զույգ գմբեթներով: Ամփոփված են երկու ազգատոհմերի հանգույցայները: Մատուռների մուտքն արևելքից է, արձանագրությունները՝ հյուսիսային մատուռի մուտքից վեր ամրացված մարմարե սալիկին,



փորագիր, 4 տող հայերեն և հարավային մատուռի մուտքից վեր ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 3 տող հայերեն, որից վեր՝ նույն բովանդակությամբ փորագիր, 2 տող արաբերեն.



Հյուսիսային մատուռին.

Դամբարան ընտա(նեկան) | աշօտցի | Սահակ Հ. Սահակեանի, | շին(եց) 1943-4:

Հարավային մատուռին.

مدفن عائلة | المرحوم سليم جرجي سيوفي.

Դամբարան | Սելիմ Ճըրճի Սիուֆի | ընտանիքի:

Հրատ. **Քորոռչյան Բ.**, նշվ. հոդվ., էջ 58:

Ծանոթ. Սելիմ Սիուֆու հայրը՝ Ճըրճին, 1914 թ. փետրվարի 9-ին Քաղաքական ժողովի կողմից նշանակվել է նորակազմ «Ազգային լսարան» հանձնախմբի անդամ (**Քէշիշեան Վ.**, Հայկյի Հայկական գաղթածախի..., էջ 100):

536. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, վրանածև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց միստին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | քիլիսցի | Մեսրոպ Յարութիւն | հաճի Պալեան, | ծն(եալ) Քիլիս, 1862, | հանգ(եալ) Հալէպ, 1944:

Հրատ. *առաջին անգամ*:



537. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունածև, արձանագրությունը՝ հարավահայաց միստին, փորագիր, 3 տող.

Աստ հանգչի այնթապցի | Յակոբճան Ունճուեան, | ծնալ 1864, հանգեալ 1944:

Հրատ. *առաջին անգամ*:



538. Տապանաքար. ուղղանկյունածև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Աստ | հանգչի | Մարգրիտ | Դեմեմեան, | կիլիւրինցի, | ծն(ալ) 1869, մե(ռալ) 1944:

Հրատ. *առաջին անգամ*:

Ծանոթ. գտնվում էր 5-րդ մասում (համար 813): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:



539. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունածև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ | հանգչի | Նազենի | Չիրքինեան, | արաբգերցի, | ծն(եալ) 1869, հ(ա)ն(գեալ) 1944:

Հրատ. *առաջին անգամ*:



540. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 7 տող.

Աստ հանգչին | Արթին | Մինասեան, | ծն(եալ) 1876, հ(ա)ն(գեալ) 1948, | Սէրեա, | ծն(եալ) 1874, հ(ա)ն(գեալ) 1944: | Այնթապցի:
Հրատ. առաջին անգամ:



541. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Սլրտիչ Ե. Գույումճեան, | տիգրանակերտցի, | ծն(եալ) 1877, | հանգ(եալ) 24 յ(ու)ն(ուս)ր 1944:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. կրում է 80 համարը:



542. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 10 տող.

Աստ հանգչին | տեր և տիկին՝ | Իսկէնտեր | Մարաշլեան, | ծն(եալ) 1878, | հ(ա)ն(գեալ) 1944, | Աննա | Մարաշլեան, | ծն(եալ) 1893, | հ(ա)ն(գեալ) 1973:
Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 69): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

543. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աննա Յանաճեան, | 1880-1944: | Խարբերդ, Փերճեան:
Հրատ. առաջին անգամ:



544. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | կարմուշցի | Խաթուն | Մ. Ներսեսեան, | ծն(եալ) 1880, | հանգ(եալ) 1944:
Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Խաթուն Ներսեսյանը 1936 թ. նշանակվում է Հայեպի նորակազմ Ուրֆացի տիկնանց միության վարչության գանձապահ (Մահակեան Ա., նշվ. աշխ., էջ 1264):
Կարմուշք Կամուրջ գյուղն է: Գտնվում է Մոջագետքում՝ Ուրֆա քաղաքից 6 կմ հյուսիս-արևելք: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Քարաքյոփրյու (Karaköprü):
Կարմուշցի բառի շ տառը սխալ է փորագրված, պետք է լիներ ջ:



545. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, դեպի ներս կորացված նիստերով, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.



Աստ հանգչի | այրի տիկ(ին) հաճի Սալվի | Ում-րէեան, | մշեցի, | ծն(եալ) 1882, հանգ(եալ) 1944:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 4-րդ մասում (համար 1918): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

546. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | այնթապցի | տիկ(ին) Աննա Գը-վըրեան, | ծն(եալ) 1884, | հանգ(եալ) 1944:

Հրատ. առաջին անգամ:



547. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 10 տող.

Աստ հանգչին | քոյրեր՝ | Մարգրիտ | Յ. Նալ-պանտեան, | ծն(եալ) Անտիօք, 1884, | հանգ(եալ) Հալէպ, 1944, | Թագուհի | Յ. Մօմճեան, | ծն(եալ) Անտիօք, 1889, | հանգ(եալ) Հալէպ, 1947:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 1183): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.:



548. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | աշօտցի | Յարութիւն | Եաղու-պեան, | ծն(եալ) 1890, հ(ա)նգ(եալ) 1944 | [օ]գ(օ)ս-(տոս) 5:

Հրատ. առաջին անգամ:



549. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրու-թյունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգչի(ն) | Արամ | Գոյումճեան, | ծն(եալ) 1895-1964, | քիլիսցի, | Յակոբ | Գոյումճեան, | ծն(եալ) 1891-1944:

Հրատ. առաջին անգամ:



550. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սա-լիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | այնթապցի | Գրիգոր | Չիլինկի-րեան, | ծն(ալ) 1893, | մեռ(ալ) 1944:

Հրատ. առաջին անգամ:



551. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրու-թյունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին ամրաց-ված մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Յովհաննէս | Ն. Շիլգեորգեան, | ծն(եալ) 1894, Քիլիս, | վախճ(անեալ) 1944, Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:



552. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ ստորին մասում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 10 տող.

Աստ հանգչին | քույր, եղբայր: | Լեոն | Պուտագեան, | ծն(եալ) 1895, հ(ա)ն(գեալ) 1944, | Հալէպ, | Սէյտէ | Պախչաճեան, | ծն(եալ) 1893, հ(ա)ն(գեալ) 1967: | Քիլիսցի:

Հրատ. առաջին անգամ:



553. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, խաչակիր, վրանաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Սկրտիչ | Ճրրճրեան, | այնթապցի, | ծն(եալ) 1900, | հանգ(եալ) 1944:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 1671 համարը:



554. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, 10 տող.



Սալիկ Ա, ներկագիր.

Աստ հանգչի | Լեոն | Շապոյեան, | ծն(եալ) 1900, հ(ա)ն(գեալ) 1944, | կարնեցի:

Սալիկ Բ, փորագիր.

Աստ հանգչին | տէր եւ տիկին | Շապոյեաններ՝ | Ալիս, 1929-1994, | Ալեքսան, 1929-1995:


Հրատ. առաջին անգամ:

555. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, երկու լուսանկարներով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 12 տող.

Աստ հանգչին | տէր եւ տիկին | Սարաֆեաններ՝ | Գրիգոր, 1902-1944, | Վիքթորիա, 1907-1944, | Ճօրճ, 1963-1986: | Տիգրանակերտցի: | Թամբանի մրուրով գծուած | ճակատագիր մը, հազիւ 23 գարուններ | բոլորած ելեքթրական հարուածով | հողին յանձնուեցայ, ցգեղով | հարազատներս անմխիթար:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Վիկտորյա Սարաֆյանը հիշվում է 1919 թ. մայիսին ջարդերից փրկված և Հալեպ հասած տիգրանակերտցիների ցանկում («Կոչնակ», 1919, № 22, էջ 708):



556. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչի(ն) | տէր եւ տիկին | Յովակիմ, Խանըմ | Քիլեճեան(ներ), | տէր, ծն(եալ) 1904-1944, | տիկին, ծն(եալ) 1907-1961: | Եղեսիացի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Խանմ Քիլեճյանը հիշվում է 1955 թ. հավեպրնակ ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ այրի էր, ուներ երկու տղա և երկու աղջիկ (Մահակեան Ա., նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 6):



557. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ: Խաչի պատվանդանի արևմտահայաց նիստին ագուցված են հանգուցյալների պատկերները, արձանագրությունը՝ տապանաքարի արևմտահայաց կողմի ամրացված միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 8 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Աղանի | Կարապետեան, | ծնած 1908 մայիս 28-ին, | Խարբերդի Հողէ գիւղէն, | մեռած 1944 ապրիլ 15-ին:

Սալիկ Բ.

Գառնիկ Կարապետեան, | 1900-1992:

Հրատ. *առաջին անգամ*:

Ծանոթ. կրում է 214 համարը:

Հողէ գյուղը գտնվում է Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի համանուն գավառում՝ Խարբերդ քաղաքից 12 կմ հարավ-արևելք: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Յուրթթաշը (*Yurtbasli*):



Աստ հանգչի | Գարեգին | Մանուկեան, | ուրֆացի, | ծնաւ 1911, | հանգ(եաւ) 1944:

Հրատ. *առաջին անգամ*:



560. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչի | եղեսիացի | Ներսէս | Թօփալեան, | ծն(եա)լ 1911, | հանգ(եալ) 1944 | յուլիս 7:


Հրատ. *առաջին անգամ*:



558. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | տիկին | Ռահել Յակոբեան, | ծնած Միս, 1908-ին, | մեռած Հալէպ, 1944 | օգոստ(ոս) 27-ին:

Հրատ. *առաջին անգամ*:



561. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին և մարմարե սալիկին, փորագիր, 10 տող.

Սալիկին.


Աստ հանգչին | Բէշիշեաններ՝ | Կարապետ, 1914-1944, | Յակոբ, 1920-1984: | Մանճաքցի:

Խաչի պատվանդանին.

Փուն է աշխարհ, իր փառքն ունայն, | արանց քեզի կեանքս է խոսպան, | ունէիր երազ, կը սիրէիր կեանք ու | պերճանք, վախ անցար անվարան, | թողիր զամենս անմխիթար:

Հրատ. *առաջին անգամ*:

Ծանոթ. Մանճաքն Ալեքսանդրեանի գավառն է:



559. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

562. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.



Աստ | հանգչի | Յովհաննես | Մակարեան, | ծն(աւ) 1926, մե(ռաւ) 1944, | խարքերոցի:

Հրատ. առաջին անգամ: Ծանոթ. կրում է 812 համարը:



մանատանը կառուցվել է աղբյուր (տե՛ս Շեն-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 1567):

565. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | այրի տիկին Մարիամ | Մխրբարեան, | ծն(աւ) 1865, Անտիոք, | մեռ(աւ) 1945 մ(ա)րտ 5, | մայր 15 զաւակաց:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 4-րդ մասում (համար 1706): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.:

563. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին պուրակաձև թևավոր խաչը չի պահպանվել, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 8 տող.

Աստ հանգչին | հայր եւ աղջիկ | Սէլգօնեան(ներ)՝ | Սելգօն, | ծն(եաւ) 1916, հ(ա)ն(գեաւ) 1967, | Զըվարթ, | ծն(եաւ) 1942, հ(ա)ն(գեաւ) 1944: | Փալուցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Փալուն Բալուն է:



566. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարի երեսին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչին | Ստամպուլեաններ՝ | Արմենակ, 1870-1945, | Շնորհիկ, 1896-1980:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ըստ Ազատուհի Գարրիելյան-Քորթոշյանի՝ Արմենակը և Շնորհիկը ծնվել են Յոզղաքում: Ունեցել են մեկ զավակ (չովակյիմ) և երեք թոռ:

564. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ: Խաչի կենտրոնում ամրացված է հանգուցյալի պատկերը, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երեք սալիկներին, փորագիր, 13 տող. Սալիկ Ա.

Աստ հանգչի | այնթապցի | Մովսէս Գէօշկերեան, | ծն(աւ) 1863, | մեռ(աւ) 1945:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Եագուպ Բէօշկերեան, | ծն(եաւ) Այնթապ, | 1912-1978:

Սալիկ Գ.

1927-1988 | հանգուցեալ | Ռօզին | Բէօշկերեան՝ | ծնեալ Իսկէնտէրեան:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Յ. Քեռշկերյանը 1951-1956 թթ. Հայկաի Զավարյան վարժարանի հոգաբարձության անդամ էր (*Պարսումեան Գ., Քսանանեակ Զատարեան կրթական միութեան եւ վարժարանի, էջ 107*): Նրա և Ռոզին Բեռշկերյանի հիշատակին 1988 թ. գերեզ-



567. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 10 տող.

Սալիկ Ա.
Աստ հանգչի | Մագրուիի | Մինասեան, | քարա-
մանցի, | ծն(աւ) 1872, | մ(ե)ռ(աւ) 1945:

Սալիկ Բ.
Աստ հանգչի | Աննիկ Մինասեան, | 1925-1986, |
զօնիացի:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 484): Այժմ գոյու-
թյուն չունի: Տեղահանվել է 2007 թ.:
Քարաման (Karaman) քաղաքը գտնվում է Կիլիկիայում:



568. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, դե-
պի ներս կորացված նիստերով, ուղղանկյունաձև, արձանագրու-
թյունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Յովհաննէս | Պէրպէրեան, | քի-
լիացի, | ծն(եալ) 1875, | հանգ(եալ) 1945:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում է քիլիսցի Ֆիտան, Խաթուն Պերպերյաննե-
րի տապանաքարին կից: Նրանց մասին տե՛ս Շեխ-Մագսուդի ա-
ռաքելական գերեզմանատան արձ. № 899:



569. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա,
ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, երկու
լուսանկարով քևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սա-
լիկին, փորագիր, 11 տող.

Աստ հանգչին | հայր եւ որդի | Սերայտարեան-
ներ՝ | Յարութիւն, | ծն(եալ) 1902, հ(ա)նգ(եալ) 1973,
| Խաթուն, ծն(եալ) 1926, հ(ա)նգ(եալ) 1946: | Պէօր-
կեաններ՝ | Փանոս, ծն(եալ) 1877, հ(ա)նգ(եալ) 1945,



| Մարիճա ծն(եալ) 1884, հ(ա)նգ(եալ) 1947: | Մա-
րաշցի: | Մարիամ, 1902-1989:

Հրատ. առաջին անգամ:

570. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝
մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | քնիկ | Մծոյ Յրոնք գիւղացի | Եղսա
Կարապետեան, | ծն(աւ) 1880, մեռ(աւ) 1945/10/25:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. կրում է 514 համարը:
Մծոյ բառի ծ տառը սխալ է փորագրված, պետք է լիներ շ:
Յրոնք գյուղը գտնվում է Արևմտյան Հայաստանի Բաղեշի
մահանգի Մուշ գավառում՝ Մուշ քաղաքից 16 կմ հյուսիս-արևելք:
Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Քրքոյոյ (Kırköy):



571. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին ա-
գուցված քևավոր խաչը չի պահպանվել, արձանագրությունը՝
մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | մխսի Աբուշ | Աբգարեան, | եղե-
սիացի, ծն(եալ) | 1881, հ(ա)նգ(եալ) 1945 | յունիս 19:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում է եղեսիացի Ֆերիդե Աբգարյանի տապա-
նաքարին կից: Վերջինիս մասին տե՛ս Շեխ-Մագսուդի առաքե-
լական գերեզմանատան արձ. № 1080:



572. Տապանաքար. քառաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Նազար Սիտեբճեան, | քիլիսցի, | 1881-1945:

Հրատ. առաջին անգամ:



573. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին ագուցված թևավոր խաչը չի պահպանվել, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչին | Սեդրակ Գիհանեան, | արարկիրցի, | 1884-1945, | Արաքսի Գիհանեան՝ | ծնեալ Գարայեան, | 1889-1965:

Հրատ. առաջին անգամ:



574. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Նազար ա(ւագ) սարկաւագ | Քիրազեան, | այնթապցի, | 1885-1945:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. Նազար Քիրազյանի հոգևոր գործունեությունը տևել է 25 տարի (Սեդրակեան Յ., Վարդ քահանայից, «Գանձասար»,

26/7/2007, (www.periotem.com)): Որպես լուսարար՝ սկզբում պաշտոնավարել է Այնթապի, ապա Հալեպի Սբ. Աստվածածին եկեղեցիներում մինչև կյանքի վերջը՝ 1945 թ. (Հինոռոյեան Ջ., նշվ. աշխ., էջ 28): Ամուսնացել է այնթապցի Երանիկի հետ և ունեցել 4 զավակ՝ Սուրեն, Մարիամ, Գեղանուշ և Նազարեթ: Որդիներից Նազարեթը հետագայում օժիվ է քահանա և կոչվել Գարեգին (Սեդրակեան Յ., Վարդ քահանայից, «Գանձասար», 26/7/2007): Երանիկ Քիրազյանի մասին տես Շեն-Մագուտի առաքելական գերեզմանատան արձ. № 1231:

575. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 7 տող.

Աստ հանգչին | Կիլիմեաններ՝ | Ղուկաս, | ծն(եալ) 1885, հ(ա)ն(գեալ) 1945, | Գեորգ, | ծն(եալ) 1929, հ(ա)ն(գեալ) 1970: | Տիգրանակեր(տ)ցի:

Հրատ. առաջին անգամ:



576. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ տապանաքարի երեսին ամրացված միմյանց կից երկու սալիկներին և խաչի պատվանդանի արևելահայաց նիստին ամրացված մարմարե սալիկին, 18 տող.



Սալիկ Ա, տապանաքարին, ներկագիր.

Աստ հանգչին | Ֆերիտե | Տ(եր)-Գրիգորեան, | այնթապցի, | ծն(եալ) 1886, հ(ա)ն(գեալ) 1945, | Յակոբոս | Տ(եր)-Գրիգորեան, | ծն(եալ) 1885, հ(ա)ն(գեալ) 1956: | Այնթապ:

Սալիկ Բ (մարմարե), տապանաքարին, փորագիր.

Աստ հանգչի | օր(իորդ) Մարի | Տեր-Գրիգորեան, | 1909-1985, | այնթապցի:

Սալիկ Գ, խաչի պատվանդանին, փորագիր.

Աստ հանգչի | Սարգիս | Տէր-Գրիգորեան, | 1928-1990:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 270 համարը:

Հակոբոս Տեր-Գրիգորյանը 1928 թ. Սբ. Աստվածածին եկեղեցու թաղական խորհրդի անդամ էր («Տարեւ», 1929, էջ 384):

577. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | այնթապցի | Գէորգ | Սարըսյոտեան, | ծն(եալ) 1887, հանգ(եալ) 1945:

Հրատ. առաջին անգամ:



578. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երեք սալիկներին, փորագիր, 16 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Կարապետ | Դերձակեան, | ծն(եալ) Ուրֆա, 1887, | հանգ(եալ) 1945 մարտ 3:

Սալիկ Բ.

Աստ հանգ(չի) | Մարի | Դերցակեան, | ծն(եալ) Ուրֆա, 1895, | հ(ա)ն(գեալ) 1959 օգոստոս 7:

Սալիկ Գ.

Աստ հանգչին | Արշակ | Դերձակեան, | 1921-1994, | Արաքսի, 1928-2005, | ծն(եալ) Չերքեզեան:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Մարի Դերձակյանը հիշվում է 1955 թ. հայկապահանկ ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ այրի էր, ուներ երկու տղա և երկու աղջիկ (Սահակեան Ա., նշվ. աշխ., հավելվածը (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 7):



579. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | այնթապցի | Գէորգ Ղատեան, | ծն(եալ) 1888, հ(ա)նգ(եալ) 1945:

Հրատ. առաջին անգամ:



580. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 7 տող.

Աստ հանգչին | Եղիսաբեթ | Թօրոսեան, | ծն(եալ) 1890, հ(ա)ն(գեալ) 1945, | իր աղջիկը՝ | Չապլէ: | Կիրիւնցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 1261): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.:



581. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 11 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | սասունցի | Խանըմ | Յակոբեան, | ծն(եալ) 1890, | հանգ(եալ) 1945:


Սալիկ Բ.

Աստ հանգչին | Մարի Գէոյեան, | 1913-1966, | մայրը՝ | Խանըմ Յակոբեան:

Հրատ. առաջին անգամ:



582. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.



Աստ հանգչի | Նազար | Խալոյեան, | ատրեանանցի, | ծն(աւ) 1893 նոյ(եմ)բ(եր) 22, | մ(ե)ռ(աւ) 1945 սեպտ(եմբեր) 23, | Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

583. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով քևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 14 տող. Սալիկ Ա.

Աստ հանգչի(ն) | հայր ու աղջիկ՝ | Սահակ | Կոստանեան, | 1893-1945, | Մարի | Կոստանեան, | 1932-1945: | Քիլիսցի:

Սալիկ Բ.
Աստ հանգչի | Լուսաժին | Կոստանեան՝ | ծն(եալ) Կօճիկեան, | 1912-1999:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում է քիլիսցի Ավետիս Կոստանյանի տապանաքարի մոտ: Վերջինիս մասին տես Շեն-Մագսուտի առաքելական գերեզմանատան արձ. № 809:



584. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով քևավոր խաչ, արձանագրությունը՝ տապանաքարին և սալիկին, 16 տող. Տապանաքարին, փորագիր.

Աստ հանգչի | Սասուն քիրտացի | տիկ(ին) Լուսիա Սկրտիչեան, | ծն(եալ) 1894, հանգ(եալ) 1945: | Ահա այսպէս, իմ ազնիւ | ընթերցող, | կրակավառ սրտիս չգտայ | մի ցող, | եօթը տարի հիւանդ սիրտս | հալեցաւ, | ... ծաղիկ հասակս մոխիրի | դարձաւ:

Սալիկին, ներկագիր.
Յակոբ | Սկրտիչեան, | ծն(եալ) 1887, հ(ա)ն(գեալ) 1967, | սասունցի:
Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. Քիրտաս գյուղը, ամենայն հավանականությամբ, Գերտա գյուղն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Բաղեշի նահանգի Սասուն գավառի Խարզան գավառակում: Նշվում է Շեյխոնես գյուղի տեղում, որը ներկայումս կոչվում է Շեյխունու (Şeyhyanus):

585. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ քևավոր խաչ, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | քիլիսցի | Կիլլը Խարճեան, | ծն(աւ) 1895, | մեռ(աւ) 4 փետր(ուար) 1945:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. կրում է 722 համարը:



586. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Սկրտիչ | Թարբինեան, | 1902-1945, | կարնեցի:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում էր 4-րդ մասում (համար 2084): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:



587. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.



Աստ հանգչի | Մկրտիչ | Մէլքոնեան, | ծն(եալ) 1904, Կարին, | հ(ա)նգ(եալ) 1945 յուլիս 7:

Հրատ. առաջին անգամ:


588. Տապանաքար. չորս անկյուններում՝ գնդերով ավարտվող փոքր սյուներով երիզված, ուղղանկյունաձև, արձանագիր սալիկը՝ արևելակողմի գույգ սյուների միջև, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Չապլէ Պէնլեան, | ծն(աւ) Կեսարեա, 1905, | մեռ(աւ) 1945:

Հրատ. առաջին անգամ:



589. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկներին, 5 տող.



Աստ հանգչի | տիկին) Նուարդ Ամատունի՝ | ծնեալ Սիրմէլեան | ի Տրապիզոն, | ծն(եալ) 1906, հ(ա)նգ(եալ) 1945:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 494): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

590. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.



Աստ հանգչի | Պետրոս | Սպէնճեան, | ծն(եալ) 1910-1945, | ուրֆացի:

Հրատ. առաջին անգամ:

591. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, տապանաքարի արևմտյան և արևելյան եզրերին՝ երկուական, իսկ կենտրոնում՝ մեկ թևավոր խաչ, արձանագրությունը՝ հարավահայաց նիստին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի Կարապետ Քէշիշեան՝ թոռը իշխան Կիրակոս | Քէշիշեանի, որ ծնաւ Հասանապէլի-Ամանոս, 1912 և սպանուեցաւ | Հալէպ, հայանուն ճիւղներու դիտային նախապատրաստութեամբ, | ոճրագործի մը կռնակէն նետած 4 գնդակներով, 1945 օգոստոս 14:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. դիտային բառի ե տառը սխալ է փորագրված, պետք է լիներ ւ:

Իշխան Կիրակոս Քէշիշեանի մասին տես Շելս-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 44:



592. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Անդրանիկ | Քէշիշեան, | քիլիսցի, | ծն(աւ) 1912 ապրիլ, | մ(ե)ռ(աւ) 1945 սեպտ. 29:

Հրատ. առաջին անգամ:



593. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 12 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Չաւէն Գույումճեան, | ծն(եալ) 1912, Կերմիր, Կեսարեա, | հանգ(եալ) 1945: | Մինչ ապրած երեսուն երեք գարուններ, | դեր նոր կը հիւսէի բիւր երագներ, | կեանքի մրրիկը մարեց յուսերս, | քերաւ, աս սեւ հողին տակ դրաւ զիս:

Սալիկ Բ.

Աստ հանգչին | Գույումճեաններ՝ | Արամ, 1902-1956, | Համբարձում, 1898-1985:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Կերմիրը գտնվում է Անատոլիայում՝ Կեսարիայի նահանգում՝ Կեսարիա քաղաքից 12 կմ հյուսիս-արևելք: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Քոնակլար (Konaklar):



594. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 10 տող.

Աստ հանգչի | Ճիպինցի | Յովհաննէս | Ա. Աճէմեան, | ծն(եալ) 1914 յունվ(ար) 5, | հանգ(եալ) 1945 յունվ(ար) 29: | Մարմինը տկարութիւնով կը | սերմանուի ու զորութիւնով | յարութիւն կառնէ: | Ա (1) Կոր(նթացիս) 15. 43:

Հրատ. առաջին անգամ:


Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:



595. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.

Աստ | հանգչի | ալկնցի | Գրիգոր | Քիւրբճեան, | ծն(եալ) 1915, | հան(գեալ) 19 ապր(իլ) 1945:

Հրատ. առաջին անգամ:



596. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Գրիգոր Գոզագճեան, | ծնալ 1916, գիլիսցի, | վախճանեցաւ 1945:

Հրատ. առաջին անգամ:


Ծանոթ. Գիլիսը Քիլիսն է:



597. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց միստին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգչի | Ահարոն Մինասեան, | պուրսացի, | որ կնքեց իր մահկանացուն | ծաղիկ հասակին մէջ | մօթօրի յանկարծական թաւալումով: | Հանգիստ ոսկորներուդ, | ծն(եալ) 1926-1945:

Հրատ. առաջին անգամ:



598. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգչին | քիլիսցի | Գրիգոր | Տէր-Յովհաննէսեան, | ծն(եալ) 1891, հ(ա)ն(գեալ) 1974, | Ալիս |

Տեր-Յովհաննեսեան, | ծն(եալ) 1936, հ(ա)ն(գեալ) 1945:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. գտնվում է Եղտ, Նշան և Գևորգ Տեր-Հովհաննեսյանների տապանաքարերին կից: Վերջիններիս մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 248, 821:

599. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | հաճի | Սարգիս | Միքայելեան, | 1860-1946, | արաբկերտցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Արաբկերտն Արաբկիրն է:



600. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, կոթողաձև, արձանագրությունը՝ տապանաքարի արևմտահայաց և հյուսիսահայաց միստերին, 7 տող.


Արևմտահայաց միստին.

Աստ հանգչին | Ռափայել Մինասեան, | 1862-1946, | Միքայել Մինասեան, | 1876-1948:

Հյուսիսահայաց միստին.

Նաճիպ | Մինասեան:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 62): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

Ռափայել Մինասյանը 1889-1890 թթ. Ազգ. Ներսեսյան վարժարանի հոգաբարձության անդամ էր (ՊՀՀ, հ. 3, էջ 882-883):

601. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչին | քիլիսցի | Յովհաննես Միլահեան, | ծն(եալ) 1863, հ(ա)նգ(եալ) 1946 | եւ | Իսկուհի Միլահեան, | ծն(եալ) 1889, հ(ա)նգ(եալ) 1949:

Հրատ. առաջին անգամ:



602. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Հրիփսիմե | Պաճագեան, | ծն(եալ) Մերաստիա, 1866, | հանգ(եալ) 1946:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է 4-րդ մասում՝ սերաստացի Կարապետ և Լուսին Պաճագյանների տապանաքարի հարևանությամբ: Նրանց մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 1058:



603. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.



Աստ հանգչի(ն) | տեր եւ տիկին | Խոսեւտան, Ռահել | Խաչատուրեան(ներ), | տիկ(ին), ծն(եալ) 1800, հ(ա)ն(գեալ) 1962, | տէր, ծն(եալ) 1874, հ(ա)ն(գեալ) 1946: | Սասունցի:

Հրատ. առաջին անգամ: Ծանոթ. 1800 թվականի տասնավորը կամ հարյուրավորը սխալ է փորագրված:

604. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարին և սալիկին, 11(°) տող.

Տապանաքարին, փորագիր.

Տապան | է | ... | յունիս 20:

Սալիկին, ներկագիր.

Աստ հանգչի(ն) | Կիրակոս, | Լուսեայ | Երեցեան(ներ): | Տէր, 1875- 1946, | տիկ(ին), 1897-1961: | Սասուն:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ավելի ուշ ամրացված սալիկը ծածկել է տապանագրի մեծ մասը:



605. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Մարգրիտ | Ենովքեան, | ծն(եալ) 1877, Խարբերդ, | հանգ(եալ) ի տէր, 1946 յ(ու)լ(ի)ս:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.: Կրում էր 661 համարը և գտնվում էր խարբերդցի Հարություն Ենովքյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեն-Սագսուղի առաքելական գերեզմանատան արձ. № 832:



606. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Կարապետ | Իվիպէյեան, | ծն(եալ) Կարին, | 1883-1946:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 30): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

Կարապետ Ուրուպեյանը 1927 թ. Բերիոն թեմի ուսումնական խորհրդի անդամ էր («Տաթև», 1929, էջ 379):



607. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ հարավահայաց նիստին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | մշգեղցի | Պողոս Գալուստեան, | 1886-1946:

Հրատ. առաջին անգամ:



608. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարին և մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Տապանաքարին.

Միսաք Քէշիշեան, | 1889-1946, | ալպիստանցի: Սալիկին.

Աստ հանգչի | Միսաք | Քէշիշեան, | 1889-1946, | ալպիստանցի:

Հրատ. առաջին անգամ:



609. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարին և մարմարե սալիկին, փորագիր, 10 տող.



Տապանաքարին.

Աստ հանգչի | սասունցի | Խանըմ Մակարեան, | ծն(աւ) 1892, մե(ռաւ) 1946 հոկ(տեմբեր) 4:

Սալիկին.

Աստ հանգչի(ն) | Յարութիւն | Սըհոյեան, | ծն(եաւ) 1889, հ(ա)ն(գեաւ) 1961, | տիկ(ին) Պայծառ, | 1912-1981:

Հրատ. առաջին անգամ:

610. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Վարդան | Շեհիրեան, ծն(եաւ) | Կիրին, 1895, | հ(ա)ն(գեաւ) 1946:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Վարդան Շեհիրեանը 1942-1943 թթ. պաշտոնավարում էր Ազեզ գյուղի Սահակյան վարժարանում (*Ղազարեան Ս., նշվ. աշխ., էջ 45*):



611. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Սեդրակ Դաւիթեան, | ծն(աւ) 1898, Գօզան, Սիս, | մեռ(աւ) 1946 մարտ 10-ին, | Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Սեդրակ Դավիթեանը 1938 թ. Հալէպում ծառայում էր որպէս զինվորական դեկավարի խոհարար: Ուներ 5 զավակ՝ երկու տղա և 3 աղջիկ: Որդիներից մեկը՝ Հակոբը, Ազեզի հայկական դպրոցի շրջանավարտ էր: 1938-1939 թթ. մեքենագործություն էր սովորում Հալէպի Ս. Կյուլպենկյան արհեստից վարժարանում (ՀԱԴ, ֆ. 1394, ց. 1, գ. 152, ք. 3):



612. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, երկու լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 10 տող.

Աստ | հանգչի(ն) | սասունցի(ներ) | Յակոբ | Գաբրիէլեան, | 1901-1946, | եղբայրը՝ | Յովսէփ | Գաբրիէլեան, | 1905-1963:

Հրատ. առաջին անգամ:



613. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, երկու լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի(ն) | տէր եւ տիկին | Գարակէօզեաններ՝ | Յովսէփ, 1905-1946, | Լուսածին, 1915-1984: | Սասունցի, Հազրոյ գիւղէն:


Հրատ. առաջին անգամ:



614. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Կարապէտ | Քէօսա(յ)եան, | 1910-1946 | յ(ու)ն(ի)ս 5, | Խարբերդ, | հողեցի:

Հրատ. առաջին անգամ:



615. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարին և մարմարե սալիկին, փորագիր, 10 տող. Տապանաքարին.

Աստ հանգչի | ուրֆացի տ(ի)կին | Բերեգայ | Գը-լըճեան, ծն(եալ) | 1911, հան(գեալ) 1946 | մայիս 2-ին: Սալիկին.

Աստ հանգչի | Խանըմ Հայիթեան, | 1903-1977, | ուրֆացի:

Հրատ. առաջին անգամ:



618. Տապանաքար. հողի մեջ ուղղահայաց կանգնեցված սալիկ, արձանագրությունը՝ սալիկի արևելահայաց նիստին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Հրաչիա Լուսինեան՝ | Այճեան, | ծն(եալ) Արաբկիր, 1862, | հանգ(եալ) 26 մայ(իս) 1947:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Հրաչյա Այճյանը 1928 թ. Սք. Քառասնից մանկանց եկեղեցու թաղական խորհրդի քարտուղարն էր («Տարե», 1929, էջ 380): Նրա և կնոջ՝ Սաթենիկի տապանաքարերն իրար կից են: Վերջինիս մասին տես՝ Շելս-Մագստղի առաքելական գերեզմանատան արձ. № 651:



616. Հուշաքար. ուղղանկյունաձև, գտնվում է գերեզմանոցի արևմտյան պարսպին կից, արձանագրությունը՝ արևելահայաց նիստին, փորագիր, 7 տող.

Է: | Աստ ամփոփին ոսկերք ժողովրդոց մերոց | քահանայից, իշխանաց և այլոց, որք թաղեալ կային | ի հին | գերեզմանատան Ազիզիէյի և փոխադրեցան | յայսմ դամբանի | յառաջնորդութեան տ(եր) Ջարէի Ա եպիսկոպոսի, | ի թուին հայոց ՌՅՂԷ և ի փրկչական թուին 1947: | Յիշատակն արդարոց օրինութեամբ եղիցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 1005 համարը: Ազիզիէի գերեզմանոցի մասին տես՝ սույն աշխ., էջ 179-181:



619. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | չմշկածակցի | Մարթա | Ղազարեան, | ծ(նալ) 1867, հ(անգեալ) 1947:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է չմշկածագցի Ղազար Ղազարյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես՝ Շելս-Մագստղի առաքելական գերեզմանատան արձ. № 1028:



617. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ ստորին մասում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Եղիսաբէթ | Կալոյեան, ծն(եալ) | Կիլիլուն, 1857, | հան(գեալ) 1947:

Հրատ. առաջին անգամ:

620. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Յակոբ | Թաթիկեան, | ծն(եալ) 1870, հ(ա)ն(գեալ) 1947, | Բալու, խօշմատցի:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. «Խօշմատ»-ը խոշմարն է:



623. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչին | սասունցի(ներ) | Պաղտասար Մուրատեան, | ծն(աւ) 1873, մեռ(աւ) 1947, | Գրիգոր Մուրատեան, | ծն(աւ) 1900, մեռ(աւ) 1949:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 1182): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.:



621. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Յարութիւն | Իսկէնեան, | այն-թապցի, | ծն(եալ) 1872, | հանգ(եալ) մարտ 5, 1947:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում է այնթապցի Մերին Իսկենյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 1107:



624. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Մանուէլ աղա Պայրամեան, | ծն(եալ) Քիլիս, 1875, | հանգ(եալ) 1947, Հալէլայ:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.: Գտնվում էր 6-րդ մասում (համար 75) Ռոզա ու Նոյեմի Պայրամյանների տապանաքարերին կից: Նրանց մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 456, 687:



622. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Կարապետ | Իսկենտլերեան, | անջրդեցի, | 1873-1947 օգ(ոստոս) 9:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. կրում է 368 համարը:



625. Տապանաքար. վեց փոքր սյուներով, արձանագրությունը՝ սյունների ներսում զետեղված վերնամասում կամարաձև սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Ուստիկ Պետրոսեան, | ծն(աւ) Չանաքքալէ, 1876, | մեռ(աւ) 28 ապրիլ 1947:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. կրում է 175 համարը: Չանաքկալէ (Çanakkale) քաղաքը գտնվում է Անատոլիայում:



626. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Մերոբ | Բէօսէեան, | ծն(եալ) 1877, հ(ա)ն(գեալ) 1947, | պիտլիսցի:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. Պիտլիսը Բաղեշն է:



627. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Ուղարեր Փայլեան, | ծնած 1880 Կիրիւն, | մեռած 1947 ապրիլ 17, | Հալէպ:
Հրատ. առաջին անգամ:



628. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող հայերեն, որից վար՝ փորագիր, նույն բովանդակությամբ 2 տող արաբերեն.

Աստ հանգչի | Գրիգոր | Հազարշահեան, | ծն(ալ) 1880, Թալաս, | մ(ե)ռ(ալ) 1947, Հալէպ:
Արաբերեն. ١٩٤٧-١٣٨٠ | كركور هزارشاهيان
Հրատ. առաջին անգամ:



629. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից երկու սալիկներին, 12 տող.

Սալիկ Ա, ներկագիր.
Աստ հանգչի(ն) | Հաճի-Նարինեան | Յովհաննես, | ծն(եալ) 1880, հ(ա)ն(գեալ) 1947, | Հաճի-Նարինեան | Վարդուհի, | ծն(եալ) 1885, հ(ա)ն(գեալ) 1971: | Իզմիրցի:
Սալիկ Բ (մարմարե), փորագիր.
Աստ հանգչի | Յակոբ Հաճի-Նարինեան, | 1925-1988:
Հրատ. առաջին անգամ:



630. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 11 տող.

Սալիկ Ա.
Աստ հանգչի | Վարդուհի | Պասմաճեան, | քիլիսցի, | ծն(եալ) 1883, | հանգ(եալ) 1947:
Սալիկ Բ.
Աստ հանգչի | Լուսիա | Մկրեան, | 1888-1990, | Գիլիս:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում է քիլիսցի Գրիգոր և Հովհաննես Մկրյանների տապանաքարերին կից (տե՛ս Շեն-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 746, 1345):



631. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Աբրահամ | Խարսանտարեան, | ուրֆացի, | ծն(աւ) 1887, մեռ(աւ) 1947:

Հրատ. *առաջին անգամ:*



632. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 7 տող.

Աստ հանգչին | մայր եւ որդի | Մայրամ, Գրիգոր | Մալեան(ներ), | մայր, 1887-1947, | որդի, 1908-1966: | Ամասյացի:

Հրատ. *առաջին անգամ:*



633. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Հակոբ | Մարգարեան, | սասունցի, | ծնած 1888, | մեռած 1847:

Հրատ. *առաջին անգամ:*



634. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Սարգիս Ոսկերիչեան, | եղեսիացի, | ծն(աւ) 1895, մեռ(աւ) 1947 | յուլիս 26:

Հրատ. *առաջին անգամ:*



635. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչին | Պողոս Ալաւեան, | 1907-1956, | Սեդրակ Ալաւեան, | 1897-1947: | Բալուի Մագրաթ | գուղէն:

Հրատ. *առաջին անգամ:*

Ծանոթ. Մագրաթ գյուղը Մակրատն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Դիարբեքիի նահանգի Բալու գավառում՝ Բալու քաղաքից 5 կմ հյուսիս-արևմուտք: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Յազըբաշը (Yazibashi):



636. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, խաչակիր, քառակողմ, վրանաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին ագուցված մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.



Աստ հանգչի | Հայկանուշ | Կ. Մալուլեան | կո-ղ(ակիցն) Պողոս | Չատրճեան(ի), | ծն(եաւ) Տ(իգ-

րանա)կերտ, 7 մ(ա)րտ 1898, | հանգ(եայ) 24 հոկ(տեմբեր) 1947:

Հրատ. *առաջին անգամ*:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 234): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

637. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 7 տող.

Աստ հանգչի(ն) | Սյրտիչ Մելքոնեան, | ուրֆա-ցի, | ծն(եայ) 1900, հ(ա)ն(գեայ) 1947, | քույրը՝ | Խանըմ Չալեան, | ծն(եայ) 1896, հ(ա)ն(գեայ) 1970:


Հրատ. *առաջին անգամ*:



640. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Օժէն Մովսէսեան, | տ(իզրանա)-կերտցի, | ծն(աւ) 1913, մե(ռաւ) 1947:

Հրատ. *առաջին անգամ*:



638. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Սողմէն Աճեմեան, | ծն(եայ) Էկին, 1907, | հանգ(եայ) Հալեպ, 1947: | Անցորդ, աղօթ է իր հոգւոյն ազատութեան համար:

Հրատ. *առաջին անգամ*:

Ծանոթ. Էկինն Ակնն է:




641. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 12 տող.

Աստ հանգչի | Պերճ Բ. Բարսեղեան, | բալուցի, | ծն(եայ) 1913, հանգ(եայ) 1947 նոյ(եմբեր) 19: | Այս է տապան ունայնութեան, | լալով, ողբով գրէ քարիս, | ախով վախով անցաւ տարիս, | ճար մը չեղաւ խեղճ տկարիս, | գոհ մը եղայ ճակատագրիս, | ծաղկահասակ առաւ հոգիս, | կարդաս այս գիր տապանակիս, | հայր մեր ըսես տարաբաղդիս:

Հրատ. *առաջին անգամ*:

Ծանոթ. Պերճ Բարսեղեանը 1919 թ. մայիս-հունիս ամիսներին գտնվում էր Խարբերդի ամերիկյան որբանոցում («Կոչնակ Հայաստանի», 1919, № 23, էջ 746):



639. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 7 տող.

Աստ հանգչին | Յովհաննէս, | 1900-1965, | Մարիամ, | 1912-1947, | Ճեվահիրճեաններ: | Մերատացի:

Հրատ. *առաջին անգամ*:

642. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Ճորճ | Արուշեան, | ուրֆացի, | ծ(նեալ) 1917, | հ(անգեալ) 1947:

Հրատ. *առաջին անգամ:*



643. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգ(չին) | Յովհաննէս | Խաչատուրեան, | ծն(եալ) 1889-1957, | Յակոբ | Խաչատուրեան, | ծն(եալ) 1930-1947: | Սասունցի:

Հրատ. *առաջին անգամ:*



644. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Խաթուն Չօլաքեան, | ատանացի, | ծն(եալ) 1851, հանգ(եալ) 1948:

Հրատ. *առաջին անգամ:*



645. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ խաչքար, արձանագրությունը՝ փորագիր, 10 տող.

1887-1969, դանբան | Տոտու Պէրեարեան | Գալէմբարեանի: | Յուշադամբան | այնթապցի | մեծ վարպետ | Մելքոն | Գալէմբարեանի | և կողակցին՝ Եղսա(յ)ի: | 1855-1918, 1858-1948:

Հրատ. *առաջին անգամ:*

Ծանոթ. Համիդյան ջարդերից ընտանիքի փրկվելու հիշատակին Մելքոն Գալէմբարեանը 1897 թ. Այնթապի Սբ. Աստվածածին եկեղեցու համար պատրաստում է ջահ (տե՛ս Սբ. Աստվածածին նոր եկեղեցու արձ. № 7): 1915 թ. մարտի 22-ին որդիների հետ ստեղծում է տապանակ (տե՛ս Սբ. Աստվածածին եկեղեցու արձ. № 102): Այնթապահայերի արտրից հետո տապանակն ու ջահը բերվում են Հալեպ:



646. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ տապանաքարի արևմտահայաց կողմի զետեղված մարմարե սալիկին, ներկագիր, 4 տող.

Հաճի Ներսէս | Գօգանօղլի, | ծն(եալ) 1870, Այնթապ, | հ(ա)նգ(եալ) 1948, Հալեպ:

Հրատ. *առաջին անգամ:*

Ծանոթ. կրում է 251 համարը:



647. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Լահուս | Ասլանեան, | ծն(եալ) 1875, հ(անգեալ) 1948, | սասունցի:

Հրատ. *առաջին անգամ:*



648. Տապանաքար. դեպի ներս կորացված նիստերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Այս է դամբանն այրի | տիկին հաճի Ֆերիտե | Գարճեանի, | ծն(աւ) Մարաշ, 1875-ին, | մ(ե)ռ(աւ) Հալէպ, 1948-ին | յուլիս:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 1076 համարը և գտնվում է մարաշցի Մարիամ Գարճյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես՝ Շեն-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 905:



649. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | քիլիսցի | Լուիզա | Գապայէնճեան, | ծն(եալ) 1875, | հանգ(եալ) 18 մարտ 1948 (°):

Հրատ. առաջին անգամ:



650. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.



Աստ հանգչի ի տեր | այրի տիկին) Թագուհի | Շաքարճեան՝ | ծն(եալ) Գույումճեան: | 1922-ին Իգմիրէն Հալէպ | զաղթած է, | ծնեալ 1878, | հանգեաւ ի տեր 1948-ին: | Աղօթեցէք վասն իւր:

Հրատ. առաջին անգամ:


Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 1457): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.:

651. Տապանաքար. հողի մեջ ուղղահայաց կանգնեցված սալիկ, արձանագրությունը՝ սալիկի արևելահայաց նիստին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Սաթենիկ Լուսինեան՝ | Այճեան, | ծն(եալ) Արաբկիր, 1879, | հանգ(եալ) 30 մայ(իս) 1943:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Սաթենիկ Այճյանը հիշվում է 1944 թ. Արաբկիրի և շրջակայքի հայրենակցական միության Հալէպի մասնաճյուղի վարչության տեղեկագրում՝ մահացած հայրենակիցների ցանկում («Ոսկեգետակ. տարեգիրք», Պէյրուք, 1945, № 3, էջ 216): Հրաչյա Այճյանի կինն էր: Տապանաքարերը գտնվում են միջանց կից: Վերջինիս մասին տես՝ Շեն-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 618:



652. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսակարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին, փորագիր, 6 տող.

Աստ | հանգչի | Սկրտիչ | Եսա(յ)եան, | ծն(աւ) Ուրֆա, 1880, | մեռ(աւ) մ(ա)րտ 1948:


Հրատ. առաջին անգամ:



653. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | այնթապցի | Յովհաննէս Ճէպէճեան, | ծն(եալ) 1880, հանգ(եալ) 1948:

Հրատ. առաջին անգամ:



654. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 8 տող.

Աստ հանգչին | [ք]ոյր եւ եղբայր | Խաչատուրեաններ՝ | Սարգիս, | ծն(եալ) 1884, հ(ա)ն(գեալ) 1959, | Վարդուհի, | ծն(եալ) 1880, հ(ա)ն(գեալ) 1948:

| Սեւերակցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 3362 համարը և գտնվում է սևերեկցի Եղաս Խաչատուրյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես՝ *Շին-Մագստոյի առաքելական գերեզմանատան արձ. № 1250:*

Սեւերակը Սևերեկ քաղաքն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Դիարբեքի Մահանգի համանուն գավառում՝ Ամիդ քաղաքից 40 կմ հարավ-արևմուտք: Թուրքերենով արտասանվում է Սիվերեք (*Siverek*):



655. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Ղուկաս | Տէր-Ղուկասեան, | ծն(եալ) 1881, հ(ա)ն(գեալ) 1948, | քիլիսցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ղուկաս Տէր-Ղուկասյանը 1928 թ. Աֆրին գյուղի հայերի թաղական խորհրդի գանձապահն էր («Տարե», 1929, էջ 384), իսկ 1932 թ.՝ Սբ. Նշան եկեղեցու թաղականության խորհրդի անդամ (*Ղազարեան Ս.*, նշվ. աշխ., էջ 114):



656. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, կոթողաձև, արձանագրությունը՝ կոթողի արևմտահայաց նիստին, փորագիր, 3 տող.

Յակոբ | Օշական, | 1883-1948:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. Հակոբ Օշականը (Հակոբ Հովհաննեսի Զյուֆեճյան) ծնվել է Բուրսայում 1883 թ. դեկտեմբերի 9-ին: Ծնողները քաղաքամերձ հայաբնակ Սեղեոզ գյուղից էին: Նա 5 տարեկան էր, երբ մահանում է հայրը: Ուներ երկու եղբայր:

Սովորում է ծննդավայրի Գևորգյան ազգային վարժարանում, 1899-1900 թթ.՝ Արմաշի դպրեվանդանում: 1900 թ. նշանակվում է Սեղեոզ գյուղի դպրոցի ուսուցիչ: 1902 թ. «Արեւելք» թերթում հրատարակվում է նրա առաջին պատմվածքը՝ «Առաջին արցունքը», որն էլ պաշտոնազրկման պատճառ է դառնում: Այնուհետև դասավանդում է Մարմարծր գյուղի դպրոցում: 1909-1910 թթ. Պոլսի «Ազգակ» շաբաթաթերթում և «Ազատամարտ» օրաթերթում լույս են տեսնում «Մատնազել Եւան», «Տոսիճը», «Պաղտօն» ստեղծագործությունները: 1911 թ. ուսուցանում է Մալկարայում, 1912 թ.՝ Պոլսում՝ միևնույն ժամանակ գործակցելով Իզմիրի «Հայ գրականութիւն», Պոլսի «Շանթ» տարեգրքերի, Մոսկվայի «Գարուն» և Պոլսի «Հայրենի» տարեցույցների հետ: 1914 թ. «Մեհյան» հանդեսի խմբագիրներից էր: 1915 թ. ապրիլ 24-ի ձերբակալություններից կարողանում է խույս տալ: Պատասպարվում է պոլսահայ մի ընտանիքում: Մինչև 1918 թ. ութ անգամ ձերբակալվում է: Նշյալ թվականին Դուրյան սրբազանի տրամադրած գումարով կաշառում է թուրք ոստիկանությանը և փետրվարին գերմանացի սպայի հագուստով անցնում Բուդյարիա: 1919 թ. վերադառնում է Պոլիս և շարունակում ուսուցանել: 1922 թ. բեմադրում է «Նոր պատկ»-ը և հիմնում «Բարձրականք» հանդեսը: Նույն թվականի հոկտեմբերին դարձյալ փախչում է Բուրլարիա: 1924 թ. մեկնում է Եգիպտոս, 1926 թ.՝ Կիպրոս, 1934 թ.՝ Երուսաղեմ: 1937 թ. սրտի կաթված է ստանում: Բուժվելով Փարիզում վերադառնում է Երուսաղեմ և մինչև 1947 թ. ուսուցա-



նում ժառանգավորաց վարժարանում: 1948 թ. փետրվարի 17-ին աշակերտներից մեկի՝ Գրիգոր Երիցյանի տանը կնքում է մահկանացուն («Օջական», 1983, № 1-4, էջ 123):

Բազմաթիվ պատմվածքների և վեպերի հեղինակ է (տե՛ս «Ազդակ», 1909, № 35: «Մեխյան», 1914, № 2: «Բարձրավանք», 1922, № 1: «Ոստան», 1920, № 11-13: «Սյուն», 1927, № 9: «Արեւելեան մամուլ», 1906, № 24, էջ 600: «Հայրենիք», 1926, № 11, էջ 14-20; 1927, № 3, էջ 50-63; № 12, էջ 52-57; 1928, № 2, էջ 57-60; № 11, էջ 33-50; № 12, էջ 29-36, 30-47: «Հայրենիք. տարեգիրք», 1947, էջ 175-178): Հանդես է եկել Գեղջուկ, Յ. Բ., Յ. Օ., Հովհաննեսյան Հակոբ և Օջական ծածկանուններով (**Հովհաննեսյան Բ.**, նշվ. աշխ., էջ 757): Օջական ծածկանունը գործածում է 1913 թ.-ից, երբ Պոլսի «Ազատամարտ» թերթում առաջին անգամ տպագրվում է «Աղուրնակ քարը» («Օջական», 1983, № 1-4, էջ 123):

1945-2000 թթ. լույս է տեսնում «Համապատկեր արեւմտահայ գրականութեան» 10 հատորյակը: Ծննդյան 100-ամյակին նվիրված 1983 թ. հրատարակվում են «Կայսերական յաղթութիւն» (Պեյրուք), «Սիւլեյման էֆէնտի» (Անթիլիաս), «Սինչեուռ...», «Մայրիներու շուքին տակ», «Նամակահի Հ. Ա.», «Բնաբխադեր», «Երբ հիները կը կարդանք» (Պեյրուք) ստեղծագործությունները: 1973 և 1998 թթ. Անթիլիասում և 1979 թ. Երևանում լույս է տեսնում «Երկեր»-ի ժողովածուն:

657. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ արևելահայաց միստին՝ մարմարե մեկ և տապանաքարի երեսին ամրացված երկու սալիկներին, փորագիր, 15 տող.

Արևելահայաց միստին.

Աստ հանգչի | Մարիամ | Նալպանտեան, | այնթապցի, | 1883-1948:

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Չապլէ | Նալպանտեան | ծն(եալ) Եկաւեան, | 1911-1978:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Յարութիւն | Նալպանտեան, | այնթապցի, | 1906-1986:

Հրատ. առաջին անգամ:



658. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Սարգիս | Բաղիկեան, | չինիշկէ-գէ(կ)ձի, | ծն(աւ) 1885, մե(ռաւ) 1948:

Հրատ. առաջին անգամ:



659. Տապանաքար. դեպի ներս կորացված միստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ սալիկին, փորագիր, 5 տող.



Աստ հանգչի | Նազր | Խաչիկեան, | տ(իգրանա)-
կերտցի, | 1886-1948:

Հրատ. առաջին անգամ:

660. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝
մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Գրիգոր | Ե. Տիարպեքիլեան, | ա-
րաքկիրցի, | 1886-1948:

Հրատ. առաջին անգամ:



661. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝
կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝
տապանաքարին և մարմարե սալիկին, փորագիր, 10 տող.

Տապանաքարին.

Աստ հանգչի | ուրֆացի Գիրգոր | Թաշճիեան, |
ծն(եալ) 1886, | հան(գեալ) 1948:

Սալիկին.

Աստ հանգչի | Ծովիկ Թաշճիեան, | ծն(եալ) 18
սեպտ(եմբեր) 1961, | հ(ա)նգ(եալ) 18 սեպտ(եմբեր)
1974, | ուրֆացի:

Հրատ. առաջին անգամ:



662. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևա-
վոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.



Աստ հանգչին | Յարութիւն Դադարեան, | քիլիս-
ցի, | ծն(եալ) 1888, հ(ա)ն(գեալ) 1948, | Աւետիս Դա-
դարեան, | ծն(եալ) 1929 ապրիլ 15, | հան(գեալ)
1953 նոյ(եմբեր) 97:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. 97 թիվը սխալ է փորագրված:

663. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝
թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորա-
գիր, 6 տող.

Աստ հանգչի | Յակոբ | Եփրեմեան, | այնթապցի,
| ծն(եալ) 1889, | հանգ(եալ) 1948 յուն(ուս)ր 29:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.: Կրում
էր 1292 համարը և գտնվում էր Թորոս, Լուսին, Ավետիս, Հով-
հաննես Եփրեմյանների տապանաքարերին կից: Նրանց մասին
տե՛ս Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. №
127, 166:



664. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսա-
նկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդա-
նի արևելահայաց եզրին ամրացված մարմարե սալիկին, փորա-
գիր, 7 տող.

Աստ հանգչին | Պշագճեաններ՝ | Արամ, |
ծն(եալ) 1894, հ(ա)ն(գեալ) 1948, | Վահրամ, |
ծն(եալ) 1906, հ(ա)ն(գեալ) 1970: | Զիլիսցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է քիլիսցի Էլմաստ Պշագճյանի տապանա-
քարին կից: Վերջիններիս մասին տե՛ս Շեխ-Մագսուդի առաքե-
լական գերեզմանատան արձ. № 709:

Արամ Պշագճյանը 1907 թ. ավարտել է Զիլիսի Լուսասիրաց
բարձրագույն նախակրթարանը (Պայրամեան Ա., նշվ. աշխ., էջ
61-62):



665. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, վրանաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին ազուցված մարմարե սալիկին, 6 տող.

Աստ հանգչի | Յարութիւն | Աստորեան, | սասուն-
ցի, | ծն(եալ) 1900, | հանգ(եալ) 1948 փետր(ուար) 19:
Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է սասունցի Լուսին Աստորյանի տապա-
նաքարին կից: Վերջինիս մասին տես Շեն-Մագսուտի առաքե-
լական գերեզմանատան արձ. № 1018:



Աստ հանգչի | Լեվօն | Մաճառեան, | ծն(եալ) Կե-
սարեայ, | ծն(եալ) 1902-1948:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 3156 համարը:

668. Տապանաքար. ուղղանկյունաձև, տեղահան, արձանա-
գրությունը՝ փորագիր, 7 տող.

Այս է | տապանը | տիգրան(ա)կերտց [ի] | Լուսեայ
| Յակոբեանի, | ծն(եալ) 1903, | հանգ(եալ) 1948:

Հրատ. առաջին անգամ:



666. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝
կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝
մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Սկրտիչ | Սուչիան, | ծն(եալ) Ուր-
ֆա, 1900, | հանգ(եալ) 1948 օգ(ո)ստ(ոս) 8, | Հալեպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Սուչիան ազգանունի ի տառը սխալ է փորագրված,
պետք է լիներ ե:



669. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհե-
տացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մար-
մարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Ալետիս | Պուտազեան, | ծն(եալ)
Քիլիս, 1905, | հանգ(եալ) 1948:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 3435 համարը:



667. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝
թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, փորագիր, 5 տող.



670. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝
թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորա-
գիր, 6 տող.



Աստ հանգչի | Արշալոյս | Օհանեան, | այնթապ-
ցի, | ծն(եալ) 1907, | հանգ(եալ) 1948:
Հրատ. առաջին անգամ:

671. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝
թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորա-
գիր, 6 տող.

Աստ հանգչի | Հրաչ | Մեծատուրեան, | մարաշ-
ցի, | ծն(եալ) 1913, | հանգ(եալ) 1948:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. կրում է 3145 համարը:



672. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրու-
թյունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 10
տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Մարի | Ապուսէյֆեան, | հասան-
պէյցի, | ծն(եալ) 1932, հ(ա)ն(գեալ) 1948:
Սալիկ Բ.

Աստ հանգչի | Նուրիցա | Ապուսէյֆեան՝ |
ծն(եալ) Փափազեան, 1903, | հ(ա)ն(գեալ) 1986: Կե-
սարեա:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. «Հասանպէյ»-ը, ամենայն հավանականությամբ, Հա-
սանբէյին է:



673. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա,
ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած
լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներ-
կագիր, 9 տող.

Աստ հանգչին | Քէօշկերեաններ՝ | Աւետիս, |
ծն(եալ) 1903, հ(ա)ն(գեալ) 1965, | Յարութիւն, |



ծն(եալ) 1941, հ(ա)ն(գեալ) 1948, | Եղեա, | ծն(եալ)
1947, հ(ա)ն(գեալ) 1949: | Այնթապցի:
Հրատ. առաջին անգամ:

674. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսա-
նկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին,
փորագիր, 8 տող.

Աստ հանգչին | Սարգիս | Թիւֆէնկճեան, |
ծն(աւ) Արաքքէր, 1860, | մեռ(աւ) 1949, | Աղպտօ |
Թիւֆէնկճեան, | ծն(աւ) 1929, մեռ(աւ) 1972:

Հրատ. առաջին անգամ:


Ծանոթ. «Արաքքէր»-ն Արաքկիրն է:



675. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝
փորագիր, 7 տող.

Աստ հանգչի(ն) | տիկ(ի)ն Մարիամ | Թէփիր-
ճեան, | ծն(եալ) Պէրէճիք, 1867, | Յակոբ Չուլ-
ճեանի, | հանգ(եալ) սեպտեմբեր 20, | 1949:


Հրատ. առաջին անգամ:



676. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, դեպի ներս կորացված նիստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ հյուսիսահայաց նիստին, փորագիր, 3 տող.



Աստ հանգչի | քիլիս-
ցի Խաթուն Մխար-
Կրպո(յ)եան, | ծն(եալ)
1871, վախճ(անեալ)
1949 նոյ(եմբեր) 8:
Հրատ. առաջին անգամ:



679. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Արմենակ Տեմիրճեան, | այնթապ-
ցի, | ծն(եալ) 1879, | հանգ(եալ) 1949 յ(ու)ն(ուս)իս 4:
Հրատ. առաջին անգամ:




677. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին ամրացված մարմարե երկու սալիկներին, փորագիր, 8 տող.



Սալիկ Ա.
Աստ հանգչի | Աննա
Տաշճիեան, | տիգրանա-
կերտցի, | ծն(եալ) 1875, |
հանգ(եալ) 1949:
Սալիկ Բ.
Զարուհի Իստան-
պուլեան, | տիգրանա-
կերտցի, | ծնած 1886, մե-
ռած 1961:


Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում էր 4-րդ
մասում (համար 580): Այժմ գո-
յություն չունի: Տեղահանվել է
2007 թ.:



680. Տապանաքար. արձանագրությունը՝ կամարի ներքո ուղղահայաց կանգնեցված տապանաքարի արևելահայաց նիստին, փորագիր, 5 տող.



Պարտազճեան(ներ), |
Ուրֆա: | Յարութիւն,
1879-1949, | Մարա, 1880-
1979, | Պօղոս, 1912-1969:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. կրում է 339-Ա հա-
մարը:



678. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Գեորգ | Տեյիրմենճեան, | ծն(եալ)
1878, Տիգրանակերտ, | հանգ(եալ) ի տէր, 1 յ(ու)ն-
վ(ար) 1949, | Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.։
Գտնվում էր 6-րդ մասում՝ 676 համարը կրող Մնուշ Տեյիրմենճե-
յանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տե՛ս Շեխ-Մագ-
ստղի առաքելական գերեզմանատան արձ. № 374:

681. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգչի(ն) | տէրենտեցի | իրիսկին | Մա-
րեան | Մանդրճեան, | ծն(ալ) 1882, | մ(ե)ռ(ալ)
1949, | Մարքրիտ Մանդրճեան:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. կրում է 907 համարը:
Իրիսկին բառի ս տառը սխալ է փորագրված, պետք է լիներ ց:



682. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Միսակ Պոչկեզենեան, | ծն(աւ) Այնթապ, 1884, | մ(եռաւ) 1949:
 Հրատ. առաջին անգամ:



683. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Իլիաս Մակարեան, | բնիկ սասունցի, | 1885-1949:
 Հրատ. առաջին անգամ:



684. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | քիլիսցի | Աւետիս | Թէմբեճեան, | ծն(աւ) 1885, մեռ(աւ) 1949:
 Հրատ. առաջին անգամ:



685. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչին | Արսլանեաններ՝ | Գրիգոր, | ծն(եալ) Սասուն, 1885, | հ(ա)ն(գեալ) Հալէպ, 1949, | Լիեօնէ, | ծն(եալ) 1903, հ(անգեալ) 1968:
 Հրատ. առաջին անգամ:



686. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Սամուէլ | Մարթայեան, | ծն(եալ) 1886, Սիս, | հա(նգեալ) 1949 մարտ 14, | Հալէպ:
 Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է ստեցի Հակոբ Մարթայանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շելի-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 1368:

Սամվէլ Մարթայանը հիշվում է 1938 թ. ստեցիների անցկացրած մարդահամարի՝ հալեպահայկ ստեցիների ցանկում, որի համաձայն՝ ընտանիքը բաղկացած էր 5 անդամներից (**Քէլէջեան Մ.**, նշվ. աշխ., էջ 717, 729):



687. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Բօզա Պայրամեան՝ ծնե(ալ) | Պասմաճեան, Քիլիս, 1887, | հանգ(եալ) 1949, Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.: Գտնվում էր 6-րդ մասում (համար 74)՝ Մանվել և Նոյեմի Պայրամյանների տապանաքարերին կից: Նրանց մասին տես Շեն-Սագստոյի առաքելական գերեզմանատան արձ. № 456, 624:

Ռոզա Պայրամյանը 1919 թ. Ալթունյան հիվանդանոցի լաբորատորիայի տեխնիկն էր (Ջերեջյան Ռ., նշվ. աշխ., էջ 125):



688. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, ներկագիր, 6 տող.

Աստ հանգչի | Եսուսֆ Քէօշկերեան, | ծնեալ | յԱյնթապ, 1889, | հանգեալ 11 դեկ(տեմբեր) 1949: | Յիշատակն արդարոց | օրհնութեամբ եղիցի:

Հրատ. առաջին անգամ:



689. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | եղեսեացի | Տիգրան | Էսմէրեան, | ծնե(եալ) 1889, | հանգ(եալ) 1949:

Հրատ. առաջին անգամ:




690. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 8 տող.

Աստ հանգչի(ն) | Հռիփսիմէ | Սողիկեան, | Աննա | Տէմիրճեան: | 1869-1962, | 1889-1949: | Խարբերոցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 385): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:



691. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

ليون شيركجيان | Աստ հանգչին | Լեոն Շիրիքճեան, | ծնե(եալ) Այնթապ, 1910, | հանգ(եալ) Հալէպ, 1953, | Կարապետ Շիրիքճեան, | 1893-1949:

Հրատ. առաջին անգամ:



692. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 10 տող.



Սալիկ Ա.

Աստ հանգչի | տիար | Ադամ Պոյաճեան, | եղե-
սեացի, | ծն(եալ) 1895, | հանգ(եալ) 1949:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Յակոբ | Պոյաճեան, | ծն(եալ)
1933, հ(անգեալ) 1969

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 783 համարը:

Հակոբ Պոյաճեանը հիշվում է 1955 թ. հայեպարնակ ուրֆա-
ցիների ցանկում, որի համաձայն՝ ամուսնացած էր և ուներ 1
տղա, 1 աղջիկ (**Մահակեան Ա.**, նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆա-
ցիներու մարդահամարը), էջ 15):

693. Տապանաքար. ուղղանկյունաձև, տեղահան, արձանա-
գրությունը՝ փորագիր, 7 տող.

Աստ | հանգչի | Սամուել | Յակոբեան, | սասուն-
ցի, | 1897-1949/09/4:

Հրատ. առաջին անգամ:



694. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա,
ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանա-
գրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Արմենակ Թիթինճեան, | այն-
թապցի, | ծն(եալ) 1897, հ(ա)ն(գեալ) 1949:

Հրատ. առաջին անգամ:



695. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լու-
սանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միստինյան կից եր-
կու սալիկներին, 10 տող.

Սալիկ Բ, ներկագիր.

Աստ հանգչի | Եագույ | Քեօշկերեան, | ծն(եալ)
1900, հ(ա)ն(գեալ) 1949, | այնթապցի:

Սալիկ Բ (մարմարե), փորագիր.

Աստ հանգչի | Մարի | Քեօշկերեան՝ | ծն(եալ) Սե-
րայտարեան, | 1906-1991:

Հրատ. առաջին անգամ:



696. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝
փորագիր, 4 տող.



Յիշատակարան |
Արշալույս | Քարակօս-
զեան, | 1900-1949:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 4-րդ
մասում (համար 382): Այժմ գո-
յություն չունի: Տեղահանվել է
2007 թ.:

697. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությու-
նը՝ միստինյան կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 11 տող.
Սալիկ Ա.

Աստ հանգչի | Խարբերդցի | Լեւոն | Մոմճեան, |
ծն(ալ) 1901, | մ(ե)ռ(ալ) 1949:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Արմենուհի | Մոմճեան՝ | ծն(եալ)
Մաղազեան, | 1914-1994:


Հրատ. առաջին անգամ:



698. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կոթողաձև պատվանդանի
վրա, թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի
արևելահայաց միստին ամրացված մարմարե սալիկին, փորա-
գիր, 6 տող.

Հայերեն երգէ: | Աստ հանգչի | դպրապետ |
Գէորգ Աճեմեան, | ծն(եալ) Ատանա, 1908-ին, |
հ(ա)նգ(եալ) 1949 սեպտ(եմբեր) 18:

Հրատ. առաջին անգամ:



699. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգչին | Պօպելեաններ՝ | Լեոն, 1901-1993, | ծն(եալ) Կարին, | Լուվարդ, 1908-1949, | ծն(եալ) Կարին, | Պիտրիս, 1914-1982, | ծն(եալ) Այնթապ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է Մարիամ և Շավարշ Պոպելյանների տապանաքարին կից: Վերջիններիս մասին տե՛ս ՇԵՆ-Մագոսուրի առաքելական գերեզմանատան արձ. № 1119:



700. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին ագուցված թևավոր խաչը կտորվել է, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչին | տեր եւ տիկին | Պոյաճեաններ՝ | Խօրէն, ծն(եալ) 1909, հ(ա)ն(գեալ) 1949, | Մարի, ծն(եալ) 1923, հ(ա)ն(գեալ) 1970: | Կէմերեկցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 2610 համարը:



701. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ ստորին մասում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին ագուցված մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Ղազար Գարեգինեան, | ծնած Պրուսա, 1910, | մեռած Հալէպ, 1949 | սեպտ(եմբեր) 12:

Հրատ. առաջին անգամ:



702. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչին | տեր եւ տիկին | Բարսեղեաններ՝ | Հայկ, 1910-1949, | Էլմաստ, 1913-1984: | Սէվերեկցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:



703. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում հանգուցյալի պատկերով թևավոր խաչ, արձանագրությունը՝ տապանաքարի երեսին և խաչի պատվանդանի արևելահայաց նիստին ամրացված մարմարե երկու սալիկներին, 11 տող.

Տապանաքարի երեսին.

Աստ հանգչի | Յակոբ Չավուշ | Նալպանտեան, | ծն(եալ) Քիլիս, 1910, | հանգ(եալ) Հալէպ, 1949 մարտ 1, | ինքնաշարժի | չարաղետ արկածով | Պէյրուքի ճամբան:



Խաչի պատվանդանին.

Աստ հանգչի | Աբրահամ Նալպանտեան, | 1933-2005:

Հրատ. *ստաջին անգամ*:

704. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ տապանաքարին և մարմարե սալիկին, փորագիր, 10 տող.

Տապանաքարին.

Աստ հանգչի | տի(կին) Էլիզ | Նագգաշեան, | ծնաւ 1921, հանգ(եաւ) | յուլիս 28, 1949:

Սալիկին.

Աստ հանգչի | Յովհաննէս | Նագգաշեան, | 1914-1982, | այնթպցի:

Հրատ. *ստաջին անգամ*:



705. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչին | հայր եւ որդի | Նագար եւ Եղիեայ | Գազեզեաններ, | ծն(եալ) 1900, հ(ա)ն(գեալ) 1964, | ծն(եալ) 1933, հ(ա)ն(գեալ) 1949: | Այնթպպցի:

Հրատ. *ստաջին անգամ*:



706. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 7 տող.

Սալիկ Ա.

Անունդ ի՞նչ էր, ճանիկ: | Պալանեան օր(իորդ) Բնարիկ, | 1946-1949:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | տիկ(ին) Սաթենիկ Գազանճեան՝ | ծն(եալ) Մուրատեան, Խարբերդ, 1895, | հանգեաւ Հալէպ, 1958:

Հրատ. *ստաջին անգամ*:



707. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, դեպի արևելք բարձրացող, կորատամիք, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, խաչի պատվանդանի վրա՝ լուսանկար, արձանագրությունը՝ տապանաքարի արևմտահայաց և արևելահայաց կողերին ամրացված սալիկներին, փորագիր, 15 տող.

Արևմտահայաց կողին.

Աստ հանգչի(ն) հայր եւ որդի՝ | սասունցի | Խաչատուր Մանուկեան, | ծն(եալ) 1855, հանգ(եալ) 1950, | Ժօզէֆ Մանուկեան, | ծն(եալ) 1927, հանգ(եալ) 1951: | Երիտասարդ փակեց աչքերն յալիտեան, | կենսավառ, գարնան ծաղիկ մըն էր բուրեան, | ճակատագիրն ուզեց, աւաղ, որ իյնայ | թարմատի իր կեանքին ճամբուն իսկ վրայ: | Չոհ ելեկտրական հոսանքի:

Արևելահայաց կողին.

Աստ հանգչի | Նագիմ | Փուշիճեան, | 1917-1994:

Հրատ. *ստաջին անգամ*:



708. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 7 տող.

Աստ հանգչին | տէտէն եւ թօրնիկը | Պագգալեաններ՝ | Նագար, | ծն(եալ) 1870, հ(ա)ն(գեալ) 1950, | Նէրսէս, հ(ա)ն(գեալ) 1955: | Այնթպպցի:

Հրատ. *ստաջին անգամ*:



709. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.

Աստ հանգչին | քիլիսցի | մայր եւ աղջիկ՝ | Էլմաստ | Պչագճեան, | ծն(եալ) 1873, հ(ա)ն(գեալ) 1950, | Սուլբան | Գույումճեան, | ծն(եալ) 1903, հ(ա)ն(գեալ) 1977:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է քիլիսցի Արամ և Վահրամ Պչագճյանների տապանաքարին կից: Վերջիններիս մասին տես Շէյս-Մազ-սուղի առաքելական գերեզմանատան արձ. № 664:



710. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ միանյակ կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 10 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչին | Յովհաննէս | Ութագարա-(յ)եան, | այնթապցի, | ծն(եալ) 1878, | հանգ(եալ) 1950 | եւ կողակիցը՝

Սալիկ Բ.

Արուսիակ՝ | ծն(եալ) Տէմիրճեան, | 1893-1965:

Հրատ. առաջին անգամ:



711. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Սրբուհի Մերասետեան՝ | ծն(եալ) Թուրապեան, | Թալաս, Կեսարիա, | 1880-1950:

Հրատ. առաջին անգամ:



712. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 8 տող.

Աստ հանգչին | Աբրահամեաններ՝ | Եղսա, | ծն(եալ) 1880, հ(ա)ն(գեալ) 4/2/(19)50, | Ալեքսան, | ծն(եալ) Բալու, 1902, | հ(ա)ն(գեալ) 1972 յունիս | 18, Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:



713. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Կարապետ | Նարպէկեան, | 1884-1950, | կիրիւնցի:

Հրատ. առաջին անգամ:



714. Տապանաքար. օրորոցածև, արձանագրությունը՝ տապանաքարի արևելահայաց նիստին, փորագիր, 10 տող.

Աստ հանգչի | Համբարձում Ջորթեան՝ | ամերիկահայատակ, | ծնեալ ի Չորում, 28 մայիս 1885, | վախճանեալ ի Հալէպ, 2 հոկտ(եմբեր) 1950: | Ապրեցաւ իր նախասիրած | երկրին մէջ, չը մոռանալով | բնաւ իր նախահայրերն ու | հայրենիքը, որուն մասին գրեց | Առնակ գրչասնունով:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում՝ 91 համարի տապանաքարին կից: Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

Գրող Համբարձում Ջորթեանի ստեղծագործությունները տես «Արշալոյս», 1908, № 79, 94: «Աշխատանք», 1912, № 104: «Ժողովուրդ», 1919, № 227: «Շանթ», 1919, № 37: «Ոստան», 1919, № 8-9: «Ժողովուրդի ձայն», 1920, № 599, 604, 618-619: «Ճակատամարտ», 1921, № 712, 717, 740: «Հայաստանի կոչնակ», 1923, № 4 էջ 112; 1924, № 5, 26; 1926 № 12; 1950, № 5, 9, 18, 26, 27; 1951 № 43; 1952 № 9, 20, 22: «Հայրենիք», 1934, № 6684, 6711, 6751; 1935, № 7, 8; 1936, № 3; 1937, № 9, 12;



1944, № 1, 5; 1947, № 3: «Ազատամարտ», 1928-1929 թթ.: «Ասպարէզ», 1950, № 2538-2540: 1936 թ. (վրիտ. 2007) հրատարակվում է «Թուրքերու ճանկին մէջ (1916-1919)» վիպակը:

Հովակիմյանը Համբարձումի մահվան թվականը սխալմամբ տվել է 1952 (**Հովակիմյան Բ.**, նշվ. աշխ., էջ 604):

Չորում քաղաքը գտնվում է Պոնտոսում: Ներկայումս պաշտոնապես կոչվում է նույն ձևով (Çorum):



715. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով քևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից երեք սալիկներին, 11 տող.

Սալիկ Ա, ներկագիր.

Աստ հանգչի | Կարապետ | Սարգիսեան, | ծն(եալ) Գօնիա, 1885, | հ(ա)ն(գեալ) Հալէպ, 1950:

Սալիկ Բ (մարմարե), փորագիր.

Աստ հանգչի | Եղիսաբէթ | Սարգիսեան, | 1898-1980:

Սալիկ Գ (մարմարե), փորագիր.

Նազելի, | 1941-2005:

Հրատ. առաջին անգամ:



716. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.



Աստ հանգչի | Հռիփսիմէ | Կիլեան, | ծն(աւ) 15 ապրիլ 1887, | մ(ե)ռ(աւ) 20 նոյ(եմբեր) 1950:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 334): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

717. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ քևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչի(ն) | անտիօքցի | եղբայր եւ քոյր՝ | Աբրահամ Գույումճեան, | 1888-1950, | Մարիամ Երեցեան, | 1902-1952:

Հրատ. առաջին անգամ:



718. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, վրանաձև, արևմտյան եզրին՝ ստորին մասում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ արևելյան եզրին ամրացված սալիկին, մերկագիր, 6 տող.

Աստ հանգչին | Արագեան ընտանիք, | տիգրա-
նակերտոցի: | Մարգիս, ծն(եալ) 1888-1950, | Արաք-
սի, 1905-1957, | Մարտիկ, 1924-1966:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 490): Այժմ գոյու-
թյուն չունի: Տեղահանվել է 2007 թ.:



719. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, կենտրո-
նում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրու-
թյունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 11
տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | տիկին Ֆերիտե | Արաքաթլեան |
ծնեալ Պերթիկեան, | ծն(եալ) 1889, Քիլիս, | հան-
գ(եալ) 1950:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Խաթուն Ճենանեան՝ | ծն(եալ)
Պերթիկեան, | ծն(եալ) 1895, հ(ա)ն(գեալ) 1975, | քի-
լիսցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է քիլիսցի Լուքֆիկ, Անդրանիկ, Տիգրան և
Ծաղիկ Արապաթյանների տապանաքարերին կից: Վերջիննե-
րիս մասին տե՛ս Շեն-Մագսուդի առաքելական գերեզմանա-
տան արձ. № 819, 1482, 1524:



720. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա,
ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ ստորին մասում անհետա-
ցած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ տապա-
նաքարին և մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.

Տապանաքարին.

Աստ հանգչի | Թուրթուն Անտոնեան, | ծն(եալ) Սե-
րաստիա, 1890, | հան(գեալ) 1950 | դեկ(տեմբեր) 15:



Սալիկին.

Աստ հանգչի | Վարսենիկ | Պաղսո(յ)եան, |
1966-1996:

Հրատ. առաջին անգամ:

721. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, թևավոր
խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց
միստին և տապանաքարի երեսին ամրացված սալիկներին, փո-
րագիր, 11 տող.

Պատվանդանին.

Աստ հանգչին | Արտաշես Գաբրիելեան, |
ծն(եալ) 1890, հ(ա)ն(գեալ) 1977, | Նարինկիլ Գաբ-
րիելեան, | ծն(եալ) 1900, հ(ա)ն(գեալ) 1977, | Գրիգոր
Գաբրիելեան, | ծն(եալ) 1923, հ(ա)ն(գեալ) 1979:

Երեսին.

Աստ հանգչի | Ռոզա | Գաբրիելեան, | 1928-2000:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ըստ Արտաշես և Նարինգյուլ Գաբրիելյանների թո-
ռան՝ Ազատուհի Գաբրիելյան-Քորթոշյանի՝ նրանք ծնվել են
Յոդաթում: Ունեցել են երկու զավակ՝ Հակոբ և Գրիգոր:

Գրիգոր և Ռոզա Գաբրիելյաններն ամուսնացել են 1946 թ. և
ունեցել 4 զավակ՝ Հարություն, Ազատուհի, Արտաշես և Մարիա:
Ռոզայի մոր և հոր մասին տե՛ս Շեն-Մագսուդի առաքելական
գերեզմանատան արձ. № 1494:



722. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝
թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու
սալիկներին, փորագիր, 9 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Սամուել | Պեքեարեան, | այն-
թապցի, | ծն(եալ) 1894, | հանգ(եալ) 1950:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Սահակ Պեքեարեան, | 1915-1983:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է Սանդուխտ Պեքեարյանի տապանաքա-
րին կից: Վերջինիս մասին տե՛ս Շեն-Մագսուդի առաքելական
գերեզմանատան արձ. № 202:



723. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 6 տող.

Աստ հանգչի(ն) | Միհրան, Ֆիլիպ | Արփիարեան(ներ), | ծն(եալ) Պօլիս, | Սի(հրան), ծն(եալ) 1895-1950, | Ֆի(լիպ), ծն(եալ) 1885-1955:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ֆիլիպ Արփիարյանը 1931 թ. Շեխ-Մագսուդի գերեզմանոցի բարեկարգման հանձնաժողովի (ՊՀԱԳԱՀՏ, էջ 52), 1940 թ. հիմնված Միրիահայ վարժարանի հիմնադիր հանձնախմբի անդամ էր (ՀԱԴ, ֆ. 1394, ց. 1, գ. 171, թ. 1): Հայեպի Սեբիլ թաղամասում գտնվող Քալիմե հիվանդանոցի, պետական հոգեբուժարանի և «Պարոն» հյուրանոցի ճարտարապետն էր: Նահատակ հրապարակախոս, գրաքննադատ Արփիար Արփիարյանի եղբոր որդին էր (Մամուլեան Վ., նշվ. աշխ., էջ 104-105):



724. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Պարգե | Ասագեան, | ծն(եալ) 1900, հ(ա)ն(գեալ) 1950, | սասունցի:

Հրատ. առաջին անգամ:



725. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 9 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Մերում Վարդանեան, | այնթապցի, | ծն(եալ) 1906, հ(ա)նգ(եալ) 1950:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | տիար Գէորգ | Վարդանեան, | 1895-1986, | այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է այնթապցի Մուննա Վարդանյանի տապանաքարին կից և այնթապցի Ներսես Վարդանյանի տապանաքարի մոտ: Վերջիններիս մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 317, 849:



726. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին ագուցված թևավոր խաչը չի պահպանվել, խաչի պատվանդանի վրա՝ անհետացած լուսանկար, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | տ(իկի)ն Վարդուհի | Փօստալեան, | կիրինցի, | 1908-1950 մ(ա)րտ 14:

Հրատ. առաջին անգամ:



727. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Յակոբ Կիլիսեան, | մարաշցի, | ծն(ալ) 1908, մե(ռալ) 1950:

Հրատ. առաջին անգամ:



728. Տապանաքար. կորոդած, արձանագրությունը՝ արևելահայաց կողմից գետնոված մարմարե սալիկին, փորագիր, 15 տող.

Ազատ կեանքի սիրոյն մարտի ուխտատուր, | փառած զէնքիս եւ հաւատքիս օրնատուր, | մարմինս ըրի արդար դատին ողջակէզ, | կարօտով վառ հայրենիքիս լուսագէս: | Աճիւնս աստ կը հանգչի, հոգիս ալ թառած | Արարատի սարին վրայ զերթ աստուած: | Կարապետ Սուքիասեան, | Միատուն, 1867-1952, Հալէպ: | Քաչարի հերոս եւ Չէյթունի | ապստամբութեան ղեկավարներէն | եւ որդին՝ | Չաւէն Սուքիասեան,



սեան, | ծն(եալ) 1910-1950: | Յարգանք իրենց խնկելի յիշատակին | եւ հանգիստ ոսկորներուն:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 773 համարը:

Կարապետ Սուքիասյանը Չէյթունի 1895-1896 թթ. ապստամբության ղեկավար Աղասու թիկնապահներից էր. «Վեց նշանատու քաջեր ուղղակի կապած էի անձիս պաշտպանութեան համար և կ'ընկերանային ինձ. Ասլան, Ապուճան Աազեան, Նշան Ղազարոսեան, Կարապետ Սուքիասեան, Բենիամին Պետկեան և Սափրիչ Ստեփան» (Աղասի, նշվ. աշխ., էջ 225): Ներկայացվել է նաև որպես Չէյթունի ապստամբության 6 ղեկավարներից մեկը (Չէյթունցի, Չէյթունի անցեալէն և ներկայէն, մասն Բ, Բարիզ, 1903, էջ 7-8): Սակայն Աղասին, սխալ նկատելով սա, ասել է. «Մեզ կը ներկայացնէ 6 պետեր, որ սխալ մըն է, անոր համար որ Մարտիկիս նկարուած մեր խմբանկարը վեց հոգի էինք, բայց այդ վեցերը չէին ամբողջ ապստամբութիւնը կազմակերպողները: Անոնցմէ երկուքը՝ Նշան Ղազարոսեան և Կարապետ Սուքիասեան, քաջ ասպատակներ էին, բայց ոչ պարագլուխներ, այլ զիս դարձնանելու համար ինձ ընկերացող թիկնապահներ...: Կարապետ Սուքիասեանը... հայ կամատուր մըն էր Հալէպի մասնաճիւղին կողմէ...»: 1895 թ. մասնակցել է Չէյթունի թուրքական զորանոցի գրավմանը (Չէյթունցի, Չէյթունի անցեալէն և ներկայէն, մասն Բ, Բարիզ, 1903, էջ 41-42): Հատկանշական է հետևյալ դրվագը. երբ Հալէպից ուղևորված կամավորները՝ Կարապետ Սուքիասյանը և Բենիամին Պետկեանը, «...Մարաշի հարաւարնտեան և հիւսիսային շրջանը բոլորուելով կ'անցնէին Գարամանը արուարձանին եզերքէն: Բենիամին... պետքի մը համար զբաղած էր, երբ հսկայ թուրք աւազակ մը, Կեօմէքսիզ Օդլու Մեմէտ անուն, կը ձերբակալէ զայն, ըսելով թէ վառող կը փախցնէր: Բենիամին օգնութիւն կը պոռայ: Կարապետ Սուքիասեան կը հրամայէ թուրքին թողուլ պատանին: Բայց նա կը մերժէ. Կարապետ՝ դաշոյնով կը պատռէ վերէն վար թուրքին փորը և աղիքները թափելով կը տապալե գետին...» (Աղասի, նշվ. աշխ., էջ 175-176, 178):

Կարապետ Սուքիասյանը 1921 թ. «Գայլ-Գիր» ընկերության (հիմնվել էր 1914 թ. Հալէպում աղքատ միատունցիներին օգնելու նպատակով) ղեկավար մարմնի անդամ էր (Քէշիշեան Վ., Հալէպի Հայկական գաղթածախ..., էջ 256):



729. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ անհետացած լուսանկարով քլավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչի(ն) | հայր եւ որդի | Մարքիս, ճօրճ | Աճեմեան(ներ), | Սա(րգիս), ծ(նեալ) 1870-1954, | ճօ(րճ), ծ(նեալ) 1917-1950: | Սասունցի:

Հրատ. առաջին անգամ:



| ծն(եալ) Ուրֆա, 1885, | հ(ա)ն(զեալ) Հալեպ, 1975, | Արշալոյս, | ծն(եալ) Ուրֆա, 1927, | հ(ա)ն(զեալ) Հալեպ, 1950:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. գտնվում է եղեխացի Հակոբ և Հայկանուշ Պետիրյանների տապանաքարին կից: Վերջիններին մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 797:

Պետրոս Պետիրյանը հիշվում է 1955 թ. հայկապահակ ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ ամուսնացած էր և ուներ 3 աղջիկ (**Մահակեան Ա.**, նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 18):

730. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ քլավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 13 տող.

Աստ հանգչի | Յովհաննէս Գալլօլլեան, | ծն(եալ) Մարաշ, 1922 օգ(ոս)տ(ոս) 15, | հանգ(եալ) 1950 մայիս 20: | Նետելով քեզ ինքնաշարժէն | շուրջն անիծեալ ճըսըրի, | ուր շատ հայեր կորսուած են, | հոգիդ խըլեց մահն ահռելի, | սրտիս մնաց կրակն անմար | ու յիշատակդ գերտ պահապան, | հող տուր քովդ ինձի համար, | ալ իմ վէրքիս չըկայ դարման: | Մայրդ՝ Լուսիա Գալլօլլեան:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.: Գտնվում էր 4-րդ մասում (համար 2323)՝ մարաշցի Եսայի Գալլօլլեանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 384:



731. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով քլավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 11 տող.

Աստ հանգչին | Պետիրեաններ՝ | Էլիզա, | ծն(եալ) Ուրֆա, 1906, | հ(ա)ն(զեալ) Հալեպ, 1969, | Պետրոս,

732. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով քլավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 8 տող.

Աստ հանգչին | մայր եւ որդի | Գաբր(ի)էլեաններ՝ | Նազելի, | ծն(եալ) 1910, հ(ա)ն(զեալ) 1953, | Ալէքսան, | ծն(եալ) 1932, հ(ա)ն(զեալ) 1950: | Բոտոստոցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Բոտոստոն Ռոդոսքո քաղաքն է: Գտնվում է Թրակիայում: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Թեքիրդաջ (Tekirdağ):



733. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.



Աստ հանգչին | հայր եւ որդին | Տէմիրճեաններ՝ | Յովհաննէս, հ(ա)ն(գեալ) 1950, | Պայծառ, ծն(եալ) 1914, հ(ա)ն(գեալ) 1973: | Տիգրանակերտցի:
Հրատ. առաջին անգամ:

734. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրի կենտրոնում՝ լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգչին | մայր եւ աղջիկ | Պալապանեաններ՝ | Նազիկ, | ծն(եալ) 1841, հ(ա)ն(գեալ) 1951, | Նեկտար, | ծն(եալ) 1896, հ(ա)ն(գեալ) 1974: | Պոլսեցի:
Հրատ. առաջին անգամ:



735. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչին | տեր եւ տիկին | Մաճարեաններ՝ | Ասատուր Աղապապա, | 1856-1951, | Մարի, 1890-1984: | Կեսարեացի:
Հրատ. առաջին անգամ:



736. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, հանգուցյալների պատկերներով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց միստին և տապանաքարի արևմտյան եզրին ամրացված մարմարե երկու սալիկներին, փորագիր, 9 տող.

Խաչի պատվանդանին.

Աստ հանգչի | Գրիգոր | Եթերեան, | ծն(եալ) Քիլիս, 1866-1951:

Տապանաքարի արևմտահայաց եզրին.

Աստ հանգչի | Երանուհի | Եթերեան՝ | ծն(եալ) Անտոնեան, | 1920-1990, Այնթալ:
Հրատ. առաջին անգամ:



737. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.



Աստ հանգչի | Ֆիլովմեն | Միսաք Վանեցեան՝ | ծնեալ Գազեզեան, | 1870, Կարին, | 27 դեկտ(եմբեր) 1951:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 94): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

738. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչին | Գրիգոր Խաչատուրեան, | սասունցի, | 1875-1951, | Նուարդ Խաչատուրեան, | 1898-1954:

Հրատ. առաջին անգամ:



739. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.

Աստ հանգչին | Տեվրիշողեաններ: | Հայրը՝ Յարութին, | ծն(եալ) 1892, հ(ա)ն(գեալ) 1965, | մայրը՝ Ովսաննա, | ծն(եալ) 1892, հ(ա)ն(գեալ) 1966, | հորեղբայրը՝ Գեորգ, | ծն(եալ) 1879, հ(ա)ն(գեալ) 1951: | Ուրֆացի:

Հրատ. առաջին անգամ:



740. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | քիլիսցի | Ֆերիտե Իքիագճեան | ծնեալ Ղազելեան, | ծնեալ 1880, | մեռաւ 1951:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է քիլիսցի Իսկենտեր, Հարություն և Անդրանիկ Ղազելյանների տապանաքարերին կից: Նրանց մասին տե՛ս Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 105, 496:



741. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.



Աստ հանգչին | տեր եւ տիկին | Նազարեաններ՝ | Սկրտիչ, 1881-1951, | Ազնիւ, 1904-1985: | Ուրֆացի: Հրատ. առաջին անգամ:

742. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Յարութին | Պերպլերեան, | ծն(եալ) 1882-1951, | այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է այնթապցի Գևորգ Պերպլերյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տե՛ս Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 1578:

Հարություն Պերպլերյանը 1928 թ. Պոպ գյուղի եկեղեցու քահանայանիստի ատենապետն էր («Տարեալ», 1929, էջ 385):



743. Երկու տապանաքար. միաստիճան ընդհանուր պատվանդանի վրա, ոճավորված, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կամարախորշ, արձանագրությունը՝ կամարախորշում՝ մարմարե սալիկին, փորագիր, 13 տող.

Աստ հանգչին | Նուարդ | Երամեան՝ | ծն(եալ) Թովմասեան, | 1896, | վ(ա)խճ(անեալ) Հալեպ, | 1978, | Միսակ էֆ(եհտի) | Երամեան, | ծն(եալ) Արաբկիր, | 1882, | վ(ա)խճ(անեալ) Հալեպ, | 1951:

Հրատ. առաջին անգամ:





Ճանոթ. Միսակ Երամյանի հայրը սպանվում է 1895 թ. ջարդերի ժամանակ, իսկ ընտանիքը տեղափոխվում է Հալեպ, ապա Բիլիս: Մ. Երամյանն ավարտում է Բուրսայի շերամաբուծական վարժարանը: Առաջին աշխարհամարտի տարիներին զինվորական էր՝ փոխադրության պատասխանատու: Փրկում է բազմաթիվ հայերի կյանքը՝ նրանց «Վեպրա» հայթայթելով: Պատերազմից հետո հաստատվում է Ազեզում: Ընտրվում է Ազեզի եկեղեցու թաղականության ատենապետ, քաղաքապետարանի անդամ, ՀԲԸՄ տեղի մասնաճյուղի և Հալեպի Բերիո թեմի գավառական ժողովի ատենապետ (Փղատեան Ա., նշվ. աշխ., էջ 824): Ազեզի Սբ. Թագավոր եկեղեցու թաղական խորհրդի ատենապետ է հիշվում 1928 թ. («Տաթե»), 1929, էջ 384) և 1933 թ. (Պապառեան Ա., նշվ. աշխ., էջ 41), 1937 թ. օգոստոսի 13-ին վերընտրվում է (նշվ. աշխ., էջ 43): 1942 թ. հունիսի 27-ին նույնպես հիշվում է Սբ. Թագավոր եկեղեցու թաղական խորհրդի և Մահակյան վարժարանի հոգաբարձության ատենապետ (նշվ. աշխ., էջ 45): Փղատեանը սխալմամբ մահվան թվականը նշել է 1952 թ. ապրիլի 2 (Փղատեան Ա., նշվ. աշխ., էջ 824): Նվարդ Երամյանը, ի հիշատակ ամուսնու՝ Միսակ Երամյանի, Հալեպի ծերանոցին կատարել է նվիրատվություն (տես ծերանոցի արձ. № 3):

744. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Գեւորգ | Մաղաքեան, | ծն(եալ) Ուրֆա, 1886, | հ(ա)նգ(եալ) Հալեպ, 1951:


Հրատ. առաջին անգամ:



745. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, խաչակիր, քառակողմ, վրանաձև, պատվանդանի արևմտահայաց կողմն զետեղված է հանգուցյալի պատկերը, արձանագրությունը՝ տապանաքարի արևմտահայաց կողմն ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Յակոբ | Պ. Մարտիրոսեան, | քիլիսցի, | ծն(եալ) 1887, | հանգ(եալ) 1951 ապրիլ 1:

Հրատ. առաջին անգամ:



746. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին ագուցված թևավոր խաչը չի պահպանվել, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Գրիգոր Սկրեան, | քիլիսցի, | ծն(եալ) 1890, | հանգ(եալ) 1951:

Հրատ. առաջին անգամ:

Ճանոթ. գտնվում է քիլիսցի Լուսիա և Հովհաննես Մկրյանների տապանաքարերին կից: Վերջիններիս մասին տես Շեն-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 630, 1345:



747. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 9 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | մայր եւ որդի: | Կարապետ | Չատիկեան: | Գոնիացի, | 1890-1951:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Գրիգոր Չիմոյեան, | 1933-2004:

Հրատ. առաջին անգամ:




748. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | տիկ(ին) Կատարիձա | Մկրտիչեան, | եարվուզցի, | ծն(եալ) 1900, հ(անգեալ) 1951:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. Յարվուզ (Yarpuz) գյուղաքաղաքը գտնվում է Կիլիկիայում:



749. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Արմէն | Տճկիկեան, | ծն(եալ) Միատուն, | 1900, | հանգ(եալ) 1951:
Հրատ. առաջին անգամ:



750. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ ագուցված թևավոր խաչը չի պահպանվել, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Քարթին | Աճէմեան, | ծն(եալ) Անտիոք, 1915, | հ(անգեալ) Հալէպ, 1951:
Հրատ. առաջին անգամ:



751. Տապանաքար. քառաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միսյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 10 տող.

Սալիկ Ա.
Աստ հանգչի | Եպրուհի | Մուպահեաճեան՝ | ծ(նեալ) Շիլգեորգեան, | քիլիսցի, | ծն(եալ) 1882, հ(անգեալ) 1960:

Սալիկ Բ.
Աստ հանգչի | Չօիրապ | Մուպահեաճեան, | 1921-1951:
Հրատ. առաջին անգամ:



752. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչին | Յարութին | Խարամանտարեան, | 1882-1961, | որդին՝ Մկրտիչ, | 1921-1951: | Ուրֆացի:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. Հարություն Խարամանտարյանը հիշվում է 1955 թ. հայեպաբնակ ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ ամուսնացած էր և ուներ 2 աղջիկ (**Մահակեան Ա.**, նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 16):




753. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 12 տող.

Աստ հանգչի | հանկարծամահ | Աննա Կարապետեան, | ծն(ալ) Խարբերդ, 1923, | մե(ռալ) Հալէպ, 1951: | Գիտես, անցորդ, ով եմ ես, | հազիւ բոլորած 28 տարիս, | կը թողում որբուկ 4 զաւակներս | ու ամուսինս դժբաղդ քերի իր | բաղդեն, կը հեռանամ

աշխարհէն, | մէկ վայրկեանի մէջ կարօտ | ցրելով իմ հարազատները:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Աննա Կարապետյանը 1945 թ. ավարտել է Ասատուր Այթունյանի բուժքույրական դպրոցը (**Ջերեջյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 107):



754. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգչին | նիկտէցի | Ստեփան Փանոսեան, | ծն(եալ) 1900, հ(ա)ն(գեալ) 1979, | Արեգնազ | Ալյօյաճեան, | ծնեալ Նեմշ(ե)հիր, | հ(ա)ն(գեալ) 1951:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Նեմշեհիր (Նևշեհիր, Nevsehîr) քաղաքը գտնվում է Անատոլիայում:



755. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.



Աստ հանգչի | տէր Օշական՝ | Անդրանիկ Սայրեան {ի}, | ծն(եալ) Մուշ, 1865 | օգ(ո)ստ(ոս) 20, | հանգ(եալ) 1952 սեբտ(եմբեր) 22, | Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Անդրանիկ Սայրյանը 1878-1884 թթ. ուսանել է Մուշի Կենտրոնական վարժարանում (հիմ. 1878 թ.): Առաջին շրջանավարտներից էր: 1899 թ. դասավանդում էր Մուշի Մարինե թաղի վարժարանում: Նրա հուշերը հրատարակվել են 1934-1937 թթ. «Հայրենիք» ամսագրում «Հայրենի յուշեր» վերնագրով: Անդրանիկի ավագ եղբայրն էր Եղիկը (**Կարօ Մասունի**, նշվ. աշխ., էջ 275, 278, 320, 328):

756. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | սասունցի | տիկ(ին) Ներկիկ | Ղազարեան, | ծն(եալ) 1870-ին, | հանգ(եալ) 1952:

Հրատ. առաջին անգամ:



757. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | քիլիսցի | Խաթուն | Մուրատեան, | ծն(եալ) 1870-ին, | հանգ(եալ) ի տէր, 1952-ին:

Հրատ. առաջին անգամ:



758. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.



Աստ հանգչի | Ծաղիկ | Պօզիկեան, | ծն(եալ) 1880, Կիլիկի, | հանգ(եալ) 1952:

Հրատ. առաջին անգամ:

759. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Աւագ Կիլիմեան, | Ալնի Կամարակապ | գողէն, | ծն(եալ) 1880, հ(ա)ն(զեալ) 1952:
Հրատ. առաջին անգամ:



762. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Աւետիս Ապոս | Աւետիսեան, | ծն(եալ) Սասուն, | 1882-1952:
Հրատ. առաջին անգամ:



760. Տապանաքար ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Արշալոյս Մօրուզեան՝ | ծն(եալ) Պէնլեան, | ծն(աւ) 1880, մ(եաւ) 1952:
Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.: Գտնվում էր 6-րդ մասում (համար 747)՝ Մարի Ավետիսյան-Պենյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 805:

763. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | այնթապցի | հաճի Աննա | Շեօհմէլեան, | ծն(եալ) 1883, | հանգ(եալ) 1952:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում է Հակոբ Շեօհմէլեանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 513:



761. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 8 տող.

Սալիկ Ա.
Այս է տապանն | հաճի Յակոբ | Տօլապճեան(ի), | ծն(եալ) Մարաշ, 1881, | հանգ(եալ) Հալէպ, 1952:
Սալիկ Բ.

Աստ հանգչի | Էլմաստ Տօլապճեան, | 1890-1980:
Հրատ. առաջին անգամ:



764. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.



Աստ հանգչի | տիկին Մարնոս | Յակոբեան, | կովտունցի, | 1884-1952:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Կովտուն գյուղը գտնվում է Արևմտյան Հայաստանի Սեբաստիայի նահանգի համանուն գավառի Հաֆիզ գավառակում՝ Սեբաստիա քաղաքից 16 կմ հյուսիս-արևելք: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Գյոյդյուն (Göyün):

765. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևելահայաց կողը՝ դեպի ներս կորացված, իսկ արևելյան եզրը՝ կամարաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկին, փորագիր, 9 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Մարի | Մարաշլեան, | քիլիսցի, | ծն(աւ) 1884, | մ(ե)ռ(աւ) 1952 դ(եկտեմբեր) 6:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Պետրոս Մարաշլեան, | 1907-1984:

Հրատ. առաջին անգամ:



766. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, դեպի ներս կորացված միասերով և կողերով, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Մանաս | Նուրենեան, | բնիկ ալպիստանցի, | ծն(աւ) 1885, | մ(ե)ռ(աւ) Հալեպ, 1952-ին:

Հրատ. առաջին անգամ:



767. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Սյրաիչ Յ. | Օվայեան, | ծնեալ Սիս, 1885, | հ(ա)ն(գեալ) մայիս 5, 1952, | Հալեպ:

Հրատ. առաջին անգամ:



768. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 7 տող.

Աստ հանգչին | Ճանսէգեաններ՝ | Յովսէփ, | ծն(եալ) 1885, հ(ա)ն(գեալ) 1952, | Վարդուհի, | հ(ա)ն(գեալ) 1970: | Մարաշցի:

Հրատ. առաջին անգամ:



769. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 15 տող.

Աստ հանգչի | Մինաս Ն(երսես) Քիրքլեան, | ճիպինցի, | 1886-1952: | Վերջապէս մահն, երբ կտորէ | թէլն իմ կեանքիս, | շունջս ընդհատուէ, ու | լռէ ձայնն իմ լեզուիս, | պաղ գերեզմանին մէջ | ապականի մարմինս, | բաւ է ինձ, քանի Յիսուս է բաժինս: | Մի-



նաս) Ք(իւրքլեան): | Երանելի են այն մեռելներն, | ուրոնք տէրոջմով կը ննջեն: | Յայտ(նութիւն) 14. 13:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 4-րդ մասում (համար 1474): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.:

Մինաս Քյուրքյանի հոր՝ Ներսեսի և մոր՝ Կյուլենյայի մասին տես Շելս-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 275:

770. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 7 տող.

Աստ հանգչին | Եսա(յ)ի Արրճեան, | ծն(եալ) 1883, հ(ա)ն(գեալ) 1956, | Ջարուիի | Նալպանտեան, | ծն(եալ) 1886, հ(ա)ն(գեալ) 1952: | Այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:



771. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Աստ հանգչի(ն) | Եագուպ Մինասեան, | ծն(եալ) Այնթապ, 1886, | հան(գեալ) 1952, | որդին՝ Յարութիւն, | 1932-1950:

Հրատ. առաջին անգամ:



772. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | ուրֆացի | Գրիգոր | Գարագաշեան, | ծն(եալ) 1890, | հ(ա)ն(գեալ) 1952:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Գրիգոր Գարագաշյանը Ուրֆայի ինքնապաշտպանության մասնակիցներից էր, մայր եկեղեցու շրջանի զինվորական ղեկավարը (Մահակեան Ա., նշվ. աշխ., էջ 1213, 1218): 1922 թ. ղեկտնմբերին Ուրֆայի շուկայում թուրքերի կողմից ենթարկվում է մահափորձի (նշվ. աշխ., էջ 1247): 1923 թ. ընտրվում է Հայկաի Ուրֆայի հայրենակցական միության առաջին վարչության անդամ (նշվ. աշխ., էջ 1256): Սահակյանը սխալմամբ Գարագաշյանի ծննդյան թվականը նշել է 1895, իսկ մահվանը՝ 1951 (նշվ. աշխ., էջ 1218):



773. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 10 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի(ն) | տեր եւ տիկին | Լէւոն, Սիրանուշ | Ջէթունցեան(ներ): | Ծն(եալ) 1890-1952: | Մարաշցի: Սալիկ Բ.

Աստ հանգչի | Պետրոս | Ջէթունցեան, | 1927-1997:

Հրատ. առաջին անգամ:



774. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով քևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 10 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Կարապետ Տարագճեան, | բնիկ քիլիսցի, | ծ(նաւ) 1894, | մ(եռաւ) 1952:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Ալիս | Տարագճեան՝ | ծն(եալ) Պաքմանեան, | 1913-1990:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է քիլիսցի Գևորգ, Տիգրան և Վիկտորյա Տարագճյանների տապանաքարի մոտ: Նրանց մասին տես ՇԵՆ-Սագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 95:

Կարապետ Տարագճյանը 1907 թ. ավարտել է Քիլիսի Լուսասիրաց բարձրագույն նախակրթարանը, ապա ընդունվել Այնթապի Ամերիկյան քոլեջ (Պաշտամեան Ա., նշվ. աշխ., էջ 61-62): 1926 (Ղազարեան Մ., նշվ. աշխ., էջ 32) և 1928 թթ. Ազեգ գյուղի Սր. Թագավոր եկեղեցու թաղական խորհրդի ատենադպիրն էր («Տարեա», 1929, էջ 384), իսկ 1933 թ.՝ նույն եկեղեցու թաղական խորհրդի անդամ (Ղազարեան Մ., նշվ. աշխ., էջ 41): 1926 թ. գյուղի Սահակյան վարժարանի հոգաբարձության (նշվ. աշխ., էջ 35), 1926 թ.՝ նույն դպրոցի նոր շենքի շինարարական հանձնախմբի անդամ էր (նշվ. աշխ., էջ 34): 1931 թ. փետրվարի 26-ին ընտրվում է ՀԲԸՄ տեղի մասնաճյուղի վարչության անդամ (նշվ. աշխ., էջ 65): Վերընտրվում է 1942 թ. փետրվարի 6-ին (նշվ. աշխ., էջ 67) և 1944 թ. (նշվ. աշխ., էջ 68): 1928-1936 թթ. «Ազեգի Քիլիսցի Կրթական Երիտասարդաց» միության վարչության ատենադպիրն էր (նշվ. աշխ., էջ 80), իսկ 1936 թ. հունվարի 28-ին ընտրվել է միության վարչության ատենապետ (նշվ. աշխ., էջ 81):



775. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լու-

սանկարով քևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից երկու սալիկներին, 12 տող.

Սալիկ Ա, ներկագիր.

Աստ հանգչի(ն) | Քեոռք | Հինո(յ)եան, | ծն(եալ) 1892-1961, | Սարքիս | Լալմճեան, | ծն(եալ) 1899-1952: | Այնթապցի:

Սալիկ Բ (մարմարե), փորագիր.

Աստ հանգչին | Լիլիմճեաններ՝ | Սուլթան, 1907-1974, | Գրիգոր, 1928-2004:

Հրատ. առաջին անգամ:



776. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ քևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Հայկ Փուշմանեան, | տիգրանակերտցի, | ծն(եալ) 1900, հան(գեալ) 1952:

Հրատ. առաջին անգամ:



777. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին ագուցված քևավոր խաչը չի պահպանվել, խաչի պատվանդանի վրա՝ անհետացած լուսանկար, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | տիկ(ին) Նուրիճա Օռսկունեան, | ծն(աւ) ի Կիւրիւն, 1903, | մեռ(աւ) 1952 հոկտ(եմբեր) 30:

Հրատ. առաջին անգամ:



778. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Պարզէլ | Վանեան | ծն(եալ) 1905-1952, | սեքսատաղի:
Հրատ. առաջին անգամ:



779. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Գուրբեն Մարգարեան, | երեսանցի, | ծնաւ-հանգ(եալ), | 1906-1952:
Հրատ. առաջին անգամ:



780. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | ծակցի | Գառնիկ | Մարկոսեան, | ծն(եալ) 1906, | հանգ(եալ) 1952:
Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 1238): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.:



Ծակը Ծագ գյուղն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանում՝ Խարբերդի նահանգի Արաբկիր գավառում՝ Արաբկիր քաղաքից 10 կմ արևելք: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Ին (In):

781. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից երկու սալիկներին, 12 տող.

Սալիկ Ա, ներկագիր.

Աստ հանգչին | Մարտիրոսեաններ՝ | Կարապետ, | ծն(եալ) 1887, հ(ա)ն(գեալ) 1963, | Զմբուք, | ծն(եալ) 1906, հ(ա)ն(գեալ) 1952, | Մարի, | ծն(եալ) 1926, հ(ա)ն(գեալ) 1971: | Կարմուճցի:

Սալիկ Բ (մարմարե), փորագիր.

Արուշ | Մարտիրոսեան, | 1920-1978:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Կարապետ Մարտիրոսյանը 1945-1955 թթ. Ուրֆայի Երիտասարդաց միության վարչության անդամ էր Հայեպոմ (Մահակեան Ա., նշվ. աշխ., էջ 1262-1263): Կարմուճը Կամուրջն է:




782. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Աւետիս | Գույիմեան, | ծն(աւ) 1908, Երզնկա, | մ(ե)ռ(աւ) 1952, | Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 108 համարը:



783. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Հրաչեայ | Գալիկեան, | ծնած Կորնթոս, | 1925-1952:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 91): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

Կորնթոս քաղաքը գտնվում է Հունաստանում:



784. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Վարդգես Քեչիշեան, | բնիկ կարմուճցի, | ծն(եալ) Թէլ Ապիսատ, 1938, | հ(ա)նգ(եալ) Հալէպ, 1952:

Հրատ. *առաջին անգամ:*

Ծանոթ. *Թէլ-Աքյատ (تل ابيض) գյուղը գտնվում է Սիրիայի Արաբական Հանրապետության հյուսիսում:*



785. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, մերկագիր, 6 տող.

Աստ հանգչի(ն) | բնիկ ուրֆացի | Կարապետ Գասարճեան, | ծն(եալ) 1855, հ(ա)նգ(եալ) 1953, | Սարգիս, | 1913-1989:

Հրատ. *առաջին անգամ:*

Ծանոթ. *Սարգիս Գասարճյանը հիշվում է 1955 թ. հայեպարենակ ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ ամուսնացած էր և ուներ 1 տղա, 1 աղջիկ (Մահակեան Ա., նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 8):*



786. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգչին | կիրիցցի | Աննա Ագարեան, | 1860-1953, | Հռիփսիմե Ագարեան, | 1893-1982, | Հայկանոյշ Չնոզեան, | 1892-1984:

Հրատ. *առաջին անգամ:*



787. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից երկու սալիկներին, 14 տող.

Սալիկ Ա, մերկագիր.

Աստ հանգչի(ն) | Եփրեմ | Շահինեան, | ծն(եալ) 1888, հ(ա)նգ(եալ) 1967, | Բալու, ուզունյոյցացի, | Մարիամ | Պարոնեան, | ծն(եալ) 1867, հ(ա)նգ(եալ) 1953, | աստքազարցի:

Սալիկ Բ, փորագիր.

Սիրուհի Պարոնեան, | 1894-1969, | Տիգրանուհի Աշըգեան, | 1893-1985:

Հրատ. *առաջին անգամ:*

Ծանոթ. *Ուզունոյա (Uzunova) գյուղը գտնվում է Արևմտյան Հայաստանի Դիարբեքրի նահանգի Բալու գավառում՝ Բալու քաղաքից 28 կմ արևմուտք:*

Աստքազար քաղաքը գտնվում է Անատոլիայում: Թուրքերենով արտասանվում է Ադափազարը (Adapazarı):



788. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.



Աստ հանգչի | Ազնուհի | Սարգիսեան, | արար-
կիրցի, | ծն(եալ) 1875, | հանգ(եալ) 1953 դ(ե)կտ(եմ-
բեր) 22:

Հրատ. առաջին անգամ:

789. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա,
խաչակիր, քառակողմ, վրանածև, արձանագրությունը՝ մարմա-
րե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Եքիմե | Ն. Պիլեզիկեան, | մա-
րաշքի, | 1876-1953:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է մարաշքի Նազարեթ Պիլեզիկեյանի տա-
պանաքարի մոտ: Վերջինիս մասին տես Շեխ-Մագսուտի առա-
քելական գերեզմանատան արձ. № 463:



790. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝
փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Լուսին | Նազաշեան, | ծն(եալ)
Տիգրանակ(երա), | 1878, հ(ա)ն(գեալ) 1953:

Հրատ. առաջին անգամ:



791. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա,
ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փո-
րագիր, 5 տող.



Աստ հանգչի | Թորոս Թահմազեան, | կիրիւնցի,
| ծնաւ-հանգ(եալ), | 1879-1953:

Հրատ. առաջին անգամ:

792. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լու-
սանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկա-
գիր, 6 տող.

Աստ հանգչի | Ովսաննա | Հինտոյեան՝ | ծն(եալ)
Արլանեան, | 1880-1953, | այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Օվսաննա Հինտոյանը Սբ. Աստվածածին նոր եկե-
ղեցու քահանա Ջարմայր Հինտոյանի մայրն էր (Հինտոյեան Զ.,
նշվ. աշխ., էջ123):



793. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրու-
թյունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | կիրիւնցի | տիկ(ին) Սրբուհի
Վարդանուշ | Չիննոզեան, | ծն(աւ) 1883, | մ(ե)ռ(աւ)
1953:

Հրատ. առաջին անգամ:



794. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝
թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու
սալիկներին, փորագիր, 12 տող.

Սալիկ Ա.

Տիրահայր: | Աստ հանգչի | Յակոբ Խաչատու-
րեան, | ծն(եալ) Սասուն, հ(ա)ն(գեալ) Հալեպ, |
1885-1967:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | տիրամայր | Մարիամ | Խաչա-
տուրեան, | ծն(եալ) 1883-1953: | Մահ իմացեալ |
անմահութիւն է:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. Հակոբ և Մարիամ Խաչատուրյանները տեր Գրիգորի ծնողներն էին: Վերջինս 1926 թ. պաշտոնավարում էր Սբ. Աստվածածին եկեղեցում (**Գապայենցան Գ.**, նշվ. հոդվ., էջ 306):

795. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, դեպի ներս կորացված նիստերով և կողերով, ուղղանկյունաձև, ներքին աջ եզրից կտրված, արձանագրությունը՝ փորագիր, 9 տող.

Այս է | դամբան | մարաշցի | տ(ի)կ(ին) Վերժին | Սիծիսեանի, | ծն(եալ) 1886, | հ(ա)ն(գեալ) 1953 | յ(ու)ն(ի)ս 19:

Հրատ. առաջին անգամ:



796. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 8 տող.

Աստ հանգչին | տեր եւ տիկին | Գարագաշեան-ներ՝ | Յովհաննէս, | ծն(եալ) 1886, հ(ա)ն(գեալ) 1953, | Ազնի, | ծն(եալ) 1906, հ(ա)ն(գեալ) 1974: | Ուրֆացի:

Հրատ. առաջին անգամ:



797. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.

Աստ հանգչին | տեր եւ տիկին | Պետիրեաննար՝ | Հակոբ, | ծն(եալ) Ուրֆա, 1887, | հ(ա)ն(գեալ) Հա-

լէպ, 1953, | Հայկանուշ, | ծն(եալ) Ուրֆա, 1902, | հ(ա)ն(գեալ) Հալէպ, 1989:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. գտնվում է եղեսիացի Էլիզ, Պետրոս և Արշալույս Պետիրեանների տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեն-Մագուդի առաքելական գերեզմանատան արձ. № 731:

Հայկանուշ Պետիրեանը հիշվում է 1955 թ. հալեպաբնակ ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ այրի էր, ուներ 2 տղա: Ազգանունը տրվել է «Պետրեան» ձևով (**Մահակեան Ա.**, նշվ. աշխ., հավելվածը (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 13):

Պետիրեաննար բառի վերջին ա տառը սխալ է փորագրված, պետք է լիներ ե:

798. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում հանգուցայի պատկերով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միսյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 10 տող.


Սալիկ Ա.

Աստ հանգչին | Չափրազեաններ՝ | Գրիգոր 1887-1953, | Մարիամ, 1907-1995: | Քիլիս:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Գրիգոր | Չափրազեան, | ծնեալ Հալէպ, | 1941-2003:

Հրատ. առաջին անգամ:



799. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, հանգուցայի պատկերով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.



Համբարձում | Համբարձումեան, | Էվերեկցի, | 1889-1953, | Յակոբ | Համբարձումեան, | 1925-1980:
 Հրատ. առաջին անգամ:
 Ծանոթ. գտնվում է Էվերեկցի Համբարձումեանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տե՛ս Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 447:

800. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 6 սող.

Աստ հանգչի | Յակոբ | Գասրարեան, | Եդէսյա | Կարմու խճ գուղ, | 1890-1953:
 Հրատ. առաջին անգամ:



801. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 սող.



Աստ հանգչի(ն) | հաճի Յարութին, | ծն(եալ) 1890, հ(ա)ն(գեալ) 1953, | Մարքրիտ, | 1895, հ(ա)ն(գեալ) 1959: | Այնթապցի: | Մահտըղճեան:
 Հրատ. առաջին անգամ:

802. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 սող.



Աստ հանգչի | Մարի | Ադրարեան, | տիգրանակէրցցի, | ծն(եալ) 1892, | հ(ա)նգ(եալ) 1953 օգ(ո)ստ(ոս) 25:

Հրատ. առաջին անգամ:
 Ծանոթ. կրում է 1067 համարը:

803. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 սող.

Աստ հանգչի | տիկ(ին) Մարգրիտ | Գերձակեան, | ծն(աւ) 1893, Խարբերդ, | մ(ե)ռ(աւ) 1953, Հալէպ:
 Հրատ. առաջին անգամ:



804. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 սող.

Աստ հանգչի | Յովհաննէս | Օհանեան, | այնթապցի, | ծն(եալ) 1895, | հանգ(եալ) 1953:

Հրատ. առաջին անգամ:



805. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 սող.

Աստ հանգչի | Մարի Աւետիսեան՝ | ծն(եալ) Պէնլեան, | ծն(աւ) 1895, մ(եաւ) 1953:

Հրատ. առաջին անգամ:




Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.: Գտնվում էր 6-րդ մասում (համար 746) Արշալոյս Մորուզյան-Պենլյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տե՛ս Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձանագր. № 760:

806. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.



Աստ հանգչի | Սարգիս
| Նազաշեան, | այնթապ-
ցի, | ծն(եալ) 1895, | հան-
գ(եալ) 1953:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում էր 4-րդ մասում (համար 684): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.:



Աստ հանգչի | Աւետիս | Կոստանեան, | ծն(եալ) 1899, հ(ա)ն(գեալ) 1953, | քիլիսցի:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում է քիլիսցի Սահակ, Լուսաձին և Մարի Կոստանյանների տապանաքարի մոտ: Նրանց մասին տես Շեն-Սագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 583:
Ավետիս Կոստանյանը 1928 թ. Աֆրին գյուղում հաստատված հայերի թաղական խորհրդի ատենադպիրն էր («Տարե», 1929, էջ 384), իսկ 1932 թ.՝ գյուղի Սբ. Նշան եկեղեցու թաղական խորհրդի անդամ (Ղազարեան Ս., նշվ. աշխ., էջ 114):

807. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.



Աստ հանգչի | Գեորգ Ադամեան, | տիգրանակերտցի, Արզնիէն, | ծն(աւ) 1896 նոյ(եմբեր), | մ(ե)-ն(աւ) 1953 յուն(իս) 30: | Մինջեւ ի մահ հաւատարիմ եղիր | ու քեզի կենաց պսակը պիտի | տամ: | Յայտ(նութիւն) Ղ (90). 19:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում էր 4-րդ մասում (համար 3547): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:
Արզնի Արկնին է:

810. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.


Հանգչի ի տէր | Շարլո Վանլեան՝ | Նըժդեհ, եկեալ յԱտանայէ: | Վարոք բարի, հայր սիրական, | վարձս ըսպաս է ի Քրիստոսէ: | Ծն(եալ) յԱտանա, 1900, | վ(ա)խճ(անեալ) ի Հալէպ, 1953: | Հանգիստ քո աճիւն(ն)երի:

Հրատ. առաջին անգամ:


808. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Շաւարշ Ալինեան, | ծն(աւ) 1898-ին, մ(ե)ն(աւ) 1953-ին, | Սեբաստիա-Հալէպ: | Յարգանք անոր յիշատակին, | գուլայ մը խունկ իր հոգին, | բաժին դարձաւ օտար հողին, | հայրենիքի սէրն իր սրտին:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. Շաւարշ Ալինյանը 130 սեբաստացիների հետ մասնակցել է 1920 թ. Այնթապի ինքնապաշտպանական մարտերին (Առաքել Պատրիկ, Պատմագիրք յուշամատենան Սեբաստիոյ և գաւառի հայութեան, հ. Ա, Պէյրոս, 1974, էջ 795-796):



811. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանա-



809. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

գրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 10 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Եագույ | Թօփճիեան, | այնբապ-
ցի, | ծն(եալ) 1900, | հանգ(եալ) 1953:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Սիրանոյշ | Թօփճ(ի)եան, | 1910-
1990:


Հրատ. առաջին անգամ:

812. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Նազիրա | Օհանեան, | ծն(եալ)
Ուրֆա, 1907, | հ(ա)ն(գեալ) Հալեյ, 1953:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 1588): Այժմ գոյու-
թյուն չունի: Տեղահանվել է 2008 թ.:



813. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհե-
տացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մար-
մարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգ(չի) | Օվսանայ | Արապեան, | ծն(եալ)
1908-1953, | տիգրանակեր(տ)ցի:

Հրատ. առաջին անգամ:



814. Տապանաքար. դեպի ներս կորացված միատերով, ուղ-
ղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորա-
գիր, 5 տող.

Աստ հանգչի | Հայկազ Սալաբեան, | զէյթունցի,
| ծն(եալ) 1908, հանգ(եալ) 1953:

Հրատ. առաջին անգամ:



815. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա,
ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած
լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներ-
կագիր, 5 տող.

Աստ հանգչի | Արամ | Պետոյեան, | 1909-1953, |
քիլիսցի:


Հրատ. առաջին անգամ:



816. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսա-
նկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին,
փորագիր, 8 տող.

Աստ հանգչին | հայր եւ որդի | Փամպուգեաններ՝
| Յարութին, | ծն(եալ) 1907, հ(ա)ն(գեալ) 1974, | Յա-
կոբ, | ծն(եալ) 1946, հ(ա)ն(գեալ) 1953: | Քիլիսցի:

Հրատ. առաջին անգամ:



817. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրու-
թյունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.



Աստ հանգչի(ն) | Յակոբ Մինասեան, | ծն(եալ) 1875-1954, | Էլիզա Մինասեան, | ծն(եալ) 1884-1956: | Կեսարեացի:
Հրատ. առաջին անգամ:

818. Տապանաքար. դեպի ներս կորացված միստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Գիրգոր | Նազաշիեան, | ծն(եալ) 1877, Այնթապ, | հանգ(եալ) 1954:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. կրում է 2280 համարը:



819. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Լուսֆիկ | Արապաթլեան, | ծն(եալ) Քիլիս, 1877, | հ(ա)նգ(եալ) 1954:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում է քիլիսցի Ֆերիդե, Անդրանիկ, Տիգրան և Ծաղիկ Արապաթլյանների տապանաքարերին կից: Վերջիններիս մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 719, 1482, 1524:



820. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգ(չի) | Եղիսաբեթ | Պուտագեան, | քիլիսցի, | ծն(եալ) 1879, հ(ա)նգ(եալ) 1954:
Հրատ. առաջին անգամ:



821. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 11 տող.

Նշան | Տեր-Յովհաննէսեան, | ծնած է 1879, | մեռած է 1954, | Գեորգ | Տեր-Յովհաննէսեան, | ծնած է 1912, | մեռած է 1956: | Քիլիսցի:
Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է Եղսո, Գիրգոր և Այխ Տեր-Հովհաննէսյանների տապանաքարերին կից: Վերջիններիս մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 248, 598:



822. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից երկու սալիկներին, 11 տող.



Սալիկ Ա, ներկագիր.

Աստ հանգչի(ն) | երկու քույրեր՝ | Եսդեր Գալի-
թեան, | ծն(եալ) 1880, հ(ա)ն(գեալ) 1954, | Մագրուի
| Իսկէնեան, | ծն(եալ) 1890, հ(ա)ն(գեալ) 1965: |
Ջնշկածակցի:

Սալիկ Բ (մարմարե), փորագիր.

Աստ հանգչի | Յովակիմ Իսկէնեան, | 1924-1986:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ջնշկածակր Չմշկածագն է:

823. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Դազար | Բիլէնեան, | 1882-1954,
| ուրֆացի:

Հրատ. առաջին անգամ:



824. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա,
ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ ելնդագիր, 9 տող.

Աստ | հանգչի | Տ. | Սանդուխտ Չաուշեան, |
ծն(եալ) | 1882, | հան(գեալ) | 1954, | բալուցի:

Հրատ. առաջին անգամ:




825. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝
թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորա-
գիր, 5 տող.

Աստ հանգչի | Յովակիմ Շիշո(յ)եան, | բնիկ ուր-
ֆացի, | ծն(եալ) 1886, | հան(գեալ) 1954:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է եղեսիացի Հովհաննես Շիշոյանի տապա-
նաքարին կից: Վերջինիս մասին տե՛ս Շեխ-Մագսուդի առաքե-
լական գերեզմանատան արձ. № 1037:



826. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝
թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորա-
գիր, 5 տող.

Աստ հանգչի | Հովհաննես | Հեգիմեան, | ծն(եալ)
1887-1954, | քիլիսցի:

Հրատ. առաջին անգամ:



827. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա,
ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանա-
գրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչի | ուրֆացի | տապաղ Ներսէս | Խա-
չատուրեան, | ծն(եալ) 25 փետր(ուար) 1888, | հան-
գ(եալ) 23 յունուար | 1954:

Հրատ. առաջին անգամ:





828. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ քևավոր խաչ, արձանագրությունը՝ տապանաքարի արևմտահայաց միստին անրացված մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | ուսուցիչ | Միսաք Միսեռեան՝ Մ. Ուլնեցի, | ծն(աւ) 1888, Չէթուն, | մեռ(աւ) 1954, Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Միսաք Միսեռեանը, 1904 թ. ավարտելով Չէթունի Կեդրոնական նախակրթարանը, Կ.Պոլսի Ազգային կեդրոնական վարժարանի ուսումնական խորհրդից ստանում է ուսուցչի վկայական: 1904-1909 թթ. դասավանդում է Չէթուն քաղաքում և Կոկիսոն, Թաշղուզ, Աբխստան գյուղերում, 1911-1913 թթ.՝ Անտիոքում (1914 թ. արտրվում է Համա, այնուհետև դառնում պարենավորման պաշտոնյա), 1919-1926 թթ.՝ Հալեպի Հայկազյան վարժարանում (ի դեպ, 1925-1926 թթ. համատեղում է նաև Հալեպում Տիգրանակերտի հայրենակցական միության որբանոցի գիշերային դասընթացի ուսուցչի և տնօրենի պաշտոնը): 1926-1928 թթ. Հալեպի «Բարեն Եփփե» որբանոցի, իսկ 1928-1932 թթ. Դեյր էգ-Չորի Նահատակաց ազգային վարժարանի տնօրենն էր, միաժամանակ նաև տեղի եկեղեցու դպրապետը: 1932-1945 թթ. կրկին դասավանդում է Հալեպի Հայկազյան, իսկ 1945-1953 թթ.՝ Կյուլպենկյան վարժարանում: Ի դեպ, ուսուցա-

նում է հայերեն, աշխարհագրություն և տոմարագիտություն (**Միսեռեան Մ.**, նշվ. աշխ., էջ V-VI): 1945-1947 թթ. Հալեպահայ ուսուցչական միության վարչության անդամ էր (ՀԱԳ, ֆ. 1421, ց. 3, գ. 7, ք. 2: Տե՛ս նաև գ. 6, ք. 1): Երկար տարիներ վարում է Չէթունի հայրենակցական միության ատենադպրի և խորհրդականի պաշտոնը, իսկ 1908 թ.-ից ՀՅԴ անդամ էր (**Միսեռեան Մ.**, նշվ. աշխ., էջ VII-VIII):

Միևրան Աճեմյանի և Էդուարդ Ոսկերիչյանի հետ խմբագրում է «Մուրիահայ տարեցոյց»-ի 1924 և 1925 թթ. համարները: Թղթակցում է «Արեւելք», «Ազդակ», «Յուսաբեր», «Արեւ», «Յառաջ» թերթերին և «Հայրենիք» ամսագրին: 1930 թ. քարգմանում է Նորեյլյան մրցանակակիր բելգիացի գրող Մորիս Մետերլինկի «Իմաստություն և ճակատագիր» գիրքը (նշվ. աշխ., էջ VI): 1953-1954 թթ. հողվածներ է հրատարակում Հալեպի «Կամբեդ» համդեսում (**Պարիկեան Հ., Վարժապետեան Յ.**, Պատմութիւն Մուրիոյ հայ տպարաններու, Հալէպ, 1973, էջ 215): Յարդ անտիպ քարգմաթիվ բանաստեղծությունների հեղինակ է: 1966 թ. որդու՝ Մեպուհի նախաձեռնությամբ Բեյրութում հրատարակվում է «Պատմութիւն Չէթունի (1409-1921)» աշխատությունը:

1913 թ. Անտիոքում ամուսնանում է Օվաննայի (մահացել է 1924 թ.) հետ և ունենում երեք որդի՝ Չարեհ, Մեպուհ, Գեղամ: 1927 թ. Հալեպում ամուսնանում է Մարի Տաշոյլյանի հետ և ունենում չորս աղջիկ՝ Անահիտ, Հայկուհի, Անժել և Միրուհի: Ուներ 32 բոռ և 40 ծոռ (**Միսեռեան Մ.**, նշվ. աշխ., էջ X):

829. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Մարիամ | Օղեամեան, | բալուցի,
| ծն(եալ) 1889, | հանգ(եալ) 1954:

Հրատ. առաջին անգամ:



830. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգ(չի) | Սարգիս | Պերեճիբեան, | ուր-
ֆացի, | 1889-1954:

Հրատ. առաջին անգամ:



831. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արևմտյան եզրին՝ ստորին մասում լուսանկարով
թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու
սալիկներին, փորագիր, 5 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | բնիկ թոգատցի | Մարիամ Գարա-
կեօզեան, | ծն(եալ) 1891, հան(գեալ) 1954 փետ-
(րուար) 28:



Սալիկ Բ.

Վարդուխի, 1905-1985:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. «Թօգատ»-ը Եվդոկիան է:

832. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրու-
թյունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Յարութիւն | Ենովբեան, | ծն(եալ)
1893, Խարբերք, | հանգ(եալ) ի տէր, 1954 | յո(ւ)նուար:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.: Կրում էր 660 համարը և գտնվում էր Խարբերքի Մարգրիտ Ենովբեանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեխ-Մագսուդի ա-
ռաքելական գերեզմանատան արձ. № 605:



833. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա,
խաչակիր, քառակողմ, վրանաձև, արձանագրությունը՝ արև-
մտահայաց կողին ազուցված մարմարե սալիկին, փորագիր, 5
տող.

Տէր եւ տիկին | Սապունճեաններ՝ | Ներսէս,
ծն(եալ) 1878-1962, | Բահէլ, ծն(եալ) 1893-1954: |
Այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 513 համարը:



834. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրու-
թյունը՝ խաչի պատվանդանի արևմտահայաց միստին, փորա-
գիր, 6 տող.

Կանգնեցաւ շիրիմս | հանգստեան ի յիշատակ |
վաղամէրեկ մօրս՝ | Տոտո Քէշիշեան(ի), | ծն(եալ)
Այնթապ, 1895, | հանգ(եալ) Հալէպ, 1954
փ(ետ)ր(ուար) 21:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 157 համարը:



835. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 7 տող հայերեն, 3 տող հունարեն և 3 տող ֆրանսերեն.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Օլկա Կիլոլու, | այնթապցի, | ծն(եալ) 1897, հ(ա)ն(գեալ) 1954:

Հունարեն.

ΟΛΓΑ ΓΚΟΥΛΟΓΛΟΥ | ΕΓΕΝΝΗΘΗ 1897 Ε, ΑΝΤΕΠ | ΑΠΕΒΙΩΣΕΝ 18.8.1954.

Սալիկ Բ.

Փոքրիկն | Էլի Կիլոլու, | ծն(եալ) 1962, հ(ա)ն(գեալ) 1972:

Ֆրանսերեն.

L'enfant | Eli Guloghlu, | ne 1962 mort 1972.

Հրատ. առաջին անգամ:



836. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, ելնդագիր, 6 տող.



839. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Հանգ(չի) մարմին | տիկ(ին) Խանըմիկ | Յովակիմեանի, | Խարթ(երդ) հողէցի, | 1900-1954, | Հալէա:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է հողէցի Եղիա Հովակիմյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեն-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 1282:

837. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Յակոբ | Քալէմբէրեան, | ծն(եալ) 1902, հ(ա)ն(գեալ) 1954, | թիլիսցի:

Հրատ. առաջին անգամ:



838. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | խարբերդցի | Ահարօն | Աւագեան, | ծն(եալ) 1905, | հանգ(եալ) 1954 մայիս 26:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 4-րդ մասում (համար 1501-Ա): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:



839. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.



Աստ հանգչի | Սիրարփի | Շիլգեորգեան, | ծն(եալ) Քիլիս, 1909, | հ(ա)նգ(եալ) Հալէա, 1954 | մարտ 20:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 89): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:


840. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ունակորված, արձանագրությունը՝ հյուսիսահայաց նիստին, փորագիր, 3 տող.

Աստ հանգչի | Սարգիս Ռ(ուբէն) Սէթեան, | ծն(եալ) Հալէպ, 1919, հանգ(եալ) 1954:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.: Գտնվում էր 6-րդ մասում (համար 1297)՝ Արամ Սեթյանի տապանաքարի մոտ: Վերջինիս մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 48:

Սարգիս Սեթյանի հայրը՝ Ռուբենը, 1924 թ. հունիսի 5-ին ընտրվում է Բերիո քեմի ազգային գավառական ժողովի անդամ (Գապպէնճեան Գ., նշվ. հոդվ., էջ 304: Տես նաև «Մուրիահայ տարեցոյց», Հալէպ, 1925, էջ 319):



841. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Սարգիս Խալօ(յ)եան, | ատրեանանցի, | ծն(եալ) 1922, 1954 | յուլիս 4-ին:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ատրեանանն Աղիամանն է:



842. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.



Աստ | հանգչի | Սարգիս | Միսիրեան, | ատրեանանցի, | 1923-1954: | Դաւանանութեամբ | սպաննուած:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ատրեանանն Աղիամանն է:

843. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Գրիգոր Գալֆա(յ)եան, | 1946-1954, | ուրֆացի:

Հրատ. առաջին անգամ:



844. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | տօքթ(որ) Խաչիկ | Պողոսեան, | ծն(եալ) Պօլիս, | 1873, հանգ(եալ) 21 մարտ | 1955:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Խաչիկ Պողոսյանը 1918 թ. ղեկները բերին նշանակվում է Հայ ազգային միության վարչության անդամ (Տէր-Խաչատուրեան Ա., Մուրիահայ մամուլի պատմություն, «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. Գ, Պէրոթ, 1972, էջ 198): 1925 թ. Արշակ Չոպանյանի 35-ամյա «յորդեանական կարգադիր յանձնաժողով»-ի ատենապետն էր («Արեւ», 28 յունուար, 1925, էջ 2): 1927-1933 և 1944-1949 թթ. Հալէպում լույս տեսած Ռանկավար ազատական կուսակցության «Եփրատ» թերթի տնօրենն էր (Կիլիկոսյան Ա., Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967) համահավաք ցանկ, Երևան, 1970, էջ 78): 1928 թ. ուսուցանում էր Հալէպի Կենտրոնական միջնակարգ վարժարանում («Արեւ», 5 հոկտեմբեր, 1928, էջ 2): 1929 թ. Հայ ազգային Կարմիր խաչի ատենադպիրն էր («Տարեւ», 1929, էջ 380): Նույն թվականին նշանակվում է Խնամատար մարմնի ենթահանձնախմբի անդամ, որի նպատակն էր օգնել Միրիա հասած հայ նոր գաղթականներին (Ֆիշենկճեան Ա., նշվ. հոդվ., էջ 309, 314): Ունի հրատարակված հոդվածներ (տես «Մուրիահայ տարեցոյց», Հալէպ, 1924, էջ 107: «Արեւ», 29 յուլիս, 1925, էջ 1-2):



845. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Գուտսի | Շուշանեան, | 1874-1955, | կարմուճցի:

Հրատ. առաջին անգամ:



846. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին ագուցված թևավոր խաչը չի պահպանվել, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | երեցուի | Ովսաննա Մարտոյեան, | ծն(եալ) Այնթապ, 1875, | հ(ա)նգ(եալ) 1955 | ցավալի մահով:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 588 համարը:

Օվսաննա Մարտոյանը տեր Սյրտիչ Մարտոյանի կինն էր (**Գապայենճեան Գ.**, նշվ. հողվ., էջ 306): Տեր Հուսիկ Սեդրակյանը սխալմամբ նշել է, որ երեցկինը միգրացի է (**Մեղրակեան Յ.**, Վարք քահանայից, «Գանձասար», 8/3/2007):

Տեր Սյրտիչը ծնվել է 1856 թ. Նիզիպում: Նախնական ուսուցումը ստացել է ձեռնդավալարի ծխական դպրոցում: Ուներ 4 տղա և 1 աղջիկ: 1922 թ. ձեռնադրվում է քահանա Հայեպի Սր. Քառասնից մանկանց եկեղեցում և պաշտոնավարում տեղի Սր. Խաչ եկեղեցում մինչև 1937 թ., ապա Սր. Գևորգ եկեղեցում: Հոգևոր հովվություն է կատարել նաև Ալեքսանդրեոսում և Քրրըք-Խանում: Վախճանվել է 1941 թ. նոյեմբերի 14-ին: Մարմինն ամփոփվել է Հայեպի ազգային գերեզմանոցում (նույն տեղում):



847. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Գևորգ Ներսեսեան, | ուրֆացի, | ծն(եալ) 1876, | հանգ(եալ) 1955:

Հրատ. առաջին անգամ:



848. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | տի(կին) Վարդուհի | Գաբրիելեան, | 1880-1955, | այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:



849. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Ներսես Վարդանեան, | այնթապցի, | ծն(ալ) 1881, | մեռ(ալ) 1955 օգոս(տոս) 30:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է այնթապցի Մուննա, Մերում և Գևորգ Վարդանյանների տապանաքարերի մոտ: Նրանց մասին տես Շեն-Սագսուրի առաքելական գերեզմանատան արձ. № 317, 725:



850. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում հանգուցյալի պատկերով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երեք սալիկներին, փորագիր, 15 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Յակոբ Եսփուճըեան, | քիլիսցի, | ծնաւ-հանգ(եաւ), | 1881-1955:

Սալիկ Բ.

Աստ հանգչին | մայր եւ որդի | Եսփուճ(ը)եան-ներ՝ | Անուշ, | 1889-1960, | Մովսէս, | 1927-1988:

Սալիկ Գ.

Ժանէթ | Եսփուճ(ը)եան, | 1931-2000:

Հրատ. առաջին անգամ:



853. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Նազար | Ջարմանեան, | ծն(եալ) 1887, հ(ա)ն(գեալ) 1955, | այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:



851. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 8 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Եղիա | Պօզողլանեան, | ծն(եալ) 1882-1955, | այնթապցի:

Սալիկ Բ.

Աստ հանգչին | Պօզողլանեաններ՝ | Ներսէս եւ Աւետիս:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է այնթապցի Սաբենիկ Պոզողլյանի տապանաքարի մոտ: Վերջինիս մասին տե՛ս Շէխ-Մագսուտի տաքիլական գերեզմանատան արձ. № 936:



854. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Խալիլ | Հէյօ(յ)եան, | սասունցի, | ծն(եալ) 1890, հան(գեալ) 1955:

Հրատ. առաջին անգամ:



852. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին ագուցված թևավոր խաչը չի պահպանվել, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Նազարէթ | Դ. Դանիէլեան, | այնթապցի, | 1883-1955:

Հրատ. առաջին անգամ:

855. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, դեպի արևելք բարձրացող կորատանիք, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, խաչի պատվանդանի վրա՝ լուսանկար, արձանագրությունը՝ արևմտահայաց կողմն ամրացված սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչի | հաճի Յովհաննէս | Սլուլահեան, | քիլիսցի, | ծնաւ-հանգ(եաւ), | 1896-1955 | օգոս(տոս) 3:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. կրում է 830 համարը: Գտնվում է քիլիսցի Կրկրան Սյուլախյանի տապանաքարին կից և Վահան, Արմենուի Սյուլախյանների տապանաքարի մոտ: Նրանց մասին տե՛ս Շեն-Մագսուրի առաքելական գերեզմանատան արձ. № 196, 1057:

856. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 10 տող.

Սալիկ Ա.

Տիկ(ին) Սիրանոյշ | Եղաճեան՝ | ծն(եալ) Քիլեճեան, | այնթապցի, | 1896-1955:

Սալիկ Բ.

Աստ հանգչին | Եղաճեաններ՝ | Մովսէս, 1921-1995, | Յարութիւն, | 1890-1970:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 3355 համարը:



857. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 10 տող.



Սալիկ Ա.

Աստ հանգչի | Մարիամ | Իսկէնտերեան, | առաքելիքցի, | ծն(աւ) 1898, | մ(ե)ռ(աւ) 1955:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | հաճի Յակոբ | Իսկէնտերեան, | ծն(եալ) 1893, հ(ա)ն(գեալ) 1966:

Հրատ. առաջին անգամ:

858. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | նվշէիքցի | Յարութիւն | Էօգեան, | ծն(եալ) 1900, | հանգ(եալ) 1955:

Հրատ. առաջին անգամ:



859. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչին | Թօսունեաններ՝ | Յովհաննէս, | ծն(եալ) 1902, հ(ա)ն(գեալ) 1955, | Լուսին, | ծն(եալ) 1880, հ(ա)ն(գեալ) 1956: | Մարաշցի:

Հրատ. առաջին անգամ:



860. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 4 տող.

Աստ հանգչի | Ստեփան | Փիլիպպոսեան, | 1903-1955:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 489): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

861. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին ագուցված թևավոր խաչը չի պահպանվել, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Երուանդ | Տիգրանեան, | սերաստացի, | ծն(աւ) 1906, | մ(ե)ռ(աւ) 1955:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 3-րդ մասում (համար 168): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.:



862. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից երեք սալիկներին, փորագիր, 15 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Հայկուհի | Պէշիրեան, | 1906-1955, | սղեր(դ)ցի:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Արմենակ | Գէտրգեան, | 1910-1960, | սղեր(դ)ցի:

Սալիկ Գ.

Աստ հանգչի | Սուֆիա | Պէշիրեան, | 1897-1962, | սղեր(դ)ցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 495): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:



863. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Վարդուհի | Սաղպազարեան՝ | ծն(եալ) Մարաշ, | 1907-1955:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Վարդուհի Սաղպազարյանը 1949-1953 թթ. Հայեյի Չավարյան վարժարանի ուսուցչուհիներից էր (Պարսամեան Գ., Չաւարեան վարժարանը 1948-1951, էջ 77: Նույնի՝ Քսանամեակ Չաւարեան կրթական միութեան եւ վարժարանի, էջ 112, 114):



864. Տապանաքար. փշրված, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 8 տող.

Աստ հանգչին | տէր եւ տիկին | Սարգիսեաններ՝ | Յովհաննէս, | ծն(եալ) 1893, հ(ա)ն(գեալ) 1970, | Մարիեան, | ծն(եալ) 1908, հ(ա)ն(գեալ) 1955: | Սեւէր(է)կցի:

Հրատ. առաջին անգամ:



865. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին ագուցված թևավոր խաչը չի պահպանվել, խաչի պատվանդանի վրա՝ անհետացած լուսանկար, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.



Աստ հանգչի(ն) | Ովսաննա | Փամպուքեան, ծն(եալ) 1909, | Եդեսեա, հ(ա)նգ(եալ) 1955 | եւ Գ-էորգ | Փամպուքեան, ծն(եալ) 1887, | Եդեսեա, հ(ա)նգ(եալ) 1962:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Գևորգ Փամպուքյանը հիշվում է 1955 թ. հայեպարնակ ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ ամուսնացած էր և ուներ 4 տղա, 1 աղջիկ (Մահակեան Ա., նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 11):

866. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ ստորին մասում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Մաքրուհի | Տեկիրմենճեան, | մարաշցի, | ծն(եալ) 1910, հանգ(եալ) 1955:

Հրատ. առաջին անգամ:



867. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 8 տող.

Աստ հանգչին | տէր եւ տիկին | Սարգիսեաններ՝ | Ադամ, | ծն(եալ) 1907, հ(ա)նգ(եալ) 1973, | Խաթուն, | ծն(եալ) 1915, հ(ա)նգ(եալ) 1955: | Մասունցի:

Հրատ. առաջին անգամ:



868. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 9 տող.



Սալիկ Ա.

Աստ հանգչի(ն) | Սիրուարդ | Պեկեան, | ամասեսացի, | ծն(եալ) 1924, | հանգ(եալ) 1955:

Սալիկ Բ.

Ըսկուհի | Պեկեան, ծն(եալ) 1894, | հանգ(եալ) 1959:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 110): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

869. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից երկու սալիկներին, 16 տող.


Սալիկ Ա. ներկագիր.

Աստ հանգչին | Էմիրգեաններ՝ | Ղազար, | ծն(եալ) 1900, հ(ա)նգ(եալ) 1968, | Բարիգ, | ծն(եալ) 1895, հ(ա)նգ(եալ) 1966: | Խարբերոյի: | Համբարցում | Երեսեան, | ծն(եալ) 1927, հ(ա)նգ(եալ) 1955:

Սալիկ Բ (մարմարե), փորագիր.

Աստ հանգչին | Սկրտիչ Թորիկեան, | 1912-1992, | Սուլբան Արրահամեան, | 1913-1995: | Չարսանձագի:

Հրատ. առաջին անգամ:



870. Երկու տապանաքարեր. միաստիճան ընդհանուր պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրերին՝ երկու թևավոր խաչեր, հարավային կողմի տապանաքարի արձա-



նագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 8 տող, հյուսիսային կողմի տապանաքարի արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Հարավային կողմի տապանաքար.
Սալիկ Ա.

Աստ հանգչի | Կարապետ | Չուլֆա(յ)եան, | ծն(եալ) Տիգրանակերտ, | ծն(եալ) 1874, հ(ա)ն(գեալ) 1956 | օգոս(տոս) 9, Հալէպ:

Սալիկ Բ.

Արագսի Չուլֆայեան, | 1922-2003:

Հյուսիսային կողմի տապանաքար.

Աստ հանգչի | տիկ(ին) Կատար՝ | ծն(եալ) Չուլֆա(յ)եան, | Տիգրանակերտ, | 1884 յունուար | 7, հ(ա)ն(գեալ) 1956, Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է տիգրանակերտցի Գառնիկ և Աստղիկ Չուլֆայանների տապանաքարին կից: Վերջինիս մասին տես՝ *Շելի-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 1409:*



871. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ ստորին մասում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 10 տող.



Սալիկ Ա.

Աստ հանգչի | Ազիզ | Կիլիսեցի, | ուրֆացի, | 1874-1956:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Ապու Ազիզ՝ | Գրիգոր | Կիլիսեցի, | ծն(եալ) 1908, հ(ա)ն(գեալ) 1974:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Գրիգոր Կյուլեսերյանը հիշվում է 1955 թ. հալեպաբնակ ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ ամուսնացած էր և ուներ 3 տղա: Որդին՝ Ազիզը, և ամուսնացած էր և ուներ 1 տղա (**Մահակեան Ա.**, նշվ. աշխ., Հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 3-4):

872. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Գուդգի | Քեօսեան, | ուրֆացի, | ծն(եալ) 1879, հ(ա)ն(գեալ) 1956:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Գուդգի Քեոսեյանը հիշվում է 1955 թ. հալեպաբնակ ուրֆացիների ցանկում (**Մահակեան Ա.**, նշվ. աշխ., Հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 15):



873. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ ստորին մասում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | այնթապցի | Ատուր | Այնթապիեան, | ծն(ալ)-մեռ(ալ), | 1883-1956:

Հրատ. առաջին անգամ:



874. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.



Աստ հանգչի | այնթապցի | Ներսես | Տէյիբմէն-ճեան, | ծն(աւ)-մեռաւ, | 1884-1956:

Հրատ. առաջին անգամ:

875. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, դեպի ներս կորացված նիստերով, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով, իսկ ստորին մասում՝ հանգուցյալի պատկերով քևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 9 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Սյրտիչ | Շահինեան, | ծն(եալ) 1885, հ(ա)ն(գեալ) 1956, | ուրֆացի:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Յակոբ Շահինեան, | ծն(եալ) 1921, հ(ա)ն(գեալ) 1977:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Սյրտիչ Շահինյանը հիշվում է 1955 թ. հայեպարնակ ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ այրի էր, ուներ երկու տղա և երկու աղջիկ (նշվ. աշխ., էջ 6):



876. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կոթողաձև պատվանդանով քևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչի | Յարութին | Տէր-Պետրոսեան, | ծն(եալ) Ուրֆա, 1888, | հ(ա)ն(գեալ) 1956: | Օրինեալ ըլլայ | տիրոջ կամբը, ամէն:

Հրատ. առաջին անգամ:

1148. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչին | հայր եւ որդի Սապունճեաններ՝ | Սկրտիչ, 1891-1965, | Յակոբ, 1920-1986: | Տիգրանակերտցի:

Հրատ. *առաջին անգամ:*



1151. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | հաճի Յարութիւն | Մխսի-ճիրճեան, | ծն(եալ) 1893, հ(ա)ն(գեալ) 1965, | քիլիսցի:

Հրատ. *առաջին անգամ:*



1149. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 10 տող.



1152. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.



Աստ հանգչին | տեր եւ տիկին | Միսիրեաններ՝ | Սահակ, 1894-1965, | տիկին) Արուսեակ, | 1902-1973: | Այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:

1153. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Մարիամ | Տեր-Վարդանեան, | ծն(եալ) 1895-1965, | աշուտցի:

Հրատ. առաջին անգամ:



1154. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Ազնիւ | Անտոնեան, | ծն(եալ) Կարին, 1895, | հ(ա)ն(գեալ) Հալեպ, 1965:

Հրատ. առաջին անգամ:



1155. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից երկու սալիկներին, 11 տող.



Սալիկ Ա, ներկագիր.

Աստ հանգչի(ն) | Մանսուտի | Ֆուրունճեան, | ծն(եալ) 1895, հ(ա)ն(գեալ) 1965: | Եթեսեացի: | Խորեն, 1903-1986:

Սալիկ Բ (մարմարե), փորագիր.

Աստ հանգչի | Մարի | Ֆուրունճեան՝ | ծն(եալ) Պազարպաշեան, | 1913-1991:

Հրատ. առաջին անգամ:

1156. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Յարութին | Թաշճեան, | ծն(եալ) 1897, հ(ա)ն(գեալ) 1965, | ուրֆացի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Հարություն Թաշճյանը հիշվում է 1955 թ. թելաքյատարնակ ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ ամուսնացած էր և ուներ 2 տղա, 3 աղջիկ (Մահակեան Ա., նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 29):



1157. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 6 տող.

Աստ հանգչի | Գեորգ | Կեօզիբիչիքեան, | Աճինքիեայ(°), | 1898-1965, | այնթապցի:


Հրատ. առաջին անգամ:



1158. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Գրիգոր | Սիլիլիքեան, | ծն(եալ) 1898, այնթապցի, | 1965, Հալեպ:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. գտնվում է այնքապցի Վերջ Սյուլյուքճյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տե՛ս Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 1217:

1159. Տապանաքար. քառաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Սկրտիչ | Թաթո(յ)եան, | ծն(եալ) Ուրֆա, | ծն(եալ) 1900-1965:

Հրատ. առաջին անգամ:



1160. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 8 տող.

Աստ հանգչին | տէր եւ տիկին | Մինասեաններ՝ | Օսկի, ծն(եալ) Գօնիա, | 1900-1965, | Վարդուհի, | ծն(եալ) Երզնկա, | 1909-1972:

Հրատ. առաջին անգամ:



1161. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 10 տող.

Աստ հանգչին | տէր եւ տիկին՝ | Սեդրակ Չիգեորգեան, | 1893-1968, | Մաննիկ Պագրճեան, |

1900-1965, | որդին՝ | Նազար Չիգեորգեան, | 1927-1974: | Քիլիսցի:

Հրատ. առաջին անգամ:



1162. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 3 տող հայերեն, որից վեր՝ ներկագիր, 4 տող նույն բովանդակությամբ արաբերեն.

Մարտիրոս | Սայեդեան, | ծն(եալ) 1904, հ(ա)ն-(գեալ) 1965:

Արաբերեն.

.المرحوم | مارديروس صايغ | ولد عام ١٩٠٤ | توفي عام ١٩٦٥.

Հրատ. առաջին անգամ:



1163. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Յակոբ | Մագա(յ)եան, | ծն(ա) Քիլիս, 1904, | մե(ռա) Հալեպ, 1965:

Հրատ. առաջին անգամ:



1164. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Կիրակոս | Գարամանեան, |
ծն(եալ) 1907, Ղարս, | հ(ա)ն(գեալ) 1965, Հալեպ:
Հրատ. առաջին անգամ:



1165. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից երկու սալիկներին, 10 տող.

Սալիկ Ա, ներկագիր.

Աստ հանգչի | տիկին Ռ-ահել | Տիմոտիևեան, |
ծն(եալ) Ուրֆա, | 1908-1965:

Սալիկ Բ (մարմարե), փորագիր.

Աստ հանգչի | Էլմաստ | Տիմոտիևեան, | ծն(եալ)
1901, հ(ա)ն(գեալ) 1970, | ուրֆացի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.: Գտնվում էր 4-րդ մասում՝ 2037 համարը կրող տապանաքարին կից:



1166. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Պետրոս | Եաղճեան, | ծն(եալ)
1909, հ(ա)ն(գեալ) 1965, | ուրֆացի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Պետրոս Եաղճյանը հիշվում է 1955 թ. հայեպրանակ ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ ամուսնացած էր և ուներ 2 տղա, 3 աղջիկ (**Մահակեան Ա.**, նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 18):



1167. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 9 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | տիգրանակերտցի | Յովհաննես |
Տիմկճեան, | ծն(եալ) 1910, հ(ա)ն(գեալ) 1965:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Յակոբ | Չապունեան, | 1943-1968:

Հրատ. առաջին անգամ:



1168. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 10 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Գաթրին | Մարտիրոսեան, |
ծն(եալ) 1910-1965, | տիգրանակերտցի:


Սալիկ Բ.

Աստ հանգչի | Խորեն | Մարտիրոսեան, | 1900-
1978, | ուրֆացի:

Հրատ. առաջին անգամ:



1169. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.



**Աստ հանգչի | Նազե-
լի | Տեկիրմենճեան, |
1920-1965, | ուրֆացի:**

Հրատ. *առաջին անգամ:*
Ծանոթ. *գտնվում էր 6-րդ մասում (համար 913): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.:*

1170. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից երկու սալիկներին, 8 տող.

Սալիկ Ա, ներկագիր.

**Աստ հանգչի | Անդրանիկ | Թումասեան, |
ծն(եալ) 1922-1965, | տարօնցի:**

Սալիկ Բ (մարմարե), փորագիր.

Աղանի | Թովմասեան, | 1934-1986:

Հրատ. *առաջին անգամ:*



1171. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, խաչի ստորին մասում ամրացված է հանգուցյալների լուսանկարը, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 12 տող.



Սալիկ Ա.

**Աստ հանգչին | այնթապցի | Գրիգոր | Չաթալ-
պաշեան, | ծն(եալ) 1890, հ(ա)ն(գեալ) 1978, | Կիլիլի |
Չաթալպաշեան, | ծն(եալ) 1902, հ(ա)ն(գեալ) 1979, |
Գ-էորգ Քիլրքճեան, | ծն(եալ) 1937, հ(ա)ն(գեալ) 1965:**



Սալիկ Բ.
**Krikor et Gullu | Tchal-
bachian:**
Հրատ. *առաջին անգամ:*

1172. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին ագուցված թևավոր խաչը չի պահպանվել, խաչի պատվանդանի վրա՝ անհետացած երկու լուսանկարներ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

**Աստ հանգչին | մայր եւ աղջիկ | Գալօղլեաններ՝
| Մարի, 1907-1983, | Արփինե, 1942-1965: | Քիլիսցի:**

Հրատ. *առաջին անգամ:*



1173. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ սալիկին, փորագիր, 5 տող.


**Աստ հանգչի | Անթիքոնա | Քիթապճեան, | 1869-
1966: | Կեսարիա:**

Հրատ. *առաջին անգամ:*

Ծանոթ. *գտնվում է կեսարացի Գրիգոր Քիթապճյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տե՛ս Շելս-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 134:*



1174. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, վրանաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսա-






նկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ տապանաքարի արևելյան եզրին ագուցված մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | հաճի Տուտու | Քիւրտօղլեան, | ծն(եալ) 1875, հ(ա)ն(գեալ) 1966, | մարաշցի: Հրատ. *ստաջին անգամ*:

1175. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.



Աստ հանգչի | Արմա- տենի | Ժամկոչեան, | ծն(եալ) 1880, հ(ա)ն(գեալ) 1966, | պօլսեցի: Հրատ. *ստաջին անգամ*:

1176. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգչին | տէր եւ տիկին՝ | Կարապետ | Թանկուկեան, | ծն(եալ) 1881, հ(ա)ն(գեալ) 1966, | Օվսաննայ, | ծն(եալ) 1905, հ(ա)ն(գեալ) 1976: | Այն- քապցի:

Հրատ. *ստաջին անգամ*:



1177. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.



Աստ հանգչին | քիլիսցի | տէր եւ տիկին | Գալ- յօղլուեաններ՝ | Աւետիս, | ծն(եալ) 1885, հ(ա)ն(գեալ) 1966, | Մարիամ՝ | ծն(եալ) Պօյաճեան, | ծն(եալ) 1902, հ(ա)ն(գեալ) 1970:

Հրատ. *ստաջին անգամ*:

1178. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից երկու սալիկներին, 10 տող.

Սալիկ Ա, ներկագիր.

Աստ հանգչի | Մարգար | Արզումանեան, | ծն(եալ) 1887, հ(ա)ն(գեալ) 1966, | Անչող {դ}իզ {ցի} | զի(ո)ղեն:

Սալիկ Բ (մարմարե), փորագիր.

Աստ հանգչի(ն) | Արզումանեաններ՝ | Ուստիկ, 1904-1984, | Կարապետ, 1925-1992:

Հրատ. *ստաջին անգամ*:

Ծանոթ. *Անչողիզն Անչողին է*:



1179. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Հովսեփ | Էօրտեգեան, | ծն(եալ) Մարաշ, 1893, | հ(ա)ն(գեալ) Հալէպ, 1966:

Հրատ. *ստաջին անգամ*:



1180. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, վրանաձև, արևմտյան եզրին՝ ստորին մասում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ տապանաքարի արևելյան եզրին ամրացված սալիկին, փորագիր, 5 տող.



Աստ հանգչի | վարպետ | Լեոն Եավերեան, | քնիկ եղեսեացի, | ծն(եալ) 1893, հանգ(եալ) 1966:

Հրատ. առաջին անգամ:



1181. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 10 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչին | այնթապցի | տէր եւ տիկին՝ | Արոշ Բայասեան, | ծն(եալ) 1889, հ(ա)ն(գեալ) 1975, | Նուրիցայ Բայասեան, | ծն(եալ) 1894, հ(ա)ն(գեալ) 1966:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Յակոբ Բայասեան, | 1932-1992:

Հրատ. առաջին անգամ:



1182. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.



Աստ հանգչի | հաճի Դաբուի | Նազարեան, | ծն(եալ) Մարաշ, 1895, | հ(ա)ն(գեալ) Հալեպ, 1966:


Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. տեղահանված է:

1183. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա հանգույցալների լուսանկարներով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչին | Տոտու Աղամեան | ծն(եալ) Մավեան, ծն(եալ) 1896-1966, | Գեորգ Աղամեան, | ծն(եալ) 1890-1970, հաճի Յովհաննէս Մավեան: | Այնթապցի:


Հրատ. առաջին անգամ:



1184. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, քառանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Մեր շատ սիրեցեալ | ամուսնոյն եւ հօր՝ | երկրաչափ | Գեղամ Ազիկեանի(ն), | ծն(եալ) ի Կ. Պոլիս, 1897, | վ(ա)խճ(ա)ն(եալ) 1966:

Հրատ. առաջին անգամ:



1185. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Խաչատուր | Գազանճեան, | ծն(եալ) 1899, հ(ա)ն(գեալ) 1966, | կարինցի:

Հրատ. առաջին անգամ:



1186. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Կարապետ | Պարտազճեան, | ծն(աւ) 1899, մե(ռաւ) 1966, | այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 3152 համարը և գտնվում է այնթապցի Երանիկ, Գրիգոր և Հովհաննես Պարտազճյանների տապանաքարերին կից: Նրանց մասին տես Շեն-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 452, 973, 1272:



լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Լուսյա | Տեմիրճեան, | ծն(եաւ) 1902, հ(ա)ն(գեաւ) 1966, | այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում էր 1293 համարը: Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

1189. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 9 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Գեորգ Կիրակոսի | Քիլճեան, | ուրֆացի, | 1907-1966:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Օվսաննա Քիլճեան, | 1913-1983, ուրֆացի:

Հրատ. առաջին անգամ:



1187. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.


Աստ հանգչին | Աւետիս Պէնյեան, ծն(եաւ) Քիլիս, | 1882-ին, հանգ(եաւ) 24 յունվ(ար) | 1966-ին, | Երանիկ Պէնյեան, | ծն(եաւ) Քիլիս, 1900-ին, | հանգ(եաւ) 2 ապրիլ 1966-ին: | Աստուազ ողորմի | հոգոց նոցին:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Աստուազ բառի գ տառը սխալ է փորագրված, պետք է լիներ ծ:



1190. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.



Աստ հանգչի | Յովհաննէս | Լպճեան, | 1911-1966, | տէօրթեօյցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 4-րդ մասում (համար 3099): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

1191. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.



Աստ հանգչի | Խաչիկ | Տատուրեան, | կարմուրչցի, | ծն(եաւ) 1934, հ(ա)ն(գեաւ) 1966:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Կարմուրչը Կարմուզն է:

1188. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած



1192. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | ուրֆացի | Խանըմ Թեմեքեճեան | ծն(եալ) Սիսիբարեան, | 1870-1967:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Խանըմ Թեմեքեճեանը հիշվում է 1955 թ. հայեպարնակ ուրֆացիների ցանկում (Մահակեան Ա., նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 4):



1193. Տապանաքար. քառաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | տիկին Բրաբիօն | Սմնիկեան | ծնեալ Պոյաճեան, | ատանացի, | 1875-1967:

Հրատ. առաջին անգամ:



1194. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում և պատվանդանի վրա երեք լուսանկարներով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.



Աստ հանգչին | տիար Սարգիս | Հացագործեան {ի}, | ծն(եալ) Ուրֆա, 1875, | հ(ա)ն(գեալ) 1967,

| եւ տիկ(ին) Հացագործեան {ի}, | ծն(եալ) Ուրֆա 1891, | հ(ա)ն(գեալ) 1978:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Սարգիս Հացագործյանը հիշվում է 1955 թ. հայեպարնակ ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ ամուսնացած էր և ուներ 1 աղջիկ (Մահակեան Ա., նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 18):

1195. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, վրանաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Սարա | Ֆերմեճեան, | ծն(եալ) 1878, հ(ա)ն(գեալ) 1967, | բնիկ բալուցի:

Հրատ. առաջին անգամ:



1196. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 9 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | ամանոսցի | Սարգիս | Չոմպեճեան, | ծն(եալ) 1883, հ(ա)ն(գեալ) 1967:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Ասատուր | Չոմպեճեան, | 1926-1994:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ամանոսի շրջանը գտնվում է Կիլիկիայում՝ Ադանայի նահանգի Չերեկ-Բերեք գավառում:



1197. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին ագուցված թևավոր խաչը չի պահպանվել, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 7 տող.

Աստ հանգչին | Օհանեաններ՝ | Մարկոս, | ծն(եալ) 1887, հ(ա)ն(գեալ) 1967, | Հայկանուշ, | ծն(եալ) 1884, հ(ա)ն(գեալ) 1967: | Մասունցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. տեղահանված:



1198. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևմտահայաց նիստին ազուցված մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.


Աստ հանգչի | Եփրուհի Չագմագճեան, | ծնեալ 1885, Այնթապ, | հանգուցեալ 1967, Հալեպ:
Հրատ. առաջին անգամ:



1199. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.

Աստ հանգչին | տէր եւ տիկին | Նիշթերեաններ՝ | Գեորգ, | ծնեալ 1885, հ(ա)ն(գեալ) 1967, | Եղիսաբէթ, | ծնեալ 1894, հ(ա)ն(գեալ) 1968, | Եղիսաբէթ՝ ծնեալ Եօթնադրարեան: | Ուրֆացի:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. Գեորգ Նիշթերեյանը հիշվում է 1955 թ. հայեպարանակ ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ ամուսնացած էր և ուներ 1 տղա, 3 աղջիկ (**Մահակեան Ա.**, նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 4):
Եղիսաբէթ Նիշթերեյանը, թեևն դաշույնի հարված ստանալով, վիրավորվում է 1919 թ. փետրվարի 28-ին տեղի ունեցած Հալեպի ջարդի ժամանակ (ՀԱԴ, ֆ. 430, ց. 1, գ. 786, ք. 27):



1200. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին ազուցված թևավոր խաչը չի պահպանվել, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.



Աստ հանգչի | Յարութիւն | Գալայճեան, | քիլիսցի, | ծնեալ 1886, հ(ա)ն(գեալ) 1967:

Հրատ. առաջին անգամ:

1201. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին ազուցված թևավոր խաչը չի պահպանվել, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 7 տող.

Աստ հանգչի | Ղազար | Սիմոնեան, | ծնեալ 1887, հ(ա)ն(գեալ) 1967, | պիլիսցի, | Փարխանդ | գիւղէն:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Փարխանդ գյուղը գտնվում է Արևմտյան Հայաստանի Բաղեշի նահանգի համանուն գավառում՝ Բաղեշ քաղաքից 5 կմ հարավ: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Քիրեչաշ (Kireçtaş):



1202. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 7 տող.

Աստ հանգչի | Խաչիկ | Գգիրեան, | ծնեալ 1887, Սեբաստեյա, | հ(ա)ն(գեալ) 1967, | Հալեպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Խաչիկ Գգիրեյանը 1919 թ. մայիս-հունիս ամիսներին հիշվում է ջարդերից փրկված և Հալեպ հասած սեբաստացիների ցանկում («Կոչնակ», 1919, № 23, էջ 744):



1203. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Յակոբ | Գույումճեան, | ծն(եալ) 1887-1967, | քիլիսցի:
Հրատ. առաջին անգամ:



1204. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին ագուցված թևավոր խաչը չի պահպանվել, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 6 տող.

Աստ հանգչի | տօքթ(որ) Գարեգին | Մարտիրոս | Երեցեան, | ծն(եալ) 1888, հ(ա)ն(գեալ) 1967, | սա- սունցի:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. Գարեգին Երեցյանն ունի հրատարակված հոդված (տե՛ս Հայ ցեղի դիմադրական և ստեղծագործական ոյժը, «Մու- ռիսիայ տարեգոյց», Հալէպ, 1924, էջ 122):



1205. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սա- լիկին, փորագիր, 8 տող.




Աստ հանգչին | մայր եւ որդի | Օհանեաններ՝ | Իսկուհի, | ծն(եալ) 1888, հ(ա)ն(գեալ) 1967, | Գե- դաւմ, | ծ(նեալ) 1910, հ(ա)ն(գեալ) 1973: | Լճեցի:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

1206. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությու- նը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Պայծառ | Չարշաֆճեան, | ծն(աւ) 1890, Տիգրանակերտ, | մեռ(աւ) 1967, Հալէպ:
Հրատ. առաջին անգամ:



1207. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատ- վանդանի արևելահայաց միստին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Մեղրակ | Սագոյեան, | ծն(եալ) 1893, Մուշ, | հ(ա)ն(գեալ) 1967, Հալէպ:
Հրատ. առաջին անգամ:



1208. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ ստորին մասում լուսանկա- րով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց միստին, ներկագիր, 4 տող.



Աստ հանգչի | Տիգրան Շամիլեան, | ուրֆացի, | ծն(եալ) 1893, հ(ա)ն(գեալ) 1967:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Տիգրան Շամիլյանը հիշվում է 1955 թ. հայկապրնակ ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ ամուսնացած էր և ուներ 3 տղա, 2 աղջիկ: Ազգանունը նշվել է Շամիլեան ձևով (**Սահակեան Ա.**, նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 9):

1209. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Վահիտե | Տեմիրճեան, | ծ(նեալ) 1893, հ(անգեալ) 1967, | այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 780 համարը:



1210. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Մայրամ | Գալայճեան, | ծն(եալ) 1896, հ(ա)ն(գեալ) 1967, | մուշեցի:

Հրատ. առաջին անգամ:



1211. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.



Աստ հանգչի | Հայկազուն | Ջատիկեան, | սե-րաստացի, | ծն(եալ) 1901-1967:

Հրատ. առաջին անգամ:

1212. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Նասիպ | Տեմիրճեան, | ծն(եալ) 1902, հ(ա)ն(գեալ) 1967, | տիգրանակերտցի:

Հրատ. առաջին անգամ:



1213. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Արամ | Ճղըլեան, | ծն(եալ) 1902, հ(անգեալ) 1967: | Կիլիկիա:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:



1214. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.



Աստ հանգչի | Աղանի | Գասապեան, | ծն(եալ) 1902 Իզմիթ, | հ(ա)ն(գեալ) 1967:
Հրատ. առաջին անգամ:

1215. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից երկու սալիկներին, 10 տող.
Սալիկ Ա, ներկագիր.

Աստ հանգչի | Աղանի | Գեորգեան | ծն(եալ) Ալթունեան, | ծն(եալ) 1902, հ(ա)ն(գեալ) 1967, | սեբաստացի:

Սալիկ Բ, փորագիր.

Աստ հանգչի | Յովհաննես Գեորգեան, | 1887-1978, | պէլյանցի:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. Հովհաննես Գեորգյանը 1928 թ. Քրրոք-Խան գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցու թաղական խորհրդի ատենադպիրն էր («Տարեւ», 1929, էջ 384):

Պեյլանը Բեյլան քաղաքն է: Գտնվում է Կիլիկիայում՝ Ալեքսանդրետ քաղաքից 12 կմ հարավ: Թուրքերենով արտասանվում է Բելեն (Belen):

1216. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 6 տող.

Աստ հանգչի | Տոնապետ | Ազնավո(ւ)րեան, | ծն(եալ) 1903, Բերրի, | հ(ա)ն(գեալ) 1967, | Հալեպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Բերրի քաղաքը գտնվում է Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի Չարսանջակ գավառում՝ Խարբերդ քաղաքից 40 կմ հյուսիս-արևելք: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Աքրազար (Akrazar):



1217. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Գեորգ | Սիլվիոսեան, | 1903-1967, | այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է այնթապցի Գրիգոր Մյուլյուքճյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շելս-Մազաուդի առաքելական գերեզմանատան արձ. № 1158:



1218. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, վրանաձև, արևմտյան եզրին՝ ստորին մասում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ տապանաքարի արևելյան եզրին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Դալիթ | Քէքեճեան, | ծն(եալ) 1904, հ(ա)ն(գեալ) 1967, | Խոզդասցի:

Հրատ. առաջին անգամ:



1219. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 4 տող.

Աստ հանգչի | Երրճի Հատատատ | ծն(եալ) Տեորթիօլ, | ծն(եալ) 1905-1967:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. «Տեորթիօլ»-ը Չորք-Մարզպանն է:



1220. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, խաչի արևմտահայաց կողմում, կենտրոնում և ստորին մասում՝ լուսանկարներ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչին | տեր եւ տիկին | Գարօյեաններ՝ | Տիգրան, 1908-1967, | Խանըմ, 1913-1986: | Ակրղցի: Հրատ. առաջին անգամ:



1223. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, երկու լուսանկարներով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչին | տեր եւ տիկին | Քէշիշեաններ՝ | Սէրոբ, 1910-1967, | Նուրիցա, 1920-1981: | Ամանոսցի: Հրատ. առաջին անգամ:



1221. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ ստորին մասում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Լուսիա Մատո(յ)եան, | ծնած Սեվերակ | 1910, մեռ(ած) 1967 | մարտ 23:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. «Սեվերակ»-ը Սևերեկն է:



1224. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 6 տող.

Աստ հանգչի(ն) | Լեւոն | Պաղտասարեան, | ծն(եալ) 1911, հ(ա)ն(գեալ) 1967, | խարբերոցի: | Վրէժ, 1934-2005:

Հրատ. առաջին անգամ:



1222. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Սաթենիկ | Խարբուղեան, | ծն(եալ) 1910, հ(ա)ն(գեալ) 1967, | ատ(ը)եամանցի:

Հրատ. առաջին անգամ:



1225. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Սառա | Տերտերեան, | ծն(եալ) Աղն, | ծն(եալ) 1880-1968:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Աղն Աղին քաղաքն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Խարբերդ նահանգի Արաբկիր գավառում՝ Արաբկիր քաղաքից 24 կմ հարավ-արևելք՝ Եփրատ գետի աջ ափին: Թուրքերենով արտասանվում է Աղրն (Ağın):



1226. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, լուսանկարը և արձանագրությունը՝ արևմտյան եզրին ուղղահայաց կանգնեցված սալիկի արևելահայաց միասին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչին | Խաչատուր Գալայճեան, | 1920-1969, | Սրբուհի Գալայճեան, | 1880-1968: Բալուցի:
Հրատ. առաջին անգամ:



1227. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից երկու սալիկներին, 8 տող.

Սալիկ Ա, ներկագիր.

Աստ հանգչի | Սրբուհի | Հովհաննէսեան, | ծն(եալ) 1883-1968, | բալուցի:

Սալիկ Բ (մարմարե), փորագիր.

Աստ հանգչի | Խորէն Յովհաննէսեան, | 1912-1982:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 4-րդ մասում (համար 875): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:



1228. Տապանաքար. ուղղանկյունաձև, տեղահան, արևմտյան եզրին ագուցված թևավոր խաչը չի պահպանվել, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.



Աստ հանգչի | սասունցի | Նուարդ | Աճեմեան, | 1886-1968:

Հրատ. առաջին անգամ:

1229. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Յարութին | Ռուբենեան, | սերասուացի, | ծն(եալ) 1889, հ(ա)ն(գեալ) 1968:

Հրատ. առաջին անգամ:



1230. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչին | Սարգիս, | ծն(եալ) 1889, հ(ա)ն(գեալ) 1968, | Մարի: | Ամանոս:

Հրատ. առաջին անգամ:



1231. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 6 տող.

Աստ հանգչի | տիրամայր | Երանիկ | Քիրազեան, | ծն(եալ) 1892, հ(ա)ն(գեալ) 1968, | այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. Երանիկ Քիրազյանը Սր. Գևորգ եկեղեցու ավագներից տեր Գարեգին Քիրազյանի մայրն էր և ավագ սարկավագ Նազար Քիրազյանի կինը: Վերջինիս մասին տե՛ս ՇԵՆ-Մագուռի առաքելական գերեզմանատան արձ. № 574:

1232. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Բէրի Թաթօ, | ծն(եալ) 1893, հ(ա)ն(գեալ) 1968, | մուշէցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. իսկական անունն է Թադեոս Պետրոսյան: Հիշվում է Հայեպի ծերանոցի նվիրատուների ցանկում (տե՛ս ծերանոցի արձ. № 3): 1918-1920 թթ. ՀՀ-ում մասնակցել է անհնազանդ տարրերին (թաթար, քուրդ, բուրք) հնազանդեցնելու գործողություններին (Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան արքմ-ատլաս, հ. Բ (Գոյամարտ 1914-1925), Լոս Անճելըս, 2001, էջ 156, 158):



1233. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.



Աստ հանգչի | Պեաթրիս | Տ(եր)-Յարութիւնեան, | ծն(եալ) 1896, հ(ա)ն(գեալ) 1968, | քիլիսցի:

Հրատ. առաջին անգամ:

1234. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից երկու սալիկներին, ներկագիր, 11 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Մարգարիտ | Յակոբեան, | ի Թիֆլիզ | ծն(եալ), 1898-1968, | հ(ա)ն(գեալ) Հալէպ:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Մարգար | Յակոբեան, | ծն(եալ) 1890, հ(ա)ն(գեալ) 1973, | Թաւրիզ:

Հրատ. առաջին անգամ:



1235. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից երկու սալիկներին, 13 տող.

Սալիկ Ա, ներկագիր.

Աստ հանգչին | Սրբուհի | Մարգիսեան, | ծ(նեալ) Գասթեմուրի, | ծն(եալ) 1898, հ(ա)ն(գեալ) 1968, | Լուսիա | Գասպարեան, | ծն(եալ) Պուլանուղ, | ծն(եալ) 1901, հ(ա)ն(գեալ) 1984:

Սալիկ Բ (մարմարե), փորագիր.

Աստ հանգչի | Մերոբ | Տիգրանեան, | 1913-1989:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Գասթեմուրի քաղաքը գտնվում է Անատոլիայում:

Թուրքերենով արտասանվում է Կասթամունու (Kastamonu): Պուլանուղը Կոփ գյուղն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Բաղեշի նահանգի Բուլանըղ գավառում: Թուրքերենով արտասանվում է Բուլանըղ (Bulanik):



1236. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.



Աստ հանգչի {ն} |
Լեւոն Քասիս, | ծն(եալ)
1900, հ(ա)ն(գեալ) 1968:
| Հոր անուն(ը)՝ Բզբա-
լաի Քասիս, | մոր անու-
ն(ը)՝ Չագիիէ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 1321): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2008 թ.:

1237. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից երկու սալիկներին, ներկագիր, 10 տող.

Սալիկ Ա.


Աստ հանգչի | Մարտիրոս | Ունանեան, | 1900-
1968, | կիրիւնցի:

Սալիկ Բ.


Աստ հանգչի | Հռիփսիմէ | Ունանեան, | ծն(եալ)
1896, հ(ա)ն(գեալ) 1973, | կիրիւնցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է կյուրիների Հակոբ և Սիրուն Ունանյանների տապանաքարի մոտ: Վերջիններիս մասին տես Շեխ-Մազ-սուդի առաքելական գերեզմանատան արձ. № 963:



1238. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.



Աստ հանգչի | Սկրտիչ | Փիրանեան, | ծն(եալ)
1903, հ(ա)ն(գեալ) 1968, | կիրիւնցի:

Հրատ. առաջին անգամ:

1239. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Վարսէնիկ | Ասատուրեան՝ |
ծն(եալ) Ազգաշեան, | ծն(եալ) 1907, հ(ա)ն(գեալ)
1968, | Պուրսա-Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:



1240. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 7 տող.

Աստ հանգչին | Մարայ | մայր եւ որդի | Ասա-
տուր | Պատրիեան: | Ծն(եալ) 1910, հ(ա)ն(գեալ)
1968: | Խարբերացի:

Հրատ. առաջին անգամ:



1241. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով



թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից երկու սալիկներին, 9 տող.

Սալիկ Ա, ներկագիր.

Աստ հանգչի | ուրֆացի | Նվարդ | Շիդո(յ)եան, | ծն(եալ) 1910, հ(ա)ն(գեալ) 1968:

Սալիկ Բ (մարմարե), փորագիր.

Աստ հանգչի | Գ-էորգ | Շիդո(յ)եան, | 1921-1989: Հրատ. առաջին անգամ:

1242. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից երկու սալիկներին, 9 տող.

Սալիկ Ա, ներկագիր.

Աստ հանգչի | Սարգիս | Գալուստ | Նալպանտեան, | ծն(եալ) 1924, հ(ա)ն(գեալ) 1968, | տիգրանակերտցի:

Սալիկ Բ (մարմարե), փորագիր.

Գալուստ | Նալպանտեան, | 1897-1980:

Հրատ. առաջին անգամ:



1243. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Կիրակոս | Մխիթարեան, | ուրֆացի, | ծն(եալ) 1878, հ(ա)ն(գեալ) 1969:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. կրում է 916 համարը:

Կիրակոս Մխիթարյանը հիշվում է 1955 թ. հալեպաբնակ ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ ամուսնացած էր և ուներ 1 աղջիկ (Մահակեան Ա., նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 6):

1244. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 10 տող.



Սալիկ Ա.

Աստ հանգչի | սասունցի | Սկրտիչ | Պաղտո(յ)եան, | ծն(ալ) 1887, | մեռ(ալ) 1969:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Պարգե | Պաղտո(յ)եան, | 1922-1988:

Հրատ. առաջին անգամ:

1245. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Գ-էորգ | Թաթարեան, | ծն(եալ) 1890, հ(ա)ն(գեալ) 1969, | ուրֆացի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Գ-էորգ Թաթարյանը 1918 թ. Հալեպում գրադվում էր գորգավաճառությամբ (Պալապանեան Մ., նշվ. աշխ., էջ 125, 127): Հիշվում է 1955 թ. հալեպաբնակ ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ ամուսնացած էր և ուներ 1 տղա, 1 աղջիկ (Մահակեան Ա., նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 4):



1246. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.



Աստ հանգչի | Արբահան | Եղեայեան, | ծն(եալ)
1890, հ(ա)ն(գեալ) 1969, | սասունցի:
Հրատ. առաջին անգամ:

1247. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝
թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Գեորգ | Մխիթարեան, | ծն(եալ)
1891, հ(ա)ն(գեալ) 1969, | ուրֆացի:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. Գեորգ Մխիթարյանը 1928 թ. ընտրվում է Հալեպում գործող Ուրֆայի երիտասարդաց միության վարչության անդամ (Մահակեան Ա., նշվ. աշխ., էջ 1260): Հիշվում է 1955 թ. հալեպաբնակ ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ ամուսնացած էր և ուներ 4 տղա, 2 աղջիկ (Մահակեան Ա., նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 10):



1248. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա,
ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած
լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներ-
կագիր, 7 տող.



Հոս կը հանգչի |
տիար Միսաք Լուսիեան,
ակնցի, ծն(եալ) 1896 | և
ըսպանուած է | 1969 յու-
լիս 19 | ոճրագործ ձեռ-
քերու կողմէ:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում էր 4-րդ
մասում (համար 3125): Այժմ
գոյություն չունի: Տեղահանվել
է 2007 թ.:

1249. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա,
ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած
լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից
երկու սալիկներին, 8 տող.



Սալիկ Ա, ներկագիր.
Աստ հանգչի | Սկրտիչ | Նազարեան, | ծն(եալ)
1896, հ(ա)ն(գեալ) 1969, | կարմուճցի:

Սալիկ Բ (մարմարե), փորագիր.
Աստ հանգչի | Լիյա Նազարեան, | 1909-1985:
Հրատ. առաջին անգամ:

1250. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա,
ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած
լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, փո-
րագիր, 5 տող.

Աստ հանգչի | Եղսայ | Խաչատուրեան, | ծն(եալ)
1900, հ(ա)ն(գեալ) 1969, | սեւերակցի:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում է սևերեկցի Սարգիս և Վարդուհի Խաչա-
տուրյանների տապանաքարին կից: Նրանց մասին տես Շելի-
Սագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 654:



1251. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա,
ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած
լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 6 տող.

Աստ հանգչի | Երանիկ | Գաբրիելեան, | ծն(եալ)
1902, Գ-իլիս, | հ(ա)ն(գեալ) 1969, | սասունցի:

Հրատ. առաջին անգամ:



1252. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա,
ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած
լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներ-
կագիր, 5 տող.

Աստ հանգչի | Աւետիս | Չարլգեան, | ծն(եալ)
1902, հ(ա)ն(գեալ) 1969, | պէսնիցի:

Հրատ. առաջին անգամ:



1253. Տապանաքար. ուղղանկյունաձև, տեղահան, արևմտյան եզրին ագուցված թևավոր խաչը չի պահպանվել, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Եղսաբեթ | Հալեպլիեան, | ծն(եալ) 1903, հ(ա)ն(գեալ) 1969, | կիրինցի:

Հրատ. *առաջին անգամ:*



1254. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Պետրոս | Քէշիշօղլեան, | ծն(եալ) 1903, Մեվերեկ, | հ(ա)ն(գեալ) 1969, Հալեպ:

Հրատ. *առաջին անգամ:*



1255. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչին | տեր եւ տիկին | Թովմասեաններ՝ | յաճի Յակոբ, 1903-1969, | Ֆերիտե՝ ծն(եալ) Բիսենճի, | 1910-1978: | Տիգրանակերտցի:

Հրատ. *առաջին անգամ:*



1256. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 7 տող.

Աստ հանգչի | Երանոս | Չաքարի | Պետոյեան, | ծն(եալ) Բազմաշեն, | ծն(եալ) 1904, հ(ա)ն(գեալ) 1969, | Հալեպ:

Հրատ. *առաջին անգամ:*

Ծանոթ. Բազմաշեն գյուղը գտնվում է Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի համանուն գավառում՝ Խարբերդ քաղաքից 12 կմ հարավ-արևմուտք: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Սարջուքուք (Sarıçubuk):



1257. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարի արևմտահայաց կողին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Ազնի | Գորթոշեան, | խարբերդցի, | ծն(եալ) 1904, հ(ա)ն(գեալ) 1969:

Հրատ. *առաջին անգամ:*

Ծանոթ. կրում է 1143 համարը:

Ազնիվի ամուսնու՝ Դավիթ Քորթոշյանի և զավակների մասին տե՛ս Շեն-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 90:



1258. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչին | տեր եւ տիկին | Թովմասեաններ՝ | յաճի Յակոբ, 1903-1969, | Ֆերիտե՝ ծն(եալ) Բիսենճի, | 1910-1978: | Տիգրանակերտցի:

Հրատ. *առաջին անգամ:*


1258. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Մինաս | Աշճրեան, | ծն(եալ) 1905, հ(ա)ն(գեալ) 1969, | քիլիսցի:
Հրատ. առաջին անգամ:



1259. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգչի(ն) | տիկին Եղեր | Գամարեան, | ծն(եալ) 1905, հ(ա)ն(գեալ) 1969, | եղեսեացի, | Խորեն, 1880-1979, | Յարութիւն, | Խանըմ, 1979:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. կրում է 123 համարը:



1260. Տապանաքար. ուղղանկյունաձև, տեղահան, արևմտյան եզրին ազուցված թևավոր խաչը չի պահպանվել, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Սարգիս | Պերպերեան, | 1906-1969, | առիեսամանցի:
Հրատ. առաջին անգամ:



1261. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Պողոս | Թեքեան, | ծն(աւ) 1906, Այնթապ, | մեռ(աւ) 1969, Հալեպ:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. կրում է 3443 համարը:



1262. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում հանգուցյալի պատկերով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 8 տող.

Սալիկ Ա.
Աստ հանգչի | Երուանդ Չափարեան, | 1907-1969, | քիլիսցի:
Սալիկ Բ.
Աստ հանգչի | Երուանդ | Չափարեան, | 1941-1997:
Հրատ. առաջին անգամ:



1263. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 6 տող.



Աստ հանգչի | Ատել Փայասլեան՝ | ծն(եալ) Գոյունճեան, | Մարաշ, | ծն(եալ) 1908, հ(ա)ն(գեալ) 1969, | Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է մարաշցի Վարդանուշ Փայասլեանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեն-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 913:

1264. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Մաքրուհի | Քաչանեան, | ծն(եալ) 1910, հ(ա)ն(գեալ) 1969, | խարբերոյցի:

Հրատ. առաջին անգամ:



1265. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 4 տող հայերեն, որից վեր՝ ներկագիր, նույն բովանդակությամբ 3 տող արաբերեն.

Գրիգոր | Պարտազճեան, | ծն(եալ) 1910, հ(ա)ն(գեալ) 1969, | այնթապցի:

Արաբերեն.

المرحوم | كركور بارد كجيان | ولد ١٩١٠ توفي ١٩٦٩
Հրատ. առաջին անգամ:



1266. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, խաչի ստորին մասում ամրացված է հանգուցյալի պատկերը, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Յովհաննէս | Առագելեան, | ծն(եալ) 1915, հ(ա)ն(գեալ) 1969, | այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:



1267. Արձանագրություն. գերեզմանոցում գտնվող Սբ. Հռիփսիմե մատուռի մուտքից վեր ամրացված մարմարե սալիկին՝ փորագիր, 7 տող: Մատուռի տեղադրությունն է՝ N 36° 13' 33.36", E 37° 09' 15.36".



Կառուցալ մատուռս | քարերարութեամբ | Գարեգին աղա Եղիեա(յ)եանի | ի յիշատակ հօր իւրոյ՝ Սկրտիչի | և եղբարցն՝ Սարգիսի և Յովհաննու, | ի թուին Քրիստոսի 1970, | ի թուին հայոց ՌՆԺԺ (1970):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. մատուռի հիմնարկերը կատարվել է 1962 թ. դեկտեմբերի 30-ին (**Տեմբուրեան Վ.**, նշվ. աշխ., էջ 395): Նորոգվել է 1980 և 1988-1989 թթ. (www.periotem.com):

Գարեգին Եղիեայանը 1964 թ. Բերիոն թեմի քաղաքական ժողովի անդամ էր («Հասկ», 1964, № 6-7, էջ 210):



Սբ. Հռիփսիմե մատուռ (լուս.՝ 2006 թ.)

1268. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչին | այնթապցի | տեր եւ տիկին | Յարութիւն | Պէրէճիկիեան(ներ): | Ծն(եալ) 1884-1970:
Հրատ. առաջին անգամ:




1269. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչին | հայր եւ որդի | Տօնոյեաններ՝ Ֆիլիպ, 1885-1970, | Թադէոս, 1929-1982: | Սասունցի:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. կրում է 571 համարը:



1270. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչին | Թրինկեաններ՝ | Յովհաննէս, | Ծն(եալ) Քիլիս, 1887-1970, | Ազնիւ, | Ծն(եալ) Այնթապ, 1894-1986, | Գրիգոր, 1914-2001:
Հրատ. առաջին անգամ:



1271. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին ուղղահայաց կանգնեցված սալիկին գետեղված է հանգուցյալի պատկերը, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին և հանգուցյալի պատկերին, փորագիր, 16 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչին | Ներսէս Մերոխանեան, | Ծն(աւ) 1888, Այնթապ, ս(ե)ռ(աւ) 1970, | Լիտիա Մերոխանեան՝ Ծն(եալ) Հատիտեան, | Ծն(աւ) 1909, Այնթապ, ս(ե)ռ(աւ) 1989:

Սալիկ Բ.

Յարութիւն | Մերոխանեան, | 1934-1995:

Հանգուցյալի պատկերին.

Ներսէս | Մերոխանեան, 1968-1990: | Ու փշրեցաւ այն հայելին ոսկեծիր, | որուն եթերային խորութեանը մէջ | երազներս, յոյսերս, սէրերս | եւ կանքս կարմիր | տարիներով մտածմունքիս մէջ | ցոլացին:

Հրատ. առաջին անգամ:



1272. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Յովհաննէս | Պարտազճեան, | Ծնեալ Այնթապ, | 1889-1970, Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է այնթապցի Երանիկ, Գրիգոր և Կարապետ Պարտազճյանների տապանաքարերին կից: Նրանց մասին տես Եեխ-Մագստոյի առաքելական գերեզմանատան արձ. № 452, 973, 1186:



1273. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.



Աստ հանգչի | ամանուցի | Թրուանդա | Ակիշեան, | ծն(եալ) 1889, հ(ա)ն(գեալ) 1970:

Հրատ. առաջին անգամ: Ծանոթ. կրում էր 1296 համարը: Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

1274. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտահայաց կողին՝ լուսանկար, արձանագրությունը՝ տապանաքարի նույն կողին ամրացված միմյանց կից մարմարե երկու սալիկների, փորագիր, 7 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Մինաս Մ. Տեմիրճեան, | ծնաւ Զէյթուն, | 1892-1970:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Հայկուհի Տեմիրճեան, | ծն(եալ) 1900-1973:

Հրատ. առաջին անգամ: Ծանոթ. կրում է 49 համարը:



1275. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգչին | տէր եւ տիկին | Խօշապճեաններ՝ | Պօղոս, | 1892-1970, | Աստղիկ, | 1908-1993: | Տիգրանակերտցի:

Հրատ. առաջին անգամ:



1276. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.



Աստ հանգչի | Ապուճան | Դադարեան, | ծն(եալ) 1895, հ(ա)ն(գեալ) 1970, | քիլիսցի:

Հրատ. առաջին անգամ:

1277. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկների, փորագիր, 12 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչին | տէր եւ տիկին | Կիրիմլեաններ՝ | Կարապետ, 1895-1970, | Խաբուն, 1910-1981: | Այնթապցի:

Սալիկ Բ.

Աստ հանգչին | տէր եւ տիկին | Գուզուեաններ՝ | Գեորգ, 1921-1998, | Սարի՝ ծն(եալ) Կիրիմլեան, | 1926-1994:

Հրատ. առաջին անգամ:



1278. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Մարիամ | Չաղլասեան, | ծն(եալ) 1896, հ(ա)ն(գեալ) 1970, | քիլիսցի:

Հրատ. առաջին անգամ:



1279. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 8 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Սողոմոն Մելիքեան, | 1899-1970, | աշտոցի:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Պետրոս | Թուլուդեան, | 1946-2005: Հրատ. առաջին անգամ:



1282. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 7 տող.

Հանգչի մարմին | Եղիա | Յովակիմեանի, | Խարբերդի Հողէ | գիւղէն, | ծն(եալ) 1905, հ(ա)ն(գեալ) 1970, | Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է հողեցի Խանրմիկ Հովակիմյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 836:



1280. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Տիգրան | Պարտազճեան, | ծն(եալ) Այնթապ, | 1901-1970:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 3420 համարը:



1283. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, խաչի պատվանդանի արևելահայաց նիստին ամրացված են լուսանկար և սալիկ (արձանագրությունը՝ սալիկին, 5 տող, ներկագիր).

Աստ հանգչին | Եարալեաններ՝ | Արամ, ծ(նեալ) 1906, հ(անգեալ) 1970, | Անդրանիկ, 1937-1974: | Սւլտեացի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. «Սւլտեա»-ն Սվեդիա քաղաքն է: Գտնվում է Կիլիկիայում: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Սամանդաղը (Samandağ):



1281. Տապանաքար. կիսով չափ հողածածկ, արևմտյան եզրին՝ հողից դուրս, կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի մոտ՝ հողի երեսին գտնվող սալիկին, ներկագիր, 6 տող.

Աստ հանգչին | Թարսիհեաններ՝ | Սկրաիչ, | ծն(եալ) 1905, հ(ա)ն(գեալ) 1970, | փոքրիկն՝ Կայծակ: | Էրզրումցի:

Հրատ. առաջին անգամ:



1284. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից երկու սալիկներին, փորագիր, 13 տող.



Սալիկ Ա.

Աստ հանգչի(ն) | Ծորճ Թորթոր, | ծն(եալ) Մեւէ-րէկ, | 1907-1970, | Ծաղիկ | Խաչատուրեան, | ծն(եալ) Ատանա, | 1912-1976:



Սալիկ Բ (մարմարե).

Աստ հանգչի | Ար-րահամ | Թիփիալէ-կեան, | 1908-1978, | սեւերակցի:

Հրատ. առաջին անգամ:



վարչության անդամ էր (Ապրդաճեան Ա., Պատմութիւն Մալա-բիոյ հայոց, էջ 1520):

1285. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Թագուհի | Դեմճեմեան, | ծն(եալ) 1908, հ(ա)ն(գեալ) 1970, կիրիւնցի:

Հրատ. առաջին անգամ:



1287. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Խարբե(ր)թցի | Անդրանիկ | Գա-զանճեան, | ծն(եալ) 1909, | հան(գեալ) 1970:

Հրատ. առաջին անգամ:



1286. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, վրանաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ տապանաքարի արևելյան եզրին ա-գուցված մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Գրիգոր | Ջաղացպանեաններ, | ծն(եալ) 1908, հ(ա)ն(գեալ) 1970, | մալաթիացի, | Վերոնիթայ՝ ծն(եալ) Վարդանեան, 1910-1982:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Գրիգոր Ջաղացպանյանը 1944 թ. վերակազմված Մալաթիայի կրթասիրաց ընկերության Հալեայի մասնաճյուղի



Մալաթիայի կրթասիրաց ընկերության Հալեայի մասնաճյուղի արական բաժինը (երկրորդ շարքում ձախից երրորդը Գրիգոր Ջաղաց-պանյանն է):

1288. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 9 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Ստեփան | Պոյաճեան, | ծն(եալ) 1912, հ(ա)ն(գեալ) 1970, | ամասիացի:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Ջարուհի | Պոյաճեան, | 1922-1996:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ստեփան և Ջարուհի Պոյաճյաններն ունեցել են չորս որդի՝ Քերոբ, Մովսես, Հակոբ և Համբարձում, որոնք 2006 թ. ծնողների հիշատակին Հալեայի ծերանոցում սենյակ են նորո-գում և կահավորում (տե՛ս ծերանոցի արձ. № 14):



1289. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևելյան եզրի մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի(ն) | Աշոտեաններ՝ | Սարգիս, 1914-1970, | Աշոտ, 1969-1986, | արդնցի, | Հայկազ, 1926-2003:

Հրատ. *առաջին անգամ:*

Ծանոթ. գտնվում է արդնցի Հոռնիկ, Մանուկ, Խաչատուր, Գրիգոր, Վերժին Աշոտյանների տապանաքարերին կից: Վերջիններիս մասին տես Շելս-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 299, 1136:



1290. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Ավագ | Մեխերեճեան, | ծն(եալ) 1916, հ(ա)ն(գեալ) 1970, | ատանացի:

Հրատ. *առաջին անգամ:*



1291. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, հանգուցյալի լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչին | հայր եւ որդի | Յակոբեաններ՝ | Սամուէլ, 1917-1970, | Մովսէս, 1950-1970: | Երնէկ նրան, որ իր ազգի | ազատութեան կը զոհուի:

Հրատ. *առաջին անգամ:*



1292. Երեք ուղղանկյունաձև տապանաքարեր. միաստիճան ընդհանուր պատվանդանի վրա, արևմտյան եզրերին՝ թևավոր խաչեր, արձանագրությունները՝ խաչերի պատվանդանների արևմտահայաց նիստերին ամրացված լուսանկարներով մարմարե սալիկներին, փորագիր, 12 տող.

1434. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.



Աստ հանգչի | Խաթուն Մ. | Թովմասեան, | 1907-1976, | ուրֆացի:
 Հրատ. առաջին անգամ:

1435. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին ագուցված թևավոր խաչը չի պահպանվել, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Փայլածուն | Պերեճիբլեան, | 1907-1976, | ուրֆացի:
 Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Փայլածուն Պերեճիբլյանը հիշվում է 1955 թ. հալեպյան ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ այրի էր և ուներ 1 տղա (**Մահակեան Ա.**, նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 9):



1436. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչին | տեր եւ տիկին | Խանժողեաններ՝ | Յակոբ, 1907-1976, | Մարիամ, 1914-1976: | Ուրֆացի:
 Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. Հակոբ Խանժողյանը հիշվում է 1955 թ. հալեպյան ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ ամուսնացած էր և ուներ 2 տղա, 2 աղջիկ (**Մահակեան Ա.**, նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 8):

1437. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից երկու սալիկների, 9 տող.

Սալիկ Ա. Երեկագիր.
 Աստ հանգչի | Վարդուհի | Տէյիրմենճեան, | ծն(եալ) 1909, հ(ա)ն(գեալ) 1976, | այնթապցի:



Սալիկ Բ (մարմարե), փորագիր.

Աստ հանգչի | Յարութիւն | Տէլիբմէնճեան, | 1920-1989:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 827 համարը:

1438. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Ներսէս Գաթարոյեան, | ծն(եալ) 1910, հ(ա)ն(գեալ) 1976, | ուրֆացի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ներսէս Գաթարոյեանը հիշվում է 1955 թ. հայեպարհակ ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ ամուսնացած էր և ուներ 2 տղա, 2 աղջիկ (**Մահակեան Ա.**, մշվ. աշխ., հավելվածը (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 17):



1439. Տապանաքար. ուղղանկյունաձև, տեղահան, արևմտյան եզրին ագուցված թևավոր խաչը չի պահպանվել, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Պօղոս Եարալեան, | ծն(եալ) Մուլտյա, 1911, հ(ա)ն(գեալ) 1976, | մուսալեռցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. «Մուլտյա»-ն Սվեդիան է:



1440. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | կի(ր)իւնցի | Արիստակէս Մատոյեան, | ծն(եալ) 1914, հ(ա)ն(գեալ) 1976 հոկ(տեմբեր) 23:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 203 համարը:



1441. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին ագուցված թևավոր խաչը չի պահպանվել, խաչի պատվանդանի վրա՝ անհետացած լուսանկար, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Անդրանիկ Մեփեթճեան, | ծնեալ Տրթթօլ, | 1915-1976:

Հրատ. առաջին անգամ:



1442. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգչին | մայր եւ որդի | Համամճեաններ՝ | Սրբոտի, 1880-1977, | Սիմոն, 1918-1987: | Այնթապցի: Լուսին Համամճեան, | 1922-1995:



Հրատ. առաջին անգամ:



1443. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Մերիյէ Արսլանեան, | ծնեալ Այնթապ, | 1890-1977:

Հրատ. առաջին անգամ:



Սալիկ Ա.

Աստ հանգչին | տէր եւ տիկին | Պարտազճեաններ՝ | Յակոբ, 1897-1977, | Մանուշակ, 1899-1977: | Այնթապցի: | Մարի Պարտազճեան, | 1934-1991:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Յակոբ | Պարտազճեան, | 1924-1992:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 320 համարը:

1444. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Միքայէլ | Քէեեայեան, | ծն(եալ) Ուրֆա, 1895, | հ(ա)ն(գեալ) 1977, Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:



1447. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Յակոբ Օսման Փայասեան, | ծն(եալ) 1901, հ(ա)ն(գեալ) 1977, | այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:



1445. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, երկու լուսանկարներով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչին | տէր եւ տիկին | Չեմալերճեաններ՝ | Յովհաննէս, | 1895-1977, | Եփրոս, 1905-1987: | Այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 809 համարը:



1448. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 11 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչին | Յակոբ Պապիկեան, | 1900-1978, | պոլսեցի, | Պետրոս Գրիգորեան, | 1904-1977, | եօգկատցի:



1446. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից երկու սալիկներին, փորագիր, 12 տող.

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Սիրանոյշ | Պզտիքեան, | 1910-1989:

Հրատ. առաջին անգամ:

1449. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | գլիլիսի | Վերգին Մարտո(յ)եան, | ծն(եալ) 1905, հ(ա)ն(գեալ) 1977:

Հրատ. առաջին անգամ:



1450. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, երկու լուսանկարներով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի(ն) | Յակոբ Թորոսեան, | ծն(եալ) Պերեճիկ, 1905, | հ(ա)ն(գեալ) Հալեպ, 1977, | Ճեմիլե, | 1910-1995:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Հակոբ Թորոսյանը 1928 թ. Ջարարլուսի ազգ. վարժարանի հոգաբարձության անդամ էր («Տաթև», 1929, էջ 385):



1451. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.



Աստ հանգչին | Մ. Քահելեաններ՝ | Մարիամ, ծն(եալ) 1908, հ(ա)ն(գեալ) 1977, | Մ. Քահելե: | Պուրասցի:

Հրատ. առաջին անգամ:

1452. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, երեք լուսանկարներով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 10 տող.

Աստ հանգչին | Խանըմ Մելքոնեան, | 1885-1979, | կարմուճցի, | Արաքսի Մելքոնեան, | 1910-1977 | ուրֆացի, | Արմեն Մելքոնեան, | 1906-1990, | կարմուճցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Խանում և Արմեն Մելքոնյանները հիշվում են 1955 թ. Թեյ-Աբյատում բնակվող ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ Խանումն այրի էր, իսկ Արմենն ամուսնացած էր և ուներ 4 տղա, 1 աղջիկ (Մանակեան Ա., նշվ. աշխ., հավելվածը (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 30):



1453. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի(ն) | Գաբրիել Պետիրեան, | 1910-1977, | քիլիսցի, | Ազնի Պետիրեան, | 1920-1990:

Հրատ. առաջին անգամ:



1454. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Նազար Չարչեան, | ծն(եալ) 1912, հ(ա)ն(գեալ) 1977 փետրուար 21, | այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:



1455. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 9 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | մալաթեացի | Նազելի Պետրոսեան, | ծն(եալ) 1913, հ(ա)ն(գեալ) 1977:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Մարտիրոս | Պետրոսեան, | ծն(եալ) Վան, | 1900-1987:


Հրատ. առաջին անգամ:



1456. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Ներսէս Թօփճեան, | 1914-1977, | այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:



1457. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Աստղիկ Գալայճեան, | 1915-1977, | տիգրանակերցցի:

Հրատ. առաջին անգամ:



1458. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց միստին ամրացված միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 12 տող.

Սալիկ Ա.

Գամբարան | Տէր-Նէրսէսեան | ընտանիքի: | Եղիաբէթ | Տէր-Նէրսէսեան, | ծն(եալ) Կարին, 1915, հ(ա)ն(գեալ) 1977:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Գրիգոր | Տէր-Նէրսէսեան, | 1907-1978: | Այր բարի եւ աշխատասէր, | հայր ամենեւնի:

Հրատ. առաջին անգամ:



1459. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | գէթունցի | Աւետիս Պոյամեան, | ծն(եալ) 1924, հ(ա)ն(գեալ) 1977:

Հրատ. առաջին անգամ:

Ճանոթ. Ավետիս Պոյամեանի մեծ հոր՝ Ավետիսի մասին տե՛ս Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 106:



1460. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ արևել-

յան և արևմտյան եզրերին ամրացված մարմարե երկու սալիկներին, փորագիր, 10 տող.

Սալիկ Ա (արևելյան եզրին).

Խարուն | Գարասարգիսեան, | ծն(եալ) 1911, հ(ա)ն(գեալ) 1984, | սանճակցի:

Սալիկ Բ (արևմտյան եզրին).

Աստ հանգչին | սանճագցի | Մանուկ եւ Վիքորդ | Մինասեաններ | եւ որդին՝ Պօղոս, | ծն(եալ) 1933, 1977:

Հրատ. *ստաջին անգամ*:



Ծանոթ. կրում է 124 համարը: Մանճագն Ալեքսանդրեանի գավառն է:



1463. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | խարբերոցի | Մարտիրոս | Դէմեքեան, | ծն(եալ) 1898, հ(ա)ն(գեալ) 1978:

Հրատ. *ստաջին անգամ*:



1464. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Խանրմ Հալլաճեան, | 1900-1978, | ուրֆացի:

Հրատ. *ստաջին անգամ*:



1461. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե և արևմտյան եզրին ագուցված սալիկներին, փորագիր, 9 տող.


Արևմտյան եզրին ագուցված սալիկին.

Աստ հանգչի | Յովհաննէս | Ղուհարեան, | ծն(եալ) Աղըն, Արաբկիր, | 1886-1978:

Մարմարե սալիկին.

Աստ հանգչի | Աստղիկ | Ղուհարեան, | 1932-2000:


Հրատ. *ստաջին անգամ*:



1465. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, խաչի պատվանդանին՝ երկու լուսանկարներ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչին | Յարութիւն Սկրտիչեան, | սասունցի, | ծն(եալ) Սասուն, 1901, հ(ա)ն(գեալ) 1978, | Պայծառ Գուշերեան, | 1898-1983:


Հրատ. *ստաջին անգամ*:



1462. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Յովսէփ | Գուլյումճեան, | ծն(եալ) Մարաշ, 1897, | հ(ա)ն(գեալ) Հալէպ, 1978:

Հրատ. *ստաջին անգամ*:



1466. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.



Աստ հանգչի | Մովսես Իսկենեան, | ծն(եալ) 1902-1978, | այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:

1467. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչին | տէր եւ տիկին | Նիկողոսեաններ՝ | Կիրակոս, 1903-1978, | Արաքսի, 1910-1978: | Խարբերոցի:

Հրատ. առաջին անգամ:



1468. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ տապանաքարի արևմտահայաց կողմին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.



Աստ հանգչին | տէր եւ տիկին | Քորթոշեաններ՝ | Մեսրոպ, 1898-1982, | Նուարդ, 1903-1978: | Խարբերոցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 435 համարը:

Քորթոշյան ամուսինները ծնվել են Խարբերոցի Եղեգի գյուղում: Մեսրոպ Քորթոշյանն ավարտել է Խարբերոցի «Եփրատ» քոլեջը: 1918 թ. ամուսնանում է Նվարդի հետ, որի օրիորդական ազգանունը, ըստ որդու՝ Հարությունի տեղեկության, Մուրատյան էր: 1922 թ. թուրքական իշխանությունների հրամանով տեղահանվում են Հալեպ: Ունենում են 5 զավակ՝ Մաքրուհի, Ալեքսան,

Սրբուհի, Բսկուհի և Հարություն: Մաքրուհին ամուսնանում է Ասատուր Հայրաճյանի հետ: Նվարդի հոր և քրոջ մասին տե՛ս Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 219: Մեսրոպի հորեղբոր տղայի՝ Դավթի մասին տե՛ս Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 90:



Ընտանեկան ավետարանում Ս. Քորթոշյանի ծննդյան գրությունը և որպես ավարտական նվեր՝ «Եփրատ» քոլեջի ստացած ոսկյա գրիչը

1469. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից երկու սալիկներին, փորագիր, 8 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Մնակ Գասապեան, | ծն(եալ) Պրուսա, 1904, հ(ա)ն(գեալ) 1978:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Ատելին | Գասապեան՝ | ծն(եալ) Շամանեան, | Պրուսա, 1909-1987:

Հրատ. առաջին անգամ:



1470. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, երեք լուսանկարներով թևավոր խաչ, արձանագրությունը՝ տապանաքարի երեսին, արևելյան եզրին և խաչի պատվանդանի արևելահայաց միաստիճան ամրացված մարմարե սալիկներին, փորագիր, 11 տող.



Տապանաքարի երեսին.

Աստ հանգչի | Իսկէնտէր | Լէփէճեան, | ծն(եալ) Տէօրթօլ, | 1904-1978:

Խաչի պատվանդանի արևելահայաց նիստին.

Յովհաննէս | Լէփէճեան, | 1932-1989:

Տապանաքարի արևելահայաց եզրին.

Աստ հանգչի | Էլիզ Լէփէճեան, | 1910-1990:

Հրատ. առաջին անգամ:

1471. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգչին | տէր եւ տիկին | Գուգուեաններ՝ | Յովհաննէս, | 1907-1978, | Լուսին, | 1907-1993: | Զիլացի:

Հրատ. առաջին անգամ:



1472. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Պողոս Պալատունի | Սերայտարեան, | 1908-1978: | Մարաշ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Պողոս Սերայտարյանը եղել է «Նոր Մարաշ» պարբերականի խմբագրական կազմում (Գալուստեան Գ., նշվ. աշխ., էջ 977):



1473. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի(ն) | Թովմասեաններ՝ | Պողոս, | 1908-1978, | թոռնիկը Էլիզապէր, | 1965-1976: | Տիգրանակերտցի:

Հրատ. առաջին անգամ:



1474. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Համբարցում | Քիչիքեան, | ծն(եալ) 1915, հ(ա)ն(գեալ) 1978, | ճեպէլմուսացի:

Հրատ. առաջին անգամ:



1475. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, հանգուցայի պատկերով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Աբրահամ | Տէկիրմէնճեան, | ծն(աւ) 1932, Ուռֆա, | մահ(ացաւ) 1978, Հաէէպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 301 համարը:

Հաէէպ բառի առաջին է տառը սխալ է փորագրված, պետք է լիներ լ:



1476. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 9 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Կարապետ Մարտիրոսեան, | ծնեալ Խարբերդ, | ծն(եալ) 1891, հ(ա)ն(գեալ) 1979 | դեկ(տեմբեր) 12-13:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Ալբուն | Ալեքսանեան, | 1923-2006:

Հրատ. առաջին անգամ:



1477. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Թորոս Դաւիթեան, | 1904-1979, | մալաթիացի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 264 համարը:

Թորոս Դավիթյանը 1944 թ. եղել է վերակազմված Մալաթիայի կրթասիրաց ընկերության Հալեպի մասնաճյուղի վարչության անդամ (Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Մալաթիոյ հայոց, էջ 1520):



1478. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, տապանաքարի երեսին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.



Աստ հանգչի | Կարապետ | Յովակիմեան, | 1905-1979, | ուրֆացի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է եղեսիացի Արմեն Հովակիմյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տե՛ս Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 918:

1479. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | տիպար հայր | պ(ա)ր(ո)ն Սարգիս | Մխճեան, | ծն(եալ) Այնթապ, 1905, | հ(ա)ն(գեալ) 1979:

Հրատ. առաջին անգամ:



1480. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Լեւոն Պալմանուկեան, | ծնած է 1906, Այնթապ, | հ(ա)ն(գաձ) է 1979 սեպտեմբեր 3-ին:

Հրատ. առաջին անգամ:



1481. Տապանաքար. փշրված, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Սերոբ Սարգիսեան, | 1906-1979, | սասունցի:

Հրատ. առաջին անգամ:



1482. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, տապանաքարի արևելահայաց կողմին՝ լուսանկար, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 14 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | հաճի Անդրանիկ | Արաքաթլեան, | ծն(եալ) 1912, Քիլիս, | հ(ա)ն(գեալ) 1979, Հալէպ, յուն(վար) 11: | Չեռքդ ինչ որ գտնէ ընելու, | բոլոր ուժովդ ըրէ, | քանզի այն քու երթալու | գերեզմանիդ մէջ գործ, | խորհուրդ, | գիտութիւն ու իմաստութիւն չկայ:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Տիգրան Արապաթլեան, | ծն(եալ) 1914, Քիլիս, | հ(ա)ն(գեալ) 1979, Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է քիլիսցի Ֆերիդե, Լուսֆիկ և Ծաղիկ Արապաթյանների տապանաքարերին կից: Վերջիններիս մասին տես Շեն-Մագսուտի առաքելական գերեզմանատան արձ. № 719, 819, 1524:



հանգուցյալների պատկերները, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Երու(ա)նդ | Պիլէմճեան, | 1914-1979, | այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է այնթապցի Մարիամ Պիլեմճյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեն-Մագսուտի առաքելական գերեզմանատան արձ. № 383:



1483. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանին և տապանաքարի երեսին ամրացված մարմարե երկու սալիկներին, փորագիր, 9 տող.

Տապանաքարի երեսին.

Աստ հանգչի(ն) | Օննիկ Այնթապլեան, | 1912-1979, | պուրսացի, | Սիրուն Այնթապլեան, | 1920-1987:

Խաչի պատվանդանին.

Աստ հանգչի | Կարալիս Այնթապլեան, | 1936-2005:

Հրատ. առաջին անգամ:



1484. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին ագուցված թևավոր խաչը չի պահպանվել, խաչի պատվանդանի արևմտահայաց միստին՝



1486. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, երկու լուսանկարներով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.



Աստ հանգչի(ն) | Գաբրիել Ղազարեան, | սասունցի, | ծն(եալ) 1895, հ(ա)ն(գեալ) 1980, | Վերժին Ղազարեան, | 1903-1984:

Հրատ. առաջին անգամ:

1487. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, քառանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգչի | Շուշան Հրեշտակեան, | 1900-1980, | էրզրումցի: | Շուշան անուն, անբիծ հոգի, | ձմեռներե ետք անմեհի, | կորուստներե ետք շատ ու շատ | չղառնացա կեանքէն ժլատ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 54 համարը:



1488. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Քերոբ Որբերեան, | 1900-1980, | մալաթեացի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է մալաթիացի Եսբեր Որբերյանի տապանաքարի մոտ: Վերջինիս մասին տե՛ս Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 992:

Քերոբ Որբերյանը 1944 թ. եղել է վերակազմված Մալաթիայի կրթասիրաց ընկերության Հայկալի մասնաճյուղի վարչության անդամ (Աղադանան Ա., Պատմության Մալաթիոյ իւտոյ, էջ 1520):



1489. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Կիրակոս | Լեպլեպեան, | 1900-1980, | ուրֆացի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է երեսիացի Կիրակոս, Սանան և Ներսես Լեպլեպեյանների տապանաքարի մոտ: Նրանց մասին տե՛ս Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 1419:



1490. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին ագուցված թևավոր խաչը չի պահպանվել, արձանագրությունը՝ տապանաքարի արևելյան և արևմտյան եզրերին ամրացված մարմարե սալիկներին, փորագիր, 9 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | քիլիսցի | Վիքթորիա Այնթալեան, | 1900-1980:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Յովհաննես | Այնթալեան, | 1888-1983, | քիլիսցի:

Հրատ. առաջին անգամ:



1491. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Գրիգոր | Մեֆերեան, | ծն(եալ) Այնթապ, | 1903-1980:

Հրատ. առաջին անգամ:



1492. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչին | Խանօ(յ)եաններ՝ | Տիգրան, 1926-1992, | Մարի, 1905-1980: | Սասունցի:

Հրատ. առաջին անգամ:



1493. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | ուրֆացի | Լիա Քիլեճեան, | ծն(եալ) 1905, հ(ա)ն(գեալ) 1980:
Հրատ. առաջին անգամ:



Աստ հանգչի | Նշան Արապեան, | 1910-1980, | տիգրանակերտցի: | Նախկին հայրիկը | Ազգ(ային) պատսպարանին:


Հրատ. առաջին անգամ:

1496. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Խորեն | Աղաճանեան, | 1911-1980, | արապկերցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Խորեն Աղաճանյանը 1936 թ. նորակազմ Արաբկիրի և շրջակայքի հայրենակցական միության Հայեյի մասնաճյուղի վարչության անդամ էր: 1943 թ. ամուսնանում է տեր Կորյուն քահանայի աղջկա հետ («Ոսկեգետակ. տարեգիրք», Պեյրուր, 1945, № 3, էջ 216):



1494. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց միստին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչին | Ազնի Գրիգորեան, | 1909-1980, | Հայկազ Գրիգորեան, | 1900-1985:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ըստ Ազնիվ և Հայկազ Գրիգորյանների թոռան՝ Ազատուհի Գաբրիելյան-Քորթոշյանի՝ Հայկազը ծնվել է Խարբերդի Մորենիկ, իսկ Ազնիվը՝ Եղեգի գյուղում: Հայկազի հոր անունը Գրիգոր էր: Ամբողջ գերդաստանից միակ փրկվածն է Մեծ եղեռնի ժամանակ: Ի հիշատակ նահատակ հոր՝ գրվել է Գրիգորյան ազգանունով: Ունեցել են 9 զավակ՝ Ռոզա, Լուիզա, Արմենուհի, Կարապետ, Հայկուհի, Արա, Ջարմուհի, Սիլվարդ և Վահե: Ռոզայի մասին տես Շեն-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 721:



1497. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, հանգուցյալի պատկերով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.


Աստ հանգչին | մայր եւ որդի՝ | քիլիսցի | Յակոբ Ատուրեան, | ծն(եալ) 1914-1980, | Մառա Ատուրեան:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 3422 համարը:



1495. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.



1498. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով



Քևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Սարգիս | Պիտիզեան, | ծն(եալ) 1915, Այնթապ, | հ(ա)ն(գեալ) 1980, Հալէպ:
Հրատ. առաջին անգամ:

1499. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ քևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Թագուհի | Թիֆեմբեան, | 1893-1981, | ուրֆացի:
Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Թագուհի Թյուֆեմբեյանը հիշվում է 1919 թ. Հալեպում գտնվող փրկված տարագիրների («Կոչնակ», 1919, № 21, էջ 677), ինչպես նաև 1955 թ. հալեպաբնակ ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ այրի էր և ուներ 2 աղջիկ (**Մահակեան Ա.**, նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆացիներու մարդասիանարը), էջ 12):



1500. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ քևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին, փորագիր, 3 տող.

Աստ հանգչի | Գեորգ Քաջարեան, | ծն(եալ) Չէյթուն, 1893, հ(ա)ն(գեալ) 1981:
Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Գեորգ Քաջարյանը 1957 և 1966 թթ. ընտրվում է Սր. Գեորգ եկեղեցու թաղական խորհրդի անդամ (**Քեչիշեան Վ.**, Գոյապատում, էջ 152, 171-172):



1501. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, երկու լուսանկարով քևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգչի(ն) հաճի | Կարապետ Իշխանեան, | ծն(եալ) 1894, Կիրիլին, | հ(ա)ն(գեալ) 1981, | հաճի Մարի | Իշխանեան՝ | ծն(եալ) Սազալ, | 1908-1993:
Հրատ. առաջին անգամ:



1502. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով քևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երեք սալիկներին, փորագիր, 15 տող.

Սալիկ Ա.
Աստ հանգչի | Աստիք | Թահթապրունեան, | ծն(եալ) Կեսարիա, 1894, | հ(ա)ն(գեալ) 1981:
Սալիկ Բ.


Աստ հանգչի | Գարնիկ | Թահթապրունեան, | ծն(եալ) Կեսարիա, 1902, | հ(ա)ն(գեալ) 1987:
Սալիկ Գ.

Աստ հանգչի | Մարի | Թահթապրունեան՝ | ծն(եալ) Թովմասեան, | հ(ա)ն(գեալ) 1995, սասունցի:
Հրատ. առաջին անգամ:



1503. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով քևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի(ն) | Սեդրակ Գրաճեան, | ծն(եալ) Հաճն, 1896, հ(ա)ն(գեալ) 1981, | Արուսեակ Գրաճեան, | 1908-1987, | ծն(եալ) Արաբկիր:
Հրատ. առաջին անգամ:



1504. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.

Աստ հանգչի | Ստեբան Թովալեան, | 1900-1981, | գոնիացի: | Հայ ես եղել, | հայր ես եղել, | Մախիսի պէս | վեհ ես եղել: | Կա. Հա. Սու.:


Հրատ. առաջին անգամ:



1505. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 3 տող.

Աստ հանգչի | Մովսէս Սարգիսեան, | ծն(եալ) Բալու, 1901, հ(ա)ն(գեալ) 1981:

Հրատ. առաջին անգամ:



1506. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, երկու լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչի(ն) | Տիգրան Պալճեան, | 1904-1981, | քիլիսցի, | Մարի Պալճեան, | 1908-1992, | Մոսկի, 1988:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Մարի Պալճեանը 1981 թ. Սր. Աստվածածին նոր եկեղեցուն նվիրում է ձեռագործ ծածկոց (Հինադեան 2., նշվ. աշխ., էջ 93):




1507. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ղեպի ներս կորացված միստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ հյուսիսային միստին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Տիբրան | Պերպերեան, | ծն(եալ) 1905, Քիլիս, | հ(ա)ն(գեալ) 1981:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է քիլիսցի Պետրոս Պերպերյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեն-Մագուտի առաքելական գերեզմանատան արձ. № 355:




1508. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևելյան եզրի մարմարե սալիկին, փորագիր, 11 տող.

Աստ հանգչին | տէր եւ տիկին | Ասլանեաններ՝ | Սիմոն, | ծն(եալ) Մալաթիա, | 1898-1983, | հ(ա)ն(գեալ) Հալէպ, | Լուսիա, | ծն(եալ) Արաբկիր, | 1905-1981, | հ(ա)ն(գեալ) Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Սիմոն Ասլանյանը Մալաթիայում վարել է հասարակական կարևոր գործեր: Եղեռնից հազիվ փրկված՝ ցանկանում էր անցնել Հայաստան, սակայն անձնագրային դժվարությունների պատճառով հաստատվում է Հալեպում, որտեղ էլ նվիրվում է ազգային հասարակական գործունեությանը: Մի շարք հայրենակիցների հետ հիմնում է Մալաթիայի կրթասիրաց միության Հալեպի մասնաճյուղը և երկար տարիներ վարում ատենապետի պաշտոնը: Սիմոն Ասլանյանի հուղարկավորությունը տեղի է ունեցել 1983 թ. հուլիսի 13-ին Սր. Քառասնից մանկանց եկեղեցուն («Օշական», 1983, № 1-4, էջ 175):



1509. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Չարուիի Մուրատեան, | 1907-1981, | սեքաստացի:

Հրատ. *առաջին անգամ:*

Ծանոթ. գտնվում է սերաստացի Նաթան Մուրատյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տե՛ս Շեխ-Մազադի առաքելական գերեզմանատան արձ. № 1301:



Խաչքարին.

Ս(ուրբ) Էջմ(իա)ծին, ՌՆԻԴ (1975):

Հրատ. *առաջին անգամ:*

1512. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով, իսկ ստորին մասում՝ հանգուցյալի պատկերով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 8 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Գեորգ | Ղազելեան, | 1890-1982, | այնթասցի:

Սալիկ Բ.

Յարութիւն | Ղազելեան, | 1948-2005:

Հրատ. *առաջին անգամ:*



1510. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 3 տող.

Աստ հանգչի | տիկ(ին) Մարի Արզուհալճեան, | ծն(եալ) 1920, Քիլիս, հ(ա)ն(գեալ) 1981, Հալէպ:


Հրատ. *առաջին անգամ:*



1513. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Ջէքիա Նապաթեան՝ | ծն(եալ) Գանիէլեան, | քնիկ հազրօցի, | 1894-1982:

Հրատ. *առաջին անգամ:*



1511. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, տապանաքարի երեսին ազուցված է արձանագիր փոքր խաչքար, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.



Սալիկին.

Աստ հանգչի | Յարութիւն | Միհրանեան, | ծն(եալ) ի Կ. Պոլիս, դեկ(տեմբեր) 1925, | հանգեալ ի տէր, | 10 օգոստոս 1981:

1514. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարի արևելյան եզրին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.



Աստ հանգչի | հաճի Տիրուհի | Կիրակոսեան, | 1900-1982, | մուշեցի:
Հրատ. առաջին անգամ:

1515. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երեք սալիկներին, փորագիր, 16 տող.
Սալիկ Ա.

Աստ հանգչին | Կարուն Խոտանեան, | ծն(եալ) Քիլիս, 1900, հ(ա)ն(գեալ) 1982, | Խոտանեաններ՝ | Սիիրան, | Արաքսի, | Գեորգ:
Սալիկ Բ.

Աստ հանգչի | Ովսաննա | Խօտանեան՝ | ծն(եալ) Վարդապետեան, | 1910-1987:
Սալիկ Գ.

Աստ հանգչի | Յովհաննէս | Խոտանեան, | 1934-1996:
Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Հովհաննէս Խոտանյանը 1981 թ. Սբ. Աստվածածին նոր եկեղեցուն նվիրում է արծաթապատ փայտյա շրջանակով Աստվածածնի սրբապատկեր (Հինառայեան Զ., նշվ. աշխ., էջ 93):



1516. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, հանգուցյալների պատկերներով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց միստին և տապանաքարի արևմտյան եզրին ամրացված մարմարե երկու սալիկներին, փորագիր, 7 տող.

Խաչի պատվանդանի սալիկին.

Տեր եւ տիկին | Աւետիքեաններ՝ | Աւետիս, Հռիփ-սիմէ:

Տապանաքարի արևմտյան եզրի սալիկին.

Աստ հանգչի | Աւետիս Աւետիքեան, | ծն(եալ) Քիլիս, 1906, | հ(ա)ն(գեալ) Հալէպ, 1982:
Հրատ. առաջին անգամ:



1517. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ ստորին մասում և պատ-



վանդանին, հանգուցյալների պատկերներով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչին(ն) | Մանուէլ Գրմբզեան, | ծն(եալ) 1912, Քիլիս, | հ(ա)ն(գեալ) 1982, Հալէպ, | Երանիկ Գրմբզեան, | ծն(եալ) 1910, Քիլիս, հ(ա)ն(գեալ) 1998, Հալէպ:
Հրատ. առաջին անգամ:

1518. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 13 տող.
Սալիկ Ա.

Հոս կը ննջէ(ն) | Յովսէփ եղբ(այ)ր | եւ տիկինը՝ Գազանճեան, | ծնաւ 1900, Այնթապ: | Վերստին | ծնաւ, 1926-1982: | Երբ արթննամ, | քու դէմքէդ | պիտի կշտանամ:
Սալիկ Բ.

Աստ հանգչի | Աւետիս | Գազանճեան, | 1942-1997:
Հրատ. առաջին անգամ:



1519. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.



Աստ հանգչի | բնիկ կարմուճցի | Նազարեթ | Միջին-Ներսեսեան, | ծն(եալ) 1902-1982:


Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Նազարեթ Միջին-Ներսեսյանը հիշվում է 1955 թ. հալեպբնակ կարմուճցիների ցանկում, որի համաձայն՝ ամուսնացած էր և ուներ 1 տղա, 2 աղջիկ (**Մահակեան Ա.**, նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 21):

1520. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Պօղոս Փալանճեան, | 1907-1982, | արարկերցի:

Հրատ. առաջին անգամ:



1521. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Մատթեոս | Տէյիրմենճեան, | 1912-1982, | տիգրանակերտցի:

Հրատ. առաջին անգամ:



1522. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, երկու լուսանկարներով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.



Աստ հանգչի(ն) | Սարգիս Մեպերճեան, | 1913-1982, | տեօրդեօյցի, | Սարգիս Մեպերճեան, | 1944-2006:


Հրատ. առաջին անգամ:

1523. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկներին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի(ն) | Փանոս Թիւճեան, | ծն(եալ) 1914, հ(ա)ն(գեալ) 1882, | զօնեացի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. 1882 թվականի հարյուրավորը սխալ է փորագրված, պետք է լիներ 9:



1524. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.


Աստ հանգչին | տեր եւ տիկին | Էսկիճեաններ՝ | Սինաս, 1916-1982, | արապկերցի, | Ծաղիկ՝ ծն(եալ) Արապարեան, | 1919-1982, | քիլիսցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է քիլիսցի Ֆերիդե, Անդրանիկ, Տիգրան և Լուսինիկ Արապարյանների տապանաքարերին կից: Վերջիններիս մասին տե՛ս Շեխ-Մագաուդի առաքելական գերեզմանատան արձ. № 719, 819, 1482:



1525. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհե-



տացած լուսանկարով քևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Մանուկ Մարգարեան, | 1917-1982, | զէրթունցի:

Հրատ. առաջին անգամ:

1526. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ քևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչին | Գագանճեաններ՝ | Էֆրոն, 1917-1982, | պէրեճիկցի, | Մարգիս, 1906-2006:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Մարգիս Գագանճյանը 1945-1955 թթ. Հայեպոմ գործող Ուրֆայի երիտասարդաց միության վարչության անդամ էր (Մահակեան Ա., նշվ. աշխ., էջ 1263):



1527. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, երկու լուսանկարներով քևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Ներսես Օհանեան, | ծն(եալ) 1880, Էյնէշ, | հ(ա)ն(գեալ) 1983:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. «Էյնէշ»-ն Էհնեշն է:



1528. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | մաշկերտցի | տ(ի)կ(ին) Սաննիկ | Նալպանտեան, | ծն(եալ) 1895, հ(ա)ն(գեալ) 1983:

Հրատ. առաջին անգամ:



1529. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով քևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչին | տէր եւ տիկին | Յակոբեաններ՝ | Եագուպ, 1897-1983, | Հայկուհի, 1910-1984: | Պէրեճիկցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. «Պէրեճիկ»-ը Բիրեջիկն է:



1530. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով քևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | տիրամայր | Մարիամ | Չղա-նեան, | ծն(եալ) 1899, հ(ա)ն(գեալ) 1983, | կիրիճցի:

Հրատ. առաջին անգամ:



1531. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով քևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Պաղտասար | Տանիէլեան, | 1900-1983, | քիլիսցի:

Հրատ. առաջին անգամ:



1532. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Մարալ Գ-անճանաքեան, | 1905-1983, | արաբկերցի:

Հրատ. առաջին անգամ:



1533. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 10 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Հայկ | Ոսկերիչեան, | 1905-1983, | տիգրանակերտցի:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Գայեանէ | Ոսկերիչեան՝ | ծն(եալ) Խարչանեան, | 1911-1988:

Հրատ. առաջին անգամ:


Ծանոթ. կրում է 236 համարը:



1534. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, հանգուցյալի պատկերով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչին | Արոյեաններ՝ | Լեւոն, 1940-1995, | Մարիամ, 1911-1983: | Քիլիսցի:

Հրատ. առաջին անգամ:



1535. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, երկու լուսանկարներով թևավոր խաչ, մարմարե սալիկին պատկերված են հեծանիվ և ոտնագնդակ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հազչի(ն) | Վարուժան Երեցեան՝ | ՀՄԸՄ-ի վաստակատր մարզիչ: | واروجان یرهسيان | Varoujan K. Yeretzian. | 1920-1983: | Աա՛ղ, փառացս ֆորպոլի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 488 համարը:



1536. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կանգնեցված ժայռաքեկորի արևելահայաց կողմում, ագուցված է հանգուցյալի պատկերը, արձանագրությունը՝ փորագիր, 9 տող.

Մահ իմացեալ | անմահութիւն է: | Աստ հանգչի | նահատակ | Սկրտիչ Խաչիկ | Մատարեան, | ծնեալ Հալէպ, 1964-ին, | նահատակուած | Սթանպոլ 1983-ին:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Սկրտիչ Մատարյանը ՀԱՀԳԲ-ի (ԱՄԱԼԱ) մարտիկ էր: 1983 թ. հունիսի 16-ին հարձակվում է Կ. Պոլսի առևտրական փակ շուկայի վրա՝ սպանելով 3 և վիրավորելով 22 հոգու: Գործողության ավարտին ինքնասպանություն է գործում՝ աջ ձեռքով պահելով ձեռնառունքի օղակը, իսկ ձախ ձեռքի երկու մատներով ցույց տալով հաղթանակի նշանը (Փաշաբեգյան Տ., ԱՄԱԼԱ-ի պատմությունից, «Ուխտ Արարատի», 2005, № 1, էջ 19: Տե՛ս նաև Հայկական նորագյույն զինեալ ազատագրական պայքարի ռազմական գործողութեանց ցանկը, «Սփիւռք», 2012, № 97, էջ 40):



1537. Գամբարան. եռահարկ, բետոնե, արևելահայաց և արևմտահայաց հարկերը բաժանված են խցերի, ամեն մի հարկում՝ 10 խուց, արձանագրությունները՝ խցերին ամրացված սալիկներին.



Արևելահայաց հարկերի խցեր.
Մարմարե սալիկին՝ փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Մարգիս Մր. Իսկէնեան, | ծն(եալ)
1922, հ(ա)ն(գեալ) 1984, | այնթապցի:

Մարմարե սալիկին՝ փորագիր, 2 տող հայերեն և 3 տող արաբերեն.

Հանգուցեալ | Յակոբ Յովհաննէս Գալաճա:

المرحوم ١٨٩٤ المرحوم اكوپ وانيس قلاجة ١٩١٥
امينة نصري حسكر ١٩٩٧ | صلوا لاجهما.

Թարգմ. Հանգուցյալներ Հակոբ Հովհաննէս Գալաճա-
ճա, 1894-1988, Ամինա Նասրի Հասրուր, 1915-1997:

Մարմարե սալիկին՝ փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Ովսաննա | Թէմիզեան՝ | ծն(եալ)
Սանտալեան, | Ուրֆա, | 1911-1990:

Մարմարե սալիկին՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Համբարձում | Պերեճիքեան, |
1906-1986, | բալուցի:

Մարմարե սալիկին՝ փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Աբրահամ Գալայճեան, | ծն(եալ)
Քէսապ, | 1909-1989:

Մարմարե սալիկին՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Աւետիս | Հալլաճեան, | 1906-
1988, | ճիպինցի:

Մարմարե երկու սալիկներին՝ փորագիր, 8 տող.

Աստ հանգչի | Ռօզա Խաչատու(ր)եան, | 1917-
1985, | տիգրանակերտցի:

Աստ հանգչի | Յակոբ | Խաչատուրեան, | 1936-
2003:

Մարմարե սալիկին՝ փորագիր, 5 տող.


Աստ հանգչի | Մարիամ | Ալճեան, | ծն(եալ)
1905, հ(ա)ն(գեալ) 1988: | Մալաթեայ:

Մարմարե սալիկին՝ փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Ժանօ Տէր-Յակոբեան, | 1900-
1987, | մարաշցի:

Մարմարե սալիկին՝ փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Հռիփսիմէ Գալէմքեարեան, |
1900-1990, | այնթապցի:



Արևմտահայաց հարկերի խցեր.




Մարմարե սալիկին՝ փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Յակոբ Կարապետեան, | ծնեալ
Խարբերդ, | 1901-1985:

Մարմարե սալիկին՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Յովհաննէս | Խաչատուրեան, |
ծն(եալ) Քիլիս, | 1909-1993:





Մարմարե սալիկին՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Վազգէն | Կիրէղեան, | ծն(եալ) 1925, հ(ա)ն(գեալ) 1991, | ծն(եալ) Էրզրում:

Մարմարե սալիկին՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Մովսէս | Վանայեան, | ծն(եալ) Մուսա լեռ, | 1915-1991:

Մարմարե սալիկին՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Յովհաննէս | Տնլագեան, | ծն(եալ) Մուսա լեռ, | 1904-1996:

Մարմարե սալիկին՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Տիրուհի | Աագեան, | ծն(եալ) Պրուսա, | 1900-1991:

Մարմարե սալիկին՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Ներսէս | Մալխասեան, | 1933-2005, | ուրֆացի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Քեսապ գյուղաքաղաքը գտնվում է Սիրիայի Արաբական Հանրապետության հյուսիս-արևմուտքում:

1538. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Կարապետ | Պարսումեան, | 1903-1984, | տիգրանակերտցի:

Հրատ. առաջին անգամ:



1539. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Ներսէս Սիմոնեան, | 1905-1984, | այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:



1540. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Կարապետ Սիմասեան, | 1909-1984, | տիգրանակերտցի:

Հրատ. առաջին անգամ:



1541. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Պողոս | Տըլտըլեան, | 1910-1984, | մարաշցի:


Հրատ. առաջին անգամ:



1542. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 3 տող.

Աստ հանգչի | Մարիամ Շահինեան, | ծն(եալ) Բալու, 1914, հ(ա)ն(գեալ) 1984:

Հրատ. առաջին անգամ:



1543. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ մոմատոնակ, որի արևելահայաց կողմում՝ հանգուցյալների պատկերներ, արձանագրությունը՝ պատկերին և մարմարե սալիկին, 8 տող.

Սալիկին՝ փորագիր.

Աստ հանգչի | Ռօզին Ասատուրեան, | 1915-1984, | տիգրանակերտցի:

Հանգուցյալի պատկերին՝ ներկագիր.

Պետրոս, | Ռօզին | Ասատուրեաններ, | 1932-2005, 1915-1984:

Հրատ. առաջին անգամ:



1544. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Սարգիս Խաչատուրեան, | 1900-1985, | քիլիսցի:

Հրատ. առաջին անգամ:



1545. Տապանաքար. միաստիճան ընդհանուր պատվանդանի վրա՝ չորս ուղղանկյունաձև տապանաքարեր, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, խաչի պատվանդանի վրա՝ ՀՄԸՄ-ի բարձրաբանդակ զինանշանը, արձանագրությունը՝ արևմտյան եզրի սյունների վրա գտնվող քարին և տապանաքարերից մեկին, փորագիր, 8 տող.

Սյունների վրա գտնվող քարին.

Դամբարան | ՀՄԸՄ-ի նուիրեալներու:




Տապանաքարին.

Աստ հանգչին | Յակոբ Քէշիշեան, 1900-1985, | Պարզե Միսիրյան, 1912-1992, | Խաչիկ Գաբրիելյան, 1933-1994, | Սուրեն Նազարեան, 1923-1998, | Զաւէն Սապունճեան, 1930-2001:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Պարզե Միսիրյանը և Զավեն Սապունճյանը 1952 թ. Հալեայի «Ահագն» պատանեկան պարբերաբերթի խմբագրակազմի անդամներից էին (Պարիկեան Հ., Վարժապետեան Յ., նշվ. աշխ., էջ 186): 1957-1963 թթ. Միսիրյանը Հալեայի «Արևելք մարզաշխարհ» շաբաթաբերթի աշխատակիցն էր, իսկ Սապունճյանը՝ խմբագիրը (նշվ. աշխ., էջ 162):

Արմատներով էրգրումցի (Քաղայան Ա., Հալեայի հայ համայնքը 1964-1985 թթ., էջ 122) Սուրեն Նազարյանը 1952 թ. Հալեայի «Ահագն» պատանեկան պարբերաբերթի խմբագրակազմի անդամ էր (նշվ. աշխ., էջ 186), 1964 թ.՝ ՀՄԸՄ, ՀՄՄ, ՀԵԸ և «Գերմանիկ-Վասպուրական» միությունների միասնությամբ ստեղծված Հալեպահայ միջմիութենական սկստուական խորհրդի հիմնադիրներից (Տէրվիշեան Ջ., Հալեայի միջսկստուական խորհուրդի կազմութեան պատմութիւն, «Օշական», 1980, № 8, էջ 40): Ըստ Հալեպում ԽՍՀՄ-ի գլխավոր հյուպատոսության՝ 1964 թ. հուլիսի 24-ի տեղեկանքի՝ աշխատում էր Հալեայի երկաթգծի ընկերությունում և ՀՄԸՄ-ի վարչության անդամ էր (Քաղայան Ա., Հալեայի հայ համայնքը 1964-1985 թթ., էջ 122): 1982 թ. հիշվում է որպես Միրիայի սկստուների ընդհանուր խմբապետ (Նազարեան Ս., Միրելի՝ սկստուներ եւ արժուիկներ, «Օշական», 1982, № 3-4, էջ 110): 1982 թ. «Օշական» պարբերաբերթի խմբագրակազմի անդամ էր («Օշական», 1982, № 3-4, № 17-18): 1951 թ. հրատարակված «Հայ գրողներ» գրքի (Պարիկեան Հ., Վարժապետեան Յ., նշվ. աշխ., էջ 82-83), ինչպես նաև բազմաթիվ հոդվածների հեղինակն է (տես «Օշական», 1982, № 3-4, էջ 85; № 5-6, էջ 35, 111, 126):



1546. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 9 տող. Սալիկ Ա.

Աստ հանգչի | Յակոբ Գոչունեան, | 1902-1985, | այնքապցի:
Սալիկ Բ.

Աստ հանգչին | Գոչունեաններ՝ | Անդրանիկ, 1933-1995, | Ալիս, 1907-1995: | Այնքապցի:
Հրատ. առաջին անգամ:




1547. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, երկու լուսանկարով քևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 8 տող.

Սալիկ Ա.
Աստ հանգչի | Արշալոյս Իքիաքճայեան, | 1907-1985, | քիլիսցի:
Սալիկ Բ.

Աստ հանգչի | քիլիսցի | Մանուշակ Սկրեան, | ծն(եալ) 1928-1986:
Հրատ. առաջին անգամ:



1548. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին ագուցված է սալիկ, որի արևելահայաց կողին՝ հանգուցյալների պատկերներ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին և արևմտյան եզրին ագուցված սալիկին, փորագիր, 11 տող.



Արևմտյան եզրին ագուցված սալիկին.

Աստ հանգչի | Առտաշէս | Առաքելեան, | 1908-1985:
Մարմարե սալիկին.

Առանց ուզելու բաժնուեցաք, թշուառ եղբայրներ, | փնտոեցի, գտայ ձեզ, Մօրնիք գիւղի հարազատներ: | Խարբերդի մման տապանաքար գետեղեցի, թող | հանգչին ձեր հոգիներ՝ Խարս, Նշանս, Կիլիսթանս, | հօրեղբայրս՝ Արտաշէս, հոգույս հատորներ: | Իսմայէլ Չէլիք Առաքելեան, | Անի Առաքելեան եւ ընտանիք:
Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. «Մօրնիք»-ը Մորենիկն է:



1549. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ քևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց միստին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Յովհաննէս | Լաքլաքեան, | ծն(եալ) Ուրֆա, 1909, | հ(ա)ն(գեալ) 1985:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Հովհաննէս Լաքլաքյանը հիշվում է 1955 թ. հալեպահայկապահայների ցանկում, որի համաձայն՝ ամուսնացած էր և ուներ 3 տղա, 2 աղջիկ (Մահակեան Ա., նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 24):



1550. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 9 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Կարապետ | Իսկէնեան, | ծն(եալ) 1913, հ(ա)ն(գեալ) 1985, | այնթապցի:

Սալիկ Բ.

Տիգրանուհի | Իսկէնեան | ծն(եալ) Ազգեան, | 1919-1991:

Հրատ. առաջին անգամ:



1551. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 8 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Հռիփսիմե Պարսումեան, | 1899-1986, | պէրեճիքցի:

Սալիկ Բ.

Աստ հանգչի | Յարութիւն | Պարսումեան, | 1930-1990:

Հրատ. առաջին անգամ:



1552. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած



լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Վահան | Գիլիհանճեան, | ծն(եալ) 1905, հ(ա)ն(գեալ) 1986: | Էրզնկա:

Հրատ. առաջին անգամ:


Ծանոթ. Էրզնկան Երզնկան է:

1553. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, խաչակիր, քառակողմ, վրանաձև, արձանագրությունը՝ տապանաքարի արևմտահայաց կողին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչին | Աթթարեաններ՝ | Երջանիկ, | Իսկէնուր, 1906-1986, | քիլիսցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է քիլիսցի Մարի Աթթարյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տե՛ս ՇԵՆ-Մագսուրի առաքելական գերեզմանատան արձ. № 273:



1554. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Յարութիւն | Պաղտասարեան, | ծն(եալ) 1906, հ(ա)ն(գեալ) 1986, | քիլիսցի:

Հրատ. առաջին անգամ:



1555. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.



Աստ հանգչի | Կարապետ Մինասեան, | 1906-1986, | զօնեացի:
Հրատ. առաջին անգամ:

1556. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ հանգուցյալի պատկերով մարմարե սալիկ, արձանագրությունը՝ սալիկին, փորագիր, 4 տող.

Արմեն | Մոմճեան, | 1909-1986, | մարաշցի:
Հրատ. առաջին անգամ:



1557. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Ալիս | Իսկենտերեան՝ | ծնեալ Ճիվանեան, | 1911-1986, | այնթապցի:
Հրատ. առաջին անգամ:



1558. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 9 տող.

Սալիկ Ա.
Աստ հանգչի | Եղսաբեդ | Սելտալեան, | ծն(եալ) 1913, հ(ա)ն(գեալ) 1986, | սելվեր(ե)կցի:
Սալիկ Բ.


Աստ հանգչի | Նուր | Գասպարեան, | 1949-1991:
Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. գտնվում է սևերեկցի Հարություն Սևտալյանի տապանաքարի մոտ: Վերջինիս մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 958:

1559. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկներին, ներկագիր, 5 տող.

Աստ հանգչի | Միհրան | Սերայտարեան, | ծն(եալ) 1914, հ(ա)ն(գեալ) 1986, | այնթապցի:
Հրատ. առաջին անգամ:



1560. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչին | Մելքոնեաններ, | քիլիս(ցի), | Յարութիւն, 1905-1987, | Գեղացին, 1912-2004:
Հրատ. առաջին անգամ:



1561. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Թօրոս | Չագրեան, | ծն(եալ) 1908-1987, | կիլիկիցի:
Հրատ. առաջին անգամ:



1562. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.

Աստ հանգչի(ն) | Արմենուհի | Պօզուրլեան, | ծն(եալ) Կարին, | ծն(եալ) 1908, հ(ա)ն(գեալ) 1987, | Պօղոս | Պօզուրլեան՝ | ծն(եալ) Նեվշեհիր, | 1900-1994:
Հրատ. առաջին անգամ:



1565. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 10 տող.
Սալիկ Ա.

Աստ հանգչի | Ալիշան | Աճեմեան, | 1910-1987, | սասունցի:
Սալիկ Բ.

Աստ հանգչի | Անժել | Աճեմեան, | 1922-1992, | սասունցի:
Հրատ. առաջին անգամ:



1563. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին, փորագիր, 9 տող.

Աստ հանգչին | տեր եւ տիկին | Ֆապրիքաճեան-ներ՝ | Լեւոն, | ծն(եալ) Կարս, | 1909-1987, | Տիգրանուհի, | ծն(եալ) Վան, | 1910-1988:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. ըստ Հայեպոստ ԽՍՀՄ-ի գլխավոր հյուպատոսության՝ 1964 թ. հուլիսի 24-ի տեղեկանքի՝ Լևոն Ֆապրիքաճյանը Ռամկավար ազատական կուսակցության Հայեպի ղեկավարներից էր: Դեղագործ էր և աշխատում էր Հայեպի պետական հիվանդանոցում (Քաղաքյան Ա., Հայեպի հայ համայնքը 1964-1985 թթ., էջ 115): Ըստ 1968 թ. տեղեկանքի՝ նա ՌԱԿ-ի հին ղեկավարներից էր, Խորհրդային Հայաստանի համակիրներից (Քաղաքյան Ա., Միրիայի հայ համայնքը 1960-ական թթ.-1970-ականների սկզբներին, էջ 225):



1566. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Ոսկի | Խորլարեան, | ծն(եալ) 1914, հ(ա)ն(գեալ) 1987, | պերճիկցի:
Հրատ. առաջին անգամ:



1564. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, երկու լուսանկարներով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Ատել | Պերպերեան, | ծն(եալ) 1910, հ(ա)ն(գեալ) 1987, | մարաշցի:
Հրատ. առաջին անգամ:

1567. Աղբյուր. արձանագրությունը՝ աղբյուրի ճակատին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Ի յիշատակ | հանգուցեալներ | Եագուպ, Ռ-օզին | Քեօշկերեաններու, | 1988:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. նրանց մասին տես Շեն-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 564:



1568. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, երեք լուսանկարներով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչին | տեր եւ տիկին | Քէշիշեաններ՝ | Ովսաննա, 1907-1988, | Արգար, 1898-1990, | ուրֆացի, | Մկրտիչ, 1938-2000:
Հրատ. առաջին անգամ:



1569. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ ուղղահայաց կանգնեցված սալիկ, արձանագրությունը՝ սալիկի արևելահայաց միստին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչին | Գուլաճեաններ՝ | Նուարդ, 1907-1988, | Աստղիկ, 1940-2000: | Տիգրանակերտցի:
Հրատ. առաջին անգամ:



1570. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ երկու հանգուցյալների պատկերներին և մարմարե սալիկին, փորագիր, 12 տող.

Սալիկ Ա.
Աստ հանգչի | Զմրուխտ | Տէկիրմէնճեան, | ... | ուրֆացի:



Պատկերով սալիկ Ա.
Տէկիրմէնճեան | Կարապետ, | ծնած Ուրֆա, 1913, | մեռած Հալէպ, 1988:


Պատկերով սալիկ Բ.
Տէկիրմէնճեան | Լուսին, | 1920-1993:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. Զմրուխտ և Կարապետ Տէկիրմէնճեանները հիշվում են 1955 թ. հայկապարնակ ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ Կարապետն ամուսնացած էր և ուներ 1 աղջիկ (**Մահակեան Ա.**, նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 6):


1571. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 9 տող.

Սալիկ Ա.
Աստ հանգչի | Տովէթ | Ճէնանեան, | 1915-1988:
| մարաշցի:
Սալիկ Բ.
Աստ հանգչի | Մարի | Ճէնանեան, | 1920-2003:
Հրատ. առաջին անգամ:



1572. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ ուղղահայաց կանգնեցված, վերնամասում կամարաձև ոճավորված սալիկ, որի արևելահա-





յաց միստին ագուցված է հանգուցյալի պատկերը, սալիկի արևմտահայաց կողմում՝ հանգուցյալի կիսանդրին, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Արամ Մատոյեան | ազգային հասարակական | գործիչ, | ծն(եալ) Ադերդ, Պիթլիս, | 1924-1988:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. կրում է 672 համարը:
Ադերդ բառի Ա տառը սխալ է փորագրված, պետք է լիներ Ս:

1573. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Յակոբ | Ուրիշիկեան, | 1912-1989, | ուրֆացի:
Հրատ. առաջին անգամ:



1574. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչի(ն) | Էտուար | Եթիմեան, | 1914-1989, | ծն(եալ) Տիգրանակերտ, | Մարի, 1915-2000 | խարբերթցի:
Հրատ. առաջին անգամ:



1575. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.



Աստ հանգչի | Տիրան | Մուրատչալեան, | 1900-1990: | Պրուսա:

Հրատ. առաջին անգամ:

1576. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող հայերեն, որից ցած՝ փորագիր, նույն բովանդակությամբ 5 տող արաբերեն.

Աստ հանգչին | Տաղեաններ՝ | Յովհաննես, | ծն(եալ) Քիլիս, 1910-1991, | Մալմա՝ ծն(եալ) Ազբաթ, | 1906-1990:

| المرحومين | اوھانيس داغليان | ۱۹۱۰-۱۹۹۱. | سلمى ازرق | ۱۹۰۶-۱۹۹۰.

Հրատ. առաջին անգամ:



1577. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Եղաս Մաղազեան, | ծն(եալ) Ուրֆա, | 1910-1990:

Հրատ. առաջին անգամ:



1578. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Գեորգ | Պերպերեան, | ծն(եալ) Այնթապ, | 1914-1990:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է այնքապցի Հարություն Պերպերյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես՝ Շեն-Մագսուտի առաքելական գերեզմանատան արձ. № 742:



Գլորգ Պերայերյանը 1951 թ. հունիսի 29-ից մինչև 1978 թ. Սր. Աստվածածին եկեղեցու թաղական խորհրդի անդամ էր, 1964 թ. Կրթասիրաց վարժարանի և Սր. Աստվածածին նոր եկեղեցու հողի գնման հանձնախմբի, 1971 թ. նույն եկեղեցու կառուցման կենտրոնական մարմնի, ներքին և արտաքին ոճի ընտրության հանձնախմբի անդամ: Եկեղեցուն նվիրում է 10-20 օսմանյան ոսկի և 1972 թ. սեպտեմբերի 10-ին՝ հիմնարկերի արարողության ժամանակ, դառնում Մատթեոս ավետարանչի անվամբ հիմնաքարի կնքահայրը (Հիմնադրանք 2, նշվ. աշխ., էջ 23, 31-33, 39):

1579. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 10 տող.

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Կիլիկիա | Արալանեան՝ | ծն(եալ) Գարձեան, | 1914-1990:


Սալիկ Բ.

Աստ հանգչի | Առաքել | Արալանեան, | ծն(եալ) 1913, հ(ա)ն(գեալ) 1997, | սասունցի:

Հրատ. առաջին անգամ:



1580. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, հանգուցյալի պատկերով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին և խաչի պատվանդանի արևելահայաց նիստին, փորագիր, 8 տող.



Խաչի պատվանդանին.
Արմենակ | Չամիչեան, | 1918-1990:


Սալիկ.
Աստ հանգչի | Արմենակ | Չամիչեան, | ծն(եալ) Այնթապ, | 1918-1990:

Հրատ. առաջին անգամ:

1581. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Լուսիա Բրուտեան՝ | ծն(եալ) Գանտիլեան, | ծն(եալ) Խարբերդ, | 1922-1990:

Հրատ. առաջին անգամ:



1582. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարին և միմյանց կից մարմարե երկու սալիկներին, փորագիր, 8 տող.

Տապանաքարին.

Ճօրճ Ադարեան:

Սալիկ Ա.

Աստ հանգչի | Երուանդ | Ճիլերճեան, | 1901-1991, | ծն(եալ) Մալաթեա:

Սալիկ Բ.

Լեւոնիկ, 1914-2003, | ծն(եալ)՝ Աթթարեան:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. հետագայում ամրացված մարմարե սալիկները մասամբ ծածկել են արձանագրությունը:



1583. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, հանգուցյալների պատկերներով թևավոր խաչ, արձանագրությունը՝ միմյանց կից մարմարե երկու սալիկներին, 7 տող.

Սալիկ Ա, եղբայր.

Աստ հանգչի | Յակոբ | Առաքելեան | Տօնիկեան, | Խարբերդ, | 1907-1991:

Սալիկ Բ, փորագիր.

Մայրամ, 1923-2005:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 315 Բ համարը:



1584. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, խաչի պատվանդանի արևելահայաց միստին ամրացված են հանգուցյալների պատկերները, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի(ն) | տէր եւ տիկին | Գեորգ, Լուսան | Մաթոսեան(ներ), | 1900-1995, 1910-1991: | Ուրֆա, Ուրֆա:

Հրատ. առաջին անգամ:



1585. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.



Աստ հանգչին | տէր եւ տիկին | Հինտոյեաններ | հազարապետ Գրիգոր, | 1901-1993, | Արշալոյս, 1911-1991: | Այնթապցի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. այնթապցի Գրիգոր Հինտոյանը ուսանել է ծննդավայրի Ազգ. Ներսեսյան և Հալեպի «Թերրա Մանրա» վարժարաններում: 1915 թ. հոր և քրոջ հետ (մայրը վախճանվել էր 1909 թ.) Այնթապից տեղահանվում է: Դեյր Էզ-Չորում հոր մահից հետո ուղարկվում է Խապուր, որտեղից էլ իր կյանքը փրկած դահիճներից մեկի հետ մեկնում է Մաֆա: Որոշ ժամանակ անց նրան հաջողվում է փախուստի դիմել և ապաստան գտնել արաբ Բեկկարա աշիրեթի մոտ: Պատերազմից հետո անգլիացիների հետ տեղափոխվում է Հալեպ, սպա Այնթապ: 1920 թ. մեկնում է Բեյրութ և կամավորագրվում ֆրանսիական բանակին: 1921 թ. ստանում է տասնապետի կոչում (Մարաֆեան Գ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 778) և պաշտոնավարում հարդրակցության զնդում: Հետևելով զանազան դասընթացների՝ 1928 թ. ստանում է սպայի




(«Գեղարդ. Սուրիահայ տարեգիրք», Հալեպ, 1975, էջ 408), 1932 թ.՝ «միլիզորմը էվեր»-ի, 1938 թ.՝ հարյուրապետի, իսկ 1948 թ.՝ հազարապետի կոչում: Սիրիական բանակում պաշտոնավարել է որպես հետևակազորի հազարապետ (Մարաֆեան Գ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 778): 1949 թ. փոխգնդապետ էր: 1961 թ. անցել է հանգստի: Պարգևատրվել է սիրիական «Արժանյաց Բ կարգի», ինչպես նաև լիբանանյան և ֆրանսիական պատվանշաններով («Գեղարդ. Սուրիահայ տարեգիրք», Հալեպ, 1975, էջ 408):

1586. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց միստին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Անդրանիկ | Պարոնեան, | ծն(եալ) Խարբերդ, | 1915-1991:

Հրատ. առաջին անգամ:



1587. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ տապանաքարի արևմտահայաց և դրան ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Արևմտահայաց կողմ.

Աստ հանգչի | ...:



Սախիկին.

Աստ հանգչին | տէր եւ տիկին | Ջարմէնեաններ՝ | Աւետիս, 1912-1992, | Էֆրուն, 1917-2006: | ԾՆ(եալ) Այնթապ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. սախիկը, որն ամրացվել է ավելի ուշ, ծածկել է տապա-նագրի մեծ մասը:

1588. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սախիկին, փորագիր, 5 սող.

Դամբարանն այս | Թաշճեան ընտանիքի, | զէյ-թունցի: | Տոտու, 1916-1992, | Ղազար, 1913-1996:

Հրատ. առաջին անգամ:



1589. Հուշակոթող (նվիրված Լիզբոնում նահատակված 5 ազատամարտիկներին). ոճավորված, արձանագրությունը՝ փորագիր, 11 սող.

Բաւ է, հայեր, ցրուած մնաք, մատներիս պէ բռունցքուելն է յաւերժութիւնն Հայաստանի:


Սարգիս Աբրահամեան, Սիմոն Եահրընեան, Սեդրակ Աճեմեան, Արա Քերզլեան, Վաչէ Տաղլեան:

Լիզպոն, 27 յուլիս, 1983:

Կառուցուեցաւ յուշարձանս | նախաձեռնու-թեամբ Ս(ուրիո) ե(րիտասարդական) մ(իութիւն)ի՝ | ի նշան | սուրիահայ երիտասարդութեան | յարգանքին եւ յանձնառութեան: | Նուիրատուութեամբ | Գասապեան եղբայրներուն, | 24 ապրիլ, 1994:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. նրանք ՀՅԴ Լիբանանի երիտասարդական միության անդամներից էին, որոնք «Հայ Յեղափոխական Բանակ»-ի անունից գրավում և պայթեցնում են Լիզբոնի բուրջական դեսպանատան շենքը: Սիմոն Եահիդյանը նահատակվում է գործողության առաջին փուլի ընթացքում: Շենքը գրաված տղաներն իրենց հետ միասին պայթեցնում են այն: Նախքան գրոհը կատարված տեսագրության մեջ այսպես էին ասում.



Արա Քերզլյան. «Առանց հայրենիքի, առանց մայր հողին ո՛չ ապագայ կայ, ո՛չ կեանք, ո՛չ ընտանիք կ'ըլլայ: Առանց մայր հողին, առանց ազգին, որեւէ ընտանիք գոյութիւն չունենայ»:

Սիմոն Եահիդյան. «Շատ հպարտ եմ, որ հայ ծնած եմ, որովհետեւ հայ պիտի մեռնիմ: Շատ ուրախ եմ այս գործողութեամբ: Հիմա մեր ապրած կեանքը իսկապէս որ կեանքէ զատ՝ ամէն ինչի կը նմանի: Կապրիմք ուրիշին տիրապետութեան տակ, ուրիշին խամաճիկներն ենք»:



Առաջին շարքում ձախից աջ Արա Գըրճյան, Սարգիս Աբրահամյան երկրորդ շարքում ձախից աջ Վաչէ Տաղլյան, Սեդրակ Աճեմյան, Սիմոն Եահիդյան

Սարգիս Աբրահամյան. «Ինչպես որ կրտե երգը, «Երբ չի մնում երբ ու ճար, խենթերն են գտնում հնար»: Այո՛, մենք խենթեր ենք, բայց չակերտեալ խենթեր: Եկէ՛ք, միացէ՛ք մեզ: Կը հաւատամ, որ կը տիրանանք մեր հայրենիքին»:

Վաչե Տաղյան. «Ես բնական մահով պիտի չմեռնիմ. գոհը պիտի չըլլամ ճակատագրի խաղերում: Ես Հայ դատի զինուոր եմ. կենքս պիտի զոհեմ այդ ճամբուն վրայ»:

Սեդրակ Աճեմյան. «Մենք առաջինները չենք, որ կը քալենք, մեզմէ առաջ շատեր քալած են, եւ կը յուսամ, որ մեզմէ աւելի լաւերն ալ պիտի գան, մեզմէ աւելի գործեր պիտի ընեն» (Պէրպէրեան Ն., 27 յուլիս 1983. Լիզպոնի հինգին գերագոյն գոհաբերութիւնը հայ դատի պայքարին, «Ասպարէզ», 2011, հուլիս 28: <http://asbarez.com/arm/105694/>)




1590. Հուշակոթող (նվիրված Մեծ եղեռնին). ոճավորված, արձանագրությունը՝ փորագիր, 18 տող.

Նահատակութիւն վասն հաւատոյ եւ հայրենեաց, | յարութիւն վասն կենաց եւ հատուցման: | Ապրիլ 24, | 1915:

Կառուցաւ | ապրիլեան Մեծ եղեռնի յուշարձանս | յառաջնորդութեան | գեր(ա)շ(նորհ) տ(եր) Սուրբնայ արք(եպիսկոպոս) Գաթարոյանի, | արդեամբ | Գասապեան եղբարց, | յերախտագիտութիւն եւ ի կատարումն | պատուէրին իօրն իւրեանց, | հանգ(ու)ց(եալ) Յակոբ Գասապեանի | որդի Կարապետի՝ ուրֆացի: | Նախագիծ եւ իրագործում՝ ճարտ(արապետ) Անդրանիկ Մարկոսեան, | ճարտ(արապետ) Զաւէն Պարտազճեան: | 24 ապրիլ, 1994:

Հրատ. *առաջին անգամ:*



Ծանոթ. Հակոբ Գասապեանը 1928 թ. Հոնոլի Սթ. Աստվածածին եկեղեցու բաղկան խորհրդի ատենապետն էր («Տարե», 1929, էջ 384): Հիշվում է 1955 թ. հայկաբանակ ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ ամուսնացած էր և ուներ 3 տղա, 2 աղջիկ (Մանուկեան Ա., նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 8):



1591. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգչին | տեր եւ տիկին | Խաչատուրեաններ՝ | Յակոբ, 1902-1995, | Մարթա՝ | ծն(եալ) Համբարձումեան, | 1910-1995: | Խարբերոցի:

Հրատ. *առաջին անգամ:*

1592. Տապանաքար և խաչքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ գետեղված է խաչքար, արձանագրությունը՝ սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Գեորգ | Եսայեան, | 1920-1995, | Ուրֆա-Հալէպ:

Հրատ. *առաջին անգամ:*




1593. Հուշակոթող (նվիրված ՄԳՀԿ-ի նահատակ առաջնորդներին). բաղկացած է երկու մասից՝ սյունից (վերնամասում՝ Փարամազի կիսանդրին) և պատվանդանից, արձանագրությունը՝ սև մարմարե սյան վրա, 23 տող, պատվանդանին ագուցված մարմարե երկու սալիկներին, 6 տող, հուշակոթողին հարավից կից մարմարե սալիկին, 8 տող.



Սյան վրա, ներկագիր.

Հայագրի | քսան | անմահներ՝ | Փարամազ, | Ա(րամ) Աչքբաշեան, | տոթթ(որ) Պէննէ, | Գ(եղամ) Վանիկեան, | Թ(ովմաս) Թովմասեան, | Հ(րանտ) Եկաւեան, | Ե(րուանդ) Թովուզեան, | Ռ(ուբէն) Կարապետեան, | Մ(ուրատ) Զաքարեան, | Ա(րմէնակ) Համբարձումեան, | Գ(ամնիկ) Պոյաճեան, | Ե(րեմիա) Մանանդեան, | Յ(ովհաննէս) Եղիազարեան, |



Մ(կրտիչ) Երէցեան, | Յ(ակոր) Պասմաճեան, | Գ(արեգին) Պօղոսեան, | Ա(բրահամ) Մուրատեան, | Մ(ինաս) Քէշիշեան, | Ս(մբատ) Գլըճեան, | Պ(օղոս) Պօղոսեան:

Պատվանդանին ագուցված սալիկ Ա, փորագիր.

Դուք մեզ՝ քսաններս կը կախէք, սակայն մեր տետէն | քսան հազարներ պիտի գան: | Տոթթ(որ) Պէննէ:

Պատվանդանին ագուցված սալիկ Բ, փորագիր.

Դուք վաղը արեւելքի հորիզոնին վրայ պիտի տեսնէք | արշալոյսը սոցիալիստական Հայաստանի: | Փարամազ:

Հուշարձանին հարավից կից մարմարե սալիկին, փորագիր.

Կառուցաւ յուշակոթողս | ի յիշատակ | նահատակաց քսան կախադանաց | յառաջնորդութեան | գեր(ա)շ(նորհ) տ(էր) Սուրէն ս(րբազան) արք(եպիսկոպոս) Գաթարոյեանի, | յամի տեառն 25 ապրիլ 2004, | կազմակերպութեամբ | Տ(խրունի) ո(ւսանողական) ե(րիտասարդական) մ(իութեան) վարչութեան:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. նրանք 1914 թ. հուլիսի 16-ին օսմանյան իշխանությունների կողմից հնչակյանների ձերբակալությունների ժամանակ բանտարկվել են և ապա կախադան բարձրացվել Կ. Պոլսում (Պողոսյան Հ., Փարամազ (Մատթեոս Սարգսյան), «ՊԲՀ», 1988, № 2, էջ 108) 1915 թ. հունիսի 15-ին (Ամիրջան Հ., Հավերժության ճամփորդները, Երևան, 2012, էջ 34):

Մատթեոս Սարգսյանը (Փարամազ) ծնվել է 1863 թ. Մեղրիում (նշվ. աշխ., էջ 33), Հակոբ Պասմաճյանը՝ 1888 թ. Քիլիսում (նշվ. աշխ., էջ 35), Մինաս Քէշիշյանը՝ 1879 թ. Կիրասունում (նշվ. աշխ., էջ 37), Մմբատ Գլըճյանը՝ 1885 թ. Բաղեշում (նշվ. աշխ., էջ 39), Վահան Պոյաճյանը (Ռուբեն Կարապետյան)՝ Չմշկաձագում (նշվ. աշխ., էջ 41), Արմենակ Համբարձումյանը՝ 1880 թ. Տենգելիում (նշվ. աշխ., էջ 45), Աբրահամ Մուրադյանը՝ 1889 թ. (նշվ. աշխ., էջ 47), Հրանտ Եկավյանը՝ Արաբկիրում (նշվ. աշխ., էջ 51), Գարեգին Պողոսյանը՝ 1885 թ. Շապին-Գարահիսարում (նշվ. աշխ., էջ 53), Պողոս Պողոսյանը՝ 1862 թ. Ակնում (նշվ. աշխ., էջ 55), Մուրադ Չաքարյանը՝ Յրոնք գյուղում (նշվ. աշխ., էջ 57), Երեմիա Մանանդյանը՝ Կ. Պոլսում (նշվ. աշխ., էջ 60), Սկրտիչ Երեցյանը՝ Ապուշեխ գյուղում (նշվ. աշխ., էջ 63), Գեղամ

Վանիկյանը՝ 1884 թ. Վանում (նշվ. աշխ., էջ 65), Երվանդ Թոփուզյանը՝ Պարտիզակ գյուղում (նշվ. աշխ., էջ 68), Հովհաննես Ղազարյանը (Եղիազարյան)՝ Կեսարիայում (նշվ. աշխ., էջ 70), Գառնիկ Պոյաճյանը՝ 1888 թ. Կ. Պոլսում (նշվ. աշխ., էջ 72), Գրիգոր Կարապետյանը (Արամ Աչքալաշյան)՝ 1869 թ. Արաբկիրում (նշվ. աշխ., էջ 49: Հմմտ. Ով ով է. հայեր, հ. 1, էջ 108), Պետրոս Մանուկյանը (Դոկտոր Պեննե)՝ 1881 թ. Հյուսեյնիկ գյուղում (www.genocide-armenian-genocide.php):



Մատթեոս Սարգսյան, Գրիգոր Կարապետյան, Պետրոս Մանուկյան, Գեղամ Վանիկյան, Թովմաս Թովմասյան, Հրանտ Եկավյան, Երվանդ Թոփուզյան, Վահան Պոյաճյան





1594. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 4 տող.

Ատա հանգչին | Էդաս եւ Միհրան | Սարգիստեան- (ներ): | Սասունցի:

Հրատ. *առաջին անգամ:*



1595. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Ատա հանգչին | Խաչիկ եւ Ուարտէ | Առաքելաններ: | Սասունցի:

Հրատ. *առաջին անգամ:*



1596. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց միստին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Ատա հանգչին | սասունցի | Տօնապետ | Դազարի Տօնապետեան, | Ռիհան | Ասագեան, | Կարապետ, Վարդուհի | Դավիթեաններ:

Հրատ. *առաջին անգամ:*




1597. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Ատա հանգչին | Մելքոն Կիրակոսեան, | Ասագեաններ՝ Ճեմիլէ եւ Պէշիր: | Սասունցի:

Հրատ. *առաջին անգամ:*



Մուրադ Ջաքարյան, Արմենակ Համբարձումյան, Գառնիկ Պոյաճյան, Երեմիա Մանանդյան, Հովհաննես Դազարյան, Սկրտիչ Երեցյան, Հակոբ Պասմաճյան, Գարեգին Պողոսյան, Աբրահամ Մուրադյան, Մինաս Քեշիշյան, Սմբատ Գլըճյան, Պողոս Պողոսյան



1598. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Սասունի | Հրուտ գիւղէն | տիար Յակոբ | Մանուկեան:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ըստ Հալեպում պահպանված թվակիր այլ տապանաքարերի հետ համանման ոճական առանձնահատկությունների, ինչպես նաև գրչագրական առանձնահատկությունների ուսումնասիրության՝ թվագրում ենք ԺԹ դարավերջով: Հավանաբար 1947 թ. փոխադրվել է Ազիզիեի գերեզմանոցից:

Հրուտ գյուղը գտնվում է Արևմտյան Հայաստանի Բաղէշի նահանգի Սասուն գավառի Հազո-Խարջոզ գավառակում: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Յուրեքլի (Yüreklî):



1599. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, կոթողաձև, արձանագրությունը՝ կոթողի արևելահայաց նիստին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Դամբարան | Գառնիկեան գերդաստանի, | անջրդեցի, Հալէպ: | Famille Karnikian:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Պողոս Գառնիկյանը մինչև 1909 թ. Հալեպում գործող Անջրդիի բարեսիրաց միության անդամ էր: Նշյալ թվականին միությունը կազմալուծվում է, որի 13 մեջիդիե գումարը մնում է Պողոսի մոտ: Նույն թվականին նա պատրաստակամությամբ հայտնում է, որ կարող է գումարը վերադարձնել միայն բարեգործական նպատակներով գործածելու պայմանով (**Քէշիչեան Վ.**, Հալէպի Հայկական գաղթածախի..., էջ 223):

Տիգրան և Վարդանուշ Պ. Գառնիկյանները 1912 թ. գտնվում էին Հալեպում և Անջրդիի Վարդանյան կրթասիրաց միության անդամներից էին (Կանոնագիր Անջրդիի Վարդանեան կրթասիրաց միության, էջ 11):



1600. Տապանաքար. քառաստիճան պատվանդանի վրա, դեպի ներս կորացված նիստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 3 տող.

Տապան սաս(ու)նցի ջրթնցի | Անահիտ Պետէ Սահակեան, | ծնաւ 1920, հանգեաւ 13:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ջրթնը Ջրթնիկն է:



1601. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 3 տող.

Այս է տապան | հանգստեան, | ս(ա)ղմկացի:

Հրատ. առաջին անգամ:



ԱՅՍԷՏԱՊԱՆ
ՀԱՆԹՅՆԵԱՆ
ՍՂՄԿՑԻ

Ծանոթ. ըստ Հալեպում պահպանված թվակիր այլ տապանաքարերի հետ համանման ոճական, ինչպես նաև գրչագրական առանձնահատկությունների ուսումնասիրության՝ թվագրում ենք ԺԹ դարավերջով: Հավանաբար 1947 թ. փոխադրվել է Ազիզիեի գերեզմանոցից:

1602. Աղբյուր. արձանագրությունը՝ ճակատին ամրացված մարմարե սալիկին, մեկըմեջ փորագիր և ձեռագիր, 8 տող.

Արդեամբ Յակոբ | Սէմէրճեանէ | ի յիշատակ քրոջը | հ(ա)ն(գուցեալ) Ատրիմէ | Կարապետեան(ի) | ծն(եալ) Սէմէրճեան | ընտանիքէն, | ծն(աւ) 1927-1985, մահ(ացաւ) Ֆրանսա:

Հրատ. առաջին անգամ:



1603. Աղբյուր. արձանագրությունը՝ աղբյուրի ճակատին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Ի յիշատակ | Յովսէփ եւ Շիրազ | Համամճեան-
ներու | անշէջ եւ անմահ հոգիներուն:

Հրատ. *առաջին անգամ:*

Ծանոթ. *Հովսէփ եւ Շիրազ Համամճեանների հիշատակին 2006 թ. Սր. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում կառուցվում է մոմս-սեղան (տե՛ս Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արձ. № 13):*



1604. Աղբյուր. արձանագրությունը՝ ճակատին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.

Յիսուս ըսաւ. | Ամէն, ով որ այս ջուրէն խմէ, | նո-
րէն պիտի ծարաւի, | բայց ով որ խմէ այն ջուրէն, |
որ ես անոր պիտի տամ, | յաւիտեան պիտի չծարա-
ւի: | Յովհ(աննու) 4. 13: | Ի յիշատակ | օր(իոր)դ
Սօսէ Պշարճեանի:

Հրատ. *առաջին անգամ:*



1605. Աղբյուր. արձանագրությունը՝ ճակատին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Տէր աստուած, | ձեր մշտահոս | ողորմածու-
թեամբը | յաւերժացուր | յիշատակը իմ բարեպաշտ
| ծնողներուս: | Կարապետ Գրմբեան:

Հրատ. *առաջին անգամ:*



1606. Աղբյուր. արձանագրությունը՝ ճակատին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.



Ի յիշատակ | հանգուցեալ | Ռեբեկա | Գանտի-
լեանի:

Հրատ. *առաջին անգամ:*

1607. Աղբյուր. ոճավորված, արձանագրությունը՝ ճակտո-
նին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աղբիւրն այս | ջինջ եւ անուշակ | անմահութեան
է յիշատակ | Յովհաննէսին մեր Օհանեան, | որ է
տունէն Սասունական | Սքրեանց զիղ հերոսական:
| Ով որ խմէ ու զովանայ, | ողորմի մը հոգւոյն թող
տայ:

Հրատ. *առաջին անգամ:*



Ծանոթ. *Սքրեանց (Սքրենք, Սկրենք) գյու-
ղը գտնվում է Արև-
մտյան Հայաստանի
Բաղեշի նահանգի Սա-
սուն գավառի Փսանք
գավառակում: Ներկա-
յումս պաշտոնապես
վերանվանվել է Թոփ-
լուջա (Topluca):*

1608. Աղբյուր. արձանագրությունը՝ ճակատին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 3 տող.

Ի յիշատակ | Գասպարեան եւ Խանճեան | զեր-
դաստանաց ննջեցելոց:

Հրատ. *առաջին անգամ:*



1609. Տապանաքար. դեպի ներս կորացված միստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարի երեսին և հարավահայաց միստին, փորագիր, 9 տող.



Հարավահայաց միստին.

Տապան Ասատուր ..., | ծնաւ 1866 ի Ձէյթուն ..., | ապ(րիւ) 23: Երեսին.

Երբ այցելել կուգաք շիրիմիս, | լսեցէք դուք խօսքերն սրտիս, | ամենայն ինչ հօս կը ծնի | ու կը մեռնի, թուն ողբալի | միակ անմահ և մշտակայ, | գործը կայ ու կմնայ:

Հրատ. առաջին անգամ:

Շանթ. կրում է 1863 համարը:

1610. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարի երեսին, ելնդագիր, 1 տող արաբերեն.

.المرحوم اسكندر بن يولس مينا.

Թարգմ. Հանգուցյալ Իսքանդար՝ Բուլոս Սինասի որդին:

Հրատ. առաջին անգամ:

Շանթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 108): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:



1611. Տապանաքար. քառաստիճան պատվանդանի վրա, դեպի ներս կորացված միստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ հյուսիսային միստին, փորագիր, 2 տող.

Վառվառու Մաննիկեի փոքրիկն՝ | Ժիրայր Մամիկոնեան:

Հրատ. առաջին անգամ:



Շանթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 60): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

1612. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, կոթողաձև, արձանագրությունը՝ կոթողի հարավահայաց և արևելահայաց միստերին ամրացված մարմարե երեք սալիկների, 20 տող.

Հարավահայաց միստին՝ ելնդագիր, 12 տող հայերեն.

Աստ հանգչի բժշկապետն՝ անմման | հայ տոհմէ սերած Պաղտասար Փափազեան, | Պէյնէր ծագմամբ, պաշտօնով գայմագամ: | Ողբացին շատեր այս մեծ կորստեան, | իր դուստրն հարազատ լա-



ցաւ: Էօժէնին, | հազիւ բոլորած քսանչորսն գարունին, | մերժեց կեանքն ու պերճանքն աշխարհին, | հօրն իւր կարօտցած էջ յայսմ շիրմին: | Ա՛հ, ի՞նչ էր կեանքն այն խեղճ այրին | կորսնցնող սրտահատորն ու նազելին, | աշխարհ համայն սես էր հէք Գաթրիինին, | շուտով միացաւ դստեր ու կողակցին:

Հարավահայաց միստին՝ փորագիր, 1 տող անգլերեն.

Angele Papazian, Beyrouth.

Արևելահայաց միստին՝ ելնդագիր, նույն բովանդակությամբ 7 տող արաբերեն.

الطبيب يبكي بغده صار المرتجى للبرء في الدنيا من الدا و الدفين | خدم الانام بخيرة و عناية قد نمتا (°) عن خلق راحلنا الاين | فيموته ابنته العزيزة ايجيني بكت المصاب بدمع ترمنجين (°) | و من الاسى سارت تجاور والدا قد كان بعد الله مؤلمها المكين | ابت التعازى كاترين بقعد بنتا لها وقرينها الكنز الثمين | حتى او اضمتم لغير كليهما ابدى لسان الحزن ذا المعنى المبين | ثم استراحوا ارخوابل ههنا يثوى الطبيب وبنته مع كاترين.

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. Պաղտասար Փափազյանը ծնվել է Բաղդադում: Քաղաքապետարանի բժշկապետ ակնցի Լևոն բեյ Փափազյանի որդին էր: 1890-ական թթ. սկզբին հիշվում է որպես հազարապետ (ՊՀՀ, էջ 977-978), իսկ 1898 թ.՝ Հալեպի զինվորական հիվանդանոցի բժիշկ: Արժանացել է Կրետե կոգու և Հպարտության շքանշանների (كتاب المذكور، الجزء الأول، ص ٢١٧، محمد فؤاد عيتابي، نجوى عثمان):

Որպես Հալեպում Հայ ազգային խորհրդի անդամ՝ 1919 թ. ընդգրկվում է հալեպահայերի հանդեպ կատարված կոտորածներին մասնակցած ձերբակալվածների հետաքննությանը զբաղվող քննիչ հանձնաժողովի կազմում (Թովմուզյան Հ., նշվ. աշխ., էջ 214-215):

1613. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ոճավորված, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարի հարավահայաց նիստին, ելնդագիր, 2 տող արաբերեն.

هنا ترقد المرحومة بهية بنت نيكو غوص فتال | ارملة
المرحوم جرجي حجار ارفان.

Թարգմ. Այստեղ է ննջում հանգուցյալ Բահիեն՝ Նիկողոս Ֆաթթալի դուստրը, այրին հանգուցյալ Ջրջի Հաջջար Արֆանու:


Հրատ. առաջին անգամ:



1614. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկներին, 4 տող.

Աստ հանգչին | Բագրճեաններ՝ | Միհրան, Աղա-
նի, Չապել: | Կեսարեացի:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. գտնվում էր 6-րդ մասում (համար 962): Այժմ գոյություն չունի: Տեղահանվել է 2007 թ.:

1615. Տապանաքար. ուղղանկյունաձև, տեղահան, արձանագրությունը՝ փորագիր, 13 տող.

Հագիվ 20 տարիս | բոլորած կոկոն | էյի դեռ չը-
բացուլած, դպրոցիս շրջալնը ասարտած, | վկայա-
կանս դեռ | նոր առած՝ | շուտով հասաւ մալիը ան-
գութ, աղաչալնքներս էր անօգուտ, | պոկեց սրտեդ,
իմ խեղճ | մայրիկ, դժբաղդ | աղչիկդ մէկ հատիկ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. կրում է 2054 համարը:



ՇԵԽ-ՄԱԳՍՈՒԴԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳԵՐԵՉՄԱՆԱՏՈՒՆ



Տեսարան գերեզմանատնից (լուս.՝ 2007 թ.)

Տեղադրություն. գտնվում է Հալեպից հյուսիսարևմուտք՝ հայ առաքելական գերեզմանոցից հյուսիս՝ Շեխ-Մագսուդ քաղամասի հարևանությամբ: Տեղադրությունն է՝ N 36° 13' 43.38", E 37° 09' 15.07":

Պատմություն. մինչև 1927 թ. ավետարանական հայերն իրենց հանգուցյալներին ամփոփում էին Ա-զիզիեի գերեզմանատանը: Նույն թվականին, երբ քաղաքապետարանը փակում է գերեզմանոցը, ավետարանականների համար ևս առանձին նոր տեղ է հատկացնում քաղաքի հյուսիսում գտնվող Շեխ-Մագսուդի շրջանում¹: Գերեզմանոցում ամփոփվում են նաև ավետարանական այլազգի հանգուցյալներ:

Վիճակագր. ներկայացնում ենք 104 միավոր արձանագրություն, որոնցից 1-ն առաջին անգամ ընդօրինակել և հրատարակել է Ռ. Ջեբեջյանը: 103 արձանագրություն հրատարակվում է առաջին անգամ:

1. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, էլիպսաձև, արևմտյան եզրին՝ անհետացած լուսանկարով քառակող կոթող, արձանագրությունը՝ կոթողի արևելահայաց միստին և տապանաքարին, փորագիր, 20 տող.

Կոթողին.

Աստ | հանգչի | տօքթօր | Մամուէլ | Շմաունեան, | ծն(աւ) 1855-ի հ(ու)ն(վար) 31, | հանգեաւ 1915 | դեկտ(եմբեր) 12:

Տապանաքարին.

Բըժիշկ մեծանուն, | գիտնական խոհուն, | իր կեանքն էր փառքով | ու պատուով բերուն, | յանմըխիթար սուգ | թողով զիւր այրին, | վաթսուռամեայ զոհ | եղաւ չար բաղդին, | խորին ցաւ(°) ..., | կսկիծն ընդհանուր: | Տէ՛ր, ծոցդ ընդունէ | իր հոգին արդար(°):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. հայտնի է, որ 1908 թ. Սամվել Շմավոնյանը նյութապես ու բարոյապես օժանդակում է Հալեպի Աղյուլ քաղամասում հիմնված դարմանատանը, ինչպես նաև բժշկական անհատույց ծառայություններ մատուցում աննպաստ պայմաններում ապրող հալեպաբնակ սասունցիներին (**Քէշիշեան Վ.**, Սասուն-Հալեպ..., էջ 128-129): 1908 թ. դեկտեմբերի 11-ին Բերիտ թեմի քաղաքական ժողովի կողմից նշանակվում է Հայուիյաց խնամակալության



1. محمد فؤاد عينتابي، نجوى عثمان، كتاب المذكور، الجزء الثالث، ص 83. 1



հանձնաժողովի անդամ (ՀԱԳ, ֆ. 1421, ց. 5, գ. 17, ք. 4) և մի քանի ազգայինների հետ միասին դիմում է Բերիո թեմի քաղաքական ժողովին՝ պահանջելով արտոնություն տալ «...յանուն տվելոց՝ տարեկալի օրը տիկնանց կողմանե հանդեսի մը...» կազմակերպման համար (Եշվ. վավ., ք. 3):

1909 թ. ապրիլի 16-ին նշանակվում է «Արկածեղոց նպաստից» հանձնաժողովի անդամ (Կիլիկիայի աղետյայների համար) (նույնի՝ գ. 20, ք. 4): 1909 թ. դեկտեմբերի 11-ին հիշվում է որպես նույն հանձնաժողովի ատենապետ (նույնի՝ գ. 24, ք. 2), իսկ դեկտեմբերի 13-ին ընտրվում է ազգային դպրոցի ատենադպիր (նշվ. վավ., ք. 12): 1910 թ. փետրվարի 18-ին Բերիո թեմի քաղաքական ժողովի կողմից նշանակվում է Անտիոքի արհեստանոցի հանձնաժողովի անդամ (նույնի՝ գ. 26, ք. 4), իսկ մարտի 23-ին ընտրվում է ՀԲԸՄ Հալեպի տեղական անդրանիկ մասնաժողովի ատենապետ: Վերընտրվում է նաև 1912 թ. հունվարի 18-ին, 1914 թ. փետրվարի 8-ին և 1915 թ. փետրվարի 10-ին (**Քեշիշեան Վ.**, Հալեպի Հայկական գաղթօճայի..., էջ 148-149):

Նրա մահախոսականում նշված է. «...Հալեպի երևելիներեն մեկը մեռած է տեղոյն մեջ: Անիկա վերջերս դեռ նոր ազատուած էր իր տասնևհինգ ամեայ բանտարկութենե, հիծումած վիճակով մը: Սակայն, բանտէն արձակուելէ ետք, չի նայելով իր անձնական տկարութեան, ջանացեր է օգնել տարագրուած թշուառ հայ հիւանդներուն: Եւ այդ անձնուէր ջանադրութեան միջոցին գոհ գնացած է անիկա» («Կոչնակ», 1916, № 25, էջ 655-656): Հաշվի առնելով 1908-1915 թթ. նրա կատարած գործունեությունը՝ ենթադրում ենք, որ 15-ամյա բանտարկությունն անհավանական է:

2. Տապանաքար. դեպի ներս կորացված նիստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչին | Նազար Պէրէճիքլիեան, | ծն(եայ) 1855, հանգ(եայ) 1917, | Ովսաննա, | Պէրէճիքլիեան, | ծն(եայ) 1869, հանգ(եայ) 1932:

Հրատ. առաջին անգամ:



3. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարի արևմտա-հայաց կողին, փորագիր, 7 տող.



Աստ հանգչի | Կ. | Պապիկ Պապիկեան, | այն-թապալի, | ծնա-հանգ(եայ), | 1850-1921 | հ(ու)նիս 8: Հրատ. առաջին անգամ:

4. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, Աստվածաշնչից 4 տող հայատառ օսմաներեն, որից ցած՝ փորագիր, 4 տող հայերեն.

Բնիկ այնթապալի | տոքթ(որ) Յովսէփ Գ. Պ[էգ]-լճեան, ծնաւ 1865 փետ(րուար) 12, | հանգեաւ 1922 փետ(րուար) 18:

Հայատառ օսմաներեն.

Էմվաթ իպն Ուլլահըն | սէտաարընը իշիտիպ, իշի-լտենլըր տալի տիրիլէճէլլըրտիր: Յովհ(աննու) 5. 25:

Թարգմ. Մեռելներն աստուծոյ որդու ձայնը կ'լսեն,

և լսողները կ'ապրեն:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Հովսէփ Պեզճյանն Այնթապի քոլեջի հանգուցյալ պրոֆ. Այիքսան Պեզճյանի եղբորորդին էր, բողոքականների առաջնորդ Ջենոբ Պեզճյանի հայրը («Հայաստանի կոչնակ», 1922, № 14, էջ 475): Ավարտել է Այնթապի քոլեջի բժշկական բաժինը: Կարճ ժամանակ աշխատել է Ուրֆայում, այպա վերադարձել Այնթապ և (**Սարաֆեան Գ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 677) շուրջ 20 տարի աշխատել ամերիկյան հիվանդանոցում «իբրե ներքին բժիշկ»: Այնթապի ազգային միության ատենապետն էր զինադադարից հետո: 10 տարի եղել է ՀԲԸ Միության Այնթապի մասնաճյուղի ատենապետը («Հայաստանի կոչնակ», 1922, № 14, էջ 475): Սարաֆյանը նրա ծննդյան թվականը սխալմամբ նշել է 1866, իսկ մահվանը՝ 1924:



5. Տապանաքար. դեպի ներս կորացված նիստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 13 տող.

Աստ հանգչի(ն) | այնթապցի | Չնորհոգեաններ՝ | օր(իորդ) Չիֆօրա, | ծն(աւ)-մեռ(աւ) | 1864-1940, | օր(իորդ) Նուրիձա, | ծն(աւ)-մեռ(աւ) | 1882-1960, | եղբորորդեն՝ | Յարութիւն, | ծն(աւ)-մեռ(աւ) | 1919-1923:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Չնորհոգեան ազգանվան Չ տառը սխալ է փորագրված, պետք է լիներ Շ, իսկ եղբորորդեն-ի վերջին ե տառը՝ ի:



Աստ հանգչի | մարաշցի | տ(ի)կ(ի)ն Լուսֆիա | Պուլլորճեան, | ծն(աւ) 1895 մ(ար)տ 2, | մ(ե)ռ(աւ) 1927 օգ(ոստոս) 22:

Հրատ. առաջին անգամ:

9. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Կարապետ | Թ. Թօփճեան, | ծնաւ Այնթապ, | 1868, | հանգեաւ 1928:

Հրատ. առաջին անգամ:



6. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ ննջէ ի տէր | պատ(վելի) Նազարէթ | Տարագճեան, | ծն(աւ) Անթէպ, | 1885-1926: | Քրիստոս իմ մարմինիս մէջ պիտի | փառատրուի թէ՛ ապրելովս եւ թէ՛ մեռնելովս: Փիլ(իպոս) Ա (1). 20:

Հրատ. առաջին անգամ:



10. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողին, փորագիր, 6 տող.

Այս է տապան | այնթէպցի | Կարուն | Ալմօ(յ)եան, | ծ(նեալ) 1854, | հ(անգեալ) 1929 մայ(իս) 13:

Հրատ. առաջին անգամ:



7. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչի | Նուրի | Գարամանուկեան, | ծնաւ Այնթապ, | 1879 հոկտ(եմբեր) 25, | հանգեաւ | 1927 նոյ(ե)մ(բեր) 25:

Հրատ. առաջին անգամ:




11. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Երկնչիք ի տիառնէ | եւ | պահեսչիք զպատուի-
նանս նորա: | Աստ հանգչի | Յարութիւն Ս. Խարաճ-
ճրեան, | ծն(եալ) յԱյնթապ, 1864 յուլիս 2, | հան-
գ(եալ) ի Հալէպ, 1929 յունիս 29:

Հրատ. առաջին անգամ:

8. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.



12. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողմին, փորագիր, 5 տող.

Աստ ննջի | այնթապցի | Յակոբ Գալայճեան, |
ծնաւ 1840, | մեռաւ 1930 (°):
Հրատ. առաջին անգամ:



13. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 12 տող.

Գամբարան | տիկ(ին) Եւնիկէ՝ | քոյր Նգիրի |
Եագուպեան: | Ես ծաղիկ մէի, | թարամէցայ, | իմ
վիշտակոծ | եղբայրս խոր | վշտի մէջ թող: | Ծն(աւ) 5
ապ(րիլ) 1902, | Ալպիստան, | մ(ե)ռ(աւ) 15 օգ(ոս-
տոս) 1930:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. գտնվում է այբխտանցի Նուրի, Ազնիվ, Ռուպեր և
Հովհաննես Եագուպյանների տապանաքարին կից: Նրանց մա-
սին տես՝ Շեն-Մագսուրի ավետարանական գերեզմանատան
արձ. № 84:



14. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողմին, փո-
րագիր, 8 տող.

Աստ ննջի | ի տէր | օր(իորդ) Պեաթրիս | Լօշխա-
ճեան, | ծնեալ 1908 | սեպ(տեմբեր) 12, Այնթապ, |
հանգեաւ 1930 | յուլիս 12:
Հրատ. առաջին անգամ:



15. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝
փորագիր, 3 տող.

Սամուէլ Փոլլատե(ա)ն, ծն(աւ) | 1910, մե(ռաւ) 1930:
Հրատ. առաջին անգամ:



16. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողմին, փո-
րագիր, 6 տող.

Աստ հանգչի | այնթապցի | Ներսէս | Իշխանեան,
| ծ(նեալ) 1872, | հ(անգեալ) 1931 դեկ(տեմբեր) 12:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. դեղագործ Ներսես Իշխանյանը 1921 թ. մասնակցել է
Հայկազուն հայ ավետարանականների համար դպրոց հիմնելու
գործընթացին (Պապապանեան Մ., նշվ. աշխ., էջ 173, 180):



17. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղ-
ղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողմին, փո-
րագիր, 5 տող.

Աստ հանգչի | Ռահել Փափագեան՝ | ծնեալ Չա-
միչեան, | այնթապցի, | 1879-1931:

Հրատ. առաջին անգամ:



18. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողմին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | մարաշցի | վեր(ապատվելի) Յակոբ | Գումրուեան, | 1854-1932:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Հակոբ Գումրույանը 1880 թ. ավարտել է Մարաշի Աստվածաբանական ճեմարանը: Որպես ուսուցիչ՝ պաշտոնավարում է Չեյրունում, ապա Քեսարում, որտեղ էլ ձեռնադրվում է 1889 թ.: 1895 թ. նշանակվում է վերապատվելի Հարություն Դեմանյանի որբանոցի տնօրեն (Գալուստեան Գ., նշվ. աշխ., էջ 483, 675): 1911-1914 թթ. պաշտոնավարում է Սսի ավետարանական եկեղեցում (Քելեշեան Մ., նշվ. աշխ., էջ 357), որից հետո տարագրվում է Հալեպ և Բիթիաս (Գալուստեան Գ., նշվ. աշխ., էջ 675): Վախճանվել է 1932 թ. հունվարի 24-ին Հալեպում՝ փեսայի՝ Ստեփան Բուայանի բնակարանում (Գալուստեան Գ., նշվ. աշխ., էջ 675) շաքարախտից (Քելեշեան Մ., նշվ. աշխ., էջ 357): Հուղարկավորությունը կատարվել է Հալեպի Էմանուել եկեղեցում (Գալուստեան Գ., նշվ. աշխ., էջ 675): Վեր. Հ. Գումրույանի նախածեղևած և կիսատ մնացած երեցատան դպրոցն ամբողջացվում է նրա մահից հետո, իսկ օժանդակ ընկերակցությունը կնոջ՝ Ռահել Գումրույանի ջանքերով եկեղեցուն նվիրում է «վայելուչ և մեծ զանգակ» (Քելեշեան Մ., նշվ. աշխ., էջ 357):

Ստեփան Բուայանի մասին տես Շեխ-Մագսուդի ավետարանական գերեզմանատան արձ. № 32:



Դեմանյան որբանոցի տնօրեն Հակոբ Գումրույանը սաների հետ

19. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողմին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | այնթապցի | Ռվսաննա | Մահսերեճեյան, ծ(նաւ) 1873-1932:


Հրատ. առաջին անգամ:



20. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ ելնդագիր, 9 տող.

Կասեայ (°) Կ. | Փօլատեան, | նեմշեհիրցի, | ծնաւ 1912 եւ | մեռաւ 1932 փ(ետրուար) | 11: Քրիստոսով | մեռածները | յարութիւն | պիտի առնեն:

Հրատ. առաջին անգամ:



21. Տապանաքար. ուղղանկյունաձև, տեղահան, արձանագրությունը՝ սալիկին, փորագիր, 7 տող.

Յիսուս գիրկը | առաւ, օրհնեց | մանուկները: | Ուռֆա(յ)ի Կարմուռ | գողէն Յովսէփ | Մարգարեան, ծ(նեալ) | 1932 յ(ուն)իս 1, հ(անգեալ) յ(ու)լ(իս) 9:

Հրատ. առաջին անգամ:


Ծանոթ. գտնվում է կարմուշցի Մովսես և Մարի Մարգարյանների տապանաքարերին կից: Նրանց մասին տես Շեխ-Մագսուդի ավետարանական գերեզմանատան արձ. № 55, 58:



22. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողմին ազուցված մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | այնթապցի | Աննա Պէյօղեան, | ծնաւ 1867 մարտ 18, | հանգեաւ ի տէր, 1933:

Հրատ. առաջին անգամ:



23. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Մայրամ Հուզելեան, | ծն(եալ) 1880, Մալաթիա, | հանգ(եալ) 1933:

Հրատ. առաջին անգամ:



24. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողին, փորագիր, 5 տող.

Աստ հանգ(չ)ի ի տեր | վեր(ապատվելի) Կարապետ | Մ. Քէթեմեան, | կապանցի, | 1863-1934:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Կարապետ Քէթեմեանն ուսանել է Մարաշի և Այնթապի քոլեջներում (Գալուստեան Գ., նշվ. աշխ., էջ 686): 1895 թ. դասավանդում էր Այնթապի ավետարանական դպրոցում (Պաղասյան Բ., նշվ. աշխ., էջ 27, 36): 1902 թ. ավարտում է Մարաշի Աստվածաբանական ճեմարանը (Գալուստեան Գ., նշվ. աշխ., էջ 686): Եղեռնից հետո վերադառնում է Այնթապ և 1919 թ. հունվարի 19-ին մասնակցում վերաբացված ավետարանական եկեղեցու անդրանիկ արարողությանը. «...Վեր. Կարապետ Քէթեմեան կարողաց սուրբ գիրքը...» (Կոչնակ», 1919, № 17, էջ 535): 1923-1932 թթ. Հայկաի Բերել եկեղեցու առաջին հովիվն էր (Շնորհաբեկ Բ., նշվ. աշխ., էջ 6, 9), 1926 թ.՝ հայ ավետարանականների համայնքապետի օգնականը (Գալուստեան Գ., նշվ. հոդվ., էջ 306):

Կապանը գտնվում է Կիլիկիայում՝ Մարաշից 56 կմ հյուսիս-արևմուտք: Ներկայումս բուրքերենով արտասանվում է Գեբեն (Geben):



25. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողին ազուցված մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի ի տեր | վեր(ապատվելի) | Կարապետ Յ. Յարութիւնեան, | ծն(եալ) Զէյթուն, օգոս(տոս) 4 1866, | հանգ(եալ) Հալեպ, օգոս(տոս) 4 1934: | Ես եմ կեանքը:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Կարապետ Հարությունյանը 1890 թ. ավարտել է Այնթապի «Կեդրոնական Թուրքիա» քոլեջը, ապա Մարաշի Աստվածաբանական ճեմարանը: Դասավանդում է Մարաշի ակադեմիայում և ճեմարանում: Հովվական պաշտոններ է վարել Մարաշում և այլուր (Գալուստեան Գ., նշվ. աշխ., էջ 686): Եղեռնից



հետո վերադառնում է Այնթապ և 1919 թ. հունվարի 19-ին մասնակցում վերաբացված ավետարանական եկեղեցու անդրանիկ արարողությանը. «...առօրքը մատույց Վեր. Կարապետ Յարութիւնեան...» (Կոչնակ», 1919, № 17, էջ 535): 1923 թ. հիշվում է որպես պատվելի Հայկաի Էմանուել եկեղեցում (Պաղասյան Բ., նշվ. աշխ., էջ 180), իսկ Հայկաի հայ ավետարանականների համայնքապետ՝ 1926 (Գալուստեան Գ., նշվ. հոդվ., էջ 306), 1927 (Ոսկերիչեան Ե., նշվ. հոդվ., էջ 2) և 1930 թվականներին (Ջերեջյան Ռ., նշվ. աշխ., էջ 19): 1927-1934 թթ. հրատարակված «Նոր ավետաբեր» պարբերաբերի արտոնատերն էր (Կիրակոսյան Ա., նշվ. աշխ., էջ 399): Նրա մահից հետո շարաքարերը դադարել է գոյություն ունենալուց (Պարիկեան Հ., Վարժապետեան Յ., նշվ. աշխ., էջ 165):

26. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.

Աստ | հանգչի | Մանուկ | Մնջրեան, | մարաշցի, | ծ(նեալ) 1870, | հ(անգեալ) 1934/4/21:

Հրատ. առաջին անգամ:



27. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողին, փորագիր, 5 տող.



Աստ հանգչի | տիար Միսաք | Վ. Պարսումեան, | ծն(եալ) Այնթապ, 1878 մարտ 1, | հանգ(եալ) 1934 յունիս 2:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է այնթապցի Անդրանիկ Պարսումյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեխ-Մագսուդի ավետարանական գերեզմանատան արձ. № 66:

28. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողմն, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Էմմանուէլ | Խըրրոբեան, | ծն(եալ) 1907 սեպ(տեմբեր) 9, | հանգ(եալ) 1934 յուն(իս) 4, | այնթաքցի:


Հրատ. առաջին անգամ:




29. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 14 տող.

Այս է | դամբան | մարաշցի | Յասմիկ | Միսիսեանի, | ծն(եալ) 1933 | օգ(ոստոս) 29, Աթրզ, | հ(ան)-գ(եալ) 1934 դ(ե)կ(տեմբեր) 16: | Թոյլ տուք | մանկտուղ | զալ առ իս և | մի՛ արգելուք | զդոսա զի: | Ղ(ու)կ(աս) ԺԸ (18). 16:

Հրատ. առաջին անգամ:



30. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ հյուսիսահայաց միստին, փորագիր, 4 տող.



Այնթապցի | Աւետիս | Կեղոկիկիջուբեան, | [ծն] (եալ) 185..., հ(ա)ն(գեալ) 1935:

Հրատ. առաջին անգամ:

31. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողմն, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի ի տէր | տօքթ(որ) | Յարութիւն | Ն. Խալիֆա(յ)եան, | ծն(աւ) 1870, Այնթապ, | մ(ե)ռ(աւ) 16 յ(ու)ն(ի)ս 1935:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է այնթապցի Տոտո Խալաֆյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեխ-Մագսուդի ավետարանական գերեզմանատան արձ. № 35:



32. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողմն, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | մարաշցի | Ստեփան | Կ. Բուպեան, | 1875-1935:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ստեփան Բուպյանը 1920-ական թթ. Հալեպի երկու ատամնաբույժներից մեկն էր (Շորվողեան Ա., նշվ. հոդվ., էջ 394): 1930 թ. հիշվում է հալեպաբնակ մարաշցի ատամնաբույժների ցանկում (Գալուստեան Գ., նշվ. աշխ., էջ 842): Վերապատվելի Հակոբ Գոմրոյանի փեսան էր (նշվ. աշխ., էջ 675): Վերջինիս մասին տես Շեխ-Մագսուդի ավետարանական գերեզմանատան արձ. № 18:



33. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ հարավահայաց նիստին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | այնթապցի | տիկ(ին) Վիքթորիա
Լ. Լեւոնեան, | ծնաւ 1892 մարտ 1, | հանգ(եաւ) 3 օ-
գ(ո)ս(տոս) 1935:

Հրատ. առաջին անգամ:



34. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողին ա-
զուցված մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի ի տէր | տիկին | Մերիյէ Գ. Սարգի-
սեան՝ | ծն(եալ) Պալեօզեան, | ծն(եալ) Այնթապ,
1872 ապրիլ 12, | հ(ա)նգ(եալ) Հալէպ, 1936 յուլիս 8:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է այնթապցի Գևորգ Սարգիսյանի տապա-
նաքարին կից: Վերջինիս մասին տե՛ս Շեն-Մագսուդի ավետա-
րանակաճ գերեզմանատան արձ. № 59:



35. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողին, փո-
րագիր, 6 տող.

Աստ հանգչի | Տոտու Խալֆա(յ)եան, | այնթապ-
ցի, | ծնաւ-հանգ(եաւ), | 1874-1987 | դէգ(տեմբեր) 9:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է այնթապցի բժիշկ Հարություն Խալֆայա-
նի տապանաքարին կից: Վերջինիս մասին տե՛ս Շեն-Մագսուդի
ավետարանակաճ գերեզմանատան արձ. № 31:



36. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, դեպի
ներս կորացված նիստերով և կողերով, ուղղանկյունաձև, արձա-
նագրությունը՝ հարավահայաց նիստին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | քիլիսցի | Խաչէր Իշխանեան, |
ծն(աւ) 1882, մե(ռաւ) 1937:

Հրատ. առաջին անգամ:



37. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողին ա-
զուցված մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի ի տէր | դեղագործ տիար | Երուսուֆ
Ս. Տայրեան, | ծն(եալ) Այնթապ, 1885 յուլիս 16, |
հ(ա)նգ(եալ) Հալէպ, 1937 փետր(ուար) 13:

Հրատ. առաջին անգամ:



38. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարի երեսին և
մարմարե սալիկին, փորագիր, 14 տող.

Տապանաքարին.

Չավլէն | Խանճեան, | ծնած ի | Աղըն, 1909, |
հա(ն)գ(եալ) 1937 | յունվ(ար) 4:

Մարմարե սալիկին.

Աստ հանգչին | մայր եւ որդի | Խանճեաններ՝ |
Լուսաբեր, | 1892-1975, | Վազքէն, | 1912-1976: | Ա-
ղընցի:

Հրատ. առաջին անգամ:



39. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.

Աստ հանգչի(ն) | Աբրահամ | Գունտաքճրեան, | ծն(եալ) 1878, Գիլիս, | հանգ(եալ) 1938, | Խաթուն | Գունտաքճրեան, | ծն(եալ) 1886, Այնթապ, | հանգ(եալ) 1955:


Հրատ. առաջին անգամ:



40. Տապանաքար. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Գրիգոր | Պոյաճեան, | ծն(եալ) Այնթապ, | 1886-1938:

Հրատ. առաջին անգամ:




41. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողին ագուցված մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ ննջէ ի տէր | վեր(ապատվելի) | Ահարօն Ա. Շիրաճեան, | ծն(եալ) 1865 յունվ(ար) 18, ի Մարաշ, | հանգ(եալ) 1939 դեկ(տեմբեր) 6:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. Ահարոն Շիրաճյանն ուսանել է Մարաշի ավետարանական վարժարանում, ապա ուսումը շարունակել Այնթապի «Կեդրոնական Թուրքիա» քոլեջում մինչև 1886 թ.: 1889 թ. ավարտել է Մարաշի ճեմարանը՝ հետևելով աստվածաբանության դասընթացներին: Ուսումն ավարտելուց հետո ձեռնադրվում է պատվելի, հետո մեկնում է Անգլիա և 2 տարի ուսանում Էդին-



բուրգի «Նյու» քոլեջում: Որոշ ժամանակ բնակվում է Լոնդոնում և Եգիպտոսում: 1891 թ. դասավանդում է Մարաշի ակադեմիայում: 1894-1918 թթ. 10 անգամ բանտարկվում է (ամենաերկարը՝ 6 ամսով, ամենակարճը՝ 1 օրով) և ազատ արձակվում: 1895 թ. ենթարկվում է սուկայի չարչարանքների (Գալուստեան Գ., նշվ. աշխ., էջ 465, 933): 1914 թ. նշանակվում է Մարաշի հայ ավետարանական երկրորդ եկեղեցու հովիվ (Կիլիզեան Տ., Յուշամատեան Գեորգիանի վասպուրականի եւ Մարաշի հայրն. միութեան, Հայէպ, 1982, էջ 13): 1915 թ. ապրիլին տարագրվում է Հալեպ և նույն թվականի հուլիսի 31-ին հիմնում Հալեպի որբանոցը՝ գլխավորելով 7 տարի: 1922 թ. հրաժարվում է այդ պաշտոնից և հիմնում անօգնական աղջիկների համար պատասպարան (1934 թ. տնօրենն էր աղջկանց պատասպարան-աշխատանոցի) (Գալուստեան Գ., նշվ. աշխ., էջ 933): 1921 թ. մասնակցում է Մարաշի հայրենակցական միության Հալեպի մասնաճյուղի հիմնադրմանը և երկար տարիներ վարում ատենապետի պաշտոնը (Կիլիզեան Տ., նշվ. աշխ., էջ 13): 1922 թ. Կիլիկյան նպաստից միության վարչության անդամներից էր («Մուրիահայ տարեցոյց», Հայէպ, 1925, էջ 317): 1923 թ. մասնակցում է Հայկական կարմիր խաչի դարմանատան և ազգային ծերանոցի հիմնադրման աշխատանքներին (Մամուլեան Վ., նշվ. աշխ., էջ 134-135: Տես ծերանոցի արձ. № 3): 1926 թ. Հալեպի հայ ավետարանականների համայնքապետի օգնական-քարոզիչն էր (Գալուստեան Գ., նշվ. հոդվ., էջ 306), 1929 թ.՝ Հայկական կարմիր խաչի ատենապետը («Տաթև», 1929, էջ 380): Նույն թվականին նշանակվում է նորակազմ խնամատար մարմնի ենթահանձնախմբի անդամ, որի նպատակն էր օգնել Սիրիա հասած հայ նոր գաղթականներին (Ֆիշենկեան Ա., նշվ. հոդվ., էջ 309, 314): 1938-1939 թթ. պաշտոնավարում է Բեթել եկեղեցում՝ որպես հովիվ (Շնորհոքեան Մ., նշվ. աշխ., էջ 13): Երկար տարիներ անդամակցում է «Եփրատ» թերթի վարչությանը (Գալուստեան Գ., նշվ. աշխ., էջ 933):

Մամվելյանը սխալմամբ նրա ծննդյան թվականը նշել է 1867 (Մամուլեան Վ., նշվ. աշխ., էջ 135):

42. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | տիկ(ին) Ովսաննա | Կ. Գազան-ճեան, | ծն(ալ) Այնթապ, 1866, | հանգեալ ի տէր, | 1939 օգոստ(ոս) 6:

Հրատ. առաջին անգամ:



43. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողմին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Ճեմիլե Նալպանդեան, | քիլիսցի, | ծն(եալ) 1886, հանգ(եալ) 1939:

Հրատ. *ստաջին անգամ*:



44. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչին | տիկ(ին) Ռահել Տեմիրճեան, | ծն(եալ) 1868, հ(ա)նգ(եալ) 1940, | տիկ(ին) Լուիսիե Նազգաշեան, | ծն(եալ) 1890, հ(ա)նգ(եալ) 1976: | Այնթապցի:

Հրատ. *ստաջին անգամ*:



45. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչին | այնթապցի | Իլեսա Գալֆա(յ)եան, | ծն(եալ) 1876, հանգ(եալ) 1940, | Արուսեակ | Գալֆա(յ)եան, | ծն(եալ) 1889, հանգ(եալ) 1952:

Հրատ. *ստաջին անգամ*:



46. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Ասատուր | Փանոսեան, | ծն(եալ) 1887, | հանգ(եալ) 1940 | ապրիլ ամսի | ...:

Հրատ. *ստաջին անգամ*:



47. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Եագույ | Յ. Պերեճիքլեան, | այնթապցի, | ծն(եալ) 1877 նոյ(եմբեր) 5, | հանգ(եալ) 1941 նոյ(եմբեր) 4:

Հրատ. *ստաջին անգամ*:



48. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարի արևմտահայաց կողմին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | հաճի Յարութին | Խաչատուրեան, | ծն(եալ) Այնթապ, 1860, | հանգ(եալ) Հալեպ, 1943:

Հրատ. *ստաջին անգամ*:



49. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով քևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևմտահայաց միստին, փորագիր, 17 տող.

Միտեցէ՛ք զմիմիանց եւ ծառայեցէ՛ք զաստուած: | Աստ հանգչի | այնթապցի | Լեւոն Լեւոնեան՝ | տեր եւ տնօրեն | Ուսումնասիրաց վարժարանի: | Ծն(եալ) 1882, հանգ(եալ) 1943 | յունիս 21: | Եւ մի՛ վախնաք անոնցմէ, որ մարմինը | կը սպաննեն ու չեն կըրնար հոգին սպլաննել, հապա աւելի անկէ վախցէ՛ք դուք, | որ կընայ հոգին ու մարմինը գեհեհին | մէջ կորսնցնել: Մատթեոս: | Ճշմարիտ, ճշմարիտ կըսեն ձեզի, եթէ ցոլրենի հատը հողին մէջ իյնալով չնեռնի, | ինք մինակ կը մնայ, ապա եթէ մեռնի, | շատ արդիւնք կը բերէ: Յովհաննէ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Լեւոն Լեւոնյանն Այնթապի Ամերիկյան բողոքի խնամակցներից մեկի՝ Հովհաննէս Էֆենդու որդին էր (**Պապապանեան Ս.**, նշվ. աշխ., էջ 11, 38): Հայրը 1909 թ. հիշվում է Այնթապի Հաջի Էոմեր խանում գտնվող հայ վաճառականների ցամկում՝ որպես սեղանավոր և պիստակի վաճառական (**Մադաֆեան Գ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 312): Մերվել է հայտնի գերդաստանից: Ըստ հայեացի Մուրադ վարժապետի ճանապարհորդական հուշերի (1800-ական թվականների սկզբին)՝ «Անթաքի մէջ բնա-



կում է մի ցեղ, որ Լեւոնեանք են կոչվում, որոնք բոլորն էլ բարձրահասակ են, գեղեցկադէմ և վեհանճն. այժմ այս ցեղից կան դեռ մօտ 30 հոգի, որոնց մէջ Լեւոն անունը անպակաս է» («Մեղու Հայաստանի», 1863, № 1, էջ 4): Այնթապցիների կողմից անվանվում էր «Թօ-Լեւոն»՝ ազգական մի քանի այլ Լեւոն Լեւոնյաններից զանազանվելու համար: Եղել է խիզախ, անվախ, մանավանդ համատորեն պայքարում էր բոլոր տեսակի անարդարությունների դեմ: Գայրոցական տարիներին Այնթապում սկսում է պայքար մղել բրքախոսության դեմ, որը նրա համար ոչ միայն լեզվի պահպանման, այլ նաև քաղաքական հարց էր: Ուսումնական շրջանի վերջին տարիներին նրան հաջողվում է դպրոցում կասեցնել բրքախոսությունը: 1904 թ. ավարտում է Կ. Թ. (Ամերիկյան) քոլեջը (**Պապապանեան Ե.**, նշվ. աշխ., էջ 708): 1905 թ. Այնթապում յոթ ընկերներով հիմնում է Ուսումնասիրաց ընկերությունը (**Պապա-**



պանեան Ս., նշվ. աշխ., էջ 11, 44): Նույն թվականին հիմնում և ղեկավարում է ավետարանական եկեղեցու «Հէյք» երգչախումբը, ապա նշանակվում նույն եկեղեցու վարժարանների հսկիչ (**Պապապանեան Ե.**, նշվ. աշխ., էջ 709): 1918 թ. ձերբակալվում է Հայկում լրտես Աբշավիրի մատնությամբ (**Պապապանեան Ս.**, նշվ. աշխ., էջ 129), սակայն վճիռը բեկանվելուց հետո ազատ է արձակվում, իսկ ղեկտեմբերին վերադառնում է Այնթապ և վերականգնում Ուսումնասիրաց երիտասարդական ընկերակցությունը: Տեղի հայ հարուստներին օրինակ ծառայելու նպատակով ինքնապաշտպանության համար Ազգային միությանը տրամադրում է մի քանի հրացան և հազարից ավելի փամփուշտ: Ինքնապաշտպանության ընթացքում զինվորական հրամանատարությունը նրան է վստահում բերքահավաքին մասնակից զինվորների ղեկավարությունը, ինչպես նաև քաղաքի արևմտյան մասում գտնվող զինվորական երեք շրջանների քննիչի և վերահսկիչի պատասխանատվությունը: Միևնույն ժամանակ ղեկավարում է զինվորական նվազախումբը: Երկրորդ բռնագաղթի ժամանակ Այնթապը լքող վերջին անձերից էր: Հայեպ է հասնում հետիոտն և անհամար դժվարություններով (**Պապապանեան Ե.**, նշվ. աշխ., էջ 709-710): 1922 թ. Մարգիս Պալապանյանի հետ Հալեպում վերականգնում է Այնթապի Ուսումնասիրաց ընկերությունը և նույն տարին հիմնում համանուն դպրոցը՝ փայտաշեն և քիթեղածածկ, որտեղ էլ նշանակվում է տնօրեն (**Պապապանեան Ս.**, նշվ. աշխ., էջ 174): 1923 թ. դպրոցն ուներ երկրորդական բաժին՝ «Հայ Սքուլ» (Ավետարանականների): 1923-1925 թթ. հայ ավետարանական համայնքում մատաղ սերնդի դաստիարակության հարցի շուրջ սկսված վիճարանություններն ավարտվում են կրոնամոլների հաղթանակով, որի հետևանքով էլ ազգային դաստիարակության կողմնակիցներ Լեւոնյանը և Պալապանյանը հեռացվում են ուսուցչական կազմից: Տնօրենի մոտ նրանց մասին այսպես են խոսել. «Լեւոնեանն ու Պալապանեանը այնքան զօրատուր ու ազդեցիկ անձնատրություններ են, ու աշակերտությունը այնպես մը ենթարկած են իրենց, որ անոնց գտնուած տեղը մենք աշակերտներուն վրայ հոգևոր ազդեցություն չենք կրնար ունենալ: Եթէ այս երկուքը չհեռացուին, անկարելի է փոխել մեր դպրոցին մթնոլորտը: Որպեսզի, Հայ ազգայնական ոգին փոխարեն մեր մօտ հոգևոր մթնոլորտ մը տիրէ» (նշվ. աշխ., էջ 177-181): 1930-ական թթ. ազգասերները հիմնում են ավետարանական երրորդ՝ Նահատակաց եկեղեցին, իսկ վեճերն ավելի են խո-

րանում: Լևոն Լևոնյանի դեմ կատարվում են փողոցային հարձակումներ (նշվ. աշխ., էջ 195-196): Նրա ազգային բուն գործունեությունն ավարտվում է 1943 թ.՝ սպանվելով հայ ռճրագործի ձեռքով. «Հետևելով արեան հետքերուն, տեսանք, թե արիւնը մեզ կ'առաջնորդէ դէպի դպրոցին մերքնայարկը... Բջանք... սանդուխներէն վար ու ահա կէս ճամբուն տեսանք Լևոնեանի ժամացոյցը և երկու ակռաները... ու երկրորդ սենեակի մէջ գտանք Լևոնեանին անճշացած մարմինը կռնակի վրայ երկարած ու գլուխը դանակով մը կտրուած... Լացաւ ամբողջ Հայէսը: Տաս հազարէ աւելի մարդ հետևեցաւ Լևոնեանի դագաղին... Հազարէ աւելի աշակերտներ փոխն ի փոխ ուսանարձ կը տանէին դագաղը...: Դպրոցի աշակերտները լսով կը պոռային. Պարո՞ն, Պարո՞ն, մեզ ուր թողուցիր ու գացիր. դու մեր հայրն էիր, պահապանն էիր...: Ով կրնար սպաննած ըլլալ այսպիսի ծառայատէր մարդ մը...: Պրն. Լևոնեանի սպանութեան հարցին ծալքերովը մի գրադիր: Կրնաս փորձանքի մատնուիլ...: ըսաւ ինծի ոստիկան մը...: սպարնագիր մը դրկեցին Ատուր Լևոնեանին: Անստորագիր նամակներ կը դրկուէին հոս ու հոն: Մէկ բան յտակ էր - Լևոնեանը սպաննողները հայեր էին» (նշվ. աշխ., էջ 207-208): 1994 թ. մայիսի 15-ին Հոլիվուդի հայ ավետարանական եկեղեցում կազմակերպվում է Լևոն Լևոնյանի մահվան 50-ամյա տարելիցին նվիրված հիշատակի երեկո (**Պապայեան Ե.**, նշվ. աշխ., էջ 533):

50. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգչի | Մարիամ Թաշճեան՝ | ծն(եալ) Տաղեան, | Այնթապ, 1887, | հ(ա)նգ(եալ) Հալէպ, 1943 դեկ(տեմբեր) 9: | Երանելի են այն մեռելները, որոնք տէրջնով | կը ննջեն:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է այնթապի Սամվել Թաշճյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեն-Սագսուրի ավետարանական գերեզմանատան արձ. № 97:



51. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Աստ հանգ(չի) | մարաշցի | Սարգիս | Հատմեան, | ծ(նալ) 1918, մ(եռալ) 1943 | յուն(իս) 21:


Հրատ. առաջին անգամ:



52. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչի(ն) | մայր եւ որդի | Զարուհի, Եագուպ | Աթթարեան(ներ), | այնթապցի, | Զար(ուհի), 1882-1962, | Եագ(ուպ), 1902-1944:

Հրատ. առաջին անգամ:



53. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Նշան | Մնչերեան, | մարաշցի, | ծն(եալ) 1871, | հան(գեալ) 1945 յ(ու)լ(ի)ս 27:

Հրատ. առաջին անգամ:



54. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Յակոբ | Տեր-Պողոսեան, | այնթապցի, | ծն(եալ) 1884, հ(ա)նգ(եալ) 1945:

Հրատ. առաջին անգամ:



55. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Մովսէս Մարգարեան, | Ուռֆա(յի) Կարմուն | գիւղէն, | ծն(եալ) 1885, հ(ա)նգ(եալ) 1945:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. գտնվում է կարմուջցի Մարի և Հովսեփ Մարգարյանների տապանաքարերին կից: Նրանց մասին տես Շելս-Մագստոյի ավետարանական գերեզմանատան արձ. № 21, 58:

Մովսես Մարգարյանը վիրավորվում է 1919 թ. փետրվարի 28-ին տեղի ունեցած Հալեպի ջարդի ժամանակ՝ դաշույնի հարվածներ ստանալով գլխին, մեջքին և արմունկին (ՀԱԳ, ֆ. 430, ց. 1, գ. 786, ք. 29):

56. Տապանաքար. հնգաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | տօքթ(որ) Մովսես | Պապիկեան, | ծ(նեալ) 1888, Այնթապ, | հանգ(եալ) 1945:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Մովսես Պապիկյանը՝ որպես օգնական բժիշկ, մինչև Առաջին աշխարհամարտն աշխատում էր Հալեպի Աթուրյան հիվանդանոցում (**Ջերջյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 124): Մատարում է մարմնամարզության զարգացմանը հալեպահայ համայնքում (**Ռդինսարս, Մարմնամարզական կեանքէն**, «Մուրիահայ տարեցոյց», Հալեպ, 1924, էջ 248): 1919-1922 թթ. ՀԲԸՄ Հալեպի մասնաճյուղի վարչության անդամ էր (**Պեղղոսեան Լ.**, նշվ. հոդվ., էջ 477):



57. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ ուղղահայաց կանգնեցված



սալիկ, արձանագրությունը՝ արևմտյան եզրին ազուցված սալիկի արևելահայաց նիստին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Մ. Լուի Հեքիմեան, | ծ(նաւ) Այնթապ, 1892, ս(եռաւ) 1945: | Անիկա իր սիրելիին քուն | կուտայ: Սաղմ(ու) 127. 2:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Լուի Հեքիմյանը 1922 թ. Կիլիկյան նպաստից միութեան վարչության անդամ էր («Մուրիահայ տարեցոյց», Հալեպ, 1925, էջ 317):

58. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, երկբեր վրանաձև վերնամասով ոճավորված, արձանագրությունը՝ վրանաձև վերնամասի հարավահայաց նիստին, փորագիր, 3 տող.

Սա է Մարի Մարգարեան(ը), | Ուռֆա(յ)ի Կարմուրճ գուղէն, ծ(նաւ) 1894, ս(ե)ռ(աւ) 1945:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է կարմուջցի Մովսես և Հովսեփ Մարգարյանների տապանաքարերին կից: Նրանց մասին տես Շելս-Մագստոյի ավետարանական գերեզմանատան արձ. № 21, 55:



59. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողմն ազուցված մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի ի տէր | տօքթ(որ) Գէորգ Սարգիսեան, | ծն(եալ) 1866, Այնթապ, | հանգ(եալ) 1946 օգ(ոստոս) 27, Հալեպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է այնթապցի Մերիե Սարգիսյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շելս-Մագստոյի ավետարանական գերեզմանատան արձ. № 34:



60. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողմն ազուցված մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի ի տէր | տիար Ղազար | Յ. Յովսէփեան, | ծն(աւ) 1870, Խարբերդ, | մեռ(աւ) 1946 դեկ(տեմբեր) 28, Հալեպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է խարբերդցի Խանում Հովսեփյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շելս-Մագստոյի ավետարանական գերեզմանատան արձ. № 65:



61. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողին ագուցված մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչին | Յովհաննէս Մաբարզեան, | ծն(եալ) Մարաշ, 1874, հ(ա)նգ(եալ) 1946, | Թագուհի Մաբարզեան, | ծն(եալ) Մարաշ, 1880, հ(ա)նգ(եալ) 1971:

Հրատ. առաջին անգամ:




62. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | մարաշցի | Կավլին Թօզճեան, | ծն(եալ) 1887, | հանգ(եալ) 1946 յուլիս 15:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է մարաշցի Հակոբճան Թոզճյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեն-Մագսուդի ավետարանական գերեզմանատան արձ. № 76:



63. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին ագուցված թևավոր խաչը չի պահպանվել, արձանագրությունը՝ արևմտահայաց կողին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Ծորճ Ա. Եուսուֆ | բնիկ խարբերդցի, | ծնաւ 1904-ին, | հանգաւ 1946-ին: | Զոհ ալրուածզի:

Հրատ. առաջին անգամ:



64. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչին | Տապապողեաններ {ր} | Նիկողոս, | ծն(եալ) 1870, հ(ա)նգ(եալ) 1947, | Մարեան, | ծն(եալ) 1880, հ(ա)նգ(եալ) 1964: | Չնգուշցի:

Հրատ. առաջին անգամ:



65. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողին ագուցված մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչի ի տէր | տիկին Խանան | Յովսէփեան | ծն(եալ) Իջմեղեան, | 1880, Խարբերդ, | մեռ(աւ) 1947 մարտ 20, | Պէյրուք:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է խարբերդցի Ղազար Հովսեփյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեն-Մագսուդի ավետարանական գերեզմանատան արձ. № 60:



66. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողին ագուցված մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի ի տէր | դերագործ | Անդրանիկ | Պ. Պարսումեան, | ծնաւ 1895, Այնթապ, | հանգեաւ 1947:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է այնթապցի Միսաք Պարսումյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեն-Մագսուդի ավետարանական գերեզմանատան արձ. № 27:



67. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողմին, փորագիր, 5 տող.

Անիձա | Տեօքմէճեան՝ | ծնեալ Չամիչեան, | Այնթապ | ծ(նաւ), 1879, մ(եաւ) 1948:

Հրատ. *առաջին անգամ*:



68. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.

Աստ հանգչին | Մարիամ Մաղիկեան, | Հայկանոյշ Գեորգեան քոյրեր՝ | ծն(եալ) Յ(արու)թ(իւն) Գազանճեան ընտանիքէ: | 1884-1948, 1890-1959: | Ես եմ յարութիւնը ու կեանքը | ան, որ ինձի կը հաւատայ, | թէւ մեռնի, պիտի ապրի: | Յովի(աննու) 11. 25:

Հրատ. *առաջին անգամ*:

Ծանոթ. Հարություն, Մարիամ և Հայկանոյշ Գազանճյանները հիշվում են 1919 թ. Հախթում գտնվող փրկված տարագիրների ցանկում («Կոչնակ», 1919, № 21, էջ 677):



69. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | մարաշցի | Սարգիս | Գանձապետեան, | ծն(աւ) 1904, | մեռ(աւ) 1948:


Հրատ. *առաջին անգամ*:



70. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | այնթապցի | Մարթա Հալթիեան, ծնաւ | 1890, հ(ա)նգ(եաւ) 1949:

Հրատ. *առաջին անգամ*:



71. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողմին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի ի տէր | այնթապցի | օր(իորդ) Ռեփեկա Պշագճեան, | ծն(աւ) 1872, հ(ա)նգ(եաւ) 1950:

Հրատ. *առաջին անգամ*:



72. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Արուսեակ | Զուլումեան, | մէզիրեցի, | 1875, հ(ա)ն(գեաւ) 1950:

Հրատ. *առաջին անգամ*:



73. Տապանաքար. արձանագրությունը՝ անգլերեն².

Նորա Ալթունյան, | 1893, Հալեք, 1950: | Իր համարձակությունը ոչնչացում է փրկեց | հարիւրավորներ: Իր բարեկամությունը փնտրված | էր աշխարհով մեկ՝ շատերու կողմէ:

Հրատ. *Ջերեջյան Ռ.*, նշվ. աշխ., էջ 122:



Նորա Ալթունյանը (կենտրոնում) Հալեպի որբանոցում, 1919 թ.

Ծանոթ. արձանագրությունը չենք տեսել: Ներկայացրել ենք վիճաբարի հայերեն թարգմանությունը:


Արմատներով սեքաստացի Նորա Ալթունյանն Ասատուր և Հարիետ Ալթունյանների դուստրն էր: Մինչև Առաջին աշխարհամարտը գլխավորում էր ավետարանական համայնքի բոլոր ձեռնարկումները (*Ջերեջյան Ռ.*, նշվ. աշխ., էջ 110-111): 1915-1916 թթ. իր շուրջը հավաքում է 40 օգնականների և 600 որբերի համար հիմնում առանձին որբանոց: Կարճ ժամանակ անց վարձում է մեկ այլ շենք, որտեղ ևս տեղավորում է 400 որբերի (*Ագա-տեան Լ.*, նշվ. աշխ., էջ 90): 1915 թ., երբ Ահարոն Շիրաճյանը հիմնում է Հալեպի որբանոցը, Նորան ամեն գնով փորձում էր թույլտվություն ստանալ ժամանակի ազդեցիկ դեմքերից՝ որբանոցը պահպանելու և պարենավորելու նպատակով: 1920 թ. վերաբացված Հայկազյան վարժարանի արտոնագիրը ձեռք է բերվում նրա ջանքերով (*Ջերեջյան Ռ.*, նշվ. աշխ., էջ 114, 118): Ծնողների մասին տե՛ս Էմանուել եկեղեցու արձ. Ն՞ 1, 3:

74. Տապանաքար. քառաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.

Աստ հանգչի | տիկ(ին) Եսթեր | Կեոյոլուեան՝ | ծնեալ Կիլտալեան, | 1864, Այնթապ, | 1951 օգ(ոստոս) 15, Հալեպ: | Ան, որ ինձի կը հաստայ, | թէւ մեռնի, պիտի ապրի: | Յովհ(աննու) ԺԱ (11). 25:

Հրատ. *առաջին անգամ:*

2 *Ջերեջյան Ռ.*, նշվ. աշխ., էջ 122:



Ծանոթ. գտնվում է այնթապցի Հովհաննես Կյուլոլույանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տե՛ս Շեն-Մագսուդի ավետարանական գերեզմանատան արձ. Ն՞ 83:

75. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողին ագուցված մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Վահան | Նալպանտեան, | քիլիս-ցի, | ծն(եալ) 1873, | հանգ(եալ) 1951:

Հրատ. *առաջին անգամ:*



76. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.

Աստ հանգչի | մարաշցի | Յակոբճան Թօզճեան, | ծն(եալ) 1878, | հանգ(եալ) 1951 փետր(ուար) 20: | Երանելի են այն մեռելները, | որոնք տէրոջնով կը ննջեն: | Յայտն(ութիւն) Յովհաննու, | գլուխ 14. համար 13:

Հրատ. *առաջին անգամ:*

Ծանոթ. գտնվում է մարաշցի Կալվին Թոզճյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տե՛ս Շեն-Մագսուդի ավետարանական գերեզմանատան արձ. Ն՞ 62:



77. Տապանաքար. քառաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգչի ի տէր | տիկ(ին) Ֆրթանտա | Ատրունի, | ծն(եալ) Ջէթուն, 1883, | հանգ(եալ) 1951, Հալեպ: | Երանելի են այն մեռելները, | որոնք տէրոջնով կը ննջեն: | Յայտ(նութիւն) ԺԴ (14). 13:

Հրատ. *առաջին անգամ:*



78. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 15 տող.

Այս է | դամբան | մարաշցի | տ(ի)կ(ին) Վարդու(ւ)հի | Մխէսեանի, | ծն(եալ) 1907, | ի Ֆուրնուզ, | հ(ան)գ(եալ) 1951 փ(ե)տ(րուար) 5: | Ջի խնդրէք | զկենդանին | ընդ | մեռեալս | չէ աստ, | այլ յարեալ: | Ղ(ու)կ(աս) ԻԳ- (24). 5:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ֆուրնուզը Ֆռնուզ գյուղն է: Գտնվում է Կիլիկիայում՝ Չեյքունից 24 կմ հարավ-արևմուտք: Թուրքերենով արտասանվում է Ֆրրնրզ (frrnz):



79. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ սալիկին, ներկագիր, 7 տող.

Աստ հանգչին | Գապա(յ)եաններ՝ | Սեմա, ծն(եալ) Մարաշ, | ծն(եալ) 1880, հ(ա)ն(գեալ) 1952, | տիկ(ին) Թագուհի՝ | ծ(նեալ) Իսկէնտէրուն, | ծն(եալ) 1923, հ(ա)ն(գեալ) 1967:

Հրատ. առաջին անգամ:



80. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչին | այնդապցի | Հէլէն, Աւետիս, | Վերծին, | Գէուրզ | Տէմիրճիեան(ներ): | Ծն(եալ) 1900, հան(գեալ) 1953:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Այնդապն Այնթապն է:



81. Տապանաքար. քառաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչի | Եուսուֆ Կարապետ Պապիկեան, | ծնաւ 1870 յուլ(իս) 1-ին, | Այնթապ, | հանգեալ ի տէր, | 1955 մարտ 26-ին, | Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է այնթապցի Մաքրոտի Պապիկյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շելյ-Մագաուոյի ավետարանական գերեզմանատան արձ. № 86:



82. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ ուղղահայաց կանգնեցված սալիկ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Արմենակ «Յովհաննէս» | Պչագճեան, | ծնեալ-հանգ(եալ), | 1878 փետ(րուար) 26-1955, | Այնթապ-Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:




83. Տապանաքար. քառաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Աստ հանգչի | Յովաննէս | Կէօյօղլուեան, | ծն(եալ) Այնթապ, 1859, | հ(ա)նգ(եալ) Հալէպ, 2 յ(ու)նվ(ա)ր 1956: | Յիսուս ըսաւ. անոր | մէկը հօրը քով չգար, եթէ ոչ | ինձնով: | Յովհ(աննու) 14. 6:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է այնթապցի Եսթեր Կյուլօղլույանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեն-Մագսուտի ավետարանական գերեզմանատան արձ. № 74:



84. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարի երեսին և պատվանդանի արևելյան եզրին, փորագիր, 14 տող.

Տապանաքարի երեսին.

Աստ հանգչին | Նուրի Յ. Եագուպեան, | ծն(եալ) 1890, | Ալպիսթան, 26 ապրիլ, | հանգ(եալ) 1956, | Հալէպ, 2 հոկ(տեմբեր), | տիկ(ին) Ազնի Եագուպեան, | ծն(եալ) 1894 | Ալպիսթան, | հանգ(եալ) 14 մարտ | Հալէպ, 1975:


Պատվանդանին.

Ռօպէր Եագուպեան, Յովհաննէս Եագուպեան, | ծն(եալ) Հալէպ, 22 մայիս 1927, ծն(եալ) Հալէպ 22 ապրիլ 1923, | հանգ(եալ) Պէյրուք, 7 սեպ(տեմբեր) 1984, հանգ(եալ) Հալէպ, 3 դեկտ(եմբեր) 1997:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է արքիստանցի Եվնիկե Եագուպյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեն-Մագսուտի ավետարանական գերեզմանատան արձ. № 13:

Ազնիվ Եագուպյանը 1952-1959 թթ. ուսուցանել է Հայ ավետարանական Բեթել վարժարանում, իսկ 1959-1972 թթ. նույն վարժարանի քարտուղարուհին էր (Շնորհոքեան Մ., նշվ. աշխ., էջ 18, 21):



85. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | մանկաբարձ | օր(հորդ) Կիրճիլ Իշխանեան, | մարաշցի, | ծն(եալ) 1889, Մարաշ, | հ(ա)նգ(եալ) 1957 դեկ(տեմբեր) 18, Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:


Ծանոթ. Կյուրճյու Իշխանյանը 1922 թ. մասնագիտական վկայական ստացած Հալէպի առաջին մանկաբարձուհիներից էր (Շնորհոքեան Մ., նշվ. հոդվ., էջ 395-396): Նա տունը կտակում է հայ ավետարանական Բեթել եկեղեցուն (Շնորհոքեան Մ., նշվ. աշխ., էջ 19):



86. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչի | Մագրուհի Պապիկեան, | ծնալ 1876 օգ(ոստոս) 27-ին, | Այնթապ, | հանգեալ ի տէր, | 1961 նոյ(եմբեր) 9-ին, | Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. գտնվում է այնքապցի Յուսուֆ Պապիկյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տե՛ս Շեխ-Մագսուդի ավետարանական գերեզմանատան արձ. № 81:

87. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Խանրն Պարուշեան, | հայնեցի, | ծնեալ 1875-1964:

Հրատ. առաջին անգամ:



88. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 3 տող.

Մարթա Քիրեճեան, | խարբերոցի, | 1883-1964:

Հրատ. առաջին անգամ:



89. Տապանաքար. ուղղանկյունաձև, տեղահան, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող հայերեն, 1 տող արաբերեն և 2 տող ֆրանսերեն.

Աստ հանգչի | մէքր Տիգրան | Ս(երոք) Քիւփե-լեան, | 1888, Մարաշ, | 6/2/1964, Հալէպ:

Արաբերեն.

ديكران بن سيروب كوپليان.

Թարգմ. Սերոքի որդի Տիգրան Քյուփեյան:

Ֆրանսերեն.

Maitre Dikran | S(erop) Kupelian.

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. Տիգրան Քյուփեյանը 1930 թ. հայեպարնակ միակ մարաշցի փաստաբանն էր (**Գալուստեան Գ.**, նշվ. աշխ., էջ 842):

Հայրը՝ Սերոք Քյուփեյանը, ծնվել է Մարաշում 1858 թ. մարտի 13-ին: Եղել է փաճառական-դերձակ (**Գալուստեան Գ.**, նշվ. աշխ., էջ 927): Աշակերտել է մարաշցի հոշակավոր դերձակ «Մարը Թէրզի»-ին: Եվրոպական դերձակություն սովորելու նպատակով մեկնում է Հալէպ, սովորելուց հետո վերադառնում է Մարաշ:



Սերոք Քյուփեյան

1905 թ. Փարիզում մասնակցում է ցուցահանդեսի և ստանում պատվոգիր: Ուներ մոտ 60 աշակերտ (**Գալուստեան Գ.**, նշվ. աշխ., էջ 293): 1915 թ. տարագրվում է Հալէպ, սպա վերադառնում Մարաշ: Վերջին աղետից հետո նրան հաջողվում է հասնել Բալսահիե, հետո Տարսոն, Կիլիկիո պարպումից հետո՝ Ջոյունիա, որտեղից էլ՝ Լոզան: Մահացել է 1927 թ. սեպտեմբերի 28-ին Ֆրանսիայի Բորգ քաղաքում (**Գալուստեան Գ.**, նշվ. աշխ., էջ 927):

90. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով քևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.

Աստ հանգչին | Եագուպ | Տեր-Յովհաննէսեան, | Քիլիս, 1913, Հալէպ, 1964, | Ալիս, | Տեր-Յովհաննէսեան | Կոստանեան, | 1917-1998, | քիլիսցի:

Հրատ. առաջին անգամ:



91. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ քևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Մարգիս | Փչաքճիեան, | ծն(եալ) 1899, Այնթապ, | հ(ա)ն(գեալ) 1965, Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:



92. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Յովհաննէս | Ե. Պէրճիկիեան, | ծն(եալ) նոյ(եմբեր) 7 1904, Այնթապ, | հ(ա)նգ(եալ) ապրիլ 28 1967:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. եղել է «Ուսումնասիրաց»-ի ֆուտբոլի խմբի անդամ (Պալապանեան Ս., նշվ. աշխ., էջ 210):



96. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | ճէպէլմուսացի | Պետրոս | Ապաճեան, | 1907-1969:
Հրատ. առաջին անգամ:



93. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 3 տող.

Աստ հանգչի | տ(ի)կ(ին) Մանուշակ Յ. Փալանճեան, | 1906, Տարսոն, 1967, Հալէպ:
Հրատ. առաջին անգամ:



97. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Սամուէլ | Թաշճեան, | ծն(եալ) 1879, Այնթապ, | հ(ա)ն(գեալ) 1971, Հալէպ:
Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է այնքապցի Մարիամ Թաշճյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տես Շեն-Մագսուտի ավետարանական գերեզմանատան արձ. № 50:

Աջակցել է Հալեպի Ուսումնասիրաց դպրոցին (Պալապանեան Ս., նշվ. աշխ., էջ 180):

94. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Ռեփեկայ | Եղոյեան, | ծն(եալ) 1895, հ(ա)ն(գեալ) 1968, | խարբերոցի:
Հրատ. առաջին անգամ:



95. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Մարտիրոս Յ. | Պօզեազալեան, | ծն(եալ) Այնթապ, 1896, | հանգ(եալ) Հալէպ, 1968:
Հրատ. առաջին անգամ:

98. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.

Աստ հանգչին | պէրպէր | Մարգիս Գալայճեան, | ծնեալ Մարաշ, 1895, | վախճանեալ Հալէպ, 1971, | Արագսի Գալայճեան, | ծն(եալ) 1905, հ(ա)նգ(եալ)



1989, | Ովսաննա Գալայճեան, | ծն(եալ) 1922, հ(ա)ն(գեալ) 1990:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. Պերպեր – քրք. վարսավիր:

99. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Զիա | Տախտախրագճեան, | մալարիացի, | ծն(եալ) 1897, հ(ա)ն(գեալ) 1972:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. Զիա Տարագճյանը 1924-1927 թթ. Հալեպի մալարիացիների դպրոցի հոգաբարձության անդամ էր (Ալպոյանճան Ա., Պատմություն Մալարիոյ հայոց, էջ 1518), իսկ 1953-1961 թթ.՝ Մալարիայի կրթասիրաց ընկերության Հալեպի մասնաճյուղի վարչության անդամ (Ալպոյանճան Ա., Պատմություն Մալարիոյ հայոց, էջ 1524):



100. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, կոթողաձև, արձանագրությունը՝ կոթողի արևելահայաց նիստին ամրացված մարմարե երկու սալիկներին, փորագիր, 10 տող. Սալիկ Ա.

Աստ հանգչի | քիլիսցի | Յովհաննէս | Տէր-Յովաննէսեան, | ծն(եալ) 1919, հ(ա)ն(գեալ) 1973:

Սալիկ Բ.
Աստ հանգչի | Արաքսի | Տէր-Յովաննէսեան՝ | ծն(եալ) Տարագճեան, | 1924-2004:
Հրատ. առաջին անգամ:



101. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի(ն) | տօք(թոր) Նազանթք | Տէր-Պօղօսեան, | ծն(եալ) 1897, Այնթապ, | հ(ա)ն(գեալ) 1976 Հալեպ, | եւ իր մայրը:

Հրատ. առաջին անգամ:



102. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ արևմտահայաց կողմին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչին | Մելքոն Մարտիրոսեան, | Էյալեզ, 1901-1978, Հալեպ, | Մարի Մարտիրոսեան՝ | Մելիք-սէթեան, | Էյալեզ, 1908-1983, Հալեպ:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. Էյալեզն Էյրեզ գյուղն է: Գտնվում է Աղանայի մահանգի Նիկոս գավառում (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, էջ 374):



103. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Նազար Պօսնուեան, | ծնեալ Այնթապ, 1890, | վախճ(անեալ) Հալեպ, 1980:

Հրատ. առաջին անգամ:





Ծանոթ. Նազար Պոսնույանը ՀՅԳ-ի անդամ էր: Այնթապի ինքնապաշտպանության ժամանակ՝ 1920 թ. հոկտեմբերի 1-ից նոյեմբերի 15-ը, ստանձնում է Բ շրջանի պաշտպանողների խմբապետությունը (**Պարտումեան Գ.**, Պատմութիւն Այնթապի Հ.Յ.Գաշնակցութեան 1898-1922, էջ 230-231):

104. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, դագաղաձև, արձանագրությունը՝ տապանաքարի երեսին և արևմտահայաց կողին ամրացված մարմարե սալիկներին, փորագիր, 11 տող.

Արևմտահայաց կողին.

Աստ հանգչին | Դանիել Ճիզմեճեան, | ծն(եալ) Պերեճիկ, | 1901-1981, | Լուսին Ճիզմեճեան, | ծն(եալ)

Այնթապ, | 1912-1986:

Երեսին.

Աստ հանգչի | տիեար Կարապետ | Ճիզմեճեան, | 1934-1990:

Հրատ. առաջին անգամ:



ՇԵԽ-ՄԱԳՍՈՒԴԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԳԵՐԵՉՄԱՆԱՏՈՒՆ



Տեսարան գերեզմանոցից (լուս.՝ 2007 թ.)

Տեղադրություն. գտնվում է Հալեպից հյուսիսարևմուտք՝ հայ առաքելական գերեզմանոցից արևելք՝ Շեխ-Մագսուդ քաղամասի հարևանությամբ: Տեղադրությունն է՝ N 36° 13' 32.28", E 37° 09' 05.20":

Պատմություն. ինչպես հայ առաքելական և հայ ավետարանական, այնպես էլ հայ կաթողիկե հանգուցյալների համար Ազիզիեի գերեզմանատան փակումից հետո Հալեպի քաղաքապետարանը նոր տարածք է հատկացնում Շեխ-Մագսուդի շրջանում:


Վիճակագրեր. ներկայացնում ենք 34 միավոր արձանագրություն: Դրանք հրատարակվում են առաջին անգամ:

1. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 8 տող.

Աստ հանգչի(ն) | բնիկ պետնիցի | Եիսիւֆ | Պարտազճեան, | ծն(աւ) 1862, մե(ռաւ) 1915,| Յարութիւն | Պարտազճեան, | ծն(աւ) 1938, մե(ռաւ) 1939:

Հրատ. առաջին անգամ:

2. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, տապանաքարին՝ 5 տող հայատառ թուրքերեն, մարմարե սալիկին՝ 6 տող հայերեն.



Հայատառ թուրքերեն.

1925 (թարգմ.՝ 1925) Այն | սեպտեմբեր ... | Սեփրակեան | 10 եղըլլան | Պէսնիլի:

Թարգմ. 1925-ի սեպտեմբեր ամսի ..., Սեփրակեան ..., պէսնիլի:
Սալիկին.

Աստ հանգչի | պէսնիլի | տիլին Մայրամ | Չէթունեան, | ծն(աւ) 1885, | մ(ե)ռ(աւ) 1950 դեկ(տեմբեր) 23:
Հրատ. *տաաջին անգամ*:
Ծանոթ. *տապանաքարի երեսին պատկերված է մկրատ և ածելի*:

3. Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.



Աստ հանգչի | Հայկ | Մխրթարե(ա)ն, | եղեսեացի, | ծն(աւ) 1928, | մ(ե)ռ(աւ) 1930:
Հրատ. *տաաջին անգամ*:

4. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարին և մարմարե սալիկին, փորագիր, 18 տող.

Տապանաքարին.

Ուրֆացի | Սէֆեր Թ(ի)ֆէնքըիեան | ... | ... | ... | ... | ... | ... | լայսուցի (°):
Սալիկին.

Աստ հանգչին | Թիֆէնքճեաններ՝ | Սէֆեր, 1890-1930, | Նոյեմբար, | 1905-1981: | Ուրֆացի:


Հրատ. *տաաջին անգամ*:

Ծանոթ. *սալիկը, որն ամրացված է ավելի ուշ, ծածկել է տապանագրի մեծ մասը*:



5. Արձանագրություն. գերեզմանոցում գտնվող Սք. Հարություն մատուռի մուտքից վեր ամրացված մարմարե սալիկին՝ փորագիր, 6 տող (2-ական տող՝ հայերեն, արաբերեն և ֆրանսերեն): Մատուռի տեղադրությունն է՝ N 36° 13' 32.10", E 37° 09' 05.22".

Հաւատամք ի մի ա(ստուա)ծ, ի յարութիւն մեռելոց | եւ ի կեանս յախտենականս:




Արաբերեն.

تؤمن بالرب المحي وقيامه الموتى و الدهر العتيد | سنة 1933.

Ֆրանսերեն.

Nous croyons en dieu la resurrection des morts | et la vie eternelle, 1933.

Հրատ. *տաաջին անգամ*:



Սք. Դարություն մատուռի տեսքն արևմուտքից և հարավ-արևելքից

6. Արձանագրություն. Սր. Հարություն մատուռի ներսում՝ հյուսիսային պատի արևելյան մասում ամրացված սալիկին, փորագիր, 4-ական տող հայերեն, արաբերեն և 2 տող ֆրանսերեն.

Կառուցաւ մատուռս Ս(ուրբ) Յարութեան | ծախիւք եւ ջանիւք երկուց եղբարց՝ | Պետրոս եւ Գաբրիել ծ(այրագոյն) վ(արդապետ) Գասպարեան(նե-ր)ի՝ | յուխտէ Ձմմառու, ի վայելս ազգիս:

Արաբերեն.

لمجد الله الاعظم | شيد هذا المعبد باسم قيامه الرب المجيد على نفقة المحسن | بطرس كسبار و ... اخيه الورتبيد جبرائيل خدمة الطائفة | سنة ١٩٣٣.

Ֆրանսերեն.

Bienfaiteur Pierre Caspar, | 1933.

Թարգմ. Բարերար Պետրոս Գասպար, 1933:

Հրատ. առաջին անգամ:



7. Արձանագրություն. մատուռի ներսում՝ հյուսիսային պատի արևմտյան մասում ամրացված սալիկին, փորագիր, 2 տող արաբերեն, որից վեր՝ նույն բովանդակությամբ 3 տող հայերեն.

Դամբարան | Հ(այր) Գաբրիել ծ(այրագոյն) վ(արդ)(ապետ) | Գասպարեան(ի):

Արաբերեն.

ضريح | الورتبيد كبرئيل كسبار.

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. 1918 թ. դեկտեմբերին նշանակվում է Հայ ազգային միության ատենապետ (Տէր-Խաչատուրեան Ա., նշվ. հոդվ., էջ 198): Գաբրիել Գասպարյանի և նրա եղբոր՝ հայր Պետրոսի ջանքերով 1933 թ. կառուցվում է գերեզմանատան Սր. Հարություն մատուռը (տե՛ս Շեխ-Մագսուդի կաթողիկե գերեզմանատան արձ. № 6):



8. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Չագար Նագարեան, | ազգէհիր-ցի, | ծն(եալ) 1880, | հանգ(եալ) 1940:


Հրատ. առաջին անգամ:



9. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Աստ | հանգչի | Պետրոս | Սասաթիւեան(°), | ծն(եալ) 1880, | հանգ(եալ) 1941:

Հրատ. առաջին անգամ:



10. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ տապանաքարի երեսին ագուցված մարմարե երկու սալիկներին, փորագիր, 10 տող հայերեն, տապանաքարի արևելահայաց կողմին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 3 տող արաբերեն.



Սալիկ Ա, տապանաքարի երեսին.

Աստ հանգչի | Սաթնիկ | Յովակիմեան, | ծն(եալ) 1881, հ(ա)ն(գեալ) 1942, | այնթապցի:

Սայիկ Բ, տապանաքարի երեսին.

Աստ հանգչի | Խաչեր | Յովակիմեան, | ծն(եալ) 1888, հ(ա)ն(գեալ) 1957, | այնթապցի:

Սայիկ Գ, տապանաքարի կողին.

Արարերն.

المرحومين | ليون هواكيميان | وزوجته انطوانيت حلب.

Թարգմ. Հանգուցյալներ Լեոն Հովակիմյան և տիկինը՝ Անթուանեթ, Հալեպ:

Հրատ. առաջին անգամ:

11. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, կորոնածև, կորոզի հյուսիսահայաց նիստին՝ լուսանկար և 5 տող փորագիր արձանագրություն.

Աստ հանգչի | Քերոբ | Փուրուտեան, | արդնցի, | ծ(նեալ) 1888, հ(անգեալ) 1943:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. տապանաքարի հյուսիսահայաց նիստին պատկերված է մկրատ և ածելի:



12. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունածև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | Հայկույի | Ճապրա(յ)եան, | ծն(եալ) Իսկենտերուն, 1912, | հանգ(եալ) 1943:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Հայկույի անվան երկրորդ յ տառը սխալ է փորագրված, պետք է լիներ հ:



13. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունածև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ տապանաքարի երեսին ազդեցված երկու և արևելահայաց կողին ազդեցված մարմարե երեք սալիկներին, փորագիր, 15 տող.

Սայիկ Ա, տապանաքարի երեսին.

Աստ հանգչի | Յարութին | Շատարեան, | ծն(եալ) ի Մարաշ, 1914, | հանգ(եալ) ի Հալեպ, 1944:

Սայիկ Բ, արևմտահայաց կողին.

Աստ հանգչի | Հայկանուշ | Շատարեան, | ծն(եալ) ի Մարաշ, 1892, | հանգ(եալ) ի Հալեպ, 1945:

Սայիկ Գ, տապանաքարի երեսին.

Աստ հանգչի | Ժօզեֆ | Շատարեան, | 1911-1980, | մարաշցի:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. մարաշցի Ժոզեֆ Շատարեանը մասնագիտությամբ շինարար էր (Քարայան Ա., Հալեպի հայ համայնքը 1964-1985 թթ., էջ 116): Հորից որդացած՝ մոր հետ հասնում է Հալեպ և բնակվում Մեյմանիե թաղամասում. «Դժուարին պայմաններու տակ գտնուելով հանդերձ, կը շարունակէ միջնակարգ եւ երկրորդական ուսումը եւ կը ստանայ Ֆրանսական Բ. Պաքալորիան... կը պաշտօնավարէ Հայր Յովհաննէս Պալեանի Թէր Սէնթ Ռամ վարժարանին մէջ, ապա՝ Երկրորդ աշխարհամարտի տարիներուն կը ստանձնէ հացահատիկի գրասենեակի քննիչի պաշտօնը: Աւելի ետք՝ Օսմպարթ առետրական եւ ասպետավագրական գրասենեակի մէջ պաշտօնեայ կը դառնայ»: 1947-1950 թթ. ՀԵԸ-ի Հալեպի գործադիր մարմնի, 1949-1971 թթ.՝ ՀԲԸՄ «Սուրիոյ Շրջանակային յանձնաժողովի» (Կիլիզեան Տ., նշվ. աշխ., էջ 150), 1961, 1964, 1966 թթ.՝ ՀԲԸՄ Հալեպի մասնաճյուղի վարչության անդամ էր (Պերդուտեան Լ., նշվ. հոդվ., էջ 478-479: Տես նաև Քարայան Ա., Հալեպի հայ համայնքը 1964-1985 թթ., էջ 116): 1970-1980 թթ. Հալեպի Լ. Նաճարյան-Գ. Կյուլպենկյան ճեմարանի տնտեսական հարցերի պատասխանատուն էր: Մահացել է 1980 թ. սեպտեմբերի 24-ին (Կիլիզեան Տ., նշվ. աշխ., էջ 150):

14. Տապանաքար. ուղղանկյունածև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.



Աստ հանգչի | Տիգրան Խուտանեան, | Ուրֆացի, | ծն(եալ) 1901, հանգ(եալ) 1946:
Հրատ. առաջին անգամ:

15. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևմտահայաց նիստին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.

Աստ հանգչի | մարաշցի | Սեդրակ աղա Խրլաքեան՝ | հիմնադիր Գերմանիկ Վասպուրականի, | 1887-1947: | Նուիրատուութեամբ | Մարաշի հայրենակցական միութեան | եւ | Գ(երմանիկ) Վ(ասպուրական) մշակութային վարչութեան:
Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է մարաշցի Սեդրի Խրլաքյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տե՛ս Շէխ-Մագսուդի ավետարանական գերեզմանատան արձ. № 20:

Մարաշի հայրենակցական միությունը հիմնվել է 1921 թ. և վերակազմվել 1934 թ. (www.periotem.com): Գործում է առ այսօր:



16. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևմտահայաց նիստին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչին | Գէորգ եւ Խանըմ | Ներկիզեան(ներ), | ծն(եալ) Ուրֆա, | իրենց որդին՝ | Յարութիւն Ներկիզեան, | ծն(եալ) Հալէպ, 1924-1949:
Հրատ. առաջին անգամ:



17. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 15 տող.

Ով անձանօթ, քիչ մը կանգ առ, | դիտե՛ շիրիմս ու մի՛ սարսռար, | պատմեմ ցաւերս, ու դուն մի՛ լար, | անուշ մօրկանս բարեւ մը տար: | Ազունի էի լերան կրծքին, | թշուառ մ(ըն) էի ես ցաւազին, | հազիւ կեանքիս գարունն հասած, | այսօր անգլէն հողն եմ

գրկած, | ու դուն գնա, պատմե՛ մարդոց, | թէ տեսար զիս մի անմուրագ, | որ չծաղկած շուտ խամրեցաւ | ու դեռ կոկոն թուփէն ինկաւ: | Ուրֆացի | Յովհաննէս Չաթալեան, | ծն(աւ) 1927, մ(եռաւ) 1950:
Հրատ. առաջին անգամ:



18. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ տապանաքարի երեսին և արևելահայաց կողմն ամրացված մարմարե երկու սալիկներին, փորագիր, 8 տող.

Տապանաքարի երեսին.

Աստ հանգչի | Իսկէնտէր | Թալաթիներեան, | ծն(եալ) 1884-1953:

Տապանաքարի կողմն.

Աստ հանգչի | Ֆէրիհնանտ | Թալաթիներեան, | մա(հացաւ) 1914, հա(նգեաւ) 1991:

Հրատ. առաջին անգամ:



19. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ ուղղահայաց կանգնեցված



սալիկ, արձանագրությունը՝ դրա արևելահայաց նիստին, ելնդագիր, 1 տող արաբերեն (հանգուցյալի անունը), որից ցած՝ ելնդագիր, 2 տող հայերեն և նույն սալիկի արևելահայաց նիստին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 6 տող արաբերեն.

Կանգնեցված սալիկին.

Տօքթ(որ) Յովհաննես Գանթարճեան, | ծն(եալ) Խարբերդ, 1890, հ(ա)նգ(եալ) 1957:

Արաբերեն. الطيب او هانس قنطارجيان.

Ամրացված մարմարե սալիկին.

ازنيف قنطارجيان | ١٩٨٩-١٩٠١ | روزيت قنطارجيان

١٩٩٦-١٩٢١ | نوبار قنطارجيان | ١٩٩٥-١٩٢٥ |

Թարգմ. Ազնիվ Գանթարճյան, 1901-1989, Ռոզեթ Գանթարճյան, 1925-1995, Նուպար Գանթարճյան, 1921-1996:

Հրատ. առաջին անգամ:


20. Տապանաքար. եռաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալիկին, փորագիր, 6 տող.

Աստ հանգչի | Մէլրի | Խրլագեան, ծն(եալ) | ի Մարաշ, 15 | յունիս, 1890 | հ(ա)ն(գեալ) 23 յուլիս 1960:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. գտնվում է մարաշցի Սեդրակ աղա Խրլաքյանի տապանաքարին կից: Վերջինիս մասին տե՛ս Շեն-Սագսուղի ավետարանական գերեզմանատան արձ. № 15:

Մելրին 1921 թ. հունվարի 15-ին ընտրվում է վերակազմավորված Մարաշի հայրենակցական միության վարչության գամ-ձապետ (**Գալաթսեան Գ.**, նշվ. աշխ., էջ 843):



21. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին ամրացված մարմարե երկու և տապանաքարի պատվանդանի արևելահայաց կողմին ամրացված մարմարե սալիկներին, փորագիր, 10 տող հայերեն և 3 տող արաբերեն.



Սալիկ Ա, տապանաքարի պատվանդանին.

Աստ հանգչի | Կարապետ Նալպանտեան, | խարբերդցի, | 1909-1960:

Սալիկ Բ, խաչի պատվանդանին.

Նշան Նալպանտեան, | 1910-1979, | խարբերդցի:

Արաբերեն (նույն բովանդակությամբ)

المرحوم | نيشان نعلبنديان | ١٩٧٩-١٩١٠.

Սալիկ Գ, խաչի պատվանդանին.

Աստ հանգչի | Ալիս Նալպանտեան, | 1929-1988: Հրատ. առաջին անգամ:

22. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 1 տող արաբերեն (հանգուցյալի անունը), որից ցած՝ փորագիր, 3 տող հայերեն.

Ճորճ Մարտիկեան, | ծն(եալ) Բիլիս, 1895, | հան(գեալ) 1964:

Արաբերեն.

جورج مارديكيان.

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ճորճ Մարտիկեանն Առաջին աշխարհամարտին զոքակոչվում է օսմանյան բանակ և ուղարկվում «Ամելե Թապուր»: 1918 թ. հասնում է Հալեպ և զբաղվում ատաղձագործությամբ: Ամուսնանում է Ճեմիլեի հետ և ունենում 7 աղջիկ և 1 տղա (Հովհաննես): Ուներ 26 թոռ, 51 թոռնորդի և 7 ծոռ: Մահացել է 1964 թ. ապրիլին: 1930-ական թվականներին «քարիտորճի» վարպետն էր, «...որ յղացած էր «փոսթա»-ներու կմխքը պատրաստել, ինքնաշարժը բեռնատար ու մարդատար փոքր մինի պասերու վերածելով... Մինչև 1950-ական թուականները... գաղափարը զարգանալով, այլ հայ վարպետներու ալ ներդրումով մեծ արտադրության կը վերածուի, նպաստելով սուրիական ճարտարուեստին...»: Նրա և որդու անունները հիշատակվում են Ամեր Ռաշիդ Մուբայեդի «100 առաջատարներ Հալեպից» գրքում «عمر رشيد مبيض، مئة اوائل من حلب» (**Պոզսեան Զ.**, Ամելե թապուրէն մինչև նրճմէ-աստղ մակնիշը քեռիիս 74-ամեակին առթիւ, «Ռիստ Արարատի», 2009, № 17, էջ 34-35): Որդին՝ Հովհաննեսը, 1970-ական թվականներին «...գաղափարը կը յղանայ Հալեպի մէջ կառուցելու և արտադրելու շինարարութեան համար սիմէնթ և առագ խառնող մեքենաներ... Սուրիոյ ճարտարուեստի ճակատը բարձրացուցին իր «Ճեպէնէթ նրճմէ-աստղ» մակնիշը կրող սիմէնթ խառնող վերամբարձ և այլ շինարական մեքենաներ» (նշվ. հոդվ., էջ 35):



23. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 1 տող արաբերեն (հանգուցյալի անունը), որից ցած՝ փորագիր, 3 տող հայերեն.

Ռօզէֆ Ասալեան, | ծնեալ Քիլիս, 1900, | հան-
 (գեալ) 1968:
 Արաբերեն.
 Հրատ. *առաջին անգամ*: .جوزيف عسليان



24. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղ-
 դանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լու-
 սանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ մարմարե սալի-
 կին, փորագիր, 5 տող.

Աստ հանգչի | տիկ(ին) Հրիսու(ի)մէ | Ստիփա-
 նեան, | ծն(եալ) 1908, հ(անգեալ) 1968, | եղէսիացի:
 Հրատ. *առաջին անգամ*:



25. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղ-
 դանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրու-
 քյունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին ամրաց-
 ված մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Աստ հանգչի | Ռեբեկա | Փէշտիմալճեան՝ | ծնեալ
 Ինճեան, | Մարզուան, 1882-1969: | Աղօթեցէք իր |
 հոգոյն համար:

Հրատ. *առաջին անգամ*:
 Ծանոթ. *Մարզուանը Մարզվանն է:*



26. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
 դանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրու-



քյունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին ամրաց-
 ված մարմարե սալիկին, փորագիր, 4 տող.

Աստ հանգչի | Ժոզէֆին Աղեքսանդրեան, | ծնեալ
 Կիլիկին, 1885, | հանգ(եալ) 28 դեկտ(եմբեր) 1971:
 Հրատ. *առաջին անգամ*:

27. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղ-
 դանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով
 թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևե-
 լահայաց նիստին, տապանաքարի և պատվանդանի արևելա-
 հայաց կողերին ամրացված մարմարե երեք սալիկներին, փորա-
 գիր, 13 տող.

Տապանաքարի կողին.

Աստ հանգչի մարմինն | ժամկոչ Վարդաառ Փա-
 նոս | Ճապոտեանի, | ծն(եալ) Մարաշ, 1890, հ(ա)ն-
 (գեալ) Հալէպ, 1972:

Տապանաքարի պատվանդանի կողին.

Աստ հանգչի մարմինն | տիրամայր Զեքիա Ճա-
 պուրեանի՝ | ծն(եալ) Պապեան, ի Մարաշ 1900, |
 հ(ա)նգ(եալ) ի Հալէպ 20/3/1983:

Խաչի պատվանդանի արևելահայաց նիստին.

Աստ հանգչին | Միշէլ Ճապուրեան, | 1935-2005,
 | ...գէն Ճապուրեան, | 1983-2006:

Հրատ. *առաջին անգամ*:



28. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղ-
 դանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում անհետացած լու-



սանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին և տապանաքարի արևմտյան եզրին ամրացված մարմարե սալիկներին, փորագիր, 7 տող.

Խաչի պատվանդանի արևելահայաց նիստին.

Աստ հանգչի | Արշալուս Քեշիշեան, | պեսնիցի, | 1910-1974:

Տապանաքարի արևմտյան եզրին.

Աստ հանգչի | Յարութիւն Քեշիշեան, | 1929-1992: Հրատ. *առաջին անգամ*:

29. Տապանաքար. միատիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ կենտրոնում լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ արևմտյան եզրին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.

Ծնած Եղեսիա, 1922, | մեռած Հալեյ, 1975, | հաճի Յակոբ Պասմաճեան: | Ետիդ թողած խեղճ որբուկներ, | այդ ո՞ր գացիր անվերադարձ, | ճակատագիր, կըսեն շատեր, | մահը բնաւ քեզ հարմար չէր, | այդ սեւ հողը քու տեղը չէր, | որք ճըգեցիր քու ձագուկներ:

Հրատ. *առաջին անգամ*:



30. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, անհետացած լուսանկարով թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.

Աստ հանգչի | Կարապետ Թերզեան, | 1931-1977, | տիգրանակերտցի: | Մնաք բարով, երեք գավակներս, | լաճ ու կոց պատէճ ցեր մատաղ սրտեր, | իսկ դու՝ կինս վշտաբեք, | գավակներս խնամէ, աս է կտակս: | Չոհ հիղեհով:

Հրատ. *առաջին անգամ*:



31. Դամբարան. ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ պատվանդանի վրա, թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանին ամրացված և դամբարանի արևելահայաց կողի հյուսիսային և հարավային եզրերին ամրացված մարմարե սալիկներին, փորագիր, 7 տող.



Խաչի պատվանդանին.

Դամբարան | Քեշիշեան | ընտանիքի:

Արևելահայաց կողի հյուսիսահայաց եզրին.

Աւետիս Քեշիշեան, | ծն(աւ) Մարաշ, 1919, մեռ(աւ) Հալեյ, 1990:

Արևելահայաց կողի հարավահայաց եզրին.

Շիքրի Քեշիշեան, | ծն(աւ) Մարաշ, 1916, մեռ(աւ) Հալեյ, 1996:

Հրատ. *առաջին անգամ*:

Ծանոթ. *Շիքրի Քեշիշեանը մանկուց մեծ սեր ուներ ֆուտբոլի հանդէպ: 1932 թ. Հալեյի «Վասպուրական» խմբի անդամ էր: 1933 թ. զինվորագրվում է և խաղում ֆրանսիական «Մէնքիեմ Պաթայոն», ապա Հալեյի «Զարբիեմ Պաթայոն» խմբերում՝ միաժամանակ խաղարկ մաս «Վասպուրական» խմբում: Մինչև 1953 թ. խաղում է «Վասպուրական»-ի Ա խմբում. «Սկզբնական շրջանին յառաջապահ էր, բայց քառասունական թուականներուն կենդրոնապահ է, կազմին «տղեղ»-ը եւ մղիչ ուժը: Խելացի էր եւ պաղարհւմ, օգտակար՝ յետապահ եւ յառաջապահներուն հաւասարապէս՝ իր տեղին փոխանցումներով: Լաւ կազմակերպող մըն էր: Փենալթի քաշելու մասնագէտ էր: Իր խումբը յաղթանակի առաջնորդած է տասնեակ անգամներ: 1941-1942-ին վարած է Ա. խումբի խմբապետի պաշտօնը: Եղած է Մարզական յանձնախումբի, սկաւտական խորհուրդի եւ Մարաշի հայրենակցական միութեան վարչութեան անդամ»: «Փառք չէ փնտռած երբեք: Անտրտունց աշխատած եւ գործի մղած է հայրենասիրական առողջ վարքագիծ ունեցող տարրերը... Սկսեալ ներգաղթի օրերէն մինչեւ վաթսունական թուականներու վերջերը, անկաշառ համոզումներով, ծառայասէր ոգով, բարձրարժէք ղեկավար մը դարձած է»: 1965 թ. ընտրվում է «Գերմանիկ Տան կեդրոնական մարմնի» անդամ (**Կփլիլզեան Տ.**, նշվ. աշխ., էջ 92): Ըստ Հալեյում ԽՍՀՄ-ի գլխավոր հյուպատոսութեան՝ 1968 թ. հոկտեմբերի 23-ի տեղեկանքի՝ «Գերմանիկ-Վասպուրական» միութեան ղեկավարներից էր, ուներ մեքենաների նորոգման պր-հեստանոց և շատ համեստ, գործարար, հայրենասէր մարդ էր (**Բաղայան Ա.**, Սիրիայի հայ համայնքը 1960-ական թթ.-1970-ականների սկզբներին, էջ 226): 1981 թ. հունիսի 6-ին պարզատրվում է «Գերմանիկ-Վասպուրականի»-ի վարչութեան ոսկե մեդալով (**Կփլիլզեան Տ.**, նշվ. աշխ., էջ 92):*



32. Տապանաքար. միաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևմտահայաց նիստին ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 12 տող.

Թողեցի ձեզ | յիշատակ | գծագրութիւնս | Մեւանի: | Աստ հանգչի | Մեւան Քէշիշեան, | ծն(եալ) 1981, Քուէթ, հանգ(եալ) 1992, Հալէպ: | Կոկոն էի անուշ բոյրով, | ուրախ էի թիթեռի պէս, | բայց մահը այդ արագ եկաւ, | կոկոնը պոկեց ծաղիկ չեղած, | հարազատներէն բաժնեց տարաւ:

Հրատ. *ստաջին անգամ:*



34. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արևմտյան եզրին՝ թևավոր խաչ, արձանագրությունը՝ խաչի պատվանդանի արևելահայաց նիստին ագուցված մարմարե սալիկին, փորագիր, 11 տող.

Երեցուհի | Մակի Տատաղեան, | 1954-2007: | Գուցէ աչքերս հոգոս | հաւատան, | որ մահն ու մայրը իրար չեն | գտնի, | ես բաց եմ թողնում | ողջ դռներն իմ տան, | ա՛խ, գուցէ մայրս իրաւ | ներս մտնի:

Հրատ. *ստաջին անգամ:*



33. Հուշակոթող (նվիրված Մեծ եղեռնին). ոճավորված, արձանագրությունը՝ ելնդագիր, 18 տող.

Փառք | հրաշափառ | յարութեան | Քրիստոսի:

Ապրիլ | 1915. | պատիւ | նահատակ | ազգի | վերածնեալ | ժողովուրդի:

Շինեցաւ | յուշարձանս | հայրապետութեան | արհի. Պետրոս արք(եպիսկոպոս) Միրիաթեանի, | արդեամբ | տէր եւ տիկին Կարապետ Վարվառեանի, | Հալէպ, 1997:

Հրատ. *ստաջին անգամ:*



ԷՄԱՆՈՒԵԼ ԵԿԵՂԵՑԻ



Եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ 2006 թ.)



Եկեղեցու տեսքը ներքուստ (լուս.՝ 2006 թ.)

Տեղադրություն. գտնվում է Ազիզիեի շրջանի Ալթունյան փողոցում: Տեղադրությունն է՝ N 36° 12' 28.78", E 37° 09' 03.01":

Պատմություն. Հալեպի ավետարանական հայերը դեռևս Առաջին աշխարհամարտի նախօրեին նյութական միջոցներ էին հայթայթում եկեղեցի կառուցելու նպատակով: 1914 թ. սկզբին հայ ավետարանական «Տիկնանց ջանասիրաց» ընկերությունը կազմակերպում է վաճառահանդես, որի հասույթը՝ շուրջ 100 ոսկի, հատկացվում է տեղի եկեղեցու կառուցմանը¹: Նվիրատվություն է կատարում նաև Հարիետ Ռիդլ-Ալթունյանի եղբայրը՝ տալով 200 ոսկի: Բժիշկ Ասատուր Ալթունյանը, ի հիշատակ առաջին կնոջ՝ իռլանդացի Հարիետ Ռիդլի, խոստանում է նվիրել 1500 ոսկի մի պայմանով, որ ավետարանական համայնքը ևս հավաքի նույնքան գումար²: Ավելի ուշ հավաքվում է նշված 1500 ոսկին³, իսկ Ասատուր Ալթունյանը պատերազմից հետո կատարում է խոստումը, ինչպես նաև նվիրում հողամաս եկեղեցու կառուցման համար⁴:

Եկեղեցու կառուցումն ավարտվել է 1923 թ.⁵:

Ճարտարապետություն. միանավ, բազիլիկ եկեղեցին փայտածածկ է, երկթեք տանիքով: Հարավային և հյուսիսային ճակատներից բացված են հնգական, իսկ արևմտյանից՝ մեկ լուսամուտներ: Մուտքը հարավային ճակատի արևմտյան անկյունից է, որը տանում է դեպի նախասրահ: Վերջինիս արևելյան որմնում է գտնվում աղոթատեղիի միակ մուտքը:

Վիճագրեր. ներկայացնում ենք 3 միավոր արձանագրություն, որից 2-ն առաջին անգամ ընդօրինակել և հրատարակել է Ռ. Ջեքեջյանը: 1 արձանագրություն հրատարակվում է առաջին անգամ:

1. Արձանագրություն. գտնվում է եկեղեցու մուտքի մոտ, մարմարե սալիկին, անգլերեն⁶.

Ի յիշատակ | Հարիետ Մարթա Ալթունյանի, | որուն տեսիլքը, ձեռներեցութիւնը, | նվիրումն ու յարատեվութիւնը հընալրավոր դարձուցին այս եկեղեցիին | շինութիւնը: | Ծնեալ Արմաղ, 1850, | վախճանեալ յամի տեսան 1907:

Հրատ. **Ջեքեջյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 122:

Ծանոթ. արձանագրությունը չենք տեսել: Ներկայացրել ենք հայերեն բարգմանությունը:

Հարիետ Ռիդլ-Ալթունյանը ծնվել է Իռլանդիայի Արմաղ քաղաքում: 1888 թ. Այնթապի Ամերիկյան հիվանդանոցի գլխավոր բուժբույրն էր: Նույն թվականին ամուսնանում է բժշ. Ասատուր Ալթունյանի հետ: 1892 թ. Հալեպում հիմնում է ավետարա-

1 «Կոչնակ», 1914, № 14, էջ 333:

2 **Ջեքեջյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 9, 111-112:

3 «Կոչնակ», 1914, № 16, էջ 382:

4 **Ջեքեջյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 9, 111-112:

5 Տե՛ս Էմանուել եկեղեցու արձ. № 2:

6 **Ջեքեջյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 122:

նականների մանկապարտեզ, որի ողջ կահույքը բերում է Անգլիայից և նվիրում համայնքին: Նա ամբողջությամբ նվիրվում է հայ ժողովրդին, մանավանդ 1895 թ. Համիդյան ջարդերից հետո: Մահացել է 1907 թ. օգոստոսի 25-ին Եռլանդիայում (**Ջերեջյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 9, 108-110):

Ասատուր Ալթունյանի մասին տե՛ս Էմանուել եկեղեցու արձ. № 3: Գստեր՝ Նորայի մասին տե՛ս Շեխ-Մագսուդի ավետարանական գերեզմանատան արձ. № 73:

2. Արձանագրություն. շրջապարսպի դարպասի սյանն անբացված մարմարե սալիկին, փորագիր, 7 տող, մեկընդմեջ նույն բովանդակությամբ հայերեն, արաբերեն և անգլերեն.

Հայ | ավետարանական | Էմանուուէլ եկեղեցի:

كنيسة عمانوئيل للارمن البروتستانت.

Armenian evangelical | Emmanuel church, | 1923

Հրատ. առաջին անգամ:



3. Տապանաքար. եկեղեցու բակում, տապանագիրը՝ ամրացված եկեղեցու հարավային պատին, վերնամասում կամարածև մարմարե սալիկին, անգլերեն, փորագիր, 22 տող և տապանա-



քարի երեսին ամրացված մարմարե սալիկին՝ արաբերեն, փորագիր, 4 տող, որից ցած՝ փորագիր, 7 տող հայերեն (բոլոր լեզուներով արձանագրություններն ունեն նույն բովանդակությունը).

Վերնամասում կամարածև մարմարե սալիկին.

Անգլերեն.

Assadour Aram | Altounyan, | M.D., Columbia | F.I.C.S. Hon(orary) | Syrian Order of Merit | <Hors Classe>, | knight of the Order of the | Crown of Italy, | born | Sivas March 21, 1854, | died | Aleppo January 4, 1950, | educated in Aintab, | New York, Heidelberg | and Vienna. | In Aleppo he established | the practice of medicine and | surgery on the basis of | science, found- ed the hospital | which bears his name and | attained an international | reputation.

Տապանաքարի երեսին ամրացված մարմարե սալիկին.

Արաբերեն.

هذا ضريح المرحوم آسادور آرام الطونيان | دكتور في الطب من جامعة كولومبيا، و عضو فخري في جمعية الجراحين الاممية، وحامل وسام الاستحقاق السوري من الدرجة الممتازة، ووسام «فارس» من جوقة التاج الايطالي | ولد في سيواس بشهر آذار عام ١٨٥٤ و توفي في ٤ كانون الاول عام ١٩٥٠. تخرج من كلية عنتاب، ودرس في معاهد نيويورك، وهيدلبرغ، و وينا | مارس الطب والجراحة في حلب حسب العلم الحديث و انشا المستشفى المسمى باسمه و اكتسب شهرة عالمية في فنه ومحصلته.

Բժշկապետ | Ասատուր Արամ Ալթունյան, | ծննալ 21 մարտ 1854-ին Մեքասսիա, յանգնալ ի

տեր, 4 յունուար 1950-ին: | Ուսումը ստացած է Այնթապ, Նիւ-Եորք, Հայտելյէրկ եւ Վիեննա: | Արժանացած Սուրիական բացառիկ կարգի արժանեաց շքանշանին, ասպետ իտալական | գահի կարգին: Հալէպի մէջ ինք հաստատեց բժշկութեան եւ վիրաբուժութեան | կիրարկումը, իր անուամբ հիմնեց միջազգային համբաւ վայելող հիւանդանոցը:

Հրատ. **Ջեքեջյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 123: Անգլերեն և արաբերեն արժանագրությունները հրատարակվում են առաջին անգամ:

Ծանոթ. սերաստացի Ասատուր Ալթունյանը բժիշկ Թադեոսի և ուսուցչուհի Թագուհու որդին էր, մահտեսի Աստվածատուր աղա Մշնշուկյանի թոռը (բամբակի մեծահարուստ վաճառական էր ու այդ պատճառով իսկ կոչվում էր Ալթուն-Օղլի): Մորական պապը տեր Եղիան էր: 1864-1871 թթ. սովորում է Սերաստիայի դպրատանը: Ավարտելուց հետո, որպես աշակերտ, աշխատում է բժշ. Վեստի դեղարան-դարմանատանը: 1878-1881 թթ. սովորում է Այնթապի բժշկական եռամյա դպրոցում, ապա նույն տեղում նշանակվում դասախոս: 1884-1885 թթ. ուսանում է Նյու Յորքի Կոլումբիայի քոլեջում, ապա մեկնում է Գերմանիա՝ Հելտերբերգ և աշակերտում Չերնին և Էրպին: Հետո վեց ամիս մնում է Բեռլինում՝ պրոֆ. Քոխի մանրէաբանական լաբորատորիայում: 1887 թ. վերադառնում է Պոլիս և ստանում Թուրքիայում գործունեություն ծավալելու իրավունք: Ընդունվում է Այնթապի բժշկական դպրոց՝ որպես դասախոս-պրոֆեսոր: Այս ժամանակահատվածում բժշկական այցեր է կատարում դեպի Եդեսիա (Ուրֆա), Ամիդ (Դիարբեքիր), Սևերեկ և այլն: 1888 թ. մեկնում է Վիեննա՝ Բիրոթի կլինիկա, ապա Լոնդոն՝ Սեյնտ Մեյրիզ հիվանդանոց՝ աշխատանքի: 1889 թ. վերջնականապես հաստատվում է Հալեպում և հիմնում կլինիկա: 1896 թ. Ակաբա քաղաքում հիմնում է հիվանդանոց, իսկ 1908 թ. սկսում է կառուցել Ալթունյան հիվանդանոցի շենքը՝ ավարտելով 1911 թ. (հիվանդանոցը գործում էր մինչև 1962 թ.): Մինչև 1914 թ. Իտալիայի թագավոր Վիկտոր Էմանուելի կառավարության հրովարտակով նրան տրվում է Իտալական գահի ասպետ տիտղոսը: 1927 թ. հիմնում է բուժքույրերի դպրոց, որը գործում էր մինչև 1958 թ. (**Ջեքեջյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 8-13, 29, 39, 57, 82, 101, 116: Տես նաև **Չրաճեան Մ.**, Կենսագրական նօթեր տօթք. Ա. Ալթունեանի, «Սուրիահայ տարեցոյց», Հալէպ, 1924, էջ 250-251): Հալեպում ստատում է մարմնամարզության զարգացմանը, երկար ժամանակ «Համազասպ» ակումբին տրամադրում է տարածք, որտեղ 100-ից ավելի մանուկներ էին մարզվում (**Ողիմպոս**, նշվ. հոդվ., էջ 248): 1918 թ. դեկտեմբերին նշանակվում է Հայ ազգային միության նախագահ (**Տէր-Խաչատուրեան Ա.**, նշվ. հոդվ., էջ 198): 1919 թ. սեպտեմբերի 2-ին մասնակցում է Հայկական կարմիր խաչի հիմնադրման աշխատանքներին և երկար տարիներ նախագահում (**Բոշյանեան Ն.**, նշվ. հոդվ., էջ 273-275): 1927 թ. Շիրակի երկրաշարժի աղետոյալների համար Հալեպում հանգանակություն կատարվելու ժամանակ նվիրում է ամենաշատ գումարը՝ 15 ոսկի («Արեւ», 19 մարտ, 1927, էջ 1): 1929 թ. նշանակվում է նորակազմ Խնամատար մարմնի առենապետ: Կազմակերպության նպատակն էր օգնել թուրքական պետության ճնշումների հետևանքով Խարբերդից, Բալուից, Տիգրանակերտից Սիրիա հասած նոր հայ գաղթականներին (**Ֆիշենկեան Ա.**, նշվ. հոդվ., էջ 309, 312): 1935 թ. օգոստոսի 1-ին ցմահ ընտրվում է ՀԲԸՄ Հալեպի մասնաճյուղի պատվո նախագահ (**Պեղդուտեան Լ.**, նշվ. հոդվ., էջ 477): 1930 թ. նոյեմբերի 26-ին սիրիական կառավարության կողմից պարգևատրվում է «Սուրիական Արժանյաց» Բ կարգի շքանշանով, 1937 թ. հոկտեմբերի 10-ին ստանում ՀԲԸՄ վետերան անդամի կոչում: 1939 թ. մայիսի 23-ին



Նյու Յորքում պարգևատրվում է Վիրաբույժների միջազգային քոլեջի պատվո անդամության ոսկե մեդալով և «F.I.C.S.» վկայագրով: 1940 թ. մայիսի 15-ին սիրիական կառավարության կողմից պարգևատրվում է «Սուրիական Արժանյաց» Ա կարգի պատվո նշանով: 1946 թ. Հալեպի վերակազմյալ բժշկական միության կողմից ցմահ ընտրվում է պատվո նախագահ: 1950 թ. հունվարի 11-ին սիրիական կառավարության կողմից հետմահու պարգևատրվում է «Սուրիական Արժանյաց արտադաս գերագոյն» շքանշանով (**Ջեքեջյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 19-22, 25-28, 119): Նա «աւելի քան կէս դար» պատմութիւն կերտած է Սերձավոր Արեւելքի մէջ բժշկական առաջընթացի ընդհանուր ծիրէններու... հռչակը տարածված էր Օսմանյան Կայսրութեան ամենահեռատր անկիւնները մինչև Պաղտատ, Կարին և Պոլիս: Անգլիո մէջ անգամ, բժշկական շրջանակներու ժանօթ էր ան Հալեքի Ալթունյանը մակդիրով... Ալթունյանին կը պարտինք Հալեքի մէջ արդիական բժշկութեան հիմնավորումն ու զարգացումը...» (նշվ. աշխ., էջ 5): Ժամանակի բոլոր հալեպցիները, «...քաղաքացի թէ գիւղացի և նոյնիսկ Հալէպի հեռատր շրջանակներէն եկող ... վրանաբնակ Պէտէվին միշտ գովասանքով կը Խօսին Բժշկապետ Ա. Ալթունեանի մասին և երախտիք մը կը նկատեն զայն իրենց պարգևուած» («Սուրիահայ տարեցոյց», Հալէպ, 1924, էջ 236, 237):

1935 թ. Ալթունյանի որդուն՝ Էռնեստին էր պատկանում 1726 թ. Գերմանիկում գրված և ծաղկված մի Ավետարան (ՅՉՀԲՄ, էջ 380):

Կնոջ՝ Հարիետի մասին տես Էմանուել եկեղեցու արձ. № 1: Դստեր՝ Նորայի մասին տես Շելի-Սագաուղի ավետարանական գերեզմանատան արձ. № 73:

ՄԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ



Եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ 1930 թ.)

Տեղադրություն. գտնվում է Միդանի շրջանում (հասցեն՝ Պատրիարք Չարեհ Ա փողոց, թիվ 3): Տեղադրությունն է՝ N 36° 13' 12.31", E 37° 10' 03.07":

Պատմություն. Եկեղեցու շինարարական աշխատանքները սկսվել են 1930 թ.¹: 1932 թ. Հալեպի առաջնորդ Արտավազդ Սյուրմեյանի ջանքերով ալեքսանդրիաբնակ Հովակիմյանը քույրերի հետ եկեղեցին կառուցելու համար նվիրում է 500 ոսկի²: Նույն նպատակով նյութապես օգնում է մաս օրիորդ Քարեն Եփեմն³: Եկեղեցու հանդիսավոր օծումը կատարվում է 1933 թ. նոյեմբերի 19-25-ին Արտավազդ սրբազանի, իսկ սեղանի օծումը՝ նոյեմբերի 26-ին Բաբկեն Ա աթոռակից կաթողիկոսի կողմից⁴: 1973-1975 թթ. իրականացվում են մի շարք նո-

րոգություններ, իսկ 1984-1987 թթ. իրագործվում են հիմնավոր նորոգություններ և բարեգարդումներ (օրինակ՝ 1984 թ. նորոգվում են մկրտության ավազանը և եկեղեցու շքամուտքը)⁵: 1968 թ. Հալեպի առաջնորդական տեղապահ Տաթև վրդ. Սարգսյանի ջանքերով եկեղեցին վերստին նորոգվում է, որի ծախսը կազմում է 50000 սիրիական լիրա⁶:

Ճարտարապետություն. ութանիստ գմբեթով, հարթ տանիքով, եռանավ բազիլիկ եկեղեցին արևելքում ավարտվում է արտաքուստ շեշտված խորանով և երկու ավանդատներով: Գմբեթը բարձրանում է կենտրոնական 4 սյուների վրա: Եկեղեցու արևմուտքից կցված է սյունասրահը (երկրորդ հարկում վերնատունն է), իսկ հարավարևմտյան անկյունում՝ զանգակատունը: Ունի զույգ մուտքեր՝ բացված հյուսիսային ճակատից և սյունասրահի կենտրոնից:

1 Տես Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արձ. № 1:

2 Տեմիրճեան Վ., նշվ. աշխ., էջ 314:

3 Մահակեան Ա., նշվ. աշխ., էջ 520:

4 «Հասկ», 1933, № 12, էջ 64:

5 Ազեզեան Հ., նշվ. հոդվ., էջ 402:

6 Տեմիրճեան Վ., նշվ. աշխ., էջ 426:



Եկեղեցու տեսքն արևմուտքից (լուս.՝ 2006 թ.)



Եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք (լուս.՝ 2006 թ.)

Վիճազորեր և եկեղեցական իրերի արձանագրություններ. ներկայացնում ենք 13 միավոր արձանագրություն, որոնցից 1-ը հրատարակել ենք նախապես, իսկ 12-ը՝ առաջին անգամ:

1. Արձանագրություն. եկեղեցու արևմտյան ճակատից բացված մուտքի բարավորի մարմարե կիսակամար սալիկին՝ փորագիր, 9 տող.

Յ(խոս)ս Ք(րիստո)ս: | Ողորմութեամբն աստուծոյ կառուցաւ տաճարս | յանուն Ս(ուրբ) Գրիգոր Լուսաւորչին մերոյ յամին 1930 | եւ յանգ ելեալ աւարտեցաւ ի նոյեմբերի 1933 տարւոյ: | Տրօք եւ նուիրօք ազգիս հայոց նախաձեռնութեամբ եւ ջանիւք | եւ վերակեցութեամբ առաջնորդին Բերիոյ թեմին տեառն Արտաւազդ Ա արքեպիսկոպոսի Սիւրմէեան ի հայրապետութեան տանն Կիլիկիոյ Տ.Տ. Սահակ | Բ կ(ա)թ(ո)ղ(ի)կ(ո)սի եւ աթոռակցի նորին Տ.Տ. Բարկէն Ա կ(ա)թ(ո)ղ(ի)կ(ո)սի կատարեցաւ հանդէս նաւակատեաց | եւ օծման հանդիսադրութեամբ երկուց կաթողիկոսաց ի 26 նոյ(եմ)բ(եր)ի 1933: | Ճարտարապետ Խաչեր Արապեան, եղեսիացի:

Հրատ. **Քորթոյան Բ.**, նշվ. հողվ., էջ 58:

Ծանոթ. Սահակ Բ Խապայան կաթողիկոսը պաշտոնավարել է 1902 թ. հոկտեմբերի 12-ից մինչև 1939 թ. նոյեմբերի 8-ը, իսկ Բարկէն Ա արքուակից կաթողիկոսը՝ 1931 թ. ապրիլի 25-ից մինչև 1936 թ. հուլիսի 9-ը (նշվ. աշխ., սյունակ 1017, 1086):

2. Արձանագրություն. խորանի սեղանի պատվանդանին ագուցված մարմարե սալիկին՝ ելնդագիր, 6 տող.


Յիշատակ է | սուրբ սեղանս եւ խաչկալս | Պետրոս եւ Գրիգոր հարազատներու | իրենց հանգուցեալ հօր՝ | մ(ա)հ(տե)ի Մեսրոպ Խ. Մարանկօզեանի, բալուցի, | 1852-1922:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Պետրոս Մարանկոզյանը 1928 թ. Ազգային Հայկազյան վարժարանի հոգաբարձության անդամ էր («Տաթև», 1929, էջ 381), իսկ 1938 թ. Ս. Կյուլպենկյան արհեստից վարժարանում՝ քննիչ (ՀԱԳ, ֆ. 1394, ց.1, գ. 108, թ. 7): 1939 թ. հուլիսի 9-ին հիշվում է որպես կահագործ վարպետ երկաթուղու ընկերությունում և ուսուցիչ վերոնշյալ վարժարանի ատաղձագործության բաժնում (նույնի՝ գ. 221, թ. 1): 1939-1941 թթ. նույն վարժարանի հոգաբարձության ատենապետն էր (նույնի՝ գ. 71, թ. 1; գ. 73, թ. 1 և գ. 95, թ. 2-3):



3. Մասնատուփ. արձանագրությունը՝ փորագիր, 1 տող.





Յիշատակ է խարբերոցի Մարթա Յովհաննէսեանէ Ս(ուրբ) Գ(րիգոր) Լ[ուսատր]իչ եկեղ(եց)ոյ, Հալէպ, 1933:

Հրատ. առաջին անգամ:

4. Մկրտոթյան ավազան. ոճավորված, շինարարական արձանագրությունը՝ ավազանին, փորագիր, 3 տող.

Յիշատակ | Երուանդ Ա. Տէմիրճեանի, | 1933:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. այնքապցի Երվանդ Տէմիրճեանը 1928 թ. Ազգային Հայկազյան վարժարանի հոգաբարձության ատենադպիրն էր («Տարե», 1929, էջ 381), 1931 թ.՝ Շէխ-Մագառի գերեզմանոցի բարեկարգման հանձնաժողովի անդամ (ՊՀԱԳԱՀՏ, էջ 52), իսկ 1937 թ. հունվարի 21-ից մինչև 1950 թ. ապրիլի 20-ը՝ Սբ. Աստվածածին եկեղեցու քաղական խորհրդի գանձապահ (Հինաոյեան Զ., նշվ. աշխ., էջ 23):



5. Լվացում (կոնք և փարչ). արձանագրությունը՝ կոնքին, փորագիր, 4 տող.

Կը նուիրէ լէկէնս բինկէնցի Նունիկ Տէր-Օհանեան(ը) | իր ո(ր)դոյ՝ Պետրոսի եւ Օհանի հոգւոյ համար | Նոր Գիւղի Ս(ուրբ) Լուսատրիչ եկեղեցիւն, | 1934 մարտ 29:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. Բինկէնը Բենկա գյուղն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի Ակն գավառում՝ Ակնից 18 կմ հյուսիս-արևմուտք: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Ադաթեփե (Adatepe):

6. Սրբապատկեր «Սբ. Սահակ Պարբև». ամրացված է հարավային ավանդատան մուտքից վեր, արձանագրությունը՝ ներկագիր, մեկական տող հայերեն և անգլերեն.

Ս(ուրբ) Սահակ Պարբէ:

Անգլերեն.

Ե. TOROS (թարգմ. Է. Թորոս), 1963:

Հրատ. առաջին անգամ:



7. Սրբապատկեր «Սբ. Մեսրոպ Մաշտոց». ամրացված է հյուսիսային ավանդատան մուտքից վեր, արձանագրությունը՝ ներկագիր, մեկական տող հայերեն և անգլերեն.

Ս(ուրբ) Մեսրոպ Մաշտոց:

Անգլերեն.

Ե. TOROS (թարգմ. Է. Թորոս):

Հրատ. առաջին անգամ:



8. Սրբապատկեր «Սբ. Գրիգոր Լուսավորիչ». արձանագրությունը՝ ներկագիր, 6 տող.

Նուիրէ | պատկերս Ս(ուրբ) Գրիգորի Լուսատրչի | հայրապետին մերոց | Մարգիս Արծիւեան, ի յիշատակ նահատակ | հօր իւրոյ՝ Աբրահամու, | Հալէպ, 1966:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Մարգիս Արծիւյանը հիշվում է 1955 թ. հայեպարնակ ուրֆացիների ցանկում, որի համաձայն՝ ամուսնացած էր և ուներ 5 տղա, 3 աղջիկ (Մահակեան Ա., նշվ. աշխ., հավելվածք (Ուրֆացիներու մարդահամարը), էջ 9): Ըստ Հալեպում ԽՍՀՄ-ի գլխավոր հյուպատոսության՝ 1964 թ. հուլիսի 24-ի տեղեկանքի՝



55-ամյա Սարգիս Արծիվյանը ՀՅԴ-ի կենտրոնական կոմիտեի գանձապահն էր: Ուներ թաղման հարցերով զբաղվող ձեռնարկություն (Բաղդաս Ա., Հայկախի հայ համայնքը 1964-1985 թթ., էջ 121):

9. Սրբապատկեր «Սուրբ Սարգիս». ամրացված է եկեղեցու հարավային որմին կառուցված որմնափակ խորանի ներսում, արձանագրությունը՝ ներկագիր, 6 տող.



Ս(ուրբ) Սարգիս զօրավար | նկարս այս կը նուիրէ Յարութիւն Սարգիսեան | Մէյտանի Ս(ուրբ) Գրիգոր Լուսատրիչ եկեղեցոյն | ի յիշատակ իր վաղամեռիկ կնոջ՝ | տիկ(ին) Ազնիւ Սարգիսեանի մահուան տարելիցին: Յամի տեառն 16/11/1979, | Հալէպ, Սուրիա:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. «Սբ. Սարգիս» սրբապատկերի խորանը կառուցվել է 1986 թ., որի նախագծողը և իրագործողը ճարտարապետ Գեղամ Խրիկյանն է (Ազեզեան Հ., նշվ. հոդվ., էջ 402):

10. Աշտանակ. արձանագրությունը՝ պատվանդանին, փորագիր, 6 տող.



Նուէր | Ս(ուրբ) Գ(րիգոր) Լ(ուսատրիչ) եկեղեցոյ | հանգուցեալ Ասատուր Ամիրխանեանի | յիշատակին, | որդին՝ Սկրտիչ աագ Ս. Ամիրխանեան, | Հալէպ, 27/4/1984:

Հրատ. առաջին անգամ:



11. Աղբյուր. ոճավորված (նվիրված է 1988 թ. Սպիտակի երկրաշարժի զոհերի հիշատակին), գտնվում է եկեղեցու բակում, արձանագրությունը՝ 9 տող.

Սև մարմարին, ներկագիր.

Հայոց | մեծ երկրաշարժի | զոհերու յիշատակին, | Բալուի | հայրենակցական միութիւն, | 1989:

Աղբյուրին ամրացված մետաղյա սալիկին, փորագիր.

Նուիրատուութեամբ | տէր, տիկ(ին) | Սարգիս Կիրակոսեան(ներ)ի:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. աղբյուրի նախագծողը և իրագործողը ճարտարապետ Անդրանիկ Միրանյանն է (Ազեզեան Հ., նշվ. հոդվ., էջ 402): Բացումը կատարվել է 1989 թ. դեկտեմբերի 10-ին (Պատմողու շնչող հայաբոյր Հայկայր, էջ 8):

12. Մոմասեղան. մարմարակերտ, ոճավորված, արձանագրությունը՝ կամարին և պատվանդանին, փորագիր, 8 տող. Կամարին.

Պիտի լսե անօգնական մարդոց աղօթքը, պիտի չանտեսե անոնց խնդրանքները: | Ճրագ է բան քո ուտից ինոց եւ լոյս տայ շաւղայ ինոց:
Պատվանդանին.

Յառաջնորդութեան գերաշնորհ | տ(էր) Շահան ս. եպ(ի)ս(կոպոս) Սարգիսեանի, | յամի տեառն 2006 | կառուցաւ ս(ուրբ) մոմասեղանս արդեամբ տէր եւ տիկին Գարբիէլ Չեմպերճեան(ների), | տէր եւ տիկին Վիգէն Չեմպերճեան(ների) | ի յիշատակ հանգուցեալ մօր իւրեանց՝ Պերճուհի Չեմպերճեանի:
Հրատ. առաջին անգամ:



13. Մոմասեղան. մարմարակերտ, ոճավորված, արձանագրությունը՝ կամարին և պատվանդանին, փորագիր, 8 տող. Կամարին.

Տէրն է լոյս եւ փրկութիւնս, որմէ պիտի վախնամ ես, | ես եմ լոյս աշխարհի:
Պատվանդանին.

Յառաջնորդութեան գերաշնորհ | տ(էր) Շահան ս. եպ(ի)ս(կոպոս) Սարգիսեանի, | յամի տեառն 2006 | կառուցաւ մոմասեղանս արդեամբ տէր եւ տիկին Կարապետ Համամճեանի | ի յիշատակ | վաղամեռիկ որդոց իւրեանց՝ Յովսէփ եւ Շիրազ Համամճեան(ներ)ի:

Հրատ. առաջին անգամ:
Ծանօթ. ի հիշատակ հանգուցյալներ Հովսէփ եւ Շիրազ Համամճեանների՝ Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանոցում կառուցվել է աղբյուր (տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 1603):



ԲԵԹԵԼ ԵԿԵՂԵՑԻ



Եկեղեցու տեսքն արևմուտքից (լուս.՝ 2006 թ.)



Եկեղեցու տեսքը հարավից (լուս.՝ 2006 թ.)

Տեղադրություն. գտնվում է Ջաբրիեի շրջանում՝ N 36° 12' 59.04", E 37° 09' 44.64" տեղադրությամբ:

Պատմություն. 1931 թ. Բեթել եկեղեցու համայնքը¹ ծրագրում է կառուցել քարաշեն նոր եկեղեցի և այդ նպատակով 1000 օսմանյան ոսկի գումարով Ջաբրիե թաղամասում գնում է 2500 մ² հողատարածք: Հիմնարկեքը կատարվում է 1934 թ. փետրվարի 7-ին: Շինարարությունն ավարտվում է 1935 թ.²: Եկեղեցին հիմնովին նորոգվում է 2010 թ.:

Ճարտարապետություն. եռանավ բազիլիկ եկեղեցին (չափերն են՝ 20x15 մ)³ ունի հարթ առաստաղ: Կենտրոնական նավն ավելի բարձր է, որից բացվում է 18 լուսամուտ (9-ական՝ հարավից և հյուսիսից): Հյուսիսային և հարավային ճակատներից լուսավորվում է հնգական, իսկ արևելյան ու արևմտյանից՝ երկուական լուսամուտով: Արևմտյան ճակատի կենտրոնում կցված է զանգակատունը: Եկեղեցին ունի մեկ մուտք՝ բացված արևմուտքից՝ զանգակատնից: Վերջինիս մուտքը նույնպես արևմուտքից է:

Վիճագիր. ներկայացնում ենք 1 միավոր արձանագրություն, որը հրատարակվում է առաջին անգամ:

1. Հուշակոթող. ոճավորված (նվիրված Մեծ եղեռնի զոհերին). գտնվում է եկեղեցու բակում, արձանագրությունը՝ հուշակոթողին կից անրացված մարմարե երկու սալիկներին, փորագիր, 26 տող.



Սալիկ Ա, 16 տող հայերեն.

Վկայութիւն, | բայց գոհութիւն աստուծոյ, որ մեզի յաղթութիւն կուտայ | մեր տէր Յիսուս Քրիստոսին ձեռքով: Ա. Կորնթացիս 15. 57: | Առ բարձրեալն աստուած գոհաբանութեամբ կանգնեցինք | այս յուշարձան համալիրը ի յիշատակ ապրիլեան Մեծ եղեռնի | սրբացեալ մահատակներուն: | Թող այս սրբանուէր յուշակոթողը յաւերժական | յայտարար

¹ Համայնքը կազմավորվել է 1923 թ.: Հայեպի Համիդիե թաղամասում ունեին քիթեղաշեն եկեղեցի (չափերն էին՝ 20x9 մ), որը ծառայում էր նաև որպես դպրոց (**Շնորհոքեան Մ.**, նշվ. աշխ., էջ 5-6):

² Նշվ. աշխ., էջ 10:

³ Նույն տեղում:



Եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք (դու.՝ 2007թ.)



Եկեղեցու ներքին տեսքը դեպի արևմուտք (դու.՝ 2007թ.)

ըլլայ մեր նախագահի խօսքին՝ | «Նահատակներ
ամբողջ աշխարհի եւ մարդկութեան | վսեմագոյն եւ
էն արաքիւնի էակներն են», | եւ նուիրական վկայու-
թիւն մը արաք եւ հայ ժողովուրդներու | ջերմ սիրտ
բարեկամութեան պատճառաւսման: | Այս յուշակո-
թողը կառուցուեցաւ նուիրատուութեամբ | տէր եւ
տիկ(ին) Ասատուր, Մաքրուհի Հալլաճեան(ներ)ի՝ |
իրենց նահատակ հօր՝ Յարութիւն Հալլաճեանի յի-
շատակին, | ապրիլ 1995:

Սալիկ Բ, 4 տող արաքերէն եւ 6 տող անգլերէն.

بمناسبة ذكرى الشهداء و عيد الشهداء | قام الدكتور محمد
مصطفى ميرو محافظ حلب | بتدشين هذا النصب التذكري
تمجيذاً وتخليداً لشهادتهم و رمزا لتضحياتهم.

Թարգմ. Հալբայի նահանգապետ դոք. Մուսթաֆա Մի-
րուն նահատակների օրվա կապակցությամբ կա-
տարեց այս հուշակոթողի բացումը՝ փառավորելու եւ
հավերժացնելու նահատակներին եւ նրանց կատա-
րած զոհողությունները:

With heartfelt thanks and praises to our God | the
Almighty, we have erected this memorial | monument in
honor of the Armenian martyrs | of the Great Genocide
of April 1915 | to bring alive this manifestation before
the | conscience of the whole world and humanity.

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. 1996 թ. մայիսի 5-ին Հալբայի նահանգապետ «տիար
Մուհամմետ Մուսթաֆա Միրո, ընկերակցութեամբ իր շքախում-
բին... եկաւ եւ ներկայ եղաւ կազմակերպուած յարգանքի արար-
դութեան... եւ ապա արտասանեց.-«Արաք-Հայկական բարեկա-
մութիւնը պատմական փաստ է, զօր պէտք է զօրացնել ու զար-
գացնել մանաւանդ այն յայտնի պատճառաւ, որ մեր բշխամին
հասարակաց է: Զգոյշ ըլլանք եւ պատմութիւնը կտակենք հետա-
գայ սերունդներուն» (Հայ աւետարանական Բեթել եկեղեցի. 75
ամեակ 1922-1997, Հալբայ, 1997, էջ 28-29):

Մաքրուհի Հալլաճեանը ծնվել է 1921 թ. Խարբերդի Եղեզի
գյուղում: Մեսրոպ եւ Նվարդ Քորթոշյանների ընտանիքում: Մա-
հացել է 2002 թ.: Ծնողների մասին տե՛ս Շելի-Մագսուդի առաքե-
լական գերեզմանատան արձ. № 1468:

Սալիկ Ա-ում սիրտ բառի ի տառը սխալ է փոխադրված, ի
փոխարեն պետք է լիներ ե, իսկ պատճառաւսման բառի տ-ն՝ j:



ՄԲ. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ



Եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ 1940թ.)



Եկեղեցու տեսքը հարավ-արևելքից (լուս.՝ 2006թ.)

Տեղադրություն. գտնվում է Սլեյման ալ Հալապի շրջանում (հասցեն՝ Ալ-Մինհալ ալ Մաֆի փողոց, թիվ 1): Տեղադրությունն է՝ N 36° 13' 16.91", E 37° 10' 14.66":

Պատմություն. 1937 թ. մայիսի 10-ին կատարվում է եկեղեցու հիմնարկերի օժման արարողությունը¹, ապա կառուցվում «...քարաշեն պատերով թիթեղածածկ..., որը ծառայեց նաև իբր մանկապարտեզ...»²: Եկեղեցու թաղական խորհուրդը 1955 թ. որոշում է հիմնովին վերակառուցել եկեղեցին՝ կառուցելով նաև զմբեթ³: 1957 թ. կառուցվում են ավագ, հարավային և հյուսիսային խորանները⁴: 1965 թ. սեպտեմբերի 25-26-ին տեղի է ունենում վերածոււմը⁵:

1968 թ. եկեղեցու թաղական խորհուրդը չէր ընդունում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության իրավասությունը և ձգտում էր դեպի Էջմիածին⁶:


1985 թ. կառուցվում են զույգ զանգակատները⁷: 1987 թ. վերակառուցվում է մկրտության ավազանը⁸:

2012 թ. հոկտեմբերի 29-ին Հալեպում ընթացող մարտական գործողությունների հետևանքով եկեղեցին հրկիզվում է⁹:

Ճարտարապետություն. ունի զմբեթավոր դահլիճի հորինվածք: Կենտրոնական ավագ խորանն արտաքուստ շեշտված է: Եկեղեցուն արևմուտքից կից է սյունասարահը, որի հյուսիսարևմտյան և հարավարևմտյան անկյուններում զանգակատներն են: Միակ մուտքը բացվում է սյունասարահի կենտրոնից:

Վիմագրեր և եկեղեցական իրերի արձանագրություններ. ներկայացնում ենք 21 միավոր արձանագրություն, որոնցից 2-ը հրատարակել ենք նախապես, իսկ 19-ը՝ առաջին անգամ:

1. Սկիհի պատվանդան. արձանագրությունը՝ Էլնրագիր, 1 տող.



1 Տեմիրճեան Վ., նշվ. աշխ., էջ 325: Հմմտ. Քեչիշեան Վ., Գոյապատում, էջ 101:
2 Մամուլեան Վ., նշվ. աշխ., էջ 74-75:
3 Քեչիշեան Վ., Գոյապատում, էջ 138:
4 Տե՛ս Սք. Գևորգ եկեղեցու արձ. № 7, 8, 9:
5 Տեմիրճեան Վ., Գաւազանագիրք Բերիոյ հայոց թեմի առաջնորդներու, «Հասկ», 1978, № 1-3, էջ 41-42:
6 Բաղդասյան Ա., Միրիայի հայ համայնքը 1960-ական թթ.-1970-ականների սկզբներին, էջ 226:
7 Տե՛ս Սք. Գևորգ եկեղեցու արձ. № 10, 11:
8 Տե՛ս Սք. Գևորգ եկեղեցու արձ. № 12:

9 «Ազգակ», 30 հոկտեմբեր, 2012:



Եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք (լուս.՝ 2006թ.)



Եկեղեցու ներքին տեսքը հրկիզումից հետո (լուս.՝ Պերճ Պողոկյանի, 2012 թ.)

Յ(ի)շ(ատա)կ է այս սրկիհս Զեթունայ վանից Ս(ուր)բ Փրկչայ և Ս(ուր)բ Ա(ստուա)ծածնայ ձեռամբ Յօվհաննես արքեպիսկօ(պո)սին, թվին ՌՄՉԱ (1832):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ըստ եկեղեցու թաղականության անդամ Բաֆֆի Տեր-Հակոբյանի՝ սկիհի պատվանդանը 2010 թ. հանձնվել է առաջնորդարանի գանձատուն:



2. Մոմակալ. արձանագրությունը՝ պատվանդանին, փորագիր, 1 տող.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է Հա(յ)եղկայ Ս(ուրբ) Եղիեայ եկեղեցոյ հ(այր) Յակոբ Թիթիւնճեանէն, 1912:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ըստ Բաֆֆի Տեր-Հակոբյանի՝ մոմակալը 2010 թ. հանձնվել է առաջնորդարանի գանձատուն:

Հայեղիկը գտնվում է Արևմտյան Հայաստանի Դիարբեքիրի մահանգի համանուն գավառում՝ Տիգրանակերտից 10-12 կմ հյուսիս:



3. Մասնատուփ. արձանագրությունը՝ պատվանդանին, փորագիր, 1 տող.

Յիշատակս այս հ(ա)նգ(ու)ց(եա)լ մ(ահտեսի) Ս(ա)հ(ա)կի(ն) և կին ն(ո)ր(ա)՝ կենդանի մ(ահտեսի) Մարիամի(ն) ի Ս(ուր)բ Սա(ե)փ(ա)ննոս եկ(ե)-ղ(ե)ցո(ւ):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ըստ Բաֆֆի Տեր-Հակոբյանի՝ մասնատուփը 2010 թ. հանձնվել է առաջնորդարանի գանձատուն:



4. Սրբապատկեր «Սուրբ Գևորգ». գետեղված է որմնափակ խորանում, արձանագրությունը՝ ներկագիր, 3 տող.

Ս(ուրբ) Գևորգ: | Յիշատակ է պատկերս նորակառոյց Հայաշէն գիւղի ս(ուրբ) եկեղեցոյ արդեամբ եւ ծախսիք հալէպցի բարեսէր Մարտիրոս Աւետիսեան(ի), | 1928 մայիս 20, Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. սրբապատկերի խորանը կառուցվել է 1985 թ. (Ազգեզեան Հ., նշվ. հոդվ., էջ 403): Ամենայն հավանականությամբ, Հայաշեն գյուղի պարպումից հետո սրբապատկերը բերվել է Հալէպ:

Հայաշեն գյուղը հիմնվել է 1928 թ.: Գտնվում էր Բիհանիե և Հարիմ գյուղերի միջև՝ «Ասկեր Չայրը» կոչված տեղամասում, որտեղ Հալէպից փոխադրվել էր գաղթական 100 հայ ընտանիք (Փիրանեան Տ., Հալէպահայ տարին 1927-1928, «Միւրիահայ տարեգիրք», Պէյրութ, 1929, էջ 192-194): 1938 թ. հուլիսի 5-ին,



երբ թուրքական բանակը մտնում է Ալեքսանդրեոսի սանջակ և այն կցում Թուրքիային, գյուղի բնակիչները գաղթում են Հալեպ («Հասկ», 1939, № 7-8, էջ 124-125):


Մարտիրոս Ավետիսյանի մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 303:

5. Մասնատուփ. արձանագրությունը՝ փորագիր, 1 տող.

Յ(ի)շ(ատա)կ է ս(ու)րբ տ(ու)քս Ս(ուրբ) Խաջ Ե-կ(ե)ղ(ե)ց(ո)յ ի քեմբ Թ(ու)րվ(ա)նդ Արսլ(ա)նօղ-լե(ա)նէ, 1929 յ(ու)ն(ուա)ր 1:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Սք. Խաջ փայտաշեն եկեղեցին 1923-1936 թթ. գործում էր Հալեպի Սլեյմանիե քաղաքում: Քանդվել է 1937 թ.:



6. Մոմակալ. արձանագրությունը՝ պատվանդանին, փորագիր, 1 տող.



Միքայել Արզուհալեան, 1954:

Հրատ. առաջին անգամ:

7. Արձանագրություն. ավագ խորանի սեղանի պատվանդանին ազդեցված մարմարե սալիկին՝ փորագիր, 6 տող.

Կարուցաւ սուրբ խորանս այս սրբոյն | Գեորգայ եկեղեցոյ ի Հալեպ արդեամբբ | Սուրեն Մելքոն Գա-

լենտերեան(ի) եւ կողակցին՝ | Շաքէի՝ ծնեալ Ազկիլ-լեան, ի յիշատակ | համայն ննջեցելոցն նոցին գերդաստանաց, | ի թիւին հայոց ՌՆՁ 1957:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. խորանի նախագծի հեղինակն է Մինաս Մյուքյուքյանը: Այն իրագործել է Պետրոս Երանյանը (**Քեչիչեան Վ.**, Գոյապատում, էջ 153):

Սուրեն Գալենտերյանը Հալեպի անվանի վաճառականներից էր (նույն տեղում):




8. Արձանագրություն. խորանի սեղանի պատվանդանին ամրացված մարմարե սալիկին՝ փորագիր, 6 տող.

Կարուցաւ սուրբ խորանս այս սրբոյն | Գեորգայ եկեղեցոյ ի Հալեպ արդեամբբ | Գառնիկ Ներսէս Խանձողեանի եւ կողակցին՝ | Չապէլ(ի) ծնեալ Սահաթեան, ի յիշատակ | համայն ննջեցելոցն նոցին գերդաստանաց, | ի թիւին հայոց ՌՆՁ 1957:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. խորանի նախագծի հեղինակն է Մինաս Մյուքյուքյանը (**Քեչիչեան Վ.**, Գոյապատում, էջ 154):




9. Արձանագրություն. խորանի սեղանի պատվանդանին ամրացված մարմարե սալիկին՝ փորագիր, 6 տող.

Կարուցաւ սուրբ խորանս այս սրբոյն | Գեորգայ եկեղեցոյ ի Հալեպ արդեամբբ | Ծորճ Ներսէս Խանձողեանի եւ կողակցին՝ | Արուսեակի՝ ծնեալ Չաքմաքեան, ի յիշատակ | համայն ննջեցելոցն նոցին գերդաստանաց, | ի թիւին հայոց ՌՆՁ 1957:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. խորանի նախագծի հեղինակն է Մինաս Մյուքյուքյանը (**Քեչիչեան Վ.**, Գոյապատում, էջ 154):



10. Արձանագրություն. եկեղեցու արևմտյան ճակատի հյուսիսային մասում ամրացված մարմարե սալիկին՝ փորագիր, 4 տող.

Կառուցաւ զանգակատունս | արդեամբ և ծախսիւք | Սմբատ Էքիզեանի, | 1985:

Հրատ. **Քորթոշյան Բ.**, նշվ. հողվ., էջ 58:

Ճանոթ. Սմբատ Էքիզեանը ծնվել է 1912 թ. Մարաշում: 1923 թ. ծնողների հետ գաղթում է Հայեայ: 1926 թ. մասնակցում է «Գերմանիկ-Վասպուրական»-ի քատերախմբի հիմնադրության, 1929-1937 թթ.՝ Սր. Խաչ եկեղեցու պայծառացման, 1936 թ.՝ Դպրոցասիրաց միության և համանուն վարժարանի հիմնադրման աշխատանքներին (**Կիսիկեան Տ.**, նշվ. աշխ., էջ 30): 1937 թ. մայիսին Սր. Գևորգ եկեղեցու հիմնարկերի արարողության ժամանակ հիմնաքարերից մեկի կնքահայրն էր: Եկեղեցու կառուցման աշխատանքների համար կատարում է նվիրատվություն (**Քեչիշեան Վ.**, Գոյապատում, էջ 101): 1937 (նշվ. աշխ., էջ 108) և 1943 թթ. ընտրվում է եկեղեցու քաղական խորհրդի անդամ (նշվ. աշխ., էջ 114): 1942-1944 թթ. Մեսրոպյան վարժարանի հոգաբարձության, 1952-1956 թթ.՝ Սր. Գևորգ եկեղեցու քաղականության խորհրդի անդամ էր (**Կիսիկեան Տ.**, նշվ. աշխ., էջ 30): 1955 թ. փետրվարին ընտրվում է «Ս. Գևորգ եկեղեցու և Ազգ. Մեսրոպեան կեդ. վարժարանի Ծիսորեանց յանձնախումբ»-ի անդամ (**Քեչիշեան Վ.**, Գոյապատում, էջ 138-139): 1965 թ. անդամակցում է «Գերմանիկեան տան կեդրոնական մարմինին»: 1962-1980 թթ. Հայեայի ծերանոցի խնամակալության զանձապահն էր: 1981 թ. հունվարի 6-ին Մարաշի հայրենակցական միության վարչության կողմից պարգևատրվում է ոսկե մեդալով: 1981 թ. «Գերմանիկ-Վասպուրական»-ի վարչության ռոշմամբ ստանում է Պատվո անդամի կոչում (**Կիսիկեան Տ.**, նշվ. աշխ., էջ 30):



11. Արձանագրություն. եկեղեցու արևմտյան ճակատի հարավային մասում ամրացված մարմարե սալիկին՝ փորագիր, 4 տող.



Կառուցաւ զանգակատունս | արդեամբ և ծախսիւք | Կարալիս Կապօնեանի, | 1985:

Հրատ. **Քորթոշյան Բ.**, նշվ. հողվ., էջ 59:

12. Սկրտության ավազան. ոճավորված, շինարարական արձանագրությունը՝ մկրտության ավազանին կից ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 11 տող.

Ս(ուրբ) մկրտութեան | այս աւազանը | շինեցաւ արդիամբ | տէր և տիկ(ին) | Մանուկ Նազարեան(ներ)ի | և տիկ(ին) Հայկուհի Նազարեանի, | ի յիշատակ իրենց | հոր և ամուսնոյն՝ | հաճի Նազար | Նազարեանի, | 1987:

Հրատ. *առաջին անգամ:*



13. Որմնափակ խորան. ոճավորված, շինարարական արձանագրությունը՝ խորանին կից ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.

Ա(ստուա)ծածնայ սրբանկարի | այս խորանը շինեցաւ | արդիամբ | տէր և տիկ(ին) | Ժան Տանկուրեան(ներ)ի, | ի յիշատակ իրենց հոր՝ | Յարութիւն | Տանկուրեանի, | 1987:

Հրատ. *առաջին անգամ:*

Ճանոթ. որմնափակ խորանը «Տիրամայրը մանկան հետ» սրբապատկերի համար կառուցվել է եկեղեցու հյուսիսային պատին կից:



14. Որմնափակ խորան. ոճավորված, շինարարական արձանագրությունը՝ խորանին կից ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Ս(ուրբ) Սարգիս սրբանկարի | խորանը շինեցաւ արդիամբ | տէր և տիկ(ին) | Գևորգ Աստուրեան(ներ)ի, | ի յիշատակ իրենց հոր | և մոր՝ Նշան և Ռվասաննա | Աստուրեան(ներ)ի, | 1990:

Հրատ. *առաջին անգամ:*

Ճանոթ. որմնափակ խորանը «Սր. Սարգիս» սրբապատկերի համար կառուցվել է եկեղեցու հարավային պատին կից: Բարերար Գևորգ Աստուրյանը ամերիկացու էր (**Ազեզեան Հ.**, նշվ. հողվ., էջ 403):



15. Հուշակոթող. ոճավորված (նվիրված Մարաշի մահատակներին), զանկում է եկեղեցու բակում, արձանագրությունը՝ ելնդագիր, 3 տող, որից 1 տողը՝ արաբերեն.

1920, Մարաշ, | արդեամբ Աբրահամ Գութունեան(ի):

Արաբերեն. ذكرى الشهداء.

Թարգմ. Հիշատակ մահատակներին:

Հրատ. *առաջին անգամ:*

Ճանոթ. հուշակոթողը կառուցվել է 1990 թ. ամերիկացու Աբրահամ Գութունյանի բարերարությամբ: Հուշարձանի նախագծի հեղինակն արվեստագետ Վրգեն Պերթիզյանն է, իրագործողը՝ ճարտարապետ Գևորգ Երանյանը (**Ազեզեան Հ.**, նշվ.



հողվ., էջ 403): Հանդիսավոր բացումը կատարվել է 1990 թ. ապրիլի 22-ին (**Քեչիչեան Վ.**, Գոյապատում, էջ 194):

16. Հուշակոթող. ոճավորված (նվիրված Չեթրունի հերոսամարտին), գտնվում է եկեղեցու բակում՝ եկեղեցու արևմտյան ճակատին կից, արձանագրությունը՝ ելնդագիր, 6 տող, փորագիր, 12 տող.

Հուշարձանի արևմտյան ճակատին, փորագիր.

1862: | Ագատատենչ | Ժողովուրդներու | շեփորակիր:

1895: | Արեն ելավ, | զէթունցիներ:

Հուշարձանի արևմտյան ճակատին, ելնդագիր.

Աազկալ, Արեգին, Ֆոնուգ, | Աազինք, Ղալըճինք, Կուչեօղ, Ուլնի, Կանջի, Թէլեմելիք, Չիլենք, | Եկանենք, Կապան, Պունտուկ, Շիվիլկի, Մավունք, Խէպի, | Խէրեղեան, Ղուռա, Անդրիասինք, Էլլեօնճ, | Չէթուն:

Հուշարձանի հյուսիսային միստին, ելնդագիր.

Չ(էթունի) հ(այրենակցական) մ(իութին):

Հուշարձանի հյուսիսային միստին, փորագիր.

Հեղինակ | եվ իրագործող | Տիգրան | Արգունանեան, | 1994:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. հուշարձանի հանդիսավոր բացումը տեղի է ունեցել 1994 թ. ապրիլի 22-ին (**Քեչիչեան Վ.**, Գոյապատում, էջ 199):

Արձանագրության մեջ նշված Չեթրունի գյուղերը գտնվում են հետևյալ տեղադրությամբ. Ավազկալը, Ֆոնուգը, Խերեղեանը՝ Չեթրունից հարավ-արևմուտք, Արեգինը, Կապանը՝ հարավ-արևելք, Ավազինքը (Ղալեճինք)՝ արևելք, Թէլեմելիքը, Եկանենքը՝ հարավ, Կանջին՝ Ֆոնուգ գյուղի մոտ, Պունտուկը՝ Կապանից արևելք, Շիվիլկին՝ Կապանից արևմուտք, Անդրիասինքը՝ Շենպեթ լեռան հյուսիսային կողմում, Ղուռանը՝ Ավազկալ գյուղի մոտ:

17. Հուշակոթող. գտնվում է եկեղեցու բակում, կոթողաձև պատվանդանի վրա՝ Ջարեհ Ա կաթողիկոսի կիսանդրին, արձանագրությունը՝ կոթողաձև պատվանդանի հյուսիսային միստին սագուցված մարմարե երկու սալիկներին, փորագիր, 9 տող.

Սալիկ Ա.

Ջարեհ Ա, | 1915-1963: | Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, | 1956-1963:

Սալիկ Բ.

Նուիրատուութեամբ | Համալեան քոյրերուն՝ | օր(իորդ) Գոհարիկի և տիկ(ին) Լուսինի, | ի յիշատակ իրենց եղբոր՝ Կարապետի, | ծնողաց և քրոջ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. հուշակոթողը կառուցվել է 1998 թ. (**Ազեգեան Հ.**, նշվ. հողվ., էջ 403): Հեղինակն է հաղեպահայ քանդակագործ Վարդգես Պարսունյանը: Հանդիսավոր բացումը տեղի է ունեցել 1998 թ. մայիսի 10-ին (**Քեչիչեան Վ.**, Գոյապատում, էջ 208):

Գոհար Համալեանն ուսուցչուհի էր: 1933 և 1942 թթ. ուսուցանում էր Հայկազյան վարժարանում (ՀԱԳ, ֆ. 1421, ց. 3, գ. 48, թ. 5; գ. 21, թ. 13), 1942 և 1947 թթ.՝ անդամակցում Հաղեպահայ ուսուցչական միությանը (նույնի՝ գ. 20, թ. 6):

Կարապետ Համալեանն ուսուցիչ էր: 1941 թ. դասավանդում էր Կրուպենկյան (նույնի՝ գ. 21, թ. 9), իսկ 1943-1945 թթ.՝ Մլխիթարյան վարժարաններում (նույնի՝ գ. 20, թ. 8):



18. Աղբյուր. ոճավորված, արձանագրությունը՝ աղբյուրի հարավահայաց ճակատին և արևմտահայաց միստին, փորագիր, 3 տող.

ճակատին.


Ի յիշատակ հանգուցեալ Յովնան Թորաթլեանի, | 1951-1994:

Արևմտահայաց միստին.

Պետրոս Քեչիշեան, 1997:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Պետրոս Քեչիշեանը Հասանբեյլիից էր: Ենթադրվում է, որ նա սերվել է իշխան խոջա Պետիկի տոհմից: 1944 թ. հայտնաբերում է խոջա Պետիկի գերեզմանը (ՊՀՀ, էջ 324):



19. Որմնափակ խորան. ոճավորված, շինարարական արձանագրությունը՝ խորանին կից ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 8 տող.

Ի յիշատակ | Անդրանիկ | Պալեանի | երկարամեայ | ծառայութեանց. | Ս(ուրբ) Գ(եորգ) ե(կեղեցու) | թաղականութիւն, | 30-9-2004:

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. որմնափակ խորանը կառուցվել է «Սբ. Գեորգ» սրբապատկերի համար եկեղեցու հարավային պատին կից:

Անդրանիկ Պալեանը ծնվել է 1927 թ. Հալեպում (Կիլիկիան S., նշվ. աշխ., էջ 105): 1959-1960 թթ. Ազգ. Մեսրոպյան վարժարանի հոգաբարձության անդամ էր (Քեչիշեան Վ., Գոյապատում, էջ 164): 1966 թ. ընտրվում է Սբ. Գեորգ եկեղեցու թաղական խորհրդի փոխատենապետ (նշվ. աշխ., էջ 171-172), իսկ 1968 թ.՝ Մարաշի հայրենակցական միության վարչության անդամ: 1974 թ. ստանձնում է նաև զանձապետի պաշտոնը: 1973 թ. եկեղեցու թաղական խորհրդի ատենապետն էր, 1975 թ.՝ «Գերմանիկան Տան Կենդրոնական Մարմնի» անդամ: Երկար տարիներ անդամակցում է ՀԲԸՄ շինարարական հանձնախմբին (Կիլիկիան S., նշվ. աշխ., էջ 105): 1982-1993 և 2000 թթ. հիշվում է որպես Սբ. Գեորգ եկեղեցու թաղական խորհրդի ատենապետ (Քեչիշեան Վ., Գոյապատում, էջ 176, 182, 196, 212): 25 տարվա եռանդուն գործունեության համար 1991 թ. մայիսի 26-ին պարգևատրվում է Մարաշի հայրենակցական միության ոսկե մեդալով (նշվ. աշխ., էջ 196):

20. Արձանագրություն. խորանի սյանն ամրացված մետաղյա սալիկին՝ փորագիր, 6 տող.

Եկեղեցույ խորանի կանթեղները՝ նուրբ | Մագլումեան եղբայրք, | ի յիշատակ իրենց հոր՝ | հանգուցեալ | Թորոս Մագլումեանի:

Հրատ. առաջին անգամ:



21. Չորս սրբապատկերներ. յուրաքանչյուրը ներկայացնում է 1 ավետարանիչ, ամրացվել են գմբեթակիր առագաստների վրա, արձանագրությունները՝ ամեն մի պատկերի վրա, սեկական սող.

Մ(ուր)ք Մատթեոս: | Մ(ուր)ք Յովհաննես: | Մ(ուր)ք Գուկաս: | Մ(ուր)ք Մարկոս:
Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. յուղաներկ նկարները պատկերված էին եռանկյուն միակտոր կտավի վրա, որոնք ամբողջությամբ այրվել են 2012 թ. հոկտեմբերի 29-ին («Ազդակ», 30 հոկտեմբեր, 2012):




Չորս սրբապատկերները մինչև հրկիզումը (լուս.՝ Բ. Քորթոշյանի, 2006թ.) և դրանից հետո (լուս.՝ Պերճ Պողիկյանի, 2012 թ.)

ՍԲ. ՀԱԿՈՒԲ ԵԿԵՂԵՑԻ



Եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք (դուռ՝ 2006թ.)



Եկեղեցու սխեմատիկ հատակագիծը

Տեղադրություն. գտնվում է Սրբյան-Աղիմի շրջանում (հասցեն՝ Ուր փողոց, թիվ 14): Տեղադրությունն է՝ N 36° 13' 02.68", E 37° 08' 43.14":

Պատմություն. Սբ. Հակոբ եկեղեցու մասին մեզ հայտնի առաջին տեղեկությունը 1932 թ.-ից է¹: 1933 թ. Կիլիկիո Բաբկեն աթոռակից կաթողիկոսը քարոզում է եկեղեցուն²: 1934 թ. հունիսի 3-ին կատարվում է եկեղեցու հանդիսավոր հիմնարկերը, օծվում են հիմնաքարերը³, սակայն կառույցը կիսատ է մնում մինչև 1962 թ. (կիսատ լինելով՝ գործում էր): Նույն թվականին կառուցվում է ներկայիս շենքը: 1988-1989 թթ. եկեղեցին նորոգվում է և բարեկարգվում⁴: 1993 թ. վերանորոգվում է սբ. սեղանը⁵:

Ճարտարապետություն. ուղղանկյուն կառույց է՝ հարթ տանիքով: Արևելքում ավարտվում է արտաքուստ շեշտված խորանով: Ունի զույգ մուտքեր՝ բացված հյուսիսային ճակատից:

Վիճագրեր և եկեղեցական իրերի արձանագրություններ. ներկայացնում ենք 7 միավոր արձանագրություն: Դրանք հրատարակվում են առաջին անգամ:

¹ ՊՀՀ, էջ 262:

² «Հասկ», 1933, № 12, սյունակ 63:

³ **Տեմիրճեան Վ.**, Գառազնագիրք Բերիոյ հայոց թեմի առաջնորդներու, «Հասկ», 1975, № 9-12, էջ 363:

⁴ **Ազգեան Հ.**, նշվ. հոդվ., էջ 404:

⁵ ՏՆՍ Սբ. Հակոբ եկեղեցու արձ. № 6:

1. Սկիհ. արձանագրությունը՝ պատվանդանին, փորագիր, 1 սող.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ու)րբ ճաճանչս Մուրատին եւ ի {ռ}ւր ծընողացն՝ հայր Բարսեղին եւ մայր Սալամին, թվին ՌՄԾԷ (1808)-ին:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. պատվանդանը նախկինում պատկանել է ճաճանչին:



2. Բուրվառ. արձանագրությունը՝ փորագիր, 3 սող.

Յիշա(տա)կ այս բուրվարս էրդմնցի Փերվանեց տ(է)ր մ(ա)հ(տե)սի Գրիգորին, իրիցինոչն՝ Ճումա-

(յ)ին հոգում ի դ(ու)ռն | Սք. Ա(ստու)ծածնա, քվին ՌՄՂԲ (1843)-ին | ԿԶՏ (թարգմ.՝ 1259) (1843):

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Էրդմնը Երթմնեկ գյուղն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի համանուն գավառում: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Ալթընչևրե (Altınçevre):

Իրիցինոչն բառի վերջին ի տառը սխալ է փոխադրված, պետք է լիներ կ, իսկ չ-ի փոխարեն՝ ջ:



3. Չեռագիր հիշատակարան. 1915 թ. Երուսաղեմում տպված Ժամագրքի առաջին էջին՝ ձեռագիր, 11 տող.

Բարեպաշտ ազգային մը, [անունը] | չուզեց յիշել, մեր թելադրութեա[ւմը] | սիրայօժար նուիրեց սոյն ժամագի[րքը] | Մէյտան Նոր-գիւղի նորակառո[յց] | Ս(ուրբ) Գրի(գոր) Լուս(աւորիչ) եկեղեցոյն ի յիշատակ | իւր ննջեցելոց, յաւուր սօնի մտից վ[իրապ]: | «Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»: | Վ. ք. Վարդերեսեան, | 17-3-(1)934, | Հալէպ:


Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամագիրքն այստեղ է բերվել Սք. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուց:

Վարդան քահանա Վարդերեսյանը 1912-1914 թթ. քահանայագործում էր Հաջի-Հարիրլիում (ՀԱԴ, ֆ. 409, ց. 1, գ. 4738, ք. 1): 1915 թ. նոյեմբերի 9-ին նսնակ է հղում Գևորգ Ե կաթողիկոսին հայկական գյուղերի ու քաղաքների ավերման, գաղթի, Եգիպտոսում ապաստանած հայերի մասին. «Այդ ահարկու գազանը-Թիրքիան-ամէն չարիք մեր վրայ ալ հասցնելէն յետոյ տեղահանութեան համար ալ շրջաբերականներ ցրուեց, որպէս զի թողունք մեր բնակավայրը և կառավարութեան յարմար նկատած մէկ վայրը, երթանք, այո, հոն, ուր մահը մեզ համար յօրինուած էր արդէն: Մենք Անտիոք-Սուէտիա-ի հայ գիւղերս, որոնք են Հաճի Հապիսի, 300 տնուոր, Պիթէաս 250, Եօղուն-Օրոք 280, Խողպէկ 200, Վազըֆ 130, Քէպուսիյէ 250 տնուոր, այդ հրամանին չուզեցինք հնազանդիլ, ապստամբելով մեծամասնաբար լեռ բարձրացանք. աստոր վրայ անունը աշխարհիս երեսէն ջնջուելիք թիրքը իր կանոնաւոր զինուորներով և պաշարօգուկներով մեր վրայ յարձակեցաւ, երկնային զօրութեամբ և մեր երիտասարդներուն շնորհիւ ետ մղուեցան միշտ բազմաթիւ կորուստ տալով իրանց. 50 օրուան չափ լեռ մնացինք, և այդ միջոցին մեզմէ միայն 15 հոգի նահատակուեցան. մինչդէռ թշնամոյն կողմէ 2-300 հարիւր շուներ սատակեցան. 3-4000 ուլ մեր վրայ կը յարձակէին:

Լեռը, որ Մովսէսի լեռ կը կոչուի, բողոքովին մեզ, հայուս կը պատկանի, որուն արևմտեան կողմը Միջերկրականի մէկ եզրն է, 50-ական օրեր յետոյ ֆռանսիական մարտանաւ մը նշարուեցաւ, մեր պարզած Կարմիր Խաչը դրօշնիս տեսաւ և ծովափ մօտենալով մեզ հետ յարաբերութեան մէջ մտաւ և վիճակնիս հասկցաւ, խօստացաւ 8 օրէն մեզի ապահով երկիր մը տանել, այդ 8 օրուայ ընթացքին երկու սաստիկ ընդհարումներ ևս ունեցանք թշնամիին հետ, Աստուծոյ զօրութեամբ այս անգամ ալ յաղթեցինք:

Երբ 8 օրը լրացաւ, պատրաստ էին ֆրանսիական 5 հսկայ մարտանաւեր, որոնք պահապան հրեշտակի նման եկան և փոխադրեցին զմեզ հոս ի Բօրթ-Սախտ եգիպտական երկիր, Նեղոսի ափունքը, ամենայնիւ գոհ ենք մեր վիճակէն, կը գտնուինք վրաններու տակ, իբր 5000 հոգիանոց բանակ մը կազմած ենք: Անգլիական կառավարութիւնը կը հոգայ մեր ուտեստը, իսկ եգիպտահայոց կողմէ զգեստ կը հոգացուի...» (Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, Գիրք Դ, էջ 222-223): 1916-1917 թթ. քահանայագործում էր Եգիպտոսի Բորսա Սախտ քաղաքում (ՀԱԴ, ֆ. 409, ց. 1, գ. 4738, ք. 1), իսկ 1927 թ.՝ Սիրիայի Համա քաղաքում՝ դասավանդելով նաև տեղի հայկական վարժարանում (նույնի՝ գ. 4741, ք. 5-6):



4. Չեռագիր հիշատակարան. 1873 թ. Երուսաղեմում տպված Ավետարանի առաջին էջին՝ ձեռագիր, 8 տող.

Սոյն արեստարանի կողքի արծաթապատումի | Ժախար տուած են Համբարձում և եղբայրք | Սիսաք Պէրէճիկեան(ներ), բալուցի, ի յիշատակ | իրենց հօր՝ հանգուցեալ Կիրակոս Պէրէճիկեանի | և կը նուիրեն Ս. Գ. Լուսաւորիչ եկեղեցոյն | Մէյտանի, Հալէպ, | 1934 մայիս 31, | Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Ավետարանն այստեղ է բերվել Սք. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուց:




5. Չեռագիր հիշատակարան. 1914 թ. Երուսաղեմում տպված Շարակյանի առաջին էջին՝ ձեռագիր, 8 տող.

Նուէր | Տափուտիէյի Ս(ուրբ) Վարդան եկեղեցոյ | հաճի Վահիտէ Քէպպաճեանի կողմէ, | Երուսաղեմ ուխտագնացութեան | առթիւ, | Հալէպ, 24 ապրիլ | 1955: | Տիկին Վահիտէ Քէպպաճեան:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Սր. Վարդան եկեղեցու մասին տե՛ս սույն աշխ. էջ 59:



6. Արձանագրություն. խորանին կից ամրացված մարմարե սալիկին՝ փորագիր, 8 տող.

Կառուցաւ | ս(ուրբ) սեղանս արդեամբ | Սիլվիք-ճեան եղբարց | ի յիշատակ | հօրն իւրեանց՝ Պետրոս Սիլվիքճեանի, | 1920-1987: | Ի թուին 19 դեկ(տեմբեր) 1993: | Ծ(ա)րտ(արապետ) Գ. Սարգիս:

Հրատ. առաջին անգամ:



7. Ափսե. արձանագրությունը՝ փորագիր, 8 տող.

Նուէր | Յակոբ Վանէսեան | Ս(ուրբ) Յակոբ եկեղեցոյ | Վիգօթիա | Պարոնեանի | հոգւոյն, | ծնեալ Վանէսեան, | 1928-1996:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. Հակոբ Վանէսյանը երկաթագործ էր: Անվճար կառուցում է Սր. Աստվածածին նոր եկեղեցու՝ դեպի վերնատուն ու կենտրոնական գմբեթ տանող աստիճանները և եկեղեցու դասն ատյանից բաժանող երկաթյա վանդակապատը (**Հինառոյեան Զ.**, նշվ. աշխ., էջ 104): Կրթասիրաց միության և վարժարանի նվիրատուներից էր (**Թորանեան Թ.**, Կրթասիրաց մշակութային միութեան..., էջ 108):



ՍԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ



Եկեղեցու տեսքն արևմուտքից (լուս.՝ 2006թ.)



Եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք (լուս.՝ 2007թ.)

Տեղադրություն. գտնվում է Միդանի շրջանում (հասցեն՝ Դրնաթա փողոց, թիվ 30): Տեղադրությունն է N 36° 13' 15.06", E 37° 09' 47.86":


Պատմություն. եկեղեցին օծվել է 1965 թ. հունիսի 13-ին¹ կաթողիկոս Իգնատիոս Պետրոս Պաթանյանի կողմից²:

Ճարտարապետություն. զվարթնոցատիպ եկեղեցու առաջին և երկրորդ մակարդակները տասնվեցնիստանի են, իսկ զմբեթը՝ ութանիստ: Գմբեթը և առաջին մակարդակը ծածկված են բրգածև, իսկ երկրորդը՝ հովհարածև տանիքով: Առաջին և երկրորդ մակարդակներում ամեն մի նիստից բացվում է մեկական, իսկ զմբեթի թմբուկում՝ երեքական լուսամուտ: Մուտքն արևմուտքից է: Ներքուստ պատերը տասնվեցնիստանի են, որոնցից ներս կան ավելի փոքր տրամագծով և գույգ սյուների վրա հենված 16 կամարներ, որոնք իրենց վրա կրում են երկրորդ մակարդակի պատերը: Դրանց վրա է նստում հովհարածև ծածկը, որը կրում է զմբեթը:

Վիճագրեր և եկեղեցական իրերի արձանագրություններ. ներկայացնում ենք 8 միավոր արձանագրություն: Դրանք հրատարակվում են առաջին անգամ:

1. Տոնացույց. տպվել է Վենետիկի Սբ. Ղազար վանքում 1800 թ., հիշատակագրությունը՝ վերջին էջում, ձեռագիր, 10 տող.

Ես եմ երկրրեն երապօլցի | եւ զիտեն մաշկեր-(տ)ացի: | Ես եմ Ներատայեաց Գեվորքի | որդի Սարգիսըն: Գըրեցի ձեռխամբըս, ով որ կարդայ, ըսէ թէ | ա(ստուա)ծ բանըն հաջողէ: | ԹՎին հայոց ԿՂԿ



1 Տե՛ս Սբ. Երրորդություն եկեղեցու արձ. № 4:


2 **Գրիգոր Եպիսկոպոս Այվազեան**, Յուշերս ծառայութեան ճանապարհէս, էջ 57:

(թարգմ.՝ 1267) (1818)-ին | դեկտրմբերին \ (թարգմ.՝ 1)-ին: | Հայկա թա...էլ եղաք: | 1819:
Հրատ. առաջին անգամ:

2. Ավետարան. տպվել է Վենետիկի Սբ. Ղազար վանքում 1849 թ., արձանագրությունը՝ երկրորդ էջում, ձևագիր, 6 տող.

Յիշատակ եկեղեցույն Քերմանիկոյ | հայոց ուղղ(ա)փ(ա)ռ(ա)ց: | Մեծարգոյ և ազգասէր | Յակովբ Էֆէնտի | Կէօչէեանց, | 1861:

Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. Քերմանիկը Մարաշն է:
Մարաշի հայ կաթողիկէների առաջին եկեղեցին կոչվում էր Սբ. Փրկիչ: Հիմնարկերը կատարվել է 1861 թ., օծվել 1865 թ. «...եկեղեցին քարաշէն և գեղեցիկ ոճով շինուած էր, փոքր և մեծ վեց գմբէթներ 12 սև քարէ սիւններու վրայ հաստատուած...: Մոյն գեղեցիկ եկեղեցին 1926-ին բոլորքերու կողմանէ հիմնայատակ քանդուած է...» (Գաղտնաւեան Գ., նշվ. աշխ., էջ 631, 635):



3. Բուրվառ. արձանագրությունը՝ ագույցին, փորագիր, 1 տող.
Յիսուս փրկիչ: 1888:
Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. 2007 թ. Սբ. Երրորդություն եկեղեցու վարդապետ Հովհաննես Թաշճյանի վկայությամբ՝ բուրվառը Մարաշի հայ կաթողիկէ Ամենափրկիչ եկեղեցուն նվիրել է մեծահարուստ Խյալբյան ընտանիքը: 1920 թ. բուրքերը նրանց սպանում են, իսկ բուրվառը Հայեպ է բերվում գաղթականների կողմից. «1 փետրուար 1923-ին, Հայկա հասա Մարաշի կաթողիկէ համայնքէն վերջին խումբը... հետերնին բերելով կարելի եղած եկեղեցական առարկաներ» (Գրիգոր Եպիսկոպոս Այվազեան, Յուշերս Ծառայութեան ճանապարհէս, էջ 35):

4. Արձանագրություն. եկեղեցու ճակատային երեք մուտքերից մեկի՝ հարավային մուտքից ներս և վերևում անրացված մարմարե սալիկին՝ փորագիր, 10 տող, որից 2 տողը՝ արաբերեն.

Կատարեցաւ օծումն | Ս(ուրբ) Երրորդութիւն տաճարիս | ի գահակալութեան տ(եր) տ(եր) Պօղոսի Չ քահանայապետի, | ի հայրապետութեան տ(եր) տ(եր) Իգնատիոսի Պետրոսի | ԺՉ (16) Պաթանեան կաթողիկոսի, | յառաջնորդութեան տ(եր) տ(եր) Գէորգայ արք(եպիսկոպոս)ի Լայէքեան, | յամի տեառն 1965 յատր 13 ամսեանն յունիսի, | ի թուին հայոց ՌՆԺԴ (1965):

Արաբերեն.
كنيسة الثالث الاقدس للارمن الكاثوليك | شيدت في ١٣ حزيران سنة ١٩٦٥.

Թարգմ. Սբ. Երրորդություն հայ կաթողիկէ եկեղեցի: Օծվեց 1965 թ. հունիսի 13-ին:
Հրատ. առաջին անգամ:



5. Արձանագրություն. եկեղեցու արևմտյան ճակատից բացված երեք մուտքերի բարավորներին.

Արևմտյան ճակատի հյուսիսային մուտքին՝ ելնդագիր, 7 տող.
Մ(եսրոպ) Մաշտոց: | Փորագրութեան | նուիրատու | տեր եւ տիկին | Ալպէր Երլանկէօգեան(ներ), | տեր եւ տիկին | Յովսէփ Երլանկէօգեան(ներ):



Արևմտյան ճակատի կենտրոնական մուտքին՝ ելնդագիր, 13 տող.

Ս(ուրբ) Երրորդութիւն | հայ կաթողիկէ | եկեղեցի, | 1965: | Փորագրութեան | նվիրատու տէր | եւ տիկին | Շիւքրի եւ Մարի | Քելիշիեան(ներ) | եւ որդիք:



Արևմտյան ճակատի հարավային մուտքին՝ ելնդագիր, 7 տող.

Ս(ուրբ) Գրիգոր | Լուսատրիչ: | Փորագրութեան | նուիրատու | տէր եւ տիկին | Ճօրճ Մարտիրոս | Չէթունցեան(ներ):

Հրատ. առաջին անգամ:



6. Քարե ջրաման. ոճավորված, արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Յօղեա յիս մշտկաւ ս(ուրբ) Եղէց: | Գործ | և նուէր | Պետրոս Վ. | Երեմեանի, | 1966:

Հրատ. առաջին անգամ:



7. Հուշակոթող. ոճավորված (նվիրված Մեծ եղեռնի զոհերին), գտնվում է եկեղեցու բակում, արձանագրությունը՝ ելնդագիր, 18 տող.

Կանգնեցաւ | կոթողս | ապրիլեան | նահատակաց | յամի 80-րդի | եղեռնի, | ի 24 ապրիլ | 1915:

Այս | յուշարձանը | կանգնել տուաւ | տիար Սկրտիչ | Էքմէքճեան | ի յիշատակ | իր հօրեղբօր՝ | գեր(ապա)յ(ծառ) տ(էր) | Յովհաննէս | ծ(այրագոյն) վ(արդապետ) Էքմէքճեանի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանօթ. Սկրտիչ Էքմէքճեանը, ի հիշատակ հոր՝ Կարապետի, հորեղբայրների՝ Հովհաննէս ծ. վարդապետի և Գրիգորի, 2010 թ. Հալեայի ծերանոցում նորոգում է 2 սենյակ (տե՛ս ծերանոցի արձ. № 20, 33):

Հովհաննէս Էքմէքճեանը ծնվել է Եղեսիայում: 1930-ական թվականներին Արար-Փունար գյուղի հայ կաթողիկէների անդրանիկ հոգևոր հայրն էր, միևնույն ժամանակ՝ նաև դպրոցի տնօրէնը (Ղազարեան Ս., նշվ. աշխ., էջ 154):



8. Որմնափակ խորան. ոճավորված, շինարարական արձանագրությունը՝ խորանին ագուցված մարմարե սալիկին, փորագիր, 7 տող.

Ի յիշատակ անմոռանալի | Պետրոս Գնաճեանի՝ | տէր եւ տիկին բժիշկ Գրիգոր Թաթոյեան | եւ Չէնտա «Գնաճեան» Թաթոյեան | կը կանգնեն Ս(ուրբ) Պետրոս առաքեալին | այս յուշակոթող-խորանը: | Հալէպ, 27 յուլիս 2003:

Հրատ. առաջին անգամ:



ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՆՈՐ ԵԿԵՂԵՅԻ



Եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ 2006 թ.)



Եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք (լուս.՝ 2006 թ.)

Տեղադրություն. գտնվում է Սլեյմանիեի շրջանում (հասցեն՝ Բիաեթ Ալ-Շաբաբ փողոց, թիվ 52): Տեղադրությունն է՝ N 36° 13' 11.84", E 37° 09' 31.59":


Պատմություն. 1967 թ. հուլիսին գնվում է եկեղեցու հողամասը¹: 1972 թ. սեպտեմբերի 10-ին կատարվում է հիմնարկեքի արարողությունը²: Եկեղեցու նախագծի հեղինակն արմատներով այնթապցի, նախկին հայկապահանկ ճարտարապետ Գևորգ Գարճրճյանն է³, իսկ շինարարության իրագործողը՝ ճարտարապետ Գեղամ Խրիկյանը⁴: Շինարարական աշխատանքները սկսվում են 1973 թ. ապրիլի 1-ին⁵: Բետոնի աշխատանքն ավարտվում է 1974 թ. գարնանը⁶: 1975 թ. հուլիսի 12-ին սկսվում է պարսպի շինարարությունը⁷: 1976 թ. օգոստոսի 12-ից մինչև 1980 թ. մարտի 30-ն իրականացվում է եկեղեցու սալիկապատումը սրբատաշ քարերով⁸: 1981 թ. ապրիլի 12-ին կառուցվում է մկրտության ավազանը Հովհաննես Մեթյառայանի բարերարությամբ⁹: Հանդիսավոր օծումը կատարվում է 1983 թ. մայիսի 1-ին¹⁰:

Ճարտարապետություն. եկեղեցին կենտրոնաձիգ խաչագմբեթ հորինվածքով կառույց է, որն արևելքում ավարտվում է արտաբուստ շեշտված խորանով և երկու ավանդատներով, իսկ հյուսիսարևմտյան և հարավարևմտյան անկյուններում ունի զանգակատներ: Գմբեթը հենվում է խաչվող կամարների վրա: Միակ մուտքը բացված է արևմուտքից:

Վիճագրեր և եկեղեցական իրերի արձանագրություններ. ներկայացնում ենք 16 միավոր արձանագրություն, որոնցից 2-ն առաջին անգամ ընդօրինակել և հրատարակել է Ջ. Հինտոյանը: 14 արձանագրություն հրատարակվում է առաջին անգամ:

1. Ճանաչ. արձանագրությունը՝ կենտրոնում, ելնդագիր, 9 տող. Յիշատակ է ս(ուր)ք խաչս | Սալախօղլի Մանուկ(ի) որդի մահտեկի Մարգիսին, (տ)իրացյու Ա-

1 Հինտոյան Ջ., նշվ. աշխ., էջ 31:
2 Նշվ. աշխ., էջ 39:
3 Նշվ. աշխ., էջ 33:
4 Նշվ. աշխ., էջ 78:
5 Նշվ. աշխ., էջ 61:
6 Նշվ. աշխ., էջ 63:
7 Նշվ. աշխ., էջ 69:
8 Նշվ. աշխ., էջ 78, 94:
9 Նշվ. աշխ., էջ 86:
10 Նշվ. աշխ., էջ 108: Տե՛ս նաև Սք. Աստվածածին նոր եկեղեցու արձ. № 14:




կորից, սորն՝ մահտե(ս)ի Խաչխաթուն(ի)ն, թիվիցն ՌՄՃ (1751), Ս. Ն.:

Հրատ. առաջին անգամ:



2. Ճաճանչ. արձանագրությունը՝ կենտրոնում, ելնդագիր, 6 տող. Յիշատակ է | ս(ուր)ք խաչս Անթիպիու ոսկերիչեայ դրոն Ս(ուր)ք Ա(ստուա)ծածնա | էկեղ(ե)ցուն, թիվն | ՌԲՃԽԷ-(ի)ն (1798):

Հրատ. առաջին անգամ:



3. Ճաճանչ. արձանագրությունը՝ կենտրոնում, ելնդագիր, 7 տող. Յիշ(ատա)կ է | ս(ուր)ք խաչս Անթապա եկեղեցուլն Իպեկողլու Կեվորգի որդի Կարապեղիին եւ ծնողացն, | թվ(ի)ն ՌՄԿ (1811):

Հրատ. առաջին անգամ:



4. Թիկնցի օձիք. արձանագրությունը՝ ելնդագիր, 1 տող. Յ(ի)շ(ատա)կ է) թագս Հալքջեց Կ(ա)ր(ա)յ(ե)տի(ն) վանից Սը(ր)ք(ո)ցն Ստեփան ի յՈւլնե Ֆրնգի ի ձեռն Պ(ոռո)սս վ(ա)րդ(ա)յ(ե)տի, թվ(ի)ն ՌՄՉ (1831):

Հրատ. առաջին անգամ:



Ճանոթ. «Ուլնե»-ն Չեյրունն է, Ֆրնգը՝ Ֆռնուզը:

Ֆռնուզ գյուղում է գտնվում Ստեփան Ուլնեցու գերեզմանը. Ֆռնուզը, «...որ բարձր լեռան վրա էր: Այնտեղ է Ստեփանոս Ուլնեցու գերեզմանը, ուր և քաղցրահամ աղբյուր է բխում սուրբ գերեզմանից և լեռնիվայր հոսում է սառն ու սպաղ ջուրը» (Միմեռն Լեհացի, էջ 185):



5. Սեղանի զարդ (ծաղկաման). արձանագրությունը՝ պատվանդանին, ելնդագիր, 1 տող.

Յ(ի)շ(ատակ) Ե համո(ր)Էն ժողովուրդ Հանրնը Ս(ուր)բ Թորոսի եկեղ(ե)ցուն, թվին 1860 յունիս 11: Հրատ. առաջին անգամ:




6. Ճանճնչ. արձանագրությունը՝ կոթին, փորագիր, 4 տող.

Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ խաչա Մուշու դաշտը Արախ | գիղի Ս(ուր)բ Կիրակոս եկեղեցոյ Սկրտիչ աղա(յ)ի եւ բար(ե)պաշտ եղբորտոց, | 1876 ս(ե)պտ(եմ)բ(ե)ր 1:

Հրատ. առաջին անգամ:

Ճանճ. Արախն Առաղ գյուղն է: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Բաղեշի նահանգի Մուշ գավառում՝ Մուշ քաղաքից 5 կմ հարավ-արևելք: Ներկայումս պաշտոնապես վերանվանվել է Զեպենեք (Kepenek):



7. Ջահ. արձանագրությունը՝ 4 տող.

Ձեռակերտս այս ջահը յիշատակ է Այնթապի Ս(ուր)բ Աստուածածին եկեղեցոյ 1895-ի եղեռնէն ընտանեօք ողջ եւ անվնաս ազատելնուս համար: Մելքոն Կարապետի Գալէմքեարեան, 1897, Այնթապ: Թող այս լուսաւորէ բոլոր նահատակաց հոգիները:

1915-1919 այս ջահը գործածուած է Այնթապի | թրքական Հաճի Նասր մզկիթին մէջ նուիրատուին յիշատակագիրը ջնջելէ ետք: | Անգլիացիներու ստի-

պումով վերադարձուած է Ս(ուր)բ Աստուածածին: Հալէպ բերուած է 1922-ին: Այժմ նորակերտ Ս(ուր)բ Աստուածածին ներկայ յիշատակագրով, 1982, Հալէպ:

Հրատ. առաջին անգամ:

Ճանճ. Մելքոն Գալէմքեարյանի մասին տես Շեխ-Մագսուդի առաքելական գերեզմանատան արձ. № 645:

1895 թ. Այնթապի ջարդն այսպէս է արձագանք գտել. «Այնթապի մէջ հինգ հարիւր հոգի ջարդուեցաւ, խիստ մեծ կողոպտուս և բաւականաչափ ևս հրածիգութիւն տեղի ունեցաւ. թէ նահանգիս և թէ ուրիշ նահանգներու մէջ ջարդածներու թիւը մինչև հարիւր հազար կը կարծի: Կարողիկներէն զատ գրեթէ բոլոր քրիստոնէից երևելիներն ձերբակալուելով՝ Հալէպ ուղարկուեցան» («Դրօշակ», 1896, № 7, էջ 51):



8. Լվացում (կոնք և փարշ). արձանագրությունը՝ կոնքին, փորագիր, 1 տող, փարշին՝ 5 տող.

Կոնքին.

Ի վայելումն Այնթ(ա)ուպ Ս(ուր)բ Ա(ստուա)-ծ(ա)ծ(ի)ն եկ(ե)ղ(ե)ց(ո)յն ստոմանս այս կը նուիրէ Ս(ա)րգ(ի)ս Սր(ա)պիօնե(ա)ն, 1906:

Փարշին.

Ի վայելումն Այնթ(ա)պու Ս(ուր)բ Ա(ստուա)-ծ(ա)ծ(ի)ն | եկ(ե)ղ(ե)ց(ո)յն ստոմանս | այս կը նուիրէ Ս(ա)րգ(ի)ս Սր(ա)պիօնե(ա)ն, 1906:

Հրատ. առաջին անգամ:

Ճանճ. առաջին Այնթ(ա)ուպ տեղանունը սխալ է փորագրված, պետք է լիներ Այնթ(ա)պու:

Ստոման - ջրի փոքր սափոր:




9. Սաղավարտ. արձանագրությունը՝ սաղավարտի ներքևի եզրագծով, փորագիր, 1 տող.

Մերն անմահ կենարարի պատճառ եղաւ այս նուէրի, արծաթապատ սաղաւարտի: Կանայք բարեպաշտուի ընծայեցին Ս(ուրբ) Աստուածածնի ս(ուրբ) եկեղեցոյն Այնթապի, ձեռօքն ասաք լուսարարի տ(էր) Յ(արութիւն) ք(ահանայ) Տ(էր)-Մելքոնեանի ի փրկչական թուակ(ա)նի հազար ինը հար {ե} իւր եօթնօրերորդ ամի:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ավագ քահանա Հարություն Տեր-Մելքոնյանը 1905 թ. հիշվում է Այնթապի 8 քահանաների շարքում (Հինտոյեան Զ., նշվ. աշխ., էջ 10):



10. Սկրտոթյան ավագանի դռնակ. արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.



Ս(ուրբ) աւագանի դռնակն արծաթեայ | իբրեւ ուխտի նուէր դուձնաքեայ | է այնթապցի Գ. Մանուկեան Գ-էորգայ | ի վայելումն եկեղեցոյն Ա(ստուա)-ծածնայ, 1908 ապրիլ 2:

Հրատ. առաջին անգամ:

11. Շուրջառի ճարմանդ. արձանագրությունը՝ փորագիր, 3 տող.

Թ(ա)րվ(ի)գ: Յ(ի)շ(ա)տ(ա)կ շրմջ.(°) բժ(ի)շկ | Յ(ա)կ(ո)ք Բժշկ(եա)նցի ձ(ե)ռ(ա)մք տ(է)ր Հմ(ա)-յ(ա)կ ք(ահա)ն(այի), | 1912 թ(վ)ին 8 յ(ու)լիս(ին):


Հրատ. առաջին անգամ:



12. Ծածանջ. արձանագրությունը՝ պատվանդանին, փորագիր, 4 տող.

Յիշատակ է խաչս ի դուռն | Ս(ուրբ) Ա(ստուա)-ծածին եկեղեց {ի}ւոյն Բերիոյ: | Գառնիկ Եաշարգեան: | 25/6/(19)37:

Հրատ. առաջին անգամ:



13. Աղբյուր. ոճավորված, արձանագրությունը՝ աղբյուրին կից ամրացված մարմարե սալիկին, փորագիր, 9 տող.

Եթէ ոք ծարալի իցէ, | եկեսցէ առ իս՝ եւ արբցէ: | Յովհ(աննու) Է (7). 37: | Շինեցաւ աղբիւր յուշարձանս | ի յիշատակ հանգուցեալ երեցկին | Մարի Հինտոյեանի, | 27 օգոստոս 1980 Հալէպ, | տ(էր) Չարմայր ա(ւագ) ք(ա)հ(ա)ն(ա)յ | Հինտոյեանի կողմէ:

Հրատ. Հինտոյեան Զ., նշվ. աշխ., էջ 87:



Ծանոթ. Չարմայր Հինտոյանը (աշխարհիկ անունը՝ Համբարձում) ծնվել է Այնթապում 1920 թ. մայիսի 15-ին (նշվ. աշխ., էջ 123): Հայրը՝ Սարգիսն էր, իսկ մայրը՝ Ուլասանա Արսլանյանը: Այնթապի պարպումից հետո փոխադրվում են Սիրիայի Հոմս քաղաք, որտեղ էլ ստանում է նախնական կրթություն Սահակյան վարժարանում: 1935

թ. մեկնում է Անթիլիասի դպրեվանք (**Պապայեան Ե.**, նշվ. աշխ., էջ 792) և ավարտում այն (ՀԱԴ, ֆ. 1421, ց. 3, գ. 23, թ. 13): 1940 թ.՝ հոր մահից հետո, վերադառնում է Հուն և զբաղվում հաշվապահությամբ՝ միևնույն ժամանակ հիմնելով կիրակնօրյա դպրոց: 1942 թ. վերադառնում է Անթիլիաս (**Պապայեան Ե.**, նշվ. աշխ., էջ 792) և 2 տարի պաշտոնավարում տեղի Մեսրոպյան վարժարանում: Հայեպի ուսուցչական միության անդամ էր (ՀԱԴ, ֆ. 1421, ց. 3, գ. 23, թ. 13): 1951 թ. ամուսնանում է Մարի Հարությունի հետ և ունենում երեք զավակ (**Պապայեան Ե.**, նշվ. աշխ., էջ 792): 1944-1953 թթ. նշանակվում է Հայեպի Սր. Աստվածածին եկեղեցու դպրապետ և միևնույն ժամանակ ուսուցանում Կիլիկյան վարժարանում: 1953 թ. հոկտեմբերի 25-ին ծնունդովում է քահանա Քառասնից մանկանց եկեղեցում Հայեպի առաջնորդ Ջարեհ սրբազանի կողմից: Եղել է Բերիո թեմի դատաստանական խորհրդի և վերաքննիչ ատյանի անդամ, Ամերիկաբնակ այնպացիների միության՝ Հայեպի խորհրդատու մարմնի ատենապետ, Կիլիկյան ճեմարանի խնամակարության նախագահ, 1965-1967 թթ.՝ Կիլիկյան ճեմարանի տնօրեն, 1971-1981 թթ.՝ Սր. Աստվածածին նոր եկեղեցու կառուցման կենտրոնական մարմնի ատենապետ, 1971 թ.՝ Սր. Աստվածածին նոր եկեղեցու ներքին և արտաքին ոճի ընտրության հանձնախմբի անդամ (**Հինտոյեան Ջ.**, նշվ. աշխ., էջ 21, 28, 32-33, 123): 1968 թ. Խորեն Ա կաթողիկոսի հրամանով ստանում է սև ծաղկյա փիրոն կրելու իրավունք (**Տեմիրճեան Վ.**, Գասազանագիրք Բերիոյ հայոց թեմի առաջնորդներու, «Հասկ», 1978, № 4-6, էջ 189): Վախճանվել է 1988 թ. նոյեմբերին (**Հինտոյեան Ջ.**, նշվ. աշխ., էջ 126): Դամբարանը գտնվում է Սր. Աստվածածին նոր եկեղեցու ներքնասրահի մուտքի հանդիպակաց պատի մեջ (www.periotem.com): Ունի հրատարակված հոդված (տես **Հինտոյեան Ջ.**, Վարք Սուրբ Վահան Գործնեցիի, «Օշակական», 1982, № 1-2, էջ 37):

Մարի Հինտոյանը 1976 թ. եղել է Սր. Աստվածածին եկեղեցու նորահիմն տիկնանց վարչության անդամ (**Հինտոյեան Ջ.**, նշվ. աշխ., էջ 71):



14. Արձանագրություն. եկեղեցու արևմտյան ճակատից բացված մուտքի վերևում ագուցված մարմարե սալիկին՝ փորագիր, 9 տող.



